

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XIX
2 0 1 6

Գյումրի 2016

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998)*

ISSN 1829-4316

Գլխավոր խմբագիր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅԴԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Աբրահամյան Լ.Հ.(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր), Ավետիսյան Պ.Ս.(ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ, պատմ. գիտ. դոկտոր), Բաղիկյան Խ.Գ.(բան. գիտ. դոկտոր, պրոֆե-
սոր), Եգանյան Լ.Գ.(պատմ. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող),
Խաչատրյան Լ.Մ.(բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Խաչիկյան Գ.Վ.(բան.
գիտ. դոկտոր, դոցենտ), Հարությունյան Հ.Հ.(արվեստագ. թեկնածու, պա-
տասխանատու քարտուղար), Մելքոնյան Ա.Ա.(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Պետրոսյան Ս.Գ.(պատմ. գիտ. դոկտոր,
առաջատար գիտաշխատող), Սահակյան Կ.Ա.(հոգեբ. գիտ. թեկնածու,
դոցենտ), Քոսյան Ա.Վ.(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

Ժողովածուն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի դոկտորական և թեկնածուական ատենախոսու-
թյունների հիմնական արդյունքների և դրույթների հրապարակման համար ընդունելի
պարբերական հրատարակությունների ցանկում:

Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Մարգարյան 5
Հեռ.՝ +374 /312/6 94 77, +374/94/411-228

Էլ. փոստ՝ hkentron@mail.ru
կայքէջ՝ www.shirakcenter.sci.am

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
XIX
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2016 Gyumri

“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)

The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998)

ISSN 1829 - 4316

Главный редактор: доктор филологических наук
АЙРАПЕТЯН С. А.

Редакционная коллегия: Абрамян Л. А.(член-кор. НАН РА, кандидат ист. наук, профессор), Аветисян П.С.(член кор. НАН РА, доктор ист. наук), Арутюнян А.Г.(кандидат искусствовед., ответственный секретарь), Бадилян Х.Г.(доктор фил. наук, профессор), Еганян Л.Г.(кандидат ист.наук, ведущий н/с), Косян А.В.(доктор ист. наук, профессор), Мелконян А.А (академик НАН РА, доктор ист. наук, профессор), Петросян С.Г.(доктор ист. наук, ведущий н/с), Саакян К.А(кандидат псих. наук, доцент), Хачатрян Л.М.(доктор фил. наук, профессор), Хачикян Г.В.(доктор фил. наук, доцент)

Editor-in –chief: Doctor of Philological Sciences
S. A. HAYRAPETYAN

Editorial board: L.H. Abrahamyan(Corresponding member of NAS RA, Candidate of Historical Sciences, professor), P.S. Avetisyan(Doctor of Historical Sciences), Kh. G. Badikyan(Doctor of Philological Sciences, professor), L.G. Eganyan (Candidate of Historical Sciences, leading research worker), L.M. Khachatryan (Doctor of Philological Sciences, professor), G.V. Khachikyan(Doctor of Philological Sciences, associate professor), H.H. Harutyunyan(Candidate of Art Studies, responsible secretary), A.A Melkonyan(Akademican of NAS RA Doctor of Historical Sciences, professor), S.G. Petrosyan(Doctor of Historical Sciences, leading research worker), K.A. Sahakyan (Candidate of Psychological Sciences, associate professor) A.V. Qosyan (Doctor of Historical Sciences, professor)

Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5

Address: 3101, 5 V. Sargsyan Street Gyumri, RA

тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228

E-mail: hkentrone@mail.ru

hppt: www.shirakcenter.sci.am

*Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ**ՀԱՅԱՍՏԱՆԻ XVII–XVIII ԴԴ. ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի XVII–XVIII դդ. ճարտարապետությունը օժտված է ինքնատիպ ու արժեքավոր առանձնահատկություններով, որոնց շնորհիվ կարևոր տեղ է գրավում հայկական շինարարական արվեստի բազմադարյան պատմության մեջ: Այն անկումային չէր, ինչպես անբավարար ուսումնասիրության պատճառով ժամանակին նշվում էր մի շարք ընդհանուր բնույթի ուսումնասիրություններում, այլ ունի իր անվիճելի ձեռքբերումները:

Ուշ միջնադարում ձևավորվեցին տարածաշրջանային ստեղծագործական դպրոցներ Սյունիքում, Արցախում, Վասպուրականում, Նախիջևանում: Նրանց ռճական հատկանիշները, առաջին հերթին, դրսևորվեցին եկեղեցական ճարտարապետության մեջ, որովհետև մյուս ժանրերի կառուցվածքները (քաղաքացիական, ամրաշինական, ինժեներական) ունեն ողջ Հայաստանի համար ընդհանրական բնորոշ գծեր: Առանձին դպրոցներ գերադասություն են տվել որոշակի ճարտարապետական տիպերին. Սյունիքում՝ բազիլիկ, Նախիջևանում՝ քառամույթ գմբեթավոր, Վասպուրականում՝ երկմույթ գմբեթավոր եկեղեցիներին ու գմբեթավոր դահլիճներին:

Ստեղծագործաբար վերամշակվեցին պաշտամունքային և աշխարհիկ կառույցների հայտնի հորինվածքները, և ստեղծվեցին մի շարք նորերը:

Վերամշակվեց և լայն տարածում ստացավ որմնախորշերով թաղածածկ դահլիճի ենթատիպը, որը կառուցողական առումով ամենահաջողն էր. թաղի հրող ուժը մարում են և ծածկի ծանրությունը կրում են ոչ թե արտաքին պատերը, այլ որմնամույթերը, որոնք միաժամանակ հնարավորություն են տալիս զգալի ընդարձակելու դահլիճի մակերեսը:

XVII–XVIII դդ. եռանավ բազիլիկները էական տարբերություններ ունեն վաղ միջնադարի նույնատիպ կառուցվածքներից. ավելի քիչ են ձգված և, հիմնականը, երեք նավերն էլ ներառված են ընդհանուր երկթեք ծածկի տակ: Իսկ երկաթության կրճատման միտումը բերեց իր նախատիպը չունեցող, միայն մեկ զույգ մույթով եռանավ բազիլիկների ստեղծմանը, որը նորույթ էր հայ ճարտարապետության մեջ: Ազատ կանգնած հենակետերի կրճատման ձգտումը, որը նպատակ ուներ ստեղծելու սեյսմիկայի տեսակետից առավել նպատակահարմար կառույց-

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

ներ, պայմանավորեց նաև մեկ զույգ մույթով գմբեթավոր եկեղեցիների լայն կիրառումը:

XVII–XVIII դդ. առավել, քան նախկինում, առկա է եկեղեցական շենքերի առանձին տիպերի (հատկապես միանավ և եռանավ բազիլիկների) ճարտարապետական ձևերի ունիֆիկացիան:

Ի տարբերություն միջնադարի՝ XVII–XVIII դդ. եկեղեցիները և նրանց կից գավիթներն ու սրահները կառուցվում էին մեկ շինարարական փուլով, որն իր կնիքն էր դնում հուշարձանների այդ ավանդական տիպի ճարտարապետության վրա: Աչքի է ընկնում նրանց բազմազանությունը. գավիթները բաժանվում են մի շարք տիպաբանական խմբերի, իրենց ենթատիպերով, որոնցից նորաստեղծ և այդ դարերի արգասիք են սրահ-զանգակատները:

XVII դդ. ստեղծվեց աշտարակաձև զանգակատների նոր՝ երկհարկ (եռայարուս) հորինվածքը, որի տարածումը կապված էր Էջմիածնի Մայր տաճարի նորակառույց զանգակատան նպատակադրված կրկնության ձգտումով:

Հայաստանի ուշ միջնադարի վանքերի ու անապատների համալիրների քաղաքաշինական սկզբունքները վերլուծելիս բացահայտվում են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետական մտածողությանը: Առաջինը համալիրում մեկ դոմինանտի՝ միակ եկեղեցու առկայությունն էր: Երկրորդը՝ կառուցապատման կանոնավոր ուղղանկյուն լուծումն էր, որը բխում էր գործառական պահանջներից՝ մենաստանների հորինվածքներում պաշտպանական գործոնի ազդեցությամբ: Երրորդը՝ համալիրների աշխարհիկ շինությունների պարագծային կառուցումն էր: Քաղաքաշինական այս երեք հիմնական սկզբունքներով ուշ միջնադարի կրոնական համալիրները էապես տարբերվում են IX–XIV դդ. վանքերից: Եթե վերջիններս քաղաքաշինական բաց համակարգեր էին՝ զարգացման հնարավորությամբ, ապա XVII–XVIII դդ. համալիրները ավարտուն հորինվածքով, մեկ շինարարական փուլով ձևավորված, շրջապատից մեկուսացված ճարտարապետական կազմավորումներ էին:

Աշխարհիկ ճարտարապետության ինքնատիպ ու նորույթ հանդիսացող կառուցվածքներից են Արցախի ու Սյունիքի մելիքական ապարանքները, որոնք ներդաշնակ զուգակցում են պալատական, ժողովրդական բնակելի տան և ամրոցի հորինվածքները:

XVII–XVIII դդ. հայկական ամրաշինական արվեստը զարգացման նոր ուղղություն ստացավ: Անկախությունը կորցրած երկրում անհնար էր ամրոցներ կառուցելը, և ազգաբնակչության անվտանգությունն ապահովում էին բերդերի վերածված եկեղեցիներն ու վանքերը: Միջնադարից հայտնի վանք-ամրոցի հորինվածքն իր ավարտուն կերպարը ստացավ XVII դ. ստեղծված նոր մենաստաններում, որտեղ համալիրը հենց սկզբից կառուցվում էր կրոնական և պաշտպանական տարրերի զուգակցման միասնական մտահղացումով:

XVIII դ. կառուցված Տաթևի դպրոցի շենքի ճարտարապետությունը նախանշեց անցումը կրթական գործի կազմակերպման միջնադարյան ձևից (այլ շենքերի հարմարեցում և օգտագործում, ընդհանուր մեկ շինության մեջ դասա-

վանդում) դեպի ժամանակակից դրվածքին (հատուկ շենք, առանձին մուտքով բազմաթիվ դասասենյակներով):

Հայկական կամրջաշինության՝ միջնադարում մշակած կոնստրուկտիվ և ճարտարապետական սկզբունքները հաջողությամբ կիրառվեցին նաև XVII–XVIII դդ. և Հայաստանի այդ ժամանակաշրջանի բազմաթիվ կամուրջները դարձան ողջ Արևելքի ինժեներական մտքի նվաճումներից:

Ուշ միջնադարում երևան եկավ մեկենասների մի նոր խավ՝ հայ վաճառականությունը: Խոջայական կապիտալը XVII–XVIII դդ. մեծ դեր խաղաց ծավալուն շինարարական աշխատանքների ֆինանսավորման գործում, հատկապես Արևելյան Հայաստանում: Պատվիրատուի և շինարարության անմիջական կատարողի միջև հանդես եկավ հատուկ անձնավորություն. աշխատանքի կազմակերպման համար նախաձեռնողները կամ մեկենասները «վերակացու» էին նշանակում, որը պատասխանատու էր շինարարության ողջ ընթացքի, միջոցների միշտ ծախսման համար և հրավիրում էր ճարտարապետի կողմից ղեկավարվող շինարարների խմբին: Վարձատրման միաժամանակ երեք ձև կար՝ միանվագ (ճարտարապետի և քարգործ վարպետների համար), օրավարձ (սևագործ բանվորների համար) և գործարքային (դարբինների ու ատաղձագործների համար):

Շինարարական խմբերը մասնագիտացած էին աշխատանքների առանձին ձևերի համար, որը զգալի կրճատում էր շինարարության ընթացքը:

Եկեղեցական շենքերի ճակատների հարդարանքի համակարգի կազմակերպումը (հատկապես Նախիջևանում և Ատրպատականում) ստացավ ճարտարապետությունից համեմատաբար անկախ, ինքնուրույն ստեղծագործական խնդրի նշանակություն:

XVII–XVIII դդ. զգալի հաջողություններ արձանագրվեցին արվեստների սինթեզի բնագավառում. մոնումենտալ շենքերը ձևավորվում էին ոչ միայն պատկերաքանդակներով, այլ նաև որմնանկարներով, ընդ որում գեղանկարչության մեջ կատարվեց անցում միջնադարյան պայմանական միջոցներից դեպի իրապաշտական աշխարհընկալումը: Այս գործընթացը սկսվելով Նոր Ջուղայում, տարածվեց բուն Հայաստանում, ունենալով ստեղծագործական երկու կարևոր կենտրոն՝ Էջմիածինը և Ագուլիսը:

Հայաստանի ուշ միջնադարի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը բարենպաստ չէր ավ ճարտարապետական-շինարարական կյանքի համար, այն ընթացավ պատերազմների, թշնամիների ասպատակությունների ու ավերածությունների պայմաններում: Մակայն այս դժվարին ժամանակաշրջանում հայ ճարտարապետությունը կարողացավ ոչ միայն պահպանել, այլև զարգացնել իր ավանդներն ու նվաճումները՝ դառնալով կապող օղակ իր պատմության միջնադարյան և ժամանակակից փուլերի միջև:

ДОСТИЖЕНИЯ И ОСОБЕННОСТИ АРХИТЕКТУРЫ АРМЕНИИ XVII–XVIII ВВ.

___ *Резюме* ___

___ *М. Асратян* ___

Архитектура Армении XVII–XVIII вв. обладает самобытными особенностями, благодаря которым занимает важное место в многовековой истории армянского строительного искусства. Политическое и экономическое положение Армении в позднем средневековье не было благоприятным для архитектуры и строительства, однако армянская архитектура этого периода смогла не только сохранить, но и развить свои традиции, став достойным связывающим звеном между средневековым и современным этапами своей истории.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասրաթյան Մուրադ Մարգարի – ճարտարապետության դոկտոր պրոֆեսոր,

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, E-mail: muradhasratyan@rambler.ru

**ԵԿԵՂԵՅՈՒ ՆԵՐՍՈՒՄ ԱՐԱՏԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՇԻՐԱԿԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ***

Եկեղեցին հասարակության մի մասն է, նրա հոգևոր ղեկավարը, հավատա-
վոր ժողովրդի բարոյական նկարագրի հիմնական ձևավորողը, իսկ հայոց մեջ միջ-
նադարի զանազան փուլերում պետականագրկումներից հետո՝ նաև համագային
առաջնորդը: Հասարակության ներսում ծնվող ու զարգացող ամեն մի երևույթ իր
անմիջական արձագանքն է գտնում ու դրսևորվում եկեղեցում, այդ թվում նաև՝
բացասականները: Վերջիններս ծայր աստիճան փտանգավոր էին հավատավոր
հանրության հոգևոր-բարոյական դաստիարակության համար:

Քրիստոսի եկեղեցին հիմնադրումից ի վեր ջանացել է հավատարիմ լինել իր
հոգևոր կոչմանը և մշտապես անհաշտ պայքար է մղել՝ զերծ մնալու խորթ, վար-
կաբեկիչ դրսևորումներից: Արատավոր երևույթները հայոց եկեղեցում էլ ավելի
էին խորանում օտար տիրապետությունների օրոք, չնայած այդ ընթացքում
իրավասու հոգևորականության առողջ հատվածը երբեք չէր դադարեցնում իր
պայքարը: Մելջուկյան Ժամանակաշրջանում, մասնավորապես XII դ. երկրորդ
կեսից հետո, Հառիճավանքի առաջնորդ Գրիգորը, համալիրի Սբ Գրիգոր եկեղե-
ցում թողել է արձանագրություն, որում ասվում է. «... եթե ոք յառաջնորդաց ի յըն-
ձաից եկեղեցոյս խորե՜¹ և զվաստակս բազմաց և գտուրս հոգոյ իւրն համարի, որ
չափ ² $\overline{\Gamma}$ արհեստ է, այնչափ նզոված է, որ կաշառաւք հայր մտե, կրկին նզովի»²:

XII դ. վերջին և XIII դ. սկզբին Հայաստանի մեծ մասը սելջուկ-թուրքական
ծանր լծից ազատագրած Զաքարյան իշխանապետները ոչ միայն հարկերից
ազատում էին վանքերն ու եկեղեցիները, երկրում զարկ տալիս վանաշինության
հուժկու գործին, այլև փորձում էին արմատախիլ անել հոգևորականության շրջա-
նում տեղ գտած այն բացասական երևույթները, որ հատկապես շահադիտորեն
խրախուսվել էին այլազգի տիրակալների կողմից:

Խնդրով մտահոգ հայոց աշխարհիկ և հոգևոր մեծամեծները, նկատի ունե-
նալով հարցի լրջությունը և կամենալով իրենց վճիռներն անխախտ, անջնջելի,
անեղծանելի և մնայուն պահել, կարգադրում էին դրանք փորագրել Հայաստանի
նշանավոր վանքերի պատերին՝ ի տես և ի դաս ամենքի:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած
«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր»
միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Խորել նշանակում է «խոր տեղում թաքցնել, խորը թաղել, ծածուկ պահել, գողանալ, պա-
կասեցնել» (Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հ. Ա, Եր., 2000, էջ 585):

² Եղիազարյան Հ., Հառիճավանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, Ա, էջ 57,
Քիւրտեան Յ., Հառիճոյ վանքին արձանագրութիւնները, «Բազմավէպ», 1957, № 11-12, էջ
267-268:

Դատելով մի շարք վիճաբերից՝ պետք է փաստել, որ խնդիրը հատկապես հրատապ էր Շիրակի վերագարթնած և Բագրատունյաց թագավորության երբեմնի փառքի տաճարներ համարվող վանքերում, որոնց վրա մեծ է եղել Անի մայրաքաղաքում կենտրոնացած օտարների ազդեցությունը:

Հառիճավանքում վանահայր Պետրոսն ու միաբանները սահմանում են, «որ կաշառաւք հայր լինի, ... նգովս առցե»³:

Հռոմոսի վանքի նկատմամբ Զաքարյաններից տիրության իրավունք ստացած Գրիգոր հեջուր Խաչենեցին, նրա եղբորորդիները, Քրդի որդի Իշխանը՝ տեղանք «ԱՐ ուխտիս վանացս Հռոմոսի, որ հաստատեցաք արձանագրով՝ պատրոն ով լինի այս տեղոյս ի յարանց կամ ի կանանց ով *կաշառաւք* հայր դնէ, այնպիսին նգովս առցե գՅուդային զաստուածավաճառին եւ զԿաենին զեղբայրասպանին. եւ հայր եւ այլ գործաւորք, որ *կաշառք* տան յայտնի կամ ի ծածուկ յերկնաւոր Հաւրէն եւ յԺՂ հայրապետացն եւ յամենայն սրբոց անիծեալ եղիցի յոգի եւ ի մարմին... Արդ եթէ մեծ եւ եթէ փոքր կարծիս առնու թէ հայր կամ այլ գործաւոր կաշառք է տուել եւ վրէժխնդիր չլինի վերագրելոցս նգովիցս տէր է ամէն: ԶԽոցադեղ գրիչ յիշեա ի տէր»⁴:

Հեջուր Գրիգորն այնքան մեծ կարևորություն է տվել 1228 թ. այս վճռին, որ հատուկ գրչի՝ Խոցադեղի ձեռքով է փորագրություն կատարել:

Դեռևս I դ. «Կանոնք առաքելականք»-ի ԻԱ (21-րդ) կանոնով սահմանվել է, որ Տիրոջ սեղանի պաշտոնին պետք է ընտրվեն այնպիսիները, որոնք հեռու են մամոնայից «եւ չերթան զկնի արծաթոյ շահից, եւ ձեռք իւրեանց սուրբ են ի կաշառոց...»⁵: Որքան էլ առաքյալները փորձել էին ապահովագրել նորահաստատ եկեղեցին շահատակությունից, արծաթասիրությունից, կաշառակերությունից, այնուհանդերձ ժամանակի ընթացքում կրոնական հաստատություններ էին ներս առնակել այդ մերժելի, արգահատելի բարքերը, որոնք սպառնալիք էին հոգևոր կառույցի ամրության ու անսասանության համար: Այդ չարիքները հատկապես արմատավորվել են, ինչպես վերը նշել ենք, օտար տիրապետությունների ժամանակ: Ա. Հովհաննիսյանի մեջբերմամբ. «Լամբրոնացին նշում էր, որ սելջուկ թուրքերը զավթել են եկեղեցու ֆունկցիաները, նրանք եկեղեցականներ են ձեռնադրել տալիս և կաշառքով եպիսկոպոսներ նստեցնում վիճակներում. սելջուկների օգնությամբ եպիսկոպոսները վիճակներ են խլում միմյանցից»⁶:

³ Եղիազարյան Հ., նշվ. աշխ., էջ 60: Պետրոսը Հառիճավանքի արձանագրություններում վանահայր է հիշատակվում 1192-1214 թթ. (տե՛ս նույն տեղում, էջ 57-59):

⁴ Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 23, հմմտ. «Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 71-72:

⁵ «Կանոնագիրք հայոց», Ա, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 41:

⁶ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք I, Եր., 1957, էջ 270, տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 526:

Կաշառակերության դեպքերը վանքերում և եկեղեցիներում կանխելու ուղղությամբ Զաքարյանների և նրանց գործակալ հեջուբների ջանքերն ի դերն եղան վերահաս մոնոլիական տիրապետությամբ:

Հայաստանյայց եկեղեցու ներսում բարքերի խորացմանը նպաստում էր նաև հայրապետական աթոռի հեռու գտնվելը մայր երկրից, հետևապես թույլ էր կենտրոնական, կաթողիկոսական անմիջական հսկողությունը: Դա էլ իր հերթին պատճառ էր դառնում կաշառակերության տարածման ու խորացման համար: Կաշառակերության նման չարիքը եկեղեցու ներսում ճանապարհ էր հարթում անարժանների ու համապատասխան տարիքի չհասած, ըստ այդմ, անհրաժեշտ փորձառություն չունեցող հոգևորականների ձեռնադրությունների համար, որոնք, հասնելով հոգևոր բարձր պաշտոնների, պատուհասում էին ոչ միայն նվիրապետական կառույցը, այլև «Բարենպաստ» պայմաններ ստեղծում հավատավոր ժողովրդի մի մասի՝ հարազատ սրբօջախներից ու դավանանքից խտտրվելու և զանազան աղանդների շարքերը համալրելու:

Ղեկնա քրիստոնեության վաղնջական ժամանակներից հայոց եկեղեցում փորձել են կանխել հոգևոր կառույցի հիմքերը սասանոյ վնասակար ու արատավոր երևույթների սերմանումն ու արմատավորումը: Թաղեոս առաքյալին վերագրվող կանոնախմբի Ա կանոնի հարցմանն ի պատասխան, ասվում է, որ «Եպիսկոպոսն եղիցի անարատ, պարկեշտ, ուսուցող, մի՛ արծաթասէր, մի՛ արբեցող, մի՛ կերող, մի՛ զաւշաքաղ, մի՛ հարկանող, մի՛ կաշառառու, այլ հանդարտ, որպէս ասաց եղբայրն մեր եւ գլխաւոր Պաւղոս (հմմտ. Ա. Տիմ. Գ. 1-4, Տիտ. Ա. 7-8), եղիցի արիւնակ բարոյ, տքնող, պահող, ատեցող զհանգիստ քնոյ, լինել արիւնակ հաւտին ամենայն կարգաւ, *առնել ձեռնադրութիւն արժանաւորաց՝* այնոցիկ որ հասու եւ զհետունք են գրոց, կարգաց եւ արիւնաց Աստուծոյ...»⁷: Նույն պատասխանի վերջում առաքյալն ասում է, եթե եպիսկոպոսը հանդգնի տգետին «կացուցանել առաջնորդս կամ վերակացու ինչ շնորհի եկեղեցոյ... վասն կաշառոյ կամ վասն մերձաւորութեան կամ վասն բարեխաւսութեան, այնպիսի եպիսկոպոս նզովեալ եղիցի...»⁸: «Կանոնք առաքելոյն Թաղեոսի» Բ կանոնը նույնպես արգելում է եպիսկոպոսին. «Եւ կաշառ ամենեւին մի՛ առնուլ»⁹, իսկ նույն կանոնախմբի Դ-ը պատվիրում է նրան «առաւել հրաժարել ի ձեռնադրութենէ տգիտաց եւ տխմարաց, յանմտից, ի ցոփասրտից, ի վատասրտից, ի յափշտակողաց, ի շնացողաց եւ յայլ վատթարութենէ, զայնպիսին ամենեւին մի՛ ձեռնադրել եւ մի՛ բարկացուցանել զԱստուած»¹⁰:

325 թ. Ա տիեզերածոփովում ընդունված «Կանոնք Նիկիական»-ի Ժ (10-րդ) կանոնը սահմանում է. «Վասն այնոցիկ որ աման յանարժանից ըստ անգիտութեան եպիսկոպոսին եւ կամ եթէ գիտէին որք մերձեցուցին եւ ի ձեռն արծաթոյ քարշեցաւ ճշմարտութիւնն, եթէ ի վերջոյ յայտ եկեացեն իրքն եւ անարժանութիւն առնն

⁷ «Կանոնագիրք հայոց», Բ, աշխ. Վ. Հակոբյանի, Եր., 1971, էջ 20-21:

⁸ Նույն տեղում, էջ 21-22:

⁹ Նույն տեղում, էջ 22:

¹⁰ Նույն տեղում, էջ 24-25:

եւ կաշառակրծութիւն կարգողացն՝ կամ եղեւ մեծ ժողովոյն աւծումնն բարձցի ի նմանէն և կարգողքն ընդ պատուհասիւք եղիցին որպէս եպիսկոպոսն կամեսցի»¹¹:

Իսկ ընդհանրական եկեղեցու հզոր տեսաբաններից սբ Գրիգոր Նազիանզացին (330-390) իր կանոնախմբի՝ «Կանոնք Գրիգորի Աստուածաբանի» Ժ (10-րդ) կանոնով տեսուչներին, վերակացուներին կոչ է անում շնորհաբաշխության ժամանակ հետամուտ լինել նորկտակարանյան պատգամին. «Եհաս լուր ի մեծ սին-հողոսն Նիկիայ, թէ եպիսկոպոսունք տեղաց տեղաց ի ձեռն շնորհաբաշխութեան հաւաքմունս ընչից եւ արծաթոյ առնեն, եւ ընդդէմ Հոգւոյն թուեցաւ գործն, զի ոչ զայս ուսուցին սուրբ առաքեալքն Տեառն, այլ որպէս ընկալան ի Տեառնէ ձրի, նոյնպէս եւ այլոց աւանդեցին՝ «Ձրի առէք և ձրի տուք» (Մատթ. Ժ. 8), որով բաշխէին ում եւ պետք լինէին»¹²:

Արշակունյաց թագավորության անկումից (428 թ.) և հայոց աշխարհի երանելի վարդապետներ սբ Սահակ Պարթևի (348-439) և սբ Մեսրոպ Մաշտոցի (≈ 360-440) մահից հետո Հայաստանյայց եկեղեցի սողոսկած և արմատավորված աղանդավորական և այլ չար ուղիների դեմ, այդ թվում նաև կաշառակերության ու անարժանների ձեռնադրության, փորձում են պայքարել սահակ-մաշտոցյան աշակերտները Շահապիվանի 444 թ. ժողովով: Հայոց երբեմնի արքաների բանակատեղիում հրավիրված ժողովի ԺԶ (16-րդ) կանոնով արգելվում է կաշառքով կամ «աշառանաւք», առանց ոչ ճշմարտության անարժանին ձեռնադրել և փորձ է արվում այդ օրենքին տալ աստվածաշնչյան հիմնավորում. «Եւ նոքա կաշառաւք եւ աշառութեամբ զանարգեալս մեղաւք եւ զպղծեալս արինացն, որպէս ասէ Պաւղոս, եկեղեցւոյ դատաւորս նստուցանեն վասն կորուսիչ արծաթոյն (Ա, Կոր. Զ, 4): Տալիք կաշառոյն անիծեալ լիցին (Բ Օրէնք ԻԷ. 25), որպէս խաչահանունքն, որ ետուն կաշառ պահապանացն, եւ ընդ Սիմոնի կախարդի, որ արծաթով եւ ընչիւք կամեր ստանալ յառաքելոցն զշնորհս սրբոյ հոգւոյն (Գործք Ը. 17, 18): Եւ առնելիք կաշառոյն նգովեալ լիցին ի Տեառնէ. կարասին, զոր կաշառ առին, ընդ Յուդայի համարեալ լիցի, զոր վասն Տեառն մատնութեան առ (Մատթ. ԻԷ. 9, Ղուկ. ԻԲ. 5,6)... Եւ եպիսկոպոսն եւ երեցն, որ վասն այսր իրաց կաշառս առցեն եւ կամ վասն ինչ եւ է իրաց, ըստ գրեցելոցն, թէ՝ «Կաշառ կուրացուցանէ զսիրտս իշխանաց» (Բ Օրէնք ԺԶ. 19, Սիր. Ի. 31), եւ դարձեալ «Կաշառ ի վերայ իրաւանաց մի՛ առնուցուս (Մաղ. ԺԴ. 5), եւ «Ճշմարտութիւն ի ձեռն արծաթոյ քարշեցաւ». յամենեան ժողովոյս նգովեալ լիցին եւ յիշխանութենէն եւ ի քահանայութենէն մերժեսցին ի բաց...»¹³:

Նույն կանոնի վերջում բերվում են բազմապիսի օրինակներ, թե ինչի կարող են հանգեցնել և ինչ վնասներ բերել եկեղեցուն անարժան ու կաշառված առաջնորդները, որոնք պետք է լինեն մերժելի: Իսկ օրինավոր առաջնորդները միշտ հաստատուն, անսայթաք ու ճշմարիտ են պահում եկեղեցին և պետք է օրինակ լինեն աշխարհին, քանի որ նրանց է նայում ժողովուրդը¹⁴:

¹¹ «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 123-124:

¹² «Կանոնագիրք հայոց», Բ, էջ 190:

¹³ «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 456-457:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 458-459:

Բացի կաշառակերությունից ու անարժաններին տեղ տալուց, երրորդ չարիքը, որ պատուհասել է հայոց եկեղեցուն և անմիջապես առնչություն ունի նախորդ երկուսի հետ, անմիջապես ձեռնադրվել է, այսինքն՝ անտեսվել է տարիքային շերտ ձեռնադրությունների ժամանակ: Դրա խոստովանումը 20-ամյա (այլ կարծիքներով՝ 15, 18, 22 տարեկան¹⁵) Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) կաթողիկոս օծվելն էր 1113 թ., ինչը հանգեցրեց հայոց հայրապետական աթոռի պատակամանը և Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության առաջացմանը (1113-1895):

Եթե առաջին երկու բացասական երևույթները՝ կաշառակերությունն ու անարժաններին ձեռնադրելը, համընդանուր քրիստոնեական բնույթ էին կրում և հաճախ չէին բարձրաձայնվում, ապա երրորդը՝ ձեռնադրվողի անմոռու լինելը կամ տեսա տարիքը, այսինքն՝ հոգևորականի տարիքային անհամապատասխանությունը նվիրապետական տվյալ աստիճանին, մինչև XIII դ. կեսը մշտապես քննադատության թիրախ է եղել վրաց, բյուզանդական և լատին եկեղեցիների կողմից:

Թեև Թադեոս առաքյալին վերագրվող կանոնախմբում, որքան էլ նրա անվամբ այն հայոց եկեղեցի ներմուծված լինի հետագայում, ի պատասխան Գ կանոնի հետևյալ հարցմանը. «Որպիսի՞ չափով պարտ է ձեռնադրել քահանայս եւ սարկաւագունս, եւ ո՞րչափ կալ ի կարգին», ասվում է. «Արժան է եպիսկոպոսին ձեռնադրել քահանայս երեսնամեայ, եւ զերեսուն ամ կալ ի կարգին եւ ապա լռեցէ: Իսկ յիսնեմենիք կամ թէ աւելի՝ մի եւս ձեռնադրել քահանայ կամ սարկաւագ, եւ մի՛ ամուսնութիւն հրամայել, զի յայսմ վայրի անձինք աղճատին եւ միտք եւ ժամանակք. եւ զինքն պատրաստել յիւրում ուղեւորութեանն, պայծառացուցանել զիւր զլապտերն, զի մի՛ զայլսն հոգալով զինքն անփոյթ արասցէ եւ զրկեսցի ի յաւիտենական կենացն»¹⁶:

Եթե Թադեոս առաքյալի կանոնախմբի Գ (3-րդ) կանոնով սահմանվել է քահանայի ձեռնադրության համար 30 տարեկան հասակ (հիմքում Հիսուս Քրիստոսի տարիքն է քարոզչության սկսման ժամանակ), ապա հետագայում այդ կարգը խախտվել է այն աստիճան, որ հիմնովին անտեսվել է առաքյալի կանոնադրած դրույթը:

XIII դ. սկզբին Զաքարե ամիրսպասալարը, փորձելով մեղմել հայոց և վրաց եկեղեցիների միջև էական տարբերությունները, դիմել է Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Բ Մեծագործին (1198-1219) և Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Սսեցուն (1203-1221)՝ թույլ տալ իրեն Հայաստանի եկեղեցիներում կատարելու մի շարք նորամուծություններ: Զաքարեի դիմումի առիթով 1204 թ. Սսուն գումարված Ա ժողովը Զաքարեին է ուղարկել ութ կետից բաղկացած կանոնախմբ: Յոթերորդ գլուխը կամ կեսը սահմանել է. «Ձեռնադրել դպիր և ապա յետ բազում աւուրց սարկաւագ, և ի կատարեալ հասակի ապա քահանայ»¹⁷:

¹⁵ Տե՛ս Մ. արքեպս. Օրմանեան, *Ազգապատում, հ. Ա, Մ.Էջմիածին, 2001, ս. 1578*:

¹⁶ «Գանոնագիրք հայոց», Բ, էջ 24:

¹⁷ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 170*:

Թեև կանոնախմբի ընդունման փորձերը Հայաստանում վիժեցվել են հայ եկեղեցու ավանդին հավատարիմ հայոց վարդապետների անկեղծ ընդդիմության արդյունքում, այնուհանդերձ, 7-րդ կանոնը չի հստակեցրել նվիրապետական աստիճանների համար տարիքային սահմաններ:

Միայն Սսի Բ ժողովում՝ 1243 թ., որ գումարվել է Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221-1267) նախագահությամբ, ի վերջո հստակ սահմանել է ձեռնադրությունների նվազագույն տարիքային շեմերը: Իսկ այդ կանոնական ժողովը նախ Ա կանոնով որոշել է. «Ամենայն ձեռնադրություն յեկեղեցի, որ է պարզևք հոգւոյն սրբոյ, զոր տայ արժանաւորացն, առանց արծաթոյ լիցի՝ ըստ կանոնաց, զի այն ախտ Յուդայի և Միմոնի կախարդի է, որ խտտեցան, և ոչ միաբանեցաւ ընդ նոսա շնորհն, որ ի տեղիս տեղիս վասն աղքատութեան լուծեալ է և տգիտութեան»¹⁸: Բ օրենքը վերաբերել է եկեղեցիների վերակացունների ձեռնադրությանն ու տարիքին. «Այսուհետև արժանաւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան մեծաւ քննութեամբ և վկայութեամբ և թեմին կամակցութեամբ առանց կաշառած, հասակաւ մի՛ պակաս քան զերեսուն ամն»¹⁹: Դ կանոնն էլ սահմանել է. «Ապա զեկեալսն ի չափ՝ հասակաւ և՛ ուսմամբ. և՛ սրութեամբ՝ ածցել յաստիճան, վկայութեամբ անձանց իրեանց և սնուցողաց՝ առանց արծաթոյ, տիօք մի՛ պակաս քան զքսան հինգ ամն երեցն և սարկաւագն՝ քսան ամն»²⁰:

Հայտնի է, որ ժողովից երեք տարի անց Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսը Սսի Բ ժողովի 25 կանոնները Կիլիկիայում գտնվող Վարդան Արևելցու և այլ լիազոր անձանց միջոցով ուղարկում է Հայաստան, որտեղ դրանք հավանության են արժանանում երկրի եպիսկոպոսների, իշխանների և գլխավոր վանքերի կողմից²¹:

Սսի Բ ժողովի Ա, Դ կանոններն իրենց արտացոլումն են գտել միննույն թվականով թվագրվող մեզ հայտնի երեք վիմագրերում, որոնցից երկուսը Շիրակում կամ մերձ այդ գավառին:

Անիի Ս.Առաքելոց եկեղեցու արևելյան պատին արձանագրվել է. «Թուականին :Զ: (1251)... Հրամանաւ տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի և մեծին ամիրսպասալար Շահնշահի արձանագրեցաւ առաքելական կանոնքս, որ թէ ոք յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց *կաշառաւք* կամ անմիրու երեց առնէ կամ առանց *ճշդիւ և յոյժ ընտրութեան* դատի յ $\overline{2\overline{\text{U}}}$, եւ ընդ նգովաւք լինի յերիս սուրբ ժողովոյն, մասն զՅուդային եւ զԿայենին առցէ, կատարողքն արհնին յ $\overline{2\overline{\text{U}}}$ »²²:

Նույն ժամանակ գրեթե համանման բովանդակությամբ իրավական բնույթի վճիռ փորագրվել է Սրենի Կաթողիկէ եկեղեցու հարավային պատին. «Թուա-

¹⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 303-304:

¹⁹ Նույն տեղում, էջ 304:

²⁰ Նույն տեղում:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 310:

²² «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1960, էջ 14-15:

կլանին՝ Չ: (1251) յամս 21¹ ապատի տեառն Կոստանդեա Հաոց կաթողիկոսի հրամանաւ Մեծին Շահանշահի և յառաջնորդութեան Տէր Գրիգորո: Եթե ոք յեպիսկոպոսաց կաշառաւք առնէ կամ անմուրու կամ առանց ընտրութեան մասն զՈւդաին առցէ ու զՍիմոն կախարդի: Ով զգիրս ջնջէ ի՛նքն¹ ջնջի ի կենաց գրոյն»²³:

Ի տարբերություն Մրենի արձանագրության՝ Անիի վճռում չի նշվում քաղաքամայրի առաջնորդի անունը: 1246 թ. որպես Անի մայրաքաղաքի առաջնորդ վերակացու Կիրակոս Գանձակեցին հիշատակում է. «եպիսկոպոսն Անույ միւս Սարգիս»²⁴:

Անիի արձանագրությունում եպիսկոպոսի անվան բացակայության պարագան Կ. Մաթևոսյանը համադրելով Կ. Գանձակեցու այն վկայությանը, որ կաթողիկոսի նվիրակ Վարդան Արևելցուն այնքան էլ ջերմորեն չընդունեցին վարքի մեջ թերացած եպիսկոպոսները, բայց և չհամարձակվեցին նրա պահանջը մերժել, այլ առերես ընդունեցին, եզրակացնում է. «Անիում, ուր առևտրատնտեսական ու վաճառական հարաբերությունների խորացմանը զուգահեռ տեղի էր ունենում բարքերի անկում, և դրամը դառնում էր ամենագոր, բնական է, ավելի շատ պետք է լինեին թերացումները եկեղեցու կանոնների նկատմամբ և այստեղ առավել դժկամությամբ պետք է ընդունեին կանոնական պահանջների ամեն մի խստացում ու բարոյախտություն»²⁵:

Անիի և Մրենի վճիռների «առանց ճշդի և յոյժ ընտրութեան», «առանց ընտրութեան» հատվածները վերաբերում են վանահայրերին ու երեցներին: Դեռևս Մխիթար Գոշի «Դատաստանագրք»-ի Գ գլխով մեծ իրավունք էր վերապահվում վանքի միաբնակությանը վանահոր նշանակման դեպքում, որի գործում վճռորոշ էր եղբայրության կամքը²⁶:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ թե՛ մի շարք կանոններում, թե՛ վիմագրերում կաշառքով ձեռնադրությունը պախարակվում է որպես Հուդա աստվածավաճառի և Սիմոն կախարդի ախտ: Սիմոնը, ինչպես հայտնի է, առաքելական ժամանակների սամարացի մոգ էր, որին համաքաղաքացիներից մոտ կեսն ընդունում էր որպես Աստուծո մեծ գորություն՝ իր կատարած կախարդությունների, աճաքարությունների պատճառով: Ըստ «Գործք առաքելոցի»՝ քրիստոնյա մկրտված Սիմոն մոգը տեսնում է, երբ Պետրոս ու Հովհաննես առաքյալները ձեռք-

²³ Орбели И. Надписи Мрена, Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Եր., 1974, էջ 40: Մրենը մե՛րթ տեղադրվում է Շիրակում (տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 137, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8, Եր., 1982, էջ 66, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 767), մե՛րթ Արշարունիքում (տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 877-878): Թեև Մրենի վիմագրերում երկիցս հիշատակվում է Արշարունյաց եպիսկոպոսը (տե՛ս Օրբելու И., նույն տեղում, էջ 35, 40), բայց չի բացառվում, որ այն որոշակի ժամանակներում ընդգրկված լիներ Շիրակ գավառի կազմում:

²⁴ Կիրակոս Գանձակեցի, նույնը:

²⁵ Մաթևոսյան Կ., Անի, եկեղեցական կյանքը և ձեռագրատան ժառանգությունը, Ս.Էջմիածին, 1997, էջ 91-92:

²⁶ Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ.՝ Խ. Թորոսյանի, Եր., 1975, էջ 34:

ները դնում էին հավատացյալների վրա, վերջիններս Սուրբ Հոգի էին ստանում: Նա փող է տալիս, որպեսզի առաքյալների միջոցով ինքն էլ իշխանություն ունենա՝ Սուրբ Հոգի տալու, բայց արժանանում է Պետրոսի հանդիմանությանը, որ Աստծու պարգևները չի կարելի փողով ստանալ (Գործք Ը. 9-25):

1251 թ. իրավական երրորդ փորագիր վճիռը Բջնիում է, որում, ի տարբերություն Անիի, հիշատակվում են կենտրոնական Հայաստանի այդ հզոր թեմի առաջնորդները. «Թվիս Հայոց Չ. (1251). Ազդմամբ և հրամանաւ Հոգւոյն Սրբոյ և կամաւ Կոստանդեայ կաթողիկոսի հաստատեցաք զխախտեալ կանոնքս և եղաք աստ ծառայքս Քրիստոսի՝ Տէր Վանական և Տէր Գրիգոր, ողորմութեամբ նորա եպիսկոպոսք Բջնոյ... յիշխանութեան Մեծին Շահնշահի. զի յայսմհետէ մինչև ի կատարած չունի որ առնել կաշառաւք ձեռնադրութիւն վարդապետ ու երէց: Կատարիչք հրամանցս արհնին յԱստուծոյ»²⁷:

Ժամանակի նշանավոր հոգևոր գործիչներ Վանական Բջնեցուն և Գրիգոր Բջնեցուն հիշատակում է նաև Կիրակոս Գանձակեցին 1246 թ. Սսի Բ ժողովի կանոններին հավանություն տված բարձրաստիճան հոգևորականների շարքում. «...և եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանականն և Գրիգոր»²⁸:

Ուշադրության արժանի է Բջնիի 1251 թ. արձանագրության սկզբնամասը. «Ազդմամբ և հրամանաւ Հոգւոյն Սրբոյ», քանի որ «Դավան-աստվածաբանական տեսակետից եկեղեցական ժողովները մասն են Սուրբ Հոգու, որ ապրում է եկեղեցում: Եպիսկոպոսներն ու վարդապետները հավաքվում են Սբ Հոգու թելադրմամբ և այն հավատով, որ որոշումներն ընդունվում են Սբ Հոգու առաջնորդությամբ. «...հաճելի թվաց Սուրբ Հոգուն և մեզ...» (Գործք 15.28), ասում են ժողովականները միմյանց՝ հետևելով առաքյալների օրինակին»²⁹:

Առնվազն միամտություն է կարծել, թե Սսի 1243 թ. Բ ժողովի կանոնները դրանց քննարկմանն ու ընդունմանը չմասնակցած արևելյան վարդապետների կողմից վերջնական հաստատման են արժանացել 1270 թ. Չագավանի եկեղեցական գումարումում: Ավելի քան քառորդադարյա վիճակ էր կա երկու ժողովների միջև, ինչը տրամաբանության մեջ չի տեղավորվում:

Միևնույն 1251թ. ներքո, գրեթե նույն բովանդակությամբ վերոհիշյալ երեք արձանագրությունները հուշում են, որ այդ թվականին կա՛մ մայրաքաղաք Անիում, կա՛մ երկրի կենտրոնական թեմանիստ Բջնիում, որ տակավին Շուրի 1114թ. համազգային եկեղեցական ժողովում հռչակվել էր Բուն Հայաստանի կարևորագույն և կաթողիկոսի ընտրությունը վավերացանող չորս արևելյան աթոռներից մեկը՝ Հաղբատի, Տաթևի և Արտազի հետ միասին, հայոց և վրաց ամիրսպասալար Շահնշահ Ա Ջաքարյանի գլխավորությամբ, Ամենայն հայոց Կոստանդին Ա Բարձրբերդցու անունից գումարվել է եկեղեցական հավաք՝ ի հաստատումն Սսի 1243 թ. կանոնների: Մեր տեսակետը համահունչ է Վարդան Արևելցու գործունեու-

²⁷ Եղիազարյան Հ., Բջնիի վանքը և Բջնի գյուղի մյուս հուշարձանները, Էջմիածին, 1963, ԹԺ, էջ 46:

²⁸ Կիրակոս Գանձակեցի, նույնը:

²⁹ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 296:

թյան մասին Հովհաննես Երզնկացի Օործորեցու այն վկայության, որ մեջբերված է «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում, երբ նա «այս և այն կողմերում հայ իշխանների և տեղի եպիսկոպոսների աջակցությամբ ժողովներ է գումարել, վճիռներ հաստատել տվել՝ իրագործելու Հայաստանում Սսի ժողովի կանոնները»³⁰: Կարծում ենք՝ Ասի մայրաքաղաքում կամ Բջնիում (ավելի հավանական է առաջինում) 1251թ. տեղի ունեցած ժողովը ստվերվել ու մոռացության է մատնվել նույն թվականին Սսում Հռոմի պապի առաջարկությամբ «Filiogue»-ի վարդապետությունը (Մբ Հոգին բխում է ոչ միայն Հորից, այլև Որդուց), որ 1054թ. ընդհանրական եկեղեցու նոր պառակտման առիթ էր հանդիսացել, քննարկելու և ընդունելու համար հրավիրված ավելի հրատապ գումարման պատճառով, որտեղ կիլիկյան հոգևորականները հույժ կարևորել են արևելյան վարդապետների տեսակետը:

Ավելորդ չենք համարում նշել, որ հավանաբար ժամանակն ստիպել է հայոց աշխարհի մեծամեծներին՝ Ջազավանի 1270 թ. ժողովում Վարդան Արևելցու ու Գրիգոր Բջնեցու գլխավորությամբ վերանայելու ու բարձրացնելու հոգևորականների ձեռնադրության տարիքային նվազագույն շեմերը: Այսպես, 3-րդ խումբ կանոնները, որ կոչվում են «Կանոնք վանականաց», 2 (6-րդ) կետով սահմանել է. «Որ աշխարհի երեց կամի լինել, ի ԺԵ (15-ում) կին առնու, ի Ի (20-ում) դպիր լինի, ի ԻԵ (25-ում) սարկաւազ և յԼ (30-ում) երեց, ուսած ի գիտնոց և վկայածն յամենոց»³¹:

Վերջին մասով, փաստորեն, մասամբ վերականգնվում է Թադեոս առաքյալի սահմանած Գ (3-րդ) կանոնը:

Ջազավանի ժողովի՝ վանականներին առնչվող կանոնախմբի հաջորդ՝ Է (7-րդ) կետը, վերաբերել է կուսակրոն հոգևորականներին: Այն ամրագրել է, որ աբեղա դառնալ պատրաստվողը 20 տարեկանից պետք է սքեմ կրի, վարի կրոնավորին հարիր կյանք, հրաժարվի մսի ու գինու գործածությունից, երեսունում, երբ ինքն ու մյուսները տեսնում են, որ կարող է աբեղայություն անել, մեկ տարի սարկավազ լինի՝ սպասավորելով եկեղեցին, ապա ամենքից երաշխավորված՝ ձեռնադրվի կուսակրոն քահանա³²:

Այսպիսով, տեսնում ենք, որ հայոց եկեղեցին սկզբից նեթ անհաշտ պայքար է մղել իր ներսում տեղ գտած մի շարք արատավոր ու վարկաբեկիչ երևույթների նախ և առաջ կաշառակերության, անարժանների ձեռնադրությունների դեմ:

Պետք է փաստել, որ այդ պայքարը տվել է իր արդյունքները. ներկայիս Հայաստանի և մեր պատմական հայրենիքի զանազան վայրերում սփռված միջնադարի մեր փառահեղ պատմության բազմառիակ քարեղեն վկաներն արձանագրում են վանքային հզոր համալիրների բեղուն, ժրաջան, ուսումնաստենչ, մշակութաստեղծ բուռն գործունեություն, ինչը հարյուրավոր տարիներ անընդմեջ

³⁰ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 647:

³¹ «Կանոնագիրք հայոց», խմբեց Ս. Ղլտճեան, Թիֆլիզ, 1913, էջ 187, Գ. Հովսեփյան, Ջազավանից ժողովը, Վաղարշապատ, 1913, էջ 46, «Ջազավանի ժողովը և իր կանոնքը», առաջ. և թարգմ. Ս. Մխիթարյանի, «Հայ աստվածաբան», Ե, Եր., 2013, էջ 109-110:

³² Նույնը:

կարող էր ապահովել միայն սուրբ ուխտերի միաբանների ու նրանց առաջնորդների աստվածավախ, նվիրված, անշահախնդիր, անձնուրաց վերաբերմունքը:

ОТРАЖЕНИЕ В ШИРАКСКИХ ЛАПИДАРНЫХ НАДПИСЯХ БОРЬБЫ С ПОРОЧНЫМИ ЯВЛЕНИЯМИ ВНУТРИ ЦЕРКВИ

___ *Резюме* ___

___ *А. Манучарян* ___

Армянская церковь своими соборами и канонами вела постоянную борьбу с негативными, порочными явлениями внутри себя, в частности, с рукоположением посредством взятки, так же с посвящениями недостойных священослужителей, имеющих малый, не соответствующий для этого возраст.

Следы этой борьбы запечатлены на надписях Оромоса (1228 г.), Мрена (1251 г.) и Ани (1251 г.) в Шираке.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մանուչարյան Աշոտ Գագիկի – պ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան, E-mail:ashot.manucharyan.1959@mail.ru

Վարդան Անեցուն և նրա բարձրարվեստ ներբողին նվիրված հոդվածում բանասիրության դոկտոր Ասատուր Մնացականյանը 1971 թ. գրում է. «Ո՞ւր են Անիի մանրանկարիչները, բանաստեղծները, գրիչները, մտավորականության այլ ներկայացուցիչներ: Անշուշտ, նրանց մի զգալի մասի հիշատակն ու հետքը մոռացության են մատնվել ժամանակի ու օտար բռնակալների ավերածությունների պատճառով. բայց մի մասին էլ պահպանվել ու հասել է մեզ՝ սպասելով ամբողջացման...»¹: Ցավոք, նման համապարփակ ամբողջացումը դեռ իրականություն չի դարձել, սակայն նախընթաց տասնամյակների մեր աշխատանքն ընթացել է այդ ուղղությամբ. առաջին հերթին ուսումնասիրել և ի մի ենք բերել Անիի ու մերձակա վանքերի ձեռագրական ժառանգությունը, հրատարակել ենք պատմիչ Սամվել Անեցու երկը (առանձին և հավելում-լրացումներով), անդրադարձել Անի-Շիրակի պատմության և մշակույթի զանազան հարցերին, առանձին գործիչների և այլն²:

Հայ պատմիչների երկերի ձեռագրերի ուսումնասիրության ընթացքում հնարավոր եղավ գտնել որոշ նոր գրիչ-հեղինակների անուններ: Վերջիններս ոչ թե առանձին մատենագրական երկեր են ստեղծել, այլ իրենց ընդօրինակած մատյաններում՝ պատմիչների երկերում, որոշ հավելումներ ու լրացումներ են կատարել, սակայն դրանք այնքան կարևոր են, որ իրավամբ այդ գրիչները կարող են միջնադարյան փոքր հեղինակների շարքին դասվել: Նրանցից երկուսը, դատելով գրված տեղեկությունների բնույթից, Անի-Շիրակ շրջանից են եղել:

Առաջինը Հայրապետ վարդապետն է, որը, հավանաբար, ապրել է 13-րդ դարում և ընդօրինակել է Մատենադարանի թիվ 1897 ժողովածուն, որի մեջ՝ Սամվել Անեցու ժամանակագրությունը: Հայրապետը բնագիրն օժտել է փոքրաթիվ, սակայն հետաքրքրական ընդմիջարկություններով: Նրա հիշատակագրություններում գրչության ժամանակի ու տեղի վերաբերյալ նշում չկա, միայն հիշում է իր երկու եղբայրներին՝ Կարապետին և Խաչատուրին³:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Մնացականյան Աս., Անիի բանաստեղծ Վարդան Անեցին, Բանբեր Մատենադարանի, 1971, թիվ 10, էջ 261:

² Մաթևոսյան Կ., Անի քաղաքի գրչության կենտրոնը, «Պատմա-բանասիրական հանդես», 1988, N 1, էջ 132-137, նույնի՝ Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, նույնի՝ Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Եր., 2009, նույնի՝ Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), Եր., 2010, նույնի՝ Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., 2015, Սամուել Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Եր., 2014:

³ Հայրենի ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 905 (այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.):

Հայրապետ վարդապետը ոչ միայն մի քանի նոր տեղեկություններ է մուծել, այլև որոշ դեպքերում Սամվել Անեցու տեղեկություններին բացատրական բնույթի ավելացումներ է կատարել: Դատելով հիշատակարանում առկա որոշ արտահայտություններից՝ «շարագրեցի գտոսս ի շահ եւ ի յաւգուտ մանկանց եկեղեցւոյ...», յիշեայ, ով պատուական վերծանող եղբայր..., ո՛վ աստուածասէր ընթերցող ուսմամբ»⁴, կարելի է ասել, որ հավելումների հեղինակը հենց ինքը՝ Հայրապետ վարդապետն է, որը «ուսմամբ» ընթերցողների գործը հեշտացնելու համար Սամվել Անեցու հայտնած տեղեկություններին փոքրիկ բացատրական ավելացումներ է արել: Օրինակ՝ Աշոտ Ա Բագրատունու թագավորության մասին 885 թ. աղյուսակում Սամվել Անեցին գրում է՝ «Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս Ե(5)», իսկ Հայրապետ վարդապետը մանրամասնում է՝ «Աշոտ Բագրատունի յետ ԻԲ (22) ամի իշխանութեան, ի վերայ Հայոց թագաւորեաց ամս Ե (5): Սա առաջին թագաւոր ի Բագրատունեաց» (61ա): Կամ՝ 1124 թ. Անիի՝ վրացիների կողմից գրավման մասին պատմությունը Սամվել Անեցին սկսում է հետևյալ խոսքերով. «Ի բազում հինահարութեանց...», իսկ Հայրապետի ձեռագրում կարդում ենք. «Եւ աստանաւր առնու մեծագաւրն Դաւիթ զմայրաքաղաքն Հայոց զԱնի այսու պատճառաւ. Ի բազում հինահարութեանց...» (73ա):

Հայրապետ վարդապետի ձեռագրում առավել աչքի զարնողը Անի-Շիրակյին վերաբերող հատվածներում կատարված հավելումներն են: Հայտնի է, որ Սամվել Անեցին, կազմելով ժամանակագրությունը Աղամից մինչև իր օրերը, ընդհանրապես չափազանց համառոտաբան է, և իր իսկ բնորոշմամբ առաջնորդվել է «կարճ ի կարճոյ» սկզբունքով: Հայրապետը, շուրջ մեկ դար ավելի ուշ ապրելով, հարկ է համարել որոշ բաներ հավելել: Օրինակ, Մարմաշենի հիմնադրման մասին Սամվել Անեցին գրում է. «ՆԼԶ (987) Սկիզբն շինուածոյ մեծանուն... ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ»: Հայրապետի ձեռագրում կարդում ենք նույնը, միայն վերջում լրացումով՝ «...Վահրամայ, որ էր թոռն Ապուղամրի» (65ա): Անիի Ս. Փրկիչ եկեղեցու՝ հավանաբար երկրաշարժից փլվելու մասին Անեցին գրում է՝ «ՇԶ (1131) Փլաւ Ամենափրկիչ յԱնի ի մարերի ի ԺԵ (15)»: Հայրապետի մոտ ամսաթիվը չկա, սակայն ավելացված է եկեղեցին կառուցողի անունը՝ «Փլաւ Ամենափրկիչն յԱնի շինեալն յԱպլղարիփ մարգպանէն» (74բ):

Հայրապետ վարդապետի առավել ընդարձակ ու կարևոր ընդմիջարկությունը վերաբերում է Անիի պարիսպների ու Մայր տաճարի կառուցմանը: Այն ավելի ակնառու դարձնելու համար զուգադիր ներկայացնենք Սամվել Անեցու տեքստը և Հայրապետ վարդապետի հավելումներով հատվածը:

Սամվել Անեցի	Հայրապետ վարդապետ
Սմբատ շահանշահ որդի Աշոտոյ ամս ԺԳ (13): Իսկ եւ իսկ ընդ թագաւորէն Սմբատայ լիր	Սմբատ շահանշահ որդի Ողորմածին Աշոտոյ, սա ի սկզբան թագաւորութեան իւրոյ լիր արկեալ պարսպի քաղաքին Անույ մե-

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 905:

արկեալ պարսպի քաղաքին Անոյ, բարձրաբերձ բրգամբք, եւ լայնատարած տեղեալք, յԱխուրեան գետոյն մինչեւ ցՕաղկոցաձորն կոչեցեալ վայր: Հիմնարկեաց զԿաթողիկէն պայծառափառ ի նմին քաղաքի, զոր ոչ կարաց աւարտել վասն կանխաժաման մահու կենաց իւրոց:	ծատարած տեղաւք ընդարձակագոյն, քան զհին շինուածն, բարձրաբերձ բրգամբք հաստակառոյց վիմաւք ի կողմանէ ի կողն, յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հիւսիսոյ տողս արկեալ շինուածոյն յԱխուրեան գետոյ մինչեւ ցՕաղկոցաձորն կոչեցեալ վայր: Դարձեալ նոյն թագաւոր Սմբատ Շահնշահ յետ շինուածոյ քաղաքին հիմնարկէ զԿաթողիկէն պայծառափառ ի նմին քաղաքի, չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն, յորում կայ ի քառակողմն կուսէ անկեանցն դրոշմ գծոյ անուան նորա, եւ ոչ կարաց աւարտել վասն կանխաժաման մահու կենաց իւրոց:
---	--

Ինչպէս տեսնում ենք, Հայրապետը որոշ մանրամասներ է ավելացնում պատմիչի խոսքերին, որոնց մեջ կա նաև մի շատ կարևոր տեղեկություն: Ինչպէս հայտնի է, Սմբատի եկեղեցաշինական այս ձեռնարկը կիսատ մնաց նրա անժամանակ մահվան պատճառով, և այն շարունակվեց գահի վրա նրան փոխարինած եղբոր՝ Գագիկ Ա-ի կնոջ՝ Կատրամիդե թագուհու հովանավորությամբ: Ցայժմ մասնագետների համար անհայտ էր մնում, թե շինության մինչև որ մասն է կառուցվել Սմբատի ժամանակ: Եվ ահա Հայրապետն ասում է՝ աստիճանները (որ պիտի հասկանալ գետախարիսխը) և քարերի երկու շարք, նշելով նաև, որ այդտեղ գրվել է Սմբատի անունը («դրոշմ գծոյ անուան նորա»): Բարեբախտաբար Մայր տաճարի հյուսիսային պատի արևելյան անկյունում պահպանվել է այդ գրություններից մեկը՝ «ՄՄՊԱ[Տ]» որն, ի դեպ, հրատարակված է Անիի վիմագրերի՝ Հովսեփ Օրբելու կազմած պրակում⁵: Եթե մինչ այժմ անհասկանալի էր, թե ինչ է նշանակում այդ մենավոր անունը, ապա Հայրապետի բացատրության շնորհիվ ամեն ինչ պարզվում է, մանավանդ որ գրությունը գտնվում է գետնախարսխին հաջորդող քարերի երկրորդ շարքի վրա:

Այսպիսով, Հայրապետ վարդապետի հայտնած տեղեկության վրա հենվելով՝ կարող ենք ասել, որ Սմբատ Բ-ի ժամանակ զգված է եղել եկեղեցու հիմքը, կառուցված՝ գետնախարիսխն ու պատերի քարերի երկու շարքը՝ «հիմնարկէ զԿաթողիկէն պայծառափառ ի նմին քաղաքի՝ չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն...»: Ակնհայտ է, որ Անիի Մայր տաճարի մասին այսպիսի մանրամասներ հաղորդող գրիչը պիտի անպայման եղած լիներ տեղում, իր աչքով տեսած լիներ գրությունը: Հասկանալի է, որ նա գիտակցել է այդ փաստի կարևորությունը, դրա համար է մուծել իր ընդօրինակած մատյանում:

⁵ Դիվան հայ վիմագրության, պր. 1, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 36: Անվան վերին ձախ մասում անհասկանալի է միայնակ Ա տառի առկայությունը, իսկ անունից ներքև ևս մեկ տառ են գրել՝ թերևս Դ:

Հետաքրքրական է նաև, որ Տրդատաշեն Մայր տաճարի շինարարությունն ավարտած թագուհու անունը Մամվել Անեցին նշում է «Կատրամիդե» ձևով (այդպես է նաև այլ պատմիչների մոտ), մինչդեռ տաճարի շինարարական արձանագրության մեջ գրված է «Կտրանիդե»⁶: Հայրապետ վարդապետը, թեպետ Անեցու ժամանակագրությունն էր ընդօրինակում, սակայն թագուհու անունը գրում է շինարարական վիմագրին հետևելով՝ «Կտրանիդե» ձևով:

Կարծում ենք՝ բերված նյութերը լրացուցիչ բացատրություններ չեն պահանջում՝ եզրակացնելու համար, որ Հայրապետ վարդապետը Անի քաղաքին և անիական իրողություններին քաջածանոթ մարդ էր և, ամենայն հավանականությամբ, Շիրակի բնակիչ:

Հաջորդ գրիչը դարձյալ 13-րդ դարում ապրած Յոհանն է (հիշատակարանում իրեն կոչում է «Յոհան գրիչ»), որն ընդօրինակել է պատմագրական երկերի մի բացառիկ արժեքավոր ժողովածու՝ Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը, որը պարունակում է Մովսես Խորենացու Հայոց պատմության հնագույն ընդօրինակություններից մեկը (թերթ 2բ-135ա), Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի Պատմության (թերթ 137ա-242ա) և Արիստակես Լաստիվերցու Պատմության (թերթ 242ա-311բ) առայժմ հայտնի ամենավաղ օրինակները:

Այս մատյանում Յոհան գրիչը հիմնականում Ստեփանոս Ասողիկի և մասամբ Արիստակես Լաստիվերցու երկերի մեջ՝ լուսանցքներում, մի շարք հավելումներ է կատարել: Դրանց մեծ մասը հետագայի գրիչները մոծել են անմիջապես բնագրերի մեջ: Ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս Յոհանի կատարած ընդմիջարկությունները տարանջատել բնագրերից, միաժամանակ դրանց միջոցով պատկերացում կազմել Յոհանի ընդօրինակած մատյանի գրչության տեղի ու ժամանակի մասին: Հիշատակարաններից երևում է, որ գրիչը վանական միաբանության անդամ էր (հոգևոր կոչումը չի նշում):

Քանի որ ձեռագրի, գրչի և նրա կատարած հավելումների վերաբերյալ մենք նախկինում հանդես ենք եկել առանձին հրապարակմամբ⁷, այստեղ միայն կներկայացնենք նրա մի քանի ընդմիջարկությունները, որոնք հուշում են գրչի ապրած միջավայրի մասին: Յոհանի հավելումները հիմնականում գրված են լուսանցքներում, հազվադեպ գրապույների միջև, վերաբերում են անիջապես կից տեքստին, կամ ունեն տարբերանշան (փոքրիկ օղակի կամ լատինական v տառի նմանությամբ), որը կրկնվում է տեքստի համապատասխան մասում՝ ցույց տալով ընդմիջարկության գետեղման տեղը:

Կաթողիկոս Հովհան Մանդակունու (478-490) աթոռակալության մասին գրելուց հետո Ասողիկը նշում է. «Յայսմ ժամանակի երանելին Տեառնթագ, որ էր ի գաւառէն Արշարունեաց ի Կալոց գեղջէ՝ վկայեալ վասն Քրիստոսի քաջութեամբ՝

⁶ Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 35:

⁷ Մաթևոսյան Կ., Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112:

կատարեցաւ ի Զատմիհրն Հազարաւուխտոյ, ի զօրավարէն Պարսից»⁸, որից հետո Յոհան գրիչը ձեռագրի ստորին լուսանցքում ավելացրել է. «Նշխարք սորա հանգուցան ի Շիրակ գաւառի ի գեղն որ Բեռնաւնս կոչի, յեկեղեցւոջն որ Տեառնթագ ասեն» (162բ):

Աստղիկի պատմության այն հատվածում, որտեղ ասվում է, որ Պարսից թագավորը. «ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց գԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ (30)», Յոհանը երկու սյունակների միջև ավելացրել է. «Ի Սրեն գեկեղեցին սա շինեաց» (165ա)⁹:

Պատմության այն հատվածում, որտեղ Աստղիկը նշում է, որ Աբաս Բագրատունի (929-953) թագավորը կառուցել է Կարսի եկեղեցին, Յոհանը ձախ լուսանցքում ավելացրել է հետևյալը. «Սա շինէ եւ զՓոքր Կաթողիկէն Անույ: Եւ զՍուրբ Գրիգոր, ի Քաղաքոյ դաշտին» (196բ): Անիի պատմության համար այս վկայությունը չափազանց կարևոր է, քանի որ այդ եկեղեցին՝ Փոքր Կաթողիկէն, փաստորեն, կառուցվել է մինչև Անիի մայրաքաղաք հռչակվելը: 953 թվականից հորը՝ Աբասին փոխարինած Աշոտ Ողորմածը 961-ին ոչ միայն Անին մայրաքաղաք հռչակեց, այլև այդտեղ թագադրվեց, մի արարողություն, որը կատարվում էր կաթողիկոսի ձեռքով՝ եկեղեցում: Դրանից հետո Աշոտը ձեռնարկեց քաղաքի առաջին պարսպի կառուցումը, բայց իր նստավայրում եկեղեցի չկառուցեց (ի տարբերություն Բագրատունի նախորդ և հաջորդ թագավորների), քանի որ իր հոր հիմնած եկեղեցին՝ Փոքր Կաթողիկէն, արդեն կար, և ինքն էլ այդտեղ էր թագադրվել¹⁰: Ինչ վերաբերում է Աբասի կողմից Քաղաքադաշտի Ս. Գրիգորը (Զվարթնոցը) «շինելուն», այն պետք է հասկանալ որպես նորոգում, որի մասին նշվում է նաև այլ աղբյուրում¹¹:

Յոհանի հաջորդ ընդմիջարկությունը վերաբերում է 998թ. Մամլան ամիրայի դեմ մղված Օմր գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ Անիի թագավորության վեց հազարանոց զորաբանակը գլխավորող զորավարներին: Աստղիկը գրում է, որ հայկական զորաբանակը հանձնվել էր. «...ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ, եւ Սմբատայ մագիստոսի որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»: Այս հատվածից աջ, լուսանցքում, Յոհանն ավելացրել է. «Պահլաւունոյ որ զՄարմաշէն շինեց: Որ զԲգնէրն շինեց» (236ա):

⁸ Ստեփանոս Տարոնեցի Աստղիկ, Պատմութիւն տիեզերական, (բնագիրը պատրաստեց Գ. Մանուկեան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ, Եր., 2011, էջ 688 (այսուհետև՝ Աստղիկ, 2011):

⁹ Յավոք, Աստղիկի պատմության և՛ 1885 թ. հրատարակության մեջ (երբ Յոհանի մատյանը հրատարակչին հայտնի չէր), և՛ 2011-ի «Մատենագիրք հայոցում», Սրենի մասին այս հավելումը սխալ տեղում է դրված (Ստեփանոսի Տարոնեցոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մայիսսեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 86, Աստղիկ, 2011, էջ 692):

¹⁰ Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 155-158: Հատկանշական է, որ Աշոտ Ողորմածի որդու՝ Սմբատ Բ-ի Անիում կառուցած Մայր տաճարը աղբյուրներում սովորաբար կոչվում է «Մեծ Կաթողիկէն»:

¹¹ Յովսեփեան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 87, Կ. Մաթևոսյան, Անի, էջ 156, 338:

Գրիչը ցանկացել է նշել իրեն հայտնի փաստն այն մասին, որ Վահրամ Պահլավունին Մարմաշենն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, այդ պատճառով երկու տվյալն առանձնացրել է վերջակետով: Բայց հետագայի ընդօրինակողներն այդ տողերը, որպես միասնական միտք, ներմուծել են բնագրի մեջ, այդպես էլ անցել է հրատարակություններին, որն, իհարկե, պատմականորեն սխալ է, քանի որ Մարմաշենն ու Բգներ-Բագնայրը նույն մարդը չի կառուցել: Սամվել Անեցու վկայությունից հայտնի է, որ Բագնայրի վանքը 1010 թ. կառուցել է Սմբատ Մագիստրոսը, իսկ Մարմաշենի վանքը, շինարարական արձանագրության համաձայն, Վահրամ Պահլավունին ավարտել է 1029-ին: Սա նշանակում է, որ 1004 թվականին իր պատմության շարադրանքն ավարտած Ասողիկը պարզապես չէր կարող այդ մասին նշել, իսկ Մատենադարանի թիվ 2865 ձեռագրի համապատասխան էջն էլ ցույց է տալիս, որ այդ հատվածը Յոհան գրչի կատարած հավելումն է:

Յոհանի մյուս հավելումը մեծ նշանակություն ունի Անիի ճարտարապետության պատմության համար: Ասողիկի Պատմության համապատասխան հատվածի վերնագիրը՝ «Յաղագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անույ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի» Յոհանը լրացրել է նույն կարմիր թանաքով, զարդագիծ շրջանակի մեջ գրված հետևյալ բառերով. «Տրդատ վարդապետ եկեղեցոյն» (241ա): Անիում Զվարթնոցի նմանությամբ կառուցված Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետի վերաբերյալ չեն պահպանվել վիմագիր և մատենագրական այլ տեղեկություններ: Մասնագետները միայն ենթադրել են, որ ճարտարապետը կարող էր Տրդատը լինել, այժիս առաջ ունենալով Ասողիկի Պատմության 1885 թ. հրատարակությունը, ուր Յոհանի ընդմիջարկությունն արտագրող գրիչները որոշ բառեր էլ իրենք ավելացնելով ստացել են Ստեփան Մալխասյանցի՝ տողատակում բերած սույն գրառումը. «Ձ(եռագրեր)՝ որ անուամբ սրբոյն զեկեղեցու միդատ (ընթերցիր՝ տրդատ) վարդապետ եկեղեցոյն»¹²: Ինչպես տեսնում ենք, Յոհանը ոչ միայն ստույգ նշել է Տրդատի անունը, այլև նրա ճարտարապետ՝ «վարդապետ» լինելը:

Հաջորդ երկու հավելումը վերաբերում են Արիստակես Լաստիվերցու Պատմությանը: Առաջինը վերաբերում է Սարգիս Սևանցուն (կաթողիկոս՝ 992-1019 թթ., մահ՝ 1022 թ.), որի գործունեությունն ամփոփող մահվան մասին վկայող Արիստակես Լաստիվերցու գրած հատվածի մոտ Յոհանն ավելացրել է. «Գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն» (248բ):

Անիի՝ սելջուկյան գրավումը ներկայացնող հատվածի վերջում՝ աջ լուսանցքում, ավելացված է. «Երկրորդ Դավիթ թուականն ՇՀԳ (1124): Երրորդ Գեորգի թ. ՈԺ (1161): Ի ՈԶԵ (1236) թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս»¹³ (306 ա):

¹² Ստեփանոսի Տարօնեցույ Պատմութիւն տիեզերական, էջ 282: Ցավոք, այս հատվածի դեպքում Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրն անտեսվել է «Մատենագիրք Հայոցում», որտեղ Յոհանի ստույգ հավելումը բաց է թողնված, դրա փոխարեն հետագայի սխալ արտագրումներ են տեղ գտել տողատակում (Ասողիկ, 2011, էջ 827):

¹³ Յոհանի այս հավելումը նշված է Լաստիվերցու երկի գիտական հրատարակության տողատակում, որոշ տարբերություններով և առաջին թվականի սխալով՝ «ՁՀԳ» (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցույ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 136):

Յոհան գրիչն այստեղ Ալփասլանի (Ալփ Արսլան) կողմից Անիի գրավումը (1064 թ.) համարելով քաղաքի առաջին առումը, համարակալելով հաջորդները միանգամայն ճիշտ թվագրմամբ նշում է, որ երկրորդ անգամ Անին գրավել է Վրաց Դավիթ (Շինարար) թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին քաղաքը գրավել են թաթարները:

Յոհան գրիչի հիշատակարանները և Ասողիկի ու Արիստակես Լաստիվերցու երկերում նրա կատարած հավելումները, միմյանց լրացնելով, թույլ են տալիս որոշ ենթադրություններ կատարել ձեռագրի գրչության տեղի և ժամանակի վերաբերյալ:

Նախ, հենց վերջին հավելումը թույլ է տալիս որոշակի դարձնել գրչության ժամանակի ստորին սահմանը, որը 1236 թվականն է, քանի որ Յոհանը նշում է, թե այդ թվականին թաթարները գրավեցին Անին: Ժամանակագրական վերին սահմանը ավելի դժվար է որոշել, սակայն դատելով նույն վկայությունից, այն չի անցել մոնղոլների տիրապետության շրջանից: Յոհանի խոսքը թեև կարճ, բայց արտահայտիչ է՝ «Ի ՈԶԵ (1236) թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս»: Թվում է, որ գրիչը բնակիչն էր թաթարներից առնված այդ տիեզերքի, որի դժնի ու հոգեկեղեք մթնոլորտի արձագանքը կարելի է գտնել նաև նրա հիշատակարաններում: Կարելի է ենթադրել, որ Յոհան գրիչ ծանր հոգեվիճակը կարող էր ծնվել մոնղոլների տիրապետության առաջին տասնամյակներին՝ 1240-1250-ական թվականներին, որն էլ համարում ենք մատյանի գրության մոտավոր ժամանակը:

Իսկ այն հարցը, թե որն է եղել Յոհանի բնակության տարածքը, կարող է պատասխան գտնել հավելումների պարունակած տեղագրական տվյալների միջոցով: Դրանցում մատնանշվում է, որ նահատակ Տեառնթագի նշխարները գտնվում են Շիրակ գավառի Բեռնոն գյուղի եկեղեցում (որը հենց Տեառնթագ է կոչվում), որ Դավիթ Սահառունին կառուցել է Սրենի եկեղեցին, իսկ Աբաս Բագրատունին կառուցել է Անիի Փոքր Կաթողիկեն, Վահրամ Պահլավունին կառուցել է Մարմաշենը, Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, որ Տրդատը Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետն է, Սարգիս Սևանցի կաթողիկոսը թաղվել է Հոռոմոսում և, վերջապես, որ Ալփասլանից հետո Անին երկրորդ անգամ գրավել է Դավիթ թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161թ., իսկ 1236-ին թաթարները գրավել են Անին և ողջ աշխարհը: Դժվար է անգամ պատկերացնել, որ այս տեղեկությունները կարող էր փոխանցել, ասենք, Վասպուրականում, Սյունիքում, Գուգարքում կամ վերը թվարկված բնակավայրերից հեռու գտնվող մեկ այլ տեղում ապրող մի գրիչ: Սա զուտ Շիրակի, իսկ ավելի ստույգ՝ Անիի շրջանի բնակիչն հասու տեղեկությունների պաշար է, և կարծում ենք, թե Յոհանը Անիի շրջանում ապրած գրիչ էր: Հավանաբար նա գործել է Անիի մերձակա վանքերից մեկում:

Յոհան գրիչը հավելումները կատարել է հիմնականում հայրենի գավառի վանքերի ու եկեղեցիների մասին՝ իրեն հայտնի մի քանի տվյալներ պատմությանը փոխանցելու նպատակով (տեսնելով, որ դրանք չկան իր ընդօրինակած պատմագրքերում): Տեղեկությունների մի մասը նա կարող էր քաղել այլ հեղինակներից, ինչպես, օրինակ՝ Սրենի եկեղեցու կառուցողի հարցում՝ Հովհաննես Դրասխանա-

կերտցուց, Մարմաշենի ու Բագնայրի դեպքում՝ Սամվել Անեցուց: Սակայն, նրա հայտնած տեղեկություններից մի քանիսը՝ Անիի Փոքր Կաթողիկեի, Տրդատ ճարտարապետի՝ Գագկաշենը կառուցելու և Մարգիս Սևանցու թաղման տեղի մասին, առայժմ այլ աղբյուրներից հայտնի չեն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Մատենադարանի թիվ 1897 ձեռագրում Հայրապետ վարդապետի, իսկ թիվ 2865 ձեռագրում Յոհանի կատարած ընդմիջարկություններն ու հավելումներները թույլ են տալիս նրանց համարել Անի-Շիրակի շրջանում ապրած գրիչներ: Միաժամանակ նկատի ունենալով նրանց հայտնած տեղեկությունների կարևորությունը պատմական և մշակութային տարբեր հարցերի առնչությամբ՝ այս երախտավորներին իրավամբ կարելի է կոչել գրիչ-հեղինակներ:

ДВА НОВЫХ АВТОРА ИЗ ОБЛАСТИ АНИ

___ *Резюме* ___

___ *К. Матевосян* ___

Изучение рукописей Матенадарана позволило выявить имена двух писцов, труд которых примечателен тем, что в ходе работы над рукописью они внесли в исторические тексты столь существенные дополнения, что эти интерполяции позволяют назвать писцов малыми авторами. Двое из них, судя по характеру переданной ими информации, были из Ани-Ширакской области.

Первый из них вардапет (архимандрит) Айрапет, живший вероятно в 13-м веке, переписал Хронографию Самвела Анеци (Матенадаран N 1897). Он внес в текст некоторые интерполяции. Например, Самвел Анеци пишет что Мармашен основал князь Ваграм, Айрапет добавляет, что он был внуком Абугамра, а упоминая о церкви Спасителя в Ани, называет имя строителя – Аблгариб. Известно что строительство Анийского Собора было начато в годы правления царя Смбата, а после его смерти было продолжено царицей Катрамиде. Айрапет конкретизирует, что во время Смбата был заложен фундамент здания, стилобат и два ряда кладки камней, на углах которой было написано имя царя (одна надпись сохранилась до сих пор). Нет сомнений, что фиксирующий такие детали автор был на месте и видел все своими глазами.

Другой писец 13-ого века - Иоанн (Матенадаран N 2865) внес в текст истории Степаноса Таронаци и Аристакеса Ластиверци интересные данные, опять же в основном по истории Ани-Ширака. Он сообщает, например, что царь Аббас построил малый Собор Ани, что Трдат является архитектором церкви Гагкашен Св. Григора в Ани, и что католикос Саркис был похоронен в монастыре Оромос. Следует отметить, что эти данные не сохранились в других источниках.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մաթևոսյան Կարեն Արտաշեսի - պ. գ. դ., Մեսրոպ Մաշտոցի անվան հին

ձեռագրերի ինստիտուտ Մատենադարան, E-mail: karenmatevosian@gmail.com

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
ԴԱՍԱԿԱՆԳՈՒՄ*

Գրականության մեջ պաշտպանական գործառույթ ունեցող ամբողջությունները ունեն տարբեր անվանումներ՝ *ամբոց, բերդ, դղյակ* և այլն, որոնք օգտագործվում են ընդհանուր իմաստով: Դեռևս կատարված չեն պաշտպանական կառույցների գործառութային վերլուծություն և դրան համապատասխան դասակարգում:

Պաշտպանական կառույցների տարբեր անվանումները հուշում են, որ դրանք պետք է ունենային գործառական տարբեր նշանակություն և ըստ այդմ՝ տարբեր կառուցվածք և չափեր: Առայսօր բացահայտված չեն տարբեր անվանումներով և գործառություններով ամբողջությունների տեսակների առանձնահատկությունները, դրանց անվանական համապատասխանությունը գործառութին և միայն դրան համապատասխան գործառական եզրույթների կիրառումը:

Հայկական վաղ միջնադարյան պատմագրության մեջ պատերազմական գործողությունների, ռազմի, հարձակողական և պաշտպանական մարտերի տեսարանների մանրամասն նկարագրությամբ ամենահարուստը թերևս Փավստոս Բուզանդի ու Հովհան Մամիկոնյանի աշխատություններն են: Այս հեղինակների անպաճույճ լեզուն, հավատարմությունը ժողովրդական լեզվամտածողությանը, իրերի և անցքերի անբռնազրուս, ուղղակի ընկալման և փոխանցման պարզան գգալի նյութ են տալիս խնդրո առակա եզրույթների ճիշտ բացահայտման և տիպաբանական բնորոշման համար:

Պաշտպանական ամբողջություններից ամենատարածվածը ամրոցներն են: Սակայն *ամբոց* եզրույթը, որի հիմքում *ամուր* արմատն է, ունի շատ լայն կիրառություն և շատ դեպքերում գործածվել է ոչ միայն կառույցի, այլև անմատչելի, դժվարամուտ տարածքների ու տեղանքի բնութագրման համար: «Նրանք գնացին իրենց երկիրը՝ Տայքի ամրոցները, և այնտեղ մնացին իրենց ընտանիքների հետ բավականին տարիներ»¹: Այնուհետև շարունակում է. «Գնաց նրանց գտավ Տայքի ամուր վայրերում, իրենց աշխարհում»²:

Մեր կարծիքով, որպես պաշտպանական կառույցներ, ամրոցներն ունեցել են տեղական՝ պարսպագուրկ, փոքր բնակավայրերի բնակչության ինքնապաշտպանության գործառույթ: Նման փոքր ամրոց է նկարագրում Հովհան Մամիկոնյանը Կուառս գյուղում, ուր հյուսիսականների անակնկալ հարձակման ժամանակ պատսպարվում ու դիմադրում են բնակիչները. «Այդպես բաժանելով զորքերին՝ ուղարկեց, ինչպես որ նախատեսել էր, իսկ ինքը, թագավորն ու Գրիգորը մեզ հետ

* Աշխատանքն իրականացվել է «Ախուրյանի ավագանի ամրաշինական կառույցները» թեմայի շրջանակում:



¹ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 104:

² Նույն տեղում, էջ 121:

միասին, այնտեղի փոքրիկ ամրոցը մտնելով, աղոթել սկսեցին: Իսկ հյուսիսականների զորքերը, հարմար միջոց գտնելով, հարձակվեցին գյուղի վրա և մեզ ամրոցից էին ուզում վտարել»³: Այդպիսին է Աղվորիկի վաղ միջնադարյան ամրոցը, որը գտնվում է մոտ 80 կազարաններից կազմված բնակավայրի կենտրոնական, բարձրադիր մասում (նկ.1,2):

Ուսումնասիրելով աղբյուրները՝ գալիս ենք այն եզրակացության, որ ամրոց անվանվող պաշտպանական կառույցները, ըստ տեղադրության, բաժանվում են 3 հիմնական խմբի՝

1. բնակավայրի մեջ գտնվող ամրաշինական կառույցներ,
2. նմանատիպ, բնակավայրից դուրս, բայց մոտ գտնվող փոքր, առանց մշտական կայազորի ամրաշինական կառույցներ,
3. ամրոց-բնակավայրեր:



Բնակավայրի հարևանությամբ գտնվող բարձրադիր և առավել անմատչելի տեղանքում՝ բլուրների զագաթին, սարահարթի եզրին և այլն, կառուցվել են փոքր ամրոցներ, որոնք կոչված էին տվյալ և մոտակայքում գտնվող բնակավայրերի բնակչության ինքնապաշտպանության համար: Այսպիսի ամրոցները բազմաթիվ են և թվագրվում են ուշ բրոնզի ժամանակաշրջանից միջնադար: Մեր կողմից ուսումնասիրված լավագույն օրինակներից են Ագատանի վաղ երկաթի ժամանակաշրջանի և Փոքր Մեպասարի վաղ միջնադարյան ամրոցները (նկ. 3, 4): Ագատանի և Աղվորիկի բնակավայրերի մակերեսին հստակ ընթերցվող կազարանների թիվը մոտ 80 է: Եթե յուրաքանչյուր կազարանում ապրեր նույնիսկ 7-8 անձ, բնակչության ընդհանուր, միջին թիվը 500 է: Հավանաբար այդ իսկ պատճառով այդ

³ Հովհանն Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Եր., 1989, էջ 54-55:

ամրոցների մակերեսը չի հասնում 1 հեկտարի⁴: Խնդիրը ոչ միայն 2-3 բնակավայրերի նույնաքանակ մարդկանց այդ տարածքում պատսպարվելն է (նրանց նույնիսկ 60%-ի մարտունակ լինելու պարագայում), այլև ավելի երկար պարսպապատերի պաշտպանության դժվարությունը:

Ցավոք, նմանատիպ ամրոցների թվազրության համար հնագիտական պեղումների բացակայության պատճառով հաճախ հիմնական կովանը միայն պարիսպների կիկլոպյան, անշաղախ շարվածքն է, որը, ըստ արմատացած կադապարի, անհաբիր է միջնադարյան շինարվեստին: Այդ իսկ պատճառով դրանք հիմնականում թվագրված են բրոնզ-երկաթ ժամանակաշրջաններով: Սակայն հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ այդ ամրոցները կառուցված են հասարակ բնակչության կողմից և ունեն սոսկ տեղական նշանակություն: Նույնիսկ, եթե որոշ վաղ ամրոցներ հայկական պետականության հզորացմանը զուգընթաց կորցնելով իրենց պաշտպանական նշանակությունը, աստիճանաբար քայքայվել են, ապա վաղ միջնադարում, ելնելով պատերազմական մարտահրավերներից, վերականգնվել և վերակառուցվել են:

Առավել փոքրաթիվ են ամրոց-բնակավայրերը: Ի տարբերություն վերը հիշատակված օրինակների՝ դրանք ամրացված, փոքր բնակավայրեր են, որոնք թվագրվում են բրոնզ-երկաթից մինչև ուշ միջնադար: Դրանցից են Լճաշենի⁵, Հոռոմի⁶, Հայկաձորի⁷, Բանդիվանի և այլ ամրոց-բնակավայրերը: Այս ամրոց բնակավայրերը հիմնականում վերաբերում են պատերազմական, անհանգիստ ժամանակաշրջաններին:

Բոլորովին այլ գործառնություն ունեին *բերդ* անվանումով ամրությունները: Դրանք կառուցվում և պատկանում էին կա՛մ արքունիքին, կա՛մ խոշոր նախարարներին: Բերդերի հիմնական մասը գտնվում էր անմատչելի տեղերում և ուներ մշտական կայազոր՝ բերդապահներ: «Արշակ թագավորը հրամայեց Արշարունյաց գավառում իր համար շինել մի ամուր բերդ՝ Արտագերս անունով, և այս գավառը հատկացրեց բերդին իբրև համբարանաց՝ ուտելիքի համար»⁸: Դրանք ծառայում էին որպես խոշոր ռազմական հենակետեր, գանձարաններ, զենքի և սննդամթերքի պահեստներ, հսկում էին ռազմավարական ճանապարհները: Հայկական մատենագրության մեջ բազմաթիվ են արքայապատկան բերդերի, դրանցում պահվող գանձերի մասին հիշատակությունները: «Իսկ Դրաստամատ ներքինին, որ հայոց Տիրան թագավորի և նրա որդու՝ Հայոց Արշակ թագավորի տարիներին իշխում էր Անգեղտան գավառի վրա, հավատարմությամբ պահում էր Անգեղ բերդի գանձերը, նույնպես և բոլոր արքունական բերդերը, որ գտնվում էին այն կողմերում, նույն-

⁴ Ղաֆադարյան Գ., Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1996, հ. 1, էջ 72-85:
⁵ Մնացականյան Հ., Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, ՊԲՀ, թ. 2, Եր., 1965, էջ 96:

⁶ Badalyan R., *Le site d' Horom, un résumé de l'histoire du Chirak, Dans les montagnes d' Arménie, 500 000 ans d'3 histoire avant notre ère. France, 2007 p.80-82.*

⁷ Խաչատրյան Հ., Հայկաձորի ամրոց-բնակավայրի 2011թ. պեղումները, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Եր., 2011, էջ 154-162:

⁸ Փավստոս Բուզանդ, էջ 180:

պես և Ծովագ աշխարհում Բնաբեղ բերդում եղած գանձերը նրա տեսչության տակ էին»⁹:

Արքունի բերդերի կայազորները, նույնիսկ թագավորական իշխանության թուլացման կամ բացակայության պայմաններում, օրինակ՝ Արշակ թագավորի բանտարկումից հետո հավատարմորեն պահպանում էին իրենց վստահված գանձերը «... Դարոյնք բերդին Կոզի երկրում, որտեղ պահվում էին Արշակունիների գանձերը շատ մեծ քանակությամբ, որովհետև բերդապահները հավատարիմ մարդիկ էին»¹⁰:

Պարսպապատ քաղաքներում դեռևս անտիկ ժամանակաշրջանից կային նաև միջնաբերդեր, որոնք ունեին նույն գործառույթները: Օրինակ՝ Վանի միջնաբերդի մասին հիշատակություն կա Բուզանդի մոտ. «Իսկ Ռշտունյաց տիկինը պահվում էր Վան քաղաքի միջնաբերդում՝ Տոսպ գավառում»¹¹:

Բերդերը շատ դեպքերում ծառայում էին որպես բանտ: Սոսկ բանտային գործառույթ ուներ, օրինակ, հանրահայտ Անհուշ բերդը, Գրիգոր Լուսավորիչը պահվում էր Արտաշատի բերդում, Շապուհը ըմբոստ նախարարների կանանց պահելու համար հրամայում է կառուցել բերդեր¹²: Միայն մեկ դեպքում, Հովհան Մամիկոնյանի մոտ մենք հանդիպում ենք *բանտատուն* արտահայտությանը, որը հուշում է կալանավորված անձանց պահելու համար հատուկ տան կամ կառույցի գոյության մասին. «այս խոսքերը լսելով՝ Անգեղ տան իշխանը հրամայեց խուզել նրանց մազերը և տանել Փայտակարան քաղաքի բանտատունը՝ 438 մարդ»¹³: Բանտատան նկարագրության բացակայությունը, մեզ թույլ է տալիս միայն ենթադրել, որ այն պետք է լիներ բավականին մեծ, ամրացված կառույց, ունենար մշտական կայազոր՝ բանտապահներ, որոնք ոչ միայն պետք է հսկեին կալանավորված անձանց, այլև կարողանային ետ մղել դրսից կալանավորներին ազատելու համար ձեռնարկված հարձակումներն ու գործողությունները:

Արքայապատկան բերդերի համանման գործառույթ ունեին նաև նախարարական բերդերը՝ այն տարբերությամբ, որ բնակեցված էին, և դրանցում ապրում էր սովորաբար նախարարների ընտանիքները: Պատմելով Մամիկոնյան տան նահապետի՝ Վարդան Մամիկոնյանի սպանության մասին՝ Բուզանդն ասում է. «(Վասակը) գնում, գտնում են նրան Տայքում՝ իր գավառում, իր ամուր բերդում, որ կոչվում է Էրախանի...իսկ նրա կինը հղի էր, ծնելու օրերը մոտեցել էին, մինչև նա վերը բերդում իր բազմոցի վրա նստած էր, հանկարծ սաստիկ ճիչ բարձրացավ. երբ նա սարսափի ճիչը լսեց, բազմոցից վար վազեց և վազելիս երեխային ծնեց»¹⁴: Պատահական չէ «իր բազմոցի վրա» արտահայտությունը, որը հուշում է ոչ միայն տևական բնակության մասին, այլև ակնարկում որոշակի աստիճանակարգի գոյությունը կենցաղում:

⁹ Փ. Բուզանդ, էջ 248

¹⁰ Նույն տեղում, էջ 231:

¹¹ Նույն տեղում, էջ 224:


¹² Նույն տեղում, էջ 223:

¹³ Մամիկոնյան Հ, նշվ. աշխ., էջ 46:

¹⁴ Փ. Բուզանդ, էջ 179:

Եթե արքան և արքայական ընտանիքը հիմնականում բնակվում էին մայրաքաղաքում կամ արքայապատկան կալվածքներում, ապա նախարարները և նրանց ընտանիքները, ունենալով ավելի համեստ հնարավորություններ ու հաճախակի գտնվելով երկպառակչական ընդհարումներում և պատերազմներում, պետք է բնակվեին իրենց բերդերում: Այս տարբերությունը թույլ է տալիս նախարարական բերդերը որակել որպես *դոյակներ*:


Բերդերի և ամրոցների նկարագրությունների մեջ հաճախ հանդիպում է *առապար* արտահայտությունը, որը նշանակում է քարքարոտ: «Երբ թշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա, քաղաքից դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական բերդի կողմը՝ ապավինելով այն անապատին ու քարքարոտ տեղերին»¹⁵: Մեր կարծիքով, առապարը բերդի կամ ամրոցի պարսպից 25-50մ հեռավորությամբ խոշոր քարերի մի քանի շարքերից կազմված անկանոն շղթա է, որը կոչված է արագորեն գրոհող զորքի շարժումը մի պահ կասեցնելու կամ արագությունը կտրելու համար: Նման պահպանված օրինակ մենք ունենք Ագատանի մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի ամրոցում (նկ. 5): Առաջին հայացքից թվում է, որ վայրկյաններ տևող այդ կասեցումը կամ վազքի արագության դանդաղումը չի կարող էական նշանակություն ունենալ, ու նման կառույցը պաշտպանական առումով անիմաստ է: Սակայն չպետք է մոռանալ պաշտպանվող կողմից ամենաէֆեկտիվ զենքերից մեկի՝ պարսատիկի մասին, որը հայերն օգտագործել են հնագույն ժամանակաշրջանից և որը քարերի անսպառ առատության պայմաններում հատուկ ծախս չպահանջող ամենաարդյունավետ զենքերից է (նկ. 6): Պարսատիկավորները հին աշխարհի կանոնավոր զորքերի թեթև հետևակի մաս էին և ճակատամարտի սկզբում կովում էին առաջին գծում (նկ. 7): Այն առավել արդյունավետ զենք է պաշտպանվող կողմի համար:



¹⁵ Փ. Բուզանդ, նույն տեղում, էջ 76:



Նկ. 6



Նկ. 7

Պատահական չէ, որ օրինակ՝ Ադվորիկի վաղ միջնադարյան ամրոցի լայն պարիսպը ամբողջովին լցված է բոնգքաչափ և մի փոքր ավելի մեծ քարերով: 25-30մ հեռավորությունը նաև խիստ նպատակահարմար տարածություն է կանգ առած կամ դանդաղ ընթացող թիրախը գլաջարդ անելու կամ դիպուկ նետահարելու համար: Պարսատիկավորների մարտական արդյունավետության հրաշալի օրինակ է բերում Հովհան Մամիկոնյանը. «Իսկ հյուսիսականների զորքերը հարմար միջոց գտնելով հարձակվեցին գյուղի վրա և մեզ ամրոցից էին ուզում վտարել: Այս բանը նկատելով՝ այն չորս հազար հոգին, որ գյուղի վրա էին գնացել, հարվածեցին ու փախցրին նրանց զորքին դեպի գյուղամեջ, որտեղ նրանցից շատերի երիվարների գլուխները այգեգործները գլաջարդ (քարաջարդ) արին, հեծյալներից շատերն էլ վիմասպան եղան: Հազար և վեց մարդ այնտեղ սպանվեցին, իսկ թակարդներում հազար յոթ հարյուր մարդ ընկավ, որոնցից ութ հարյուր վեցը պարսավորները կոտորեցին»¹⁶: Ինչպես տեսնում ենք, սպանված պարսիկների կեսից ավելին բաժին են ընկնում պարսատիկավորներին:

Պաշտպանական կառույցների գործառնությանի առանձնահատկություններից ելնելով՝ առաջարկվում է դրանք դասակարգել 3 խմբի՝ ամրոց, բերդ, դղյակ, և հետագայում օգտագործել գործառնությանի բնույթին համապատասխան նշված եզրույթները:

ФУНКЦИОНАЛЬНАЯ КЛАССИФИКАЦИЯ ОБОРОНИТЕЛЬНЫХ СООРУЖЕНИЙ

Резюме

А. Хачатрян

В литературе оборонительные сооружения обозначаются терминами укрепление, крепость, замок и т.д., однако нет четкой функциональной классификации этих сооружений и употребление терминов в соответствии основных функциональных признаков.

Самые распространенные оборонительные сооружения - укрепления (амроц). Они имеют местное значение, сооружены сухой, киклопической кладкой и датируются с эпохи бронзы до позднего средневековья. Имея одинаковую функцию (защита населения маленьких поселений) они по расположению делятся на 3 группы:

¹⁶ Մամիկոնյան Հ., նշվ. աշխ., էջ 55:

1. укрепления в поселении,
2. укрепления вне поселения, недалеко, в труднодоступной местности,
3. поселения в укреплении.

Все они без гарнизона.

Функционально отличается другой тип оборонительных сооружений: крепость. Они, как правило, сооружались верховной властью, являлись собственностью царской семьи, располагались в стратегически важных и недоступных местах, имели постоянный гарнизон, были готовы к длительным осадам. В крепостях хранились царские сокровища, запасы провианта и т.д. Крепости часто служили и в качестве тюрем. С античного периода в укрепленных городах сооружались цитадели.

Такую же функцию имели крепости феодалов, но они были заселены. Если царская семья в основном проживала в столице, то семьи знати проживали в собственных крепостях. В раннем средневековье при ослаблении центральной власти, с усилением междоусобных войн и вражеских нашествий, это стало более актуально.

Функциональная разница царской и феодальной крепости диктует употребление термина замок для феодальных крепостей.

Исходя из анализа функциональных отличий оборонительных сооружений, предлагаем в дальнейшем употребление трех основных терминов: укрепление, крепость и замок.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Խաչատրյան Համազասպ Հակոբի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: smuseum@web.am.*

Մեծ Մեպասարի մ.թ.ա. XXVIII-XXIV դդ. բազմաթիվ գտածոների մեջ առանձնակի տեղ ունեն ծիսական իրերը:

Հռչակվածում քննության առարկա է 2014թ. մի կառույցի մեջ, հյուսիսային պատից քիչ հեռու, կրկնակի սալահատակի տակ բացված հորի բերանին գտնված անթուրծ կավից կուռքը (տախտ. I, նկ. 1): Հորը կառուցվել է ժայռի բնական խոռոչի կողերը երեսպատելով ուղղահայաց դրված սալերով (տրամ. 82սմ, խոր. 72սմ): Հատակի հողախառն շերտով մոխիրի մեջ գտնվեցին կենդանական ոսկորներ, խեցու մի քանի փոքր բեկոր և խոշոր եղջերավոր անասունի ծնկոսկրից իլիկի գլուխ: Հորի բերանը փակող տափակ սալերի հետ պատկած դիրքով գտնվեց մանրահատիկ, լավ հունցված, դեղնավուն, անթուրծ կավից, ուղղանկյուն իրանով և եռանկյուն գլխով բեկորված կուռք (ստորին մասի լայն. 16,5սմ, զագաթի հիմքի լայն. 19սմ, բարձր. 26, 5սմ, հաստ. 5սմ): Կուռքը ներկայացնում է մարդակերպ ֆիգուր (առանց թևերի կամ թևերը ծաված կրծքին): Իրանի լայն մասը ենթադրում է նստած դիրք: Վերին, եռանկյունաձև մասը գլուխն է (առանց վզի կամ ծածկված գլխով): Կուռքը զարդանախշել են՝ փաթաթելով լայնատերև բույսով: Տերևի ծայրը կուռքի զագաթին է, կենտրոնական լայն պալարն իջել է մինչև հիմքը՝ կավի վրա թողնելով բույսի դրոշմվածքը:

Երկրագործ և անասնապահ ցեղերի հավատալիքների և պաշտամունքի մասին վկայող հնագիտական նման փաստերի մեկնաբանումն անհրաժեշտ է, սակայն անհնար է իրականացնել միայն հնագիտական նյութով: Գրավոր աղբյուրների բացակայության պատճառով պաշտամունքային իրերի վերլուծության և մեկնաբանման համար առաջնորդվել ենք ընդունված դիցաբանական ընկալումներով, մշակույթի պահպանման ու այն սերնդեսերունդ փոխանցելու մեջ ամենակարևոր դեր կատարած վարքի խորհրդանշական ձևերը ներառող ծեսերով, հավատալիքներով ու սովորույթներով: Ելնելով Մեծ Մեպասարի կուռքի ձևի, նախշազարդման յուրահատկությունից՝ կարևորում ենք այն հավատալիքները, ծեսերը, որոնցում կնոջը հատկացված է առանձնահատուկ կարևոր դեր, իսկ բույսերը հիմնական ատրիբուտներ են:

Վաղերկրագործական ցեղերի մոտ պատկերացում կար գերագույն աստվածուհու մասին, որը ողջ կենդանի բնության տիրակալուհին էր և նախամայրը, բերքատվություն պարգևողը և երկնային ջրերի տիրուհին¹: Երկրագործ ցեղերի բարեկեցությունը կախված էր պտղաբերությունից և կնոջ կերպարը կարող էր ստանալ նման նշանակություն: Պտղաբերության աստվածուհու պաշտամունքը հին է, որքան մարդկությունը, և ամեն ինչի սկիզբը կապվել է մայր աստվածուհու հետ: Աշխարհի նախաստեղծ պտղաբերող աստվածուհին համարվել է նաև երկնքի, անձրևային ամպերի տիրուհի, բոլոր աստվածների նախամայրը: Պտղաբերության պաշտամունքը, կապված «Բնության մեծ մոր» գաղափարի հետ, տարածված էր ողջ Հին Արևելքում²: Մ.թ.ա. VII-III հազարամյակների մարդակերպ

¹ Рыбаков Б., Космогония и мифология земледельцев энеолита, СА, 1965, №1, стр. 33-35.

² Մարտիրոսյան Հ., Բարայթյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, էջ 12: Кушнарева К., Чубунишвили Т., Древнейшие культуры Южного Кавказа, Ленинград, 1970,

արձանների լայն տարածումը փաստված է հնագիտական նյութերով: Մայր աստվածուհուն վերագրվող արձանիկներ հայտնի են Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Հայաստանի, Վրաստանի, Փոքր Ասիայի, Էգեյան աշխարհի մ.թ.ա. VIII-II հազարամյակներ ընդգրկող հնավայրերից³:

Մեծ Սեպասարի կուռքն անթուրծ կավից է: Ջարմոյից (Իրաքյան Քուրդստան) և մյուս տարածաշրջաններից հայտնի են մ.թ.ա. VIII-VII հազ. վերաբերող, մայր աստվածուհու պաշտամունքը խորհրդանշող անթուրծ կավից արձանիկներ⁴, ինչպես Կարիմ-Շահիրայի նախակերամիկական շերտից գտնված գլուխները ձգված, ոչ հստակ դիմագծերով, առանց ձեռքերի մարդակերպ ֆիգուրները⁵:

Մայր աստվածուհու նեոլիթյան եռանկյունաձև կավից արձանիկ (տախտակ I, նկ. 2) հայտնի է Հունգարիայից⁶: Առանց գլխի անձեր պատկերող անոթներ հայտնի են Փոքր Ասիայից և Իրանից: Միջագետքում, Յարիմ-թեփեի II գտնվել է մերկ կնոջ պատկերող անոթ, որի գլխին փոխարինում է անոթի վիզը (մ.թ.ա. V հազ.): Բալկանյան թերակղզում հայտնաբերվել են անգլուխ կանանց պատկերող նեոլիթյան կավե կուռքեր, որոնք ունեցել են վերադիր գլուխ, քանի որ վզի տեղում անցք է արված, իսկ որոշ դեպքերում էլ գտնվել է առանձնացված գլուխը: Ենթադրվում է, որ ինչ-որ ծեսերի ժամանակ գլուխը պետք էր թաքցնել, իսկ կուռքը պետք էր ներկայացնել առանց գլխի կամ մեկ այլ գլխով: Թեև այդ կուռքերը նախահունական են, սակայն պաշտամունքի որոշ մանրամասերով հաստատված է, որ դրանք աստվածուհու պատկերներ են, որ հույները, գալով Հունաստան, սկսեցին անվանել Դեմետր: Այսինքն՝ ինչ-որ ժամանակ անտեսանելի է եղել Դեմետրը, որն սկզբնապես կառավարում կամ իշխում էր ստորերկրայքում⁸: Ենթադրվում է, որ հնում անտեսանելի լինելը ինչ-որ ձևով կապված էր գլուխը ծածկելու հետ: Հունական դիցաբանության մեջ հանդերձյալ աշխարհի տերը Հադեսն (անունը նշանակում է անտեսանելի) է, որն անտեսանելի դարձնող գլխարկ էր կրում: Սակայն Հոմերոսի մոտ Հադեսը ոչ թե տիրում է հանդերձյալ աշխարհում, այլ կառավարում, իսկ բոլոր գործողությունները կատարում է Պերսեփոնեն, որը Դեմետրի դուստրն էր, և Հունաստանում մորն ու դստերը հաճախ կոչում էին Դեմետրներ⁹:

Խիստ ոճավորված, միայն քառանկյունի իրանի և գլխի ուրվագծով ներկայացված կանանց պատկերներ կան Հայաստանում, Վարդենիսի¹⁰ և Արագածի¹¹ ժայռանկարներում, և ընդհանուր նկարագրով համապատասխանում են կացա-

стр. 162; Եսայան Սո., Հին Հայաստանի մարդակերպ արձանիկները (մ.թ.ա. VII-III հազարամյակներ), ՊԲՀ, 1987, №1, էջ 124:

³ Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 59:

⁴ Мелларт Дж., Древнейшие цивилизации Ближнего Востока, М., 1982, стр. 79.

⁵ Braidwood R. From Cave to Village in Prehistoric Iraq. BASOR, 1951, 124, pl.15 ; Антонова Е. Антропоморфная пластика Древней Месопотамии. Культуры Джармо и Хассуна (конец VII-VI тысячелетия до н.э.), СА, 1972, N2, стр. 21.

⁶ Амброс А., Раннеземледельческий культовый символ (ромб с крючком), СА, 1965, № 3, рис. 3/16; Голан А. Миф и символ, М., 1993, рис.146/6.

⁷ Мунчаев Р., Мерперт Н., Бадер Н., Башилов В., Большаков О., Гуляев В., Куза А., Нариманов И. Исследования Иракской экспедиции, Археологические открытия 1976 года, М., 1977, стр. 591.

⁸ Клейн Л. Древние миграции и происхождение народов. Санкт-Петербург, 2007, стр. 76-77.

⁹ Նույնը:

¹⁰ Կարախանյան Գ., Մաֆյան Պ., Մյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները 4, Ժայռապատկերներ, Պրակ I, Եր., 1970, աղ. 66, նկ. 1,2:

¹¹ Նույն տեղում, աղ. 77, նկ. 1:

րաններում և սրբատեղիներում հայտնաբերված, մայր աստվածուհուն վերագրված արձանիկներին, որոնք բազմաթիվ են կուրարաքսյան մշակույթի հուշարձաններում¹²: Կուրարաքսյան արձանիկների գլխին երբեմն փոխարինում է վզի նմանվող ելուստը, ինչպես Ագարակի (տախտ. I, նկ. 4) և Հառիճի (տախտ. I, նկ. 5) օրինակներում են: Մ.թ.ա. III հազ. թվագրվող, նման ելուստավոր գլխով արձանիկ հայտնի է Կրետից (տախտ. I, նկ. 3)¹³:

Արձանիկների կերտման ձևերը (առանց գլխի և նստած դիրքով) հաճախ համադրվում են: Շատ ժողովուրդներ նստած դիրքով էին պատկերում մայր աստվածուհուն, որը կյանքի և մահվան տիրակալն էր: Հաջիլարից (մ.թ.ա. VI հազ.) հայտնի, օբսիդիանից աչքերով, նստած աստվածուհու բարակ թևերը ծավալած են կրծքին, ձեռքերը՝ վզի տակից սկսվող և մասամբ որովայնը ծածկող կրծկալի տակ են¹⁴: Կավից «*դեմքով աճյունաստվածներ*» հայտնի են Թեբեից, Տրոյայի մ.թ.ա. XX-XVIII դդ. թվագրվող շերտերից¹⁵: Կին-անոթ համադրման մասին գրավոր վկայությունն գտնում ենք խեթական աղբյուրներում, տարբեր ժողովուրդների հավատալիքներում և ծեսերում: Ըստ խեթական «թագավորական» ծեսերի նկարագրությունների՝ որոշ աստվածություններ նույնացվում էին անոթի հետ¹⁶: Կելտական հավատալիքներում պտղաբերության կամ բերքատվության շտեմարան էր համարվում դիցաբանական «*caldron-ը՝ աշխարհի մոր անոթը*»¹⁷: Հնդկաստանում անոթը զուգադրվում է կանացի սկզբի հետ¹⁸: «Անոթավոր» էր կոչվում Ատարգատիս (Ղերկեսո) աստվածուհին՝ որը որպես մայրության հովանավոր, պատկերվում էր երեխան գրկին¹⁹: Աստվածաշնչում կինը բնորոշվում է որպես «թույլ անոթ»²⁰: Կին-անոթ համադրման օրինակ են մայր աստվածուհու արձանիկներին զուգադիր կանացիակերպ աղամանները (նստած դիրք, առանց գլխի, երբեմն էլ գլխով): Համադրումն արտացոլված է նաև բանահյուսական նյութերում, որտեղ կճուճը համեմատվում է աղջկա հետ. «*Էտ ինչ ի, Մի աղճիկ իյունեն, թևերը կանթիք ի*»²¹: Երկիր-գետին. «*Պուտուկ (կճուճ) մը ունիմ խուփ չի կա*»²²:

¹² Տե՛ս Հ. Մարտիրոսյան, 1978, էջ 59: Глonti Л., Джавахишвили А., Кигурадзе Т., Антропоморфные фигурки из Храмис Диди-гора, Друзья памятников культуры, №33, Тбилиси, стр. 5 (на груз. яз.); Кушнарева К., նշվ. աշխ., էջ 41: Հ. Միմոնյան, Շենգավիթ. շարքային բնակավայր, թե՛ վաղ քաղաք. «Հուշարձան» տարեգիրք Ը, Եր., 2013, պատկեր 10/1-4, 10: Մարդարյան Ս., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, փ. LXX: Байбуртян Е., Последовательность древнейших культур Армении на основании археологического материала. Եր., 2011, рис. 17: Арешян Г., Искусство Куро-Араксской культуры. II международный симпозиум по армянскому искусству. Եր., 1978, փանձնատիպ, էջ 3: Есаян С., Мнацаканян А., Находки новых бронзовых статуэток в Армении. СА, №2, 1970, рис. 2/3,4,8, рис. 3/1,2,4-7: Թումանյան Գ., Ագարակ I փաղրոնդեղարյան բնակավայրը (2001-2008թթ.), Եր., 2010, էջ 92, փ. VII/3:

¹³ Голан А., Миф и символ, М., 1993, рис. 129/3.

¹⁴ Тараян З., Древнейшие отражения культа Богоматери. Եր., 2012, стр. 22, рис. 3/а,б.

¹⁵ Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Եր., 1964, стр. 171.

¹⁶ Ардзинба В. Г., Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, стр. 63.

¹⁷ Голан А., նշվ. աշխ., 13:

¹⁸ Նույնը:

¹⁹ Тараян З., նշվ. աշխ., էջ 63:

²⁰ Голан А., նշվ. աշխ., 13:

²¹ Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ. Եր., 1965, № 1533, էջ 149:

²² Նույն տեղում, № 160, էջ 18:

Մայր աստվածուհու հնագույն արձանիկների կերտման ձևի բնորոշ տարրերը՝ որպես հնագույն ավանդույթների շարունակում, պահպանվել են հավատալիքներում և սովորույթներում: Ըստ ազգագրական նյութերի՝ ծննդկանին օգնելու նպատակով մի առողջ կին թուխսի նման նստում էր երդիկի տակ՝ նմանակելով ձու անելը, ասում էր. «*Ես արդեն անեցի, դու էլ արագ ծնիր*»²³:

Կանանց արձանիկներն առանց գլխի կամ գլուխը ծածկված, նաև առանց բերանի պատկերելը, որպես կնոջ կերպարի մասին ձևավորված որոշակի կարծրատիպեր, հազարավոր տարիներ պահպանվել են: Ըստ ազգագրական նյութերի՝ ամուսնացած կինն իրավունք չունեի բաց երեսով երևալու տղամարդկանց և հանդիպելիս շրջվում էր ու ավելի վեր քաշում գլխի ծածկոցը, նույնիսկ տան տղամարդկանց մոտ բերանը ծածկում էր²⁴:

Մեծ Մեպասարի կուռքի ուղղակի գուգահեռ մեզ հայտնի չէ: Նույնացվող օրինակների բացակայությունը պաշտամունքի արտահայտչաձևերի ինքնուրույն զարգացման վկայություն է:

Մեծ Մեպասարի կուռքի բուսական զարդանախշի գուգահեռները նախ նույն հնավայրի խեցեղենի վրա են: Մի անոթի բեկորի վրա թռչնից վեր գծիկներ են (տախտ. I, նկ. 7), մյուսի վրա՝ գծագարդ քառակուսի և շեղանկյուն (տախտ. I, նկ. 8): Գավաթի բեկորի վրա արագիլի գլխից վեր գծիկները (տախտ. I, նկ. 7) լրացնում են զարուն խորհրդանշող պատկերը: Ժայռավենի նմանվող լայն գծերով է պատված Հաջիլարի նստած աստվածուհու տեսքով անոթի ստորին լայն և կլորավուն մասը²⁵: Կետերով լցված խզմոված գծեր են արված Հառիճի վաղբրոնզիդարյան բնակավայրում հայտնաբերված վարդագույն տուֆից, եղջյուրանման երկու ելուստներով ցլի ոճավորված կուռքի վրա: Ենթադրվում է, որ պատկերված են արորով արված ակոսներ և սերմերի համար փոսիկներ կամ ցանքսի համար նախատեսված սերմեր²⁶: Վարի տեսարանի ոճավորված պատկերով կավից ռելիեֆներ հայտնաբերվել են Դաղստանի Վերինեգուրինսկ բնակավայրի մ.թ.ա. III-II հազ. սահմանով թվագրվող շերտում²⁷, Մեծ Մեպասարի (տախտ. I, նկ. 6) և Ջրաձորի վաղբրոնզիդարյան կարասների աստառին²⁸: Կորուչ-թեփեից գտնված արձանիկի բրգաձև գլխի վրա դեմքի փոխարեն հորիզոնական գծագարդեր են²⁹: Վզի և իրանի վրա գծագարդեր ունի Ագարակից գտնված անգլուխ արձանիկը (տախտ. I, նկ. 4): Կրծքի վրա ընդգծված ուղղանկյան մեջ հորիզոնական գծանախշերով է Մեծամորից (մ.թ.ա. I հազ.) գտնված, նստած կնոջ վարդագույն կավից արձանիկը³⁰:

²³ Լիսիցյան Ստ., Լեոնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն Բանահյուսություն, 12, Եր., 1981, էջ 61:

²⁴ Լիսիցյան Ստ., նշվ. աշխ., էջ 40:

²⁵ Тараян З., նշվ. աշխ., էջ 22, նկ. 3/4, 5:

²⁶ Хачатрян Т. Древняя культура Ширака. Ер., 1975, стр. 78, рис. 38.

²⁷ Котович В. О хозяйстве населения горного Дагестана в древности. СА, 1965, №3, стр. 10.

²⁸ Հակոբյան Հ., Վարդանյան Ռ., Զինջիրջյան Վ., Ախուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները (Ջրաձոր եւ Հողմիկ գյուղերի տարածք), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Եր., 1993, էջ 117: Badalyan R., Avetisyan P. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region// BAR International Series 1697, 2007, p. 127, pl. II/7.

²⁹ Սահակյան Հ., Գեղարվեստապատկերային մտածողության առանձնահատկությունները վաղ բրոնզի դարաշրջանում (կուր-արաքսյան մանրաքանդակի արժևորման հարցի շուրջ), Հին Հայաստանի մշակույթը XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Եր., 2008, աղ. I/13:

³⁰ Խանգաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., Մեծամոր, Եր., 1973, նկ. 143, էջ 139:

Արձանիկների և խեցեղենի գծագարները, կարծում ենք, ակնուված արտի պատկերներ են: Զարդաձևի զուգադրումներն ազգագրական նյութերում են: Ամանորին թխվող մարդակերպ ասիլ-բասիլների հորիզոնական և ուղղահայաց ակոսներով զարդարված գոգնոցների գծագարները նույնական են Վասպուրականում արորով «գործ դնելու» և վարելու գծապատկերների³¹ և համադրելի վաղբրոնզիդարյան խեցեղենի «հերկած արտ» խորհրդանշող նախշերին:

Տարածամանակյա իրերի զարդանախշերը վկայում են, որ հաստատված պատկերազարդման կանոնակարգված ավանդույթները կայուն են:

Աստվածուհու գլխավոր հատկանիշը բուսական աշխարհը հովանավորելն է: Կենաց ծառը պտղաբերության պաշտամունքի գաղափարական էության մարմնավորում է³²: Կենաց ծառով աստվածուհին դիցաբանության մեջ գրեթե ամենահանրահայտ կերպարն է, որ պատկերագրության տարբեր մեկնաբանություններով անցնում է երկրագործական բոլոր կրոններով: Շումերական պանթեոնի գլխավոր աստվածուհիներից մեկը՝ պտղաբերության, առատության, բուսական աշխարհի հովանավոր Ինանան, ծառ է տնկում, խնամում, «կյանքի ջրով» ցողում, ստիպում աճել և, որպես խորհրդանիշ, կրում էր եղեգան ճյուղ³³: Շումերական դիցերում բույսերի աստվածուհին էր նաև Ուտտուն³⁴: Ուբեյդյան (կամ օբեյդյան) մշակույթից հայտնի են պտղաբերության աստվածության կերպարի ստեղծմանը նախորդած, գիշատիչների դիմագծերով կանանց և տղամարդկանց արձանիկներ, որոնց աչքերին և ուսերին բույսեր դնելու համար վերադիր ելուստներ կան³⁵: Հունական դիցաբանության մեջ Արտեմիսը ծառերի և բուսականության աստվածուհի էր: Իրանում Anahita-ն պաշտվում էր որպես պտղաբերության աստվածուհի և ջրի տիրուհի. նրան նվիրաբերում էին պսակներ, ոստեր և սպիտակ կենդանիներ: Ոստերը և ճյուղերը նաև հայոց Անահիտի պաշտամունքի հետ են կապվում: Մատաղի դաշտում եղել է ավազաքարե մեծ սալի վրա քանդակված Անահիտի պատկերը՝ ձիթենու ճյուղը ձեռքին³⁶: Ըստ Ագաթանգեղոսի՝ «...զմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց³⁷,...մեծի Անահիտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ..., որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան³⁸...խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ:»³⁹ «... Ոսկեմոր, Ոսկեծին ... եւ բազինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմոր դից...»⁴⁰: Անահիտին տրված նման բնութագրումները շեշտում են աստվածուհու կապը բուսական աշխարհի պտղաբերության և հատկապես ոսկեգույն ցորենի հետ (հմմտ. ցորենի հորերի մոտ դրված կանանց կուռքերի հետ): Աստվածուհու խորհրդանիշը ճյուղն էր, որով ձաղկում էին անասուններին և երեխանե-

³¹ Բրդյան Վ., 1972, նշվ. աշխ., տախտ. CXI/13, CLXII:

³² Кушнарева К., նշվ. աշխ., էջ 68:

³³ Массон В., Сарианиди В. Среднеазиатская терракота эпохи бронзы. М., 1973, стр. 104,108; Кушнарева К., նշվ. աշխ., էջ 68:

³⁴ Նույն տեղում, էջ 68:

³⁵ История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, ч. I, Месопотамия, (под ред. И.М. Дьяконова), М., 1983, стр.102.

³⁶ Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 56:

³⁷ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղեւոնդյանի), Եր., 1983, էջ 68:

³⁸ Ագաթանգեղոս, էջ 53:

³⁹ Նույն տեղում, էջ 127:

⁴⁰ Նույն տեղում, էջ 809:

րին, որ նրանք առողջ լինեին (հմմտ. աչքերին և ուսերին բույսեր դնելու համար վերադիր ելուստներով կուռքերի, նաև կանանց համանման արձանիկների՝ գլուխը և թևերը ծառի կամ ճյուղերի նմանվող փորվածքներով ծածկված, աչքերին հասուն ցորենի գույնի մագերով Դեմետրի հետ):

Պտղաբերության հովանավոր մայր աստվածուհու խորհրդանիշ ծառը, շիվը, ճյուղը պահպանակներ էին: Մեծ պահքի վերջին կիրակի օրը՝ Ծառգարդարի (Ծառգարդար) տոնին, եկեղեցում օրհնված ուռենու մեկական ճյուղ կանայք տանում էին տուն, տնկում այգում՝ արմատակալելու, նաև կախում խնոցուց⁴¹: Հնում միայն նշանված տղաները (ավելի ուշ՝ նաև չնշանվածները) արմատախիլ էին անում մատղաշ ուռենին և ճյուղերը զարդարում գույնզգույն լաթերով, թելի վրա շարված չամիչի հատիկներով, մրգերով և եռասայր «*իրեք ճղղնանի*» մոմերով⁴²: Ծառգարդարը պտղաբերող ուժերը խթանելուն նվիրված ծես է: Այդ օրը գյուղացին կացնով խփում էր պտուղ չտվող ծառին և ասում. «Բար չտաս, կկտրեմ»⁴³:

Պտղաբերության հետ կապված հավատալիքներն արտացոլված են երկրագործական ծեսերում: Մերմնացանը գոտին չէր քանդում, նա մինչև ցանքի ավարտը քնում էր արտի ակոսում՝ գոտին պինդ կապած, սերմերը՝ ծոցը: Մինչև ցանքի ավարտը տրեխների մեջ, գոտու ծալքերում և ծոցը մնացած հատիկները մարմնի խոնավությունից ծլում էին⁴⁴: Մերմնացանի գոտին համադրվել է ծխածանին, և այն արձակելը կարող էր խափանել բնության բնականոն ընթացքը: Հնավորը սայլի ցցին ամրացնում էր հնձած մի խուրձ, տանում տուն և նվիրում տանտիրուհուն⁴⁵ (հմմտ. Անահիտին թարմ ոստեր նվիրելու հետ):

Ինչպես վերը նշել ենք, Մեծ Մեպասարի կուռքը գտնվել է հորի բերանին: Պտղաբերության աստվածուհու կուռքը կամ արձանիկը ցորենի հորի կամ ցորենով անոթի մոտ փաստվել են հնագիտական տարածամասակյա հուշարձաններում: Չաթալ Հույուկում պտղաբերության աստվածուհու արձանիկը գտնվել է հացահատիկի շտեմարանում⁴⁶: Թեյշեբաինիում ադորանտի դիրքով քարից կուռքերը գտնվել են տան կենտրոնական սենյակում՝ օջախի մոտ, ցորենով անոթի կամ ցորենի հորի կողքին⁴⁷: Թոնրատանը՝ օջախի կողքին էին դրվում մայր աստվածու պաշտամունքի արտացոլում կանացիակերպ աղամանները:

Քննարկվող կուռքի հետ համադրելի է Կարմիր բլուրի մոխրաշերտով հագեցած նախաուրարտական մշակութային շերտում հայտնաբերված, ուղղահայաց դիրքով քարին հենված, բուսանախշով զարդարված քարե կուռքը⁴⁸: Կուռքից քիչ հեռու գտնվել է հողի մեջ թաղված անոթի ստորին մաս: Ենթադրվում է, որ կուռքը գտնվել է *in situ*, հին բնակավայրի կենսագործունեության ժամանակ ունեցած դիրքով⁴⁹: Կավանոթը հավանաբար նույն գործառույթն է ունեցել, ինչ հորը: Էգեյան մշակույթից հայտնի է մ.թ.ա 2000թ. թվագրվող Պերսեփոնեին վերագրվող, լայն

⁴¹ Ավագյան Ս., Արձակ, Հայ ազգագրություն բանահյուսություն 8, Եր., 1978, էջ 94: Լիսիցյան Ստ., նշվ. աշխ., էջ 71:

⁴² Լիսիցյան Ստ., նշվ. աշխ., էջ 71:

⁴³ Արեղյան Ս., Երկեր, հ. Ե, Եր., 1975, էջ 54:

⁴⁴ Բդոյան Վ., 1972, էջ 265:

⁴⁵ Նույնը:

⁴⁶ Խանգադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., նշվ. աշխ., էջ 140:

⁴⁷ Мартиросян А., Город Тейшебаини, Ер., 1961, стр. 69.

⁴⁸ Мартиросян А., 1958, էջ 115, նկ. 1: Բարայելյան Հ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 143, նկ. 81:

⁴⁹ Мартиросян А., 1958, էջ 114:

բացված մատներով ձեռքերն ուսերի բարձրությամբ վեր պարզած, թագակիր կնոջ արձանիկ: Թագի հանդիպակաց կողմերում մեկական նստած թռչուն է⁵⁰ (տախտ. I, նկ. 9): Կնոջ ֆիգուրը գոտկատեղից ներքև միաձույլ է գլանաձև, լայն և բարձր պատվանդանին: Արձանիկը խորհրդանշում է ծլարձակումը: Պատվանդան ծառայող գլանաձև մասը (հմմտ. հորի հետ) հողն է, վեր պարզած, բացված մատներով ձեռքերը՝ վերընձյուղվող ծիլերը, իսկ գույգ թռչուններն ավետում են գարունը՝ ամբողջացնելով մայր աստվածուհու արձանիկի խորհուրդը:

Հնդեվրոպացիների հավատալիքներում Մայր աստվածուհին նույնացվում է հողի-երկրի հետ: Սլավոնների համար նա Մայր հող էր (Мать-Сыра Земля): Հույների համար մայր հողը Դեմետր աստվածուհին է (Դամետրա իմաստաբանորեն երկիր-մայր)⁵¹: Հավանաբար Դեմետրը մեռյալների թագավորության տիրուհին է և հանգուցյալի առջև լայնորեն բացում է իր գիրկը: Հելլենիստական Հունաստանում Դեմետրը կրում էր «Մայր հացահատիկ» անունը: Դեմետրին և նրա դուստր Պերսեփոնեն պատկերվում էին ցորենի հասկերից հյուսված թագերով, ձեռքերին խրճեր⁵²: Երբ անդրաշխարհի տիրակալը հափշտակեց աշնանը ցանվող և գարնանն աճող հացի դեր ունեցող Պերսեփոնեին, երկիրը դադարեց պտղաբերելուց⁵³:

Հորի (հողի) եւ պտղաբերության աստվածուհու կապի վկայություն են Բենիամինում, հելլենիստական ժամանակաշրջանի հորի մեջ հայտնաբերված Անահիտի պաշտամունքի հետ կապված հում կավից միջանցիկ անցքով տափօղակների բեկորները⁵⁴: Ազգագրական նյութերում հացի հորեր էին խորհրդանշում Լոռիում թխվող «կլկլա» կամ «դուլաճ» կոչվող կլոր, մեջը ծակ հացերը, որոնք նոր տարվա օրն անցկացնում էին գոմեշի և եզան եղջյուրներին, որպեսզի այդ տարի հորը լցվեր ցորենով⁵⁵: Ցորենով եւ գարով զարդարված «հացի հոր», «գարու հոր» կոչվող, կլոր, մեջը ծակ թխվածքներով նոր տարվան գուշակություններ էին անում⁵⁶: Մեծ Մեպասարի կուռքի դեպքում աստվածուհու արգանդը հորն է (հմմտ. հացը հորեն, տղեն՝ փորեն): Հորը և կուռքը մի միասնություն են: Բնության պտղաբերող ուժերի մարմնավորում աստվածուհու ռուքերը հորի մեջ են, գոտկատեղից վեր հատվածը՝ հորից (հողից) դուրս: Հորի վրա դնելը, գուտ պաշտամունքային իմաստով, հող-մահ-պտղաբերում է խորհրդանշում, և պատահական չէ, որ կուռքը պատրաստվել է անթուրծ կավից: Հորի հատակի մոխրի շերտը պտղաբերման խորհուրդ ունեւ: Ցանքսի հացահատիկի վրա մոխիր էին ցանում և ջրով ցողում⁵⁷:

Մեծ Մեպասարի կուռքը զուգադրելի է նաեւ Համբարձման վիճակահանության փարչին: Համբարձման ծաղկեփունջը կոչվում էր Օաղկամեր, որը դրվում էր փարչի բերանին, և այս միասնությունը կոչվում էր վիճակ, որ ինքնին բնութագրական է և բովանդակում է ծեսի խորհուրդը: Է. Պետրոսյանն իրավացիորեն նկատել է, որ տվյալ դեպքում անոթը դառնում է տիկնիկի իրանի ստորին մասը, նրա ար-

⁵⁰ Мартиросян А., 1958, էջ 116:

⁵¹ Клейн Л., նշվ. աշխ., էջ 76:

⁵² Ֆրեզեր Ջ., Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 466:

⁵³ Лосев А. Ф., Персефона, Мифы народов мира, т. 2, 1992, М., стр. 305.

⁵⁴ Խաչատրյան Հ., Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը/մասն II/, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Եր., 1999, էջ 58:

⁵⁵ Ազգագրական հանդես, 1903, հ. X, էջ 249:

⁵⁶ Խաչատրյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Եր., 2005, էջ 26:

⁵⁷ Шрамко Б., Следы земледельческого культа у лесостепных племен Северного Причерноморья в раннем железном веке. С.А., 1957, I, стр. 197.

գանդը, իսկ անոթի մեջ լցված քարերը խորհրդանշում են սերմերը⁵⁸: Ծաղկամերը և տոնի մասնակից աղջիկների գլխի թարմ ծաղիկներից պսակները զուգադիր են «...պսակս... նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին»⁵⁹, Tagi Bostan-ի քանդակներում Անահիտ աստվածուհու պսակ դնելն արքայի գլխին⁶⁰ և պսակներով կատարվող խեթական ծեսը, երբ. «Պսակները հագցնում են թագավորին, թագուհուն և նրանց զավակներին...»⁶¹: Նույն ակունքից են սերում Կարնո կանանց տարազի «վարդ» կամ «թանթանա» ասեղնագործ ծաղիկներով պսակը, նաև ամուսնությունը պսակ կոչելը:

Քննարկվող կուռքին համադրելի է նաև Վարդավառին առնչվող խնդումը: Սափորի մեջ աճեցվում էր գարի կամ ցորեն, և երբ հասկերը բարձրանում էին մոտ 10սմ, տոնի առավոտյան սափորի մեջ 1մ բարձրությամբ մի փայտի ձող էին մտցնում՝ որոշակի հեռավորությամբ տերևներից մաքրված փոքր ճյուղեր ամրացնելով: Այնուհետև այդ ճյուղերին կապում էին մրգեր, ծաղիկներ, ամանը տանում էին դաշտ, դնում հողի մեջ⁶²: Ակնհայտ է Ծաղկագարդի, Համբարձման, Վարդավառի տոների կապը հնագույն ծիսակարգերի հետ:

Հացաբույսերի աճը կամ պահպանումը, ըստ պատկերացումների, մեծապես կախված էր աստվածություններին նույն այդ բույսերի նվիրաբերումներից կամ արձանիկների զոհաբերությունից: Բացի տարվա որոշակի եղանակներին կատարվող հատուկ տոներից, կային նաև պտղաբերում հայցող զոհաբերություններ: Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում ճյուղերով պատրաստում էին Նուրին կանացի հագուստով խրտվիլակ, որի գլուխը ծածկում էին ծածկոցով (հմատ. քննարկվող կուռքի և հնագույն արձանիկների գլուխ չունենալու հետ), իսկ վերնի մասում ամրացնում փայտյա ձեռքեր⁶³ (հմատ. այքերին և ուսերին բույսեր դնելու համար վերադիր ելուստներով արձանիկների, Անահիտին ճյուղեր և ոստեր նվիրելու հետ): Մլավոնական ավանդույթներում երկրագործական տոներին հաճախ տոնի հիմնական մասնակիցները կանանց կամ աղջիկների հագուստով կամ կեչու տերևներով զարդարված խրտվիլակներ կամ տիկնիկներ էին փոխանակում⁶⁴: Տոներին երիտասարդ աղջիկների մասնակցությունը, կանացիակերպ տիկնիկներ պատրաստելը հավանաբար կապված են աղջիկների և հատիկի մեջ թաքնված առատ բերք տալու պատրաստ պտղաբեր ուժի զուգադրման հետ:

Այսպիսով, Մեծ Մեպասարի անթուրծ կավից կուռքը կնոջ խիստ սիմվոլիկ ձևով և յուրօրինակ նախշազարդմամբ խորհրդանշում է բնության պտղաբերող ուժերի և մայր աստվածուհու պաշտամունքը: Հորի հետ մեկ ամբողջություն կուռքը ներկայացնում է մեռնող և վերածնվող բնության մարմնավորում, ստորերկրայք իջած, հողից ուժ առնող ու վերադարձող պտղաբերության անտեսանելի աստվածությունը:

⁵⁸ Петросян Э., Праздники армян в контексте европейской культуры, Ер., 2011, стр.193.

⁵⁹ Ագաթանգեղոս, էջ 49:

⁶⁰ Գարեգին Արքեպիսկոպոս Յովսեփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ պատմութեան, Պրակ Գ.Նիւ Եորք 1944, էջ 64; Գ.Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Եր., 2012, էջ 60:

⁶¹ Ардзинба В., 1982, с. 53:

⁶² Լալայան Ե., Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Յերեւան, 1931, էջ 208-209:

⁶³ Բրդյան Վ., 1972, էջ 490, տախտ. CLXX/1,2:

⁶⁴ Бабинов С., Культурные женские изображения раннеземледельческих племен юго-восточной Европы, СА XV, 1951, стр.131.

Տախտակ I



1



2




3



4



5



1 0 3



6



1 0 2



7



1 0 2



8



9

ГЛИНЯНЫЙ ИДОЛ ИЗ МЕЦ СЕПАСАРА

___ *Резюме* ___

___ *Л. Еганян* ___

Среди многочисленных предметов, обнаруженных раскопками памятника, особое место занимают предметы культа, которые представляют интерес в изучении идологических представлений племен Куро-Араксской культуры.

Фрагментированный идол из малозернистой, хорошо отмученной, светложелтоватого цвета глины без обжига был найден в лежащем положении на крышке закрытой каменными плитами хозяйственной ямы. Пол ямы был насыщен небольшим напластованием золы, в которой попадались обломки костей и несколько черепков глиняных сосудов, также веретено из кости. Идол представляет широкую антропоморфную фигуру с массивной нижней частью туловища, передающей сидящее положение фигуры. Верхняя часть идола состоит из треугольной головы без шеи и рук. Следы какого-то растения отпечатались на фигурке идола.

Глиняный идол является выразителем комплексных представлений о растительных силах природы и о женщине, основной носительнице идеи плодородия.

Տեղեկություններ հեղինակի մասին

Եզանյան Լարիսա Գրիշայի– պ. գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն,

E-mail: smuseum@web.am.

*ՀՈՌՈՄ ԳՅՈՒՂԸ ԵՎ ՄԻ ՀՈՒՓՄԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հոռոմ (Խորում, Խորում, Խուրում, Օրում) գյուղը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում, Արթիկ քաղաքից մոտ 10 կմ հյուսիս-արևմուտք, Մանթաշ գետի ձախ ափին, Երևան-Գյումրի ավտոմայրուղու աջակողմում, ծովի մակերևույթից 1570 մ բարձրության վրա: Բնակչության նախնիների մի մասը եկել է 1829-1830 թթ., Կարսից ու Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից և զբաղվում են հիմնականում հացահատիկի, շաքարի ճակնդեղի մշակությամբ, մեղվաբուծությամբ ու անասնապահությամբ¹: Գյուղանվան ծագումնաբանությանն առաջինն անդրադարձել է Ատրպետը. «Գուցէ այս անունը շատ հին է, Ուրարտական Ուրշասների շրջանից, բայց դրական ոչ մի փաստ չըկայ ենթադրություններ անելու: Այս գիւղից 25 կիլոմետր հեռավորութեան վրայ գտնւում է Հոռոմոսի վանքը, որը Թ-րդ դարի հիմնարկութիւն է, գուցէ սա էլ վանքին կալուածք են տուել մեր ջերմեռանդ Բագրատունիները, բայց ոչ մի փաստ չի երևում»²: Մեկ այլ առիթով նա առաջ է քաշում այն միտքը, թե արևելյան ցեղերը Օսմանյան պետությունը, Բյուզանդական կայսրությունը կամ միջնադարյան Վենետիկի ու Ջենովայի իշխանությունները *Ռում* են անվանել, իսկ նրանց շրջանից կամ ավելի հին դարերից մնացած բերդերը՝ *Ռումկալա*, հետևաբար, բացառված չէ, որ. «գաղթական հայերն էլ հետևելով արևելցիներին գիւղը, համաձայն հայկական տառադարձութեան և արտասանութեան «Հոռոմ» են անուանել»³:

Ըստ բանագետ Արամ Ղանալանյանի՝ տեղանվան ստուգաբանությունն ավանդական հիմք ունի. «Անիի թագավորի Հռիփսիմե անունով աղջիկը ժամանակին եկել է այստեղ ամառանոց: Ղալաչի լեռան վրա նա հիմնել է մի փոքրիկ ամրոց: Այդ աղջկա անունով գյուղը կոչվել է Հոռոմ (Հռիփսիմե)»⁴: Նշված ավանդազրույցը համոզիչ է թվում այնքանով, որ 1861 թ. Հոռոմ անունով գյուղում կառուցված եկեղեցին կոչվում է հենց Հռիփսիմե:

Բնակավայրը նշանավոր է հատկապես վաղ հնագիտական հուշարձաններով, մասնավորապես՝ գյուղը եզերող բլուրների վրա է գտնվում «Արծնաբերդ», տեղացիների բնորոշմամբ Ղալաչի (Ղալաիչի, այսինքն՝ միջնաբերդ) անունով

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Եր., 1991, էջ 437 (այսուհետև՝ Տեղանունների բառարան):

² Ատրպետ, Շիրակի աշկատարեան (կիկլոպեան) ամրոցներ, «Ազգագրական հանդես», գ. XXV, 1913 թ., Հ^ր 2, էջ 173:

³ Նույնը:

⁴ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 185:

հայտնի նախնադարյան ամրոց-քաղաքատեղին (բերդ-շեն)՝ շրջափակված կիկլոպյան պարիսպներով, բնակարան-քարայրներով, որն զբաղեցնում է շուրջ 4 քառ. կմ տարածություն: Նշված կառույցների ավերակների վերաբերյալ իրենց ուղեգրական նոթերում տեղեկություններ են ավանդել Ատրպետն ու Թ. Թորամանյանը, որոնք 1913 թ. նոյեմբերին միասին եղել են Հոռոմում: Թ. Թորամանյանի համոզմամբ՝ «բոլոր նախնադարյան բերդաքաղաքների մեջ Հոռոմի բերդաքաղաքը միակն է թե՛ իր մեծությամբ և թե՛ բովանդակությամբ: Քաղաքը տարածված է զանազան բարձրությունների վրա և միջնապարիսպներով բաժանված է այլ և այլ մասերի կամ քաղաքամասերի. ամեն մի պարսպապատ քաղաքամաս իր մեջ ունի մի շենքի կամ հաստատության ավերակ»⁵: Ժամանակաշրջանի առումով Թ. Թորամանյանը կարծում է, թե չնայած բերդաքաղաքի՝ քարի դարի մնացորդներով լեցուն լինելուն, նախաքրիստոնեական վերջին շրջանի նմուշներից երևում է, որ հետագա դարերում ևս այստեղ մարդկային հոծ բազմություն է գոյություն ունեցել⁶: Ճարտարապետը Հոռոմ գյուղին և նրա վաղագույն հուշարձաններին անդրադառնում է նաև 1924 թ. սեպտեմբերի 12-ի ճանապարհորդական տեղեկագրում, երբ հերթական անգամ առիթ է ունեցել լինելու հնամենի այս բնակավայրում: Նա փաստում է, որ 1913 թ. այցելությունից հետո, ցավոք, շատ բան է փոխվել, քանի որ նախկինում տեսած ու, բարեբախտաբար, լուսանկարած ավերակներից ու պարիսպներից ոչ մեկը նույն վիճակում չէ⁷:

Նախորդ դարի առաջին կեսին գյուղում հնագիտական-հետախուզական աշխատանքներ են իրականացրել Ն. Մառը, Բ. Խալաթյանը, Բ. Պիոտրովսկին, Ա. Հաջյանը, Լ. Գյուզալյանը, Ե. Բայբուրդյանը⁸, 1967-ին՝ Տ. Խաչատրյանը⁹: Պրոֆ. Բ. Խալաթյանցի՝ 1908 թ. իրականացրած պեղումներով հայտնաբերվել են բազմաթիվ քարարկղային դամբարաններ (շուրջ 30), որոնցից ի հայտ եկած նյութերը հարա-

⁵ Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Եր., 2013, էջ 41:

⁶ Նույն տեղում, էջ 45: Խոշոր ժայռաեկորների վրա նկատելի են մի շարք նշանագրեր՝ այսպես. $\cup \supset \subset \cap$:

⁷ Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Եր., 2013, էջ 286:

⁸ Аджян А., Гюзальян Л., Пиотровский Б., Циклопические крепости Закавказья, ГАИМК, 1932, с. 63. Բ. Պիոտրովսկու, Ա. Հաջյանի, Լ. Գյուզալյանի և Ե. Բայբուրդյանի կողմից հետազոտվել ու դասակարգվել են Շիրակի մի շարք ամրոց-բնակատեղիներ (Արթիկ, Ծաղկահովիտ, Հնաբերդ, Արևշատ, Սպանդարյան, Հոռոմ, Սառնաղբյուր և այլն), որոնց թվագրումն ըստ խեցեղեն նյութի և ճարտարապետական մանրամասների՝ հնագետները սահմանում են մ.թ.ա. I հազարամյակի առաջին դարերի միջակայքում (տե՛ս նշվ. աշխ., էջ 61-64): Ինչպես նշեցինք, Ե. Բայբուրդյանը մասնակցել է 1930-ական թթ. Հայաստանի կիկլոպյան ամրոցներն ուսումնասիրող արշավախմբի աշխատանքներին: Նմանատիպ կառույցների կազմում նա առաջնահերթ հիշատակում է Հոռոմի ամրոցը՝ հարազատ մինչ-ուրարտական և ուրարտական ժամանակաշրջանին: Հնագետի համոզմամբ՝ Շիրակի տարածաշրջանում և հատկապես Հոռոմի ամրոցի պեղումներով փաստագրվում է հոռմեական մշակույթի առկայությունը, ինչը թույլ է տվել նրան կարծել, որ Հոռոմ տեղանունը ծագում է Հոռմից (Բյուրյանից) (Байбуртян Е., Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ер., 2011, с. 72, 78):

⁹ Хачатрян Т., Древняя культура Ширака. III-I тыс. до н.э., Ер., 1975, с. 11.

գատ են առավելապես մ.թ.ա. XI-VIII դդ. և սերտորեն աղերսվում են Արթիկից և Գյումրիից հայտնի առարկաներին (գտածոները պահվում են Էրմիտաժում)¹⁰: Հնագետ Տ. Խաչատրյանի՝ 1967 թ. պեղումներով գտնված նյութերը վերաբերում են մ.թ.ա. III հազարամյակի վերջերին. խեցեղենը բեկորային է՝ սև, անփայլ, հիմնականում աննախշ տեսակի, իսկ աշխատանքային գործիքները պատրաստված են ծակոտկեն բազալտից և տուֆից (գտածոները պահվում են Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդերում)¹¹:

Հոռումում 1990-ական թթ. լայնածավալ պեղումներ է իրականացրել նաև հայամերիկյան արշավախումբը (Ռ. Բադալյան, Ֆ. Կոլ): Ինչպես հնագետներն են փաստում, հուշարձանն ուշագրավ է նրանով, որ հստակ արտացոլում է Շիրակի պատմության հիմնական շրջափուլերը մ.թ.ա. IV հազարամյակի կեսերից մինչև մ.թ. I հազարամյակի կեսերը: 1992-1993 թթ. պեղումներով պարզ է դարձել, որ այս «դասական հուշարձանի տարածքում եղել են՝ պալեոլիթյան կայան, վաղ բրոնզի դարաշրջանի բնակավայր և դամբարանադաշտ (Կուր-արաքսյան մշակույթ), միջին բրոնզի դարաշրջանի բնակավայր (կարմիրբերդյան մշակույթ), ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանների ամրոց, բնակավայր և դամբարանադաշտ, ուրարտական շրջանի ամրոց, վաղ միջնադարյան ամրոց»¹²: Նույն ծրագրի շրջանակներում 1997 թ. տեղում բրոնզեդարյան դամբարանների պեղումներ է իրականացրել նաև հայ-գերմանական արշավախումբը:

Հոռումն աչքի չի ընկնում միջնադարյան հուշարձաններով¹³. սրանում համոզվեցինք 2013 թ. ամռանը ՀՀ Շիրակի մարզ կատարած մեր վիճակագրագիտական

¹⁰ Хачатрян Т., указ. соч., стр. 22: Բ. Խաչատրյանի 1908 թ. պեղումներով ի հայտ եկած գտածոների մասին տեղեկություններ կան նաև նշված աշխատություններում: Мартиросян А. Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв. до н. э.), *Տեղեկագիր. հասարակական գիտություններ*, 1956, № 9, էջ 72-73, Мартиросян А. Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 210-211.

¹¹ Хачатрян Т. Древняя культура Ширака, стр. 11, 37:

¹² Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ., Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ. (հիմնական արդյունքները), Եր., 2005, էջ 54: Արշավախումբը պեղումների հիմնական արդյունքները հրատարակել է օտար լեզուներով. տե՛ս Badaljan R., Edens C., Kohl P., Tonikjan A., *Archaeological investigations at Horom in the Shirak plain of northwestern Armenia*, 1990, Iran XXX, 1992, pp. 31-48, Badaljan R., Edens C., Gorny R., Kohl P., Stronach D., Tonikjan A., Hamayakjan S., Mandrikjan S., Zardarjan M., *Preliminary report on the 1992 excavations at Horom, Armenia, Iran XXXI*, 1993, pp. 1-24, Badaljan R., Kohl P., Stronach D., Tonikjan A. V., *Preliminary report on the 1993 excavations at Horom, Armenia, Iran XXXII*, 1994, pp. 1-29, Badaljan R., Kohl P., Kroll S., *Horom 1995. Bericht über die amerikanisch-armenisch-deutsche archäologische Expedition in Armenien*. - AMIT. Band 29, 1997, pp. 191-228.

¹³ Պահպանվել են Ժ-ԺԴ. դդ. երկու մեծ գերեզմանատներ, որոնցում թաղումներ անելը վերսկսել են ԺԵ. դարից և շարունակել նաև այսօր: Հնագետ Հովսեփ Եղիազարյանը նշում է, որ. «Գյուղի արևելյան կողմում տարածվում է ընդարձակ գերեզմանոցը, որի տապանաքարերը հազիվ երևում են գետնի երեսին: Դրանց կից քարաժայռի տակ նկատելի են հին եկեղեցու պատերի հետքեր» (Եղիազարյան Հ., Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Եր., 1975, էջ 43): Գյուղում պահպանվել են նաև ձիթհանների ավերակներ՝ հարազատ ԺԵ-ԺԹ. դդ. (տե՛ս նույն տեղում, էջ 44): Գյուղում է գտնվում ԺԲ-ԺԳ. դդ. «Թուխ


գործուղման ընթացքում, երբ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հերթական պրակի կազմման շրջանակներում մի ամբողջ օր եղանք նաև Հոռոմ գյուղում¹⁴: Գյուղամիջում է գտնվում, ինչպես վերը նշեցինք, 1861 թ. կառուցված Սբ Հռիփսիմե եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին (նկ. 1)¹⁵, որի որմերից ընդօրինակեցինք և լուսանկարեցինք ԺԹ դարի երեք արձանագրություն:

Մինչ վիմագրին անցնելը նշենք, որ եկեղեցին կառուցվել է գյուղի «բարեպաշտ» բնակիչների օժանդակությամբ. այդ մասին է վկայում հյուսիսային մուտքի ճակատակալ ուղղանկյունաձև քարի կենտրոնում գետեղված արձանագրությունը, 9 տողից (նկ. 2).



ՀԱՌՐՀԻՐԱ ԱՅ / ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԼԵ ԱՌԱՏԱԶԵՈՒ / ԱՐԴԵԱՆՑ ԲԱՐԵՊԱՇՏ/ՕՆ
ԺՈՂՈՎՐԴՈՑՍ / ՀՕՌՈՍ ԳԵՂՁ, ԵՒՆԵՑԱՒ ԱՄՏՈՒԱԾՐՆԿԱՆ ՏԱՃԱՐ ՅԱՆՈՒՆ ՄՐԲՈՋՆ
ՀՈՒԲ/ՄԻՄԵԱՑ, ՅԱՄԻ ՏՈՆ 1861:

Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի (1858-1865) օրոք կառուցված «Աստուածընկալ տաճար»-ն, ըստ էության, գյուղի բնակչության պահանջով ու անհրաժեշտության գիտակցմամբ է կառուցվել, որը մեր օրերում, ցավոք, անմխիթար վիճակում է: Եկեղեցու հարավային մուտքի վերնամասից ընդօրինակեցինք նաև միատող հետևյալ հիշատակագրությունը (նկ. 3).



ՅԵՏԿԵ ՍԻՐ ԽԱՉՍ ԱԳՍԻՆ
ՍԱՐԳՍԻՆ:


Վիմագիրն, անկասկած, ժամանակակից է նախորդին, իսկ Մարգիսը, հավանաբար, միջոցներ է տրամադրել կամ ինչ-որ կերպ իր մասնակցությունն է ունեցել եկեղեցու կառուցման գործում:

Մանուկ» մատուռն ու 1868 թ. կառուցված Սբ Աստվածածին եկեղեցին (ՀՀ բնակավայրերի բառարան, Եր., 2008, էջ 122):

¹⁴ Արշավախմբի ղեկավար՝ պ.գ.թ. Գ. Մարգարյան, անդամներ՝ պ.գ.թ. Ա. Հարությունյան, Ռ. Գասպարյան, վարորդ՝ Տ. Խաչատրյան:

¹⁵ Մելիք-Բախշյան Ստ., Հայոց պաշտամունքային վայրեր, Եր., 2009, էջ 266:

Այժմ անդրադառնանք եկեղեցու ներսում՝ հարավային պատին պահպանված բովանդակային առումով բացառիկ վիմագրին: Այն փորագրված է ուղղանկյունաձև կարմրավուն սալաքարին՝ ԺԹ դարին հասուկ անվարժ գրչությամբ: Առաջին հայացքից տպավորությունն այնպիսին է, որ արձանագիր քարը եկեղեցու կառուցման ժամանակ օգտագործվել է իբրև շինաքար՝ առանց կարևորություն տալու վիմագրի առկայությանը, քանի որ քարի տեղը պատի շարվածքում (ստորին երրորդ շարքում) և դրա վրա պահպանված ծեփի մնացորդներն այդ էին վկայում: Մեր տեսակետը հիմնավորվում է վիմագրում հիշատակված անձանց և դեպքերի ժամանակագրության մոտավոր ճշգրտմամբ, ինչի համար նախ վկայակոչենք 7 տողից կազմված արձանագրությունը (նկ. 4).



ՍԲ ՆՈՐԱԵԼԵՆ ԵԿԵՂԵՑԻՍ Է ՁԵՂԵՍԱԿ... / ՍՈՐՈՒ ԲՍ Ի ՎԱՐՅԱԴԻՆ, ՈՐՔ ՅԵՂԱՏԱԿ ՏԱՅԷ ՍՄԱՅ, ՁԵՂԵՍԱԿ Վ... / ԵՓՐԵՍԻՆ ԼԵԻ ՍՐՓԱՎԵԼՅԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԻՆՔԱՎԱԿ ԱԼ

ՄԵՇ ՎԱՅՄԵՐ ՆԿԳՈՒԱ ԲԱՐԵՔԱՂՏԻՍ, ՇՈՐՀԻՐ ՏՆ ԱՋՍԵՑԱՔ Ի ՄԵՇԱՅՄԵՇ ՊԱՏԵՐԱՋՄԱՅ, / ՔԱՆՔԻ ՑԱՆՏԻՍԱՅ ՊԱՐՄԻՑ ԱՐՔԱՆ ԼԵԻ ՕՍՄԱՆՑՈՑ ՀԱՄԹ / ՍՈՒԼՔԱՆ ԼԵԻ ՎԱՐԻՆՈՒ ՄԻՆԵՐ Ի ԹԱՎՐԷՁ ԱՐՆԱՄԱՐԱԿ ՏԻՐԱՊԵՏԱՅ / ԳՐՅԱԳՐՈՐ Ի ԱՐՅԱՆԸՍ, ՕՎ ՀԱՆՏԻԲՈՂԼԵ ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ:

Ինչպես երևում է գրչանկարից¹⁶, վիմագիրը կազմվել է անվարժ գրչի ձեռքով, պահպանված չէ ո՛չ տողերի, ո՛չ տառերի համաչափությունը: Առաջին և երկրորդ տողերի վերջնամասը եղծված է, ինչը գրչանկարում արտահայտված է շեղագծերով: Ցավալի այս իրողությունը, սակայն, գրեթե չի խաթարում վիմագրի բովանդակային ամբողջացումը: Այն հանգամանքը, որ բնագրում հստակ վերծանելի են Եփրեմ Ա Ձորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի (1809-1830) և Ռուսաց Նիկոլայ I (1825-1855) կայսեր անունները, կասկած չի նշում, որ արձանագրությունը եկեղեցու կառուցումից մի քանի տասնամյակ առաջ է կազմվել: Հետևաբար փաստելի է, որ քարը կրկնակի օգտագործման է ենթարկվել, թեև անհայտ է մնում, թե այն նախկինում ինչպիսի շինության է պատկանել (հավանական է, որ դարձյալ եկեղեցու, քանի որ վիմագիրն սկսվում է ինչ-որ Սուրբ Նորաշեն եկեղեցու հիշատակությամբ): Փաստագրված պատերազմական և հաղթական դեպքերի առկայությունն ավելի է հստակեցնում վիմագրի թվագրումը. բանն այն է, որ բնագրի ոչ սահուն շարադրանքից ելնելով՝ խոսք է գնում Ռուսաց Նիկոլայ «բարեբախտ» (այսինքն՝ բարեհաջող, հաջողակ) կայսրի տարած հաղթական պատերազմների մա-

¹⁶ Գրչանկարները մերն են:

սին՝ ընդդեմ պարսիկների և օսմանցիների, որոնց արդյունքում ժողովուրդն Աստծո կամոք ազատվեց «ի մեծայմեծ պատերազմաց», իսկ Ռուսաստանի տիրապետության սահմաններն ընդարձակվեցին «Կարինու մինչ ի Թավրեզ»։ Վիմագրի բովանդակության պատմաքաղաքական կարևորությունը նկատի առնելով՝ հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ հիշյալ իրադարձություններին։

Պատմությունից հայտնի է, որ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվել է ռուսների հաղթանակով, որի արդյունքում Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղում 1828 թ. փետրվարի 10-ին կողմերի միջև կնքվեց հաշտության պայմանագիր (ռուսական կողմից այն ստորագրել են գեներալ Ի. Պասկևիչը և պետական խորհրդական Ա. Օբրեզկովը, իսկ պարսկական կողմից՝ գահաժառանգ Աբաս Միրզան), համաձայն որի՝ Ռուսական կայսրությանն էին անցնում Երևանի ու Նախիջևանի խանությունները, ինչպես նաև վերահաստատվեցին դեռևս Գյուլիստանի պայմանագրով Պարսկաստանի ստանձնած բոլոր պարտավորությունները¹⁷։

Օգտվելով իր համար ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ 1828 թ. ապրիլին Ռուսաստանը պատերազմ է հայտարարում նաև Թուրքիային։ Ռուսների տևական հաջողություններից հետո սուլթան Մահմուդ II-ը (1808-1839) ստիպված հաշտություն է խնդրում։ Պայմանագիրը կնքվում է 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում, ըստ որի. «Ռուսական կայսրությանն են անցնում սևծովյան մի քանի նավահանգիստներ, Ախալցխա, Ախալքալաք քաղաքները։ Արևմտյան Հայաստանում գրավված մյուս գավառները վերադարձվում են Օսմանյան Թուրքիային»¹⁸։ Այս շրջանում է, որ Նիկոլայ I կայսրն արտոնում է Ռուսաստանի տիրապետության տակ անցնել ցանկացող հայերի և այլ քրիստոնյաների վերաբնակեցումը¹⁹։ Չխորանալով իրադարձությունների վաղուց հայտնի մանրամասների մեջ՝ մնում է միայն փաստել, որ հիշյալ դեպքերի արժանահավատ վավերագիրը պետք է համարել խնդրո առարկա վիմագիրը, որի թվագրումը կարելի է սահմանել 1829-1830 թթ. միջև, քանի դեռ Եփրեմ կաթողիկոսը չէր հրաժարվել գահից²⁰։

¹⁷ Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.), գիրք առաջին, Եր., 2010, էջ 213։

¹⁸ Նույն տեղում, էջ 254։

¹⁹ Նույն տեղում, էջ 255։

²⁰ Իր կաթողիկոսության ընթացքում Եփրեմ Ձորագեղցին բազմիցս ցանկացել է հրաժարվել հայրապետական գահից. նախ 1812թ., որը կանխեց Ներսես Աշտարակեցին, ապա Շուշիից՝ 1822թ. հունիսի 20-ի՝ գեներալ Վելիամինովին և հունիսի 30-ի՝ Ռուսաց Ալեքսանդր Պավլովիչ կայսերն ուղղված գրությունները բովանդակում էին նրա հրաժարականը։ 1822-1826թթ. Հաղբատի վանքում առանձնացած լինելուց հետո Եփրեմ կաթողիկոսը տեղափոխվել է Թիֆլիս և Էջմիածին վերադարձել միայն 1828թ.՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո։ Անկարող գտնվելով առողջության վատթարացման դեմ և հավատացած լինելով, որ իրեն փոխարինելու կգա արդյունաշատ հոգևորական Ներսես Աշտարակեցին՝ Եփրեմ հայրապետն անհնար է համարել իր հետագա կաթողիկոսական գործունեությունը և 1830թ. հոկտեմբերի 8-ին հրաժարական ներկայացրել, որն ընդունվել է Սինոդի կողմից ու հաստատվել ցարական հրովարտականով (Հայ Եկեղեցու հանրագիտարան, պ. Ա, Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Ս. Էջմիածին, 2008, էջ 82-84, Ա. Հարություն-

Տարակուսելի է մնում այն, որ սույթան Մահմուդ II-ի անունը վիմագրում հիշատակված է *Համիթ* ձևով: Մահմուդը Աբդուլ Համիդ I-ի (1774-1789) որդին էր, հետևաբար, բացառված չէ, որ հոր անվան հիշողությամբ փորագրիչը սխալմամբ վկայակոչել է սույթան Աբդուլ Համիդ I-ին: Անհասկանալի է նաև վիմագրի երկրորդ տողում առկա *Վարյադին* բառը, որը թերևս հատուկ անուն է:

Հռոմի ցարդ անտիպ արձանագրությունը հայ-ռուսական փոխհարաբերությունների և հատկապես Արևելյան Հայաստանի ԺԹ դարի պատմության ուսումնասիրման արժանահավատ «քարե փաստաթուղթ» է, ինչի նմանօրինակները հիշյալ պատմաշրջանում խիստ սակավ են:

Փաստելի է, որ վաղ հնագիտական հուշարձաններով հարուստ Հռոմ գյուղն ունի բազմաթիվ անդամ պատմություն: Չնայած այն հանգամանքին, որ զարգացած միջնադարից գյուղի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չեն պահպանվել, այդուհանդերձ՝ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ գիտական շրջանառության մեջ դրվող արձանագրությունն ընդգծում է տարածաշրջանում՝ բնակավայրի ունեցած որոշակի դերն ու նշանակությունը ԺԹ դ. առաջին կեսի իրապես բարդ ու վայրիվերումներով լի մթնոլորտում:



Նկ. 1 Ս. Հռիփսիմե եկեղեցին արևմուտքից



Նկ. 3 Եկեղեցու հարավային մուտքի վիմագիրը



Նկ. 2 Եկեղեցու շինարարական արձանագրությունը, 1861 թ.

յան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 220):



Նկ. 4 Նիկոլայ I կայսեր անվանակիր արձանագրությունը, 1829-1830 թթ.

СЕЛО ОРОМ И НЕИССЛЕДОВАННАЯ РАНЕЕ ПАМЯТНАЯ НАДПИСЬ ИЗ ЦЕРКВИ СВ. РИПСИМЭ

___ Резюме ___

___ А. Арутюнян ___

В селе Ором (Ширакская область Армении) находится построенная в 1861 году церковь, композиционно представляющая собой трехнефную базилику. Со стен этой церкви нами были скопированы 3 памятные надписи, одна из которых и послужила поводом для написания настоящего сообщения.

В рассматриваемой памятной надписи повествуется о победных походах русского царя Николая I-го (царствовавшего с 1825 по 1855 гг.) против персов и осман. Таким образом, данная надпись является запечатленным в камне свидетельством победоносного для России исхода русско-персидской войны 1826-1828 годов и русско-турецкой войны 1828-1829 годов. В надписи упомянуто также имя Католикоса Всея Армении Епрема I Дзорагехци (1809-1830), что позволяет ограничить ее датировку 1829-1830 годами, то есть, периодом, когда Епрем еще не отказался от престола.

Неизданная до настоящего времени памятная надпись из села Ором является «каменным документом», содержащим важную и достоверную информацию об армяно-русских взаимоотношениях и об истории Западной Армении в XIX веке, подобные которому в упомянутый период чрезвычайно редки.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հարությունյան Արսեն Էդուարդի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան,
Email: ars.vimagrget@gmail.com

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ՀՈՂՄԻ ԱՍՏԾՈՒ ԲՆՕՐՐԱՆԸ

Հնդեվրոպական-շումերական առասպելաբանական փոխառնչությունների պարզաբանման հարցերում առանձնահատուկ դեր է վերապահված Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհին: Այստեղ էին այն երեք լեռնաշղթաներն ու չորս գետերի վերին հոսանքները, որոնք, ըստ «Աշխարհացոյց»-ի հեղինակի¹, գտնվում էին Երկրագնդի ամենաբարձր մասում՝ «Կատար Երկրի»-ում: Բարձր Հայքի նկարագրության մեջ «Աշխարհացոյց»-ում կարդում ենք հետևյալը. «Եւ ըստ անուանդ արդարեւ բարձր է ոչ միայն քան [զմնացեալ] Հայք, այլ քան զամենայն Երկիր, վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնա, զի ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ՝ զի բոլիւ չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ՝ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոհ՝ ի հիւսիս: Ունի լերինս մեծս երիս ... եւ քաղաք զԹեոդուպաւլիս»:² Վերջինը Կարին քաղաքի բյուզանդական անունն է:³ Հիշատակված չորս գետերից Եփրատը իր ստորին հոսանքով արդեն շումերական գետ էր՝ շումերների գերագույն աստված Էնլիլի որդու՝ Էնկիի (Էյա, Հայա) սրբազան զույգ գետերից մեկը (մյուսը Տիգրիսն էր):⁴

«Կատար Երկրի»-ի երեք լեռների առթիվ էլ առայժմ հիշենք միայն Էնլիլի Kur.gal «Մեծ լեռ» մակդիրը: Բանն այն է, որ շումերերեն Kur «լեռ, լեռնային երկիր, երկիր» բառի աքաղական համապատասխան սեպախումբը բաղկացած է երեք սեպերից՝ գաղափարագիր ŠADŪ (šadû «լեռ») ընթերցմամբ:⁵ Այն ծագում է շումերերենում kur ընթերցվող սեպախմբից, որի հիմքում երեք նշաններից բաղկացած հետևյալ մեհենագիրն է՝ 𒌦 (վերջինս արձանագրված է դեռևս մ.թ.ա. 3500-3100թթ. թվագրվող Ուրուկ-IV հնագիտական շերտում):⁶ Երեք լեռներ պատկերող այս մեհենագիրը հիշեցնում է «Կատար Երկրի»-ի երեք *մեծ լեռները* և նրանց շրջակայքն ընդհանրապես:⁷ Ըստ այսմ է հասկանալի դառնում, թե ինչպես կարող էր շումերերեն kur բառը և՛ «լեռ» և՛ «երկիր» նշանակել:

Հնդեվրոպական նախալեզվում «լեռ» նշանակած արմատներից մեկը *Hkʷer/*Hkʷor ձևով վերականգնած Վ.Վ. Իվանովը ցույց է տվել նաև նրա հնարա-

¹ Հոդվածի անգլերեն տարբերակը՝ տեղ է գտել էլեկտրոնային պարբերականում (տե՛ս <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/209.pdf>):

² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 58, 106,

⁴ Афанасьева В. Энки, “Мифы народов мира” (այսուհետև՝ МНМ), т. II, М., 1988, стр 662.

⁵ Khazai Khosro, Les grandes étapes de l'archéologie mesopotamienne, “De Sumer à Babylone. Collections du Louvre” (այսուհետև՝ Khazai Khosro), Bruxelles, 1983, p. 24.

⁶ Նույն տեղում, էջ 21, 24.

⁷ Օրինակ, խեթական սեպագիր արձանագրություններում որևէ լեռնանվան տակ հասկացվում է նաև անվանակիր լեռն ընդգրկած երկիրը (Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Եր., 2013, էջ 63):

վոր առնչությունը շումերերեն *kur* բառին:⁸ Այս նոր վերակազմության **k'-*-ով ձևերը համապատասխանում են հնդեվրոպական հնչյունական համակարգի ընդունված նախորդ վերակազմության **gy-*-ով և հին վերակազմության **g²-*-ով ձևերին: Մատնանշված արմատից են ծագում հուն. *δειρος* «բլուր», հին հնդկ. *giri-*, ավեստ. *gairi* «լեռ» հին սլավ. *gora* «լեռ» և այլն:⁹ Այդ նույն արմատին է հանգում հայերենի չստուգաբանված *կռան* «տան կտուր, տանիք» բառը:¹⁰ *կռան* < **կռռ-առ-ն* (-*առ* վերջածանցի համար հմմտ. *աղ-առ-աղ*, *իր-առ*, *խարդ-առ-անք*, *սակ-առ*¹¹ և այլն, իսկ վերջնաձայն *ն*-ի համար՝ *դռուն*, *ձեռն*, *ռոտն*, *սիսեռն*, *քիրտն* և այլն):¹² Ի նկատի առնելով հին ժողովուրդների առասպելաբանական պատկերացումներին բնորոշ մարդու մարմնամասերի և աշխարհագրական առարկաների համադրումները՝ կարելի է նույն **կռռ* արմատից ծագած համարել նաև *կռռն*//*կռռ* «կոնակ, մեջք, թիկունք», «թևի և ուսի կպած տեղը», բրբ. «կոնք, մեջքի մեծ ոսկորը»¹³ և *կռթունք* (< **կռռ-թ-թ* ածականով) «կոնակ, թիկունք», որից՝ *կռթնիլ* «հենվել» հավաստի ստուգաբանություն չունեցող բառերը:¹⁴ Համադրումների համար հմմտ. անգլ. *back* «մեջք» և «բլրի գագաթ», *spine* «ողնաշար» և «լեռան կատար»,¹⁵ ռուս. *хребет* «մեջք, կոնակ, ուս» և «լեռնաշղթա», որից՝ *хребтовидный* «ողնաշարի» և «լեռնաշղթայի»:¹⁶

Ամենայն հավանականությամբ, Բարձր Հայքին առնչված **կռռ* «լեռ» արմատից է ծագում նաև *կռռ* (< *կռռ-ռ*) բառը: Այս վերջինի վերաբերյալ Մտ. Մալխասյանը նշել է, որ այն տալիս են Արևելյան Հայաստանում բնակվող հայերը՝ Արևմտյան Հայաստանից տեղափոխված հայերին՝ առանձնապես ախալցխացիներին, ախալքալաքցիներին, շիրակցիներին:¹⁷ Հայտնի է, որ Ախալցխայում և շրջակայքում, Ջավախքում ու Շիրակում 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո վերաբնակված հայերի մեծ մասը Բարձր Հայքից էր և նրանց է վերաբերում *կռռ* անունը: Անշուշտ, այդ անունը վերաբնակիչներն ու նրանց ուղղակի նախնիները կրել են դեռևս իրենց բնօրրանում: Հոգուտ դրա կարող է վկայել նաև *բարդու* անունը, որը ըստ միջնադարյան «Բառագիրք հայոց»-ի, նշանակում է «կարնեցի»¹⁸ (հնում *Կարին*)¹⁹ կոչվում էր ոչ թե գավառի կենտրոնատեղին՝ ներկա-

⁸ Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ *ИЯИ*), т. II, Тб., 1984, стр. 665, пр. 1.

⁹ Նույն տեղում, էջ 666:

¹⁰ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ *ՀԱԲ*), հ. II, Եր., 1973, էջ 669:

¹¹ Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 85-86:

¹² Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 74:

¹³ *ՀԱԲ*, հ. II, էջ 663-664:

¹⁴ Նույն տեղում, էջ 669:

¹⁵ *Англо-русский словарь*, составил В.К. Мюллер, М., 1964, стр. 76, 949.

¹⁶ Ռուս-հայերեն բառարան. չորս հատորով, հ. IV, Եր., 1958, էջ 637:

¹⁷ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ *ՀԲԲ*), հ. II, Եր., 1944, էջ 494: Հովհ. Թումանյանի պատմվածքներից մեկում լոռեցի Անդրին ուղևորվել էր Շիրակ, երբ կեսձանապարհին «... աղբյուրի մոտ տեսավ մի սպիտակ չուխավոր մարդ: Անդրին իսկույն ձանաչեց, որ նա կռռ է (շորագլայցի). միայն նրանք են սպիտակ չուխա հագնում» (Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. V, Եր., 1994, էջ 9):

¹⁸ Բառագիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 51:

յիս էրգրումը, այլ հենց գավառը):²⁰ *Բարդու<բարդ-ու*. հմմտ. *թթու, լորտու, կծու, խորովու* և այլն, որոնք կազմված են *-ու* վերջածանցով, իսկ **բարդ* արմատը *բարձ-* ի տարբերակն է՝ առկա ինչպես *Բարձր Հայք* երկրանվան մեջ, այնպես էլ *բարձունք* և այլ բառերում: Դրանց համարժեքության տեսանկյունից հմմտ. *զինդ/զինձ, խանդ/խանձ, խեղդ/հեղձ, փոխինդ/փոխինձ* արմատակից զույգերը: Հիշենք նաև *բարդի* (<*բարդ-ի) «մի տեսակ բարձր ծառ», *բերդ* «բերդ, ամրոց» բառերը²¹ և վերջինիս *բերձ* տարբերակը (հմմտ. *բարձաբերձ, երկնաբերձ*՝ «բարձր, բարձր տեղ» նախնական իմաստներով):

Էնլիլը ոչ միայն Kur.gal «Մեծ լեռ» էր կոչվում, այլև կացարան ուներ երկիրն ու երկինքը միավորող բարձր լեռը, իսկ նրա տաճարը Նիպպուրում կրում էր E.kur «լեռան տուն» անունը:²² Սրանցով Էնլիլի նախատիպ լեռան անձնավորում աստվածությունը, Էնլիլի խորհրդանիշը՝ բազինին դրված եղջերավոր խույրը, և Էնլիլն ինքը՝ որպես հողմի անձնավորում աստվածությունն առնչվում են Բարձր Հայքին//«Կատար Երկրի» և սրա հյուսիսային սահմանը կազմած Պարխար//Արևելապոնտական լեռնաշղթային,²³ որի հայկական անունն էր կրում *Պարխար, Պարխարցի, Պարխրցի* կոչված հյուսիսային քամին: Այս քամու անունը, ինչպես Հ. Աճառյանն է բացատրում. «առաջին անգամ ծնունդ է առած Փոքր Հայքի և Արևմտյան Հայաստանի շրջաններում (Շատ սովորական երևույթ է քամիները կոչել փչած տեղերի անունով)»:²⁴ Իսկ Միջագետքի հնաբնակները Էնլիլին իրենց օրհներգերում և աղոթքներում համեմատում էին ինչպես շառաչող ու ավերիչ քամու հետ, և նրան կոչում էին «քամու լեռ», այնպես էլ վայրի ցուլի հետ:²⁵ Եթե սրանց հետ միասին ի նկատի ենք առնում, որ նրա խորհրդանիշը եղջերավոր խույրն էր, և նա «մեծ լեռ»(Kur.gal) էր կոչվում, ապա հասկանալի է դառնում, որ դրանք բոլորը փոխադարձ իմաստաբանական կապի մեջ էին՝ պայմանավորված բարձր լեռան պաշտամունքով ընդհանրապես և «Կատար երկրի»-ի (Բարձր Հայքի) լեռնաշղթաներից մեկի՝ հյուսիսային քամու օրրան Պարխարի դիրքով՝ մասնավորապես:

Քաջ հայտնի է լեռների և եղջերավոր վայրի կենդանիների առասպելաբանական զուգորդման փաստը՝ իր արտացոլումը գտած Հայոց այնպիսի լեռնանուններում, ինչպիսիք են՝ *Արագած, Արտին, Արտոս, Առնոս, Սրմանց, Ցլու գլուխ* և այլն: Արևելապոնտական լեռնաշղթայի *Պարխար* անունը ևս սրանց շարքում է: *Պարխար<Պարխ-ար* լեռնանվան հիմքը նույնն է *պախրայ/պախրէ* բառի *պախր* հիմքի հետ: *Պարխ-ը* և *պախր-ը* մեկի մյուսի դրափոխության ենթարկված ձևն է

¹⁹ Կարին<*Կար-ին արմատի համար հմմտ. *Կարկառ, իսկ վերջածանցի համար լուսին, դարբին, կարգին, խորին* և այլն:

²⁰ *Καρχινίος* (Strabo, XI, 14,5, Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Եր., 1940, էջ 56-57):

²¹ ՀԱԲ, հ. I Եր., 1971, էջ 413-414, 427-428:

²² Khazai Khosro, նշվ. աշխ., էջ 45, Афанасьева В., Энлиль, «МНМ», т. II, стр. 662-663.

²³ Պետրոսյան Ս., Հայկական լեռնաշխարհի տեղը Էնլիլ և Էնկի աստվածների պաշտամունքում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 22-24 հոկտեմբերի, 2010, Եր., 2010, էջ 58-65:

²⁴ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 62:

²⁵ Токарев С., Религия в истории народов мира, М., 1986, стр. 322; Афанасьева В., Энлиль, «Мифология. Золотой фонд. Энциклопедия» (այսուհետև՝ МЗЭ), М., 2003, стр. 635.

(բայց ո՞րը որի): *Պախրայ/պախրէ* նշանակում է «տավար, արջառ, նախիր», իսկ բարբառներում նաև՝ «եզ», «եղջերու», «այծյամ, կխտար (արու կամ էզ)»:²⁶ Պարխար/Արևելապոնտական լեռնաշղթայի արևելյան հատվածը նույնաբնույթ անունով էր հայտնի փոքրասիական հույներին ևս: Ստրաբոնն այն կոչում է *Μοσχικαὶ ὄρη*²⁷ «Մոսքիկյան լեռ», իսկ «Աշխարհացոյց»-ը՝ *Մոսքական լեռինք*²⁸: Լեռնանվան հիմքը նույնական է հուն. *μόσχος* «ցլիկ, հորթուկ, մոզի, երինջ» բառի արմատի հետ:²⁹ *Պարխար* լեռնանվան արմատակից լեռնանուն կար նաև ավելի հարավ ընկած տարածքում: Այդ արմատական ձևն էր պահել *Պախր*, *Պախրայ* կոչված լեռը:³⁰ *Պարխար* լեռնանունը իրանական **parahvāθra* ենթադրյալ ձևից առաջացած լինել չէր կարող այն պարզ պատճառով, որ ավեստյան համապատասխան *pouruxvāθra*-ն նշանակում է «լի բարօրությանմբ»,³¹ երբ *Պարխար*ցին հյուսիսային ցրտաշունչ քամին է, իսկ *Պարխար* լեռնաշղթան համարվել է նրա օջախը: Ներսես Շնորհալին բերում է «Պարխար» պատասխանն ակնկալող հետևյալ հանելուկը.

«Ի հիւսիսոյ գայ ձիաւոր,
Հանց սուր երթայ զինչ թելաւոր,
Զփիճիքս առնէ կոտոր-կոտոր
Խայթէ զմարդոյն աչքն զեղ կոր»:³²

Հանելուկում առկա են առասպելաբանական մտածողության արդյունք պատկերավորման ձևեր և անագրամաներ, որոնք բնորոշ չեն այն ավանդած Ներսես Շնորհալու դարաշրջանի հայի լեզվամտածողությանը: Հայտնի է, որ հնդեվրոպական առանձին ժողովուրդներ պահպանել են հնդեվրոպական փոքրածավալ չափածո տեքստերին բնորոշ մի սկզբունք՝ հասցեատեր առասպելաբանական կերպարի անվան անագրամաներով սքողման սկզբունքը: Նրա անունը բացահայտվում էր «բանալի» բառի միջոցով, որը կազմված էր լինում գաղտնի անվան հնչյունները կրկնող այլ բառից կամ բառերից:³³ Լավագույն օրինակներից մեկը հանդիպում է Վահագն աստծուն ձուլված օրհներգում՝ «Վահագնի երգ»-ում: Այստեղ երիցս հնչում է *արեւ* բառը հիշեցնող *էր-եւ* «բանալի»-ն՝ կազմված *եւ* շաղկապից ու նրան նախորդող բայի *-էր* վերջավորությունից:³⁴

Բերված հանելուկում այս տեսանկյունից ուշագրավ են *զփիճիքս առնէ* բառակապակցության և *կոր* բառի ստեղծած հնչյունական դաշտերը: Սրանցից առա-

²⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 7, ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 36:

²⁷ Strabo, XI, 2, 15; XI, 12, 4; XI, 14, 1; XII, 3, 18 (Ստրաբոն, էջ 26-27, 42-43, 52-53, 74-75):

²⁸ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 100: Աբրահամյան Ս., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 347:

²⁹ Պետրոսյան Ս., Դրախտի զետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 2, էջ 237-255:

³⁰ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 76, 99:

³¹ ՀԱԲ, հ. IV, էջ 62:

³² Մնացականյան Ս., Հայ միջնադարյան հանելուկներ, Եր., 1980, էջ 261:

³³ Де Соссюр Ф., Труды по языкознанию, М., 1977, стр. 635-649.

³⁴ Պետրոսյան Ս., «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, թիվ 4, էջ 78-79:

ջինը՝ (*գփհճիք*) *u-առնէ*, հուշում է, որ խոսքը հյուսիսային սառը քամու մասին է՝ *u-առնէ/սառն է*, իսկ *կոր* բառն ունկնդրին ուղղորդում է դեպի **կուր/*կուռ* բառը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գործ ունենք *կոր* «կարիճ» բառի հետ, բայց կարիճը գետնաքարշ անթև միջատ է, և մարդու աչքը, այն էլ *թևավոր* սրի նման խայթել չի կարող: Իսկ դա կարող է անել կուրը (ըստ Ղ.Ալիշանի՝ «մի տեսակ վնասակար միջատ» է), իսկ *կուր*-ը տարբեր է *կոր* «կարիճ» բառից:³⁵ Ըստ այսմ, հանելուկի նախնական օրինակում *կոր*-ի փոխարեն լինելու էր **կուր*, որն արմատն է *կրէտ* (<*կուր-էտ) «իշամեղու» բառի, իսկ սա հնչյունական նմանակն է **կուր* «լեռ» բառի: Ուշագրավ է, որ եթե հյուսիսային Պարսապ լեռնաշղթայի անունով հյուսիսային սառը քամին *Պարխար* է կոչվել, ապա նույնպիսի մոտեցում հյուսիսային քամու նկատմամբ դրսևորած հին հույները այն Βορέας, իսկ արևելյան սլավոնները Вора, Ворѣя, այսինքն՝ «լեռ, լեռնային» են անվանել:³⁶ Այս բառերը հնդեվրոպական նախալեզվից եկած արմատակիցներն են մեր **կուր/*կուռ* «լեռ» բառի:

Էնլիլը ոչ միայն Kur.gal «Մեծ լեռ» էր կոչվում, այլև նույնացվում էր շառաչող և ավերիչ քամու հետ: «Լեռ»/«եղջերավոր»/«քամի» իմաստաբանական կապի առնչությամբ պետք է հիշել, որ «Ամպեղեն էակը, որ որոտն է, մտածվում է որպես արջառ կամ *մեծ եղջյուրներով լեռնանման էակ...*, բայց որոտացողը մտածվում է նաև *որպես հողմ*, քանզի հավատում են, թե որոտում է, երբ ալեկոծող *հողմը փչում է* երկնային ծովի մեջ»³⁷ (ընդգծումներն իմն են-Ս.Պ.): Մ. Աբեղյանի այս դիտողության հաստատումներն ենք գտնում «Եթե մալը փռշտա թիփի կլինի»³⁸ հավատալիքի մեջ և հին հուն. αἰγίς բառում, որով էին կոչվում թե՛ այծենին ու այծենակաճը, թե՛ մրրիկն ու փոթորիկը, թե՛ ամպրոպային Ջևսի վահանը:³⁹ Էնլիլի կերպարում ամպրոպային գծերի բացակայությունը լինելու է հետևանքը նոր միջավայրի՝ տափարակ և գրեթե ամպրոպագուրկ Շումերի ուղղակի ազդեցության: Որ հնդեվրոպական ցեղերի հողմի անձնավորում աստվածությունների բնակավայրը նախապես համարվել է Արևելապոնտական լեռնաշղթան, ցույց է տալիս ամագոնների հայրենիքի վաղ տեղորոշումը: Ամագոններին հույներն համարում էին հողմի ռազմիկ աստված Արեսի դուստրերը, որոնք ժառանգել էին նրա բնավորության գծերը: Օրինակ՝ «կատաղի հողմի պես» մարտնչում էր ի վերջո Աքիլեսից սպանված Պենթեսիլիան,⁴⁰ իսկ մեկ ուրիշ հույն հերոս Թեսեսը, հաղթել և գերի էր վերցրել ամագոնների մեկ ուրիշ թագուհու՝ Անտիոպեին:⁴¹ Վերջին դեպքի առթիվ հիշատակված է նաև ամագոնների Թեմիսկյուրե քաղաքը և Թերմոդոն գետը: Մրանցից առաջինը Սև ծովի հարավային ափի ներկայիս Թերմե բնակավայրն է,⁴²

³⁵ ՀԱԲ, հ. II, էջ 665:

³⁶ ИЯИ, т. II, стр. 678-679.

³⁷ Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. VII, էջ 66:

³⁸ Լալայան Ե., Երկեր, հ. I, Եր., 1983, էջ 247:

³⁹ «Древнегреческо-русский словарь», т. I, М., 1958, стр. 47.

⁴⁰ Тахо-Годи А., Амазонки, МЗЭ, стр. 35; Կուն Ն., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ 478:

⁴¹ Նույն տեղում, էջ 277:

⁴² Երեմյան Մ., նշվ. աշխ., էջ 53:

իսկ երկրորդը՝ այս բնակավայրի մոտ Սև ծովը թափվող գետակը:⁴³ Վերջինս սկսվում է Արևելապոնտական լեռնաշղթայի արևմտյան մասում՝ նրա հյուսիսային լանջերից: Ուրեմն, հին հույները նախապես Պարիսար Արևելապոնտական լեռնաշղթայի և Սև ծովի միջև էին պատկերացնում հողմածին ամագոնների երկիրը:

Շումերների գերագույն աստվածը իր *Enlil* անվամբ ևս բացահայտում է ինչպես իր հողմային բնույթը, այնպես էլ նախատիպ աստվածության (կամ նախատիպերից գլխավորի) Հայկական լեռնաշխարհում՝ հնդեվրոպական նախահայրենիքում ձևավորված լինելու հանգամանքը: *Enlil* < *En-lil* բաղադրիչներից բաղկացած դիցանվան *en-* բաղադրիչը շումերերենում «տեր» է նշանակում (նախապես հոգևոր իմաստով՝ որպես «գերագույն քուրմ»),⁴⁴ իսկ *-lil*-ը մոտավոր թարգմանությամբ՝ «փյուն, քամի, օդ»: Այս դեպքում դիցանվան մոտավոր իմաստը լինում է «տեր փյուն», «տեր քամի», «տեր օդ»:⁴⁵ *En-lil* դիցանվան *lil* բաղադրիչի իմաստի մեջ կարելի է հստակություն մտցնել՝ ի նկատի առնելով նրա հետ հնչյունական տեսանկյունից նույնական հնդեվրոպական նախալեզվի **lel-/lél-* «շարժել, ցնցել» արմատը, որով կարելի էր արտահայտել քամու (օդի տատանման) տեսանկյունից տեսանքները և նրան համարել «շարժող, տատանող»: Հնդեվրոպական այս արմատի առաջին տարբերակից հայերենում ունենք *լել* բառը, իսկ երկրորդ տարբերակից՝ **լիլ* (որից **լիլ-ուկ<լլուկ>*): Գրաբարում արմատն ավանդված է երկրորդական նշանակությամբ՝ *լլուկ* «նեղություն, չարչարանք», որից՝ *լլկել* «չարչարել, նեղել», *լլկիչ* «չարչարող» և այլն, բայց բարբառները պահել են արմատի նախնական նշանակությունը: Հմմտ. *լելալ* «շարժվել, երեքալ», *լլկալ, լլկվիլ* «շարժվել, երեքալ, այսուայնկողմ ընկնել» (Վան), *լլգել* «ցնցել, թափահարել» (Ալաշկերտ), *լլգել* «մանկանն օրորել», «քնած մարդուն ցնցել ու շարժել՝ որպեսզի արթնանա» (Մուշ), *լլգիլ* (Խարբերդ), *լիլիկել* (Մարաղա), «օրորել մանկանն օրորանում» և այլն, իսկ ազգակից լեզուների արմատակից բառերից՝ հին հնդկ. *lēlayati* «ճռճվել, տատանվել, դողալ», *lālayati* «զգվել, փայփայել», լիտվ. *leliūoti* «օրորել, ճռճել», լատիշ. *leluoti* «օրորողի մեջ մանկան օրորել, նանիկ ասել» և այլն⁴⁶: Այս վերջին նշանակությամբ պարզվում է նաև քամու դրական դերը, որն ունեցել է որք նորածինների կյանքում որպես նրանց օրորողի և օրոր ասողի: Այդպիսի դերով է նա հանդես գալիս հայ ժողովրդական մի շարք հեքիաթներում: Դրանցից մեկում նորածին որբուկին հայտնաբերած պառավը «Կը վերցու գերեխեն կը բերե, էրկու ծառից ճղոր մե կը կապե, կը դնե մեջ, կօրորե.

Օրո՛ր, օրո՛ր, անուշ գառնուկ.

Օրոր էնիմ օրորոցին

Հարաջ քամին տանե բերե

Վերու էծ գա քրզի ծիծ տա

⁴³ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 53, քարտեզ:

⁴⁴ Дьяконов И. Города-государства Шумера, "История древнего мира, I, Ранняя Древность", М., 1989, стр. 64.

⁴⁵ Նույն տեղում, էջ 113; Афанасьева, Энлиль, МЗЭ, стр. 635.

⁴⁶ ՀԱԲ, հ. II, էջ 288, ՀԲԲ, հ. II, էջ 192, 198:

Մեկիկ աստված քրզի պահե»:⁴⁷

Այս և ժողովրդական այլ հեքիաթներում որբուկի փրկիչ-հովանավորի դերում հանդես եկող պատավը, վայրի այծը (այծյամ, եղնիկ), քամին արդյոք խորհրդանշերն ու տարբեր դրսևորումները չեն Մայր դիցուհու: Հարցի դրական պատասխանի դեպքում կարող ենք բացահայտել հնդեվրոպական-շումերական մեկ ուրիշ գուգահեռ նա: Էնլիլի կինը, որին համարում են մայր դիցուհու դրսևորումներից մեկի հետագա առանձնացումը, կոչվում էր Նինլիլ: Շումերերենում En.lil և Nin.lil դիցանունները գուգահեռ՝ արական (en) և իգական (nin), ձևակերպումներն են *lil արմատի, որը հիմք է տվել Nin.lil դիցանունը հասկանալու որպես «տիրուհի քամի»:⁴⁸ Նինլիլը Էնլիլի խորհրդատուն էր, օգնականը, իր ասեղ ամուսնու զայրույթը մեղմող գթառատ դիցուհի:⁴⁹ Եթե հիշենք Էնլիլի խորհրդանիշ եղջերավոր խույրը և եղջերավոր կենդանիների հետ նրա բացահայտվող առնչությունները, ապա պարզ կդառնա, թե ինչու Նինլիլի խորհրդանիշը կարող էր լինել սնուցող այծը (այծյամ, եղնիկ), իսկ ինքը հանդես գալ որպես գթասիրտ «պատավ» և օրորող քամի: Ընդ որում, քամին հարավային է՝ դրական Հայկական լեռնաշխարհի համար (Բելը Հայկին «բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց»),⁵⁰ և բացասական՝ տոթակեզ հարավ միջագետքյան տափարակների համար: Հեքիաթի այս պատմվի առնչությունը անտառի և այնտեղ լքված նորածնի հետ, թույլ է տալիս տիպաբանական գուգահեռ անցկացնել նրա՝ որպես անտառի տիրուհու հեքիաթային ժառանգորդի, և շումերական Նինհուրսագ (Նինհուրսանգա) դիցուհու նախատիպի մեջ նա: Ninhursag դիցանվան իմաստը «անտառապատ լեռան տիրուհի» է, բայց անվանակիր դիցուհին մշտապես կոչվում է «բոլոր աստվածների մայր», «բոլոր երեխաների մայր» և համարվել է մայրը հարավային Միջագետքի այնպիսի հոչակավոր միապետների, ինչպիսիք էին Էաննատումը, Համմուրապին, Նաբուգոդոնոսորը և ուրիշներ:⁵¹ Նինհուրսագը ըմբռնվել է նաև «Մայր երկիր» և «տիեզերական լեռ»:⁵² Անշուշտ, «անտառապատ լեռան տիրուհի» կոչված և «տիեզերական լեռ» համարված Մայր դիցուհու կերպարը անտառագուրկ և տափարակ Շումերում չէր ձևավորվել: Իսկ բարձրաբերձ Պարխարը այսօր էլ Հայկական լեռնաշխարհի ամենից շատ անտառապատ մասերից է: Անտառում լքված նորածին տղաների և «անտառապատ Լեռան տիրուհու»՝ Նինհուրսագի միջև ուղղակի կապի արգասիքն է նրանց անուններում միևնույն բաղադրիչների առկայությունը:

⁴⁷ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, Եր., 1967, էջ 169:

⁴⁸ Афанасьева В. Нинлиль, МЗЭ, стр. 400.


⁴⁹ Նույնը:

⁵⁰ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Եր., 1981, Ա, Ժբ:

⁵¹ Афанасьева В. Нинхурсаг, МЗЭ, стр. 399-401.

⁵² Ions Veronica, The world's mythology in colour, London, 1974, p. 10. Հմմտ. Մարտգ Աժդահակ թագավորի երագում հայտնված և երեք դյուցազունների ծնած հայոց Մայր դիցուհու հետ, որ նստած էր այն լեռան ծայրին, որը «երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ զազաթնն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ. եւ ասէին զոգցես յերկրին Հայկազանց զայս լինել» (Խորենացի, Ա, իզ):

Nin-hursag դիցանվան Nin բաղադրիչը նույնական է Nin-lil դիցանվան առաջին բաղադրիչի և շումերական ուրիշ մի շարք դիցանուններում առկա Nin բաղադրիչների հետ, որոնք համապատասխան աստվածներին տրված դիցական մակդիրներ են՝ կցված բուն դիցանուններին: Ninhursag դիցանվան մեջ բուն դիցանունը *Hursag-ն է՝ «անտառապատ լեռ» նշանակությամբ: Այն կարելի է ընթերցել նաև *Horsag, որովհետև սեպագրերում u-ի o-ի համար առանձին սեպագրեր գոյություն չունեն: Այս դեպքում *Hursag/*Horsag հիմքը կարելի է նույնացնել հիշյալ հեքիաթի տարբերակներից երկուսում անտառային նորածնին տրված *Օրսագուլ* < *Օրսագ-ուլ* անվան բուն շումերական (𐎶) ծագմամբ առաջին **Օրսագ* բաղադրիչի հետ, իսկ երկրորդը համարել հայերեն *ուլ* բառը: Վերջինս նշանակում է «այծի, նաև եղնիկի, այծյամի ձագ» և հայերենի հնդեվրոպական ծագումով բառերից է:⁵³ Այս առումով ուշագրավ է, որ եթե վերոհիշյալ հեքիաթից բերված երգում երգողը՝ նորածնին հայտնաբերած պառավը, նրան «անուշ գառնուկ» է անվանում, որին «վերու էծ»-ը պիտի կաթ տա, ապա մյուս երկու տարբերակում երգ ասողը նրան ծնած մայրն է, որն իր նորածնին *Օրսագուլ* է կոչում, որին ջեյրանը, պախրան պիտի սնեն: Ահա և այս տարբերակները.



1. «Նանա՛, նանա՛ Օրսագուլ,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգար չունենա՛ քիչ կտա,
Քամին կգա ժած կտա»:⁵⁴

2. «Նանի՛կ, նանի՛կ Օրսագու՛լ,
Օրդ թամամ, Օրսագու՛լ...
Ջեյրանը քեզ ծիծ կտա,
Քամին կգա, կօրորա»:⁵⁵

Ուշագրավ է, որ շումերական *Լագաշի* պեղումներից հայտնաբերված և Նինհուրսագ դիցուհուն վերագրված կուռքի (տե՛ս նկարը) որովայնի ստորին մասին այծ է պատկերված, իսկ

նրանից վերև՝ դեպի կուռքի կուծքը, պատկերված է շատ ավելի փոքր և հստակ չգծագրված մի կենդանական ֆիգուր, հավանաբար, այծի ձագը:⁵⁶ Ընդ որում, այծապատկերը նման է Հայաստանի ժայռապատկերների այծապատկերներին, իսկ այս կուռքի նման կուռքեր հայտնաբերվել են Թել-Բրաքի, Ուրի, Մարիի, Թել-

⁵³ ՀԱԲ, հ. III, էջ 591:

⁵⁴ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII, Եր., 1977, էջ 398:

⁵⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, Եր., 1959, էջ 460:

⁵⁶ Mallowan M.E., *L'aurore de la Mésopotamie et de l'Iran. Éditions sequoia, Paris-Bruxelles, 1966, p. 48, fig. 39; "Le berceau de l'humanité. Les grandes étapes de l'humanité", Genève, 1976, p. 84.*

լոյի պեղումներից:⁵⁷ Վերջինս պատրաստված է լուսնակուճից և թվագրվում է մ.թ.ա. մոտ 3300 թվականով:⁵⁸

Ուշագրավ է մեկ ուրիշ հանգամանք նա: Հեքիաթի նորածնին կճղակավոր եղջերավոր կենդանիների կողմից կերակրելու դրվագը կա նաև ուրիշ հեքիաթներում, բայց միայն մեր բերած հեքիաթում է, որ դրվագը բերվում է նրան ձուլված երգի հետ միասին: Ի դեպ, այս դրվագի՝ ժամանակին ունեցած տարածվածության մասին կարելի է դատել մեր բերած երեք տարբերակների միջոցով, որովհետև դրանք գրի են առնվել իրարից բավականին հեռու գտնվող այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Վանա լճի ավազանը (Բաղնոցի Բարդավ գյուղ), Լոռին (Աթան գյուղ) և Վաղարշապատը:⁵⁹

Անտարակույս, Բարձր Հայքի հնագույն գաղթականները, որոնք Շումեր էին հասցրել kur «լեռ, լեռնային երկիր» բառը և Էնլիլի լեռնային նախատիպի պաշտամունքը, իրենք այնտեղ հայտնվել էին Արևմտյան Եփրատի, ապա և՛ Մեծ Եփրատի հոսանքին զուգահեռ ընթացող ճանապարհով: Նույն կերպ, բայց գետի հոսանքին հակառակ ուղղությամբ ավելի ուշ Շումերի բնակիչներն էին հասել Հայկական լեռնաշխարհ, վերջինիս բնակիչներին հայտնի դարձնելով ծանոթ դիցուհու *Hursag/*Horsag անունը՝ պահպանված հայկական հեքիաթների *Օրսագույլ* անվան մեջ: Արևմտյան և Արևելյան Եփրատների միախառնման վայրից հարավ գտնվող Կապան (այժմ՝ Քեբանի) շրջանի հնագիտական պեղումների միջոցով պարզվել է, որ այստեղ գոյություն է ունեցել շումերական Ուրուկ-IV մշակույթը (մ.թ.ա. 3500-3100թթ.) կրողների գաղթավայր: Ըստ Ջ. Մելլաարտի՝ նրանք Եփրատով ու Եփրատամերձ ճանապարհով էին այստեղ հայտնվել:⁶⁰ Իսկ դա պայմանավորված է եղել Արկնիում (Արդանա-Մադեն) և շրջակայքում պղնձի և արծաթի հանքերի գոյությամբ:⁶¹

Անշուշտ, շումերներին հետաքրքրել են նաև ամուր բնափայտով Հայկական Տավրոսի երկնասլաց ծառերը, որոնք անփոխարինելի շինանյութ էին նավաշինության, տաճարաշինության և պալատաշինության մեջ: Եփրատյան ճանապարհի առավելությունն այս դեպքում ևս ակնհայտ էր: Ինչպես Հ. Քլենգելն է նշում. «Այս ճանապարհը հարմար էր մանավանդ էջերի քարավանը ջրով մատակարարելու տեսանկյունից:⁶² Մենք դեռևս տվյալներ չունենք մ.թ.ա. երրորդ հազարամյակում Միդիական տափաստանը հատող և Թադմոր Պալմիրայով անցնող

⁵⁷ Mallowan M., նշվ. աշխ., էջ 47, նկ. 37, 38 և էջ 135; "Le berceau de l'humanité", էջ 89.

⁵⁸ Homès-Fredericq D., La religion en Mésopotamie de Sumer à Babylone, "De Sumer à Babylone. Collections du Louvre", p. 68, fig. 20.

⁵⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, էջ 618, հ. VIII, էջ 850, հ. X, էջ 570:

⁶⁰ Меллаарт Дж., Торговля и торговые пути между северной Сирией и Анатолией (4000-1500гг. до н.э.), "Древняя Эбла" (Раскопки в Сирии), М., 1985, стр. 23:

⁶¹ Նույն տեղում, էջ 24:

⁶² Էջերի քարավաններն ի վիճակի չէին հատելու անջրդի Միդիական տափաստանը՝ ի տարբերություն ուղտերի քարավանների, բայց սրանք Մերձավոր Արևելքում հայտնվեցին միայն մ.թ.ա. XIV-XIII դդ. սկսած՝ շնորհիվ արամեական ցեղերի Արաբիայից կատարած գաղթերի:

ճանապարհի օգտագործման մասին»:⁶³ Իսկ Շումերին հարևան Սիրիական տափաստանը ուղղակի *անապատ* էր կոչվում⁶⁴:

Վերոշարադրյալը, բխելով հայկական և միջագետքյան առասպելաբանական նյութի տիպաբանական և լեզվաբանական վերլուծություններից, մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ շումերաքաղական առասպելաբանության առանձին կերպարների և նրանց հարակից նյութի խորքային շերտերի բացահայտումն ու իմաստավորումն անհնար է մինչև վերջ իրագործել՝ առանց հաշվի առնելու հասկացությունների այն զուգորդումներն ու համադրումները, որոնք ծնվել են Հայկական լեռնաշխարհում, հնդեվրոպական ընդհանրության ակունքներում և արտացոլվել հայկական առասպելաբանաստեղծական պատկերացումներում և հայոց լեզվում⁶⁵:

КОЛЫБЕЛЬ ИНДОЕВРОПЕЙСКОГО И ШУМЕРСКОГО БОГА ВЕТРА

____ Резюме ____

____ С. Петросян ____

Анализ образов древней месопотамской мифологии показывает, что она состоит из трех компонентов с различными элементами. Наряду с исконно шумерским и аккадскими компонентами, там наличествует также индоевропейский компонент. Такое заключение основывается на фактах, наиболее яркими из которых являются следующие: 1. Шумерское слово *kur* “гора, горная страна” фонетически близка с и.-е. *Hkʷor- “гора” > др. греч. *Βορέας*, восточнослав. *Гора*, *Го́ра*, *Горыч* – названия северного ветра. 2. Главный бог Шумера *Энлиль* / “Владыка-ветер” живет на высокой горе, его эпитет *Kur.gal* “Высокая гора”, а главный храм Энлиля в Ниппуре носил название *E.kutr* “дом горы”. 3. Индоевропейский компонент наличествует в именах *Enlil* (“Владыка-ветер”) и *Ninlil* (“Госпожа ветер”). Ср. и.-е. *lel-/el-* “трясти, шевелить”, “шатать, качать”. 4. Элиля сравнивают не только с горой и с ревущим ветром, но и с диким быком. Ср. названия Восточно-понтийского хребта (на северо-востоке Армянского нагорья) и северного ветра у древних армян – *Пархар*, *Пархарци* с арм. *пахра* “косуля”, “крупный рогатый скот”. 5. Там же, по поверьям древних греков находилась страна амазонок *Фемискира* (на реке *Фермодонт*). А амазонки – дочери древнегреческого бога войны и ветра *Ареса*. 6. Шумеры урукского периода ориентировались на поставки из Армянского нагорья, так как торговый путь вверх по Ефрату приводил их к месторождениям как меди и серебра, так и к богатым лесам Армянского Тавра. Именно там, в районе *Кебана*, были найдены материалы шумерской культуры *Урук-IV* (3500-3100 гг. до н. э.). 7. Шумерская колонизация этого района дала шумерийцам возможность вступить не только в торговые, но и в культурные взаимоотношения с индоевропейскими предками армян.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Սարգիս Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Մ. Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, E-mail: Vahe1996@mail.ru

⁶³ Кленгель Х., *Архивы Эблы и история Сирии: Проблемы и перспективы*, “Древняя Эбла”, стр. 208.

⁶⁴ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 114:

⁶⁵ Դեռևս տասնամյակներ առաջ խորհրդային հայտնի պատմաբան և ազգագրագետ Ս. Տոկարևը ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ *Անու* (*Ան*), *Էա* (*Հայա*, *Էնկի*) և *Էնլիլ* ամենահարգի աստվածների «կերպարների ծագումը պարզ չէ, համենայն դեպս, դրանք բարդ են» (Токарев С., նշվ. աշխ., էջ 322):

THE ISSUE OF TAYK'S IDENTITY IN THE GEORGIAN STUDIES

The history of XIV ashkharh (province) of Great Armenia – Tayk, is one of the most unstudied in Armenian historiography. From the ancient times, Tayk was part of the Armenian statehood and was inhabited by Armenians. This is certified in the Armenian and Greek sources. The first mention of Tayk refers to the 12th century BC, when the Assyrian king Tiglath-Pileser I, attacked state form Nairi, part of which was the country *Dayaeni*. In the records of Van Kingdom, Tayk is mentioned as *Diauhi*. In 401 BC, Greek historian Xenophon, passing through Armenia, mentioned the *Taokhs*. In the 2nd century BC, King of Great Armenia Artashes I (189–160 BC) united to his kingdom the territory in the north and north-west, including the part of Tayk, which in the 3rd century was conquered by Georgia. In the 4th AD century Tayk was passed to Armenian princely family Mamikonians. The Mamikonians often became the leaders of the struggle against a foreign enemy, and Tayk became the stronghold of the Armenian armed forces. In 591 by the order of the Byzantine Emperor Maurice, a new administrative unit was formed – “Deepest Armenia” from the territories of Tayk and Gugark.

At the end of the 8th century, after the anti-Arab uprising, Mamikonians were searching for a political asylum and had to leave Tayk where Bagratids emerged. In the 7th -8th centuries under the yoke of many Arab residents, a considerable part of the population of Tayk, including the clergy estate, preferred to move to the neighboring Byzantium. Soon in Tayk appeared the Georgian clergies, which joined a small amount of the Georgian population. Armenian indigenous population was quite tolerant towards Orthodoxy, and soon the Armenians themselves preferred to receive Orthodoxy, which however did not suppose the georgianisation of Armenians.

In the 10th century the region became part of Tayk principality (kurapalacy), which dates back to the 9th century in the nearby Kgharchk. Tayk gets great importance for Byzantium and South Caucasian countries as for its position as well as due to its considerable local authority which was at its zenith under David Kuropalates (960 - 1001). After the death of David Kuropalates Tayk pass to Byzantium. In the 2nd half of the 11th century Tayk was destroyed by Seljuk troops, and at the beginning of the 12th century it came under the influence of the Georgian kingdom. After the Mongol invasions of the first half of 13th century, Tayk became a part of the principality of Samtskhe in 1266, and in the 16th century it was conquered by the Ottoman Turks.

Tayk, as a part of the Ottoman Empire, was divided between the following eyalets (province): Erzurum (Tortum and Mamrvan sanjaks), Akhaltsikhe (Kiskim, Parhar, Tavuskyar, Olti and Panak sanjaks) and Kars (Gyole sanjak). After the dissolution of the Akhaltsikhe and Kars eyalets, Tayk entirely joined the Erzurum eyalet (1834).

Ottoman yoke had a serious influence on the demographic picture of Tayk. More than 60% of 94000 population of Tayk were Armenians, for whom the wars

between Turkey and Persia became a real horror. In 1604 the population of Gyole, Panak, Panaskert, Olti and Mamrvan was migrated by the Persians. On the other hand, the Ottoman government began to inhabit Turkish-speaking and Iranian-speaking population, in order to strengthen dominion over the nations. As a result of this policy in Gyole and Panak sanjaks appeared Kurdish population, and Tortum and Kiskim were settled by the *Lazes*.

In 1643 the Ottoman government tightened fiscal policy in relation to non-Muslim population. The witness of those events – Armenian author Jacob from Karin reports, that the Apostolic Armenians kept their faith, but Georgians and Orthodox Armenians of Tayk preferred to adopt Islam¹. Another Islamizing was described by Gh. Injijean, according to him “former Armenian inhabitants of Tortum were tired of violence and turned up in religion of Muslims”, even though the villages were still “inhabited the part by Armenians and the part by Muslims”². Threatened by the Turkish Government a significant part of Muslim Armenians had secretly kept Christianity by attending churches, performing various Christian rituals. Such people are known as “Keskes”-es (half Armenian Christians, half-Turkish Muslims).

In Tayk, along with the process of Islamizing of the population at the end of the 18th century, appeared Catholic missionaries who were able to spread Catholicism among the Armenian population of Kiskim and Tortum sanjaks..

During the Russian-Turkish war of 1828-1829, Russian troops seized Tayk, suppressing the resistance of local armed forces leading by Kuchuk Agha and Osman Bey. According to September 2, 1829 Adrianapol agreement, the territories of Tayk as well as the territories of Western Armenia, which had been taken by the Russian troops, were given back to the Ottoman Empire. In order to avoid the massacre of the Armenian population by the Turkish government and Muslim fanatics, there were organized resettlements of Armenians in Akhaltsikhe and Akhalkalaki, which was passed to Russia according to the treaty of Adrianapol. The relocation, which began on 10th May 1830, had the same dire consequences for the Armenians of Tayk as an Islamizing of 17th – 18th centuries. As a result of the relocation, the region had lost a great part of the Armenian population, the consequence of which was acceleration of Turkization process of “keskes” population.

From the 19th century Georgian scientists have made great efforts to prove that “Tayk is originally Georgian territory”, considering that Georgian is not only history, but also the masterpieces of medieval Armenian architecture. Concerning this issue Georgia is receiving assistance by Turkey. Since 2003 Turkish researchers of Pamukale and Sivas universities studied about 300 religious, historical and cultural monuments (monasteries, chapels and churches) and registered them as Georgian ones. It is noteworthy that most of these monuments are in Tayk. The Georgian and Turkish governments reached an

¹ Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 18:

² Բնճիճեան Դ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մասս Ս, հ. Ա, Սսիս, Վենետիկ, 1806, էջ 93-94:

agreement about the restoration of monuments in Ishkhan and Oshkvank involving the Georgian side. Also they agreed to receive the participation of Georgia in the restoration of other monuments of Tayk (the churches of Khakhu, Banak etc.). Instead, the Georgian government agreed to provide space for the construction of 4 mosques in Georgia.

The Turkish architect company "Anfora mimarlik restorasion" made the church restoration project, which was presented to the public on 5-8 September 2012 in Batumi, at the 2nd International Conference "Tao-Klarjeti" organized by the Georgian National Center of Manuscripts. The tender of the works on the Restoration project won one of the organizations of Erzurum ("Erzurum Rölöve ve Anıtlar Müdürlüğü"). In the spring of 2013 the restoration works of Ishkhan church began. The Deputy Minister of Culture of Georgia M. Mizandari went to Turkey and obtained the agreement with Turkish side that the Georgian specialists participate in the works. When the specialists cleaned the floor of Ishkhan church, there appeared mosaics and frescoes, which were brought out of the church with the leftovers of rocks and soil. It should be noted as well that restoration works have been carried out with the partial change of the building's architectural style and aesthetic deviations. In fact, if in the Medieval the church was built by using local natural resources, in restoration that principle was broken, because of it, the restored version become pretty rough. In 2015 the second phase of restoration works started. In 2014 the measurement works of Oshkvank church started and April 7 was declared as "Oshkvank Revival Day".

This scenario is a real threat for the Tayk monuments. The Armenian Apostolic Church's powers are limited in this problem, as it applies only to the Orthodox Churches, Mother See of Holy Etchmiadzin is unable too. Therefore, this issue must be taken to political area and resolve the issue at the state level. On the other hand, Georgian and Turkish researchers reduce or completely eliminate all real numbers of the Armenian population Tayk, which becomes a huge problem and turns into the new form of denial. Moreover, they try to introduce pro-Armenian evidences in the Turkish "packing". Particularly, Georgian scientist Professor E. Takaishvili distorts old Armenian place names into Turkish version (e.g. Oshkvank in Turkish version Eoshvank (Ösvank). Takayshvili says that this place name has Turkish roots. However, it's very difficult to meet in whole Tayk Georgian or Turkish place names. In contrast, we find everywhere in the province irrefutable evidences of Armenian past. We come across about the remarkable testimonies of Armenian past of the region in Georgian Central State Archive of History (Fund No. 1438 (Esadze Brothers Private fund), 116th ratification. So, Kiamkhis village opens the scene of "Georgian" fortress Soghomon-Kala, 1 km away from Avdos village are Jermuk hot mineral water sources, and finally, 15 km away from Olor village we find the ruins of the "Georgian Vank monastery" (See: GCSAH, f. 1438 , l.1, r. 116, s. 5-7).

Although, according to the conviction of Georgian scientists, Tayk with all the ancient state formations on its territory (Dayaeni, Diaukhi, land of Taokhs) since the ancient times, was inhabited by Kartvelian tribes. In the 3rd century BC Tayk was the part of the "Pan-Georgian" kingdom of king Parnavaz. In the 2nd century BC Armenian

king Artashes, taking advantage of the weakness of the Georgian state, connects Tayk to Armenia. On that period connected the emergence of Armenian toponyms in Tayk³. Unfortunately, the Georgian authors ignore the report of Strabo, that after the invasions of Artashes all spoke in same language in united Armenia⁴, naturally they did not speak the Georgian language, but Armenian.

The period of Tayk's history of 4th – 8th centuries also is presented in the context of Georgian history. Here it is noteworthy the approach that Tayk owners - Mamikonians, are presented as a princely family with Georgian origins, who had a dominant position in the royal court. On this occasion, a famous Georgian scientist Simon Janashia says: "The feudal dynasty of Mamikonians of Tao, which appeared in the first ranks of Armenian nobility, originally belonged to the Georgian tribe of "Chans", especially as it acknowledges and justifies the major representative of modern Armenian history professor N. Adontz"⁵. In reality Adontz has never claimed that "Chans" were the part of the Georgian ethnos. Janashia was trying to present reality as if Adontz considered Mamikonians the Georgian origins.

*Աղա-Ազնվական, բարձր դասի պատկանող մարդ (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, Ա-Ե, Եր., 1969, էջ 31): Ինչ վերաբերում է «պարոն» տիտղոսին, ապա կրելով այդ տիտղոսը՝ կանայք «...ոչ թե սոսկ անվանորեն կամ ձևականորեն էին իմաստավորում իրենց սոցիալական պատկանելությունը տիրապետող ազնվական դասին, այլև փաստորեն ցուցաբերում էին իրենց տիրական իրավունքները ֆեոդալական կալվածների վերաբերմամբ և այն իրավաբանական հետևանքները, որոնք բխում էին գույքային տիրության պայմաններից» (տե՛ս Մամուլեյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Յերևան, «ԱրմՖԱՆ» հրատ., 1939, էջ 246):

¹² Մատենադարան, ձեռագիր N 5794, թ. 207ա:

դուստրերից բացի, Ջալալ իշխանն ունեցել է ևս երկու որդի՝ Մեհրաբ բեկ ու Վելի-ջան բեկ անուններով, և երկու դուստր՝ Մահփարի և Խանում աղա անուններով։ Որդիներից Բայանդուր բեկն ու Մեհրաբ բեկը, ցավոք, արդեն, վախճանվել էին։

Հիշատակարանում իշխան Ջալալը հայտնում է նաև իր արդեն վախճանված եղբայրների՝ Բաղդասար բեկի, Արցախի կաթողիկոսներ Հովհաննեսի, Գրիգորի ու Բաղդասար բեկի որդու՝ Արցախի Դավիթ կաթողիկոսի անունները։

ВСТРЕЧА ВЕРХОВНОГО ПРАВИТЕЛЯ АРЦАХА-ХАЧЕНА ДЖАЛАЛА IV АСАН-ДЖАЛАЛЯНА С ИРАНСКИМ ШАХОМ АББАСОМ I

___ Резюме ___

___ С. Асан-Джалалян ___

В данной статье представлена встреча верховного правителя Хачена XVI века Джалала IV-ого с Иранским шахом Аббасом I.

После трудных и мрачных 80-ых годов XVI века, лидеры армянского народа наряду с другими известными лидерами кавказских народов в начале 1603 года обращаются к персидскому шаху Аббасу I (1587-1629гг.) с просьбой о помощи для избежания ига Османской тирании. Среди армянских князей был также верховный правитель Хачена Джалал IV Асан-Джалалян со своими племянниками.

Вместе с угнетенными насилием османских турков грузинами, курдами и другими, армянские правители и князья, услышав о том, что шах Аббас решил вступить в Закавказье с военной целью, идут навстречу ему и просят его ускорить “спасительный” марш. Шах Ирана Аббас I с большой честью принимает в Исфахане Джалала IV и его племянников, подарив каждому накидку.

Во время встречи Джалалу IV Асан-Джалаляну удастся получить эдикт для внука своего брата, католикаса Арцаха Ованеса III Асан-Джалаляна.

Князь Джалал IV, со своими племянниками завершив успешную встречу с иранским шахом Аббасом I, с большими надеждами и ожиданиями возвращается в Арцах.

Но, к сожалению, диктатор ничуть не изменился: он отплатил добровольную преданность подданных такой жестокостью, которая сравнима лишь с худшими ужасами самых мрачных времен армянской истории.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասան-Ջալալյան Ստեփան - ՀՀ Ազգային ժողովի փոքրագետ,
Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոն,
E-mail: Hasan-Jalal@yandex.com

Հակոբ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՇՈՐԱԳՅԱԼԻ ԳԱՎԱՌԱԿԻ (ԱՐԵՎՍՏՅԱՆ ՇԻՐԱԿ)

ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1830-1877 ԹԹ.¹ *

Մեն Հայքի Այրարատ աշխարհի (նահանգ) ութերորդ գավառ Շիրակը, որն Ախուրյան գետով բաժանվում է երկու մասի, 16-րդ դարի սկզբներին նվաճվեց Մեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության կողմից: Գավառի Արևելյան հատվածը, թոթափելով պարսկական լուծը, 19-րդ դարասկզբին անցավ ռուսական տիրապետության տակ:

Եթե Արևելյան Շիրակի ճակատագիրը հետագայում նպաստավոր կերպով դասավորվեց, ապա առավել մեծ հատված Արևմտյանինը՝ միանգամայն այլ, շարունակելով մնալ թուրքական տիրապետության տակ, նրան փորձություններով լի ժամանակաշրջան բաժին հասավ, որն իր բացասական կնիքը թողեց նաև գավառակի էթնոժողովրդագրական պատկերի վրա:

Մինչև 19-րդ դարի առաջին երեսնամյակն Արևմտյան Շիրակը կամ Շորագյալը (Շիրակավան, Շորագյալ, Շորեգեր, Շորեգիլ, Շորէկէլ) մտնում էր Կարսի էյալեթի (նահանգ) մեջ՝ իբրև առանձին սանջակ (գավառ): Սակայն, 1834 թ. օսմանյան իշխանությունների իրագործած հերթական վարչական վերաձևման արդյունքում Կարսի էյալեթը կորցրեց իր նախկին կարգավիճակն ու որպես սանջակ մտավ Էրզրումի էյալեթի մեջ: Այդ պահից սկսած Շորագյալը վերածվեց կազայի (գավառակ), կայմակամի նստավայրը դարձավ Հաջի-Վալի գյուղը:

Շորագյալի մասին գրած բոլոր հեղինակները միաբերան վկայում են գավառի՝ տարածքի ընդարձակության համեմատ, գյուղերի ու բնակչության սակավաթիվ լինելու, ինչպես նաև նոսր բնակեցված լինելու փաստը:

19-րդ դարի առաջին հինգ տասնամյակների ընթացքում գավառը երեք անգամ գրավվեց ռուսական զորքերի կողմից, սակայն քաղաքական ինչ-ինչ խաղաղանքների արդյունքում կրկին վերադարձվեց Օսմանյան կայսրությանը: Այս ընթացքում՝ այլևս չհամակերպվելով օսմանյան տիրապետության հետ, բազմահազար հայեր տեղափոխվեցին ռուսական տիրույթներ: Հեռացած հայերի փոխարեն գավառը լցվեց Բորչալուից, Ղազախից ու մասամբ էլ Պարսկաստանից գաղթած

¹ Շորագյալի գավառի 16-րդ դարից մինչև 1830 թ. վարչական բաժանումների, բնակավայրերի տեղագրության, ժողովրդագրական նկարագրի ու տեղաշարժերի մասին տե՛ս Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր., 2006: Ընդգծենք, որ ուսումնասիրության համաձայն գավառը բացառապես հայաբնակ էր: 1829-1831թթ. միայն Կարսի նահանգից (հիմնականում Շորագյալի գավառից) Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի բնակեցված գյուղերի ցանկերը տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ). փաստաթղթերի ժողովածու, աշխատասիրությամբ՝ Ա. Հայրապետյանի, Եր., 2011, էջ 27-30:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

կարափափախներով², իսկ 19-րդ դարի 50-ական թվականների վերջերից սկսած նաև կաբարդիներով և օսերով³:

Օսմանյան իշխանությունները ռուս-թուրքական հերթական պատերազմից հետո ձգտում էին էլ ավելի հզորացնել ինչպես սահմանային կարևոր ամրությունները, այնպես էլ այդ գոտու մահմեդականներին, փոխարենը՝ թուլացնել իրենց համար անվտանգ թրիստոնեական տարրը: Ի դեպ, բնակչության տեղաշարժը ձեռնառու էր երկուստեք: Դրանով թե՛ Օսմանյան և թե՛ ռուսական իշխանություններն առավել անվտանգ էին դարձնում իրենց սահմանամերձ շրջանները: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 19-րդ դ. կեսերը: Ռուսական իշխանությունները, ի տարբերություն ռուս-թուրքական նախորդ պատերազմների, 1853-1856թթ. Ղրիմի պատերազմի ընթացքում և հետո ավելի զգուշավոր էին հայ բնակչության տեղաշարժերի նկատմամբ՝ «... միայն թույլատրվեն և ոչ խրախուսվեն»⁴:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի՝ մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ու ռուսական տիրապետության հաստատումը, Շորագյալի գավառակի վարչաժողովրդագրական նկարագրի մասին ուշագրավ, ինչու չէ նաև բառացիկ տեղեկությունների կարելի է հանդիպել Ներսես վարդապետ Սարգսյանի⁵, Պողոս վարդապետ Պետրոսյանի⁶ և Երեմիա եպիսկոպոս Տեկանցի⁷ աշխատություններում: Դրանք ուղեգրական բնույթի ուսումնասիրություններ են, խիստ արժանահավատ, որովհետև հեղինակներն անձամբ են շրջագայել գավառի տարածքում, սակայն էրնիկ առումով գավառակի ամբողջական նկարագիրը չեն ներկայացնում: Օրինակ, Ներսես Սարգսյանը, որը ճանապարհորդել է 1843-1853թթ., աշխատությունում Շորագյալի գավառակում հիշատակում է 63 գյուղ, սակայն իր կազմած ձեռագիր քարտեզում նշում է միայն 62-ը: Դրանցից նկարա-

² *Տե՛ս Խելմիցկի Ս., Կարսկայա օբլաստ: Военно-статистический и географический обзор, I изд., ч. 2, Тифлис, 1893, с. 34-35.*

³ *Հյուսիսկովկասյան մահմեդական լեռնականների՝ չերքեզների դեպի Արևմտյան Հայաստան և Օսմանյան կայսրության այլ տարածքներ բնակեցման մասին տե՛ս Ավաքյան Ա., Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX-первая четверть XX в.), Ер., 2001.*

⁴ *Акты, собранные Кавказской археографической комиссией, т. XI, Тифлис, 1888, док. 307, с. 313-315. Մուրադյան Հ., Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դ. առաջին կեսին, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 5, 2005, էջ 71-74: Շորագյալի գավառակի տարբեր գյուղերից 13 ընտանիքների (հայ առաքելականներ, 129 հոգի՝ 68 արական, 61 իգական) կողմից Ալեքսանդրապոլի գավառում 1860 թ. Հիմնադրվում է Ղզըլքիլիսա գյուղը (տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.-XX դ. սկիզբ). Փաստաթղթերի ժողովածու, աշխատասիրությամբ՝ Ա.Ս. Հայրապետյանի, Եր., 2011, էջ 85):*

⁵ *Տե՛ս Սարգսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 105-216:*

⁶ *Տե՛ս Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պողոս Վարդապետէ Պետրոսեան, «Արարատ», Վաղարշապատ, 1872, թիւ Ա, էջ 20-25, թիւ Բ, էջ 54-57, թիւ Գ, էջ 100-105, թիւ Ե, էջ 181-185, թիւ Զ, էջ 238-245, թիւ Է, էջ 273-283, թիւ Ը, էջ 347-351 (այսուհետև՝ Տեղագրութիւն Շիրակայ ...):*

⁷ *Տե՛ս Երեմիա Տեկանց, Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873 թթ.), պատր. և ծանոթագր.՝ Հ.Մ. Պողոսյան, պատ. խմբ.՝ Ա.Ս. Համբարյան, Եր., 1991 (այսուհետև՝ Երեմիա Տեկանց, Ճանապարհորդություն ...):*

գրելով 22 բնակավայր՝ թեմային առնչվող տեղեկություններ է հաղորդում միայն 12-ի մասին, որոնցից 4-ը թուրքաբնակ էին, 2-ը՝ պարսկաբնակ, 1-ի դեպքում ուղղակի նշված է 10 տուն, իսկ 5-ն էլ անբնակ: Ընդ որում, շրջանի սակավաբնակության մասին խոսում է նաև Կիրակոս Ս. Ղազանձյանը: 1868 թ. հոկտեմբերին կատարած իր շրջագայության մասին նա գրում է. «...անցանք բոլոր դաշտն Շիրակայ շատ տեղեր ամայի և անբնակ»⁸: Տեղի հայերը ճամփորդություն կատարելն այնքան վտանգավոր են համարել, որ խորհուրդ են տվել անձանոթ ճանապարհորդին վերադառնալ Կարս:

Պողոս վարդապետ Պետրոսյանը, որը Շորագյալ է այցելել 1870-ական թվականների սկզբներին՝ գավառակը բաժանում է երեք մասերի՝ Երազգավորս գավառակ, Շիրակի Անի և Արևմտյան Շիրակ: Այդ մասին նա գրում է. «Մեք այլուստ չունեյով զբաժանումն, և գտեղագրութիւն և գղիքս Շիրակայ աւանդեալ, ըստ մտաց և ըստ կամի ի շրջագայութեան անդ մերում որոշեցաք, և այսպէս ի գիր առաք, թողլով միանգամայն և ի քննութիւն հնագիտաց»⁹: Պողոս վարդապետի տվյալների համաձայն՝ ամբողջ գավառակում կար 78 գյուղ, որից 20-ը՝ հայաբնակ, 39-ը՝ թուրքաբնակ, 9-ը՝ խառը, 9-ը՝ ավերակ և 1-ի մասին ոչինչ նշված չէ¹⁰: Ընդ որում, գյուղերի էթնիկ նկարագիրը ներկայացնելիս նա ևս պարտադիր անդրադառնում է վանքերի ու եկեղեցիների առկայությանը: Մահմեդականներով բնակեցված գյուղում քրիստոնեական հուշարձանների՝ վանքերի, եկեղեցիների կամ մատուռների գոյության իրողությամբ փաստարկվում է գյուղի՝ նախկինում քրիստոնեական, տվյալ դեպքում հայկական լինելու հանգամանքը:

Շորագյալի 78 գյուղերից 27-ը գտնվում էր Երազգավորսի գավառակում: Սրանցից միայն 5-ն էր հայաբնակ: Մնացած 22 գյուղերից 17-ը թուրքաբնակ էր, 3-ը՝ խառը ազգաբնակչությամբ (հայ և թուրք), 1-ը՝ ավերակ, իսկ մեկի մասին էլ տեղեկություններ չկան¹¹:

«Գիւղորայք Շիրակայ Անույ» շրջանում նշում է 36 գյուղ, որից 8-ը՝ հայաբնակ, 16-ը՝ թուրքաբնակ, 5-ը՝ խառը, 7-ն էլ ավերակ¹²:

Վերջապէս «Գիւղորայք Արևմտեան Շիրակայ»-ում կար 15 գյուղ, որից 7-ը՝ հայաբնակ, 6-ը՝ թուրքաբնակ, 1-ը՝ խառը, 1-ն էլ ավերակ¹³:

Հոգևորականի հավաստմամբ Արևմտյան Շիրակում փաստացի տեր ու տիրականը վրանաշրջիկ քրդերի առաջնորդ Հուսեյն աղան էր, ում գործունեության պատճառով՝ «Հայք այսր բաժնի ձանձրացեալ էին, և ցրուեալ բազումք: ...

⁸ Խառն նամակներ ուղեւորութեան, գրեաց Կիրակոս Ս. Ղազանձեան, Կ. Պոլիս, 1886, էջ 95:

⁹ Տեղագրութիւն Շիրակայ. . . , 1872, թիւ Ե, էջ 182:

¹⁰ Խարա-ջանթա և Կէշուտ թուրքաբնակ գյուղերը կրկնվել են: Առաջինը Երազգավորսի մասում էր՝ 11 և 22 թվահամարների տակ, իսկ երկրորդի դեպքում նշել է և՛ Երազգավորսի և՛ Շիրակի Անի գավառակներում, սակայն Կէշուտ անունով գյուղ կար միայն Երազգավորսի մասում, հետևաբար Շիրակի Անի գավառակում նշվածը չենք հաշվել:

¹¹ Տե՛ս Տեղագրութիւն Շիրակայ. . . , 1872, թիւ Ե, էջ 185:

¹² Նույն տեղում, թիւ Ե, էջ 273, 283:

¹³ Նույն տեղում, թիւ Ը, էջ 348-350:

Այսպես այս բաժնի ժողովուրդը բազմօք ցրուեալ գոլով, նուագունք են ի սմա գիւղորայք և աւերակք բազումք, գորոց ասասցունք»¹⁴:

Վարդապետի ուշադրությունից չի վրիպում մեկ այլ կարևոր հանգամանք՝ տեղանվանափոխությունը. «զի առաջին հայեցի անուանք գիւղօրէիցս մեծաւ մասամբ խանգարեալ, և իսպառ անհետ եղեալ: Զի ընդ ժամանակս ժամանակս յամայութեան երկրին ի Հայոց և ի Պարսկաբնակն լինելոյ, առաջինքն խափանեցան. և նոր ի նորոյ անուանք եղան, մանաւանդ ի բնակելոյ անդ մեծի ուրուք, և կամ գիւղատեառնն անուամբ նոր կոչումն եղեալ է:

Եւ ընդ այն զարմանամ, զի որք գաղթեցինն յԱրևելեան Շիրակ՝ ոչ որ ի գիւղականացն, և ոչ ի վերակացուացն հսկողութիւն եղն, կամ զհին անուանս գտանել, կամ հայեցի նոր անուն դնել: Այլ ըստ անուան աւերակացն վարել շատ համարեցան. ապշեալք ի գործ և ի վաստակ. և ոչ եռանդավառեալք ի նախանձ հայրենի ազգին»¹⁵:

Արևմտյան Հայաստանի վարչաժողովրդագրական նկարագրի մասին հատկապես ուշագրավ տեղեկություններ է պարունակում Երեմիա Տեկանցի աշխատությունը: Այն կազմվել է հեղինակի շրջագայությունների արդյունքներն ամփոփող զեկուցագրերից՝ ուղարկված Կ. Պոլսի Հայոց պատրիարքին և Ազգային վարչությանը, ինչպես նաև հեղինակի անմիջական տպավորություններից ու դիտարկումներից¹⁶: Այսպես, 1872 թ. հոկտեմբերին լինելով տեղում՝ Տեկանցը Շոբազյալի գավառակում հիշատակում է 18 գյուղ, որոնցից 8-ը հայաբնակ էին, 2-ը՝ պարսկաբնակ, 2-ը՝ ավերակ, 1-ը՝ հայ և քուրդ խառը բնակչությամբ, 1-ն էլ միայն քրդաբնակ: Եվս 4 գյուղերի դեպքում տրվում է միայն տների թիվը և արձանագրվում եկեղեցու կամ վանքի գոյության փաստը:

Հայ բնակչության թվական աճի պակաս նա համարում է քրդական ցեղերից թափանցած բաշլղ սովորությունը (բառացի նշանակում է գլխագին), ըստ որի տղան պետք է մեծ գումարով աղջկա ծնողներից գներ իր հարսնացուին: Այս մարդավաճառությունը նա համարում է ներքին հարստահարություն, «չար սովորություն», «որդեվաճառություն», որը «...ավելի վնասակար է քրտաց հարստահարութենեն»¹⁷: Հավաքելով տեղերում հոգևորականներին և աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչներին՝ Տեկանցը պահանջում է բաշլղ առնողների նշանը չօրհնել և պսակի հրաման չտալ: Զուգահեռ նա փորձել է նաև պարզել գյուղերի հայկական անվանումները. «...հայերեն անուններ կորսված են, շատ հարցուցի հայերեն

¹⁴ Տեղագրութիւն Շիրակայ. . . , էջ 348:

¹⁵ Նույն տեղում, 1872, թիւ Ը, էջ 350:

¹⁶ 1869թ. պատրիարք ընտրվելուց հետո Մկրտիչ Խրիմյանն իր համախոհ հայ մտավորականների մի մասի հետ որոշեց ուսումնասիրել գավառներում եղած հարստահարությունների հարցը, տեղեկագիր ներկայացնել սուլթանական կառավարությանը՝ այդ վիճակը կարգավորելու խնդրանքով: Այդ նպատակով «իբրև այցելու քննիչ» գավառներ գործուղվածներից մեկը Երեմիա Տեկանցն էր: 1872 թ. հուլիսի 21-ին նա Կ. Պոլսից մեկնում է Բարձր Հայք, Մուշ և Վասպուրական: Գործուղվածներին հանձնարարված էր գավառներում գործադրել ազգային սահմանադրությունը, հետևել հին դպրոցների առաջընթացին և նոր դպրոցներ բացել:

¹⁷ Երեմիա Տեկանց, Ճանապարհորդություն ..., էջ 108:

անուն գտնալ գեղացիներեն, սակայն չկրցի գտնել»¹⁸: Նա շրջագայության ընթացքում հանդիպել է բազմաթիվ ավերակ գյուղերի, վանքերի ու եկեղեցիների. «որք ամենք Բագրատունյաց հարստության ժամանակ շինված են»¹⁹: Ամբողջ գյուղեր, դաշտեր և լեռներ քրդերը թափու էին արել²⁰:

Հայերի թվի նվազման գործում իրենց մեծ դերակատարությունն են ունեցել նաև քրդերը: Օրինակ, Ղրիմի պատերազմից հետո 350 տուն վրանաբնակ քրդական ճամալտանցի ցեղից՝ Մախսուտ աղայի (որը ստացել էր կայմակամի՝ նահիեի կամ գյուղախմբի կառավարչի պաշտոն) գլխավորությամբ հաստատվում են Ախուրյանի և Երասխի խառնարանում²¹ և սկսում են ասպատակել հարևան հայկական գյուղերը²²: Գավառի հարավում, մասնավորապես Զոչի և Բվիկ գյուղերի շրջանում էլ տեղի ու տիրական էին զիլանցի քրդերը²³: Տեղանքը գրում է, թե Կարսի մյութասարիֆը շատ անգամ է հրամայել Շորագյալի կայմակամներին հեռացնել քրդերին հայոց սահմաններից, «սակայն հրաման չեն կրցեր, կամ չեն կամեցեր ի գործ դնել: Կարսա առաջնորդ և իշխանք երբեք հոգ տարած չեն խեղճերու բողոքներ իրապես ի գործ դնելու... Կարսա և Շիրակավանի, Նախճվանի և Կաղզվանա գյուղերու մեծագույն մասն այս խեղճ դրության մեջ են»²⁴:

Շիրակավանի գյուղերի նույնիսկ պարսիկ և թուրք գյուղացիները, չտանելով շահագործումը, պատրաստ էին ռուսական տարածքներ գաղթել:

¹⁸ Երեմիա Տեկանց, *Ճանապարհորդություն ...*, էջ 81:

¹⁹ Նույն տեղում, էջ 84:

²⁰ Թափու՝ կանխավաճառման գիր, հողատիրոջից (պետությունից կամ կալվածատիրոջից) ստացած հողի համար վճարում, հողատիրոջից ստացած հողին տիրելու և նրանից օգտվելու իրավունք, փաստաթուղթ, որով գյուղացին ամրակցվում է հողին: Թափու մեմուրի՝ վիլայեթների փաշաներին կից այս անունով մի գրասենյակ կար, որը վարում էր բնակչության կալվածական գործերը, գնահատում էր կալվածքները և միաժամանակ զբաղվում էր հողերը թափու անելով (որևէ մեկի վրա գրելով):

²¹ Տե՛ս Երեմիա Տեկանց, *Ճանապարհորդություն ...*, էջ 84:

²² Նույն տեղում, էջ 85:

²³ Զիլանցի քրդերը բնակվում էին Սողանլուղի լեռներից մինչև Ախուրյանի գետեզերքն ընկած տարածքում: Նրանց թիվը հասնում էր 3000 տան և բաժանվում էին մի քանի խմբերի՝ Քյուրտկանցիք, Չաքանցիք, Մոտոնցիք, Տիլերանցիք, Խլանցիք, Ալիանցիք, Մոտրեցիք, Ճամալտանցիք, Սվետանցիք, Կասկանցիք, Հախսապանցիք, Գուճումանցիք: Զիլանցիների և Ճամալտանցիների առաջնորդ Ահմադ և Մախսուտ աղաները գաղիճիպաշության (Կափուջի պաշի-դոնապանապետ) աստիճան ունեին: Նրանք և կասկանցիների առաջնորդ Ռաշիդ Բեյը գայմակամության պաշտոն էին վարում (Երեմիա Տեկանց, *Ճանապարհորդություն... էջ 65*): Ըստ Յա. Մալամալի, Կարսի սարահարթի քոչվոր քրդական երեք աշիրեթներում քրդերի թիվը 1390 ծխերում կազմել է 5560 հոգի՝ Զիլանլի մինչև 800 ծուխ և 3200 հոգի, Ջեմադանլի մինչև 400 ծուխ և 1600 հոգի, Կասկանլի մինչև 190 ծուխ և 760 հոգի: Այդ ցեղերի կառավարիչներն անմիջականորեն ենթարկվում էին Կարսի մութեսարիֆին (Գ. Դ. Մալաма, *Описание Эрзерумского вилаяета*, С.-Петербург, 1874, с. 21):

²⁴ Տեկանցի ուշադրությունը գրավում է Նախիջևանի 16 գյուղերի բնակիչների մեր նախնի նահապետական պարզությամբ կենցաղավարելը: Քրդերն այս գյուղերի հողերը ևս յուրացրել ու թափու էին արել. «Սույն եղեմավայր երկրին հողերեն 40 մասեն մի մասն հազիվ մնացած է հայոց ձեռքն, ամռան ճելալցիք վրաններ հայոց հողերու և կալվածներու մեջ հաստատելով, խեղճ երկրագործաց շատ վնասներ կհասուցանեն և ցանած արտորայք կկերցունեն» (Երեմիա Տեկանց, *Ճանապարհորդություն ... էջ 86-87*):

Շիրակավանի դաշտում Տեկանցը հաշվում է 20 հայկական և 80 թուրքական, պարսկական ու քրդական գյուղեր: Շիրակավանի և Նախիջևանի բոլոր գյուղերում հեղինակը Բագրատունի թագավորների ժամանակներից մնացած եկեղեցիներ և վանքեր է նկատում, որոնցից շատերը տակավին կանգուն և շեն էին, սակայն «գորս ի ձեռս այլասեռից տեսանելով՝ կենացս կես մաշեցավ, սիրտ իմ խռովեցավ հիս և երիկամունք այլաբանեցան, Երեմիայի պես բյուր անգամ անիծեցի իմ ծննդյան օր», -գրում է Տեկանցը: Նա սրտի կսկիծով շտապում է հեռանալ՝ «զի եթե կամեի ի գերեզման խաղաղությամբ ի ջանելով և չափտի կարենայի այսօր սույն համառոտ տեղեկություն հաղորդել վարչություն»: Ի դեպ, Տեկանցը նշում է, թե Նախիջևանի գյուղերի բնակչությունը բուն երկրի հին բնակիչներն են, իսկ Շիրակավանիները՝ Հայաստանի զանազան կողմերից եկածներ են²⁵:

Շորագյալի գավառակի 84 գյուղերում արական բնակչության թիվը ըստ Էրզրումի վիլայեթի 1871-1872 թթ. սալնամեի հետևյալ պատկերն ուներ՝ քրիստոնյաներ 1015, մահմեդկաններ 2220²⁶:

Օսմանյան կայսրության բնակչության թվաքանակի հետ կապված հետաքրքիր է Ռուսական կայսրության բանակի գլխավոր շտաբի փոխգնդապետ Յակով Մալամայի դիտարկումը. «Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե այդ հարցը (մարդահամար անցկացնելու-Չ.Մ.) ընդհանրապես քիչ է մշակված քաղաքակիրթ պետություններում, ապա այստեղ այն գտնվում է սկզբնական վիճակում: Մոտավորապես 40-ական թվականներին մեծ դժվարությամբ իրականացվեց գյուղերի վիճակագրություն՝ տալով ծխերի և յուրաքանչյուր ծխում չափահաս տղամարդկանց քանակը: Այդ մարդահամարը վերաբերում էր թուրքերին և հայերին, իսկ քրդերից այն համայնքները, որոնք հարկեր էին վճարում. մյուսների դեպքում բնակչությունը սահմանվել է մեծամասամբ ցեղերի ղեկավարների վկայություններով: Այս ամենից կարելի է եզրակացնել՝ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներն ինչքանով են ներկա ժամանակում վստահելի»²⁷:

գյուղական մեղրությունը	5320	վաղ
մեղրության թիվը	1330	
մեղրության թիվը	3020	
մեղրության թիվը	3020	
մեղրության թիվը	755	
մեղրության թիվը	3	
գյուղական	22	
գյուղական	2300	
մեղրության թիվը	300	
մեղրության թիվը	575 ²⁸	
մեղրության թիվը	3	
մեղրության թիվը	51	
մեղրության թիվը	76	
մեղրության թիվը	Շորագյալ	

Յա. Մալաման բնակչության վերաբերյալ տեղեկությունները վերցրել է մասամբ պաշտոնական աղբյուրներից, մասամբ էլ տեղի բնակիչների շրջանում

²⁵ Տե՛ս Երեմիա Տեկանց, Ճանապարհորդություն... , էջ 106-108:

²⁶ Salnâme-i vilâyet-i Erzurum, 1288 (1871-1872), s.143.

²⁷ Малама Я., նշվ. աշխ., с. 16-17.

²⁸ Թուրքերը, ըստ էության, կազմում են ոչ ավել քան 10-12 գյուղ, մյուսները գերազանցապես կարափափախներ են (տե՛ս Малама Я., նշվ. աշխ., էջ 20-21):

անցկացրած հարցումներից: Թեև դրանք նա ստուգել է, որքան հնարավոր է եղել անձնական շրջագայությունների ժամանակ, այդուհանդերձ խոստովանում է, որ դրանք «չեն կարող համարվել վերջնականապես ճիշտ, այլ միայն մոտավոր»²⁹: Աղյուսակի համաձայն, որն արտացոլում է 1874 թ. իրավիճակը, գավառակում բնակվում էին միայն թուրքեր, կարափափախներ և հայեր:

Յա. Մալաման քրդերից հետո անբարյացակամ, թշնամական տրամադրված տարր է համարում կարափափախներին, որոնց հատուկ էր հակվածությունը դեպի ավազակությունը: Նրանք պատրաստ են անգամ փոքրիկ անբարենպաստ պայմանների դեպքում դուրս գալ կառավարության դեմ: Հեղինակը նաև փաստում է, որ կարափափախների և լեռնականների շրջանում շատ են Անդրկովկաս վերադառնալ ցանկացողները³⁰:

Կարսի մարզի պետ գենեռալ-լեյտենանտ Պոպկոյի 1878 թ. ապրիլի 12-ի պաշտոնական հաշվետու զեկուցագրերից երևում է, որ 1878 թ. դրությամբ Շորագյալի գավառում կար մի քանի գյուղերից բաղկացած 22 գյուղական համայնք՝ մարկյազ, 89 գյուղ, 1800 տուն, իսկ արական բնակչության թիվը 7000 էր: 1877 թ. ռազմական գործողությունների հետևանքով 11 գյուղ ենթարկվել էր ավերածության և լքվել բնակչության կողմից: Գավառի ամենամեծ գյուղը բաղկացած էր 90, իսկ ամենափոքրը՝ 2 տնից: 10 տնից քիչ ունեցող՝ 20, 10-30՝ 50, 30-50՝ 13, 50-90՝ 6 գյուղ: Գյուղերում տների միջին թիվը կազմել է 20-22 տուն, արական բնակչության միջին թիվը՝ 78,65, յուրաքանչյուր տնում արական բնակչության միջին թիվը՝ 3,89³¹: Ուսումնասիրողներից Ն. Շավրովը, հիմք ընդունելով Կովկասյան լեռնային վարչությունից ստացված տեղեկությունները, գրում է. «բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները, որոնք ներկայացված են գեներալ Պոպկոյի հաշվետվության մեջ, խիստ պակասեցված են ու ներկայացնում են միայն զինվորական ծառայության ենթակա արական բնակչության թվաքանակը»³²:

Շիրակ գավառի ուսումնասիրության խնդրում առանձնանում է Ղ. Ալիշանի ուսումնասիրությունը³³: Վերջինս Արևմտյան Շիրակը բաժանում է Հյուսիսային և Հարավային մասերի («ուր թագաւորաբնակ տեղիքն և հանգստարանքն են») և հաշվելով մոտ 100 գյուղ ու հանգրվան, գրում է թե «իսկ բնակիչք՝ յետ վերջին պատերազմաց (1877-1878 թթ. ռուս-թուրքական-Հ.Մ.), համարեցան ի Ռուսաց՝ ընդ բնաւ 26810 ոգիք, յորս Հայք 11561»³⁴:

²⁹ Малама Я., նշվ. աշխ., էջ 17:

³⁰ Նույն տեղում, էջ 16:

³¹ Կարսի մարզի նախկին նահանգապետ գեներալ Պոպկոյի հաշվետվությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Ռուսաստանին անցած նոր տարածքների նկարագրության առաջին, բայց ոչ ամբողջական պաշտոնական փաստաթուղթն է՝ կազմված պատերազմական ժամանակ թուրքական աղբյուրների հիման վրա: Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ.131, գործ 113, վավ.11, թ. 5: Տե՛ս նաև Шавров Н., Вновь приобретенные Карсская и Батумская области, Кавказский календарь на 1879, Тифлис, 1878, с. 510.

³² Шавров Н., նշվ. աշխ., էջ 510:

³³ Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ-Մ. Ղազար, 1881:

³⁴ Նույն տեղում, էջ 7:

Պավել Խելմիցկին, որը 26.12.1887-18.06.1888 թթ. Կարսի բերդի շտաբի զինվորական պատրաստության դեկավարն էր, Կարսի մարզին նվիրված աշխատության մեջ բնակչությանը, չհաշված ժամանակավոր բնակիչներին և զորքին, բաժանում է նախնականի և բնակեցվածների: Ի դեպ, նախնական բնակիչներ նա համարում էր, նրանց, ովքեր Թուրքիայից են տեղափոխվել Ռուսաստանին անցած մարզեր, իսկ բնակեցվածներ՝ ովքեր մարզ են գաղթել 1878 թ. հետո: Առաջինների շարքին դասում է հայերի մեծ մասին, թուրքերին, քրդերին, եզդիներին, կարափափախներին, թուրքմեններին, պարսիկներին, օսերին, լեզգիներին, հրեաներին, գնչուներին և ասորիներին, երկրորդում՝ ռուսներին (հիմնականում՝ ադանդավորներ), հույներ, էստոնացիներ, լեհեր և գերմանացիներ: Իր հերթին առաջիններին բաժանում է տարածաշրջանի բնիկների և ավելի ուշ՝ հետագայում եկածների: Կարսի և Կաղզվանի օկրուգներում բնիկներ համարվում են հայերը, հետո հաջորդում են թուրքերը՝ երկրամասի նվաճողները, իսկ նրանցից հետո՝ քրդերը: Իսկ ինչ վերաբերում է կարափափախներին, ապա նրանք գաղթել են 1830-ական թվականներին Բորչալուից, իսկ լեզգիները, օսերը և լեռնական մյուս ցեղերը՝ էլ ավելի ուշ³⁵: Քրդերի մասին նշում է, որ անհիշելի ժամանակներից մարզ գաղթած քրդերը զբաղեցրել են իրենց քոչվորական կենսակերպին համապատասխան տարածքները: Նրանց հիմնական զանգվածը կենտրոնացած է Գյուլեի, Չլդրի և Նախիջևանի տեղամասերում: Եզդիներին էլ ամբողջովին համարելով քրդերին ցեղակից՝ 2000 մի փոքր ավել, բնակության վայր է նշում Նախիջևանի տեղամասը: Կարափափախներին նույնացնելով Բորչալուի և Ղազախի թաթարների հետ՝ գրում է, որ իրենց անունը թուրքերից ստացել են այն բանի համար, որ երկար ժամանակ ապրելով վրացիների մեջ, վերջիններից ընդօրինակել են սև գառան մորթուց գլխարկներ: Շորագյալում բնակվել են միայն շիա կարափափախները, բայց այս տեղամասում նրանք ավելի շատ են, քան սուննի կարափափախներն ամբողջ մարզում³⁶:

Երկրամասում օտարի տիրապետության հետևանքով տեղի ունեցած փոփոխությունների պատկերի և ազդեցության աստիճանի առավել համակողմանի ու խտացված գնահատականը տանք ոչ պատահականորեն ընտրված օտարերկրյա ևս երկու հեղինակներից մեջբերումներով.«Եթե մեզ հասած չլինեք պատմական ոչ մի տվյալ այս երկրամասի անցյալ ճակատագրի մասին, ապա միայն հուշարձանների ավերակները, չափազանց մեծ թվով տարածված ամբողջ տարածքով, չեն թողնում ոչ մի կասկած, որ այդտեղ քրիստոնեությունը երբևէ եղել է ծաղկուն վիճակում և որ այն իր տեղը զիջել է մահմեդականությանը միայն սարսափելի կատակլիզմներից հետո», -նշել է Դ. Բաքրաձեն³⁷:

³⁵ *Տե՛ս Խելմիցկի Ս., նշվ. աշխ., էջ 11:*

³⁶ *Նույն տեղում, էջ 28, 33-35:*

³⁷ *Бакрадзе Дм., Историческо-этнографический очерк Карсской области, Известия Кавказского отдела Императорского общества, т. VII, 1881, с. 197.*

Պատկերավոր է ֆրանսիացի ճանապարհորդ, ուսումնասիրող Էլիզե Ռեկլյուի հետևյալ գնահատականը. «Ռուսական արշավանքների գլխավոր հետևանքն եղաւ այն, որ Հայաստանը Թուրքաստան եղաւ»³⁸:

Այսպիսով, ռուս-թուրքական պատերազմները, օսմանյան իշխանությունների նպատակադրված քաղաքականությունը, ինչպես նաև նրանց ամենաթողութային պայմաններում քրդական ցեղապետների սանձարձակությունն ու կամայականությունը լրջորեն ազդեցին գավառակի էթնոժողովրդագրական պատկերի վրա: Ոչ վաղ անցյալում բացառապես հայերով բնակեցված տարածքը մի քանի տասնամյակների ընթացքում վերածվեց խառնիճադանջ էթնիկ նկարագիր ունեցող շրջանի:

АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА ОКРУГА ШОРАГЯЛ (ЗАПАДНЫЙ ШИРАК) В 1830-1877 гг.

____ *Резюме* ____

____ *А. Мурадян* ____

Большая, западная часть восьмого гавара Ширака, провинции Айрарат Великой Армении, в начале 16-го века была завоевана Османской империей. Турецкое владычество оставило свой негативный след на этнодемографической картине округа.

В результате очередного административного раздела, проведенного османскими властями в 1834 г., Карсский элайет утратил свой статус и в качестве санджака (провинции) вошел в состав Эрзрумского элайета, а Шорагяльский санджак, находящийся в его составе, стал казой (округом).

В течение первых пяти десятилетий 19-ого века провинция три раза была завоевана российскими войсками, однако по тем или иным причинам вновь была возвращена Османской империи. Не желая мириться с османским господством, тысячи армян переселились на территории Российской империи. Вместо переселившихся армян провинция была заселена карапапахами из Борчалу, Казаха и, частично, из Персии, начиная с 50-ых годов 19-ого века-также кабардинцами и осами. В Шорагяле некоторые села были населены персами и курдами.

Русско-турецкие войны, политика османских властей, а также условия вседозволенности, разнузданность и произвол курдских племенных вождей серьезно воздействовали на этнодемографическую картину округа. Исконно армянская территория с исключительно армянским населением в течение нескольких десятилетий стала областью со смешанным этническим составом.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մուրադյան Հակոբ Ղարիբի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
E-mail: muradyanhakob@yahoo.com

³⁸ Էլիզե Ռեկլյու, *Լազիստան, Հայաստան եւ Քուրդիստան, Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք, Ասորիք եւ Պաղեստին, թարգմանեց Մաքան, Վաղարշապատ, 1893, էջ 25:*

**«ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳԼՈՒԹՅԱՆ» ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿՈՄԻՏԵԻ
1914-1916ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ**

Գաղտնիք չէ, որ Առաջին աշխարհամարտի տարիներին հայության մի սովոր հատվածն իր մայր հայրենիքի տարածքում բնաջնջվեց: Փրկվածների մի մասը ցրվեց Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում: Եվս 300000 մարդ անցավ Արևելյան Հայաստան և Կովկասի հայաշատ շրջաններ¹: Եվ մինչ ռուսական իշխանություններն իրենց հատուկ «փութկոտությամբ» կփորձեին լուծել թուրքական յաթաղանից հրաշքով փրկվածների ֆիզիկական գոյության հարցը, ծանրագույն այդ պարտականությունն իրենց ուսերին վերցրին կայսրության հայաշատ քաղաքներում ստեղծված հասարակական կազմակերպությունները՝ «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը», «Հայ Նպաստամատույց Ընկերությունը», «Քաղաքների միությունը», Բաքվի «Հայկական Բյուրոն» և այլք:

Արևելահայ պարբերականները՝ «Գաւառի ձայն»-ը, «Աշխատանք»-ը, «Հորիզոն»-ը, «Համբաւաբեր»-ը, «Մշակ»-ը, աշխարհամարտի ողջ ընթացքում հետևեցին վերջիններիս ազգանվեր գործունեությանը, լուսաբանեցին նրանց աշխատանքերը, ներկայացրին ձեռքբերումները խնամատարության, հիվանդախնամ ու որբախնամ գործունեության կամ թե գաղթականության շրջանում կրթական գործի կազմակերպման ոլորտներում: Մամուլը զուգահեռ մատնանշեց այդ ուղղություններով կատարված աշխատանքներում թույլ տրված բացթողումներն ու թերացումները, առաջարկեց առկա խնդիրների հարթման իր ճանապարհները:

Պատերազմի արհավիրքներից մազապուրծ բազմահազար գաղթականների ընդունման ու տարրական կենսապայմանների ապահովման գործում հատկապես անգնահատելի ներդրում ունեցավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի կարգադրությամբ 1914թ. հոկտեմբերին ստեղծված «Եղբայրական օգնության» կոմիտեն:

Սույն հոդվածի շրջանակներում ընթերցողի դատին կներկայացնենք արևելահայ մամուլի արձագանքներն այդ կազմակերպության Ալեքսանդրապոլի մասնաճյուղի 1914-1916թթ. գործունեության մասին:

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914թ. նոյեմբերի 2-ին: Հաջորդ երեք տարիների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառն ընդունեց մոտ 95000 փախստական-գաղթականների: Սրանց մի մասը մնաց գավառի տարածքում, իսկ մյուսներն անցան Ռուսական կայսրության այլ շրջաններ²:

¹ Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, Պէրոյթ, 1991, էջ 251:

² ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24: Ալեքսանդրապոլի գավառում գաղթականության տեղաշարժի մասին մանրամասն տե՛ս Հայրապետեան Ա., Առաջին աշխարհամարտը և Ալեքսանդրապոլի գաւառ հաստատուած գաղթականութեան թուաքանակը, «Հայկական Հայագիտական Հանդէս», հատոր ԼԵ, Պէրոյթ, 2015, էջ 249-271:

Նորեկներին ընդունելու, ցուցակագրելու, տեղավորելու, ինչպես նաև գաղթականական հիվանդանոցներ, դպրոցներ ու որբանոցներ բացելու նպատակով 1914թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ տեղում ստեղծվեց «Եղբայրական օգնության» կոմիտե³, որն իր 26 աշխատակիցներով բաժանվեց 7 սեկցիաների՝ «գաղթականներին խնամօղ, վիրաւորների, կամաւորների, զինական կազմակերպութիւնների, հաշիւներ ստուգօղ, վիճակագրական և հանգանակիչ»⁴: Կոմիտեի ծավալելիք գործունեության մասին «Գաւառի ձայն»-ի «Քաղաքացի» ստորագրությամբ թղթակիցը գրել է. «Ալեքսանդրապօլի հայ ժողովուրդը, որը իւր չքաւոր դրութեան մէջ էլ միշտ ջերմ կարեկից է եղել հայ ժողովրդի ցաւերին, այս անգամ էլ, անշուշտ, անտարբեր չէ մնալու դէպի հարազատների հառաչանքները և կաշխատի հնար եղածի չափ թեթևացնել այդ խղճալիների տանջանքները: Քաղաքիս հայ հասարակութիւնը արդէն կազմել է մի պաշտօնական բիւրօ, որը... պարտաւոր է օգնել վիրաւոր և հիւանդ զինուորներին, հայ կամաւորներին և խնամել հայ գաղթականներին»⁵: Հաշված օրերի ընթացքում կոմիտեն միայն Ալեքսանդրապոլում 100-250 հոգանոց 18 հանրակացարան կահավորեց փախստականներին ընդունելու համար:

Առաջին փախստականները գալաւո հասան 1914թ. նոյեմբերի կեսերին⁶, իսկ 1915թ. հունվարի վերջին նրանց թիվը հասաւ 6909-ի⁷: «Գաւառի ձայն»-ի հավաստմամբ՝ սրանք ալեքսանդրապօլցիների կամավոր նվիրատւությունների շնորհիվ, «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեից ստացան անվճար բնակարան, վառելիք, հագուստ և մեկ անձի համար ամսական երկու փութ հաց (1 փութը կշռում է 16կգ 380գ)⁸: Ավելին, կոմիտեն ըստ «Մշակ» պարբերականի նույնիսկ հաշվել էր յուրաքանչյուր գաղթական ընտանիքի իր բնակության նախկին վայրը վերադարձնելու և կորցրած տնտեսությունը վերականգնելու համար պահանջվող ծախսը՝ մոտ 500 ռուբլի⁹:

Պատերազմի առաջին ամիսների ընթացքում «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի կատարած աշխատանքը հատկապես բարձր է գնահատել բարեգործական առաքելությամբ Աստրախանից այստեղ գործուղված Գևորգ ք. Մկրտումյանը: 1915թ. մայիսի 3-ին Թիֆլիսից Ալեքսանդրապոլ ժամանած հոգևորականը, «Մշակ»-ում հրապարակած իր հոդվածում թռուցիկ նկարագրելով քաղաքում տիրող ընդհանուր անմխիթար իրավիճակը, գովեստի ջերմ խոսքեր է շոյել Ալեքսանդրապոլի կոմիտեի աշխատակիցների հասցեին՝

³ ՀԱՍ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24:

⁴ Մշակ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

⁵ Գաւառի ձայն, Ալեքսանդրապօլ, 1914, N 109, 23 նոյեմբերի, էջ 3:

⁶ ՀԱՍ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, 151-158, 249-252, գործ 21, թթ. 141-165:

⁷ Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эривань, 1915, стр. 26-31; Ալեքսանդրապոլի գալաւոր վիճակագրական նյութերում (XIXդ. - XXդ. սկիզբ), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ս. Հայրապետյանի, Եր., 2011, էջ 232-235:

⁸ Գաւառի ձայն, Ալեքսանդրապօլ, 1915, N 1, 11 յունւարի, էջ 3:

⁹ Մշակ, Թիֆլիս, 1915, N 51, 10 մարտի, էջ 2-3:

գրելով, թե «բոլորը միասին՝ թե թեի տուած օգնում են գաղթականական գործին»: Ըստ հոդվածագրի՝ քաղաքում և շուրջ 80 գյուղերում հաստատված ավելի քան 8000 գաղթականների վիճակը թեթևացնելու համար կոմիտեի «գաղթականներին խնամող» սեկցիան (նախագահ՝ Աստվածատուր Իսահակյան, փոխնախագահ՝ Պ. Գենջյան, անդամներ՝ Հ. ք. Խաչվանքյան, Ա. Կարանյան, Մ. Տեր-Հարությունյան, Ս. Թովալյան, Պ. Մոճոռյան, Պ. Բերուրյան, Վ. Արաբաջյան) գավառի տարածքը բաժանել էր շրջանների, իսկ շրջկենտրոններում նշանակել «լիազորներ», որոնց միջոցով էլ կարգավորել էր ինչպես գաղթականության հաշվառումը, այնպես էլ սնունդի ու հագուստի բաշխումը: Եվ այս ամենը կատարել էր ֆինանսական սուղ միջոցներով՝ ընդամենը 64000 ռուբլով, որից 35000-ը կոմիտեն ստացել էր Էջմիածնից և «Քաղաքների միությունից», 4000-ը՝ Ալեքսանդրապոլ քաղաքից, 8000-ը՝ Կարսի նահանգապետից, իսկ 17000-ը՝ Երևանի նահանգապետից¹⁰: «Պետք է խոստովանել, գրում է հոդվածագիրը, որ այսօր Ալեքսանդրապոլի գաղթականական սեկցիան պատուով է տանում իր առաջ դրված գործը»¹¹:

Կոմիտեի աշխատանքում թույլ տրված առաջին լուրջ թերացումն արևելահայ մամուլն արձանագրեց 1915թ. ամռանը, երբ ռուսական զորքերի երրորդ նահանգի հետևանքով տասնյակ հազարավոր քրիստոնյաներ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներից հաշված օրերի ընթացքում անցան Արևելյան Հայաստան, իսկ Ալեքսանդրապոլի գավառում արևմտահայերի թիվն օգոստոսի վերջին հասավ 31000-ի¹²:

Նորեկներին ապաստանելու և նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու համար կոմիտեն որոշեց շուրջ 4000 մարդու տեղավորել «պահուստային» ֆոնդում՝ Փամբակի գավառակում: Սակայն դա, ըստ «Գաւառի ձայն»-ի թղթակցի, արեւ հակառակ տրամաբանությանը. Փամբակի մեծ գյուղերում, ուր կար 300 և ավելի տուն (օրինակ՝ Մեծ Ղարաքիլիսան), տեղավորեցին 130 հոգանոց խմբեր, իսկ փոքր գյուղերում, օրինակ, 80 տնից բաղկացած Դարբագում, ուր նորեկների համար նույնիսկ հարմար շինություն չկար՝ 100 գաղթական: Ըստ պարբերականի՝ բանը հասավ նրան, որ դարբագցիները ապառնացին գաղթականներին վտարել իրենց գյուղից¹³: Հակամարտությունը արևմտահայերի և դարբագցիների միջև շարունակվեց կես տարի: Դրան հետևած «Գաւառի ձայն»-ի թղթակիցը գրում է, թե կրքերը հանդարտվեցին միայն 1916թ. մարտի սկզբներին, երբ տեղ հասավ ԱՄՆ-ից ուղարկված օգնությունը¹⁴:

¹⁰ Մշակ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

¹¹ Նույն տեղում:

¹² Գաղթականների թվի մասին զեկույցը կարդացվել է Ալ. Խատիսյանի կողմից Համառոտ-սաստանյան քաղաքների միության (այսուհետև՝ «Քաղաքների միություն») կովկասյան բաժանմունքում (Տե՛ս Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915, стр. 26.):

¹³ Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1916, N 7, 7 փետրվարի, էջ 4:

¹⁴ Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1916, N 19, 20 մարտի, էջ 4:

Փամբակում գաղթականների տեղավորման ժամանակ առաջացած խնդիրներին անդրադարձել է նաև «Մշակ»-ը: Պարբերականի «Ականատես» ստորագրությամբ թղթակցի վկայությամբ՝ գաղթականների սպասելիքները չարդարացան հատկապես Մեծ Ղարաքիլիսայում: Խուսափելով «չարաբաղդ աղետյալների» ընդունման ու խնամքի ծանր պարտականությունից՝ մոտ 10000 բնակչությամբ այս գյուղաքաղաքը, որ ուներ բազմաթիվ դատարկ ու լուսավոր բնակարաններ, դեղատներ, մթերքի շուկա և այլ հարմարություններ, «ուղղակի զլացաւ իր մեջ պատասպարել հիւանդների, տանջվածների և որբերի մի խոշոր կօնտինգենտ»¹⁵:

Այն, որ «Եղբայրական Օգնության» կոմիտեն գաղթականությանը տեղավորելու ընթացքում կարող էր թերացումներ ունենալ հասկանալի է և ինչ-որ չափով բացատրելի: Ռուսական զորքերի հուլիսյան նահանջը խուճապ առաջացրեց և շուրջ 200000 արևմտահայեր հաշված օրերի ընթացքում անցան Արևելյան Հայաստան: Վերջիններիս ընդունման ու տեղավորման խնդիրը լուծելու համար կոմիտեն ստիպված էր օգտագործել Ալեքսանդրապոլի գավառի «պահուստային» ֆոնդը՝ Փամբակի գավառակը, առանց նախապատրաստական աշխատանքներն այստեղ ավարտին հասցնելու: Ավելին, օգոստոսի 22-ին այստեղ այցելած «Մշակ»-ի «Մ.» ստորագրությամբ թղթակիցը գրում էր, թե շրջանի հազարավոր փախստականների անմիջական խնամքի ու հոգատարության ահագին ծանրությունը բացառապես ընկած է «Եղբայրական օգնության» կոմիտեի ուսերին: Մինչդեռ հասարակական մյուս կազմակերպություններից «դեռևս ոչինչ չի ստացվել, բացի... լիառատ խոստումներից ու հեռագիրներից»: Ի դեպ, կատարվել էր այդ աշխատանքն ընդամենը 12000 ռուբլով, որից 8000-ը հավաքել էր բազմատանջ, բայց համբերատար ու սրտաբաց հայ գյուղացիությունը¹⁶:

«Եղբայրական օգնության» կոմիտեի կողմից սեփական պարտականությունների մեջ թերանալու երկրորդ դեպքը մատնանշել է «Մշակ»-ը: Պարբերականն անդրադարձել է Ալեքսանդրապոլի հանրակացարաններում առկա խնդիրներին և բավականին մոայլ գույներով նկարագրել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այստեղ տիրող վիճակը: «Միայն քաղաքի մեջ, գրում է «Մշակ»-ին թղթակցած Արշակ Մաֆրաստյանը, - 6000 գաղթական կա, որոնցմէ՝ փոքր մաս մը քաղաքացոց տունը կապրի, իսկ մեծամասնութիւնը՝ հանրակացարաններու մեջ»: Ըստ հոդվածագրի՝ սրանք աննախանձելի դրության մեջ էին. գրեթե զուրկ «կեանքի անհրաժեշտ պիտոյքներէն», կոտրված պատուհաններով սենյակներում, ծղոտից ներքնակների վրա տեղավորված էին 8-15 ընտանիքներ՝ սոված, առանց անկողին ու հագուստ, իսկ ծուխն ու զարշառուտությունը «քեզ կը պարտաւորեցնէ դուրս փախչիլ՝ մաքուր օդի մեջ դիտելու գաղթականները»¹⁷: Ա. Մաֆրաստյանը նաև պատմում է, թե հոկտեմբերի 30-ին ականատես է եղել տհաճ մի միջադեպի,

¹⁵ Մշակ, Թիֆլիս, 1915, N 177, 13 օգոստոսի, էջ 2:

¹⁶ Նույն տեղում, N 187, 26 օգոստոսի, էջ 3:

¹⁷ Նույն տեղում, N 250, 11 նոյեմբերի, էջ 3:

երբ հաց բաժանելու ժամանակ «քիչ մը շատ պոռացող գաղթականի մը վրայ հսկիչ-վարժապետը գաւազանով յարձակեցաւ և պիտի ծեծէր զայն»¹⁸:

Միջադէպը տեղի է ունեցել «Կարանօվների» հանրակացարանում: Թե ի՞նչ ընթացք է ստացել հսկիչի և գաղթականի միջև ծագած վեճը, հայտնի չէ: Բայց ընդունելի չէ նաև Ա. Սաֆրաստյանի վերաբերմունքը «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեության նկատմամբ: Մեր կարծիքով, արդարացի չէ այդ կազմակերպության մեկամյա տաժանակիր աշխատանքը «սևացնել» մեկ մասնավոր դէպքի պատճառով: Իսկ արևմտահայության «կեանքի անհրաժեշտ պիտոյքներէն» զուրկ լինելու պատճառը հետևյալն էր. 1915թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականների թիվը հասել էր 32000-ի¹⁹, ինչը կազմում էր Երևանի նահանգում առկա գաղթականության ընդհանուր թվի 30%-ը («Մշակ»-ի հաշվումներով նույն ժամանակահատվածում Երևանում և գավառում այդ թիվը կազմում էր 19800, իսկ Էջմիածնի գավառում՝ 16000 մարդ)²⁰:

Մնունդի մատակարարման հարցում առաջացած դժվարությունները կարճ ժամանակահատվածում հարթվեցին: «Մշակ»-ին թղթակցած Ատրպետի հավաստմամբ՝ այս գործում իր անգնահատելի ներդրումն ունեցավ Ալեքսանդրապոլի գավառի գյուղական հասարակությունը, որ «դարերից ի վեր գրեթէ անընդհատ իր վզին է վերցրել թշուառութեան ենթարկվածին»²¹: Բանն այն է, որ գաղթականների 95%-ը՝ որպէս նախկին գյուղաբնակներ, նախապատվությունը տվեցին «գօմի օդային», որովհետև ավելի հաճելի էին համարում «ախոռների կողքին ապրելը»: Գավառի գյուղական ազգաբնակչությունը սիրով ընդունեց բոլորին: Օրինակ, Մահմուդջուղ գյուղը, որ ուներ 250 ընտանիք, ընդունել էր 300 գաղթական, Մուսլուղլին 120 ընտանիք ուներ և ընդունել էր 172 գաղթական, իսկ Ղըրիսը, որ 75 ընտանիք ուներ, ընդունել էր 135 գաղթական: Ըստ հողվածագրի՝ գյուղերում գաղթականները հաստատվում էին միտումնավոր: Այլուր ու անհրաժեշտ այլ պարագաներ ստանալով «Եղբայրական Օգնության» տեղի կոմիտեից նրանք շարունակում էին «վառել գիւղացու աթարը» և օգտվել նրա ունեցած սննդի պաշարներից²²:

Ցավոք, հայ ժողովրդի համար օրհասական այս օրերին հասարակական այն կազմակերպությունները, որոնք ի պաշտոնե կոչված էին ժողովրդի վերքերն ամոքելու, արևելահայ մամուլի էջերում սկսեցին մրոտել միմյանց՝ այդ կերպ համազգային ողբերգությունն օգտագործելով նաև ի նպաստ իրենց շահերի: Օրինակ՝ 1915թ. դեկտեմբերին «Հորիզոն»-ի 278-րդ համարում լույս տեսավ Կարապետյանի «Բողոքներ» վերնագրով խմբագրականը, որում չստուգված փաստերի հիման վրա հեղինակը «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեին մեղադրում էր

¹⁸ Մշակ, Թիֆլիս, 1915, N 250, 11 նոյեմբերի, էջ 3:

¹⁹ ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թ. 1-7: Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 2, 3 յունուարի, էջ 47-48:

²⁰ Մշակ, Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

²¹ Նույն տեղում 1915, N 251, 12 նոյեմբերի, էջ 3:

²² Նույնը:

բացարձակ անգործության մեջ: Ըստ թղթակցի՝ Ալեքսանդրապոլի գավառ հասած 14500 գաղթականներից փոքրիշատե բարվոք վիճակում էին միայն գյուղերում տեղավորված 12000-ը: Մնացած 2500-ը, որ տեղավորվել էին քաղաքի հանրակացարաններում, գտնվում էին ծայրահեղ ծանր վիճակում. «Ամեն տեղ ցրտից ու քաղցից կույ էկած մարդիկ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ: Վառարաններ համարեա թե չկան: Բոլորը կիսամերկ են, համարեա բոքիկ... մայրերը յուսահատութեամբ երեխաները ձգած և նրանց քովը կույ էկած, նայում են ցրտից գալարվող վտիտ ու կիսամերկ անդամներին»²³:

Հոդվածը, որն ավելի շատ նման էր ամբաստանության, անմիջապես վերահրատարակվեց «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» պաշտոնաթերթ «Համբաւաբեր»-ում²⁴, ինչը թույլ է տալիս մեզ ենթադրելու, որ խմբագրականի իրական պատվիրատուն հենց վերջինս էր: Մեր հաշվումներով աշխարհամարտի տարիներին «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» կողմից մամուլում մեկ տասնյակից ավելի անգամ փորձ է արվել վարկաբեկելու «Եղբայրական օգնության» կոմիտեի և նրա մասնաճյուղերի գործունեությունը: Կոմիտեն, իր գործունեության մասին թերթերում լույս տեսած թղթակցությունները համարելով անլուրջ ու իրականությանը չհամապատասխանող, երբևէ չի կարևորել դրանց հերքում տալը, սակայն Կարապետյանի խմբագրականն ու «Համբաւաբեր»-ում դրա վերատպումն արդեն կրում էին «...լուրջ մեղադրանքի բնույթ... դրա համար կոմիտեւ որոշեց տալ համառօտ տեղեկութիւններ Ալեքսանդրապոլի շրջանի փախստականների դրութեան մասին»²⁵:

Ըստ այդմ՝ 1914թ. նոյեմբերից Ալեքսանդրապոլի գավառում հաստատված փախստականների խնամատարությամբ զբաղվող կոմիտեն բացարձակ զրպարտություն էր համարում «Բողոքագրի» այն հատվածը, թե իբր հանրակացարաններում կան «... ցրտից ու քաղցից կույ էկած մարդիկ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ», և որ «հացի, նպաստի և մանաւանդ հագուստի բաշխումը կատարում է անկանոն»²⁶: Ըստ կոմիտեի ունեցած վիճակագրական տվյալների՝ 1915թ. հոկտեմբերի դրությամբ գավառում կար 22815 փախստական (Կարապետյանի 14500-ի փոխարեն), որից 15971-ը հաստատվել էր գյուղերում, 2604-ը՝ քաղաքի հանրակացարաններում, իսկ 4240-ը՝ մասնավոր տներում²⁷: Քաղաքի բոլոր հանրակացարաններն այդ պահի դրությամբ ապահովված են եղել վառելիքով ու վառարաններով: Յուրաքանչյուր փախստական կոմիտեից օրական ստացել էր 15 կոպեկ սնվելու համար, ինչպես նաև օձառ, տաք ջուր, հագուստ, իսկ յուրաքանչյուր 20-րդ օրը ուղարկվել էր բաղնիք: Կոմիտեն մեծ ուշադրություն էր դարձրել նաև առողջապահության խնդրին: «Երիտասարդական Միութեան» և «Ալագեազի Զուսակունք»

²³ Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 278, 12 դեկտեմբերի, էջ 2:

²⁴ Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 2, 3 յունուարի, էջ 62:

²⁵ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5:

²⁶ Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 278, 12 դեկտեմբերի, էջ 2:

²⁷ Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5: Ի դեպ, «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն այն եզակի կազմակերպություններից մեկն էր, որն իր զեկուցագրերում ու հաշվետվություններում միշտ տարբերակել է փախստականին գաղթականից:

ընկերությունների աջակցությամբ կոմիտեն փախստականների համար 1914թ. դեկտեմբերի 27-ին բացել էր հիվանդանոց ու դեղատուն (1915թ. ամռանը գաղթականական բոլոր հիվանդանոցներն անցան «Քաղաքների Միության» ենթակայության տակ²⁸):

Նշենք, որ շնորհիվ «Եղբայրական օգնության» և «Քաղաքների միության» կոմիտեների համատեղ անձնուրաց աշխատանքի, Ալեքսանդրապոլում հաստատված գաղթականության շրջանում մահացության մակարդակը խիստ ցածր էր: Ըստ տեղի փոխանորդ Արտակ վարդապետի 1916թ. հունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու հիվանդություններից 1915թ.-ին զավառում մահացել էր ընդամենը 1164 գաղթական²⁹: Մնաչդեո ըստ Բ. Իշխանյանի հաշվումների՝ Էջմիածնում միայն 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում սովի և համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ³⁰:

«Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեությանը բարձր գնահատական է տվել նաև 1915թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին աշխատանքային առաքելությամբ այստեղ գործուղված իշխան Ա. Արդուրյան-Երկայնաբազուկը: «Քաղաքների միության» կովկասյան բաժանմունք ներկայացրած իր զեկուցագրում վերջինս գրել էր, թե զավառի բոլոր 186 գյուղերում գաղթականներ կան՝ «ըստ որում ամեն մի տանը միջինը՝ 3 մարդ»³¹, որոնք տեղավորվել են հիմնականում անվճար, իսկ կոմիտեից ստանում են նպաստ՝ մեկ անձին օրական 15 կոպեկ կամ 5 կոպեկ և 1.5 ֆունտ³² ալյուր: Ըստ Ա.Մ. Արդուրյան-Երկայնաբազուկի՝ գաղթականների մեջ առավել բարվոք վիճակում էին Փամբակի շրջանում հաստատվածները, որ ունեին շուրջ 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, փայտ հայթայթում էին անտառներից, իսկ «Եղբայրական օգնության» կոմիտեից ստացել էին 200 վառարան, տաք վերմակներ և հագուստ: Իշխանին զարմացրել էր նաև այն փաստը, որ կոմիտեն մեծ թվով գաղթականների ապահովել էր աշխատանքով: «Գրեթե ճշմարտությամբ է դարձել, - «Մշակ» -ի էջերում գրում է նա, - որ փախստականները չեն ուզում աշխատել..., գերադասելով ապրել միայն փայա-

²⁸ Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն զավառի տարածքում «Քաղաքների միության» կոմիտեի ծավալած հիվանդախնամ գործունեության մասին մանրամասն տե՛ս Положение беженцев в Александропольском районе, Баку, 1915; Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915; Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, 1915.

²⁹ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:

³⁰ Մշակ, Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2: Ի դեպ, 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում Էջմիածնում մահացածների թիվը հաշվելիս Ա.-Դոն նշում է 2613 մարդ (Տե՛ս Ա.-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915թթ., Եր., 1917, էջ 485):

³¹ Ալեքսանդրապոլի, Դիլիջանի և Ղազախի շրջաններում հաստատված գաղթականության վիճակի մասին զեկույցը «Իշխան Ա.Մ. Արդուրյան-Երկայնաբազուկի զեկույցումը փախստականների մասին» վերտառությամբ հրապարակվեց «Մշակ»-ում՝ 1915թ. դեկտեմբերին (Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3):

³² 1 ֆունտը կշռում է 453 գրամ:

բաժնով և բարեգործութեամբ: Բայց ահա Մ.-Ղարաքիլիսայում կոմիտեներ կարողացել է հարցին մօտենալ հարկավոր կողմից...»³³: 100 գաղթականներ տեղավորել էին տեղի պղնձի հանքերում, 300 հոգի էլ աշխատում էին Կարսի երկաթգծի և Սարիղամիշի խճուղու շինարարության վրա:

1916թ. հուլիսը նշանավորվեց ռուսական զորքերի չորրորդ անբացատրելի նահանջով: Դեպի Ալեքսանդրապոլի գավառ շարժվող արևմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատվեցին Փամբակում: Տեղի գյուղացիությունն իր հարկի տակ սիրով հյուրընկալեց նրանց: «Քանի մը գյուղերու մէջ տուներ եմ տեսած,- գրում է «Աշխատանք» թերթի թղթակիցը,-ուր փախստականները կապրին իբրև նոյն ընտանիքի անդամներ, միևնոյն սենյակի մէջ, «մէկ հաց և մէկ ջուր»... և թուրքահայ գիւղացիութիւնը դժգոհ չէ իր ռուսահայ եղբայր-գիւղացիներէն»³⁴: Օգոստոսից «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեն Մեծ Ղարաքիլիսայում բացեց նաև «Պարենատրման խանութ, որից օգտուում են շրջանիս գաղթականները՝ ստացած նպաստի փողերով գնելով իրենց անհրաժեշտ կենսամթերքները»³⁵:

Այդուհանդերձ որոշ խնդիրներ մնացին տակավին չլուծված: Օրինակ, թերի էր նպաստի բաշխման կարգը: Ըստ «Աշխատանք»-ի «Յ.Յ.» ստորագրությամբ թղթակցի՝ գաղթականներին տրամադրվող նպաստը «Եղբայրական օգնության» կոմիտեն Երևանից նախ փոխադրում էր Ալեքսանդրապոլ և հետո նոր միայն Մեծ Ղարաքիլիսա: Վճարման այս եղանակը պատճառ էր դառնում նպաստների ուշացման: Անլուծելի էր մնում նաև հագուստի խնդիրը: Թեև կոմիտեն ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունների հետ կազմակերպել էր հագուստի բաշխում և «Տօթ. Ուիլսոնի ձեռքով՝ իւրաքանչիւր անհատին բաժնեցին մէկ ձեռք հագուստ և ամէն մէկ ընտանիքին մէկ վերմակ»³⁶, սակայն խնդրին վերջնական լուծում տալ այդպես էլ չկարողացան:

Անհամեմատ ավելի բարդ էր իրավիճակը Ալեքսանդրապոլում և շրջակա գյուղերում: Օգոստոսին այստեղ հաստատվեցին 8000 կիսամերկ ու սոված սառունցիներ³⁷: Նորեկներին տարրական կենսապայմաններով ապահովելու համար «Եղբայրական Օգնության» տեղի կոմիտեն փորձեց այլուրի բաշխումը ժամանակավորապես փոխարինել դրամական նպաստով՝ մեկ փութը 3 ռուբլի հաշվով: Սակայն, այս նոր քաղաքականությունը ոչ միայն իրեն չարդարացրեց, այլև ըստ «Աշխատանք» պարբերականի՝ հանգեցրեց այլուրի գնաճի³⁸:

Մինչև տարեվերջ Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին ևս 1370 սառունցիներ³⁹: Հակառակ գործադրած բոլոր ջանքերին՝ տեղի հասարակական կազմակերպություններին այս անգամ չհաջողվեց ձմռան նախաշեմին լուծել գաղթականների տեղավորման ու կենսապայմանների ապահովման խնդիրները:

³³ Մշակ, Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

³⁴ Աշխատանք, Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

³⁵ Համբարումբեր, Թիֆլիս, 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1328:

³⁶ Աշխատանք, Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

³⁷ Մշակ, Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

³⁸ Աշխատանք, Եր., 1916, N 20, 10 օգոստոսի, էջ 4:

³⁹ Մշակ, Թիֆլիս, 1916, N 282, 18 դեկտեմբերի, էջ 3:

Ստեղծված իրավիճակում «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի նախագահ Արտակ վարդապետը, Ալեքսանդրապոլի գավառապետ Կալանդարիշվիլին և քաղաքագլուխ Կամսարականը «Մշակ»-ում հրապարակեցին համատեղ կոչ՝ ուղղված անհատ բարեգործներին ու հասարակական կազմակերպություններին. «Վկայում ենք, նշված է ուղերձում, որ օգոստոս ամսից Ալեքսանդրոպոլի գաւառը եկած փախստականները, գլխաւորապէս սասունցիներ... առանց չափազանցութեան բոլորովին մերկ են: ...Կոչ ենք անում բոլոր հիմնարկութիւններին, որ վարում են փախստականական բարեգործական գործեր, բոլոր մասնաւոր բարեգործներին, աղերսելով օգնութեան հասնել պատերազմի խեղճ զոհերին և թոյլ չը տալ, որ գազանութիւններից ազատված՝ նրանք մեռնեն մեր աչքերի առաջ»⁴⁰:

Օգնությունը չուշացավ: Մինչև տարեվերջ «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի և «Հայ գաղթականների ամերիկյան օգնության կոմիտեի» համատեղ ջանքերով գավառում բացվեցին 15-ական դազգահներով բրդի և բամբակի մշակման արհեստանոցներ⁴¹: Ըստ «Աշխատանք» օրաթերթի՝ սա հնարավորություն տվեց 40 տղամարդկանց (որպես վարպետներ) և 1450 կանանց (800-ը՝ բրդի, իսկ 650-ը՝ բամբակի մանարաններում)⁴² ապահովել աշխատանքով: Այսինքն՝ միջին հաշվով մոտ 6000 մարդ բարելավեց իր կենսապայմանները:

Աշխարհամարտի առաջին տարիներին «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն մեծ ներդրում ունեցավ նաև գավառում հաստատված գաղթականության շրջանում դպրոցական գործի կազմակերպման ոլորտում⁴³: Կոմիտեի առաջին դպրոցը բացվեց Ալեքսանդրապոլում՝ 1915թ. ամռանը: Դեկտեմբերին՝ 296 երեխաների համար դպրոցներ բացվեցին նաև Մեծ Ղարաքիլիսա, Համամլու, Ղշլաղ, Բոզգյուղ և Բեքանտ գյուղերում⁴⁴: Հետագայում, պայմանավորված երեխաների թվի աճով, դպրոցներ բացվեցին նաև գավառի մյուս գյուղերում:

Տեղի դպրոցները գաղթական սաներին ընդունում էին սիրով, սակայն լուծել վերջիններին խնդիրները հաջողվում էր ոչ միշտ: Կար ուսուցիչների, գրենական պիտույքների, հագուստի ու սնունդի պահանջ: Պատահում էին նաև դեպքեր, երբ աշակերտների թիվը մեծ էր, իսկ դպրոցի շենքը՝ փոքր: Նմանօրինակ խնդիրների լուծումը ևս «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն վերցրեց իր ուսերին: Կոմիտեի կողմից 1915թ. հունիսին Ալեքսանդրապոլում հիմնված դպրոցը՝ «Գաւառի ձայն» պարբերականի խմբագիր Հովսէփ Միրզոյանի տնօրինությամբ, դարձավ լավագույնը գաղթական երեխաների համար երբևէ բացած դպրոցների շարքում: Գաղթական սաների առջև դպրոցն իր հյուրընկալ դռները բացեց հունիսի 22-ին: Իբրև ամառային՝ այն իր 280 սաներով (200 հայ, 80 հույն)

⁴⁰ Մշակ, Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

⁴¹ Армянский вестник, Москва, 1917, год изд. 2, N 43, 23 ноября, стр. 18.

⁴² Աշխատանք, Եր., 1917, N 42, 30 սեպտեմբերի, էջ 1-2:

⁴³ 1915թ. հոկտեմբերի 1-ին անցկացված մեկօրյա ցուցակագրման տվյալներով Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում կար 22815 գաղթական, որից 10055-ը կամ 44%-ը երեխաներ էին (Տե՛ս ՀԱՍ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5):

⁴⁴ Մշակ, Թիֆլիս, 1916, N 210, 22 սեպտեմբերի, էջ 3: Աշխատանք, Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

մինչև սեպտեմբերի 1-ը գործեց Արդության և Մեյլանյան դպրոցների շենքում⁴⁵։ Երբ սեպտեմբերին տեղական դպրոցներում պարապմունքները վերսկսվեցին, Արդության և Մեյլանյան դպրոցների շենքերը վերադարձվեցին իրենց տերերին։ Իսկ գաղթականական դպրոցը վերաբացվեց հոկտեմբերի 15-ին։ Այժմ արդեն դպրոցն ուներ 11 բաժանմունք (9 հայկական և 2 հունական) և 419 սան։ Աշակերտներից 316-ը հայեր էին, 54-ը՝ հույներ, մեկը՝ ռուս։ Սրանցից 276-ը ռուսահայատակ փախստականներ էին, 138-ը՝ արևմտահայ, իսկ 2-ը՝ պարսկահայեր։ «Հորիզոն» պարբերականի հավաստմամբ՝ դպրոցը աչքի էր ընկնում գերազանց մաքրությամբ ու կարգապահությամբ, իսկ «սաները ոչ միայն տաք էին հագնւած, այլև ունին համազգեստ, որպիսին չունին միւս դպրոցներում սովորողները»⁴⁶։

Ի դեպ, կոմիտեն աչքի ընկավ նաև իր որբախնամ գործունեությամբ։ Նույն Հ. Միրզոյանի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլում հիմնած որբանոցը ևս արևելահայ մամուլը համարել է լավագույնը երբևէ բացածների շարքում։ «Աշխատանք» պարբերականի թղթակից Հ. Վանյանի կարծիքով, հաստատության միակ թերությունն անհարմարավետ շենքն էր⁴⁷։ Դրան հակառակ իդեալական մաքուր սենյակներում որբերն ապահովված էին հագուստով (6 ձեռք ներքնաշոր, համազգեստ) և որակյալ սնունդով (առավոտյան տրվում էր թեյ՝ հաց, պանիր, երբեմն ձու կամ կաթ, ցերեկը տաք կերակուր, շաբաթական երեք անգամ մսեղեն, երեկոյան՝ թեյ, հաց, պանիր, երբեմն մածուն)։ Երեխաների դաստիարակությունն ու խնամքն իրագործվում էին 8-10 օրիորդների կողմից՝ կամավոր սկզբունքով և անվճար։ Որբանոցի առօրյան թղթակիցը բնութագրել է հետևյալ կերպ. «Աշխոյժ են որբերը, զուարթ ու ծիծաղկոտ, երգն ու բանաստեղծությունը դուրս կը թռչին, ակամայ ու վարակուող, իրենց շրթունքներէն։ Կը վազին օրիորդի մը հետ դիմացի պարտեզը հայկական պարեր պարելու, մարմնամարզի, խաղի։ Ետ կը վերադառնան, կը թէյեն, կը կատակեն...։ Վերջը փոքրիկ սրահին մէջ կը սկսին պարել որբերը, եւրոպական և Վանի պարերը...»⁴⁸։ Որբանոցին կից գործում էր նաև արհեստանոց, որտեղ «փոքրիկ որբերը շինած են ճիւղերէ աթոռներ..., կարկտած կօշիկներ, հիւսած են իրենց գուլպաներ և գեղեցիկ ձեռագործեր»։ «Տպաւորութիւնը, գրում է Վանյանը, գոր թողուց Միրզոյեանի որբանոցը վրաս՝ անջինջ պիտի մնայ, տպաւորութիւն մը, որ հոգեկան բարձր տրամադրութիւն և անդորրութիւն բաշխեց»⁴⁹։

⁴⁵ Դպրոցի մասին մանրամասն տե՛ս նաև ՀԱՍ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թթ. 8-9։ Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ., Փաստաթղթերի ժողովածու, խմբ. Կ. Ալեքսանյան, Եր., 2012, փաստ. N 18, էջ 78-82։ Армянский вестник, Москва, 1917, год изд. 2, N 8, 20 марта, стр. 11.

⁴⁶ Դպրոցի 276 ռուսահայատակ սաներից 269-ը գաղթել էին Կարսից, Օլթիից, Արդահանից և Սարիղամիշից, 6-ը՝ Արդվինից և Տանձուտից, մեկը՝ Մինսկի նահանգից։ Ռուսահայատակ սաներից 12-ը երկկողմանի ծնողազուրկներ էին, 20-ը՝ միակողմանի։ 138 արևմտահայ սաներից 15-ը գաղթել էին Մանազկերտից, 11-ը՝ Էրզրումից, 20-ը՝ Բիթլիսից, 16-ը՝ Վանից, 43-ը՝ Բուլանդից, 14-ը՝ Մուշից։ Արևմտահայերից երկկողմանի ծնողազուրկներ էին 29-ը, միակողմանի՝ 48-ը (մանրամասն տե՛ս, Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 48, 2 մարտի, էջ 4)։

⁴⁷ Աշխատանք, Եր., 1916, N 20, 9 յուլիսի, էջ 2-3։

⁴⁸ Նույն տեղում։

⁴⁹ Աշխատանք, Եր., 1916, N 20, 9 յուլիսի, էջ 3։

Ամփոփելով «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի 1914-1916 թթ. գործունեության լուսաբանման գործում արևելահայ մամուլի ունեցած դերակատարության համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. մամուլը հետևեց գաղթականների տեղավորման և տարրական կենսապայմանների ապահովման ուղղությամբ կոմիտեի ծավալած աշխատանքներին, ներկայացրեց խնամատարության, հիվանդախնամ ու որբախնամ գործունեության, կամ թե կրթական գործի կազմակերպման ոլորտներում վերջինիս ձեռքբերումները, ինչպես նաև մատնանշեց առկա խնդիրները:

Ցավոք, նույն «Գաւառի ձայն», «Աշխատանք», «Հորիզոն», «Համբաւաբեր» ու «Մշակ» պարբերականները հայ ժողովրդի համար օրհասական այդ օրերին հարթակ դարձան նաև նրանց համար, ովքեր, ի պաշտոնէ կոչված լինելով ժողովրդի վերքերն ամոքելու, համազգային ողբերգությունն օգտագործեցին ի նպաստ իրենց շահերի՝ մամուլի էջերում մրտտելու միջոցով հաշվեհարդար տեսնելով «մրցակիցների» հետ:

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИТЕТА АЛЕКСАНДРАПОЛЯ “БРАТСКОЙ ПОМОЩИ” 1914-1916 ГГ. НА СТРАНИЦАХ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ ПРЕССЫ

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

В годы Первой мировой войны Александропольский уезд принял почти 95000 беженцев. Часть из них осталась на территории уезда, остальные – покинули его. Пока российские власти с характерной им “послешностью” решали вопрос физического существования спасенных, инициативу этой сложнейшей задачи взяли на себя общественные организации, созданные в городах империи с населенными армянами.

В Александропольском уезде вопросы приема и обеспечения элементарных условий беженцев на себя взял местный комитет “Братской помощи” во главе духовного лидера Александрополя архимандрита Артака.

Восточноармянская пресса пристально следила за деятельностью комитета и представляла достижения и неудачи в сферах попечительства, деятельности по уходу за больными и сиротами.

К сожалению, периодическая пресса в эти роковые дни стала так же платформой для тех, кто общенациональную трагедию пытался использовать во благо собственных интересов, на страницах прессы сводил счета со своими «конкурентами”.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայրապետյան Արմեն Մերգոյի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, E-mail: armenani@mail.ru

Гаяне МАХМУРЯН

*АЛЕКСАНДРОПОЛЬ 1918-1920 гг. В ДОКУМЕНТАХ
ГОСДЕПАРТАМЕНТА США И НАЦИОНАЛЬНОГО
АРХИВА АРМЕНИИ**

Документы Госдепартамента США и Национального архива Армении позволяют выделить три основные проблемы, которые город решал в 1918-1920 гг. Это вопросы восстановления мирной жизни, ее обороны и беженцев. Ведь покинув город 26 декабря 1918 г., турки, при попустительстве германских офицеров, заминировали взрывателями с часовыми механизмами все общественно значимые здания, включая железнодорожную станцию и подвижной состав.¹ К 1 января 1919 г. представитель французской военной миссии А. Пуадebar потребовал от них возвращения крайне необходимых электромельниц и электроосвещения, вывезенных неделю назад и брошенных на станции у с. Гзлчахчах.²

20 марта 1919 г. в город прибыли инспекторы Американского комитета помощи на Ближнем Востоке (АКПБВ) У. Дж. Смит и Дж.Мейн.³ Они познакомились с только что организованной здесь станцией помощи и оставались в регионе больше месяца. По отосланному Дж. Мейном отчету для Р. Лансинга (от 29 мая), на 35 тыс. постоянных жителей Александрополя здесь приходилось 68 тыс. беженцев, зарегистрированных в пунктах выдачи хлеба и суповых кухнях. В первую же утреннюю прогулку по городу Дж. Мейн увидел четырех умерших на его глазах людей, а всего было собрано 190 тел.⁴ В снегу и слякоти беженцы скапливались кучами у порогов домов, среди них насчитывалось больше 30 тыс. детей – многим было меньше года.⁵ Без внешней помощи эти люди не могли продержаться больше

* Статья в качестве доклада была представлена на международной научной конференции «Историко-культурное наследие Ширака: актуальные вопросы арменоведения», состоявшейся 24-25 сентября 2016 г. в Гюмри.

¹ *Maintenance of Peace in Armenia. Hearing before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, 66th Congress, 1st Session on Senate Joint Resolution № 106 A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia. Printed for the use of Committee on Foreign Relations. Wash., GPO, 1919, p. 80 (далее: Maintenance of Peace).*

² Национальный архив Армении, Ереван, ф. 200, оп. 1, д. 92, л. 94 (далее: НАА). Село Гзлчахчах располагалось в 47 км к северо-востоку от Карса, в 3 км от станции Караял, по правую сторону от ведущего туда стального пути. В начале XX в. в нем жило более 2200 алашкертских армян.

³ Находился на Кавказе с 1 марта по 17 мая 1919 г. См.: *Maintenance of Peace* p. 68, 79, 82, 91.

⁴ *Ibid.*, p.87.

⁵ *United States National Archives, Washington D.C. (далее US NA), Record Group 59 General Records of the Department of State, class 860J.48/document 1/folio 91, T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929, Reel 7. Microfilm publications, Wash., National Archives and Records Service, General Services Administration, 1975, хранится в: НАА коллекция микроплёнок № 36 (далее: НАА, км).*

семи месяцев. Но все они стремились и надеялись на скорое возвращение домой – в западные провинции.

Первой задачей восстановления города в целом стала железная дорога. Ее участок Александрополь-Сарикамыш англичане передали республиканской администрации уже 30 апреля – 7 мая,⁶ хотя угроза турецких нападений, чтобы перерезать сегмент железнодорожной линии до Карса, сохранялась весь 1919 год. 14 апреля по этой магистрали перебросили часть городского гарнизона, который занял переданный РА Карс.⁷

Нужно отметить, что в нормальных условиях железнодорожная линия Карс-Александрополь являлась главным маршрутом для русско-турецкого транзита и была конкуренткой для линии Нахичеван-Зангезур. Для России, и для РА тоже, был выгоден путь через Армению с Грузией, как наиболее короткий, лучше контролируемый и неимеющий политических минусов. А второе направление должно было специализироваться на транзите в Иран. Наряду с этим, члены военной миссии Дж. Харборда, командированной для изучения Западной и Восточной Армении, обследовали шоссейный маршрут Трапезунд-Баберд-Эрзерум-Карс-Александрополь-Ереван и Тифлис на предмет перевозки по нему американских грузов. 7 октября подполковник Дж.П.Джексон доложил начальнику миссии о хорошем состоянии дороги.⁸ К тому же, между Самсуном и Себастией имелись большие продовольственные запасы, в том числе и нового урожая зерна. Но закупить его было сложно, учитывая враждебное отношение потенциальных продавцов к армянам. К моменту отчета Карс и Александрополь, с соединявшей их железной дорогой, были одним из главных объектов нападения со стороны турок.

Борьба за восстановление и безопасность железной дороги, за урегулирование правил и грузинских цен на американские перевозки из Батума в Александрополь, стали стратегической и жизненно важной задачей для Армении.

Эту проблему удалось преодолеть к 3 октября 1919 г., когда в Тифлисе провели трехстороннее армяно-грузино-американское совещание. По его итогам с 3 октября все грузы АКПБВ перешли под его юрисдикцию.⁹ Затем 3 ноября заключили армяно-грузинское соглашение о беспоплинных перевозках.¹⁰ Таким образом, с 24 октября составы стали передвигаться с американской документацией и без таможенного досмотра.¹¹ Это значительно сократило потери и кражи, происходившие при открытии эшелонов. Так как с начала октября Казачий пост

⁶ HAA, ф. 200, оп. 1, д. 95, л. 58; ф. 201, оп. 1, д. 359, л. 5.

⁷ Там же, оп. 2, д. 120, л. 4.

⁸ US NA, RG 59, 184.02/317/f.2, M820 General Records of the American Commission to Negotiate Peace, 1918-1931, American Delegation, Field Mission of the American Delegation, Harbord Military Mission to Armenia, Reel 232. Microfilm publications, Wash., NA and RS, GSA, 1970, HAA, км 4.

⁹ HAA, ф. 200, оп. 1, д. 353, л. 67-68.

¹⁰ Там же, д. 12, л. 45.

¹¹ US NA, RG 59, 860J.48/1/f. 93, T1192, Reel 7, HAA, км 36.

Александрополя стал главным складом и перевалочным пунктом для грузов помощи, городу давали 24 часа на возврат всех составов в Грузию. Гарантом возвращения и неиспользования этого транспорта для внутренних, в том числе военных перевозок, стала Помощь на Ближнем Востоке (ПБВ). Правда этот норматив совсем не выполнялся, и к 3 апреля 1920 г. в РА находилось до 150 вагонов,¹² выполнявших дополнительные перевозки. Так например, к 5 мая этого же года грузинская сторона пригрозила остановить движение в Санаине, пока не получит в обмен на 60 вагонов с мукой и детским питанием столько же единиц пустого состава.¹³

В сфере помощи, 17 апреля 1919 г. город посетил сотрудник государственной Американской администрации помощи (ААП) капитан А. Тулин,¹⁴ сделавший доклад на заседании подкомиссии Сената США от 2 октября, что в ходе встреч с премьер-министром О. Качазнуни и мэром Александрополя А. Саркисяном американцу показали местную воинскую часть и детские дома. Капитан А. Тулин говорил в Сенате о 6-7 тыс. солдат РА, которым требовались боеприпасы, хлеб и обувь. У солдат хромала дисциплина, но был высокий патриотизм, хотя они не получали продовольствия уже пять дней. По оценке сотрудника ААП, железная дорога Батум-Александрополь требовала обязательной охраны, а военный контингент нуждался в финансировании и боеприпасах. Он хорошо оценивал боеспособность солдат при их оснащении.

Весной 1919 г. речь шла о катастрофическом положении 110 тыс. изгнанников, которым в начале апреля поступила первая помощь АКПБВ, а с 15 мая – мука, бобы и рис от Американской продовольственной администрации (АПА).¹⁵ По методике, изложенной будущим президентом США, а тогда – генеральным директором помощи Парижской конференции, главой АПА и ААП Г. Гувером в его письмах от 29 декабря 1918 г.,¹⁶ 7 марта 1919 г. и двух телеграммах от 10 марта того же года,¹⁷ США направляли общественную благотворительность в Армянский комитет помощи, подключая Парижскую конференцию, АКПБВ, ААП и свой военный флот для ее перевозки.

¹² НАА, ф. 200, оп. 1, д. 638, л. 187.

¹³ Там же, л. 205.

¹⁴ Находился в Батуме с 7 апреля 1919 г., затем уехал в Париж и в конце июня вернулся в США См.: *Maintenance of Peace*, p. 47, 82.

¹⁵ *Maintenance of Peace*, p. 82.

¹⁶ *Organization of American Relief in Europe, 1918-1919. Including Negotiations Leading Up to the Establishment of the... Director General of Relief at Paris by the Allied Powers: Documents. Ed. by S. L. Bane, R. H. Lutz. Stanford Ca, Stanford University Press, 1943, p. 149.*

¹⁷ Их русские переводы 1919 г. были обнаружены нами ранее, отредактированы и опубликованы в: *Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. Сост. и пер. с англ. Г. Г. Махмурян. Ереван, Ин-т истории НАН, 2011, с. 70-72. Ныне мы обнаружили в Национальном архиве Армении и английские тексты этой корреспонденции, которые приводим вместе с собственным переводом в качестве приложения к докладу.*

Письмо от 7 марта 1919 г. извещало, что его автор «очень рад выплатить» половину стоимости всех поставок, обеспечивая соглашение о товарном кредите с Армянской национальной делегацией в Париже или с правительством Республики Армения.¹⁸ Телеграммы от 10 марта добавили, что учитывая крайнее истощение беженцев, для них утверждалась двойная норма потребления на человека.¹⁹ Вплоть до осени, до начала октября, Верховный комиссар В. Гаскель характеризовал положение на Кавказе как наихудшее в мире.²⁰ К этому времени он реформировал службы помощи. Были созданы 5 управленческих отделов и шесть районов: Батум, Тифлис, Александрополь, Карс; Ереван и Караклис.²¹ (Через полгода город стал также одним из четырех региональных центров помощи, наряду с Бейрутом, Константинополем и Тавризом.²²)

По состоянию на октябрь 1919 г. в городе находилось 50-60 тыс. беженцев. В этом месяце ПБВ и ААП перешли к программе самообеспечения, поэтому их подопечные приступили к ремонту домов, строительству дорог и другим общественным работам. Женщины и дети работали в цехах по производству ткани и одежды, пошиву и ремонту обуви.²³ Для организации мастерских из США заказали 6 ножных машин для пошивки обуви, иглы и гвозди, 200 обувных колодок, стройматериалы.²⁴

Часть их продукции получала республиканская армия,²⁵ ее отсылали также сиротам Еревана, а выделанные овчины шли на экспорт в Америку. Школьное дело в дет-ских приютах перешло в ведение республиканского правительства: государство предо-ставляло сиротам учебники, направляло учителей и офицеров для физической подго-товки.²⁶ Правда в домах часто не было стекол или постельных принадлежностей. Тем не менее, беженцев и особенно детей-сирот переводили из небольших убежищ в укрупненные учреждения. С 26 октября 1919 г. сюда перевели тысячу детей из тиф-лисских приютов.²⁷ Чтобы оценить размеры учреждений, отметим: по более поздним данным в двух приютах насчитывалось 1200 детей. В основном их размещали с 4 сентября 1919 г. в артиллерийских казармах Казачьего поста,²⁸ с октября месяца - в зданиях Полигона, а с ноября - и в холодных казармах Северского поста. ²⁹ К тому же, к зиме 1919 г. на постой в

¹⁸ НАА, ф. 200, оп. 1, д. 193, л. 337.

¹⁹ Там же, л. 332.

²⁰ Там же, д. 366, л. 9.

²¹ US NA, RG 59, 860J.48/1/f. 90, T1192, Reel 7, НАА, км 36.

²² НАА, ф. 200, оп. 1, д. 638, л. 171.

²³ Эти работы охватили 150 тыс. чел. по всей Республике Армении.

²⁴ НАА, ф. 200, оп. 1, д. 366, л. 8.

²⁵ Там же, д. 249, л. 6.

²⁶ Там же, д. 366, л. 7-7 об.

²⁷ Там же, д. 362, л. 116.

²⁸ Там же, л. 90. О расквартировании 8 батарей: там же, л. 28.

²⁹ Там же, д. 429, л. 121; д. 439, л. 39; д. 92, л. 429.

Казачий пост вернулись команды восьми батарей, солдаты которых делили крышу с пострадавшими.

Кроме этого, по докладу Н. Агбаляна для миссии Дж. Харборда (от 27 сентября), с мая месяца в городе работали женская гимназия св.Ольги, Аргутинская женская школа и коммерческая мужская гимназия. В 20 классах города 48 учителей все вместе обучали 773 ребенка.³⁰ В начале 1920 г. (31 января в 12 часов дня) В. Гаскель участвовал здесь в торжественном открытии государственного Университета. И по его распоряжению, со 2 февраля министерство социальной опеки РА привлекли к взвешиванию прибывавшей муки.³¹ С 24 мая городские склады были переданы министерству финансов, а чиновники министерства опеки приняли участие в распределении продовольствия.³²

В свою очередь, Александропольская миссия ПБВ подполковника Д. Робинсона стала заниматься и военно-политическими конфликтами. Так, 30 января генерал-майор А. Овсепян направил прокламацию жителям 46 сел Зарушатского района, требуя подчиниться власти РА до 9 часов утра следующего дня, или против них применят силу. 4 села попросили отсрочки до 20 февраля и создания смешанной комиссии с американским участием. В. Гаскель получил целую серию жалоб, даже из Ахалкалака и Баку. Между ним и А. Хатисяном произошла дипломатическая перепалка. Со своей стороны, Д. Робинсон оценил предложенные А. Овсепяном сроки как слишком короткие.³³

В апреле 1920 г. Д. Робинсон в целом жаловался В. Гаскелю в Тифлис, что мэр города Ованнес Мелконян часто вмешивался в работу ПБВ и даже арестовал его сотрудника: армянского гражданина США. Начальник миссии настаивал, что Казачий пост с Полигоном оставались военными объектами, переданными в американскую юрисдикцию и неподотчетными городским властям.³⁴

В середине мая в нью-йоркский штаб ПБВ пошли донесения об антиправительственном выступлении от 10-го числа, в котором участвовали Александропольский гарнизон, железная дорога и бронепоезд. В. Гаскель жаловался, что все большие склады ПБВ попали под большевистский контроль, там выставлены их часовые, а Д. Робинсон вынужден действовать по чужой указке.³⁵ Заметим, что при попытке эвакуации американцы встретились с С. Мусаеляном на вокзале и получили гарантии хорошего отношения новой власти. Они подписали там же заявление, что продолжают помогать армянскому народу при любом строе. Только 22 мая В. Гаскель известил Нью-Йорк, что РА вновь контролирует

³⁰ Там же, ф. 200, оп. 1, д. 498, л. 68; опубликовано в: *Армения в документах Государственного департамента США*, 2-е доп. изд., 2012, с. 244.

³¹ НАА, ф. 200, оп. 1, д. 439, л. 18.

³² Там же, л. 132, 191, 195.

³³ Там же, д. 486, л. 55-56.

³⁴ Там же, д. 638, л. 176.

³⁵ US NA, RG 59, 860J.48/30/App.2/f.1; T1192, Reel 7, НАА, км 36.

Александрополь, железная дорога открыта, и уезду срочно требуется мука. Все грузовые корабли можно было возвращать на батумские маршруты.³⁶

Затем, с 1 августа 1920 г., когда В. Гаскель уехал из Закавказья, а государственная программа помощи США закончилась, новый генеральный директор Кавказской ветви ПБВ известный миссионер, участник Ванской самообороны и I съезда западных армян Э. Ярроу³⁷ перевел из Тифлиса в Александрополь свою резиденцию. И хотя жизнь понемногу налаживалась, 20 сентября М. Кемаль отдал приказ о новом турецком нападении на РА. 22-го начались широкомасштабные боевые действия, которые 5 ноября докатились до Александрополя. Как извещал в этот день премьер-министр А. Оганджянн своего дипломатического представителя в Константинополе Ф. Тахта-джяна, он отослал телеграммы президенту В. Вильсону и Верховному комиссару США на Босфоре М. Бристолью с предупреждением о скорой сдаче города.³⁸

Сам М. Бристоль и консул США в Батуме Ч. Мозер известили Госдепартамент, что 40 американцев охраняют 40 тыс. сирот и склады Александрополя, куда в панике бежало 25 тыс. беженцев из Карса.³⁹ На следующий день Ч. Мозер напомнил дипломатическому представителю РА в Грузии Т. Бекзадяну о материальном вкладе американцев в дело сохранения народа. Тем не менее, США не подписывали Севрский договор и не принимали военных обязательств.⁴⁰

11 ноября 1920 г. Т. Бекзадян ответил консулу, что наступление на город было приостановлено армией РА, отбившей четыре турецких атаки. Враг атаковал станцию у Гэлчахчаха,⁴¹ и ее захват определил участь Александрополя. Агбабинские турки вместе с регулярными частями напали на тылы армянских подразделений, предрешив тем самым поражение всей городской обороны. Поэтому, извещал Т. Бекзадян, командование и кабинет РА с ужасом приняли перемирие, согласившись на сдачу крепости и вокзала. Иначе над жителями нависла грозная опасность разгрома.⁴²

Дипломат извещал, что армия не выдерживала холодов и не могла применить поезда, машины, аэропланы. У нее не было топлива, смазки для оружия, еды, полушубков, и даже дров для обогрева казарменных помещений. "Поэтому мы

³⁶ *Ibid.*, doc.32/Encl.1/f.1, T1192, Reel 7, HAA, км 36.

³⁷ С 17 мая 1919 г. Э. Ярроу был приглашен на пост директора операций АКПБВ в Закавказье. С 1 августа 1920 до 1924 г. служил генеральным директором Кавказской ветви ПБВ. Перенос резиденции состоялся не позднее 23 августа 1920 г.

³⁸ HAA, ф. 200, оп. 1, д. 249, л. 663.

³⁹ US NA, RG 59, 860J.48/58, T1192, Reel 7, HAA, км 36.

⁴⁰ HAA, ф. 200, оп. 1, д. 514, л. 17.

⁴¹ Его жители смогли переселиться в села Александропольского уезда.

⁴² US NA, RG 59, 860J.00/17/Encl.3/f. 1, T1192, Reel 1, HAA, км 49.

согласились на оккупацию Александрополя враждебными силами и даже проигнорировали другие требования, которые могли быть выдвинуты ему.”⁴³

В этот день посланник республики в Вашингтоне Г. Пастрманджян говорил с госсекретарем Б. Колби о судьбе города и недавнем падении Карса. Он просил муку, одежду, медикаменты для 100 тыс. новых беженцев.⁴⁴ После оккупации административного центра Ширака, Э. Ярроу заставили увезти его штаб под турецкий контроль в Карс, где он оставался до 26 декабря.⁴⁵ К началу мая 1921 г. оттуда доставили еще 7.500 сирот, и теперь их число в Александрополе достигало 18 тыс. душ.⁴⁶ Всего же, по данным патриарха Константинопольского Завена, переданным лондонской прессе в феврале 1921 г., ужасающей резне предыдущих месяцев подверглись 85% жителей Карсской области и Александропольского уезда.⁴⁷

Приложение

Документ № 1

письмо директора Американской продовольственной администрации Г. Гувера –
парижскому директору АПА на Ближнем Востоке А. К. Джеймсу

НАА, ф. 200, оп. 1, д. 193, ч. 2, л. 336-337

Париж, 7 марта 1919 г.

My dear Mr. [A. C.] James,

With regard to the earnest request made by the Armenian National Delegation for seed wheat required for the relief of Armenia, I understand that you agree with the idea that it is too late to bring any seed wheat from North America in time for the spring planting.

I agree entirely in your proposition, however, that clothing and other supplies now belonging to the Mission for Relief in the Near East in Constantinople be sent at once to Kuban for trading purposes in order to obtain there available seed wheat and transport same to Armenia. The Commission for Relief in the Near East has available a very much larger personnel in this district than we have, and I should think that the most practicable plans would be for you to take entire charge of this transaction.

In accordance with the suggestion contained in the cable from Messrs. [C. H.] Dodge & [C. V.] Vickrey to you of February 22nd, the American Relief Administration will be very glad to pay one-half of the entire cost of this operation to the Armenian Relief, and Mr. [H. C.] Heinz, Chief of the American food Mission at Constantinople, will assist the operation to the full extent of his ability.

In view of the provision of our Appropriation Act that expenditures shall be reimbursed as far as possible by the governments of the population to whom relief is

⁴³ *Ibid.*, f. 2.

⁴⁴ *Ibid.*, 860J.48/60/f. 1, T1192, Reel 7, НАА, км 36.

⁴⁵ US NA, RG 59, 860J.48/77/Encl. 1/f. 1; doc. 75/Encl. 2/f. 1.

⁴⁶ Telegram № 3C-1576 by F. Macalum, May 1, 1921, to the NER Headquarters at New York. T1192, Reel 7, НАА, км 36.

⁴⁷ НАА, ф. 430, оп. 1, д. 1049, л. 5.

furnished, it would be desirable if you could obtain from the Armenian National Delegation, and any other body representative of the Armenians, an agreement that they will ultimately pay the cost of this operation in case a government is later established and that you should also take steps to obtain such reimbursement from any government which may be subsequently established.

Yours very truly. Herbert Hoover.

Мой дорогой господин А. К. Джеймс,

Относительно убедительных просьб Армянской национальной делегации о хлебном зерне, требующемся для помощи Армении, как я понял - вы согласны с мыслью, что уже слишком поздно везти любое зерно из Северной Америки для весеннего сева.

Тем не менее, я вполне согласен с вашим предложением немедленно послать на Кубань одежду и другие припасы, принадлежащие сейчас константинопольской Мис-сии помощи на Ближнем Востоке, для торговли, чтобы приобрести там имеющийся зерновой хлеб и доставить его в Армению. Комиссия помощи на Ближнем Востоке располагает гораздо большим штатом сотрудников в этом районе, чем мы, и я полагаю, что наиболее целесообразным выходом было бы, если бы вы взяли всю эту ответствен-ность на себя.

В соответствии с советом, который 22 февраля телеграфировали вам господа К. Х. Додж и Ч. В. Викри, Американская администрация помощи будет очень рада вы-платить Армянской помощи половину всей стоимости этой сделки, и начальник Американской продовольственной миссии в Константинополе г-н Г. К. Хейнц сделает все от него зависящее, чтобы содействовать данной сделке.

Учитывая положение Закона об ассигнованиях, что расходы будут оплачены, по мере возможного, теми правительствами, населению которых предоставляется помощь, было бы желательно, чтобы вы смогли заключить с Армянской национальной делега-цией и любым другим представительным органом армян соглашение, что они оплатят в конечном итоге стоимость этой сделки, если позднее будет учреждено правительство; и чтобы вы также предприняли шаги для получения такого возмещения от любого правительства, которое может установиться впоследствии.

Искренне Ваш, Герберт Гувер.

Документ № 2

телеграмма директора Американской продовольственной администрации

Г. Гувера – директору АПА в Константинополе Г. Хейнцу

ф. 200, оп. 1, д. 193, ч. 2, л. 332

Париж, 10 марта 1919 г.

On the basis of the populations over which our resources must be divided compared to the populations served by Far Eastern Commission, they are entitled to about one five thousand ton cargo of cereals flour rice beans per month. Proposed ration of one pound per day is nearly double most nations under relief. My view is to supply one cargo per month as above beginning April first. Please take up matter with Dr. [J. L.]

Barton and if he agrees to this arrangement settle that he secures undertaking to pay by Armenian provisional government. Suggest Doctor [J.] Barton's Committee try to secure outward goods from Armenia to U.S. to be consigned to his committee in New York for realization for their purposes. There is no hope of securing American seed in time for planting. Hoover.

Принимая за основу количество населения, для которого мы посылаем припасы, в сравнении с населением, которое обеспечивает [наша] Дальневосточная комиссия, вы можете рассчитывать на один грузовой пароход с приблизительно 5.000 т. зернового хлеба, муки, риса и бобов в месяц. Предлагаемая норма питания в один фунт в день почти в два раза больше той, которую потребляет большинство получающих помощь наций. Рассчитываю доставлять один вышеуказанный грузовой пароход в месяц, начиная с 1 апреля.

Обсудите пожалуйста это предложение с д-ром Дж. Бартоном, и если он согласится на мои условия, организуйте, чтобы он обеспечил платежное обязательство армянского временного правительства. Посоветуйте Комитету д-ра Дж. Бартона, чтобы он постарался обеспечить передачу вывозимых из Армении в США товаров его нью-йоркскому комитету для реализации в их целях. Мы не надеемся достать в Америке зерновой хлеб для посевов вовремя. Гувер.

Документ № 3

телеграмма директора Американской продовольственной администрации

Г. Гувера – директору АПА в Константинополе Г. Хейнцу

ф. 200, оп. 1, д. 193, ч. 2, л. 335

Париж, 10 марта 1919 г.

...Bread.

...In view of threatened scarcity of shipping cannot spare flour for Kouban but instead am willing to join fifty-fifty with Commission for Relief Near East in sending cargo clothing and supplies which am informed Dr. [J.] Barton can forward from his stocks Constantinople to Kouban in exchange for seed wheat for Armenia. Am willing to pay half entire cost this operation to the Armenian Relief the details of shipping barter and distribution to be handled by Dr. [J.] Barton's organization but with your approval and cooperation.

In view of the provision our Appropriation Act that expenditures shall be reimbursed as far as possible by Governments to whom relief is furnished, it is desirable you obtain from Armenian national Delegation and any other body representative of Armenians an agreement that they will ultimately pay the cost of this operation when a Government is later established.

Above proposition is in line with cablegram of February 22nd to [A. C.] James from [C. H.] Dodge and [C. V.] Vickrey after consultation meets with approval of [A. C.] James.

...Хлеб.

...Учитывая опасную нехватку пароходов, не могу выделить муку для Кубани, но вместо этого готов подключиться пополам с Комиссией помощи на

Ближнем Востоке, для посылки груза одежды и других припасов, которые, как мне сообщают, д-р Дж. Бартон может направить со своих складов в Константинополе на Кубань, в обмен на посевное зерно для Армении. Намерен заплатить половину всей стоимости этой сделки Армянской помощи; детали товарного обмена [этой] перевозки и распределения возъ-мет на себя организация д-ра Дж. Бартона, но с Вашим одобрением и содействием.

Ввиду того, что наш Закон об ассигнованиях предписывает, что все расходы будут, по мере возможного, возмещены правительствами тех стран, которым предоставлена помощь, желательно, чтобы Вы достигли соглашения с Армянской национальной делегацией, а также с любым другим представительным органом армян о том, что они оплатят в конечном итоге стоимость этой сделки, когда позднее там будет учреждено правительство.

Вышеизложенное предложение взаимосвязано с телеграммой К. Доджа и Ч. Викри А. К. Джеймсу от 22 февраля и после совещания одобрено А. К. Джеймсом.

1918-1920 թթ. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ ԱՄՆ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

___ Սահմանում ___

___ Գ. Մախմուրյան ___

ԱՄՆ Պետդեպարտամենտի և Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերը հնարավորություն են տալիս առանձնացնելու այն երեք հիմնական խնդիրները, որոնք պետք է հաղթահարեր քաղաքը 1918-1920 թթ.: Դրանք էին՝ խաղաղ աշխատանքի վերականգնումը, պաշտպանության կազմակերպումն ու գաղթականների խնամքը: Պետք է նկատի առնել այն իրողությունը, որ 1918թ. դեկտեմբերի 26-ին՝ հեռանալուց առաջ, թուրքական բանակը ականապատել էր բոլոր կարևոր շենքերը, քաղաքի կայարանը, շոգեքարշերն ու վագոնները:

Այս փաստաթղթերը լուսաբանում են նաև ՀՀ բանակի ու թուրք բնակչության միջև ծագած ռազմաքաղաքական բախումներին ամերիկյան առաքելության պետ, փոխգնդապետ Դ.Ռոբինսոնի միջամտությունը, ՀՀ առաջին համալսարանի բացումը, Մերձավոր Արևելքում նպաստամատույցի Կովկասյան մասնաճյուղի գլխավոր տնօրեն Է.Յարրուի ջանքերով 1920թ. օգոստոսի 1-ից նրա նստավայրը Ալեքսանդրապոլ տեղափոխելը և այլն: Այս վավերագրերը բավանդակալից են և կարող են լրացուցիչ տեղեկություններ հաղորդել Ալեքսանդրապոլ քաղաքի 1918-1920թթ. տարած գոյապայքարի մասին:

Сведения об авторе

Махмурия Гаяне Георгиевна – д. и. н., Институт истории НАН РА.

E-mail: ggmakhm@hotmail.com, gmakhmourian.research.sci.am

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ՀԵՂԿՈՄՆԵՐԻՑ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում հաստատված խորհրդային իշխանությունը, չունենալով սոցիալական լայն հենարան, հենց սկզբից պետականաշինության հիմքում դրեց քաղաքական բռնությունների գաղափարը՝ կիրառելով Խորհրդային Ռուսաստանի փորձը: Խորհրդային Հայաստանի պետականաշինության մեջ Ռուսաստանի ազդեցության, մասնավորապես, քաղաքական բռնությունների ներդրման գործելակերպը, ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Պետական և քաղաքական առանձին գործիչների՝ տեղի կարիքներից բխող քաղաքականություն իրականացնելու ջանքերն անհաջողության մատնվեցին: Բազմաթիվ հայորդիներ՝ մտավորականներ, պետական քաղաքական գործիչներ, անողոք պայքարի դուրս եկան միմյանց դեմ: Ի վերջո նրանք բոլորը հայտնվեցին ստալինյան բռնությունների ընդհանուր մատաղացում: Երկրում հաստատվեց բոլշևիկյան միակուսակցական վարչակարգ՝ իրեն բնորոշ կուսակցական նոմենկլատուրայի ձևավորմամբ:¹

Խորհրդային Հայաստանի ներքին կյանքին բնորոշ այս իրողությունն առանձնակի դրսևորվեց Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ խորհրդային իշխանության մարմին՝ հեղկոմ, ստեղծվել էր դեռևս թուրքական բռնակալման շրջանում՝ 1920թ. նոյեմբերի 17-ին, որը, սակայն, Հայաստանի կոմունիստական կուսակցության պահանջով 1921թ. հունվարի 25-ին վայր էր դրել լիազորությունները:²

Ալեքսանդրապոլի գավառում կոմունիստական կուսակցության քաղաքականությունը իրականացրել էր 1920թ. հունվարին ստեղծված Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության գավառային ժամանակավոր կոմիտեն, որին կից ստեղծվել էին մի շարք բաժիններ՝ ինֆորմացիոն կազմակերպչական, հաշվառման և բաշխման, ազիտացիոն պրոպագանդիստական, գյուղացիների և կանանց մեջ աշխատելու:³ Կազմբյուրոն բաղկացած է եղել կազմակերպչական բաժնից (Արշակունի), Ազիտբաժնից (Ժ. Արեշյան) և տեղեկատու «Հաշվառման-բաշխման բաժնից» (Գողթունի):*

¹ Հակոբյան Ա., Նոմենկլատուրայի ձևավորումը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին, Վեմ, Եր., 2015, էջ 18-52:

² Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի բոլշևիկյան հեղկոմի գործունեությունը 1920թ. նոյեմբեր-1921թ. հունվարին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., հ.1, 1998, էջ 117-125:

³ ՀԱԱ, ֆ.3, ց.1, գ.6, թ.14:

* Հայաստանի կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության կոնֆերանսում ապրիլի 15-ի վերընտրության արդյունքում Կուսկոմի անդամներ էին

Հեղկոմի կողմից իշխանությունը թողնելուց հետո գավկոմն իր հիմնական խնդիրներն էր համարել կուսակցության հեղինակության բարձրացումը և կուսակցականների թվի ավելացումը: Ընդ որում, ստեղծված սոցիալ-տնտեսական անտանելի պայմաններում շատերը մտել էին կուսակցության շարքերը մի կերպ իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Կուսակցականների գավկոմին ուղղված բազմաթիվ դիմումներից երևում է, որ գավկոմի հաշվառման և բաշխման բաժնի ձեռքում կենտրոնացված էին առաջին անհրաժեշտության իրեր և մթերքներ, որոնք բաշխվում էին միայն կուսակցական ընկերներին:⁴

Կոմունիստական կուսակցության հեղինակությունը բարձրացնելու և Ալեքսանդրապոլի խորհրդայնացումը նախապատրաստելու նպատակով 1921թ. ապրիլի 5-16-ին այստեղ անցկացվել էր Հայաստանի կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի քաղաքային կազմակերպության առաջին կոնֆերանսը, որը, դատապարտելով թուրքական ռազմակալման շրջանում ստեղծված հեղկոմի գործունեությունը և որակելով այն «ծայրաստիճան մեծ սխալ և վարկաբեկիչ խորհրդային իշխանության կոմունիստական կուսակցության համար», հիմք էր հանդիսացել կուսակցության և իշխանության հակասությունների, հետագայում նաև հեղկոմի անդամներին բռնությունների ենթարկելու համար:⁵

Խորհրդային իշխանության հաստատման սկզբնական ամիսներին կոմունիստական կուսակցությունը, չունենալով համապատասխան կադրեր, օգտագործում էր ոչ դաշնակցական կուսակցությունների կադրերին: 1921թ. ապրիլի 23-ին թուրքերի հեռանալուց հետո Պ. Մակինցյանի նախագահությամբ տեղի ունեցած հեղկոմի նիստում կազմավորվում է Լ. Մարգարյանի* գլխավորությամբ Ալեքսանդրապոլի գավառային հեղկոմը՝ Վարչական (բաժնի պետ՝ Հ. Ամատունի), Պարենավորման, Ֆինանսական և գյուղատնտեսական, (Լ. Մարգարյան) Լուսավորության (Հ. Աբրահամյան), Սոցիալական ապահովության և աշխատանքի (Հանեսօղյան), ժողտնտեսության (Կուրդինյան), Արդարադատության (Թ. Մանդալյան) և Առողջապահության բաժիններով (Գողթունի): Հետագա օրերին ստեղծվում են նոր բաժիններ, վիճակագրական, իրավաբանական, կոմունալ տնտեսության, փոստ-հեռագրական, ֆինանսական բաժին կից ստեղծվում է վալյուտային ենթաբաժին սպեկուլյացիայից խուսափելու համար:⁶ Ապրիլի 24-ին գավառային հեղկոմը վերանվանվում է շրջանային հեղկոմ՝ այն պատճառաբանությամբ, որ իր տրամադրության տակ մի ամբողջ շրջան է գտնվում: Հեղկոմին կից ստեղծվում է Ար-

հաստատվել Մանդալյանը, Գողթունին, Արշակունին, Արեշյանը, Վահան Աբրահամյանը, Խաչիկօղյանը և Մարկոսյանը: Կազմվել էին քաղաքական և կազմակերպչական բյուրոներ: Մանդալյանը, Գողթունին, Արշակունին մտել էին Քաղբյուրոյի կազմ, իսկ մյուսները, բացի Խաչիկօղյանից, որը կուսկոլեգիայի պատասխանատու վարիչ էր նշանակվել, կազմել էին Կազբյուրոն:

⁴ ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 4:

⁵ Վիրաբյան Ա., Ալեքսանյան Կ., Հայաստանի կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի քաղաքային կազմակերպության կոնֆերանսի արձանագրությունները, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2015, էջ 170-199:

* Լևոն Մարգարյանը սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ էր:

⁶ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3^ա, գ. 99, թ. 1:

տակարգ հանձնաժողով, որը ենթարկվելու էր հեղկոմին: Արձակվում է հին գավառային միլիցիան, ստեղծվում է նորը: Ժամանակավորապես, մինչև կենտրոնից հրահանգներ ստանալը կազմակերպվում է ժողովրդական դատարան: Հատուկ հանձնարարությունների խմբակի կուսակցական ընկերներին մտցնում են Արտակարգ հանձնաժողովի, իսկ անկուսակցականներին՝ միլիցիայի կազմի մեջ: ⁷

Հեղկոմի նախագահ Լ. Մարգարյանը, լինելով ճկուն քաղաքական գործիչ,^{*} ձեռնամուխ է լինում տեղական կարիքներից բխող սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացմանը, թուրքական զինակալման պայմաններում վեց ամիս գտնված գավառի բնակչության սոցիալական հարցերի լուծմանը: Նախևառաջ կարգավորվում է դրամական շրջանառությունը. իբրև դրամական հիմնական վալյուտա ճանաչվում է Խորհրդային Ռուսաստանի ռուբլին, որի հետ հավասար արժեք է տրվում Խորհրդային Վրաստանի և Ադրբեջանի թղթադրամներին: (Հայկական չեկերը հինգ անգամ պակաս արժեք ունեին, քան խորհրդային թղթադրամները): Հրատարակված 1000 ռուբլի չեկերի շրջանառությունը համարվում է պարտադիր: Շրջանառության մեջ եղած Ս. Մատինյանի չեկերն իբրև կեղծ դրամներ չեն ընդունվում, իսկ Մատինյանին՝ որպես կեղծարարի ձեռքակալում են:^{*} Կեղծ դրամներ հատողների գույքը բռնագրավվում է: Չեն ընդունվում նաև քաղաքային ինքնավարության չեկերը:

Լ. Մարգարյանը խիստ դեմ էր բռնագրավումների քաղաքականությանը: Ցանքսը շուտափույթ սկսելու համար նա հատուկ հանձնաժողով է կազմակերպում քաղաքացիներից փոխարինաբար հացահատիկ վերցնելու համար: Ալեքսանդրապոլի հեղկոմը, մի կողմից՝ ստիպված լինելով իրականացնել կոմունիստական կուսակցության բռնագրավումների քաղաքականությունը, մյուս կողմից՝ փորձում էր մեղմել դրանք: Թեև հեղկոմի ապրիլի 25-ի որոշմամբ ազգայնացվում էին քաղաքում և շրջանում գտնվող տպարանները, ջուլիականոցները, գործարանները, գործատները և նման հիմնարկությունները, այնուհանդերձ դրանք դրանք թողնվում էին իրենց նախկին տերերի ղեկավարության տակ: Մասնավորապես, հեղկոմի ապրիլի 28-ի թիվ 3 հրամանով ազգայնացված ձեռնարկությունների տերերը հնարավորություն էին ստանում ղեկավարելու իրենց հիմնարկները և վարձատրվելու խորհրդային ծառայողների համար սահմանված վարձատրության ամենաբարձր չափով:⁸ Հեղկոմի նախագահ Լ. Մարգարյանի ապրիլի 28-ի թիվ երկու հրամանով խանութպաններին հորդորվում էր բացել խանութները և աշխատել,

⁷ ՀԱՄ, ֆ.144, ց.3^ա, գ.99, թ.2:

^{*} Լեոն Մարգարյանը 1918 և 1920 թվականներին թուրքական ռազմակալումների շրջանում կարողացել էր համաձայնության գալ թուրքերի հետ, 1918թ. մայիսից – դեկտեմբեր ամիսներին ստեղծել և գլխավորել էր Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը, 1920թ. դաշնակների կողմից քաղաքը լքելուց հետո, գլխավորել էր Մ. Միլիկյանի կողմից ստեղծված իշխանության կռալիցիոն մարմինը: Մակայն թուրքերը շուտով նրան հեռացրել էին իշխանությունից, գործակցել բոլշևիկների հետ՝ ստեղծելով Ալեքսանդրապոլի հեղկոմը:

^{*} Սերգո Մատինյանը Ալեքսանդրապոլի գավառի միլիցապետն էր: Ալեքսանդրապոլի հեղկոմի իշխանությունից հեռանալուց հետո, թուրքերի համաձայնությամբ, Ալեքսանդրապոլում ստեղծել է ժամանակավոր իշխանության մարմին, իսկ 1921թ. մարտից իրեն հռչակել դիկտատոր:

⁸ ՀԱՄ, ֆ.144, ց.3, գ.10, թ.2:

քանի որ «յայտարարած է ազատ առևտուր, որոնք յիշեալ ժամանակամիջոցին չեն բաց անի խանութները, վերջիններումս գտնուած ամբողջ ապրանքը կը գրաւի և կը համարւի պետական սեփականութիւն»:⁹

Հեղկոմի կարգադրությամբ հատուկ հանձնաժողով է կազմավորվում Հ. Ամատունու գլխավորությամբ թուրքերի հասցրած վնասները ճշտելու համար: Ամատունին իր վրա է վերցնում նաև թուրքերի կողմից տարված սայլերը վերադարձնելու հարցը:^{*}

Չափազանց մեղմ և զիջող քաղաքականություն էր նախատեսվում վարել նաև Ամերկոմի նկատմամբ: Ալեքսանդրապոլի հեղկոմը հատկապես կարևորում էր գաղթականների խնամատարության գործը:¹⁰ Առաջին իսկ նիստում որոշվում է առողջապահության բաժնի վարիչ Գողթունուն հանձնարարել հսկողության տակ վերցնել որբանոցները և փողոցներից հավաքել որբերին:¹¹ Քայլեր են ձեռնարկվում գաղթականներին տեղավորելու ուղղությամբ: Մասնավորապես, փորձում են բնակարանային սղության և աննպաստ սանիտարական խնդիրները լուծել գավառի գյուղերից քաղաք գաղթած արևմտահայ գաղթականներին վերադարձնելու ճանապարհով:¹² Գաղթականներին գյուղերը տեղափոխելով շրջանային հեղկոմը ցանկանում էր լուծել նաև քայքայված գյուղերի վերաշինության և գաղթականների պարենավորման հարցերը: Սակայն արևմտահայ գաղթականների մեծ մասը, որ թուրքերի ներխուժումից առաջ, թողնելով իրենց ունեցվածքը փախել էր, վերադառնալով տեսնում է, որ իր ունեցվածքից ոչինչ չի մնացել: Անելանելի վիճակի մեջ հայտնված գաղթականները փորձում են հետ ստանալ իրենց ունեցվածքը, սակայն դա նրանց չի հաջողվում: Գյուղացիները հրաժարվում են վերադարձնելուց՝ պատճառաբանելով, որ թուրքերը թալանել են դրանք:¹³ Մյուս կողմից՝ օրեցօր ավելացող գորքի պահանջները բավարարելու համար Ալեքսանդրապոլի տեղական իշխանություններն ստիպված էին հեռացնել գաղթականներին հանրակացարաններից և բնակարաններից: Շատ դեպքերում զինվորական մարմինները, չսպասելով հեղկոմի կարգադրությանը, դատարկում էին բնակարանները: Սոցապահովության բաժնի վարիչի՝ Ներքին գործերի վարչությանն ուղղված 1921թ. մայիսի 18-ի գրության մեջ նշվում էր, որ զինվորական մասերից մեկը, բնակարա-

⁹ ՀԱՍ, ֆ.144, ց.3, գ.10, թ.1:

^{*} 1921թ.ապրիլի 1-ին Ալեքսանդրապոլում թուրքական բանակի հրամանատար Օսման Նուրի բեյի և շրջանային հրամանատար Թալեաթ բեյի կարգադրությամբ քաղաքի միլիցապետը բնակիչներից վերցնում է 62 սայլ՝ իրենց սայլապաններով թուրքական զնդերը մթերքներ տեղափոխելու համար՝ 4 օրվա ընթացքում վերադարձնելու պայմանով: Սայլապանների մի մասը, չդիմանալով թուրքերի պատճառած տանջանքներին, թողնում է սայլերը և վերադառնում: Թուրքերը բազմաթիվ դիմումներից հետո վերադարձնում են միայն 22 սայլ՝ առանց սայլապանների:

¹⁰ Ալեքսանյան Կ., Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատման շրջանում/ (1921թ. ապրիլ-դեկտեմբեր)/, ՀՀ ԳԱԱ, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Եր., 2010, էջ 140-143:

¹¹ ՀԱՍ, ֆ.144, ց.3^ա, գ.99, թ.1:

¹² ՀԱՍ, ֆ.144, ց.1, գ.63, թ.4:

¹³ ՀԱՍ, ֆ.144, ց. 3^ա, գ. 84, թ.13-14:

նային բաժնի օրդերի համաձայն, առաջարկել է մի ժամկա մեջ դատարկել Շիլաճյանների տունը, որտեղ տեղավորված էր «Մի կաթիլ կաթ» որբանոցը:¹⁴

Խորհրդային իշխանության պետական ու կուսակցական մարմինները լուրջ տարաձայնություններ ունեին իրականացվող քաղաքականության և իրավասության սահմանների վերաբերյալ: Նորաստեղծ հեղկոմի և գավկոմի իրավասությունների սահմանը երկար ժամանակ չէր ճշտվում: Չնայած որ գյուղական, գավառակային և գավառական հեղափոխական կոմիտեների կազմակերպման մասին ՀՍՄՀ ժողկոմսովետի դեկրետով հստակ մատնանշվում էին հեղկոմների գործառույթները,¹⁵ այնուամենայնիվ կուսակցական մարմինները հաճախ իրենց վրա էին վերցնում նաև դրանք: Պատասխանատու պաշտոնների համար թեկնածությունները վերապահվում են կուսակցական գավառային կոմիտեին: Շատ դեպքերում այդ պաշտոններում նշանակված մարդիկ չէին համապատասխանում իրենց պաշտոններին: Մասնավորապես, Առողջապահության բաժնի վարիչը, ծանոթանալով գործերին, մի քանի օր անց խնդրում է իրեն ազատել այդ գործից և մասնագետի նշանակել:^{*} Իրավասությունների սահմանների հստակեցման բացակայության պայմաններում գավառում հաստատված երկիշխանությունը սպառնում էր գավառը մատնել անիշխանության և քաոսի: Այստեղ ակնհայտ էին ինչպես կուսակցական և խորհրդային իշխանության տեղական մարմինների, այնպես էլ կենտրոնական և տեղական համապատասխան մարմինների հակասությունները թե՛ իրականացվող քաղաքականության և թե՛ իրավասության սահմանների վերաբերյալ: Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Լ. Սարգսյանը կարծում էր, թե ժողկոմները պաշտոններ նշանակելու իրավունք չպետք է ունենան առանց իրենց հետ համաձայնեցնելու, մինչդեռ այդպիսի դեպքերը եզակի չէին: Ապրիլի 30-ին հեղկոմի նիստում Սոցիալական ապահովության բաժնի վարիչի մանդատով ներկայանում է բժիշկ Տեր-Սահակյանը, թեև Մակինցյանի նախագահությամբ ապրիլի 23-ի նիստում այդ պաշտոնը հանձնված էր եղել և բաժնի վարիչը աշխատանքի մեջ էր:¹⁶

Կուսակցության քաղաքականությունը իրականացնելու համար գյուղեր ուղարկված գավկոմի ներկայացուցիչները տեղերում հաճախ հանդիպում էին գավառային հեղկոմների թշնամական վերաբերմունքին:¹⁷ Կուսակցական և խորհրդային իշխանությունների միջև հիմնական հակասությունը իրականացվող բռնագրավումների քաղաքականությանն էր վերաբերում: Բռնագրավումները կրում էին անկանոն և զանգվածային բնույթ: Ընդ որում, դրանով զբաղվում էին թե՛ գավկոմի, թե՛ հեղկոմի և թե՛ զինկոմի ներկայացուցիչները: Այս վիճակին վերջ տալու նպատակով Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմի ՆԳ բաժնի վարիչ Հ. Ամատունին 1921թ. մայիս 6-ի շրջաբերականով արգելում է ամեն տեսակի բռնագրավում-

¹⁴ ՀՍՄՀ, ֆ.144, ց.1, գ.63, թ.14:

¹⁵ Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, Եր., 1974, էջ 63-71:

^{*} Հեղկոմը մերժում է այդ խնդրանքը:

¹⁶ ՀՍՄՀ, ֆ.144, ց.3^ա, գ.99, թ.3:

¹⁷ ՀՍՄՀ, ֆ.3, ց.1, գ.9, թ. 2:

ներն ու խուզարկությունները, առաջարկում միլիցիայի պետին և գավիեղկումների նախագահներին իրենց իսկ պատասխանատվությամբ անմիջապես դադարեցնել անպատասխանատու անձանց ինքնակամ ապօրինի գործունեությունը և խստագույնս հսկել սույն շրջաֆերականի իրագործումը: Իսկ մինչ այդ տեղի ունեցած բոլոր խուզարկությունների և բռնագրավումների մասին խիստ քննություն կատարելուց հետո շուտափույթ իրազեկ անել իրեն:¹⁸ Սակայն Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմի նախագահ Հայկ Ամատունու բազմաթիվ շրջաֆերականները բռնագրավումներն արգելելու վերաբերյալ վկայում են, որ դրանք չէին դադարում:¹⁹ Իշխանության լծակներն օգտագործվում էին Ալեքսանդրապոլի գավառում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում ապրուստի միակ միջոց համարվող բռնագրավումներն իրականացնելու նպատակով: Չկարողանալով կասեցնել համատարած բնույթ ստացած բռնագրավումները, թուրքական բռնակալման շրջանում մինչև վերջ թալանված բնակչության շրջանում խորհրդային իշխանությունից առաջացած դժգոհությունները մեղմելու և կուսակցության հեղինակությունը բարձրացնելու համար կոմունիստական կուսակցությունը մեղադրում է խորհրդային իշխանության մարմիններին: Հեղկոմներից հեռացվում են նախկին կադրերը, որոնք իբր թե ճիշտ չեն իրականացրել կուսակցության քաղաքականությունը: 1921թ. մայիսի 29-ին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն սկսում է իրականացնել կուսակցության վերացուցակագրում՝ նպատակ ունենալով կուսակցությունից հեռացնելու մտավորականներին, հիմնականում նախկին մանրբուրժուական կուսակցությունների անդամներին, որոնց գիտելիքներն ու փորձը օգտագործել էր խորհրդային իշխանության հաստատման առաջին շրջանում: «Կուսակցութեան անձնական կազմը վերաքննելիս, -ասվում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության բոլոր կազմակերպություններին ուղղված հունիսմեկյան կոչում,- կրկնակի ուշադրութիւն պէտք է դարձնել այն անդամների վրա, որոնք դուրս են եկել ունեւոր դասակարգի ծոցից: Նրանց նւիրածութիւնը կուսակցութեան գաղափարներին պէտք է և հնարաւոր է փորձել ու ստուգել քաղաքացիական կուի ընթացքում նրանց բռնած դիրքից: Վերացուցակագրողների, յանձնաժողովների և ամեն մի կուսակցական ընկերոջ կրկնակի քննութեան առարկա պիտի դառնան և մեր կուսակցութեան այն անդամները, որոնք պատկանելիս են եղել նորերս մեզ միացած ազգային մանր բուրժուական կուսակցութիւններին:

Աւելի զգուշավոր վերաբերմունք պէտք է ցոյց տալ և ընդառաջ գնալ բանւորներին և գիւղացիներին՝ թեկուզ նրանք քաղաքականապէս պակաս պատրաստութիւն ունենան: Կուսակցութիւնը կարճ ժամանակամիջոցում կկարողանա նրանց քաղաքականօրէն, կոմունիստօրէն մարզել, միայն թէ նրանք դասակարգայնօրէն լինեն մեր կուսակցութեան բարեկամները և նւիրած բանւորա-գիւղացիական յեղափոխութեանը»²⁰:

¹⁸ ՀՄԷ, ֆ.3, ց.1, գ.19, թ.10:

¹⁹ ՀՄԷ, ֆ.144, ց.3, գ.96, թ.8:

²⁰ ՀՄԷ, ֆ.3, ց.1, գ.15, թ. 5:

1920թ. մայիսի 30-ին Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Լ. Մարգարյանը հեռացվում է պաշտոնից: Հեղկոմի նախագահ է նշանակվում Ս. Մանուցյանը, որը ձեռնամուխ է լինում դասակարգային պայքարի սրմանը: Նրա առաջին իսկ հրամանով առաջարկվում է գավառային և գյուղական հեղկոմներին պաշտպանել աղքատ գյուղացիների շահերը հարուստներից՝ սպառնալով հակառակ դեպքում խիստ պատժել նրանց: «Շատ ունևորներ, -ասված էր հրամանում-, օգտուելով աղքատ գյուղացիների վիճակից, հացահատիկ են տուել վերադիր վճարով աշնանը վերադարձնելու նպատակով: Ոչ մի վերադիր վճար գոյություն չունի, աղքատ գյուղացին պետք է վերադարձնի այնքան, որքան նա իր ժամանակին ստացել է:

Աղքատի արտերի վրա ցանած ունևորից պետք է վերցնել բաւարար արդիւնք և տալ հողատիրոջը: Իսկ եթէ աղքատը ցանեց ունևորի արտերը, առանց որևէ վերջինիս գործ դրած աշխատանքի, ոչ մի վճար չի տրուում:

Կուլակը հարաքաշութեամբ /ընկերովի/ աղքատ գյուղացու հետ ցանք է արել և աղքատին դրել ամենադժուար դրութեան մեջ: Նման պայմանները ոչնչացւում են և հրահանգւում է դատարաններին յեղափոխական խճով քննելու նման վեճերը և բաւարարելու տկարներին:

Բոլոր զրկւածները պետք է դիմեն իրենց մօտակա դատական ատեաններին և պաշտպանեն իրենց իրաւունքները: Մնացած վեճերը պետք է քննեն տեղական յեղկոմները, պաշտպան հանդիսանան զրկւածներին»²¹:

1921թ. հունիսի 1-3-ին Ալեքսանդրապոլի գավառում տեղի է ունենում կուսակցության անդամների վերացուցակագրում, որի հիմնական նպատակը մտավորականներին կուսակցությունից և խորհրդային իշխանության մարմիններից հեռացնելն էր: Գավառային վերացուցակագրման նախագահ Աշոտ Հովհաննիսյանը՝ Վերացուցակագրման կենտրոնական հանձնաժողովին ուղղված զեկուցման մեջ նշում է, որ «Ալեքսպոլի կազմակերպությունը, հակառակ կենտրոնում տիրող կարծիքի, աւելի քան թոյլ է, գեթ կազմակերպութեան մէջ մտնող անդամների զարգացման ընդհանուր մակարդակով: Ինտելիգենտ կուսակցութիւնների մեծ մասը բացարձակ արտահայտութեամբ ոչ մի հասկացութիւն չունի կոմունիստական աշխարհայացքի հիմնական գաղափարների մասին: Եվ որպէսզի կուսակացութիւնը, գերծ մնայ դրանց անխուսափելի վրիպումների պատասխանատւութիւնից, հանձնաժողովը անկետաներ ընդունելիս հարցաքննում էր ընկերներից շատերին, հատկապէս կասկած հարուցող ինտելիգենտներին»:²²

Կուսակցության անձնական կազմը ստուգող և մաքրող գավառային հանձնաժողովի ՀԿԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության բոլոր անդամներին և թեկնածուներին ուղղված կոչում նշվում էր, որ կուսակցությունն իր շարքերից մաքրելու է սոցիալիստական հեղափոխության և պրոլետարական դիկտատուրա-

²¹ ՀԱՍ, ֆ.144, ց.3, գ.10, թ.15

* Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի (1887-1972) – խորհրդային կուսակցական և պետական գործիչ, պատմաբան, 1921թ. ՀՄԽՀ լուսավորության ժողկոմ:

²² ՀԱՍ, ֆ.1, ց.1, գ.158, թ.2:

յի թշնամիներին:²³ Իրականում կուսակցության շարքերը ստվարացել էին, քանի որ կուսակցությանը անդամագրվելը հնարավորություն էր տալիս լուծելու գոյության տարրական պայմանները՝ սկսած մի գույգ կոշիկից և վերջացրած ամենաանհրաժեշտ իրերից: Մինչդեռ նրանք մեղադրվում էին կուսակցության ձախողումների մեջ, համարվում ժողովրդի թշնամի: Մաքրագործումը կատարվում էր ամենախիստ հիմունքներով: Կոմունիստները ներկայացնելու էին իրենց կենսագրությունը, հատկապես աշխատանքի վայրը պատերազմից առաջ և գործունեությունը փետրվարյան ապստամբության տարիներին: Քանի որ երկրում ստեղծված տնտեսական դժվարությունները մեծ մասամբ պայմանավորում էին փետրվարյան ապստամբության հանգամանքով: Ընդ որում, կենսագրության ճշտությունը պետք է հաստատված լիներ երկու կուսակցական անդամների կողմից:²⁴

Ալեքսանդրապոլի գավառի կուսակցականների 1921թ. հունիսի 1-3-ը տեղի ունեցած վերացուցակագրման ընթացքում կուսակցությունից հեռացվում են մեծ մասամբ խորհրդային իշխանության մարմիններում աշխատողները: Նրանցից շատերը ոչ միայն հեռացվում են կուսակցությունից, այլ նաև ձերբակալվում: 1921թ. հունիսի 23-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության ընդհանուր ժողովը որոշում է կուսակցությունից հեռացնել և բանտարկել Հեղկոմի ներքին գործերի բաժնի վարիչ Հայկ Ամատունուն և իր ընկերներին, նրա տեղակալ Ստեփանյանին, Մարգարյանին և Մարգարյանին: Բանտարկվածները մեղադրվում են պաշտոնները չարաշահելու, պաշտոնական պարտականությունները չկատարելու մեջ: «Նրանք, -ասված էր այդ որոշման մեջ,- լինելով պատասխանատու պաշտոններում, վերջին ժամանակներս զբաղված էին միայն քեֆեր սարքելով: 26-ին յունիսի, երբ նշանակված էր Յեղկոմի արտակարգ նիստը, մասնակցությամբ հողժողովում ընկ. Երզնկեանի և ընկ. Վարդանեսանի մի քանի շատ կարևոր խնդիրներ քննելու, Ամատունին պատճառաբանելով, որ հիւանդ է, չեկաւ նիստին: Մինչդեռ նա նոյն ժամին գնում է հարսանիք և մինչև լոյս քեֆ անում: Գիշերը Ամատունու գլխավորությամբ և հովանավորությամբ, հարսանքաւորների խումբը, որտեղ էր ամբողջ քաղաքի աղմինիստրացիան, ատրճանակներից [կրակոցներ են] արձակում, որով և խանգարում են հանգիստը և ինցիդենտների առիթ տալիս: Միւս օրը պարոնները փոխանակ ամաչելու, ընդհակառակը, համարեա իրենց հիմնարկները չեն գնում և ժամը 1-ին հաւաքում են քաղաքացի Ամատունու տանը: Իսկ գիշերը, երբ Չեկան խուզարկու խմբեր է ուղարկում Տաճկաստանի սահմանակից Արփաչայի ափերը, ստացած մի քանի տեղեկությունների հիման վրայ այնտեղ գտնուում են քեֆ անողների մի խումբ ղեկավարությամբ քաղաքացի Ամատունու: Այնտեղ էին ութ անձ, նրա օգնականը, քաղաքային և գաւառային միլիցիաների պետերը և նոյն հիմնարկությունների պատասխանատու աշխատողներ:²⁵

²³ ՀՄԽ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 2:

²⁴ ՀՄԽ, ֆ. 3, ց. 1, գ. 15, թ. 2:

²⁵ ՀՄԽ ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 201-203:

Իր հերթին Ամատունին հուլիսի 4-ին բանտից նամակով դիմում է Պ. Մակինցյանին, փորձում արդարանալ, իր նկատմամբ վերաբերմունքը բացատրում իր գործունեությամբ: Այս նամակում Հ. Ամատունին անդրադառնում է ինչպես Ալեքսանդրապոլի հեղկոմի 1920թ. նոյեմբերի 17-ից հունվարի 25-ի, այնպես էլ գավկոմի և Ս. Մատինյանի, նաև Ս.Մանուցյանի գործունեությանը, մեղադրում վերջիններին:²⁶ Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմը Ամատունու՝ խորհրդային ընկերներին վարկաբեկելու գործելակերպը համարելով պրովոկացիա և վարկաբեկիչ խորհրդային իշխանության համար, օգոստոսի 8-ին որոշում է առաջարկել Ներքին գործոց բաժնի վարիչ Ա. Եսայանին վտարել Ալեքսանդրապոլի գավառից Ամատունուն և իր ընկերներին:²⁷ Իր հերթին Պ. Մակինցյանը հետ է կանչում Ս. Մանուցյանին և Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ նշանակում Ս. Վարդանյանին:^{*}

Փոխադարձ մեղադրանքների շարանին հավելվում է Սերո Մանուցյանի նամակը՝ ուղղված Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին: Ս. Մանուկյանը դժգոհելով Պ. Մակինցյանի գործունեությունից, միաժամանակ ներկայացնում է հեղկոմներից խորհուրդներին անցման ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի գավառում Հայաստանի կենտրոնական և տեղական խորհրդային իշխանության և կուսակցական մարմինների հարաբերությունների, թուրքական բռնազավթման հետևանքների, գավառի բնակչության սոցիալ-տնտեսական ծանր պայմանների և ընդհանրապես Խորհրդային Հայաստանի պետականաշինության իրական պատկերը:²⁸

Կոմունիստական կուսակցության հեղինակությունը բարձրացնելու նպատակով մինչև տարվա վերջ կուսակցությունից հեռացվում են մտավորականության մեծ մասը, հիմնականում նրանք, ովքեր մինչ խորհրդայնացումը եղել էին այլ կուսակցության անդամներ: Պարբերաբար իրականացվող գտումների հետևանքով կոմունիստական կուսակցությունն ապահովում է հաղթանակն առաջիկա ընտրություններում՝ դնելով կոմունիստական մենատիրության և քաղաքական բռնությունների հիմքերը:

²⁶ Ա. Հակոբյան, *Մի ամբաստանագիր Ալեքսանդրապոլի հեղկոմի խայտառակ գործերի մասին*, Վեն, 2015, թիվ 1, էջ 228-237:

²⁷ ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 311, թ. 129-130:

^{*} Վարդանյանը չի պաշտոնավարում:

²⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 114, թ. 30-32:

**ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО СОВЕТСКОГО
СТРОИТЕЛЬСТВА В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ ВО ВРЕМЯ
ПЕРЕХОДА ОТ РЕВОЛЮЦИОННЫХ КОМИТЕТОВ К СОВЕТАМ****____ Резюме ____****____ К. Алексанян ____**

В статье обсуждены вопросы строительства государственности Советской Армении, установления единоправия коммунистической партии и условия возникновения политических репрессий. В частности, представлена роль России и ее отрицательное политическое влияние в сфере строительства государственности Советской Армении.

Представлены отношения центральных и местных властей Армении с партийными органами в Александропольском уезде во время перехода от революционных комитетов к советам.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ալեքսանյան Կարինե Վանիկյանի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն,

E-mail: karineal@mail.ru

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

*ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

*Հայաստանի 25-ամյա վերանակախացումը վերածնունդ է, վերաիմաստավորում է,
վերաթարմացում է, վերակառուցում է, վերամիավորում է:*

Միջնադարում հայոց պետականությունների կորստին հաջորդել են պետականամարտության երկարատև ժամանակաշրջաններ: Արշակունյաց թագավորության անկումից հետո (428թ.) շուրջ 450 տարի, իսկ Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045թ.) շուրջ 870 տարի է պահանջվել Հայաստանն անկախ պետություն հռչակելու համար (1918թ.): Հերթական անգամ անկախ պետություն ունենալու հույսով հայ ժողովուրդը սպասել է դարեր շարունակ: Ժամանակը, հայրենի մտավորականները և հոգևորականներն այդ սպասման դալկությանը հաղորդել են իրենց փորձիմացությունը: Նրանք կրթության և դաստիարակության, գիտության, արվեստի, բանավոր ավանդագրույցների միջոցով սերունդներին փոխանցել են խաղաղապաշտության ձգտող կենսասփրություն, հզոր ազգի ժառանգորդ լինելու գիտակցություն և ազատ ապրելու գեղագիտություն: Օտար և հարևանական քաղաքակրթական միջավայրերում (բյուզանդական, պարսկական, ռուսական, արաբական, թուրքական) հայտնվելով՝ հայ հասարակությունն իր քաղաքական կամքն ամփոփել է մշակույթի մեջ: Հայ մշակույթը կազմել է հայկական քաղաքական խաղի հիմքը:

XIV-XVIII դարերում Հայաստանում կյանքի իրավունքի պաշտպանության հարցը հայկական մշակութային էզոն արտամղում է գաղթաշխարհ: Մշակույթ+ազգապահպանություն ± քաղաքականություն = Մայր Հայաստան բանաձևը դառնում է կենսակերպ:

XIX դարում գերմանական, ֆրանսիական, անգլիական և ռուսական մշակութային դեմպինգի պայմաններում հայաստանաբնակ հայությունն ազգային մշակույթի նոր մեկնաբանությամբ է հանդես գալիս: Նա քաղաքական քրիստոնեության դիրքերից սկսում է սպասարկել հայոց պետականակերտման ավանդույթներին: Դրանք են ազգային գաղափարախոսությունը, ազգային-իրավական նորմերը, բանակը, ազգային կրթությունը և դաստիարակությունը, քաղաքական արժեհամակարգը:

XIX դարի երկրորդ երեսնամյակից պետականակերտման տարրերից կարևորվում է ազգային-իրավական նորմերի մասին դրույթը:

** Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:*

1836թ. ցարական և 1863թ. սուլթանական կառավարությունների կողմից հաստատվում են հայերի կրոնահամայնական կյանքը կարգավորող կանոնադրություններ («Պոլոժենիե», Ազգային սահմանադրություն): Հոգևոր հայրերն այդ փաստաթղթերում նշմարում են հայոց պետականության վերականգնման սաղմեր: Նրանք փորձում են ամբողջովին վերանայել «Պոլոժենիեն» և այն համապատասխանեցնել հայոց պետության մասին իրենց ունեցած պատկերացումներին:¹ Ազատամիտ կայսր Ալեքսանդր II-ը, սակայն, ուշադրության չի արժանացնում մեր՝ իռացիոնալ հակումներով գործիչների նախաձեռնությունը: Ենթակա ազգերի հարցում Ռուսաստանի վարած քաղաքականությունը լրիվ հակառակ խոստումն էր տալիս բոված կարկանդակ սիրողներին. «չափավոր, թույլատրելի հայրենասիրություն»:

Հայոց պետականակերտման գաղափարախոսության համակարգում 1850-1870-ական թվականներին ուժեղանում են ազգային գաղափարախոսության և ազգային կրթության և դաստիարակության դիրքերը:

Հաջորդ տասնամյակներին հումանիտար ուսմունքներից լավատեղյակ և դրանց հետևորդ հայ մտավոր-հասարակական գործիչները հեռանում են տեսական հասարակագիտությունից: Խառնվելով Օսմանյան կայսրությունից անկախություն կամ անվտանգ ինքնավարություն պահանջող ազգերի² վազարշավին՝ վերոնշյալ բանաձևը նրանք խմբագրում են այսպես՝ մշակույթ + ազգապահպանություն + քաղաքականություն=Մայր Հայաստան: 1880-1900 - ական թվականների հայ ազատագրական պայքարն իր տարբեր դրսևորումներով ձոն է այդ մտածելակերպին:

XIX-XX դարերի սահմանագծին սկսում է կազմավորվել հայոց բանակը: Դրանով փակվում է քաղաքական հումակերտության ճանապարհը: Ազգի սահմանափակ հնարավորությունների և հայկական ավանդական դիվանագիտության փոշոտումից հետագայում ծնվում է Հայաստանի առաջին հանրապետությունը:

Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրապոլը, հիմնադրվել է XIX դարի առաջին կեսին, պատմական Շիրակում: Բնակչության՝ Արևմտյան Հայաստանից վերաբնակիչ լինելը, ռուսական զորքի առկայությունը, Անիին, ապա և հայ մշակույթի կենտրոններից Թիֆլիսին մոտ գտնվելը, միջազգային բարենպաստ դրությունն այն գործոններն են, որոնցով պայմանավորված էր 1850-1880-ական թվականներին քաղաքի հասարակական մտքի զարգացումը:

Ալեքսանդրապոլի հասարակական միտքը սերտ առնչակցություն ունի հայոց պետականակերտման հայեցակարգի «ազգային գաղափարախոսություն» (Հայաստանի ազատագրություն և անկախության հաստատում) և «ազգային կրթություն և դաստիարակություն» մաս-հասկացությունների հետ:

Ազգային գաղափարախոսությունը ձևակերպել էր դեռևս XVI-XVIII դարերի հայ հասարակական-եկեղեցական միտքը (Մխիթար Մեֆաստացի և Մխիթար-

¹ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 865:

² Բուլղարներ, մակեդոնացիներ, սերբեր:

յաններ, Ղազար Զահկեցի, Միսեոն Երևանցի, Հակոբ Շահամիրյան, Միքայել Չամչյան և այլք): Չներկայացնելով ազգային պետություն՝ հայրենիքի և ազգության հայ գաղափարախոսներն ուշմիջնադարյան քաղաքական տեսությունների, կրթական համակարգի, փիլիսոփայության շրջանակներում մերժել են օտարափառությունը, գովերգել աշխատասիրությունը, պայքարել ապահայացման դեմ:

Ապրելով քաղաքական ազատությունների, տնտեսական նորարարությունների, լուսավորականության, ինքնատիպ աշխարհակարգի սահմանման, «երիտասարդների»³ դարաշրջանում՝ XIX դարում, ալեքսյուցիները և ամբողջ հայությունը բարենորոգվելու, երիտասարդանալու հայտ են ներկայացնում («Մանուկ Հայաստան», «Երիտասարդ Հայաստան»):

Ծանոթ լինելով հայ և համաշխարհային պատմավիպական գրականությանը, արևմտահայ գործընկերների տեսակետներին, ուսումնասիրելով բրիտանական քաղաքական մշակույթը՝ ալեքսյուցի պետականամարտիկները գործնականում աշխատում են Հայաստանի անկախության օգտին:

1869թ. ալեքսյուցի անկախականներն Արսեն Կրիսյանի գլխավորությամբ ստեղծում են մի ընկերություն, որը 2-3 տարի անց վերածվում է մարտաշունչ կազմակերպության: Ընկերության գործունեության նպատակը Հայաստանի ազատագրումն էր սուլթանական և ցարական վարչակարգերից:⁴ Ա.Կրիսյանը և մյուս անկախականները կազմել էին 70 հոգվածից բաղկացած կանոնադրություն: Լեհաստանի օրինակով նրանք ուզում էին կոտրել ցարիզմի ոգին, իսկ Բուլղարիայի օրինակով՝ սուլթանիզմից ազատագրել Արևմտյան Հայաստանը: Ռուսաստանի բալկանյան քաղաքականության մեջ կատարված փոփոխությունների պատճառով 1875թ. մայիսին ընկերությունը «բացահայտվում» է և դադարում գործելուց:

Ղրիմի կամ Արևելյան պատերազմից հետո (1856թ.) հոգևոր հայերը հանգիստ պայմաններում վերագնահատում են XVIII դարավերջի ֆրանսիական հեղափոխության համամարդկային նշանաբանը՝ «ազատություն, հավասարություն, եղբայրություն»: Նրանք, սակայն, «հավասարություն» բառույթը փոխարինում են «հանդարտություն և արդարություն» բառերով:⁵ Դա XIX դարում հայոց պետականակերտման գաղափարախոսության ատաղձն է: Ելնելով այդ գաղափարախոսությունից, ըստ ալեքսյուցի մտավորական Հովհաննես Մուշեղյանցի, ապագա հայկական պետության քաղաքացիները պետք է հարգեն աշխատանքը, լինեն միաբանված և սիրեն դիմացինին:⁶

Պետական մտածողություն և զորավարի բնավորություն ունեցող գործիչներ Դավիթ Սվադճյանցը և Հ.Մուշեղյանցը հստակ գիտակցում էին, որ ապրում են

³ «Երիտասարդ Ռուսաստան», «Երիտասարդ Իտալիա», «Երիտասարդ Թուրքիա», «Երիտասարդ Գերմանիա», «Երիտասարդ Լեհաստան». քաղաքական կազմակերպությունների և շարժումների անվանումներ են:

⁴ Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից. Ուսումնասիրության և փաստաթղթեր, Եր., 1958, էջ 121-148:

⁵ Սահակ Պարթևի կամ Հայրապետ Մշոյ. Ողբերգություն բաժանեալ ի չորս արարուածս, Կ.Պոլիս, Տպագրութիւն Քիւրքճեան, 1869, էջ 22:

⁶ Մուշեղեանց Զ., Հայ-Ազգութիւն, «Արարատ», Վաղարշապատ, 1871, թիվ Ա, էջ 47:

քաղաքացիական իրավունքների հանրահռչակման ժամանակաշրջանում. «ԺԹ. դարի նշանաւոր յեղափոխութեան մէջ կ'յիշուի կրթութենի ծեծից հեռանալը և տղայոց քաղաքական իրաւունքների բարձրանալը...»:⁷ Հ. Մուշեղյանցի կարծիքով հասարակության շարժիչ ուժերից մեկն ինքնաճանաչողությունն է, մյուսը՝ կանանց քաղաքացիական ակտիվությունը:⁸ Նա հասարակական կյանքում կանանց դերի բարձրացման գաղափարի իսկական երկրպագու է: «Հասարակական իրավունք», «իւրեանցապատկան իրաւունք», «ժողովրդի առաջադիմություն», «ժողովրդի իրավունք». թվարկվածները ալեքսպոլցի պաբլիքմեն (public man) Կարապետ Մատինյանցի և «Մշակ» թերթի ալեքսպոլցի երկու թղթակիցների հրապարակախոսական բառապաշարի գլխավոր արտահայտություններն են:⁹

Քաղաքական անկախության բացակայությունը խոչընդոտ չէր ալեքսպոլցի պետականամարտիկների համար, որ նրանք խորհեին գալիք հայկական պետության հասարակական հարաբերությունների կառուցվածքի մասին, քննարկեին, թե ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվեն հասարակական գործիչներն իրենց աշխատանքում: «Մեր հայերիս դժբաղդութիւնն էլ այն է, -գրում է ալեքսպոլցի բժիշկ Ավետիք Բաբայանը, -որ մեր ընտանեկան կեանքը այնպիսի բնատրոթիւնք չէ արտաբերում, որ իրանց նուիրելով հասարակական գործունեութեան, հպատակեին միայն իրանց ներքին ձգտման գործին ծառայելու և արդարամիտ ուղղութեամբ վեհանձն ներողամտութեամբ և սիրով շատ ոյժեր գրաւէին դարձեալ սիրած գործին ծառայացնելու և նորան ընդլայնացնելու...»:¹⁰

1850-1880-ական թվականներին ալեքսպոլցիների մեջ պետության և անկախության գաղափարի նկատմամբ հարգանքը ձևավորել էր քաղաքում ներդրված ազգային կրթական համակարգը: Ալեքսանդրապոլի դպրոցներում ստեղծարար մանկավարժությամբ զբաղվող մասնագետները պատրաստում էին իրենց պատմական անցյալով հպարտացող և իրենց պատմությունն արժևորող սերունդ: Ալեքսպոլցի քահանա Մինաս Տեր-Պետրոսյանցի վկայությունն այդ մասին. «Ոչ մի ժամանակ մեր ժողովրդի մէջ ընթերցանութիւնն ընդհանրապէս այնքան չէ զօրացել, ոչ մի ժամանակ նա այնքան չէ հետաքրքրուել կարդալ իւր ազգի անցեալ կեանքի պատմութիւնը, որքան ներկայ դարի կիսից սկսած...»:¹¹

Հայոց պետականակերտման գաղափարախոսության համատեքստում ալեքսպոլցի կիրթ գործիչներից շատերը, օրինակ, Պետրոս Հայկազունին, Հակոբ

⁷ «Արարատ», 1870, թիվ 7, էջ 142: Մուշեղեանց Յ., Դաստիարակութիւն ի մարդն, Արարատ, 1873, թիվ Թ, էջ 342:

⁸ Յորդրո ի սէր ազգային գրականութեան, «Արարատ», 1870, թիվ ԺԲ, էջ 316: Մուշեղեանց Յ., Ալեքսանդրապոլոյ Հայոց օրհորդաց Սահականոյ ծխական դպրոցի բացման հանդէս, Արարատ, 1873, թիվ Զ, էջ 232:

⁹ Մատինեանց Կ., Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ, «Արարատ», 1870, թիվ Ժ, էջ 252: Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», Թիֆլիս, 1.11.1873: *** Նամակ Ալեքսանդրապոլից, Մշակ, 18.X.1873:

¹⁰ Ա. Բ., Նամակ Ալեքսանդրապոլից, Մշակ, 15.XI.1873:

¹¹ Արիստակէս Լաստիվերտցի վարդապետի Հայոց պատմութիւնը, թարգմանեց Մինաս քահանայ Տեր-Պետրոսեանց, Ալեքսանդրապոլ, տպարան Արրահամ Մ.Մալխասեանցի, 1893, էջ ա:

Փամբուխձյանցը, աղքիլիսեցի (կրաշենցի) քահանա Մանվել Աստվածատրյանը, բարձր էին գնահատում հանրակրթական բնագավառում եվրոպական երկրների¹² ձեռք բերած փորձը: Նրանք այդ ոլորտի տեղական պատասխանատուներին կոչ էին անում հետևել եվրոպական լուսավորական մտքի ձեռքբերումներին և դրանք կիրառել հայկական դպրոցներում: Ալեքսանդրոպոլիսի պետականամարտիկները տեսնում էին նաև այդ խնդրի հակառակ երեսը.

Խելքով Եւրոպին յարմարէ՛,

Դուն քեզ ու քեզ կառավարէ՛¹³

Ալեքսանդրոպոլիսի պետականամարտիկների այդպիսի եզրահանգման պատճառը 1870-1880-ական թվականներին մենտոր տերությունների կողմից հայ եկեղեցու և կրթական հաստատությունների նկատմամբ իրականացվող «կուլտուրկամպֆի» (մշակութամարտություն)¹⁴ քաղաքականությունն էր:

Ալեքսանդրապոլի հասարակական միտքը հայրենիքում մնալու, համախմբվելու, հայկական պետությունը հզորացնելու, ամուր լինելու, քաղաքակրթական բարձր արժեքներին հաղորդակցվելու, միմյանց խնայելու, խաղաղ գոյակցելու պատգամներ է թողնում իր ուսումնասիրողներին:

ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ АЛЕКСАНДРОПОЛЯ В КОНТЕКСТЕ ИДЕОЛОГИИ ГОСУДАРСТВООБРАЗОВАНИЯ АРМЕНИИ

___ Резюме ___

___ Г. Айвазян ___

На протяжении веков идеологией армянского государствообразования были увлечены все слои общества. Общественная мысль Александрополя была тесно связана с основными тезисами этой идеологии: это национальная идеология, национальное образование и воспитание.

В статье охарактеризованы александропольские общественные деятели, борющиеся за восстановление государственности в Армении и ее независимости в XIX в. Отсутствие политической независимости не препятствовало тому, чтобы они продумывали структуры общественных организаций армянского государства, обсуждали принципы, которыми должны были руководствоваться в своей работе общественные деятели.

Տեղեկություններ հեղինակի մասին

Այվազյան Գևորգ Մանվելի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: ayg.84@mail.ru

¹² Եվրոպա, եվրոպական ազգեր գրելով՝ նրանք ոչ մի երկրի անուն չեն նշում:

¹³ Աշըգ Ջիւանու երգերը Ա. Աղեքսանդրապոլ, Գ. Մանոյեանցի տպարանում, 1882, էջ 37:

¹⁴ Կաթոլիկ եկեղեցու նկատմամբ պետական վերահսկողություն սահմանելու նպատակով 1873-1887 թվականներին Գերմանիայի կանցլեր Օ. Բիսմարկի կողմից իրականացվող քաղաքականության անվանումը (Kulturkampf):

**XX ԴԱՐԻ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՇԻՐԱԿՈՒՄ ***

Հայտնի, է, որ պատմական Շիրակը Հայաստանի Արարատյան նահանգի 20 գավառներից էր և Ախուրյան գետով սահմանագատվում էր 2 մասի՝ Արևմտյան Շիրակ՝ ներկայիս Թուրքիայի տարածք, և Արևելյան Շիրակ, որը մոտավորապես ընդգրկում է ներկայիս Շիրակի մարզի՝ Ամասիայի, Ախուրյանի, Աշոցքի, մասամբ Արթիկի և Անիի տարածաշրջանները:¹

Ամենայն հավանականությամբ, առաջին գերմանացի ճանապարհորդը, որն այցելել էր Արևմտյան Շիրակ և տեսել էր Անիի ավերակները, եղել է ազնվական ճանապարհորդ Հենրիխ Պոզերը (1599 Էքսդորֆ – 1661 Բրեսլաու): 1620թ-ից մինչև 1623թ. նա Գերմանիայից հասել էր Թուրքիա, այնուհետև՝ Պարսկաստան հետևյալ ուղեգծով՝ Կոնստանդնուպոլիս-Էրզրում-Կարս-Անի-Երևան-Էջմիածին-Նախ-իջևան-Թավրիզ - Իսֆահան:² Նույնպես հայտնի է, որ Պոզերը եղել է Մարբուրգի համալսարանի շրջանավարտ և Էրզրումում փորձել է ուսումնասիրել հայերեն:³

XIX դարի գերմանացի ճանապարհորդներից առաջինը, ով այցելել է Արևելյան Շիրակ՝ մասնավորապես Գյումրի, գերմանացի բժիշկ Ֆրեյզանն էր: Նա ծառայում էր Ռուսական կայսրությանը և 1811-1812թթ. հատուկ առաքելությամբ ռուսների կողմից գործուղվում է Թավրիզ՝ հաշտության բանակցություններ վարելու պարսից թագաժառանգ Աբաս Միրզայի հետ:⁴ 1812թ. ապրիլի վերջերին Ֆրեյզանը Թիֆլիսից ճանապարհ է ընկնում Սանահին – Վանաձոր – Սպիտակ – Մեծ Պարնի – Ջաջուռ – Գյումրի – Երևան – Նախիջևան – Թավրիզ ուղեգծով և մի քանի ամսից հասնում է Պարսկաստան: Ուշագրավ է, որ Վանաձորից մինչև Գյումրի ճանապարհահատվածում վայրի կենդանիների շարքում Ֆրեյզանը իր գրառումների մեջ մատնանշում է փոքր տեսակի վագրերի և բորենիների:⁵ Իր ուղեգրություններում ճանապարհորդը նշում է նաև Գյումրու պատկառելի չափերի բերդը, սակայն Ալեքսանդրապոլի՝ ներկայումս հայտնի բերդը կառուցվել

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Եղիազարյան Հ., Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները: Եր., 1975, էջ 3:

² Полиэктов М. Европейские путешественники XIII – XVIII вв по Кавказу. Тифлис, 1935, стр. 161. Encyclopedia Iranica.

³ https://de.wikipedia.org/wiki/Heinrich_von_Poser_und_Gross-Naedlitz - Henrich von Poser, Wikisource, p 1.

⁴ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2 (1800-1820), Մելքոնյան ֆոնդի հրատարակչություն, Եր., 1934, էջ 395:

⁵ Նույն տեղում, էջ 400:

է ռուսների կողմից 1836-1846թթ., և ճանապարհորդն այն չէր կարող տեսնել:⁶ Ամենայն հավանականությամբ, Ֆրեյզանը նկատի է ունեցել Գյումրու միջնադարյան բերդը: Այն հիմնահատակ քանդվել է 1836թ., և նրա տեղում կառուցվել է Ալեքսանդրապոլի նոր հոյակերտ բերդը:⁷

1836թ. ամռանը և 1837-1838թթ. ձմռանը Շիրակում հիմնարար բուսաբանական և բուսաշխարհագրական ուսումնասիրություններ է կատարել հանրաճանաչ գերմանացի բուսաբան, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր և Բեռլինի բուսաբանական այգու տնօրեն Կարլ Կոխը (1809 Վեյմար-1879 Բեռլին)⁸: Նա փաստորեն առաջին բուսաբանն էր, որ մասնագիտական հետազոտություններ է կատարել բուն Շիրակում, քանի որ մինչ այդ հայտնի ֆրանսիացի բուսաբան Ժոզեֆ Պիտոն դե Տուրնեֆորը (1656-1708) բուսաբանական ուսումնասիրություններ էր կատարել միայն Շիրակին սահմանակից Կարսի շրջանում 1700-1702թթ.⁹ Թիֆլիս կատարած իր ուղևորության ժամանակ:⁹

Կ.Կոխի 1836-1838թթ. արշավախմբային երթուղիները ներառում էին Շիրակի տարածքի մի զգալի մասը՝ մինչև Ղազանչի գյուղը Աշոցքում, Հոդմիկ գյուղը Ամասիայի տարածաշրջանում և Արագածի հյուսիսարևմտյան լանջի Մանթաշ գյուղը: Բուսաբանը ուսումնասիրություններ է կատարել նաև թագավորանիստ Անիի շրջակայքում: Ընդհանուր առմամբ նա նկարագրել է մի քանի հարյուր բուսատեսակներ և առանձնացրել գիտության համար մի քանի նոր բույսեր: Տպավորված լինելով Անիի վեհաշուք ճարտարապետությամբ, նա դրանցից մի բազմամյա տափաստանային խոտաբույս, անվանել է *Triglochin ani K.Koch*՝ ի պատիվ հայոց երբեմնի մայրաքաղաքի:¹⁰ Գերմանացի բուսաբանի գիտական լայնախոհության և հայ ժողովրդի պատմության հանդեպ մեծ հետաքրքրության մասին է վկայում այն փաստը, որ Հայաստան իր երկրորդ այցելության նախաշեմին՝ 1844թ. ապրիլի 11-ին, մեր մեծ հայրենակից Խաչատուր Աբովյանը, հանդիպելով նրան Թիֆլիսում, բուսաբանի խնդրանքով նրան արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայկական երաժշտական գործիքների և խոհարարական արվեստի մասին:¹¹

1843թ. մայիսին Հայաստան է ժամանում Մյունխենի համալսարանի աշխարհագրության և ազգագրության պատվավոր պրոֆեսոր, Բավարական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մորից Վագները (Վակները) (1813 Բայրոնտ - 1887 Մյունխեն): Նա առաջնահերթ նպատակ ուներ ուսումնասիրել

⁶ Գաբրիելյան Հ., Լենինական, Եր., 1984, էջ 13:

⁷ Մաթևոսյան Ս., Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985, էջ 22:

⁸ Բարսեղյան Ա., Հայաստանում գերբնականական գիտության զարգացման պատմության շուրջ, *Биологический журнал Армении*, 1971, № 5, էջ 96: Липский В. Флора Кавказа. СПб, 1899, стр. 43; Файвуш Г. История изучения флоры и растительности Ширака. Флора, растительность и растительные ресурсы Армении. 1981, вып. 8, стр. 46.

⁹ Файвуш Г. К изучению степной растительности Ширака. Флора, растительность и растительные ресурсы Армении. 1981, вып. 7, стр. 83.

¹⁰ Նույն տեղում, էջ 83:

¹¹ Հակոբյան Ա., Խաչատուր Աբովյանի առնչությունները Հայաստան այցելած եվրոպական գիտնականների հետ (1843-1848թթ.), *Պատմա-բանասիրական հանդես*, № 1, 2012, էջ 128:

1840թ. Արարատի երկրաշարժի պատճառները և հետևանքները: Ճանապարհորդությունը Թիֆլիս – Ղազախ – Իջևան – Դիլիջան – Սևան – Հրազդան – Երևան – Արագած – Գյումրի – Սպիտակ – Ստեփանավան – Թիֆլիս երթուղիով նա կատարում է Խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ:¹²

Նույն թվականին՝ հուլիսին, Վագները մի քանի օրով հյուրընկալվում է Գյումրիում, որը նա անվանում է Նոր Գյումրի կամ Ալեքսանդրապոլիս: Նա մասնավորապես նշում է քաղաքի մասին. «Կատարյալ կանոնավորությամբ, ուղղաձիգ և ընդարձակ փողոցներով, գորանոցների նման շենքերով և մեծամեծ հրապարակներով:... Բնակչության թիվը գրեթե 6000 հոգի է, որոնց մեծ մասը կազմում են Տաճկաստանից գաղթած հայազգիներ:»¹³ Այնուհետև իր հիացմունքն է արտահայտում Գյումրու նորակառույց բերդի մասին: Ճանապարհորդը թողել է նաև շատ արժեքավոր բնագիտական մասնավորապես՝ բուսաբանական բնության նյութեր, որոնք նրա ուղեգրությունների հայերեն տարբերակի մեջ գրեթե տեղ չեն գտել:¹⁴

1860-ական թթ. Ալեքսանդրապոլի ընդհանուր համայնապատկերի մի փառահեղ փորագրություն է կատարել գերմանացի նկարիչ Յու. Կեստները, որը նաև մի այլում է հրապարակել՝ նվիրված Անիի պատմամշակութային կոթողների վիմագիր արձանագրություններին:¹⁵

Ռուսահայատակ, սակայն ծագումով գերմանացի հայտնի կենդանաբան և բուսաբան, Կովկասյան թանգարանի տնօրեն Գուստավ Ռադդեն (1831 Դանցիգ, ներկայումս՝ Գդանսկ, Լեհաստան – 1903 Թիֆլիս) 1875թ. ձեռնարկել էր բնագիտական մեծ ճանապարհորդություն: Նրա ուղեգիծն էր Ախալքալաք – Ալեքսանդրապոլ – Հադիճավանք – Արագած – Մաստարա – Լուսակերտ – Սարդարապատ – Էջմիածին – Երևան:¹⁶ Գ. Ռադդենին այս ճանապարհորդության ժամանակ ուղեկցում էր երկրաբան, մասամբ բուսաբան և միջատաբան Գուստավ Իվանովիչ Միվերսը (1843-1898):¹⁷ Ուղեգծի Ախալքալաք – Սարդարապատ ճանապարհահատվածը ժամանակին հանդիսացել է այսպես կոչված՝ «աղի ճանապարհի» ամենաբանուկ մասերից մեկը, որով Կարսի մարզի Կոդրի հանրահայտ աղահանքից հիմնականում ուղտերի քարավաններով մեծ քանակությամբ աղ էին արտահանում Թիֆլիս:¹⁸

Հայկական լեռնաշխարհի անկենդան բնության ուսումնասիրության ասպարեզում ամենածանրակշիռ ավանդը պատկանում է գերմանացի երկրաբան և բնագետ Հերման Աբիխին (Otto Wilhelm Herman von Abich, 1806 Բերլին – 1886

¹² Հակոբյան Ա., 2012, էջ 125-126: Վակներ Մ., Ճանապարհորդությունն ի Հայաստան, քաղելով թարգմանեց Հ. Փիլիպպոս Ճամճեան, Վիեննա, 1851:

¹³ Վակներ Մ., 1851, էջ 126:

¹⁴ Липский В. Флора Кавказа. СПб, 1899, стр. 25.

¹⁵ Մաթևոսյան Մ., Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985, էջ 18:

¹⁶ Мазурмович Б. Густав Иванович Радде. В кн.: Выдающиеся отечественные зоологи. М.: Учебгиз, 1960, стр. 80; Радде Г. Коллекции Кавказского музея, том II. Ботаника, 1901, стр. 7.

¹⁷ Мазурмович Б., նշվ. աշխ., էջ 84:

¹⁸ Օհանյան Ա., Անրելս տրանսպորտը նախասովետական Հայաստանում, հ. 43, ԵՊՀ, 1954, էջ 22-23:

Վիեննա, թաղված է Գերմանիայի Կոբլենց քաղաքում): Այս աշխարհահռչակ գիտնականը 28 տարի մանրակրկիտ և հիմնարար երկրաբանական աշխատանքներ է կատարել ամբողջ Կովկասի և նրա հարակից տարածքներում, այդ թվում նաև՝ մինչ այդ լավ չուսումնասիրված պատմական Շիրակի տարածքում: 1840-ական թթ. նա առաջին անգամ առանձնացրել և գիտական գործածության մեջ է մտցրել «Հայկական լեռնաշխարհ» ֆիզիկաաշխարհագրական եզրույթը (մոտ 400.000 կմ² տարածքով), որը, ի նշան խորին հարգանքի, այդպես է անվանել՝ պատվելով տեղաբնակ հայ ժողովրդին:¹⁹

Արիստի հիմնարարական հետազոտություններն ընդգրկում էին երկրաբանության գրեթե բոլոր ուղղությունները՝ տեկտոնիկա, միներալոգիա, ապարագիտություն, սելսմոլոգիա, հրաբխականություն, լիթոլոգիա, երկրաբանական քարտեզագրություն և այլն: Նա հատկապես կարևորում էր հնէաբանական հետազոտությունները, որոնց արդյունքում բնագետը հավաքագրել, առանձնացրել և նկարագրել է բրածո անողնաշարավոր կենդանիների մեկ տասնյակից ավելի՝ գիտության համար նոր ձևեր: Մասնավորապես հին Ջուղայի աշխարհահռչակ հայկական գերեզմանատեղիի մերձակայքից նկարագրել է մոտ 255 մլն տարի հնությամբ (վերին պերմ) մի նոր բրածո գլխոտանու, որն, ի պատիվ հայ ժողովրդի, անվանել է *Nautilus armeniacum*, իսկ ներկայիս Նախիջևանի տարածքի հայկական Արծթավան գյուղի մերձակայքից (Նորավանքից 12 կմ արևմուտք)՝ հասակի ապարներից, մոտ 360 մլն տարի վաղեմության մի նոր բրածո ուստոտանու նա անվանակոչել է, ի պատիվ Օրբելյան իշխանական տոհմի *Cryptiopsis (Spirifer) orbelianus*: Այն աննախադեպ քայլ էր համաշխարհային հնէաբանության մեջ, քանի որ, որպես կանոն, հնէաբանական նոր տեսակներն ընդունված չէր անվանակոչել իշխանական տոհմերի անուններով: Բեռլինի համալսարանում ուսանելու տարիներին Արիստը աշակերտել է աշխարհահռչակ փիլիսոփա Հեգելին, հայտնի երկրաբան-«պլատոնիստ» Լեոպոլդ ֆոն Բուխին, աշխարհահռչակ բնագետ, «XIX դարի Արիստոտել» Ալեքսանդր Հումբոլդտին և 1844թ. գարնանը առաջին անգամ Հայաստան է այցելել վերջինիս հորդորներով ու միջնորդությամբ:²⁰ Սանկտ Պետերբուրգի և Պրուսական գիտությունների ակադեմիաների իրական անդամ Հ. Արիստը գերմանացի հանրաճանաչ քիմիկոս Մարտին Կլապրոտի (1741-1817թթ.) թոռն էր և հայտնի ազգագրագետ-արևելագետ ու կովկասագետ Յուլի Կլապրոտի (1783-1835թթ.) զարմիկը, ինչպես նաև աշխարհահռչակ գերմանացի քիմիկոս, թերմոդինամիկայի հիմնադիր, ռուսահպատակ ակադեմիկոս Հերման Հեսի (1802-1850թթ.) փեսան, որի միջնեկ աղջկա՝ Ադելաիդայի հետ Արիստը ամուսնացել է 50 տարեկան հասակում Սանկտ Պետերբուրգում:²¹ Հ. Արիստը

¹⁹ Мелик-Адамян Г., Хачанов Х. Герман Абих – первооткрыватель “Армянского нагорья”. Арагаст, 2010, № 6, стр. 116; Melik-Adamyan H., Khachanov Ch. Investigations by German Geologist H. von Abich in Armenia. INHIGEO Newsletter, 2011, № 43, p 49.

²⁰ Богачев В. Г. В. Абих – «отец Кавказской геологии». Труд. геол. института Азерб. филиала АН СССР, т.12, Баку, 1939, стр. 7; Волкова С., Тихомиров В. Жизнь и труды Г.В.Абиха. Очерки по истории геологических знаний, вып. 8, М., 1959, стр. 177.

²¹ Նույն տեղում, էջ 184:

հիրավի համարվում է Կովկասի և Հայկական լեռնաշխարհի «երկրաբանության հայրը», և իր ժամանակ դասվել է համաշխարհային մեծության երկրաբանների առաջին տասնյակում: Բացի հսկայածավալ գիտական ժառանգությունից (մոտ 200 տարաբնույթ աշխատություն), նա թողել է նաև մեծաթիվ ճանապարհորդական հուշագրություններ՝ նամակների և դաշտային գրքույկների տեսքով: Նամակների մի մասը գիտնականի մահվանից հետո՝ 1899թ., Վիեննայում հրապարակել է իր այրին՝ Ադելաիդա Աբիխը՝ «Aus Kakukasischen Landern Reisebrief von H. Abich» անվանմամբ: Ցավոք սրտի, այս հայանպաստ և հույժ կարևոր աշխատությունը առ այսօր չի թարգմանվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, չի վերահրատարակվել, և այսպիսով հասու չէ ընթերցողների լայն շրջանակներին: Այդ նամակների որոշ թարգմանված հատվածներ մեզ են հասել Ալբերտ Մուշեղյանի (1985) և Գայանե Շախկյանի (2009) ջանքերով:

1844թ. գարնանը Հ. Աբիխը Խաչատուր Աբովյանի հետ առաջին անգամ Թբիլիսիից սկսում է իր գիտական ճանապարհորդությունը դեպի Հայաստան և Մեծ Արարատի գագաթը բարձրանալու 3 անհաջող փորձից հետո (օգոստոսի վերջ և սեպտեմբերի սկիզբ) 1844թ. սեպտեմբերի 10-22-ը բարձրանում է Արագածի գագաթը և երկրաբանական ուսումնասիրություններ կատարում:²² Պատմական Շիրակի տարածքում Հ. Աբիխը բազմիցս գիտական ուսումնասիրություններ է կատարել 1944թ. աշնանը, 1859 և 1872թթ.²³ և բացի երկրաբանական բազմաբնույթ և հիմնարար նկարագրությունից²⁴ թողել է նաև խիստ ուշագրավ ու հետաքրքիր տեղեկություններ Անիի և Ալեքսանդրապոլի ճարտարապետության մասին: Կարևոր է նշել, որ 1844թ. հոկտեմբերի սկզբներին նա հյուրընկալվել է հայտնի կուսակցորդ Նիկողայոս Տիգրանյանի (1856-1954թթ.) հոր՝ Թադևոսի տանը, որի նկարագրությունը տվել է իր նամակներից մեկում՝ հասցեագրված իր քույրերին: Գիտնականը նշում է. «Ձեր խիստ եվրոպական ճաշակին հաճելի կլինի, եթե ձեզ մի քիչ ման ածեմ լայն և ուղիղ փողոցներ ունեցող այս գեղեցիկ, հյուրասեր քաղաքում՝ Ալեքսանդրապոլում: Խանութներով շրջափակված հրապարակում ձեր ուշադրությունը կգրավի իտալական պատշգամբով մի մեծ երկհարկանի տուն ... երբ իմանաք, որ ձեր եղբայրն ապրել է այդտեղ հարուստ Տիգրանովի մոտ»:²⁵ Ներկայումս Աբովյան 152 հասցեով այդ տուֆաշեն կառույցը՝ Ամենափրկիչ եկեղեցու անմիջական հարևանությամբ, դեռևս կանգուն է և նրա պատին նպատակահարմար ենք գտնում վերը նշված իրադարձության մասին մի հուշատախտակ փակցնել:

Ուշագրավ են նաև հենց Ամենափրկիչ եկեղեցու մասին գիտնականի թողած տպավորությունները 1872թ. հունիսի 12-ին իր ուղարկած նամակում. «Շատ ավելի մեծ եղավ իմ ուրախությունը, երբ ես Անի մայր տաճարն իր ողջ շքեղությամբ հարություն առած տեսա Ալեքսանդրապոլում՝ շնորհիվ տեղի լուսավոր-

²² Շախկյան Գ., *Հերման Աբիխը և Հայաստանը, Հայոց պատմության հարցեր*, № 282(10), Եր., 2009, էջ 143:

²³ *Նույն տեղում*, էջ 136-137:

²⁴ *Абих Г. Геология Армянского нагорья. Западная часть. Пятигорск, 1899, стр. 19-45.*

²⁵ *Մուշեղյան Ա., Հերման Աբիխը և Աբովյանը, Գիտություն և տեխնիկա*, № 12, 1985, էջ 30:

չական հայերի կրոնական և ազգային ոգու: Այդ համայնքը կարճ ժամանակվա ընթացքում կառուցել է նոր ժամանակների ամենագեղեցիկ ճարտարապետական շենքը: Այն կառուցվել է իր նախատիպին միանգամայն հավատարիմ եղանակով: Հեռվից իսկ զարմանք առաջացրեց իմ մեջ այդ վիթխարի նորակառույց շենքը, և ես երկար ժամանակ չէի կարողանում բաժանվել նրանից: Երկրին հատուկ փխրաքարի (տուֆ) երկու երանգները՝ կարմիր և մուգ սև, այստեղ շատ լավ են օգտագործվել՝ համաչափ ճարտարապետորեն, քան նույնը Անիում»:²⁶ Կարևոր է նշել, որ Ամենափրկիչ հոյակերտ եկեղեցին կառուցվել է 1859-1873թթ. տոհմիկ որմնադիրներ Պապիկ Կարապետյանի (Բարտաշոյանց) և Թադևոս Կարապետյանի (Անտիկյանց) կողմից Արդար Մանուկի ղեկավարությամբ՝ Անիի մայր տաճարի որոշակի նմանությամբ:²⁷ Եվ բնականաբար Հ. Աբիխը՝ 1844թ. Ալեքսանդրապոլ - Գյումրի կատարած իր առաջին այցելության ժամանակ այդ եկեղեցին չէր կարող տեսնել:

Հ. Աբիխի թողած մշակութաբանական ժառանգության մեջ առանձնապես կարևորվում են Անիում իր կատարած հետազոտությունները 1844թ. աշնանը:

Մեծանուն երկրաբանը, հիբավի լինելով հանրագիտական գիտելիքներով օժտված և խորապես տպավորված հայ ժողովրդի պատմամշակութային հարուստ ժառանգությամբ, դեռևս Ն. Մառի հանրահայտ պատմաճարտարապետական ուղղվածության արշավախմբից մոտ 50-60 տարի առաջ՝ 1844թ. աշնանը, շեղվելով իր երկրաբանական հետազոտություններից, 4 օր անցկացրեց հայոց մայրաքաղաքի շրջակայքում, հետազոտեց, գծանկարեց և մասնակիորեն չափազրեց նրա բազմաթիվ ճարտարապետական կոթողները, և վարպետորեն կազմեց մայրաքաղաքի առաջին հատակագիծը:²⁸

Ի սկզբանե, համաձայն նախնական պայմանավորվածության, գերմանացի երկրաբանը 1844թ. Անի պետք է այցելեր մեր մեծ հայրենակից Խաչատուր Աբովյանի հետ, սակայն, ինչ-ինչ պատճառներից ելնելով, նա Անի է մեկնում առանց Աբովյանի:²⁹ Զմայլված լինելով Անիի հոյակերտ ճարտարապետությամբ՝ մեծանուն բնագետը հեռվից երևացող երբեմնի թագավորանիստ մայրաքաղաքի պարիսպը համեմատում է հին Հռոմի պարիսպների հետ:³⁰

1844թ. նոյեմբերի 10-ին Երևանից Գերմանիա ուղարկված իր նամակում Անիի մասին նա նշում է. «Ամբողջ չորս օր ես Անիում էի՝ Բագրատունիների մայրաքաղաքում: Թեև 600 տարի շարունակ այն ենթարկվել է մարդկանց և բնական տարերքների ավերիչ ազդեցություններին, բայց և այնպես որոշ չափով լավ են պահպանվել Արևելքի այդ զարմանալի պետության ծաղկած օրերից մնացած հուշարձանները: Անվիճելիորեն, երկրի պատմության ամենանշանավոր աղբյուրներ-

²⁶ Շախկյան Գ., 2009, էջ 137-138:

²⁷ Մաթևոսյան Ս., 1985, էջ 28: Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պողոսյան Ա., Շիրակի մարզ, Եր., 2002, էջ 49:

²⁸ Абиx Г. 1879, стр. 276, 278; Арутюнян В. Город Ани. Ер., 1964, стр. 14.

²⁹ Դոլուխանյան Ա., Անի մայրաքաղաքը ԽԱբովյանի և նրա ժամանակակիցների գնահատմամբ, Պատմա-բանասիրական հանդես, № 1, 2010, էջ 49:

³⁰ Абиx Г. 1879, стр. 275.

րի թվին են պատկանում դրանք թե՛ իրենց ճարտարապետությամբ և թե՛ իրենց անհամար արձանագրություններով: Ինձ հաջողվեց նկարել ամբողջ քաղաքը, գծագրել ամենագլխավոր շենքերի հատակագծերը»:³¹ Մեկ այլ նամակում գիտնականը Անիի մասին ասում է հետևյալը. «Դժվար է բառերով արտահայտել այն հույակապ տպավորությունը, որ մարդ կարող է ստանալ այս ժայռակղզուց դեպ Ախուրյանի հովիտը և շրջակայքը բացվող տեսարանից, որոնցից յուրաքանչյուրի վրա բարձրանում են միջնաբերդի ու հին քաղաքի աշտարակները»:³² Մեկ այլ նամակում էլ նա հաղորդում է հետևյալ կարևոր և իր արդիականությունը ցայսօր չկորցրած միտքը. «Իմ կատարած հետազոտությունները Անիում կարող են մեծ օգուտ բերել Հայաստանի պատմության ուսումնասիրությանը: Եվ հենց այդ աշխատանքների համար միայն արժեր ճամփորդել այդ կողմերը»: Անին խոշորագույն աստղ է Հայաստանի մյուս քաղաքների երկնակամարի վրա: Նա պայծառ ու դյուրիշ փայլ է տվել բարբարոս ժամանակների խավարի միջով:³³ Կարևոր է նշել, որ Արիխը պատճենահանում է նաև որոշ վիմական արձանագրություններ և այդ պատճենները ուղարկում Ֆրանսիայի ականավոր հայագետ Մարի Բրոսսեին (1802-1880թթ.):³⁴

ЕСТЕСТВЕННОНАУЧНЫЕ И КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ НЕМЕЦКИХ ПУТЕШЕСТВЕННИКОВ XIX ВЕКА В ШИРАКЕ

___ Резюме ___

___ Г. Мелик-Адамян ___

Для исторической области Ширак, среди работ немецких путешественников-естествоиспытателей первоочередное значение имеют исследования академика, “отца” геологии Кавказа Германа Абиха (1806-1886), профессора Берлинского университета, ботаника и врача Карла Коха (1809-1879), профессора Мюнхенского университета, географа и этнографа Морица Вагнера (1813- 1887), директора Кавказского музея, зоолога и ботаника Густава Радде (1831-1903). Кроме естественнонаучных исследований, они оставили также интересные культурологические сведения, например, об архитектуре Гюмри и средневековой армянской столице Ани. Из немецких путешественников XIX века необходимо отметить также врача и дипломатического посланника Фрейгана и художника Кестнера.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մելիք-Ադամյան Հայկ Հուսիկի – երկր. գ. թ., ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ, E-mail hmelik-adamyanyan@mail.ru

³¹ Շախկյան Գ., էջ 130:

³² Նույն տեղում, էջ 131:

³³ Նույն տեղում, էջ 131-132:

³⁴ Абих Г. 1897, стр. 276.

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՒԾԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ԵՎ Ս ՄԵԿ
ԷԹՆՈԴԱՎԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍԻՆ ***

Ներկայումս բավական հաճախակի են դարձել անդրադարձները ծայտյալ (գաղտնի, կրիպտո) հայերի հիմնախնդրին: Մասնավորապես ուսումնասիրություններ են կատարվում ու հոդվածներ հրատարակվում թուրքացած, արաբացած, քրդացած հայերի մասին: Սակայն անհրաժեշտ է, որ բարձրացվի և ուսումնասիրվի նաև ասորացած հայերի պատմությունը: Վաղուց էինք ցանկանում անդրադառնալ հայ ինքնությունից հեռացած և ասորացած հայերի պատմությանը, սակայն քանի որ չունեինք բավարար քանակությամբ նյութեր, և փնտրտություններն էլ տևական չէին, կար նաև լեզվական խոչընդոտ, ուստի մեզ անպատրաստ էինք համարում և խուսափում էինք այս թեմայով գրելուց: Այս թեմայով մեր առաջին հրապարակման համար¹ ազդակ հանդիսացավ «Ազգ» օրաթերթում («Ազգ», թիվ 34, 27 փետրվար, 2009, էջ 5) թուրքագետ Հ. Չաքրյանի տպագրած հոդվածը, որտեղ նա, անդրադառնալով պրոֆ. Սալիմ Ջոհջեի այն հայտարարությանը, թե «կան նաև ասորի դարձած հայեր», գրում է հետևյալը. «Եթե հայերի թուրքանալու, քրդանալու, արաբանալու, այսինքն՝ մահմեդականություն ընդունելու պատճառը բնաջնջումից փրկվելն էր, թեև դա նրանց նույնիսկ տեղահանությունից չի փրկել, ապա 1915-ին բնաջնջման ենթարկվել են նաև ասորիները: Քանի որ ճակատագիրն անխուսափելի էր, ապա ի՞նչ նշանակություն պիտի ունենար հայի համար ասորու ինքնությամբ սպանվելը»:

Թուրք պատմաբան Սալիմ Ջոհջեն, արձագանքելով Թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաչօղլուի՝ այլադավան հայերի թեմայի շուրջ բարձրացրած աղմուկին, «Աքսիոն» հանդեսի 664-րդ համարում տպագրված հարցազրույցում ասել է. «Յուսուֆ Հալաչօղլուի ասածները ճիշտ են ու նորություն չեն», եւ նշելով թեմայի շրջանակներում արդեն նոր բացահայտումներ անելու անհրաժեշտության մասին՝ ավելացրել, որ հայերը ոչ միայն քրդացել կամ թուրքացել են, այլեւ արաբացել: «Սղերթում, Հաթայում (Ալեքսանդրետ), Ուրֆայում, Մարդինում բնակվող հայերն արաբացել են եւ այսօր արաբախոս են»,-հայտարարել է նա: Միեւնույն ժամանակ Ջոհջեն նշում է, թե Թուրքիայում կան նաեւ ասորացած հայեր²: Ահա Սալիմ Ջոհջեի կատարած այս դիտարկման առիթով է թուրքագետ Հ. Չաքրյանը հայտնել իր տեսակետը:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Տե՛ս Մալոյան Ա., Կրիպտոհայեր-ասորացած հայեր, «Ազգ» օրաթերթ N 57, 01. 04. 2009 թ. - <http://www.azg.am/AM/print/2009040103>

² Տե՛ս Մելքոնյան Ռ., Արաբացած հայեր Թուրքիայում - http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2368

Նույն «Աքսիոն» հանդեսում հրատարակվել են ներկայումս Թուրքիայում բնակվող ծպտյալ հայերի բնակության վայրերի, թվաքանակի մասին տվյալներ, ինչպես նաև նշվում է, թե նրանք պաշտոնապես որ ազգի կամ կրոնական համայնքի ներկայացուցիչներ են համարվում: Այսպես, նույն հանդեսում նշված է, որ Դիարբեքիր քաղաքում բնակվող ծպտյալ հայերի 1000 ընտանիքներ «պաշտոնական» կարգավիճակով ներկայանում են որպես քուրդ, ասորի կամ ալևի³:

Ի տարբերություն մեծարգո թուրքագետ Հ. Չաքրյանի՝ համոզված ենք, որ ներկայիս Թուրքիայի տարածքում եղել են և կան նաև ասորացած հայեր: Ներկայացնենք մի քանի փաստեր ու դիտարկումներ, որոնք մեզ համոզեցին այս վարկածի ճշմարտացիության մեջ: Այս խնդրով հետաքրքրվելու և զբաղվելու գործում վճռորոշ եղավ այն, որ իմացանք մեզ հարազատ մի ընտանիքի պատմության մանրամասները: Այդ ընտանիքը Բեյրութից 1946 թ. Հայաստան է հայրենադարձվել: Ընտանիքի հայրը և մայրը հայերեն չեն իմացել և խոսել են ասորերեն: Նրանց ծննդավայրը Բա Սըբրի⁴ (Բա Սըբրինա, Բեթ Սեվերինա) գյուղն էր, որը գտնվում էր Տուր Աբդինում (թրգմ.՝ Ճգնավորների կամ Աստծո ծառաների լեռ): Տուր Աբդինը մոտավորապես համընկնում է Դիարբեքիրի նահանգի Մարդինի գավառի Միդիադի գավառակին: Հետագայում գյուղն անվանակոչվել է Հաբերլի: Վերոհիշյալ ընտանիքի որոշ ազգականներ այժմ էլ ապրում են այդ գյուղում, իսկ մի մասն էլ բնակություն է հաստատել Գերմանիայում:

Տեղանունների բառարանի հեղինակները Տուր Աբդինը նույնացնում են Ծավդեք (Կադմուխ, Տուն Կադմուսի) գավառին՝ գրելով, որ այն գտնվել է Հայոց (Վերին) Միջագետքում, Տիգրիս գետի վերին հոսանքի շրջանում, Բաբիլ երկրամասի և Կաշիյարի լեռան մոտակայքում: Հայկական աղբյուրները տարածաշրջանը հիշատակում են Ծավդեք, Մովսես Խորենացին՝ Կադմեայ Տուն անունով, որը նույնացվում է Կորճայք աշխարհի Կորդուք գավառին⁵: Հնագույն ժամանակներից այս տարածաշրջանում ապրել են հայեր, հետագայում բնակություն են հաստատել նաև ասորիներ, քրդեր: Փոխվել է շրջանի ժողովրդագրական պատկերը, ասորիները մեծամասնություն են դարձել, սկսվել է հայերի ասորացման գործընթաց: Ասորիների բնակության հիմնական օջախներից է եղել Դիարբեքիրի վիլայեթը, որը կազմված էր Դիարբեքիրի, Մարդինի, Արդնիի սանջակներից և 13 կազաններից: Հյուսիսում վիլայեթը սահմանակից էր Խարբերդին, հարավում՝ Մոսուլին, արևելքում՝ Բաղեշի, իսկ արևմուտքում՝ Հալեպի կուսակալություններին: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այստեղ ապրում էր 47000 մարդ՝ ասորիներ, հայեր, քրդեր, թուրքեր: Մոտ 50000 ասորիներ հոծ խմբերով ապրում էին Դիարբեքիրի վիլայեթի հարավային շրջաններում: Սակայն այդ թիվը ամբողջական չէ, որովհետև հաշվի չեն առնված ևս 60000 նեստորականները (նաստուրի), հակոբիկ-

³ Տե՛ս Մելքոնյան Ռ., *Արաբացած հայեր Թուրքիայում*:

⁴ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում այս գյուղի մասին որևէ հիշատակում չկա:

⁵ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բաբսեղյան Հ. Խ.), հ. 5, Եր., 2001, էջ 143:

յանները և քաղղեացիները (քիլդանի), որոնք կազմում էին վիլայեթի ամբողջ բնակչության 20,4%-ը: 20-րդ դարասկզբին Դիարբեքիր (Ամիդ, Տիգրանակերտ) քաղաքում բնակվում էին 950 նեստորական ասորիներ և 2300 կաթոլիկ ասորիներ, հայեր: Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի Ջեզիրեի կազայի 6 գյուղերում և Դերգուլի նահիեում ապրում էին 3500 ասորիներ՝ մոտ 700 տուն: Ըստ Վլ. Մանսկու տվյալների՝ Դիարբեքիրի վիլայեթի Միլվանիի և Իլիջայի կազաներում հաշվվում է 480 նեստորական ընտանիք: 19-րդ դարի վերջին այստեղ կային 3731 հակոբիկյան, 761 քաղղեացի, 15000 սիրիացի կաթոլիկ: Ըստ թուրքական սալնամենների՝ դարասկզբին Դիարբեքիրի վիլայեթում ապրում էին 22748 հակոբիկյան, 1439 քաղղեացի և 11165 սիրիացի կաթոլիկ, իսկ Ամիդ քաղաքում՝ 1300 հակոբիկյան, 1100 քաղղեացի և 150 սիրիացի կաթոլիկ: 1913 թ. տվյալներով Դիարբեքիրի վիլայեթում 60000 նեստորական, հակոբիկյան, քաղղեացի և 27544 ուղղափառ ասորիներ էին բնակվում: Միդիադից Ջեզիրե տանող ճանապարհին էր գտնվում հակոբիկյան Դեր-Օմեր գեղեցիկ վանքը: Մարդինից 4-5 կմ դեպի արևելք՝ լեռներում է գտնվում հակոբիկյանների նշանավոր Դեր-ի-Ջաֆրան տաճարը, որը հիմնադրվել էր դեռևս Ք.ա. 800 թ.: Դիարբեքիրից Հալեպ տանող ճանապարհի վրա էր գտնվում Սներեկը, որտեղ կար մեկ հակոբիկյան և Սուրբ Պարսամ (Մար Բարսումա) ընդհանուր ասորական եկեղեցին: Քաղաքը 19-րդ դարի վերջին ուներ 12000 բնակիչ, որի մի մասը թուրք և քուրդ էր, իսկ մյուս մասը՝ հայ և ասորի: Մարդինում ապրում էին մոտ հազար ծուխ հակոբիկյան ասորի, 350 ծուխ սիրիացի կաթոլիկ, 100 ծուխ քաղղեացի: Կրոնական համայնքներից յուրաքանչյուրն ուներ իր եկեղեցին: Մարդինի հայ և ասորի կաթոլիկ եկեղեցիները շատ ջերմ հարաբերություններ էին պահպանում միմյանց նկատմամբ: Հետագայում՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցած տարագրության ժամանակ, այդ եկեղեցիների առաջնորդները միևնույն ճակատագրին են արժանանում. միասին արքայություն ու բանտարկվում են Հալեպում, այնուհետև միասին ազատվում են ու մինչև իրենց կյանքի վերջն ապրում են կողք կողքի: Դիարբեքիրի վիլայեթի քաղաքներից էր նախկինում ավելի նշանավոր Մծբինը (Նսեբին, Նուսայբին, Նիսիբին): Այն 19-րդ դարի վերջին բաղկացած էր 600 ծխից, որից 60-ը պատկանում էր ասորիներին: Այստեղ էր գտնվում նաև հակոբիկյան ասորիների գլխավոր եկեղեցիներից մեկը, որտեղ թաղված էր նրանց հիմնադիր Հակոբ Բարադայը⁶:

Այսպիսով՝ Օսմանյան կայսրությունում, տարբեր աղբյուրների տվյալներով, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը կային մոտ 250 հազար ասորիներ: Նրանց գրեթե կեսը, ըստ Կ.Պոլսի պատրիարքարանի տվյալների, բնակվում էր հայկական վիլայեթներում՝ 60 հազար՝ Դիարբեքիրի, 25 հազար՝ Մեքաստիայի, 18 հազար՝ Վանի, 15 հազար՝ Բիթլիսի, 5 հազար՝ Խարբերդի: Ասորիների

⁶ Տե՛ս Խոսրոս Ա., *Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ)*, Եր., 2004, էջ 32-34:

մյուս կեսը բնակվում էր Ադանայի (Ադանա, Մարաշ), Հալեպի (Ուրֆա, Հալեպ, Կամիշլի), Սիրիայի (Դամասկոս, Համա) և Մոսուլի վիլայեթներում:⁷

Ուշագրավ է հետևյալ փաստը. 1909 թ. Տուր Աբդինում ճանապարհորդած Գերտրուդ Բելը, ավելի ուշ նաև Թ. Մինկլերը, հիշատակում են Հեշտերեկ⁸ (Աշտա-րակ?) անունով գյուղ⁹, որտեղ պահպանվել է 771-772 թթ. թվագրվող ասորերեն արձանագրություն: Ակնհայտ է, որ ժամանակին այն եղել է հայկական (Հ. Աճառ-յանը «Արմատական բառարան»-ում «աշտարակ» բառը չի համարում սեմական լեզուներից փոխառություն):

1790-ական թթ. հատուկ առաքելությամբ դեպի Օսմանյան կայսրություն, ապա նաև Պարսկաստան ճանապարհորդած ֆրանսիացի բնագետ Գ.-Ա. Օլիվիեն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում տարածաշրջանի բնակչության վերաբերյալ: Օլիվիեի վկայությամբ՝ Մարդինում կար 1500 հակոբիկյան հայ¹⁰: Օլիվիեն Մարդինի և Մծբինի բնակչության մասին խոսելիս երկու դեպքում էլ օգտագործում է «հակոբիկյան հայ» արտահայտությունը: Լ. Տեր-Պետրոսյանն այդ շփոթը բացատրում է Օլիվիեի անտեղյակությամբ¹¹, ով չի զանազանել հայերին և հակոբիկյան ասորիներին, մանավանդ որ վերջիններս Օսմանյան տերության պաշտոնական իրավակարգով մտնում էին «հայ համայնքի» (*ermeni milleti*) կազմի մեջ՝ ենթարկվելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի իրավասությանը¹²: Պաշտոնական փաստաթղթերում նրանց երբեմն նույնիսկ կոչում էին «յաղուբի էրմենիլեր», այսինքն՝ «հակոբիկ հայեր», թեև ավելի տարածված էր «սյուրյանի կադիմ»՝ «հին ասորիներ», այսինքն՝ ո՛չ կաթոլիկներ կամ բողոքականներ¹³: Շատ հավանական է, որ գուցե Օլիվիեն չի շփոթել հայերին և հակոբիկյան ասորիներին, այսինքն՝ նա, իրոք, ներկայացրել է իրականությունը, և այս տարածաշրջանի հայերի մի մասն արդեն դարձել էր Հակոբիկյան եկեղեցու հետևորդ, թեև որոշ ժամանակ, հնարավոր է, պահպանել է մայրենի լեզուն: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ հայերի ասորացման գործընթացն սկսվել է 18-րդ դարի երկրորդ կեսից կամ թերևս ավելի վաղ, ապա շարունակվել է հետագայում, մասնավորապես, իր հորձանուտում ներառելով Հայոց ցեղասպանության հետևանքով այստեղ հաստատված տարագիր հայերին:

⁷ Տե՛ս Հակոբյան Ա., *Խարբերդի ասորիները Մեծ եղեռնի նախաշեմին – Արևելագիտության հարցեր* (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), N 9, ԵՊՀ հրատ., Եր., 2015, էջ 6:

⁸ Bell Gertrude, *The Churches and Monasteries of the Tur Abdin, Heidelberg, 1910, London, 1982, p. 118-119, 163 etc.; Sinclair T. A., Eastern Turkey: An Architectural and Archaeological Survey, Volume III, London, 1989, p. 431.*

⁹ Ավելի ուշ շրջանի քարտեզում արդեն այդ անունով գյուղ չկա. թուրքերն այն հետագայում անվանափոխել են Օրթաջա: Այժմ քրդաբնակ է:

¹⁰ Olivier G.-A., *Voyage dans l'Empire Othoman, l'Égypte et la Perse, t. 4, p. 242-245.*

¹¹ Տեր-Պետրոսյան Լ., Հայերը միջնադարյան Մծբինում և Մեծ Հայքի հարավային նահանգներում, Պատմա-բանասիրական հանդես, N 3, 1979, էջ 87:

¹² Նույն տեղում, էջ 87, նաև Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմությունը..., Վեցերորդ տպագրություն, Պէրյուք, 1960, էջ 69-70:

¹³ Հակոբյան Ա., *Խարբերդի ասորիները Մեծ եղեռնի նախաշեմին*, էջ 9:

Որ Հայաստանի հարավային շրջաններում, բացի քրդացումից և արաբացումից, տեղի է ունեցել նաև ասորացում, հաստատվում է հետևյալ վկայություններով: Տ. Մկունդը «Ամիտայի արձագանգներու վերակոչումն» գրքում հիշատակում է ասորատառ հայերեն Ավետարանի գոյության մասին¹⁴: Ո՞ւմ համար է նախատեսվել այն: Իհարկե, ուծացման փուլում գտնվող, բայց դեռևս հայերենը չմոռացած հայերի համար: Ասորացած հայերի մեծ մասը դավանական առումով եղել է Հակոբիկյան եկեղեցու հետևորդ (յակուրի): Քրիստոնեական եկեղեցու առաջին բաժանումից (451 թ.) հետո Հակոբիկյան եկեղեցին, չընդունելով Քաղկեդոնի ժողովի որոշումները, հարել է Հայ Առաքելական եկեղեցուն և համարվում է Արևելյան ուղղափառ եկեղեցիներից մեկը: Հետագայում Օսմանյան կայսրության պաշտոնական իրավակարգով հակոբիկյանները մտնում էին «հայ համայնքի» (ermeni milleti) կազմի մեջ՝ ենթարկվելով Կ. Պոլսի հայոց պատրիարքության իրավասությանը: Հայ Առաքելական և Հակոբիկյան եկեղեցիների միջև էական տարբերություններ գրեթե չկան, հանգամանք, որը զգալի դեր է խաղացել հայերի ասորացման գործընթացում (տարբերությունները հիմնականում ոչ ծիսադավանական են, օրինակ, վերոհիշյալ հայ ընտանիքի օրինակով նշեն, որ նրանք պահքի օրերին օգտագործում են ձկնեղեն, ինչը Հայ Առաքելական եկեղեցին չի թույլատրում): Արժեքավոր է նաև հետևյալ տեղեկությունը, որը վերցրել ենք սոցիոլոգ Լորանս Ռիտտերի հոդվածից. «Ադիյամանում բնակվող մի ընտանիքում, հիսնամյա Պետրոսի սերունդը վերաբացումից ի վեր ամեն կիրակի հաճախում է տեղի ասորական եկեղեցին, որտեղ պատարագին մասնակցողների 70-ից 80 տոկոսը հայեր են: ...ասորական այս եկեղեցին հաճախելը որոշ առումով քրիստոնեական պատկանելության մի դրսևորում է, բայց նրանց պակասում է այդ նույն պատկանելության մասին տարրական գիտելիքները՝ սկսած լեզվից, վերջացրած պատմությամբ, սովորություններով, ավանդույթներով: Եթե ներքին ամուսնություններով զույգացած այս ընտանիքներում կոտորածների հիշողությունը շատ հաճախ պահպանված է, ապա ինքնությունից նրանց միայն փշրանքներ են փոխանցվել»¹⁵:

Ռիտտերի հոդվածից մեջբերենք ևս մի ուշագրավ տեղեկություն. «Սասունցիների մի ընտանիքում եղբայրներից ավագը, այսօր արդեն ավելի քան 70 տարեկան, քրիստոնյա է, երիտասարդ տարիքում մկրտվել է ասորական եկեղեցում, 80-ական թվականներին Ստամբուլ ժամանելով ընդունվել է որպես հայ, իսկ նրա կրտսեր եղբայրը, որ եկել է ավելի ուշ՝ 90-ականներին, բարեպաշտ մուսուլ-

¹⁴ Ասորատառ հայերեն Ավետարանով ժամանակին հետաքրքրվել է անվանի բանասեր Կ. Բասմաջյանը, կարծելով, թե միգրացիայի գրված լինելը գրերի գյուտից առաջ, ուստի անգնահատելի կլինի այդ Ավետարանի արժեքը մեր ազգային, եկեղեցական ու գրական պատմության համար: Մակայն Ավետարանի հիշատակարանից պարզվել է, որ այն ընդօրինակվել է 1749 թ.: Բացի հիշյալ Ավետարանից՝ Դեր-ի-Ջաֆրան վանքում պահվել են նաև ուրիշ ասորատառ հայերեն գրքեր: Դժբախտաբար, հայտնի չէ այդ գրքերի ճակատագիրը 1915 թ. հետո:

¹⁵ Լորանս Ռ., Լոռությունից լոռություն. հայկական ինքնություն և իսլամացած հայեր, <http://www.arevelk.am/am/content/5/296/%D6%80.html>, նաև <http://repairfuture.net/index.php/hy/identity-other-standpoint-ar/from-silence-to-silence-armenian-identity-and-islamized-armenians-armenian>

ման է, որի կինը, որը նույնպես հայ է, կրում է գլխաշոր և ամեն օր աղոթում է թաղամասի մզկիթում»¹⁶:

Հայերի աստրացումը շարունակվել է նաև Հայոց ցեղասպանության հետևանքով տարագրված հայերի շրջանում, երբ որոշ թվով հայեր ապաստանել են լեռնային դժվարամատչելի Տուր Աբդինի շրջանում: Այդ վերապրածներից ոմանք իրենց գոյությամբ պարտական են ասորի ժողովրդի օգնությանը. փրկվածների գերակշիռ մասը եղել է կանայք, դեռատի աղջիկներ ու տղաներ: Տասնամյակներ շարունակ այդ փրկված հայերը, որոնց Հրանտ Դինքն անվանում էր «թափառող հոգիներ», իրենց գոյությունը պահպանեցին, ոմանք հետեղեռնյան տարիներին կարողացան ամուսնանալ իրենց ազգակիցների կամ փրկարար ասորիների հետ:

Մոտ երեք տարի առաջ վերը հիշված ընտանիքի ազգականներից մեկը, որ ապրում է Գերմանիայում և նույնպես հայերեն չգիտեր, այցի էր եկել Հայաստանում բնակվող իր ազգականներին: Զրույցներից մեկի ժամանակ նա ասաց, որ իր պապը Փայլուի (Բալու, Դիարբեքիի նահանգում) հայերից է եղել և տարագրության օրերին ապաստանել է Տուր Աբդինում:

Հաջորդ գնահատելի տեղեկությունը մեզ հայտնել է քաղաքագետ, պատմաբան Ալեքսանդր Քանանյանը: Նա հաղորդեց, որ Հռոմի Արևելյան ինստիտուտում ուսանելու տարիներին ինքը ծանոթացել է ասորի վարդապետ հայր Մալիբայի հետ, որի հայրական տան լեզուն «սոսկալիորեն վատ հասկացվող հայերենն էր»: Ըստ Ա. Քանանյանի՝ հայր Մալիբայի ծնողները Ուրֆայի (Եդեսիա) կողմերից էին և Հակոբիկյան եկեղեցու հետևորդ:

Այս տարվա հուլիսին սփյուռքահայ ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցող պոլսահայ մի ուսուցիչ հաղորդեց, թե հայկական արմատներ ունի նաև 2011 թ. հունիսի 12-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրություններում Մարդինից պատգամավոր ընտրված ասորի Էրոլ Դորան, որը Մեջլիս մտած առաջին ասորի պատգամավորն է: Այս հաղորդման իսկությունը ստուգելու ուղղությամբ ձեռնարկված մեր պրպտումները, սակայն, ապարդյուն անցան:

Մեկ այլ հետաքրքրական տվյալ հաղորդվեց վերջերս (21. 09. 2016 թ., ժ. Մոտավորապես 21:15-ին). «Կենտրոն» հեռուստաալիքով հեռարձակվող «Հայկական ժառանգություն» ֆիլմաշարում պատմվում էր Մարդինից մի քանի կմ հեռավորությամբ գտնվող Դեր-ի-Ջաֆրան վանքի մասին, որի սպասավորներից մեկը՝ հայր Անանիոս նաև հայկական արմատներ ուներ, թեև հայերեն չգիտեր:

Ամփոփելով նշենք, որ խնդիրը պատմաազգագրական լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Նշենք նաև, որ հայրենադարձված հայերի վերոհիշյալ և մի քանի այլ ընտանիքներ բավականին հետաքրքիր պատմություններ, սրբերի մասին հրաշապատում գրույցներ, սովորույթներ են պահպանել, ինչը ազգագրական

¹⁶ <http://www.arevelk.am/am/content/5/296/%D6%80.html>, նաև <http://repairfuture.net/index.php/hy/identity-other-standpoint-ar/from-silence-to-silence-armenian-identity-and-islamized-armenians-armenian>

և բանահյուսական տեսանկյունից կարևորություն կարող է ներկայացնել ուսումնասիրողների համար:

НАБЛЮДЕНИЯ О ЕЩЕ ОДНОЙ ЭТНОКОНФЕССИОНАЛЬНОЙ ГРУППЕ АССИМИЛИРОВАННЫХ АРМЯН

___ *Резюме* ___

___ *А. Малоян* ___

В последние годы довольно часто обсуждают проблемы криптоармян или иноверных армян, а также армян, не владеющих родным языком. В частности, ведутся наблюдения и издаются статьи о тюркизировавшихся, арабизировавшихся, курдизировавшихся армянах, армянах-католиках или армянах, принявших ислам. В этом контексте необходимо изучить историю ассимилировавшихся армян.

Мы уверены, что на территории нынешней Турции были и есть ассимилировавшиеся армяне. Речь идет в основном о регионе Тур-Абдин и южных частях Армении, где веками рядом жили армяне и ассирийцы (айсоры). Тур-Абдин примерно совпадал с Мидьят (каза в Мардинском санджаке Диарбекирского вилайета). С давних времен на этой территории жили армяне, в дальнейшем обосновались также ассирийцы, курды. Изменилась демографическая картина территории. Ассирийцы стали большинством, начался процесс ассиризации армян.

Большая часть ассиризовавшихся армян, по вере, была последовательницей Сиро-яковитской (Сирийская) православной церкви (якуби). Между Армянской Апостольской и Сиро-яковитской (Сирийская) православной церковью почти нет существенной разницы. Это обстоятельство сыграло ощутимую роль в вопросе ассиризации армян.

Ассиризование армян усугублялось также по причине изгнанничества вследствие геноцида, когда определенное число армян нашло убежище в гористой и труднопроходимой области Тур-Абдин.

В итоге отметим, что проблема нуждается в серьезном историко-этнографическом исследовании.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մալոյան Արման Մանուկի - պ.գ.թ., ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի հայագիտական և սոցիալ-մշակութային առարկաների բաժին,
[E-mail: armanmaloyan@mail.ru](mailto:armanmaloyan@mail.ru)

**ԵՐԵՎԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՅՄԱՆ ՁԵՎԵՐՆ
ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ***

Մարդու վերարտադրությունը բարդ և երկարատև գործընթաց է, որը բաղկացած է երկու մասից՝ բնական-կենսաբանական (ֆիզիկական) և սոցիալականացման էտապներից, որի ընթացքում ապահովվում է անհատի՝ որպես որոշակի սոցիումի անմիջական անդամի ձևավորումը: Յուրաքանչյուր անձ անցնում է սոցիալականացման փուլով, քանի որ առանց դրա նա չի կարող գոյություն ունենալ որպես հասարակության կամ էթնոսի մաս: Սոցիալականացման գործընթացքում մարդը հասնում է ֆիզիկական և հոգեբանական զարգացման որոշակի մակարդակի, յուրացնում է տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կենսագործունեության այն ձևերը, որոնք հնարավորություն են տալիս նրան որոշակի տեղ գրավելու և ինքնուրույն գործելու սոցիումի կառույցում: Էթնիկ ինքնության ձևավորումը ևս սոցիալականացման արդյունք է. դա անմիջականորեն կախված է մարդու՝ սեփական մշակույթի (ազգային արժեքների, գործունեության ու վարքի, կյանքի նորմերի և այլն) յուրացման աստիճանից: ¹

Անհատի սոցիալականացման ընթացքում, ըստ էության, տեղի է ունենում մշակույթի տեղափոխում/շարժընթաց ժամանակի մեջ, այսինքն՝ իրականացվում է մշակութային արժեքների փոխանցում մի սերնդից մյուսին՝ այդպիսով, պահպանելով մշակութային ժառանգությունը: Ընդ որում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փոխանցվում է ոչ թե մշակույթն ընդհանրապես, այլ հենց տեղական, էթնիկ մշակույթը, որի արդյունքում սոցիալականացման գործընթացում տեղի է ունենում էթնոսի՝ որպես սոցիումալականության ամբողջության վերարտադրությունը: ²

Սոցիալականացման գործընթացում առանձնացվում է երկու փուլ՝ առաջինային (մանկական) և երկրորդային (հասուն տարիքի): Առաջին փուլում երեխաները յուրացնում են մշակույթի ամենատարածված, կենսականորեն անհրաժեշտ տարրերը, տեղի է ունենում սոցիումալականության նախապատրաստում դեպի հասուն տարիքը: Այս ժամանակ սոցիալականացումն իրականացվում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ դաստիարակության եղանակով՝ սոցիալականացման յուրահատուկ ձևերի ու ինստիտուտների միջոցով, որոնք երեխաներին ապահովում էին իրենց առօրյա կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով: Սոցիալականացման ավանդական ինստիտուտների (ընտանիք, հասակակիցների խումբ և համայնք) շնորհիվ դաստիարակության գործընթացը

* Հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Комарова Г., Этнография детства: междисциплинарные исследования, М. 2004.

² Кон И., Ребенок и общество, Учебное пособие, М. 2003.

կատարվում էր որոշակիորեն կազմակերպված ձևերով, որոնք կանոնակարգում էին դրա ընթացքն ու ապահովում սպասելի արդյունքները: Հիշյալ ինստիտուտներն ունեին բազմագործառույթ բնույթ, սակայն իրենց նշանակությամբ հավասարազոր չէին:

Պատմական տարբեր դարաշրջաններում և հասարակական զարգացման տարբեր փուլերում անհատի սոցիալականացման ամենակարևոր և գլխավոր ինստիտուտներից մեկը եղել ու մնում է ընտանիքը: Հենց նա է երեխայի համար ստեղծում կյանքի այն մոդելը, որտեղ նա հետագայում ներգրավվելու է: Ընտանիքի օգնությամբ է երեխան մուտք գործում հասարակություն. ընտանիքն է նրան տալիս անուն, ընդգրկում ազգակցական համակարգի մեջ, ծանոթացնում նրան հասարակական վարքի նորմերին և այլ մարդկանց հետ հաղորդակցման կանոններին: Այստեղ են երեխաները ձեռք բերում փոխհարաբերությունների առաջին հմտությունները, յուրացնում առաջին սոցիալական դերերը (այդ թվում՝ սեռային դերերը, ձևավորում առնականության և կանացիության գծերը), գիտակցում առաջին նորմերն ու արժեքները: Որպես մակրոմիջավայրի տարր՝ ընտանիքը դառնում է մշակույթի մեջ երեխային ուղեկցորդը. կրոնական ավանդույթները, էթնիկական կարծրատիպերը և բարոյական արժեքները երեխաները յուրացնում են հիմնականում ընտանիքի միջոցով:³ Ընտանիքի ազդեցությունը երեխայի ձևավորման վրա որոշվում էր հետևյալ բանաձևով. ինչպիսին ընտանիքն է, այնպիսին էլ զավակն է: Այս դրույթը դրսևորվում էր սովորության իրավունքի բազմաթիվ նորմերում, հանդես գալիս որպես չափորոշիչ՝ ամուսնական զույգի ընտրության պարագայում: Դա արտացոլված է նաև Ժողովրդական բանահյուսության մեջ, մասնավորապես հետևյալ ասացվածքներում. «Պտուղը ծառից հեռու չի ընկնի», «Տղեն որ հորն ու մորը չքաշե, գողունի կըլնի»:

Երեխայի կյանքի ուղին շատ դեպքերում կանխորոշված էր ընտանիքի ներքին կարգով, բնույթով, դրա անդամների դիրքով ու փոխհարաբերություններով: Ընդ որում, դրանց ազդեցությունը մարդու վրա մեծանում էր տարիների ընթացքում՝ արտահայտվելով անհատական որակներում:

Ալեքսանդրապոլի ավանդական ընտանիքի ներքին կարգը բնութագրվում էր նաեւապետականությամբ ու ավտորիտարությամբ:⁴ Այստեղ ընտանիքի ղեկավարը, անկախ դրա անդամների թվից, տան տարիքով մեծ տղամարդն էր, որին անվերապահորեն լսում ու ենթարկվում էին բոլորը: Նրա օգնականն ու խորհրդատուն կինն էր, որի վրա էին դրված տան ներքին խնդիրների կարգավորումն ու վերահսկողությունը: Մայրությունը կանանց գլխավոր գործառույթներից մեկն է: Մայրը բացառիկ դեր ուներ առաջնային սոցիալականացման գործում: Ժողովրդական մշակույթը կնոջ վրա էր դրել աշխարհայացքային, սոցիալական, մանկավարժական և հոգեբանական գործառույթների իրականացումը: Եթե հայրն ընտանե-

³ Комарова Г., *Этнография детства*, стр. 85.

⁴ Բազեյան Կ., Աղանյան Գ., *Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ* (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան-Գյումրի 2014 թ., էջ 60-62:

կան կենցաղավարման ձևն էր որոշում՝ սահմանելով ընտանիքի դերը համայնքային միջավայրում, ապա մայրը հետևում էր այդ ձևի իրականացմանը:

Ներընտանեկան հարաբերությունները, որտեղ ամենակարևորը երկու սեռերի փոխհարաբերություններն էին ու ավագության կարգը, կառուցված էին փոխադարձ հարգանքի ու հնազանդության վրա: Կին-տղամարդ, ավագ-կրտսեր կապն ու հարաբերությունները, ինչպես նաև բարոյական նորմերի պահպանումը նահապետական ընտանիքում, խիստ կանոնակարգված էին և գտնվում էին տանտիկնոջ՝ մեծ մոր անմիջական իրավասության ներքո: Ընտանիքի ավանդական-նահապետական կենսաձևը երիտասարդ սերնդի համար ապագա վարքի մոդել էր և սեփական երեխաների դաստիարակության հիմք: Ընտանիքն իրենից ներկայացնում էր կայուն, բարոյապես առողջ և համախմբված մի ընդհանրություն, որի համար բնորոշ էին մշտապես գործող բազմաբնույթ կապերը. միասնական աշխատանքը, ժամանցը, մասնակցությունը ընտանեկան ծիսակարգում:⁵

Ժողովրդական դաստիարակության հիմնաքարային եղանակներից մեկը աշխատանքային դաստիարակությունն էր, որն իրականացվում էր դեռ մանուկ հասակում՝ երեխային կյանքի տարբեր ոլորտներ ներգրավելով. այդպես նրանք սովորում էին ոչ միայն լսելով ու դիտելով, այլև անմիջական մասնակցությամբ: Կյանքի համար անհրաժեշտ բոլոր հմտությունները, կարողություններն ու փորձը ժառանգաբար փոխանցվում էին հորից որդուն, մորից դստերը, մի ընտանիքից մյուսին: Այսպիսով, հենց ընտանիքում էր ձևավորվում անհատի առաջնային սոցիալական էությունը:

Սոցիալականացման գործընթացի բաղկացուցիչ մասն էր կազմում ավանդական դաստիարակությունը՝ որպես անհատի վրա նպատակաուղղված ազդեցություն գործող համակարգ: Ժողովրդական մանկավարժությունը ներթափանցում էր կյանքի բոլոր կողմերը. հավատալիքները, տոներն ու ծեսերը, սովորույթները, բանավոր գեղարվեստական ստեղծագործությունը: Դաստիարակության ավանդույթներն արտահայտվում էին բնության նկատմամբ վերաբերմունքի, հյուրընկալության օրենքների, արհեստների, հագուստի ու գեղարվեստական հարդարման և կենցաղի այլ երևույթներում:

Առավել խիստ վերահսկողության ու սահմանափակումների էին ենթարկվում գործունեության այն ձևերն ու սոցիալական խմբերը, որոնց մշակույթը մեծ արժեք ու դեր էր վերագրում: Երեխաների կարգավիճակի բարձրացման հետ մեկտեղ մեծանում էին նաև նրանց վրա սոցիալական վերահսկողությունն ու նրանցից սպասվող պահանջմունքները:

Ալեքսանդրապոլում երեխաների դաստիարակությունն իրականացվել է փուլային ձևով՝ մանկիկային շրջան (0-4 տարեկան), մանկության (5-7 տարեկան) և պատանեկության (8-12 տարեկան) շրջան, ընդ որում, երեխայի նկատմամբ վերաբերմունքում տարբերություն էր դրվում ոչ այնքան տարիքային, որքան սեռային պատկանելության առումով:

⁵ *Семья и семейный быт, Армяне, из серии «Народы и культуры», М. 2012, ст. 315.*

Հասարակական աշխարհայացքի համաձայն՝ տղան համարվում էր տան սյունը, իսկ աղջիկը՝ ուրիշի բաժին: Մրանով էր պայմանավորված այն, որ տղայի ծնունդն ընդունվում էր մեծ ուրախությամբ ու տոնակատարություններով, քան աղջկա ծնունդը, հատկապես, եթե ծնվողը առաջին աղջիկը չէր այդ ընտանիքում: Երեխաների միջև տարբեր վերաբերմունքը դրսևորվում էր արդեն իսկ հետծննդյան մի շարք ծեսերում, մասնավորապես պորտը կտրելու արարողության ժամանակ, երբ տղայի պորտալարը թաղում էին դրսում՝ որևէ լուսավոր տեղ, իսկ աղջկանը՝ տան կամ բակի մութ ու հեռավոր անկյունում, հավատալով, որ տղան մեծանալով լուսավոր ճանապարհ կընտրի ու կդառնա աչքի ընկնող մարդ, իսկ աղջիկը կլինի խոնարհ ու հեզ տանտիրուհի: Այդպիսով, կանխորոշվում ու ապահովվում էր նրանց հետագա կյանքի ուղին՝ հանրային ոլորտն ու առաջադիմությունը՝ տղաների, մասնավոր ու փակ ընտանեկան ոլորտը՝ աղջիկների համար:

Բոլոր դեպքերում մինչև 5 տարեկանը երեխաների միջև տարբերություն չէր դրվում այն աստիճան, որ տղաները դեռևս գտնվում էին մայրերի խնամքի տակ ու բաղնիք էին գնում կանանց հետ: Իրենց մանկական շրջանը՝ 5-7 տարեկան հասակը, երեխաներն անցկացնում էին միասին: Այս տարիքը կարելի է համարել այն սահմանը, որից այն կողմ էին մնում անհոգ մանկական զվարճանքներն ու խաղերը: Պատանեկության շրջանում արդեն սեռերի միջև տարբերություններ դրվում էին՝ կապված աշխատանքային դաստիարակության հետ, որը երեխաների սոցիալականացման կարևորագույն մասն է կազմում: Հայ ժողովրդի մեջ սեռերի միջև աշխատանքային բաժանման բնական անհրաժեշտությունն աստիճանաբար ձեռք է բերել մշակութային երևույթի արժեք՝ ներառելով դրա սոցիալական ու էթնիկական բոլոր կողմերը:⁶ Երեխաները աշխատանքային դաստիարակություն ստանում էին՝ կատարելով ծնողների հանձնարարությունները և օգնելով տնտեսության մեջ դեռ մանուկ հասակից: Քանի որ ալեքսանդրապոլցիներն զբաղվում էին ինչպես երկրագործական-անասնապահական տնտեսվարությամբ, այնպես էլ արհեստներով ու առևտրով, ուստի երեխաների դաստիարակվելուն էլ սերտորեն կապված էր ծնողների առօրյա զբաղմունքների, գործնական կյանքի հետ: Գյուղացու որդին դառնում էր հողագործ, արհեստավորի որդին սովորում էր հոր մոտ և դառնում նրա արհեստի շարունակողը: Ալեքսանդրապոլում մեծ կարևորություն էր տրվում նաև երեխաների կրթությանը: Եթե ոչ բոլորն էին աղջիկներին դպրոց ուղարկում, ապա տղաներին ձգտում էին գոնե տարրական գրագիտություն սովորեցնել:

Աղջիկները հիմնականում օգնում էին իրենց մայրերին ընտանեկան, կենցաղային աշխատանքներում. սովորում էին տնային գործեր կատարել, կարել, գործել և այն բոլոր հմտությունները, որոնք նրանց պետք էին գալու ամուսնանալուց հետո: Այսպես է ներկայացվում այդ գործընթացն Ալեքսանդրապոլում. «Մայրը շատ մեծ պարտականություններ ուներ իր աղջկա շենք ու շնորհքի, նիստ ու կացի, լավ վարքի, օրինակելի հարս, մայր, տանտիկին լինելու համար: Դեռ փոք-

⁶ *Տե՛ս Армяне, ст. 316.*

րուց հետևում էր, որ աղջիկը թամբալ անգործ չէլնի, փոքր ժամանակից, ավելը ձեռքն էր տալիս դուռն ավլելու, ապա բակի-շվաքի հավաքելն ու մաքրելն էր հանձնարարում... Տան հոգավր (մաքրելը, հավաքելը) սովորեցնելուց հետո սովորեցնում է սեղան դնել... ուտելուց անմիջապես հետո հավաքել, լվանալ...:

Քանի աղջիկը փոքր է, սովորեցնում են թեշիկով (իլիկ) թել ոլորել: Երբ մի քիչ մեծանում է, սովորեցնում են բուրդ մանել, գզել, գուլպա, շալ և այլն գործել:

Մայրը սովորեցնում է կար անել, իհարկե շապիկ, վարտիք, երեխայի շորեր, որոնց համար առանձին վարպետություն չի պահանջվում: Սովորեցնում է լվացք անել, հարթուկել: Երբ աղջիկն արդեն 13-15 տարեկան է, նրան սովորեցնում են ձեռագործ անել կա՛մ մայրը, կա՛մ հարևանի ու բարեկամների աղջիկները: Աղջիկներին ուղարկում էին կարպետ գործողների մոտ սովորելու:»⁷

Ժողովրդական դաստիարակության մեջ մեծ էր նաև բանավոր-գեղարվեստական խոսքի, մասնավորապես բանահյուսության ասացվածքաբանական ժանրերի դերը:⁸ Այս առումով ուշադրության արժանի են առածներն ու ասացվածքները, որոնց միջոցով ժողովուրդը անխնա ձաղկել է հասարակական կյանքի բացասական երևույթները, չարն ու վատը և ուսուցանել բարին ու լավը: Առածները հատկապես իրենց բովանդակությամբ չափազանց բազմազան են, չկա կենսական որևէ երևույթ, որն իր անդրադարձը գտած չլինի դրանց մեջ: Դարերի ընթացքում առածներն ու ասացվածքները դառնում էին յուրահատուկ ավանդներ, որոնցով կյանքում առաջնորդվում էր մարդը: Ժողովրդի կարծիքով, դրանք գալիս են դարերի խորքից, ստուգված ու ճշտված են շատ սերունդների փորձով, ուստի չեն կարող սխալ լինել կամ չիրականանալ:

Դաստիարակության գործընթացում բանավոր խոսքի բոլոր ձևերը լայնորեն օգտագործվում էին ընտանիքի ավագների, մասնավորապես տատիկների ու պապիկների կողմից, ինչն արտահայտվում էր ալեքսանդրապոլյան «մեծանց խոսքը գետին չի ընկնի», «պապս խոսքն ունեն», «մամս կըսեր» և այլ դարձվածներում:

«Մեծանց խոսքի» չափազանց արժեքավոր նմուշներ են պահպանվել ձեռագիր արխիվներում, որոնք բնութագրում են ալեքսանդրապոլցիների աշխարհընկալումն ու արժեհամակարգը, ներկայացնում ապրելակերպի, գործունեության ու վարքի կանոններն ու նորմերը: Եթե տղամարդու համար դրանք արտաքին աշխարհի մեջ կողմնորոշվելու ու ճիշտ ապրելուն ուղղված խորհուրդներ են՝ տրված պապի կողմից թոռանը, ապա կնոջ դեպքում ընտանիքում նրա վարքն ու կենսակերպը սահմանող չափորոշիչներ են, որոնց պահպանումն ու դրանցով առաջնորդվելը ներդաշնակ ու բարեկեցիկ ընտանիքի ապահովման գրավականն էր համարվում, որ տրվում էր մեծ մոր/սկեստրի կամ տատի կողմից բոլոր կանանց ու աղջիկներին: Կարևորելով արդի ազգային մանկավարժության մեջ հայոց ավանդական արժեհամակարգի ու դրանում ամրագրված վարքի չափանիշների

⁷ Գյուլեցյան Հ., Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), տետր N 1, 1976, ՀՀ ԳԱԱ ՀԱԻՐ ԱԲԱ, գործ 4/99, էջ 63-64:

⁸ Цаллагова З., Этнопедагогический потенциал северокавказских пословичных назиданий, Этнологическое обозрение, М. 2012, N 2, с. 126-136.

ներառումն ու կիրառումը երեխաների դաստիարակության գործում՝ մի փոքր ընդգրկուն ենք ներկայացնում ալեքսանդրապոլյան խրատները՝ արխիվային նյութերի հիման վրա:

Այսպես է նկարագրում այդ գործընթացը Հեղինե Գյուլեցյանը. «Մամը նստում էր թախտին, կամ ձմռանը քուրսու վերևի կողմում, երեխաներին հավաքում շուրջը, հեքիաթներ պատմում, խրատներ տալիս, թե ինչպես պետք է վարվեն մեծերի ու փոքրերի հետ:

-Օդո՛ւլ, դու օր վենձին (տարիքավորին, մեծին) յանկաճ էնիս (ականջ անես, լսես), ինոր խրատներն յանկճիտ օղ էնիս, ինոր պատիվը պահիս, ինոր օշնանքը քեզի յամեն չարե ու փորձությունե կփրկի, յաջողությունը գլխեդ անպակաս կեղնի, չորն էրթաս՝ կանանչ կբուսնի ոտքիդ տակը, ֆող (հող) բռնիս, օսկի կդառնա:

- Օդո՛ւլ, մարդու յաչքը կուշտ պտի ըլլի, յաչքածակությունը (ագահությունը) ցեցի պես մարդու ջանը կքրքրի, դինջություն չի տա, սադա (անընդհատ) յաչքը իսոր-ինոր (սրա-նրա) ունեցածի վրա է, ինքն ինչքան ունենա, էլի գուզե, իդոր հմար էլ յաչքը չի լիանա, ինքն իրան կտանջի:

- Օդո՛ւլ, ուրիշի ունեցածի վրա յաչք մի՛ դնե, քու թներուդ յուսդ (հույսդ) դիր, սրտանց կպի գործի, էնպես օր դու գործին ուտիս, գործը քեզի չուտի, դու գործի հախեն գաս, գործը քու հախեդ չգա: Յաչքդ հարամի վրա չեղնի, հարամը գերան էղնի, կկոտրի, հըմը հալալը մազ էղնի, չի կտրի: Կտեսնիս, հաջի աղային (պապին), իրան ճակտի հալալ քրտինքով տղաքը պահից, վենձցրից (մեծացրեց), բիթունին կարգից (ամուսնացրեց), տնավորից, բիթունն ալ նամուսով, թասիբով, դայրաթով աշխատող ին, դսմաթը գլխներես կթափի, ասնըֆի (արհեստակիցների) մեջ պատիվ ունին, ուրիշները միշտ օրինակ կբերին, թե ինչըդ նամուսով, դայրաթով իրար հետ սիրով տուն ինք: Ախր ինքն անունով ուստա էր, յամեն ինչը տեղը տեղին գիտի, միշտ էլ կըսի լավ աշիք (նայեք), շնորիս ձեռքես առնիք, օր ընձեն յետն մնա իւեր գա, թե չէ օր գնացի, էս ձեռներս էլ ֆողի տակ պտի մնան էլ ամ ինչ օգուտ, չունքի մարդ ըսածդ քանի հոգին բերանն է, պտի ուրիշին օգնե, լավութեն էնե, սորվեցնե: Թե օր էդպես չէ, ըսել է (ուրեմն) մարդ չէ»:⁹

«Ահա թե ինչ է սովորեցնում գյումրեցի տարիքավոր կիսն իրենից ջահել հարսներին, աղջիկներին, որը ժամանակին իրեն են սովորեցրել իրենից տարիքավորները և պահանջում սրբությամբ կատարել և հաղորդել իրենց հաջորդներին:

Կնիկը պտի դոչաղ էղնի (աշխատասեր, արագաշարժ), հունարով, յամեն բան սորվող, էնող-դնող, մանել, գզել, կար ու կարկըտան, կար ու ձև, ձեռագործ, էփել, թափել գիտենա, թամբությունը, տոպելությունը (ծույլ դանդաղաշարժ) թե՛ իրա, թե՛ մարդու տունը կքանդե:

Կնիկը պտի խոսքի ետն ու առաջը յիմացող էղնի, բերանն էկած խոսքը չըսե, լավըմ չափե ձևե, նոր խոսի, փորեն դուս էկող խոսքը քյառթերուն քցե, մնացածը ծանդր ու թեթն էնե, նոր դուս հանե: Կնիկը լղլղյի, խաբարբզան, խաբար տանող ու բերող, ուրիշներին իրար քցող (գժտեցնող) պտի չեղնի, թե չէ էդ ուրիշ-

⁹ Գյուլեցյան Հ., նշվ. աշխ., էջ 54-55:

ներն էլի իրար հետ լավ կեղնին, ինքը սներես կմնա: Կնիկն իրանց տան սրոր (գաղտնիքը) ուրիշին չպտի ըսե, թե չէ բերան-բերան, հագար բերան, իրանց չունենալն էլ ուրիշին չպտի ըսե, ինքը ցամաք հացով պտի յուր էրթա, հըմը տուն գալողին լավ պատվե, էնպես էնե, օր դսեն (դրսից) էկողն յիմանա (գիտենա), թե իրան մե ձեռը եղի մեջն է, մեկելը՝ մեղրի:

Ինչքան էլ մարդդ նեղեցնե, որ տղամարդն է սուրբ, ճղճղոց չքցես, քանի կրնաս խաթրով, համոզելով խելքի բեր, թե չէ ձեն ու ձուկ քցելով համ մարդուդ դիա (ավելի) կկատողեցնես, համ էլ ուրիշին վրեղ կխնդցնես: Ինչ օր դարդ, հերս (զայրույթ) ունիս, նես քցե, չայրեղ մի՛ կախե, միշտ էրեսդ խնդում պահե, վերջը հաստատ լավ կեղնիք ու կխնդաս, բախտավոր կեղնիս:

Երեխանց, յա մե հասարակ բանիմ հըմար դրկըցներուդ հետ կռիվ չենես, ձեն ու ձուկդ փորդ պահե: Սուտ չխոսիս, լոպպագութեն չենես, դեմինդ էշ չէ, կհասկնա, թե երեսիդ բան չըսե, ետևեղ վրեղ կխնդա: Երեխանցդ չծեծես, չանիծես, չքրֆես (չհայհոյես), չարութեն են էրե, լավ բան չեն էրե, խելոք, հանգիստ հասկցրու իրանց սխալը, խաթրով հասկցնելով դիա թեզ (շուտ) խելքի կբերես: Երեխանցդ տեղի, անտեղի ահ չտաս, թե չէ վախենալներուն քեզի կխափեն, սուտ կխոսին, եփ (երբ) օր վենձնան, էլ քեզի բանի տեղ չեն դնե: Քանի կրնաս, անուշ վարվի հետները, խաթրները մի՛ կոտրե, օր իրանք քեզի հա՛մ սիրեն, հա՛մ էլ պատիվդ պահեն:»¹⁰

Տղաներին ուղղված խրատները ներկայացնում ենք ըստ Ն. Նիկողոսյանի հուշերի. «Վորդի ջան. աշխարհքը չարությունով լիքն է, բայց մարդը թե մտքի մեջ մի բարի նպատակ դնի և ուղիղ նպատակին ձգտի, միշտ կհաղթե չարությանը: Ճշմարիտ խոսողը, ուրիշի ցավը քաշողը, խիղճ ու գութ ունեցողը, բարիք անողը և յերախտիք ճանաչողը ամեն փորձանքներից ու պատահարներից վողջ առողջ կպրծնի ու նպատակին կհասնի:

Ծնողների պատիվը չճանաչողը պոռնկորդի յե: Ազգի պատիվը չպահողը ծնողի պատիվն էլ չի պահի, քանի որ ծնողների ծնողը ազգն է: Յերբ վոր մեծանաս, քու պատիվդ պահիր, վոր ազգիդ պատիվը վար չընկնի:

Արժանավոր մարդու արժանիքը չիմացողը արժանիք չի ունենա: Ուժից ընկածին արհամարհողը նամարդ (տմարդի) յե: Նամարդի հետ բարեկամություն մի՛ անի, խեր չես տեսնի: Կեղծավորին մի՛ հավատա: Կեղծավորի խոսքը փալուտ փայտի կրակ է, շուտ կհանգչի: Կեղծավոր ու նամարդ մարդու հետ բարեկամություն անելիս զգուշությունը ձեռքիցդ մի՛ թողնի, նա գլխիդ օյին կխաղա:

Ամեն մարդու խաբեբա համարողը խաբեբա կլինի: Ազնիվ մարդն ամեն մարդու ազնիվ համարելով՝ շուտ կխաբվի:

Խելոք ու աշխարհ տեսած մարդուն խելք մի՛ սորվեցնի, փորձված մարդու խրատները լսի՛ր: Ամեն բան գիտեմ ասողի խելքը պակաս կլինի, վոր չափ էլ վոր մարդ բան իմանա, խելաոից, յերեխայից էլ բան կսովրի: Խելացի մարդն իրան չի

¹⁰ Գյուլեցյան Հ., նշվ. աշխ., էջ 56-58:

գովի, իր խելքը հրապարակ կհանե: Շնորհք ունեցող մարդը չի ասի, թե սուրբ Կարապետ եմ գնացել. թե իրան շնորք չէ տված, ս. Կարապետն ինչ անե:

Շնորհքով մարդն ուրիշին էլ շնորհք կսովորեցնե: Հյուսնար ունեցող մարդը նստած տեղը չի ասիլ ջարդեմ, կփշրեմ. հյուսնարը հրապարակում ցույց կտա: Աղա մարդն իրան չի ասի, թե աղագաղե յեմ, նա իր աղայությունը գործում ցույց կտա: Բշուց նժույգ չի դառնա, բռշից՝ փաշա, գյաղայից՝ աղա: Մեծ մարդը խոնարհ կլինի:

Բարիք չանողը բարիք չի տեսնի: Լավությունը ծածուկ արա, մարդկանց մի՛ հայտնի: Ցեթե մեկին լավություն կանես, վրան միննաթ մի՛ գա:

Խելք մարդը յեթե կրթություն չունի՝ կես մարդ է: Ուսում առած մարդը յեթե կրթություն չունի՝ կես մարդ է: Ուսումն առանց կրթության նման է անալի կերակրին. վորչափ էլ լավ կերակուր լինի, ուտողը համ չի առնի, բայց կերակրին աղ կարելի չե անել, իսկ անկիրթ ուսումնականը կմնա անհամ: Լավ ոջախի վորդին կրթված կլինի»¹¹:

Ընտանիքը, իր ողջ կարևորությամբ հանդերձ, երեխայի սոցիալականացման գործընթացում միակը չէ: Որպես ինքնազարգացման և փոխադարձ դաստիարակության գործուն՝ շատ մեծ ազդեցություն ունեն նաև հասակակիցների խումբն իր յուրահատուկ հարաբերություններով ու մշակույթով: Այն առաջին հերթին բավարարում էր երեխաների՝ մեծերի վերահսկողությունից դուրս, ազատ հարաբերություններ հաստատելու պահանջը. փոխադարձ հետաքրքրությունները, շրջապատող աշխարհն ու միմյանց ճանաչելու միասնական ջանքերը բացառիկ կարևոր նշանակություն ունեն: Ընտանիքից դուրս նույնպես պայմաններ էին ստեղծվում անհատի ձևավորման համար և դրանում կարևոր դաստիարակչական դեր էին խաղում տարբեր տարիքային խմբերը, որտեղ, խաղի միջոցով երեխաները յուրացնում էին մեծահասակների տնտեսական գործունեության եղանակները, զարգացնում մտավոր և ֆիզիկական ունակությունները, ձեռք բերում կամային հատկանիշներ և յուրացնում հասարակական վարքի նորմերը:

ВИДЫ И СПОСОБЫ СОЦИАЛИЗАЦИИ ДЕТЕЙ В АЛЕКСАНДРОПОЛЕ

___ Резюме ___

___ К. Базеян ___

Статья посвящена некоторым способам и видам народного воспитания как составной части соционормативной культуры. На основе впервые введенных в оборот письменных архивных источников представлены этапы социализации детей, виды и способы воспитания, применяемые при этом методы. В статье особо обсуждаются функции и роль семьи как одного из важнейших институтов этого процесса.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բազեյան Կարինե Ռազմիկի - պ.գ.թ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, E-mail: bazeyan60@mail.ru

¹¹ Նիկողոսյան Ն., Լենինական, Պապիս խրատները, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, FF II, էջ 7461-7469:

**ՇԻՐԱԿՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՆՊՈՒՄ ՕՁԻ ԵՎ ՕՁԱՄԱՆՈՒԿԻ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ***

Հնադարյան Շիրակն ու Վանանդն ընդգրկած Էթիունի երկրի բնակչության հնդեվրոպական ծագումն հաստատող պատմական ու լեզվաբանական բնույթի փաստերին¹ այժմ գումարվում են հնագիտության մատուցած տվյալները²: Այդպիսի եզրակացությունը հաստատվում է նաև Էթիունյան տարածքների բնակչության հնագույն և հնադարից եկող պաշտամունքների միջոցով³: Այդ նույնը հաստատելու են գալիս նաև Ախուրյանի ավազանի բնակչության օձապաշտության արգասիք ներքոբերյալ նյութն ու նրա վերլուծությունը:

Մ. Աբեղյանը հայոց օձապաշտությունն ուսումնասիրելիս նախ և առաջ ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վրա, որ օձերը տարբեր են ըմբռնվել՝ չար և բարի: Այս վերջինները, սովորաբար, ոչ թունավոր օձերն են՝ լորտունները, որոնք նույնիսկ հայի համարում են ունեցել⁴: Այս հանգամանքը նշանավոր հայագետին մղել է եզրակացնելու, որ «Ոչ թունավոր օձերի «հայ» անվանումը, որ մերթ իբրև օձ է հանդես գալիս, մերթ իբրև մարդ, և գավառի նախնիների նման պաշտպանում է գավառն ու բոլոր հայերին, ծագել է անշուշտ այն հանգամանքից, որ օձերը հնում որպես նախնիներ են ընկալվել»⁵: Հայոց առասպելաբանական պատկերացումներում օձերի նախնիներ համարվելու հետևանքով և օձերի՝ իրենց խորիքը փոխելու պատճառով է երևան եկել օձամանուկների առասպելական կեր-

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Կարագեոզեան Յ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հ. I, գիրք 1, Եր., 1988, էջ 175-176:

² Նույն տեղում, էջ 176, որտեղ վկայակոչված են Լոռի բերդի և Քարաշամբի պեղումների տվյալները: Դրանցից բխող եզրակացությունը հաստատվում է Արագածոտնի մարզի Վերին և Ներքին նավեր հնավայրերի պեղումների տվյալների միջոցով (տե՛ս Սիմոնյան Հ., «Հայկ և Բել», առասպել, ա՛նք, թե՛ իրապատում, Հայկագունիներ. նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին, Եր., 2013, էջ 105):

³ Շիրակի, Վանանդի և ամբողջ Էթիունի բնակչության հնդեվրոպական և մասնավորապես հնդեվրոպական-հայկական ծագում ունենալու, հայախոս լինելու և հնդեվրոպական հեռավոր անցյալից եկող շատ պաշտամունքներ ունենալու իրողությունը ցույց է տրվել մեր հրապարակած բազմաթիվ հոդվածների և Մ. Պետրոսյանի «Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում» մենագրության մեջ (Եր., 2006, էջ 208-213, 247-272, 280-316): Տե՛ս նաև Պետրոսյան Լ., Արևի և լուսի պաշտամունքի արտացոլումները Վանանդում, ԳՊՄԻ հանրապետական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ (Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված), Եր., 2001, էջ 31, Պետրոսյան Մ., Պետրոսյան Լ., Սեպագրային Durubani/հայերեն տորբան, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 65-69:

⁴ Լալայան Ե., Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 170-171: Աբեղյան Մ., Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 64-65:

⁵ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 65:

պարը՝ որպես «օձի խորիսի մեջ մտած երիտասարդ»⁶: Շիրակյան հեքիաթներից մեկում դեռևս օձակերպ այդպիսի մեկը պսակվում է թագավորի դստեր հետ: Հարսանիքից հետո «էս մեր օձը, մեկ էլ բիրդան բիրա շապիկը հանեց ու էնպես աննման ջահել տղա դարձավ, օր թագավորի աղջկա խելքը գնաց: Աղջի՛, ըսավ, գիտե՞ս, էս օձ չեմ, էս թագավորի տղա եմ»⁷:

Այս օձամանուկի կերպարի ամբողջական բացահայտման գործում կարևորվում է նաև սրա *Համբար-մանի* անունը: Մեր կարծիքով, այս անվան նախաձևը եղել է **Համբար-մանի*՝ հետագայում *-մի* անկումով (հմմտ. անձնանուններից՝ *Շամբիթ>Շաբիթ*, տեղանուններից՝ *Համբանդ>Հաբանդ*) և *-ա*-ի օրինաչափ հնչյունափոխությամբ: Օձամանուկի *Համբար-մանի* անվան *-մանի* բաղադրիչի արմատ *ման-*ը նշանակում է «պտույտ, շրջան, ոլորք, գալար» և առկա է նաև *մանիճ* «գալարք օձի» բառում⁸ (վերջածանցի համար հմմտ. *լուիճ, կալիճ, կտրիճ, ուտիճ* և այլն): Նույն արմատն է պարունակում նաև Բարձր Հայքի *Մանի* լեռնանունը: Թեպետև ավելի ուշ սա բխեցրել են քրիստոնյա քարոզիչ Մանի կնոջ անունից⁹, բայց լեռան պաշտամունքին ձևաված հայոց հին տոմարի 16-րդ օրվա *Մանի* անունը խոսում է լեռնանվան շատ ավելի հին լինելու մասին: Մանի լեռն անձավաշատ վայր էր, ուստի, կարծում ենք, թե իր անունը լեռանը և նրա քարանձավներին (Մանեայ այրք) տված Մանին նախապես օձ և օձամարդ է ըմբռնվել: Հիմնավորենք. 1. Օձի անվան վրա դրված թաքուի պատճառով¹⁰ օձը նաև **մանի* (<*ման-ի), այսինքն՝ «գալարվող» է կոչվել այնպես, ինչպես օձի գալարքն էր կոչվում *մանիճ*: 2. Հայաստանում եղել են և կան «օձասար» նշանակող բազմաթիվ լեռնանուններ: 3. Քարանձավները նաև օձերի բնակության վայր էին համարվում: *Մանի* լեռնանվան և օձամանուկի *Համբար-մանի* անվան *-մանի* բաղադրիչի մեջ *-ի*-ն կամ կենդանիների անուններում պատահող վերջածանց է (հմմտ. *արծուի, արտի* «վայրի մաքի», *մոզի, որի* «ագռավի մի տեսակ է», *նզնի, ջորի*) կամ Հայկական լեռնաշխարհի տարբեր դարաշրջաններից հայտնի տեղանուններում ևս առկա *-ի* տեղանվանակերտ վերջածանցը՝ *Մանի* լեռնանվան դեպքում (հմմտ. *Այլի, Լոռի, Կոթի, Կարբի, Կումայրի, Ուշի*):

Այս օձամանուկի անվան *համբար-* բաղադրիչը գրաբարյան ձևն է *ամբար* «շտեմարան, մթերք, մթերած բաները» բառի, որից ունենք *համբարել, համբարանոց, համբարածու* «պարենավաճառ»¹¹ բառերը: Անունն ամբողջությամբ նշանակել է «ամբարի օձ», այսինքն՝ «ամբարի (բնակիչ) օձ», նաև՝ «ամբարի (պահապան) օձ»:

⁶ Մալխասյանց Ստ., *Հայերեն բացատրական բառարան*, հ. IV, Եր., 1945, էջ 607: Օձամանուկների մասին տե՛ս նաև *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. I, Եր., 1959, էջ 236-240, հ. III, Եր., 1962, էջ 175-181, հ. VI, Եր., 1973, էջ 77-80, 145-146, հ. IX, Եր., 1968, էջ 231-237:

⁷ *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. IV, Եր., 1963, էջ 19:

⁸ Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ)*, հ. III, Եր., 1977, էջ 249: Հմմտ. *Բաղդիրք* հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի (այսուհետև՝ *Բաղդիրք* հայոց), Եր., 1975, էջ 207-208:

⁹ Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլ. դա:

¹⁰ ՀԱԲ, հ., IV, Եր., 1979, էջ 611-612:

¹¹ ՀԱԲ, հ., I, Եր., 1971, էջ 148-149:

Այս անվան տարբերակին հանդիպում ենք հայ ժողովրդական երգերից մեկում (գրառումը՝ Կոմիտասի) *Հաբրըբան* տեսքով՝ որպես իգական անձնանուն¹²: *Հաբրըբան* < **հաբըրման* / **հաբրման*՝ *բ-բ* < *բ-մ* առնմանությամբ և գաղտնավանկ ը ձայնավորի պահպանումով: *Հաբրմանի* անվան «ամբարի օձ» ստուգաբանությունը Շիրակի առնչությամբ տեղին է, որովհետև հնուց ի վեր պատմական Շիրակը հայտնի էր իր հացահատիկի ամբարներով¹³: Հողագործության առաջացման ու զարգացմանը զուգընթաց ձևավորվում էր ցամաքային օձերի պաշտամունքը: Հացահատիկի գոլ մկների և մյուս կրծողների բնական թշնամին՝ օձը, դարձել էր հողագործ, հացահատիկ մշակող մարդու բարեկամն ու դաշնակիցը: Պաշտելի, սրբազան օձի պատկերներն առկա են արդեն մ.թ.ա. VI-IV հազարամյակների Առաջավոր Աիայի և Հարավարևելյան Եվրոպայի հողագործական մշակույթներին բնորոշ պաշտամունքային ամանեղենի և գունավոր խեցեղենի վրա¹⁴:

Հայաստանի հնագիտական և ազգագրական նյութերը ևս վկայում են օձի պաշտամունքի՝ հացահատիկների հետ ունեցած սերտ կապի մասին: Օձի պատկերը որպես հացահատիկի պահապան զարդարում է Կարմիր բլուրի արտակարգ մեծ կարասի ուսերը¹⁵, իսկ Դվինի հնավայրի ոչ միայն կարասները, այլ նաև գոհասեղանների սալերն ունեն սրբազան օձերի բարձրաքանդակներ¹⁶: Օձերի պաշտամունքը Հայաստանում շարունակվել է հաջորդ հազարամյակներում ևս՝ ընդհուպ XIX դ. վերջ և XX դ. սկիզբ: Գ. Սրվանձտյանցի վկայությամբ. «Օձեր ալ կան, որ Մշո աշխարհի պահապաններն են և գյուղացվոց վնաս չեն տար: Տեսակ մը օձերու համար էլ կ'պատմեն, թե տները և *ջաղացները* (ընդգծումը մերն է-Ս.Պ., Լ.Պ.) կը բնակին, և իրենց բնակած տան բախտը անոնցմով կը հաջողի եղեր»¹⁷: Շիրակի և Մշո դաշտի նման հացառատ Բասենում ևս վերաբերմունքն օձերի նկատմամբ նույնպիսին է եղել: Ականատես բասենցու վկայությամբ. «Շատերի տներում օձ կար: Սրանք սովորել էին մարդկանց և չէին խայթում: Բասենում օձը համարվում էր տան դովլաթ (բախտ, հարստություն) և դրա համար էլ տնային օձերին ձեռք չէին տալիս»¹⁸:

Պաշտելի օձերի առթիվ Մ. Աբեղյանը նկատել էր տալիս, որ Հայաստանում «Ամեն գավառ ունի իր օձերը, որոնք *քարանձավներում* (ընդգծումը մերն է - Ս.Պ., Լ.Պ.) են բնակվում»¹⁹: Այս հանգամանքը ամրապնդելով *Մանի* (որից՝ *Մանեայ* այլք) և *Հաբրմանի* անունների մեր ստուգաբանությունները, նաև բանալի են դառնում *անձաւ* բառի ստուգաբանության համար: Թաբուի պատճառով «օձ» նշանակող *հ.-ե. *anguh-* բառը վերածվելով **ang'hi-*ի, հայերենում տվել էր նախ՝ **անձ*,

¹² Երզարան, կազմեց Վ. Մամվելյան, Եր., 1949, էջ 164:

¹³ Խորենացի, Ա, ժբ:

¹⁴ Иванов В., Змей, Мифы народов мира. I, М., 1987, стр. 468-469.

¹⁵ Մեծավոր (ուսումնասիրություն 1965-1966թթ. պեղումների տվյալներով), Եր., 1973, էջ 126:

¹⁶ Նույնը:

¹⁷ Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 48:

¹⁸ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունն ու բանահյուսությունը, Եր., 1974, էջ 272-273:

¹⁹ Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. VII, էջ 65:

ապա, նոր շեղումով՝ *աւ*, որից էլ՝ *օձ*²⁰: Մրանցից **անձ*-ը պահպանած *անձաւ* «այր, քարայր», «որջ կամ բույն»²¹ բառը հավաստի ստուգաբանություն չի ունեցել: Մեր կարծիքով, *անձաւ* < **անձ-աւ*, որում **անձ*-ը «օձ» է նշանակում, իսկ **աւ*-ը «օթևան» < հ.-ե. **au-* «գիշերել»: Վերջինից ունենք *ագանիմ* «գիշերը մի տեղ անցկացնել, օթևանել» և *օթեւան* < **աւթեւան*²²: Նույն **աւ*-ը իր զուգահեռն ունի հին հունարենում. հմմտ. *αἶψα* «ապաստարան, գիշերային օթևան, վրան, ախոռ», *ἑσθμῶς* «իջևան, բնակարան», *ἰαυθμῶς* «գիշերային ապաստարան, որջ»²³: Հայերեն *աւ*-ը որպես տեղանվանակերտ վերջածանց է հանդես գալիս հին Հայաստանի մի շարք տեղանուններում: Դրանցից են *Կճաւ*, *Ձիւրաւ*, *Որդնաւ*/*Վարդնաւ*, *Պարտաւ*, *Ցուրտաւ*: Արևմտյան Շիրակի Բաշ-Շորագյալ (հնում՝ Շիրակաւան) գյուղից հյուսիս գտնվող Բանձրելի սարահարթի համար տեղացիները պատմում էին, որ սրա «քարայրները եղել են շատակեր Շարայի ամբարները, որն ապրել է Ղարսաչայի և Արփա-չայի (ներկայիս՝ Ախուրյանը – Ս.Պ., Լ.Պ.) միջև ընկած բարեբեր հարթության վրա»²⁴: Հիշատակված «Շարայի ամբարները» հայտնի էին նաև Մովսես Խորենացուն, որը Շարայի շատակերությունն առնչելով դրանց, բերում է հետևյալ առածը. «Թէ քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»²⁵:

Այս ամբարները հայտնի էին դեռևս Ուրարտուի Սարգուրի II (մ.թ.ա. 764-735թթ.) թագավորին²⁶: Էրիախի երկրի (հետագա Շիրակում) դեմ նրա ձեռնարկած արշավանքներից մեկն ուղեկցվել էր «150 *muri*-ների» կողոպուտով²⁷: Ուրարտ. սեպագր. *muri* բառը հայերեն *մորի*-ն է, որը քանիցս հիշատակված է միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում («Երեմիա Մեղրեցու բառարան»): Այստեղ կարդում ենք. «*Մորի*-անձավ, կամ որջ, կամ կաղաղ, կամ դադար, կամ բոյն, կամ պտուղ մորենույ»²⁸ (վերջին բացատրությունը վերաբերում է հանրահայտ հատապտղին): Եվս չորս անգամ բառն հիշատակված է *մորի*, *մորի*, *ամուրի* (նախահավելվածական *աւ*- ձայնավորով) տարբերակներով. 1. «*Մորի* - ամուրի»²⁹, որից՝ 2. «Մոռիս. ամուրք»³⁰, 3. *կաղաղ* բառի բացատրության մեջ. «Կաղաղ - որջ, կամ բոյն, կամ ծածկոյթ, կամ մորի, կամ խաղաղ»³¹ (վերջինս *կաղաղ*-ի հնչյունական տարբերակն է), 4. *սաղակիմ* բառի բացատրության մեջ. «*Սաղակիմ* – մորի, կամ որջ առիւծոյ»³²: «Աստվածաշնչում» առկա *մորի* բառը «Նոր հայկազյան բառարան»-ի հեղինակնե-

²⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 612:

²¹ ՀԱԲ, հ. I, էջ 202, «Բառգիրք հայոց», էջ 22:

²² ՀԱԲ, հ. I, էջ 76, հ. IV, էջ 609-610.:

²³ ՀԱԲ, հ. I, էջ 76:

²⁴ Ղանալանյան Ա., *Ավանդապատում*, Եր., 1969, էջ 39:

²⁵ Խորենացի, Ա, *Ժ*:

²⁶ Պետրոսյան Ա., «Շիրակայ ամբարք»-ի շուրջ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1982, թիվ 8, էջ 73-74:

²⁷ Меликишвили Г., *Урартские клинообразные надписи (այսուհետև՝ ՄԿՆ)*, Մ., 1960, надп. N155.

²⁸ Բառգիրք հայոց, էջ 220:

²⁹ Նույն տեղում, էջ 219:

³⁰ Նույն տեղում, էջ 219-ի ծան. 410:

³¹ Նույն տեղում, էջ 155:

³² Նույն տեղում, էջ 282:

րը բացատրում են հետևյալ կերպ. «որք զագանաց ի մէջ մայրեաց, ուր են կորիւնք ընդ մօրն. Կաղաղ, խշտի, դաղաք, մօրի, մօրնի...»³³:

Իրենց հաղթական արշավանքները նկարագրող արձանագրություններում ուրարտական թագավորները կողոպտված հացահատիկի շտեմարանների մասին հիշատակում են ո՛չ միայն Էրիախիի (Շիրակում) առնչությամբ: Արգիշտի I-ը (մ.թ.ա. 786-764թթ.) Սարիդամիշի արձանագրության մեջ պատմելով ¹Aštuḫiniei KUR-ni//«Աստուխական (ցեղի) երկրի» նվաճման և ^{URU}Aḫuriani//«Ախուրեան (քաղաքի)» գրավման մասին, հիշատակում է նաև ձեռք բերված հացահատիկի պաշարը³⁴: Աštuḫi- ցեղի երկիրը տեղադրվում է հետագա Վանանդի հարավ-արևմուտքում, հին Ախուրեան գետի (Կարսագետ) վերնագավառում, Կարս քաղաքից հարավ-արևմուտք՝ ներառյալ արձանագրության գտնված վայրը, այժմյան Սարիդամիշ բնակավայրի շրջանը³⁵: Սրանում հացահատիկի առատության փաստը թույլ է տալիս այս հենքի վրա ստուգաբանել նրա բնակիչների անունը. հմմտ. *աշարա//աշորա* և *Աշարունիք//Աշորնիք*, նաև՝ *աշարա//շարա* և *Շարայի ծնունդը/Σαραπαρα*³⁶:

Գր. Ղափանցյանը քննարկվող ցեղանուն-երկրանունը համադրում էր ուրարտ. սեպագր. Aštiu- «հա՛ց» և հայ. *աստուճ//աշտուճ* «ցամաք հաց, չոր հաց» բառերին՝ ցույց տալով, որ վերջինում *-ուճ*-ը վերջածանց է. հմմտ. *բրդուճ, դառնուճ, կճուճ, պարկուճ* և այլն³⁷: Ըստ Հ. Աճառյանի՝ *աշտուճ*-ը հետին ձև է՝ առաջացած *աստուճ*-ից (*ս-ճ-ճ* մասնակի առնմանություն), որը հավաստի ստուգաբանության չարժանացած բառ է³⁸: Մեր կարծիքով, սրա **աստ*- արմատի **հաստ*- տարբերակն է առկա *հաստեայ* (<հաստ-եայ) «խմորեղեն» բառում, որից «*Հաստեայ*-բարակ հաց, կամ լոշ»³⁹: Թեև այս արմատի և հուն. *ἄκτι* «ցորեն» բառի նմանությունը պատահական է համարվում⁴⁰, բայց կարծում ենք, թե սրանց հիմքում հ.ե. **ak*՝ - «սուր լինել» արմատն է: Այս վերջինից ծագած բառերից են հայ. **ասեղ* (*<աս-եղ), հուն. *ἀκίς* «ծայր, սայր», *ἀκαινα* «սուր ծայր, խթան», հուն.-պելասգ. *ἀθήρη* «քիստ (հասկի)», հրգ. *ahir*, գոթ. *ahs*, գերմ. *ähre* «հասկ», անգլ. *ear* «հասկ կապել»⁴¹: Գերմանական լեզուների բառերը հուշում են, որ հասկն այդ արմատով է նշվել ասեղի նման սուր ծայրեր՝ քիստեր ունենալու պատճառով: Ըստ երևույթին, հավաստի ստուգաբանություններ չունեցող *հասկ*⁴² և *հաստեայ*⁴³ բառերը ծագում են նույն **ak*՝ արմատից՝ *հ* նախահավելվածականով, մի դեպքում *-կ*, մյուսում՝ *-տ*

³³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Եր., 1981, էջ 298:

³⁴ УКН, N 130; Арутюнян Н., Топонимика Урарту. «Хурриты и урарты», I, Ер., 1985, стр. 49.

³⁵ Арутюнян Н., Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964, стр. 74-75.

³⁶ Պետրոսյան Ս., Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 3, էջ 190, ծան. 23:

³⁷ Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 214:

³⁸ ՀԱԲ, հ. I, էջ 222:

³⁹ ՀԱԲ, հ. III, էջ 50: Բառգիրք հայոց, էջ 181:

⁴⁰ ՀԱԲ, հ. III, էջ 50:

⁴¹ ՀԱԲ, հ. I, էջ 268: Զահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 91:

⁴² ՀԱԲ, հ. III, էջ 48:

⁴³ ՀԱԲ, հ. III, էջ 50:

աճականով: Անկասկած, *Aštuhini* < *Ast-uh- ցեղանուն-երկրանվան մեջ *ast- (<h.-ե. *ak'-d-) հիմքին ավելացված է -uh- վերջածանցը, առկա նաև *ածուխ* (< *արծ-ուխ. հմմտ. *արծենել*, *արծարծել*), *անանուխ* (< *ա-նան-ուխ. հմմտ. *նանու*), *արմ-ուխ* (< *արմ-ուխ. հմմտ. *արմանալ*, *զ-արմանալ*), *զլուխ* (< *զիլ-ուխ. հմմտ. *զիլ*, *զլ-որ*)⁴⁴: Ըստ երևույթին, *Aštuh*- ցեղանունը Ախուրյանի (հին առումով) վերին հոսանքի բնակիչները կրել են հացահատիկի մշակությամբ զբաղվելու պատճառով:

Որտեղ կար հացահատիկի մշակություն և առատություն, այնտեղ էլ բազմաձևալու էին հացահատիկի գոյ մկները և նման մյուսները: Ուրեմն, այնտեղ էին լինելու նաև սրանց թշնամի և հացահատիկ մշակող մարդկանց բարեկամ օժերը: Հիշենք, որ հարավ-արևմուտքից Վանանդին հարևան էր Բասենը՝ հացահատիկի մշակության և օժապաշտության հայտնի կենտրոններից մեկը, իսկ Վանանդը անգամ Բասենի մասն է համարվել և կրել է նրա անունը, կոչվելով *Անփայտ եւ Վերին Բասեան*⁴⁵: Մովսես Խորենացին Վանանդի տեղորոշումը և բնութագիրը տալիս է հետևյալ կերպ. «մերձ ի սահմանն Շարայի» և «ի ներքոյ Կողայ՝ յարգաւանդաւանդ եւ ի հացաւտ տեղիս»⁴⁶: Եթե Շիրակում և Վանանդում կային հացահատիկ մշակողներին և իրենց երկրներին տրված մեծ վաղեմության անուններ⁴⁷, ուրեմն կարող էին լինել նաև օժապաշտության արգասիք տեղանուններ: Մինչև դրանց անդրադառնալը նշենք, որ թաբուի պատճառով օձին տվել էին նաև «հողային, ընդերքային» իմաստներով անուններ և որ վաղ նախնադարից սկսած՝ գոյություն ունեւ կոսմոգոնիկ և էմբրիոգոնիկ երևույթների առասպելաբանական նույնացումը⁴⁸: Ընդ որում, կենդանու կամ մարդու մարմնի մասերը համադրվում էին տիեզերքի մասերին՝ մասնավորապես ներքին օրգանները՝ ընդերքի, իսկ մարմնի ներքին (ստորին) մասը՝ երկրի:

Մեր ուշադրության առարկան միջնադարյան «Բառգիրք հայոց»-ից հայտնի «Արգաղայ-օձ»⁴⁹ բառն է, որի առաջին բաղադրիչը նույնն է Արևմտյան Շիրակի *Արգհինա* տեղանվան առաջին բաղադրիչի և *արգ- «փոր» արմատի (<h.-ե. *arqy-, հմմտ. *արգանդ*, *արգահատել*⁵⁰) հետ: *Արգաղայ* բառում առկա են *արգ-աղ-այ* բաղադրիչները, որոնցից -աղ-ի համար հմմտ. *կախ-աղ-ան*, *կենց-աղ*, *յապ-աղ-եմ*⁵¹, իսկ -այ վերջածանցի համար՝ *ափափ-այ*, *բոր-այ*, *կր-այ*, *պախր-այ* և այլն: *Արգհինա* < *արգ-ին-այ, որի -ին- վերջածանցի համար հմմտ. *ամուս-ին*, *դարբ-ին*, *Լուս-ին*, *կարգ-ին* և այլն: *Արգաղայ* բառի արմատակիցն ու իմաստակիցն ենք համա-

⁴⁴ ՀԱԲ, հ. I, էջ 102-103, 180, 329, 565:

⁴⁵ Խորենացի, Բ, է:

⁴⁶ Խորենացի, Բ, թ:

⁴⁷ Պետրոսյան Ս., Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, էջ 187-204:

⁴⁸ Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 526-527, 821; Stricker B. H., De Geborte van Horus, Leiden, 1968, S. 139, 155.

⁴⁹ «Բառգիրք հայոց», էջ 36:

⁵⁰ «Մոր որովայնը, զավակատունը» նշանակող արգ-անդ բառը կազմված է -անդ վերջածանցով. հմմտ. արանդ «կոճղեզ» (<h.-ե. *ʔ «աճել»), եռանդ, լաւանդ (<լաւ), հիւանդ (հմմտ. հեւ «հեալը»), իսկ արգահատել < *արգ+հատ, որում հատ «կտրելը» (ՀԱԲ, հ. I, էջ 302-303):

⁵¹ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 565:

րում հուն. *ձրյհի* «օձի տեսակ» բառը, որը նաև Դեմոսթենեսի հեգնական մակա-նունն էր⁵² (հմմտ. վիշապագուն Արգավանի *Արգ-աւ-ան* անունը Մովսես Խորենա-ցու երկում): Ի նկատի առնելով թաքուի պատճառով օձին տրված «հողային» և «ըն-դերքային» անվանումների գոյությունը՝ կարելի է *արգաղայ* և *ձրյհի* բառերին առնչել նաև նույն **արգ-* արմատը պարունակող «*Արգասի* - երկիր» և *արգասանդ* «բերրի, պտղաբեր» բառերը. հմմտ. «Արգասանդ- բերող, կամ պարարտ, կամ հիւթեղ, կամ կակուղ»⁵³ (երկրորդ բառին տրված բացատրություններն առավելա-պես հողին են վերաբերում): *Արգինա* < **Արգինայ* տեղանվան մեջ անշեշտ -ի ձայ-նավորի պահպանված լինելու փաստը պետք է բացատրել նրանով, որ սա եղել է պաշտամունքային ոլորտի տեղանուն թե՛ նախաքրիստոնեական, թե՛ հետագա դարերում, իսկ այդպիսիները (հմմտ. *Էջմիածին*-ում նախաձայն *է-*ի պահպանու-մը) հաճախ չէին ենթարկվում լեզվում ընթացող օրինաչափ փոփոխություններին: Նույնպիսի իրավիճակ է գրանցված ուրիշ երկրների տեղանունների դեպքում ևս, որոնք նույնիսկ բառապաշարի առանձին շերտ են համարվում⁵⁴:

Իսկ ի՞նչ ուղղակի վկայություն ունենք Վանանդում օձի պաշտամունքի մասին: Դիմենք Վանանդի կենտրոնատեղի Կարսի բնակիչ Եղիշե Չարենցին: Նա իր «Երկիր Նաիրի» արձակ երկում բերում է կարսեցիների հավատալիքների առանձին պատառիկներ: Դրանցից մեկի համաձայն, *Վարդանի կամուրջ* կոչված և Ախուրյան-Կարսագետի մեջ ցցված ժայռի տակ վիհեր էին, իսկ այդ «վիհերում, որոնց մեջ ջուրն անգամ վարանում էր լցվել, ապրում են ջրային գազաններ, պա-ռավներ, մարդագլուխ գոմեշներ, ջրային հսկա մի օձ, որ կամրջի «տերն» է՝ կամրջի բարի ոգին, և երկու ջրահարս»⁵⁵, իսկ գիշերային ժամերին ժայռեղեն բարձունքից դիտողին թվում էր, թե «հորդ հեղեղով խավարում շողշողում է վարը, ծփում է պսպղուն օձը՝ կամրջի բարի ոգին»⁵⁶: Ախուրյան-Կարսագետի ջրա-յին վիհում բնակված այս հսկա օձը՝ բարի ոգին, հիշեցնում է հին հնդկների վե-դայական առասպելաբանության Ահի-բուդհնյային, որի անունը «անդունդի օձ» է նշանակում, բայց նրա շրջապատը կազմող գլխավոր կերպարներից են ոչ միայն Ապամ-Նապատը («ջրերի գավակը»), այլև կայծակեղեն Աջա-Էկապաղը («միտա-նի այծը») և արևաբնույթ Սավիտար աստվածությունը⁵⁷: Ապամ-Նապատը նաև հին իրանցիների պաշտելի աստվածություններից էր, գալիս էր ընդհանուր հնդի-րանական անցյալից⁵⁸, բայց ավելի խոր հնդեվրոպական արմատներ ուներ, որով-հետև դրանց զուգահեռն էր հայ հնագույն առասպելաբանության **Ախուրը* (սրա

⁵² Древнегреческо-русский словарь, составил И.Х. Дворецкий, т. I-II, М. 1958, т. I, стр. 229.

⁵³ Բարգիթը հայրը, էջ 36:

⁵⁴ Томахин Г., Топонимы как реалии языка и культуры (на материале географических названий США), «Вопросы языкознания», М., 1984, №4, стр. 87.

⁵⁵ Չարենց Ե., Երկեր, Եր., 1955, էջ 301:

⁵⁶ Նույն տեղում, էջ 304:

⁵⁷ Топоров В., Аджа Экапат, Мифология. Золотой фонд. Энциклопедия (այսուհետև՝ ՄՅՓՁ), стр. 21; Նույնի, Ахи Будхня, МՅՓՁ, стр. 75.

⁵⁸ Նույնի, Апам Напат, МՅՓՁ, стр. 51; Брагинский И., Апам Напат, նույն տեղում, էջ 51:

անունը նշանակում է **ախ-ուր*՝ «ջր-որդի»), որն իր անունն էր տվել *Ախուրեան* գետին և *Ahuriani* քաղաքին⁵⁹:

Վարդանի կամրջի անվանադիրը լինելու էր նրա վիհում բնակված կամրջի «տերը և բարի ոգին»՝ հսկա օձը: Սրա *Վարդան* անունը, նույնահունչ լինելուց բացի, ոչինչ ընդհանուր չունի *Վարդան* արական անձնանվան հետ: Նրա անվան հիմքում դրավոիդության ենթարկված **վադր* «ջուր» բառն է՝ *-ան* վերջածանցի հավելումով⁶⁰: Հնդեվրոպական ծագումով այս բառն է Գր. Ղափանցյանը տեսնում *Վարդավառ* (<*վադր-ա-վառ) ջրատոնի անվան մեջ⁶¹: Այս նույն **վադր* <**վարդ* արմատն է առկա նաև *Վարդամարզ* (<*վադր-ա-մարզ) գետանվան, *Նուարդ* (<*Նու «հարս+վադր» «ջուր») դիցանվան, առասպելաբանական *Վարդգէս Մանուկ* անվան, Վարդավառի տոնախմբության ժամանակ մատաղվող (նախկինում՝ զոհաբերվող) եզան⁶² *Վարդեան* անվան և առասպելաբանական եղջերվաքաղ նշանակող *վարդապա*⁶³ բառի մեջ: **Վարդ* բաղադրիչը պարունակած հատուկ անունների շարքը պետք է դասել նաև Վանանդի՝ սեպագրությամբ ավանդված *‘Arda/*Uarda/*Վարդայ* քաղաքանունը⁶⁴:

Ըստ երևութի, Վարդանի կամրջի «տեր» և «բարի ոգի» օձը ըմբռնվել է նաև օձերի թագավոր և, որպես այդպիսին, օձամանուկ: Նա հսկա օձ է, պսպղում է, շողշողում է: Մ. Աբեղյանը բացատրում է, թե որտեղից է գալիս այդ ըմբռնումը. «Օձերի թագավորը, ինչպես բոլոր վիշապներն (իմա՝ վիշապ օձերը-Մ.Պ., Լ.Պ.) ընդհանրապես, գլխին՝ որպես թագ ունի արեգակնանման մի թանկագին քար կամ ոսկե եղջյուրներ, որոնք լույսի պես փայլում են...»⁶⁵: Օձերի թագավորի գլխի «արեգակնանման» թանկագին քարը խորհրդանշն է Արեգակի, իսկ «լույսի պես փայլող եղջյուրները»՝ լուսնեղջյուրի/Լուսնի⁶⁶: Այս առթիվ պատահական չէ, որ շիրակյան վերոհիշյալ «Հաբրմանի» հեքիաթի հերոսը *շահմար օձ* էր կոչվում⁶⁷ (պարս. *šāh-mār* «արքա օձ»): Վանանդի օձերի թագավորը այս տեսանկյունից հիշեցնում է հին հնդիկների Ահի-բուդհյային («անդունդի օձ»), որը, ջրածնունդ լինելով հանդերձ, ինչ-ինչ առնչություններ ուներ նաև արևի և լուսնի հետ⁶⁸:

Օձերի թագավորի արևային և լուսնային կապերի առնչությամբ կարելի է հիշել նաև, որ Հայոց թագավորությունը վերականգնած Վաղարշակ արքան «մեհեան շինեալ յԱրմաիր անդրիս հաստատե *արեգական* եւ *լուսնի* եւ իւրոց

⁵⁹ Պետրոսյան Ս., Պետրոսյան Օ., Պետրոսյան Լ., «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1., Գյումրի, 1998, էջ 76-83:

⁶⁰ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 252-264:

⁶¹ Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 152: Капанцян Г., Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 287-288.

⁶² Մալխասյանց Ս., նշվ. աշխ., հ. IV, էջ 310:

⁶³ Նոր Բաղդիրք հայկազեան լեզուի, հ. II, էջ 792:

⁶⁴ YKH, N 128 A1.

⁶⁵ Աբեղյան Ս., նշվ. աշխ., հ. VII, էջ 65: Լալայան Ե., նշվ. աշխ., հ. II, էջ 171:

⁶⁶ Հմմտ. եղջիր «լուսնեղջյուր, լուսնի մահիկ» և եղջերիկ «մի տեսակ օձ» (ՀԱԲ, հ. II, էջ 24):

⁶⁷ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. IV, էջ 15, 521:

⁶⁸ Топоров В., Ахи Будхня, МЗФЭ, стр. 75.

նախնեացն»⁶⁹: Իսկ շատ ավելի վաղ Իշպուհի թագավորը (մ.թ.ա. 825-810թթ.) Բուդիհի հավաքածուի ուրարտական բրոնզե թիթեղին (Ժնն) պատկերված լինելով մանուկ Մենուայի և գլխավոր աստվածությունների շրջապատում, գլխավերին իր անունը բացահայտող մեհենագրերից վերև, ունի իր թագավորական կարգավիճակը բացահայտող *արնի* և *լուսնի* զծապատկերները⁷⁰:

О КУЛЬТЕ ЗМЕИ И ЗМЕЕВИДНОГО ЮНЦА В ШИРАКЕ И ВАНАНДЕ

___ Резюме ___

___ С. Петросян, Л. Петросян ___

В недрах общеиндоевропейской мифологии зараждались образы не только индоиранского божества Апам-Напат (“сын вод”) и древнейшего армянского божества *Ахур (“сын воды”), но и древнеиндейского божества Ахи Будхня (“змея глубин”) и армянского огромного водяного доброго змея *Вардан (“водяной”). От теонима *Ахур происходит урбоним урартского периода *Ахуриани* (у совр. Сарыкамьша) и потамоним *Ахуреан* (др. арм. название реки Карс), а от теонима *Вардан происходит микротопоним Вардани камурдж (“мост Вардана”) в городе Карс. Теоним *Вардан* не надо путать с муж. соб. именем *Вардан* у которого совсем другое происхождение. Теоним *Вардан состоит из компонентов *вард<*uadr- (<и.-е. *ued- “вода” и суффикс -го) и суффикса -ан. Для *вард- < uadr- ср. соб. им. Нуард<*Ну-вард, Вардгес, Вардеван, Вардавар, Вардамарг, а также урбоним урартского периода ‘Arda/*Uarda.

Имя сказочного героя-змеевидного юнца, *Habrmani состоит из компонентов *hambar “амбар, закром” и -mani “змея” (ср. арм. manič) “извив змеи” и означает “змея амбара”, т.е. “змея-охранительница амбара”. Появление такого названия должно быть обусловлено широким распространением в Армении пашенного земледелия и культа змеи. В данном случае имеется в виду тот факт, что предки ширакских армян занимались преимущественно культивированием зерновых, а змеи стали союзниками людей в их борьбе с грызунами – воров зерна.

Տեղեկություններ հեղինակների մասին

Պետրոսյան Մարգիս Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Մ.Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, Email: Vahe1996@mail.ru

Պետրոսյան Լուսինե Մարգիսի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների, Մ.Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, E-mail: Vahe1996@mail.ru

⁶⁹ Խորենացի, Բ, ք:

⁷⁰ Պետրոսյան Մ., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 35, նկ. 3, էջ 57, նկ. 4:

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՏԵՂԾԱՐԱՐ ՔԱՂԱՔԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿՐՈՂ (Գյումրու օրինակով)

2004թ. քաղաքները համախմբելու նպատակով ստեղծվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ աշխարհի Կրեատիվ (ստեղծարար) քաղաքների ցանց, որն արվեստն ու մշակույթը դիտարկում է իբրև այդ քաղաքների տնտեսական զարգացման հիմնական բաղադրիչ, իսկ վերջնական նպատակը սոցիալական, տնտեսական և մշակութային առաջընթացին նպաստելն է:

Մինչ օրս Կրեատիվ քաղաքների շարքում ընդգրկվել է 19 երկրի 31 քաղաք, որոնք միմյանց հաղորդակցվում են մշակութային փորձով ու ձգտումով, սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարով:

Մարդկային միտքը, ցանկությունները, մոտիվները, ստեղծագործական հնարավորություններն ու երևակայությունը շատ հաճախ դիտարկվում են որպես քաղաքների զարգացման ռազմավարական հայեցակարգ:

Կրեատիվ քաղաքի կենսական ուժը մարդն է (հետագա շարադրանքում կրեատիվությունը և ստեղծարարությունը մենք ընդունում ենք որպես համաժեշ եզրույթ): Ստեղծարարությունը մարդու մտքի տարածությունն է՝ ենթադրելով բազում մտքերի տարածությունների առկայություն: Ըստ էության, մշակույթը և կրեատիվությունը ներհյուսված են: Վերջինս քաղաքների համար կենսուժ է, որ մշտապես օգնում է մարդկանց ապրելու՝ ավանդույթի սահմանները հաղթահարելով: Մշակութային ռեսուրսները հիմնային արժեքային բաղադրիչներ են, որոնցով էլ վերաիմաստավորվում է քաղաքի ստեղծագործական ներուժը: Ինչ խոսք, անցյալի ժառանգությունն ընդունակ է ոգեշնչելու և ապագայի հանդեպ վստահություն ներշնչելու: Այս համատեքստում անչափ կարևոր է ճշտել, թե ինչպե՞ս է ձևավորվում քաղաքը նորարարությունների կենտրոն դարձնող միջավայրը: Ի՞նչ սկզբունքներով են պայմանավորված բնապահպանական այն մոտեցումները, որոնք միտված են քաղաքային միջավայրի զարգացմանը, որոնք են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ նոր քաղաքի զարգացման գործին նպաստող ստեղծագործական ազդակները:

Այս հարցադրումները նախնառաջ պահանջում են ճշտել, թե ինչ չափորոշիչներից պետք է օգտվել Գյումրի քաղաքի ստեղծագործական պոտենցիալը բացահայտելու և արդյունավետ օգտագործելու նպատակով: Առաջարկվող դափորոշիչները հետևյալն են.

- ա) նոր մտածելակերպ ունեցող մարդկանց ընդգրկում համայնքի զարգացման ծրագրերում, համալիր և ամբողջական մոտեցում քաղաքի հիմնախնդիրները վերլուծելիս, որը արմատապես կարող է փոխել որոշումների ընդունման մեթոդները,
- բ) քաղաքի ստեղծագործական պոտենցիալի և ռեսուրսների գնահատում, քաղաքային կյանքի կառավարման նոր եղանակներ,
- գ) գործունեության ընթացքում կիրառվող նոր հասկացություններ ու բառերույթներ (նոր երևույթի համար՝ նոր գնահատում):

Կրեատիվ մտածողության չափման հոգեբանական գործիքներն ըստ Տորենսի թեստի հետևյալն են.

ա) վերբալ, բ) պատկերային, գ) առանձին ստեղծագործական հնարավորություններ, դ) հիմնախնդրի էությունը բացահայտելու ընդունակություն, ե) կարծրատիպերին հակադրվելու ունակություն:¹

Առհասարակ մշակութային ժառանգությունը պատմության, հասարակության կոլեկտիվ հիշողության հետ կապն է, ամրապնդում է մեր կենսական զգացողությունն ու ընկալումը և կարող է մեզ նախապատրաստել ապագայի հետ հանդիպման: Ամեն դեպքում մշակութային ժառանգությունն անցյալի ստեղծագործական փորձի ու ձգտումների հանրագումարն է, իսկ ստեղծագործության արգասիքը հնարավորություն է տալիս հասարակությանն առաջ ընթանալու: Կրեատիվությունը միշտ չէ որ նորով է պայմանավորված, հաճախ դրսևորվում է հնի հանդեպ նոր մոտեցմամբ: Մշակույթի բոլոր մակարդակները՝ լեզուն, օրենքները, տեսությունը, արժեքները, ամեն հաջորդ սերնդի կողմից միաժամանակ կարիք ունեն վերախմաստավորման ու վերաթարմացման: Բոլոր դեպքերում մշակութային ռեսուրսները պետք է կենսագործել ողջախոհության սկզբունքներով՝ համապատասխանեցնելով հասարակության իրական հնարավորություններին:

Կրեատիվությունը ներկայանում է որպես թաքնված հնարավորությունների դրսևորում և մարդկային ներուժի ստեղծագործական կիրառում: Այն թելադրում է վերանայել ընթացակարգերը և գործող սկզբունքները, հետևաբար նաև ապագայում գործարկվող սցենարները: Կարելի է նախկինում անհամադրելի համարվող երևույթներն այնպես զուգադրել, որ ստեղծվեն անսպասելի համակցություններ, քանի որ ստեղծագործական լինելը ոչ թե իրավիճակ է, այլ գործընթաց: Առհասարակ ստեղծագործականությունը մտածողության այնպիսի կերպ է, որն ընդլայնում է, եթե անձը հարմարվել է որևէ իրավիճակի կամ դերի: Այն դրսևորվում է անձի նախաձեռնողականությամբ, ներըմբռնողության պահից իսկ անցնում է մշակութային արժեքների ներդրումների բովմով, հաստատվում արդյունքների տարածմամբ ու գնահատմամբ, մինչդեռ կարծրատիպային մտածողությունը հաճախ հակառակ սկզբունքով է առաջնորդվում՝ մարդկանց ստիպելով հեռու մնալ նախաձեռնողականություն դրսևորելուց: Կրեատիվությունը հիմնախնդիրների հանդեպ ներառում է ոչ միայն բարձր զգայունակություն, այլև գիտելիքների հակասականություն և դեֆիցիտ: Հարկ է մարդկանց ներգրավել մշակութային և կրթական բաց միջավայր, շարունակաբար զարգացող միջավայր:

Ընդհանրապես, գյումրեցու կրեատիվ մտածողությունն առավելապես դրսևորվում է հարուստ երևակայության, ճկուն մտքի, հնարամտության, հումորի, ոչնչից ինչ-որ բան ստեղծելու կարողության մեջ՝ այս ամենը մշակույթի ընկալման ձևերով: Քաղաքի առանձնահատկությունը կրեատիվության ինքնատիպ ընկալման մեջ է, որը գաղտնագրում է այն կրողների ներաշխարհը: Նրանց ստեղծարարությունը ներառում է հիմնախնդիրների հանդեպ ոչ միայն բարձր զգայունակություն, այլև մտքի հակասականություն: Պարադոքսների քամին ասես պտտվում է Գյումրի քաղաքի վրայով...

Ոչ հեռավոր անցյալում քաղաքն ընկալվում էր անվտանգության ու վստահության բացակայությամբ: Այսօր՝ գերարագ ժամանակներում, գյումրեցին, շնորհիվ ստեղծագործ լինելու, ոչ դրական ազդակները տրանսֆորմացնում է վերածելով ստեղծագործական էներգիայի, արդյունքի:

Գյումրին տոհմիկ արժեքների քաղաք է՝ պատմական հիշողության դարձով, կենսագրություն ունեցող քաղաք, և չի կարելի այն ընկալել տարերային

¹ Чарльз Аэндри. Креативный город, М. 2006.

բռնկումների ձևով: Նրան բնորոշ մշակութային ընդհանուր ֆոնը ստեղծագործական գենի յուրօրինակ շարունակությունն է: Այս քաղաքում ստեղծարարությունը մեկօրյա պատմությունն չունի. հոգևոր դաշտը մի օրում չի ստեղծվում: Այն հասկանիշ է դառնում և ակտուալացվում է միայն այն ժամանակ, երբ միջավայրը թույլ է տալիս: Հետևաբար այստեղ անհրաժեշտ են սոցիալականացման որոշակի պայմաններ ստեղծարարության ձևավորման համար: Ստեղծարար լինելն ավելին է, քան ինտելեկտը՝ պայմանավորված միջավայրի գործոններով: Մարդ-սոցիում հարաբերություններն են թելադրում մեր ստեղծագործ լինելը, որը, ըստ էության, անսովոր գաղափարների ընդունակությունն է մտածողության ավանդական կարծրատիպերից դուրս: Պրոբլեմային իրավիճակից ելք գտնելու կարողությունը, էապես նորի որոնումն է ոչ ստանդարտ մոտեցումներով՝ ի հակակշիռ առօրեականության:

Գյումրեցու ստեղծարար մտածողությունն առավելապես ինքնատիպ դրսևորում է ստանում նրա բանավոր խոսքում ու բարբառում. նրա բանավոր խոսքը հատու է և ավարտուն, ռիսկային, այն ունկնդրի մտաշխարհում ապածածկագրվում է եզակիության ու ինքնատիպության շնորհիվ: Խոսքը բանաձևային է, պատկերավոր ու դիպուկ, որը բացատրվում է այն կրողների երգաստեղծության ու վնայերգելու շնորհով: Մինչև իսկ կորստի ու վշտի գերիխիտ ապրումների դեպքում գյումրեցին վնայերգեց իր ապրածն ու տեսածը, շարունակական վերապատմումների մեջ խոնարհված քաղաքը նորից կերտեց՝ արթնացնելով իր մեջ հարալեզին: Այսպիսով՝ վիրավոր քաղաքի համար դեղ ու դարման դարձրեց իր անկրկնելի բանավոր պատմությունը:

Մրանով հանդերձ, կրեատիվությունը մարդկային հոգեկան ապրումների վերարտադրություն է և ինֆորմացիա ազգի ու գենոֆոնդի ինքնապաշտպանական մեխանիզմների մասին: Կոնկրետ Գյումրիում կրեատիվ լինելը դրսևորվում է ազգաբնակչության պատմական հիշողության, ներքին ռեսուրսներին ապավինելու ու հանրային շփումների շնորհիվ, քանի որ կան ազգային կորեր, որոնք էքստրենալ իրավիճակներում նորովի դրսևորումներ են ստանում:

Անձի ստեղծարարությունը թռիչքաձև բնույթ ունի. հնարավոր է՝ այն ծագել է աննախադեպ գենետիկ մուտացիաների հետևանքով, հաճախ էլ պայմանավորված է մարդկային կյանքի որակով, հետևաբար առնչվում է ոչ միայն ստեղծագործությանը, այլև հմտությունների օգտագործմանը: Այնտեղ, որտեղ մենք ապրում ենք, կարող ենք ավելի լավը դարձնել մարդկային կյանքի նոր որակների որոնմամբ: Անշուշտ, ստեղծարարությունը կյանքի նոր որակներով է պայմանավորված ոչ միայն ստեղծումով, այլև հմտությունների օգտագործմամբ

21-րդ դարը զարգացող քաղաքների ժամանակաշրջան է: Ի՞նչպես կարող ենք քաղաքը կենսունակ դարձնել ու կառավարել մարդկային երևակայությունն ու տաղանդը: Համաշխարհային քաղաքների ուրբանիստական համակարգում քաղաքների դինամիկան արմատական փոփոխությունների է ենթակա: Հետևաբար անհրաժեշտ է կազմել քաղաքի ինտելեկտ քարտեզը:

Մինչդեռ այսօր չկա ժամանակակից քաղաքի ըմբռնում, ինչպե՞ս ստեղծել որակյալ քաղաքային միջավայր, ինչպիսի՞ն պետք է լինեն քաղաքային ռազմավարությունները, ի՞նչն է պետք փոխել և ինչպիսի՞ն հաջորդականությամբ: Մեր քաղաքը բացառիկ իրավիճակում է: Մեզանում չեն ուսուցանում քաղաքի հանդեպ վերաբերմունք, սրանով հանդերձ պետք է առանձնացնել քաղաքի բրենդը. այսօր Գյումրիի քաղաք չեմպիոն է, սպորտային հաջողությունների ու հաղթանակների քաղաք: Հարկ է պատմական Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Գյումրի կեր-

պարների վրա ընդունել քաղաքի զարգացման նոր մարտահրավերներ բոլոր բնակիչների համար, ինչպես նաև բարելավել քաղաքացու հոգեբանական որակը:

Ցանկալի է, որ Գյումրի քաղաքի բրենդը զգայական իմաստով համահունչ լինի իր բնակիչներին: Անհրաժեշտ է զգալ, բացահայտել ու վերապրել քաղաքի ոգին, հասկանալ ի նչն է միավորում քաղաքացիներին, և ո՞րն է նրանց ինքնության առանցքը: Այս համատեքստում էական է նաև քաղաքի բնակիչների հոգեբանական կողմնորոշման համակարգը: Քաղաքի բնութագրիչներից են ավանդականն ու արդիականը՝ նույն խաչմերուկում:

Ինչ խոսք, ազգային ծեսերն ու տոները, ժողովրդական արհեստներն ու արհեստավորական ավանդույթների պահպանումը նպաստում են ազգաբնակչության հոգեկան հավասարակշռմանը, հզորացնում քաղաքի հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, ակտիվացնում ներքաղաքային մշակութային կյանքը, ստեղծում միջմշակութային հաղորդակցման հնարավորություն՝ նոր սերնդի մեջ դրական վերաբերմունք ձևավորելով ավանդական արժեքների հանդեպ և նպաստելով ավանդույթների փոխանցմանը:

Թվում էր՝ ստրեսը սպառնեց խոնարհված քաղաքի հարմարվողական կարողությունները, բայց տոները և տոնական մշակութային դրսևորումները գյումրեցու կյանքում ինքնամաքրման ու ինքնահաստատման նշանակություն են ձեռք բերել: Ստեղծարար քաղաքը՝ ազգային ինքնություն ու արժեքներ կրող, իր պատմամշակութային ժառանգությամբ ու ավանդական մշակութային նկարագրով կարող է դառնալ ժամանակակից արվեստի միջազգային կենտրոն, քանի որ այստեղ բոլոր նախադրյալները կան քաղաքի զարգացման նոր տեսլականը փայփայելու համար...

КРЕАТИВНЫЙ ГОРОД – НОСИТЕЛЬ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ И ЦЕННОСТЕЙ (на примере Гюмри)

___ Резюме ___

___ К. Саакян, Р. Оганнесян ___

Статья посвящена феномену креативного города Гюмри, который благодаря сохранению и развитию национальных обрядов и праздников, традиций ремесел и ремесленничества, может достичь душевного равновесия народонаселения, сделать мощными механизмы психологической защиты города, активизировать городскую культурную жизнь, создать возможность межкультурной коммуникации, сформировать у нового поколения положительное отношение к традиционным ценностям, способствующим передаче традиций.

Տեղեկություններ հեղինակների մասին

Սահակյան Կարինե Արամի – հ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն, ԳՊՄԻ հոգեբանության ամբիոն,

E-mail: sahakyanani@mail.ru

Հովհաննիսյան Ռոզա Պողոսի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոն, E-mail: vard-roza@mail.ru

*1926 թ. ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՎ 1988 թ. ՄՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

Վերլուծությունն իրականացնելու համար նախ փոքրիկ պատմական ակնարկ է կատարվել՝ նկարագրելու տվյալ ժամանակաշրջանի իրավիճակը, վերջինիս միջոցով փորձելով հասկանալ նույն խնդրի լուծմանն ուղղված ռազմավարությունների, գործընթացների ու կոնկրետ գործողությունների ընդհանրություններն ու տարբերությունները երկու երկրաշարժերից հետո:

1921 թ. տարածաշրջանի բնակչությունը գտնվում էր սոցիալական ծանր պայմաններում, քաղաքն ու շրջակա գյուղերը կիսավեր վիճակում էին՝ լցված Մեծ եղեռնից փրկված գաղթականներով և հատկապես հսկայական քանակի որբերով, որոնց մասին հոգում էր հիմնականում ԱՄԵՐԿԱՄ-ը:¹ Սակայն 1921-1926 թթ. կառավարության ջանքերով ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի ուղարկած հավելյալ միջոցներով կատարվեցին վերականգնման լուրջ աշխատանքներ, կառուցվեցին տասնյակ նոր գործարաններ ու ֆաբրիկաներ (մասնավորները պետականացվեցին ու մեծացվեցին, ավելացավ վերջիններիս արտադրական ծավալը՝ ներկրված մեխանիկական սարքավորումների շնորհիվ): 1925թ. հունիսի 21-ին տեղի ունեցավ Շիրակի ջրանցքի հանդիսավոր բացումը, որը ևս կարևոր դեր ունեցավ քաղաքի բնակչության կենցաղային պայմանների բարելավման գործում: 1924թ. -ին, Վ.Ի. Լենինի մահվան կապակցությամբ, ՀԿԳԿ որոշմամբ քաղաքը վերանվանվեց Լենինական: Այսպիսով, արդեն սոցիալիստական Լենինականը 1926թ. մտավ որպես արագ զարգացող տարածաշրջանային կենտրոն:

Այսպիսին էր վիճակը, երբ 1926թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Լենինականի երկրաշարժը, որն ավերեց քաղաքի զգալի մասը: Աղետից անմիջապես հետո ստեղծվեց Ռեսպուբլիկական (Հանրապետական) արտակարգ հանձնաժողով, որը լծվեց ավերված քաղաքի վերականգնման և վերաշինման հարցերի լուծմանը: Համաձայն Տեխնիկական հանձնաժողովի ներկայացրած զեկույցի՝ Լենինական քաղաքում երկրաշարժից տուժել էր 8800 տուն, որից ավերված էր 5517-ը, իսկ գավառի 44 գյուղերում տուժել էր 6018 տնտեսություն: Թե՛ քաղաքին և թե՛ գավառին հասցվել էր հսկայական նյութական-տնտեսական վնաս: Քաղաքում և գավառում եռանդուն աշխատանքներ էին ծավալել նաև Կարմիր Խաչը և ԱՄԵՐԿԱՄ-ը², իսկ այն բնակելի շրջանները, որոնք դուրս էին մնացել այդ օգնության ցուցակներից, կառավարության որոշմամբ օգնություն էին ստանում պետական միջոցներ:

* Հոդվածն իբրև զեկույցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Алексанян К., Организация образовательного процесса западноармянских сирот в Александропольском уезде (1915-1922), Балканистичен Форум, Благоевград, 2016, № 1-2, с. 78.

² «Բանվոր», թերթ, Լենինական, 1926, № 448 (հետայսու՝ Բանվոր):

րից: Բացի դրանից, երկրաշարժից չվնասված գավառամասերում պետք է տեղակայվեին տուժած շրջանների բնակարանագուրկ ընտանիքները, ինչպես նաև նրանց համար պետք է կազմակերպվեր օգնություն բնամթերքի տեսքով՝ տեղի գյուղացիների միջոցներով: Արագ տեմպերով վերականգնվում էին նաև վնասված գործարանները, որոնք շտապ կարգով վերսկսել էին իրենց աշխատանքները:³

Վերականգնման, բնակիչների տարահանման, նրանց ունեցվածքի անձեռնմխելիության ապահովման ու առաջին օգնության գործում անգնահատելի էր տեղի բերդապահ զորքի ներդրումը: Վերջինիս զինվորները անձնական արիության շնորհիվ թույլ չտվեցին, որ քաղաքը թալանեն, բժշկական անձնակազմը ցույց տվեց առաջին օգնությունը վիրավորներին, զինվորական խոհանոցները ուտելիքով էին ապահովում կարիքավորներին, իսկ հասարակ զինվորները պահակություն էին անում բնակչության տներում՝ ապահովելով ունեցվածքը, օգնում փլատակներից հանել վիրավորներին, ոգևորում էին ծանր վիճակում գտնվող բնակչությանը՝ կասեցնելով խուճապը:

Թբիլիսիից Լենինական ժամանած Անդրկովկասյան ժողկոմխորհի կողմից առանձնացված տեխնիկական հանձնաժողովը պարզել էր, որ երկրաշարժի պատճառած վնասը նախնական հաշվով կազմում է՝ Լենինականի գավառում 25 մլն ռուբլի, որից միայն քաղաքին պատճառված վնասը՝ 20 մլն ռուբլի:⁴

Լենինականի հոկտեմբերի 22-ի երկրաշարժը ծանր հարված էր հասցրել նաև գավառի գյուղական բնակավայրերին, մի շարք գյուղեր ամբողջովին ավերվել էին, օրինակ՝ Դահառլուն (այժմ՝ Գետք), Բայանդուրը, Խ. Ղարաքիլիսան (այժմ՝ Ագատան), իսկ մի շարք գյուղեր վնասվել էին մասնակի: Տուժած գյուղերի վիրավոր բնակիչներին իրենց օգնությունն էին ցույց տալիս Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի, ինչպես նաև Երևանից և Թբիլիսիից ժամանած սանիտարական զնացքների անձնակազմերը:⁵

Աղետից հետո Լենինական էին ժամանել և գործում էին ԽՍՀՄ կուսակցական օրգանների աշխատակիցներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետական արտակարգ հանձնաժողովը: Սրան առընթեր գործում էր տեխնիկական հանձնաժողովը, որի գործունեությունը արժարժվում և լուսաբանվում էր Հանրապետությունում հրատարակվող թերթերում, մասնավորապես «Բանվոր» թերթում:⁶

Լենինականին օգնելու համար ԽՍՀՄ հանրապետությունների քաղաքների մի շարք թերթեր ստեղծեցին քաղաքի վերաշինման համար նախատեսված ֆոնդեր, որոնք իրենց հավաքած գումարները ուղարկում էին Լենինականի վերաշինման կոմիտե:⁷

³ Բանվոր, 1926, № 448:

⁴ Կոզմոյան Կ., Լենինական, Եր., 1957, էջ 52:

⁵ Նույն տեղում:

⁶ Բանվոր, 1926 թ., № 452:

⁷ Այդ թերթերից էին Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) «Голос Пахаря», Ղրիմի «Красный Крым», Անդրֆեդերացիայի «Заря Востока», «Коммунист», «Красное Знамя» ու տաիմյակ այլ թերթեր:

Լենինականի վերաշինման ֆուդին օգնելու գործում իրենց լուսման ներդրեցին ԽՍՀՄ հանրապետությունների մի շարք քաղաքների բնակիչները՝ օգնելով գումարով և գույքով: Աղետի գոտու բնակչությանը մեծապես օգնում էին նաև ՀԽՍՀ-ի այլ շրջանների և ԽՍՀՄ հանրապետություններում ապրող հայերն ու հայկական կազմակերպությունները:⁸

1927թ. փետրվարի 22-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհը հատուկ նիստ գումարեց, որտեղ քննարկվեց Լենինական քաղաքի վերականգնման, ինչպես նաև գավառի բնակիչներին ցույց տրվելիք օգնության հարցերը: Նիստում ընդունվեցին քաղաքի վերականգնմանն ուղղված կոնկրետ քայլերի ու միջոցառումների ծրագրեր: ԽՍՀՄ Ժողկոմխորհը այդ նպատակների համար 1926-1929թթ. հատկացրեց 18 մլն ռուբլի: Այս հսկայական գումարը հատկացվեց վարկի տեսքով՝ մոտ 50 տարով: Ծրագրերն իրագործելու համար կազմվեց քաղաքի վերակառուցման ու ընդարձակման նախագիծ:⁹

Ծրագրավորված վերակառուցողական աշխատանքների ու տեղական արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և հետագա զարգացման խնդրին առնչվող բոլոր հարցերը բազմակողմանի ուսումնասիրելու համար կազմվեց հանձնաժողով (նախագահ՝ Հ. Մինասյան, անդամներ՝ Մ. Ստեփանյան, Դ. Զիպլև, Ս. Ալմազյան և Ա. Համբարձումյան), որը պետք է աշխատեր մինչև ապրիլի 15-ը:¹⁰

1926թ. երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացը շարունակվեց մինչև 1930-ականները, երբ տեղական, հանրապետական և միութենական իշխանությունների ջանքերով վերականգնվեցին քաղաքի արդյունաբերական ներուժը ու քաղաքի բնակֆոնդը: Ավելին, այդ ընթացքում ոչ միայն վերականգնվեցին ավերված արտադրամասերը, այլև կառուցվեցին նորերը. մասնավորապես մինչև 1930թ. շահագործման հանձնվեցին Գործվածքային ֆաբրիկան, որի արդյունավետ շահագործման համար նույն 1930 թ. բացվեց Տեքստիլ տեխնիկումը (հետագայում՝ Թեթև արդյունաբերության տեխնիկումը): 1934 թ. շահագործման հանձնվեց նաև Մսի-պահածոների կոմբինատը (շինարարական աշխատանքներն սկսվել էին 1930թ.): 1936թ. ավարտվեց Հացի գործարանի կառուցումը: Այս ամենի հետ մեկտեղ վերականգնվել ու նորացվել էին երկաթուղային գիծը և կայարանը, բացվել ու շահագործման էին հանձնվել քաղաքը խմելու ջրով ապահովող նոր ջրանցքը: Հիմնվում էին նաև նոր կրթական համալիրներ (հիմնականում Ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ՝ բանֆակեր) և տեխնիկումներ՝ այս արդյունաբերական արտադրամասերն ու գործարանները տեղական բարձր որակավորմամբ

⁸ Օրինակ՝ Ախալքալաքի թեմերում կազմակերպվել էին երկրաշարժից տուժածներին օգնելու հանձնաժողովներ, նաև՝ հացկերությոններ, որտեղ հավաքված գումարը, մոտ 1000 ռուբլի, տրամադրվելու էր քաղաքի վերականգնման նպատակների համար: Մի այլ օրինակ նս. Համամլու (Մայիտակ) կայարանի արհմիության՝ 1926 նոյեմբերի 17-ին կայացած ժողովում որոշվեց Լենինականի աղետյալների օգնության համար հատկացնել իրենց երեք՝ նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար ամիսների մեկօրյա աշխատավարձը: Բանվոր, 1926, № 453:

⁹ Գոգմոյան Կ., Լենինական, էջ 55:

¹⁰ Բանվոր, 1926, № 489:

մասնագետներով ապահովելու համար: Հիմնվեցին մինչ այդ Ալեքսանդրապոլ-Լենինականին ոչ հատուկ թաղամասեր, այսպես կոչված, բանավաններ,¹¹ որոնցում սկզբնական շրջանում կառուցվեցին փայտե կամ քարե ժամանակավոր շենքեր (բնակչության շրջանում սրանք առավել հայտնի էին «բարաքներ» անվամբ), որոնցում հիմնականում բնակեցվեցին Բանֆակերի ու Ֆաբրիկա-գործարանային ուսումնարանների /ՖԳՈԻ/ (լենինականցիների շրջանում առավել գործածական էր ռուսերեն ՓՅՄ-անվանումը) շրջանավարտները: Բանավանների բնակչության մեծ մասը կազմում էին Լենինականի որբանոցների սաները և գավառի տարբեր գյուղերից քաղաք տեղափոխված աշխատուժը: Մեկ ու կես տասնամյակի ընթացքում, Լենինականն ավանդական արհեստավորառնտրական քաղաքից ստիճանաբար վերածվեց ՀԽՍՀ մասշտաբներով խոշոր արդյունաբերական կենտրոնի:

Այսպիսով, 1926-1940 թթ. ընթացքում քաղաքի վերակառուցման համար պետության կողմից ներդրվեցին հսկայական գումարներ, որոնց շնորհիվ քաղաքը ոչ միայն վերականգնվեց, այլև ամբողջովին նորացվեց, ընդարձակվեց ու ձևափոխվեց: Քաղաքի ու գավառի ակտիվ ու լայնամասշտաբ վերականգնման շնորհիվ հնարավոր դարձավ խուսափել ժողովրդագրական աղետից, ինչը կարող էր հետևել ավերիչ երկրաշարժին: Որպես մեր պնդման հիմնավորում՝ բերենք մի քանի վիճակագրական տվյալներ, որոնք ընդգրկում են նախաերկրաշարժյան և հետերկրաշարժյան մեկ տասնամյակը: Այսպես. Լենինականի բնակչությունը 1923թ. համաքաղաքային վիճակագրության տվյալներով կազմում էր 48086 մարդ, 1926թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի արդյունքներով նվազել էր 5773 մարդով և կազմում էր 42313 մարդ, արդեն 1928 թ. հունվարի դրությամբ բնակչության թիվը վերադարձել է 48 հզ. սահմանին, իսկ 1931 թ. ավելացել 11075 մարդով: ¹² Երկրաշարժից տասը տարի անց քաղաքի բնակչությունը հասնեց 70 հզ. սահմանը: ¹³ Ուսումնասիրողների կարծիքով, հետերկրաշարժյան շրջանում, բնակչության բնական աճի բարձր ցուցանիշներից բացի, Լենինականի բնակչության աննախադեպ աճին նպաստել է նաև դեպի քաղաք գյուղական բնակչության ներհոսքը: ¹⁴ Լայնածավալ բնակարանային և հատկապես արդյունաբերական շինարարությունը, հազարավոր աշխատատեղերի ստեղծումը Լենինականը գրավիչ էին դարձնում գյուղական շրջաններից այստեղ ձգտող աշխատուժի համար: Աղետյալ քաղաքը ոչ թե լքվեց բնակիչների կողմից, այլ ընդհակառակը, դարձավ հազարավոր «նորաթուխ քաղաքացիների» բնակատեղին: Հետագա տարիներին ևս քաղաքի բնակչության աճը շարունակվեց և Սպիտակի երկրաշարժի նախօրյակին հասնեց 200 հզ. սահմանը, ինչը մոտ հինգ անգամ ավել է 1920-ականների համեմատ: ¹⁵

¹¹ Հիշյալ նորաստեղծ թաղամասերից առավել հայտնի էին Տեքստիլ կոմբինատի, Երկաթգծի, և Մսի կոմբինատի բանավանները:

¹² Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Շիրակում 1926-1959 թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIV, Եր., 2011, էջ 111:

¹³ Գաբրիելյան Հ., Լենինական, Եր., 1984, էջ 36:

¹⁴ Բոյաջյան Ա., նշվ. աշխ., էջ 111:

¹⁵ Գաբրիելյան Հ., նշվ. աշխ., էջ 36-37:

Հարկ է նշել, որ խորհրդային իշխանությունները աղետի բերած ավերածությունների մեջ հիմնականում մեղադրում էին մինչխորհրդային շրջանի շինարարներին՝ նշելով, որ նրանք քաղաքի կառուցապատման ժամանակ հաշվի չէին առել տարածաշրջանի երկրաշարժավտանգության հանգամանքը և շենք-շինությունների սեյսմակայունության ապահովման խնդիրը: Լենինականում սկսված շինարարական աշխատանքների ժամանակ դրանք հաշվի առնվեցին, ուստի 1920-30-ականների բնակելի և այլ տիպի կառույցները, որոնք քաղաքաբնակների շրջանում հայտնի էին «Չիսլի տներ» անվամբ, այժմ էին ընկնում իրենց արտակարգ ամրությամբ: Պատահական չէր, որ 1988 թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ այս կառույցները կանգուն մնացին: Հետագայում սեյսմակայունության և հատկապես շինարարության որակի խնդիրը մոլեց հետին պլան: Քաղաքի ակտիվ կառուցապատումը 1960-80-ականներին, որն իրականացվում էր խայտառակ «շինարարական փնթիությամբ», համեմված տասնյակ հազարավոր քառակուսի մետր բնակտարածքներ հանձնելու մասին ամպագոգոտ հաշվետվություններով, սեյսմակայունության իջեցման հաշվին՝ իբր թե խնայողության ձգտումով, հանգեցրին մինչ այդ չտեսնված աղետալի հետևանքների:

Լենինականը, 1930-ականներից մինչև 1988 թթ. ապրելով խաղաղ աշխատանքի և զարգացման կեսդարյա ժամանակաշրջան, 1980-ականների վերջին իրենից ներկայացնում էր տարածաշրջանի խոշորագույն արդյունաբերական քաղաքներից մեկն ու ՀԽՍՀ տեքստիլ և սննդի արդյունաբերության կենտրոնը: Դա նպաստեց քաղաքի բնակչության ինչպես քանակական ու որակական աճին, այնպես էլ ֆինանսական, սոցիալական, մշակութային վիճակի բարելավմանը: Այս ամենի հանրագումարում քաղաքը ձեռք բերեց նոր դիմագիծ, որն ամբողջացնում էր նրա արդյունաբերական պոտենցիալն ու մշակութային հզոր ներուժը:

Սակայն ամեն ինչ գլխիվայր շրջվեց 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի սարսափազդու և կործանարար երկրաշարժից հետո, որը փոխեց ողջ հանրապետության և ժողովրդի կյանքը՝ բաժանելով այն երկու մասի՝ աղետից առաջ և հետո: Երկրաշարժն ընդգրկեց ՀՀ տարածքի մոտ 40%-ը, որտեղ ապրում էր 1 մլն. մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել էր 8բալ և ավելի, ընդգրկում էր երեք հազար քառ. կմ տարածություն: Երկրաշարժից տուժեցին 21 քաղաք և շրջան, 342 գյուղ, անօթևան մնացին 514 հազար մարդ: Ավերվեց ՀՀ-ի ամբողջ բնակֆոնդի 17%-ը, դադարեցին գործելու 170 արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս հասցվեց գյուղերին և ագրոարդյունաբերական համալիրին, ինչպես նաև ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին:¹⁶

Երկրաշարժից ժամեր անց ՀԿԿ Կենտկոմի 1988 թ. դեկտեմբերի 7-ի որոշմամբ ստեղծվեց երկրաշարժի, նրա հետևանքների վերացման և տուժածներին օգնություն ցուցաբերելու կոմիտե: Նույն օրը նույնպիսի՝ բայց համաստվետական մասշտաբով կոմիտեի ստեղծման հրաման արձակեց ԽՍՀՄ մինիստրների խոր-

¹⁶ <http://www.nssp-gov.am/spitak>

հուրդը՝ Ն. Ռիժկովի նախագահությամբ:¹⁷ Մեծ թափ առավ ինչպես ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների ու հատկապես աշխարհասփյուռ հայության կողմից եկող օգնությունը:

ԽՍՀՄ կենտրոնական կառավարությունը ՀԽՍՀ ուղարկեց մեծ քանակությամբ տեխնիկական միջոցներ՝ փրկարարական աշխատանքներ կատարելու նպատակով: Արդեն դեկտեմբերի 20-ի դրությամբ աղետի գոտում աշխատում էին ավելի քան 1000 ամբարձիչ, 1600-ից ավել ավտոմեքենա, 350 բուլդոզեր և այլն: Այս ընթացքում աղետյալներին օգնության էին եկել ավելի քան 1000 ինքնաթիռ՝ տարբեր տեսակի բեռներով, 31 հզ երկաթուղային վագոն և 8000 բեռնատար մեքենա:

Բժիշկներ էին ժամանել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններից:¹⁸ Միայն առաջին ժամերի ընթացքում զինվորական բժիշկները որակյալ բժշկական օգնություն ցուցաբերեցին շուրջ 1200 մարդու, իսկ աշխատանքների ընթացքում ընդհանրապես օգնության էին դիմել մոտ 6000 մարդ:

Աղետից անմիջապես հետո, շաբաթներ ու ամիսներ շարունակ, դեպի Հայաստան էր գալիս հումանիտար օգնությունը:¹⁹ Տարբեր տեսակի նյութական և տեխնիկական օգնություն ժամանեց 110 տարբեր օտարերկրյա երկրներից ու մի շարք միջազգային կազմակերպություններից: Օգնությունը գալիս էր անընդհատ. միայն ինքնաթիռներով շուրջ 44 տարբեր երկրներից 346 չվերթ էր կատարվել, որոնցով ժամանել էին օտարերկրյա փրկարարները և տեղ էին հասցվել աղետյալներին որպես օգնություն ուղարկված բեռները: Աղետի գոտուն ուղարկվում էր նաև մեծ քանակությամբ ֆինանսական օգնություն տարբեր երկրներից, անհատներից, բարեգործական հիմնադրամներից, ֆինանսական կազմակերպություններից: Հսկայական ֆինանսական աջակցություն ապահովեց նաև Հայոց եկեղեցին:²⁰

Արտերկրից աննախադեպ օգնություն էր ժամանում Աղետի գոտի՝ հատուկ մասնագետների, ինչպես նաև դոնորական արյան, մեքենաների, դեղամիջոցների տեսքով:²¹ Փրկարարական և վերականգնողական աշխատանքներն Աղետի գո-

¹⁷ Սպիտակի երկրաշարժ. Աղետի գոտին երեկ և այսօր. Հայացք 20 տարի անց,

Փաստաթղթերի ժողովածու, Եր., 2008, էջ 17-18:

¹⁸ Դեկտեմբերի 8-ին Մոսկվայից եկել էր բժիշկների բարձր որակավորում ունեցող բրիգադ՝ բաղկացած 98 մարդուց՝ Առողջապահության նախարար Ե.Բ Չազովի ղեկավարությամբ: Դեկտեմբերի 9-ին Թբիլիսիից Աղետի գոտի ժամանեց քաղաքացիական պաշտպանության բանակի առաջին գումարտակը մայոր Ռ. Մեմոնովի գլխավորությամբ:

¹⁹ Ազիզբեկյան Ռ., Սպիտակի երկրաշարժը և համաշխարհային հանրության օգնությունը (1988-1990թթ.), ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», XII, Եր., 2004, էջ 168-171:

²⁰ Դեռևս 1988թ. դեկտեմբերի կեսերին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն Աղետի գոտուն օգնության ձեռք մեկնելու կոչով դիմեց հայկական սփյուռքին և միջազգային կազմակերպություններին: Ամենայն Հայոց Հայրապետի կոչին միացան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն (հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա) և Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ-ն: Շվեյցարական բանկում Վազգեն Վեհափառի անունով բացվեց արտարժույթային հաշիվ, իսկ Սբ Էջմիածնում ստեղծվեց հոգաբարձուների խորհուրդ, որում ընդգրկվեցին բարձր հոգևորականության և հայ ականավոր մտավորականության ներկայացուցիչներ: «Էջմիածին», 1989, № 1, էջ 5:

²¹ Սպիտակի երկրաշարժը. Փաստաթղթերի ժողովածու, էջ 11:

տում իրենց ծավալներով աննախադեպ էին ԽՍՀՄ պատմության մեջ: Արդեն 1989թ. ամռանը վերականգնողական աշխատանքներում ներգրավվել էին ավելի քան 150 հզ մարդ, իսկ ավերված գյուղերն ու ավանները սկսել էին հետզհետե վերականգնվել:

Դրությունը փոխվեց ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ օգնության եկած շինարարներն ու ամբողջ տեխնիկան հեռացվեցին Ադետի գոտուց, կտրուկ կրճատվեցին միջազգային օգնությունն ու դրամական հատկացումները: Վիճակը բարդացավ նաև սկսված Ղարաբաղյան պատերազմի (1991-1994թթ.) ու դրան հաջորդած տնտեսական շրջափակման հետևանքով, որն ավելի էր վատթարանում վրաց-աբխազական ու վրաց-օսեթական հակամարտությունների սրման պատճառով: Ստեղծված իրավիճակի արդյունքում մեծացավ արտագաղթը, և 1999թ. հունվարի 1-ի դրությամբ Ադետի գոտու բնակչության թիվը հազիվ հասավ 1985թ. մակարդակին:

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ մինչև 1998թ., տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններից ելնելով, Ադետի գոտում շինարարություն գրեթե չէր իրականացվում: Միայն 1998թ. սկսած, մինչև 2008թ. արևմտահայ բարերարների ու կազմակերպությունների միջոցով Ադետի գոտում վերսկսվեցին շինարարական աշխատանքները, ու բնակարաններով ապահովվեցին 19265 ընտանիք Շիրակի մարզում, 14601 ընտանիք Լոռու մարզում, 6000 ընտանիք նոր բնակարան ստացավ հասարակական կազմակերպությունների և տարբեր ծրագրերի միջոցով:

Սպիտակի երկրաշարժը ամենաավերիչն էր Հայաստանում XXդ. կեսերից մինչ օրս: Դրա հետևանքները դեռևս շարունակում են մնալ որպես երկրի սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքը կարգավորող, տնտեսության զարգացման ուղղությունը մոտակա ապագայի տեսլականով ուղղորդող կարևոր ու ազդեցիկ գործոններ:

Այսպիսով, երկու երկրաշարժերից հետո ստեղծված իրավիճակն ու ադետի հետևանքները վերացնելուն ուղղված գործողությունները կարող ենք քննարկել երկու տեսանկյունից. որո՞նք էին դրանց ընդհանրություններն ու տարբերությունները և ինչո՞վ էին պայմանավորված:

Որպես ընդհանրություն կարելի է դիտարկել ադետից անմիջապես հետո ՀԽՍՀ կառավարության, ԽՍՀՄ պետական կառույցների՝ մասնավորապես բանակի անմիջական օգնությունը, ապա նաև միութենական մյուս հանրապետությունների աջակցությունը ադետյալներին փրկելու, ադետի հետևանքները վերացնելու և վերականգնման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ: Քանի որ Սպիտակի երկրաշարժը տեղի ունեցավ դեռ խորհրդային իշխանության օրոք, ուստի սկզբնական շրջանում մոտեցումներն ու գործողությունները, ինչպես տեսանք, նույնն էին, ինչ 1926թ. երկրաշարժի ժամանակ:

Ինչ վերաբերում է տարբերություններին, դրանք առավել ակնառու են երկրաշարժի հետևանքների վերացման ու Ադետի գոտու վերականգնման գործընթացներում: Եթե Լենինականի երկրաշարժի հետևանքներն ամբողջությամբ վերացվեցին մեկուկես տասնամյակում (մինչև Հայրենական պատերազմի սկիզբը),

ապա Սյիտակի երկրաշարժի հետևանքները դեռ լիովին վերացված չեն և «Աղետի գոտի» հասկացությունը դեռ մնում է արդիական: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք պայմանավորված էին քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային գործոններով:

Քաղաքական գործոնն այս դեպքում նախ և առաջ պետական համակարգերի տարբերությունն է. առաջին երկրաշարժից հետո վերականգնողական գործընթացներն իրականացվեցին խորհրդային իշխանության ու գաղափարախոսության պայմաններում, իսկ երկրորդ դեպքում՝ նորանկախ հայկական պետականության կայացման ընթացքում: Երկրորդ կարևոր հանգամանքը Արցախյան շարժումն էր, Հայաստանի Հանրապետության շրջափակումն ու պատերազմը, որոնք հնարավորություն չէին տալիս պետության ողջ ուշադրությունը սևեռելու Աղետի գոտու վրա, օգտագործելու առկա ֆինանսական ու մարդկային ողջ ռեսուրսները:

Երկրաշարժի հետևանքների վերացման գործում մեծ նշանակություն ունեն նաև տնտեսական քաղաքականությունը: Եթե Լենինականի դեպքում վերականգնողական աշխատանքներն իրականացվեցին երկրում ընթացող արդյունաբերականացման (ինդուստրալիզացիայի) պայմաններում, որոնց արդյունքում քաղաքում կառուցվեցին բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ, ապա Սյիտակի երկրաշարժից հետո տնտեսության ազատականացումն ու անցումը ազատ շուկայական հարաբերությունների կազմավորմանը առանց այդ էլ ավերված տնտեսական համակարգը (ինֆրաստրուկտուրան):

Սոցիալական առումով ևս տարբերությունները հսկայական են: Լենինականի երկրաշարժից հետո բնակչության մեծ ներհույս սկսվեց քաղաք՝ նոր բացված ձեռնարկություններում աշխատողների պակասը լրացնելու համար, ուստի կարճ ժամանակում քաղաքային բնակչության թիվը կրկնապատկվեց, փոխվեց դրա սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը: Արհեստավորներին ու նրանց աշակերտներին փոխարինելու եկան հզոր արտադրական կենտրոններում աշխատող վարպետներն ու բանվորները: Ժողովրդագրական աճին նպաստում էր նաև բնակչության սոցիալական պայմանների բարելավումը՝ բնակարանաշինությունը, բարեկեցիկ կոմունալ-կենցաղային պայմանների ստեղծումը, հասարակության տարբեր խմբերի սոցիալական ապահովումը և այլ գործոններ:

Սյիտակի երկրաշարժից հետո հակառակ իրողություններ եղան. 1989-1992 թթ. ծնելիության բարձր ցուցանիշը աստիճանաբար նվազեց, սկսվեց ու մինչ օրս շարունակվում է բնակչության արտագաղթը, որի հետևանքով Աղետի գոտու ժողովրդագրական պատկերը փոխվեց: Բնակարանաշինության դանդաղ տեմպերի հետևանքով ձևավորվեցին կոմունալ-կենցաղային տարրական հարմարություններից զուրկ տնակային թաղամասեր՝ բնորոշ «դոմիկային» մշակույթով: Աշխատատեղերի բացակայությունն առաջացրեց սոցիալական անապահով վիճակ և մասնավորապես չքավորություն բարձր տոկոս: Աղքատության, անտնության և գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցված է Շիրակում: Ըստ պաշ-

տոնական տեղեկատվության՝ Գյումրիում աղքատության մակարդակը կազմում է 44%:²²

Ինչ վերաբերում է մշակութային գործընթացներին, ապա Լենինականի մշակութային պատկերը երկրաշարժից առաջ այսպիսին էր. քաղաքն արհեստավորականից դարձավ արդյունաբերական քաղաք, որտեղ ձևավորվեց մի նոր՝ «բանվորական մշակույթ», որի արդյունքում հետագայում առաջացավ «լենինականցու» տեսակն իր բնորոշ հատկանիշներով, սկսվեց լայնածավալ մշակութային շինարարություն: Աննախադեպ վերելք ապրեց կրթական գործը. առաջացան բազմաթիվ մշակութային տներ, երաժշտական դպրոցներ, հասարակական կենտրոններ, որոնք համակարգում էին քաղաքի մշակութային կյանքի բոլոր դրսևորումները: Ձևավորվեց նոր ինտելեկտուալ-մտավորական էլիտա, որի մեջ ներառված էին բժիշկներ, մանկավարժներ, արվեստի գործիչներ:

Սպիտակի երկրաշարժից հետո արմատապես փոխվեց բնակչության ողջ կենսամշակութային համալիրը՝ բնակարանը, տնտեսական գործունեության ձևերն ու եղանակները, սոցիոնորմատիվ մշակույթը, հոգևոր մշակույթն ու ամբողջությամբ վերցրած արժեհամակարգը: Այդ է պատճառը, որ Լենինականը քաղաքացիների հիշողության մեջ մնացել է որպես առատության քաղաք, իսկ Գյումրին՝ որպես ավանդական, այսինքն՝ ճիշտ քաղաքի մոդել: Ուստի ոչ միայն կարոտախոսն ու վիրավորանքն են հնչում, այլև այսօրվա գյումրեցու հույսն ու հավատը՝ «Լենինականը գնաց, Գյումրին մնաց» խոսքերում:²³

ОПЫТ СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА ЛЕНИНАКАНСКОГО (1926г.) И СПИТАКСКОГО (1988г.) ЗЕМЛЕТРЯСЕНИЙ

____ Резюме ____

____ Т. Аганиян ____

В статье проведен сравнительный анализ ленинаканского (1926 г.) и Спитакского (1988 г.) землетрясений. Сделана попытка сравнить сложившуюся ситуацию, социально-культурные, экономические и статистические (население) перемены, возникшие в регионе вследствие вышеупомянутых двух землетрясений, а также нанесенный материальный ущерб. Обсуждены вопросы, касающиеся различия в подходах к преодолению последствий землетрясений в разное историческое время.

Տեղեկություններ հեղինակի մասին

Աղանյան Թորգոմ Գրիգորի - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
E-mail: aghanyan.torgom@gmail.com

²² Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2014 թթ. Հայաստանի աղքատության նկարագիրը և աշխատանքային շուկայի զարգացումները: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայություն, էջ 44: Դիտվել է հետևյալ կայքից՝ http://armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf (վերջին անգամ դիտվել է 2016 թ. հոկտեմբերի 10-ին):

²³ Шагоян Г., Город как рай и рай как город (о некоторых восприятиях Гюмри до и после землетрясения), ЦТУՀ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007:

Անի ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԳԵՐԵՉՄԱՆ ԱՏՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հայոց աշխարհում դարեր ի վեր ընդունված է եղել և այսօր էլ ընդունված է երկրային կյանքից հեռացած մարդկանց շիրիմները բարեկարգելու, դրանք տապանաքարերով և տարատեսակ հուշարձաններով զարդարելու սովորույթը:

Այս ավանդույթը առկա է նաև Գյումրիում: Այստեղ կան քաղաքային երեք գերեզմանատներ. երկուսը՝ քաղաքի հարավում, երրորդը՝ նոր գերեզմանատունը, դեպի Վանաձոր տանող խճուղու հյուսիսային հատվածում է:

Թիվ մեկ գերեզմանատունը (որը ամենահինն է) գտնվում է Երևանյան խճուղուն զուգահեռ արևելյան հատվածում:

Այստեղ պահպանվել են 18-րդ դարի երկրորդ կեսերի, 19-20-րդ դարերի ինչպես նաև ոչ մեծ թվով ժամանակակից գերեզմաններ: Այս գերեզմանատանը կարելի է հանդիպել տարատեսակ հորինվածքներով գերեզմանների: Գերակշռող տեսակը տապանաքարային տիպի գերեզման է: Հանդիպում են նաև դամբարանային, մենապուրանային, խաչքարային, բարդ և պարզ, ինչպես նաև խառը լուծումներով հորինվածքներ:

Գյումրու թիվ 1 (հին) գերեզմանատանը առկա է «տապան» տիպի տապանաքարային հորինվածքը, որը մեզ Հայաստանի այլ բնակավայրերի գերեզմանատներում չի հանդիպել: «Տապան» տիպի հորինվածքը ներկայացնում է ուղղանկյուն սուֆ սալի վրա, չորս «ոտքերի» վրա հանգչող ծավալուն ուղղանկյուն խորանարդ հորինվածք, որը իր բոլոր նիստերի վրա ունի ուղղանկյուն և գոգավոր դեպի վեր փոփոխվող ձևավոր տաշվածքաեզրեր, որոնք առանձին գեղագիտական կերպար են հաղորդում ընդհանուր հորինվածքին: Տապանատիպ այս գերեզմանաքարերի վրա կան հանգուցյալի անուն, ազգանունը, ծննդյան և մահվան թվականները ցուցող տաշածո գրություններ: N 1 գերեզմանատանը մեծ թիվ են կազմում հարթ (սալաձև), հարթ ձևավոր (եզրերում գեղազարդ), խորանարդաձև, խորանարդաձև՝ վերնամասում գլանաձև, եռանկյունաձև (վրանատիպ), կրկնակի վրանատիպ և այլ լուծումներով գերեզմաններ:

Գերեզմանատան ընդհանուր համայնապատկերում առանձնանում են մենապուրանային հորինվածքները, որոնք շարված և տաշված են սև քարից, քառանկյուն լուծում ունեն, վերնամասում քարե (մետաղե) թևավոր խաչերով զարդարված: Հետաքրքրական է, որ N 1 գերեզմանատանը հանդիպող, հատկապես դամբարանային և մենապուրանային հորինվածքներում լայն կիրառում են գտել

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

Գյումրու 19-րդ դարին պատկանող, բնակելի և հասարակական շենքերին բնորոշ ճարտարապետական շատ տարրեր (քիվեր, մեդալիոններ, ծաղկաշղթաներ, ծաղկեփնջեր, ձևավոր շրջանակներ, տարատեսակ խորհրդանշանային հարթաքանդակներ, խաչեր, ստալակտիդներ, բուսական և երկրաչափական պատկերներ և այլն):

Այս հուշարձանների շարվածքը, քարերի տաշման և հարդարման եղանակներն ու տեխնիկան նույնպես նույնաման են Գյումրու բնակելի, հասարակական և պաշտամունքային շինությունների կառուցման և հարդարման ոճերին, հանգամանք, որ կասկածի տեղիք չի տալիս և հաստատում է, որ դրանք նույն վարպետների գործերն են, և տեղական շինարարագեղագիտական պահանջների և վարպետության փորձառությամբ կառուցված հուշարձաններ:

Գերեզմանաքարերը, անկախ իրենց հորինվածքային ձևերից ունեն արձանագրություններ, որոնց տառատեսակները հիմնականում երկաթագիր են, մասամբ (հատկապես նոր հորինվածքներում)¹՝ գեղագիր: Տաշվածքի տեխնիկայով՝ ուղղանկյուն փորվածքի տեսքով են արված, առավել տարածված եղանակը քերվածքագիրն է (հարթ և գոգավոր քերվածքով)¹, իսկ սեպագիր ոճը գրեթե բացակայում է: Որոշ գերեզմանների շուրջպատերը (ավանդաբար տուֆե, բազալտե սալերով կամ քարերով շարված) մետաղակուռ, կոփածո ցանկապատեր ունեն, զարդարված ձուլածո (այլումիսից) տարատեսակ լուծումներով (խաչեր, հրեշտակներ, ծաղկազամբյուղներ և այլն):

Երկրորդ քաղաքային գերեզմանատունը գտնվում է Ղարիբջանյան խճուղու հարավային հատվածում: Այստեղ հիմնականում 20 և 21-րդ դարերի թաղումներ են, գերեզմանատունն ավելի բարեկարգ է, կանաչապատ, քան առաջինը: Գերեզմանների ձևավորման հորինվածքային լուծումները հիմնականում սալատապանաքարային, խաչքարային, քանդակային (քարից, մետաղից քանդակված) և խառը լուծումներ ունեն: Դրանք անցուղիների աջ և ձախ կողմերում առանձնացված հորինվածքներ են:

Գյումրու N 3 գերեզմանատանը, որ երեքից ամենանորն է, առանձնանում է նրանով, որ այստեղ են գտնվում Արցախյան հերոսամարտի ժամանակ զոհված գյումրեցի ազատամարտիկների եղբայրական գերեզմանները՝ բարեկարգ ձեմուղու աջ և ձախ կողմերում համախմբված նույնատիպ տապանաքարերով և պատկերաքանդակ ուղղանկյուն սալերով համադրված հորինվածքներով:

Ի դեպ, Գյումրու երկրորդ գերեզմանատանն է գտնվում Սպիտակի ահեղ երկրաշարժի զոհերի գերեզման-ձեմուղին:

Գյումրու երեք գերեզմանատներին բնորոշ է քարագործ-վարպետ, ճարտարապետ, քանդակագործ համագործակցությունը: Այստեղ հեղինակային խմբերով ստեղծագործել են ճարտարապետներ Հակոբ Զիվանյանը, Ռուդիկ Գյոզայանը, Սուրեն Կուրազյանը, Ռաֆայել Եղոյանը, Աշոտ Միրզոյանը, քանդակագործներ

¹ Քերվածքի դեպքում «հանվում» է սալի հարթության հղկված և փայլեցված մակերեսից 1-2մմ շերտ, որը կարող է լինել տառերի լայնության չափով հարթ կամ գոգավոր (վերջինը՝ ջրերի հեռացման նպատակով):

Զավեն Կոշտոյանը, Արտուշ Պապոյանը, քարագործ-վարպետներ Մկրտիչ Մխիթարյանը, Հարություն Խաչատրյանը (Բիձա), Շեկ Վալոդը, Նիկոլ Բաղդասարյանը, Մնացական Խաչատրյանը, վարպետներ Արմոն, Գրիշը, Միմոնը և այլք:

Ընդ որում հետաքրքրական է, որ հին և հմուտ վարպետները քարը նախ հարթեցրել են, իրենց ենթադրյալ չափերին համապատասխան, ապա նախընտրած հարթությունների վրա, տեղում գծագրել և ապա տաշել են թե՛ զարդերը, թե՛ տառերը և թե՛ պատկերները (օգտագործել են քանոն (մետաղական), կարկին (մետաղական), քարտաշի գործիքներ (ի դեպ, այսպես է աշխատել նաև ճարտարապետ Հակոբ Զիվանյանը): 20-րդ դարում սկսել է տարածում գտնել շաբլոն-տրաֆարետների եղանակը (երբ հորինվածքը նախապես գծվում է թղթի վրա, ապա անցկացվում քարին և հետո տաշվում): Մեր օրերում գրեթե վերացել է առաջին մոտեցումը (Գյումրիում դեռ այսպես է աշխատում վարպետ Բիձան), և ավելի տարածում են գտնում մեքենայական տաշվածքն ու փորագրությունը, ինչը հատկապես խաչքարային արվեստը միօրինականացնելու միտում ունի:

Գյումրու գերեզմանատներում (հատկապես N 2) հանդիպող ոչ շատ քանդակային (դիմաքանդակ) լուծումների մեջ առանձնանում են Զավեն Կոշտոյանի կողմից արված պլաստիկ նուրբ լուծումներով քանդակները, որոնք տաշված են պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Խաչքարային արվեստում առանձնանում են Հակոբ Զիվանյանի խաչքարերը, որոնք նոր խոսք են ավանդական խաչքարագործության համատեքստում: Դրանք ծավալային են, չորս կողմից տաշված. լույս ու ստվերի ակտիվ ներգործությունը խաչքարներին տալիս է կլոր քանդակին բնորոշ հորինվածքներ:

Հարկ է նշել, որ Գյումրիում, բացի այս հիմնական երեք գերեզմանատներից, պահպանվել է նաև Երկրորդ աշխարհամարտի ընթացքում զոհված գերմանացի զերիների և ռուս-թուրքական պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշ-համալիրը՝ «հիշատակի բլուրը», որտեղ էլ պահպանվել են նշված գերեզմանները՝ համեստ տապանաքարերով և ժամանակակից հուշապատով:

Համեմատելով Գյումրու երեք գերեզմանատների մեմորիալ հուշարձանները միմյանց, ինչպես նաև հանրապետության այլ բնակավայրերի մեմորիալ կառույցների հետ՝ հանգում ենք հետևյալ եզրակացության.

- ա. Դրանք ինքնատիպ, Գյումրու և Շիրակի տարածաշրջանի ճարտարապետական և գեղագիտական ավանդույթների շրջանակում արված կոթողներ են:
- բ. Ինքնատիպ տիպաբանական և գեղագիտական առանձնահատկություններով լրացնում են Հայաստանի մեմորիալ կառույցների հարուստ շղթան՝ դառնալով հայ մշակութային ժառանգության մասեր:
- գ. Մեմորիալ հուշարձանների տիպաբանական շղթայում առկա է քարտաշ վարպետների մոտ ընդունված՝ պապից-թոռանը հմտության և վարպետության, արհեստի գաղտնիքների փոխանցման ավանդույթ:
- դ. Գյումրու գերեզմանատների հուշարձանները պահպանման և խնամքի կարիք ունեն:

Գյումրու մեմորիալ կառույցների հետագա ուսումնասիրությունները կնպաստեն, որ առավել զիտական և բազմակողմանի վերլուծություններ կատարվեն՝ ի շահ հայ ընդհանուր մշակութային արժեքների բացահայտման ու պահպանման:

ТИПОЛОГИЧЕСКИЕ И ХУДОЖЕСТВЕННЫЕ ОСОБЕННОСТИ ПАМЯТНИКОВ КЛАДБИЩ ГЮМРИ

___ *Резюме* ___

___ *А. Айказун-Григорян* ___

В Армении испокон веков и сегодня тоже принято художественное оформление и особый уход за могилами на кладбище. В Гюмри эта традиция тоже развита. Здесь находятся три кладбища с разновременными надгробными памятниками.

В статье рассматриваются характерные типы этих мемориальных памятников в контексте их архитектурных и художественных особенностей.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Անի Հայկազուն Գրիգորյան - Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության
ազգային թանգարան-ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ,
E-mail: ahaykazun@gmail.com*

**ԹՊՂԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ
ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ՋՐՈՒՅՅՆԵՐՈՒՄ***

Հայ ժողովրդական սնահավատական գրույցներում, հավատալիքային պատկերացումներում, ինչպես նաև հմայական աղոթքներում ծննդկանին և նորածնին վնասող չար ոգիներից մեկն է թպղան: «Այս ոգու չարամիտ ներգործությունը դիտվում էր որպես յուրահաստուկ հիվանդություն՝ թպղոտություն անվամբ: Մինչդեռ բժշկությունն այսօր այդ երևույթը կապում է վեներական ախտերի հետ»¹:

Թպղան՝ իբրև ծննդկանին վնասող ոգի կամ ծննդկանին ու նորածնին պատուհասող հիվանդություն, տարածված է Հայաստանի բազմաթիվ ազգագրական շրջաններում՝ Մուշ-Բուլանքում (թբղ)², Ատափագարում (թպղա), Կեսաբխայի որոշ հայախոս գյուղերում (Մունճուսուն), Մարզվանում (թպղի)³, Երզնկայում (թբպղ)⁴, Ակնում, Աղձնիքում, Մասունում, Քղիում, Շիրակում, Ջավախքում և այլուր:

Ս. Հարությունյանը, խոսելով «Աղոթքներ ալի և թպղայի» խորագրով աղոթքների մասին, փաստում է, որ «բուն աղոթքներում հանդես եկողը հիմնականում ալն է, իսկ եթե մեկ-մեկ էլ թպղան է հիշատակվում, ապա նա ևս օժտված է նույն նկարագրով ու գործառնությունով, ինչ պը: Մա ցույց է տալիս, որ դեռևս միջնադարում այդ գույզ ոգիները շփոթվել են իրար, և գույզ անունների տակ հաճախ հանդես է գալիս մեկ ոգի՝ պը: Ժողովրդական ուշ ավանդության մեջ ևս իսպառ բացակայում է թպղայի՝ իբրև անձնավորված չար ոգու արտաքին նկարագիր»⁵:

Ի տարբերություն ալի, որն իր չարագործությունները կատարում է՝ ծննդաբերության պահից սկսած, թպղան իր չար դիտավորություններն սկսում է աղջկա ազապության և մանավանդ հարսնության օրերից և շարունակում մինչև երեխայի երեք կամ յոթ (որոշ դեպքերում մինչև քսան) տարին լրանալը:

Նորահարսը, դուրս գալով իր հարազատ տնից, յուրային միջավայրից, հայտնվում է իր համար օտար ու անծանոթ միջավայրում և դառնում է հեշտ խոցելի բացասական ուժերի կողմից: Հատկապես հղիության առաջին շաբաթներից սկսած՝ կինը շրջապատված է լինում չար ոգիներով, որոնք փորձում են վնասել կնոջը՝ նրան պահելով իրենց տեսադաշտում:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, Եր., 2011, էջ 46:

² Բենսե, Հարք (Մշո Բուլանքի), Հայ ազգագրություն և բանահյուսություն, (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 3, Եր., 1972, էջ 60:

³ Աճառեան Հր., Հայերեն գաւառական բառարան (այսուհետ՝ ՀԳԲ): Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետ՝ ԷԱԺ), հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 381:

⁴ Բիւրակն, 1898, թիւ 19, էջ 374:

⁵ Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., 2006, էջ 306:

Ծննդաբերության ծեսը համարվում է սահմանային իրավիճակ, կնոջ «մի ոտքը գերեզմանում է», ուստի հղի կանայք ծննդաբերելուց առաջ գնում են եկեղեցի⁶, «հաղորդություն են տալիս, որպեսզի եթե մեռնին, անհատորդ չմնան»⁷: Պատահական չէ, որ «Ցայսօր ժողովրդախոսակցական լեզվում «ծննդաբերություն» բառը հաջողությամբ փոխարինվում է «ազատվել» բայի ծիսաառասպելական նրբիմաստով»⁸:

Հաճախ հանդիպում էին մայրեր, որոնց որովայնի պտուղները ողջ չէին մնում: Ի՞նչն էր այս տխուր երևույթի և իրողության պատճառը: Արդյոք ծնողը հիվանդություն ուներ, որը փոխանցվում էր դեռ չծնված երեխային ու սպանում նրան: Բայց այդ ինչպե՞ս էր պատահում, որ հիվանդությունը չէր վնասում մորը, երբ «այնքան երկար ատեն բույն կղնե անոր ներսը: Ո՛չ բժիշկը կրնա բացատրել այն, ոչ սատանորդի բնախոսը, ո՛չ էլ կրոնքի խժրիծ մեկնիչը»⁹: Այս հարցի պատասխանը տալիս են պառավներն՝ ասելով՝ մայրը «քեպե» ունի (Ակնում թաղան կոչվում է «քեպե» կամ «քեպի»): Բայց ի՞նչ է այդ «քեպեն», «ի՞նչ ձև ունի, ի՞նչ գույն ունի, ոգի՞ մ'է այն, թե՞ միջատ մը, դև՞, թե՞ միկրոբ, ոչ ոք գիտե գայն: Միայն սա յայտնի է, թե նա բոյն դրած է մայրերի արգանդին մեջ, և երբ հեք երեխան անոր առջևեն կանցնի աշխարհի գալու համար, զարհուրելի ոսոխը անոր մատղաշ մարմնոյն մեջ կը դրոշմէ մահու պատվաստը»¹⁰: Պառավների խորհրդով, Քառասուն Մարիամներէ կը ժողվեն մէկ մէկ գամ, այս քառասուն գամով շինել կուտան եռոտանի մը, ու երբ երեխան ի լոյս կուգայ, այդ երկաթէ գործիքին մեջէն անցնելով կընծայեն գայն աշխարհին¹¹: Հետո «ի դարման այն տղեկին ծնողք կամ ազգականքն 40 տունէ 40 տեսակ կերպասի կտորներ կը ժողվեն, պարեգոտ կը կապեն, կը հագցունեն. ոմանք ալ ավագ ուրբաթ օրն անարեցաթ կնիկ մը ճամբա կը հանեն, որ պարտի առանց խոսելու 7 կամ 40 տունէ մեյմեկ պատառ արծաթ ժողովել, զոր օղակ մի շինելով քեպե ունեցող կնոջ թևը կանցունեն»¹²:

Շատ ժողովուրդների սնահավատական զրույցներում մարդու մարմնում բույն դրած «ցավերը» չար ոգիներ են, որոնք պատկերվել են զանազան փոքրիկ հրեշների, միջատների ու կենդանիների կերպարանքով: Ժողովուրդը երևակայում է, որ «թաղան գորտանման մի չար ոգի է, որ հղի կանանց արգանդը մտնելով՝ թունավորում է նրանց սաղմը, որի պատճառով նորածինը կա՛մ մեռած է ծնվում, կա՛մ չափազանց սակավակյաց է լինում: Այս չար ոգին թալը է կոչվում և նրանից

⁶ Շիրակում հղի կինը եկեղեցի կամ որևէ սրբավայր մտնելիս աշխատում է ձեռքով չդիպչել իրեն հատկապես դեմքին, քանի որ հավատում է, որ երեխայի այդ մասում նշան է լինելու (Գալստյան Հ., Դաշտային բանահյուսական և ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԲԱՆ), տետր 1, թ. 18):

⁷ Լալայեան Ե., Մուշ-Տարօն, Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գ. 26, Թիֆլիս, 1916, էջ 176:

⁸ Հայրապետյան Թ., Նվիրագործման բնակազմական ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում, Պատմա-բանասիրական հանդես, №3 (170), Եր., 2005, էջ 138:

⁹ Բիրակն, 1898, թիւ 44, էջ 770:

¹⁰ Նույնը:

¹¹ Նույնը:

¹² Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 648:

զարնված կինը՝ Թպղոտ: Շատ անգամ ճահիճների միջից գորտեր¹³ բռնելով¹⁴ Թալիսաններ են շինում և հղի կանանց մոտ պահում, որպեսզի թըպըղները չմերձենան նրանց»¹⁵:

Թպղան, նորածին զավակների արյունն ապականելով, մեռցնում է նրանց և գրեթե ամլության դատապարտում մայրերին¹⁶: Չբերությունը չար ոգիների, մասնավորապես Թպղայի ներգործության արդյունք էր համարվում:

Աղձնիքահայերի մեջ տարածված էր այն հավատը, թե կինը Թպղոտություն էր ստանում, երբ նրա նկատմամբ Թպղաուլունքով կախարդական գործողություն էր կատարվում: Թպղաուլունքը կատարվում քար էր¹⁷, իբր երկնքից կարկուտի հետ ընկած: Ծննդկանի կամ հղի կնոջ հանդեպ թշնամաբար տրամադրված կանայք այցելել են նրանց՝ Թպղաուլունքը գրպանում, և գաղտնաբար տրորել կամ սեղմել այն՝ ծննդկանին դարձնելով Թպղոտ, իսկ նորածնին՝ մահացու հիվանդ¹⁸: Շիրակում «Կանանցից մեկը «Թպղահլուն» կամ «Բաբաղուլի» է պահում մոտը, որ իրա երեխաները մնացական լինին ու չը թայցնեն: Բայց նա, որ նորածին երեխա գտնված տունը որ մտավ ու նստեց ծննդկանի անկողնի վրա մի քանի ժամից հետո էլ «երեխան տիրոջը խեր չունի», կսկսի ամբողջովին սևանալ Թալկտիլ (նվաղիլ) ու մի քանի րոպեից հետո մեռնիլ»¹⁹:

Մուշ-Տարոնում, երբ «մինի երեխաները չեն ապրում, ասում են, թե ծնողները Թպղոտ են. թըպըղը մի որդ²⁰ է, որ ճանկեր ունի և բռնում է երեխայի, սրա հոր կամ մոր լյարդը: Թպղից ազատվելու համար նորածին երեխայի մարմնին և նույնիսկ շրթունքներին ու ականջներին մեղր են քսում և երեք-չորս օր ծիծ չեն տալիս:

¹³ «Հայկական դիցաբանության մեջ ամուլներին զավակ պարգևելը, հղիներին և մանուկներին պաշտպանելը, մորը ալքերից պաշտպանելը և այլն կապվում էր գորտի հետ: Խոնավասեր գորտի մեջ, հավատալիքների համաձայն, ապրում էր հավերժահարսը: Որդեգորի կանայք մինչև դարը գորտի աղոթած մարմինը հմայիլ էին դարձնում և կախում պարանոցներից, որ վնասազերծվեին, զավակը հաջող ծնվեր և երկարակյաց լիներ: Ուստի Վասպուրականում, Աղձնիքում և այլուր կանանց գոտիների արծաթե ճարմանդները ոսկերիչները սարքում էին գորտի պատկերով» (Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորություններն ու ծեսերը, Եր., 2011, էջ 47):

¹⁴ Մանիսայում օձի բերանից վերցրած ձնձողկը, գորտը կամ ձուկը, որ կանանց ամլության դեղն էր համարվում, կոչվում է Թպպալ (ՀԳԲ, էջ 349):

¹⁵ Լալայեան Ե., Վասպուրական, ԱՀ, գ. Թիֆլիս, 1914, էջ 59:

¹⁶ Բիրական, 1898, թիւ 49-50, էջ 867:

¹⁷ Տեղ-տեղ էլ շագանակագույն՝ սպիտակ բծերով:

¹⁸ Նահապետյան Ռ., ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ծիսակատարություններում, Լրաբեր հասարակական գիտությունների, № 4, Եր., 1983, էջ 60:

¹⁹ ԷԱԾ, հ. Ա, էջ 203:

²⁰ «Գորիսի, Սիսիանի, Ղափանի, Մեղրիի և Լեռնային Ղարաբաղի հայերին հայտնի է խաղաղացավ կոչվող մի հիվանդություն, որի հարուցիչը համարվել է մի անանուն **որդ**, որը մարդու մարմնին ընկնելով անվերջ շարժվել է, մեկ մտել ծնկան մեջ, մեկ էլ բարձրացել դեպի վեր՝ սրտի տակ: Հիվանդը զանգատվել է մարմնի ցավերից, ոսկորների կոտրատվելուց: Խաղաղացավոտը ծափ տալու, երգելու, բայաթի կանչելու, պարելու, լաց լինելու և ողբալու ցանկություն է ունեցել: Հիվանդությունն առաջացել է վախից, գիշերով ճանապարհ կամ մթնով ջրի գնալուց, մրսելուց, վշտից, հոգեկան ծանր ապրումներից ու ցնցումներից: Հիվանդության բուժման միակ միջոցը համարվել է պարը» (Խաչատրյան Շ., Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Եր., 2014, էջ 101-102):

Քաղցից նեղվելով՝ թրպըղը դուրս է գալիս, որ երեխայի շրթունքների մեղրը ծծե, այս միջոցին բռնում են նրան, որով և ազատում երեխային: Այդ բռնած թրպըղը դնում են մի տուփի մեջ, պահում, և երբ ուրիշ թպղոտ կանայք հղիանում են, այս թրպըղը տրորում են, լցնում ջրի մեջ և խմացնում նրան: Եթե թպղից երեխաները չեն ապրում, դրկիցներից մի կին փախցնում է նորածնին, ինքը առաջին անգամ ծիծ տալիս և երեք օր հետո բերում տալիս մորը»²¹:

Սասունում թպղային պատկերացնում էին որպես երևակայական ճիվաղ, որը երեխաներին սպանում է մոր արգանդում և ծնվելուց հետո²², իսկ Մուշ – Բուլանքիում «թրբըղը նախնիք համարում էին մի տեսակ չար դև, մանուկներին խեղդող երևակայական էակ կամ մանկական մի տեսակ հիվանդություն»²³: Հայկական հնագույն բժշկագիտական պատկերացումները հաճախ հանդես էին գալիս դիվաբանական բժշկության տեսքով²⁴: «Ըստ այդ պատկերացումների հիվանդությունն առաջանում էր չար ոգիների ազդեցությամբ. նրանից խուսափելու համար հոռութե և հմայիլներ կրելու, աղոթքի կամ կախարդանքի գործողյանը դիմելու խորհուրդներ էին տրվում»²⁵: Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ հիվանդությունը սաստանայի կամ չարքի ձևով է թափանցում մարդու մեջ: Հավատալիքային պատկերացումներում հոգեկան, նյարդային երևույթների պատճառ են համարվել աննյութեղեն դներն ու չար ոգիները, որոնք մտել են մարդու մեջ և «կապել» նրան²⁶: Զգուշանալու համար հորանջելիս բերանը խաչակնքում են²⁷, փռշտալիս ասում են՝ «խեր լինի», որպեսզի չարերը բերանից չմտնեն ներս²⁸: Վերոնշյալը տեսանելի է տարբեր ժողովուրդների բանահյուսական

²¹ Լալայեան Ե., Մուշ-Տարօն, ԱՀ, գ. 26, էջ 186:

²² Պետոյան Վ., Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 295:

²³ ՀԱԲ, հ. 3, էջ 6:

²⁴ «Հնագույն ժամանակներից բազմաթիվ տեղեկություններ կան հիվանդություններ հարուցող ոգիների, նրանցով բռնվածության, այսինքն՝ դիվահարության մասին: Առաջին տեղեկությունները պատկանում են ասորա-բաբելական նշանագրերին: Հոմերոսը վկայում է, որ Հին Հունաստանում գոյություն են ունեցել դիվահարությունից առաջացած հիվանդություններ, որոնք ընդհանուր անունով կոչվել են «էպիլեպսիա»: Մոկրատեսը դների ժխտումը հենց դիտել է իբրև դիվահարություն, իսկ հռոմեացիք խելագարներին համարել են «ոգիներով լցվածներ»: Դեռևս 5-րդ դարում «դիվահարություն» հիվանդության մասին վկայել է Եզնիկ Կողբացին: Միջնադարյան բժշկարաններում, եկեղեցական գրքերում ու համայնիներում կան նկարներ ու վկայություններ դների, տարբեր անուններ կրող չար ու բարի ոգիների՝ շիդարք, ճիվաղք, շվոդք, ալք, թպղա, քաջք, չարք և այլն, նրանց պատճառած վնասների և կոնկրետ հիվանդությունների մասին» (Մաչատրյան Ժ., նշվ. աշխ., էջ 98, 100):

²⁵ Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Եր., 2000, էջ 26:

²⁶ Զաքարյան Ե., Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, թեկնածուականատենախոսության սեղմագիր, Եր., 2011, էջ 20:

²⁷ ԷԱԺ, հ. Ա, էջ 169:

²⁸ «Արոշկըտալը (հորանջելը) չարից, չար աչքից ու չար նիայից է, ըդդր համար ամեն մե արոշկըտալեն հետո բըդի ըսեն թու, թու, թու, օր չարը փախնի: Մե փռշտոցը սաբը է (համբերություն, այսինքն կա մ լավ կլինի, կա մ վատ), էրգուսը քայթ է (լավ է): Մուք տեղը փռշտալը վատ է, լուս տեղը լավ» (Ասացող Արաքայա Չախոյան, 67 տարեկան, մանկավարժ, Շիրակ, գ. Վահրամաբերդ, Հ. Գալստյան, ԴԲԱՆ, տետր 8, թ. 26):

կենցաղում: Փռշտացող մարդուն մենք անմիջապես մաղթում ենք առողջություն: Նույն պատկերացման մասին են վկայում ռուսերեն՝ «благословить»-ը և անգլերեն՝ «bless you»-ն:

Ըստ Վասպուրականի, Նոր Բայազետի և Ախալքալակի ժողովրդական պատկերացումների՝ թպղին գորտանման կենդանի է: Վասպուրականում եթե մի մոր զավակները կամ մեռած են ծնվում կամ շուտով մեռնում են, ենթադրում են, որ նա թրպղ ունի, այսինքն՝ նրա լյարդի վրա գորտանման մի ճիճու է գոյացել, երբ այդ կինը անխոհեմություն է ունեցել մի գիշեր թռնրի մեջ մնացած ջրով լողանալու²⁹: Այստեղ թպղուց ազատվելու համար կախարդներին գիր են անել տալիս, և երբ սրա ազդեցությամբ կինն սկսում է օրծկալ կամ հորանջել, բերանը կրակի վրա էին բռնում, որպեսզի թպղի ճիճուն ուղղակի կրակի վրա ընկնի և այրվի:

Թպղոտ կանայք իրենց երեխաներին կրծքով չէին կերակրում. կերակրում էին այն կանայք, որոնք երեխաներ են մեծացնում ինչ-որ տևական ժամանակահատված, ապա ուշագնաց լինող երեխային անց էին կացնում ծակ քարերի միջից՝ երեք անգամ³⁰ ասելով՝ «Քուկդ առ, իմս տուր»³¹ և այլն³²:

Ծակ քարերից, կենդանիների բերանից (սպանված գայլի բերանը թրջում լայնացնում են, մեծացնում են այդ անցքը և զանազան հիվանդությունների ժամանակ միջով անցկացնում երեխաներին) և կամուրջների տակից (ընդհանրապես անցքերից) հիվանդին անցկացնելով՝ հավատում էին վերջինիս բուժմանը: Անցքերը հաճախ սրբացվում են³³ ժողովրդի կողմից և ունեն չարահալած հատկություն: Կարծում ենք, թե սա կապված է նորից ծնվելու կամ վերածնվելու, «մորից մեկ»³⁴ լինելու գաղափարի հետ:

Բնական ծակ քարերի միջով, ինչպես և կամուրջների տակով անցկացնելով թպղուց բուժում էին նաև Շատախում:

Վերոնշյալի հետ աղերսներ ունի նաև այն, որ Շիրակի Լանջիկ գյուղում թրպղ ունեցող երեխայի վրա են քաշում «իշու ձագի ֆարտան», այսինքն այն թաղանթը, որով ծնվել է իշուկը, և երեխային յոթ օր պահում էին դրա մեջ՝ թրպղոն անցկացնելու նպատակով³⁵:

Քղիում թպղա հիվանդություն ունեցող կինը, երբ զգում է, որ հղի է, տասնհինգ օր առավոտները էշի մեզ է խմում, տասնհինգ օր էլ երեխայի խաղալուց հետո: Երեխայի ծնվելուն պես ծննդկանին էշի մեզ են խմեցնում և երեխայի բերանն են լցնում: Օննդաբերությունից մի քանի օր անց ծննդկանը, մի կին ու մի ազապ

²⁹ Լալայեան Ե., Վասպուրականի ազգագրությունը, ԱՀ, գ. 20, Թիֆլիս, 1910, էջ 182-183:

³⁰ Նույն տեղում, էջ 182-183:

³¹ Գաբրիկեան Կ., նշվ. աշխ., էջ 268:

³² Բուլանըխում թպղոտ երեխային անց էին կացնում նաև երկու իրար շատ մոտ գտնվող խաչքարերի միջից (Բենսե, Բուլանըխ կամ Հարք գաւառ, ԱՀ, հ. 5, էջ 122):

³³ Օրինակ՝ Շիրակի Հացիկ գյուղի Ծակ քարը (Թովատովա տուրբը):

³⁴ Այս արտահայտությունը լայն կիրառություն ունի Շիրակում: Գործածվում է «նոր ծնված» իմաստով:

³⁵ Բղդյան Վ., Հողաբերքի ու տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 1947, էջ 193:

աղջիկ միասին մի գիշեր գնում են յոթ տան երդիկների վրա, ման գալիս: Ազապ աղջիկը երդիկից հարցնում է. «Մարիամ, թպղի դեղն ի՞նչ է»: Տանեցիները հասկանում էին, որ տըպըղ ունեցող կին է, վեր էին կենում, մի երկաթի կտոր էին վերցնում, տանում դուրս և տալիս նրանց: Յոթ տներից այսպես հավաքած երկաթը տալիս էին դարբնին: Վերջինս մի ապարանջան էր պատրաստում թնի և մի օղակ՝ պարանոցի համար: Այս ամենը իր վրա կրելով՝ թպղոտ կինը բժշկվում էր³⁶:

Շիրակի Սառնաղբյուր գյուղի ժողովրդական պատկերացումներում «թըպըղը պոլճանման է, ունի քառասուն ոտք: Երեխայի պնչից ելնում, մտնում է բերանը, հասնում է ջիգարին և ուտում այն»: Այս գյուղից գրառած գրույցներից մեկի համաձայն՝ «քաղքցուն մեկին կնիկը թըպըղ կունենա: Թալիսու Կարմիր Ավետարանը, մեռնիմ էնոր զորությանը, կկանչէ էդ կնկանը: Կասա. «(Երեխի) քառասունքի վերջին օրը պետք է մարդ քնի, կնիկ իմաց մնա, կնիկ քնի՝ մարդ իմաց մնա, օր տեսնին պոլճը, օր դուս կուգա Երեխի քթեն ու կմդնի բերանը»: Բանասաց Թագուհի Սարգսյանի ասելով՝ այդ բռնված պոլճը պետք է հմայիլ շինել ու դնել պատի ծակը, որպեսզի երեխան ու մայրը այլևս չվարակվեն թրբրիսից»³⁷:

Աշտարակի շրջանի Դովրի (Զորավան) գյուղում կանայք թպղու առաջացումը վերագրում են քառասունքը չլրացած նորածին անասունի միսն ուտելուն³⁸: Այստեղ կարծում են, թե թպղոտում են և՛ կանայք, և՛ երեխաները, և՛ տղամարդիկ: Իսկ այդ առաջացող թպղին ունենում է խեցգետնանման կենդանու կերպարանք, որը կառչում է երեխայի սրտին: Թպղոտ կնոջը խորհուրդ է տրվում իր հղիանալու օրից սկսած, երբ դեռ երեխան «չի հոգևորված», երեք օր մեկական գինու բաժակ կարմիր կովի մեզ խմել, իբր սպանում է թպղուն և հեռացնում նրա փորից: Իսկ եթե անգզույշ է եղել և չի խմել, մեզ հայտնի միջոցներից բացի դիմում էին բուժման հետևյալ եղանակին. ամուսինները միասին մասուրի թփի շուրջը յոթ անգամ պտույտ տալուց հետո յոթ անգամ էլ անց են կենում նրա միջով. մեջք-մեջքի տված: Թպղին նրանցից անցնում է մասուրի թփին և վերջինս իսպառ չորանալու դեպքում երեխաները մնացական են դառնում³⁹:

Մասունում «Թիպղը ծնողներից զավակներին անցնող ժառանգական թոքային հիվանդություն էր: Երեխան ծնվելուց հետո ապրում էր մինչև տասը տարեկան հասակը, բայց աստիճանաբար թուլանում, հյուծվում ու ապա մեռնում էր: Թիպղ ունեցող ծնողներին սակավ էր հաջողվում այս հիվանդությունից երեխա փրկելով մեծացնել: Բուժելու հիմնական միջոց չկար, միակ միջոցն այն էր, որ լողացնելու ժամանակ երեխայի մեջքին օձառ էին քսում և ձեռքի ափով ուժեղ շփում: Այդ շփման միջոցին երեխայի կոնակի կենտրոնում, մաշկից դուրս էին ցցվում սրածայր սև գույնի փշեր, որոնք նույն բույսից անելիով քերում թափում

³⁶ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Մ. Հայկունու ֆոնդ, վավերագիր 102, էջ 15:

³⁷ Բրդյան Վ., նշվ. աշխ., էջ 193-194:

³⁸ Այս պատկերացումն ունենին նաև Շիրակի Մարալիկ և Լանջիկ գյուղերի կանայք: Նրանք կարծում էին, թե արբունքի հասած աղջիկներն ու տղաները, նաև հղի կանայք եթե դեռևս խոտ չկերած զառան կամ հորթի միս ուտեն (նաև ձկան), կթպղոտեն:

³⁹ Բրդյան Վ., նշվ. աշխ., էջ 197-198:

էին, և դրանով թիպըը համարվում էր կտրված»⁴⁰։ Այստեղ թպղիից բժշկվելու միջոց էին համարում նաև յոթն աղջիկ զավակ ունեցող մայրերի կաթը, որը հավաքում էին մի ամանում, թպղիով հիվանդին տաք ջրով լողացնելուց հետո, ռախի օճառով (ձեռքի մաքուր սապոն) և այդ կաթով լվանում էին հիվանդի թևակներին միջին տարածությունը, կաթը քսում մեջքի այդ մասին, երկար շփում, մինչև որ կարմիր մունիջներ (մրջուններ) դուրս գային մորթու տակից։ Այդ մունիջները թպղին էին ներկայացնում, որոնց վերցնում էին սուր դանակի կամ ածիլով շերտի վրա և հեռացնելով մարմնից՝ ձգում, սպանում⁴¹։

Բուլանըխում⁴², ինչպես նաև սեբաստահայերի հավատալիքներում թպղի⁴³ հիվանդության դեպքում «ի դարման» կարդացմունքի, հմայեակներու, Ուրբաթագրքի, ուխտագնացության կը դիմեն։ Տղան սուրբերու կնվիրեն. մինչև յոթը տարեկանը մազը չեն կտրեր, կապույտ կտավե կապա կհագցնեն. օձը գորտ մը ուտելու ատեն թպղիստին անունը կուտան։ «Ա ... ին թպղին է» ըսելով. օձը վար կձգէ գորտը, կառնեն գայն և նուսխա ընելով թպղիստին վիզը կը կախեն։ Թպղիստ կինը գաղտնապէս ուրիշին ծծկերը կծծցունեն, թպղին տղուն կանցնի, թէն շատ ծանր քրեական մեղք կհամարվի։ Ասոր համար մայրեր իրենց մանուկը ուրիշ կնկան չեն վստահիր և գիրկը տար։ Վերջապէս հոգեզավակ մը կորդեզրեն, բազումք այս վերջին միջոցը ի գործ դնելով, ծնած զավակինն ողջ մնացած է»⁴⁴։

Մարզվանում «մանուկ մը ծնած ժամանակ կոկորդին մեջ ցորենի պէս ուտեցք կունենա, ասիկա թպղիին նշանն է, երբ այդ ուտեցքը պատռի, մանուկը անմիջապէս կմեռնի։ Իբրև դեղ մանկան քիմքերուն մեղը կքսեն և կամ ոգնիին մաղձը կխմեցնեն»⁴⁵։ Մունճուսուն գյուղում թպղիից բուժվելու միջոցը հետևյալն էր. հողի մայրը տղաբերքից առաջ շան ձագերի վրայով անցնում էր, շան ձագերն անմիջապէս սասկում էին, այսինքն թպղան նրանց էր անցնում⁴⁶։

Թպղայից ազատվելու, բուժվելու միջոց ու եղանակ է նաև ջուրը, որն ուղեկցվում է որոշակի ծիսական արարողակարգով։ Շիրակում Մարալիկի տարածքում, հանդիպում են «թպղու ծառեր»⁴⁷, որոնք սովորաբար ջրերի մեջ են աճում։ Թպղու կանաչ իրենց հիվանդությունը թոթափելու համար իրենց շորերից մի-մի կտոր պատռում և կապում են թպղածառին և լողանում ծառի ջրում⁴⁸։

⁴⁰ Կարապետյան Ե., Մասուն, ազգագրական նյութեր, Եր., 1962, էջ 104։

⁴¹ Պետոյան Վ., նշվ. աշխ., էջ 295։

⁴² ՀԱԲ, հ. 3, էջ 60։

⁴³ «Թպղի» բառը պարսկերենում նշանակում է ասպականիչ, չարագործ (Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 210)։

⁴⁴ Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 210։

⁴⁵ Բիրակն, 1900, թիւ 28, էջ 428։

⁴⁶ Բիրակն, 1899, թիւ 31-32, էջ 489։

⁴⁷ «Թպղիին» Ղարաբաղում լեռնային ծառ է, որից հմայիլներ են պատրաստում անասունների համար։ Ծառերի տակից հոսող ջուրն էլ սրբազան է համարվում և բուժում մաշկային հիվանդություններ։ Բսկ «թրբրլղուն» Արագածի հարավային լանջերին, Բյուրական գյուղի մոտերքը և այլուր տարածված թուփ է, որից հոտաղները ճիպոտներ են կտրում (Բրդյան Վ., նշվ. աշխ., էջ 215)։

⁴⁸ Բրդյան Վ., նշվ. աշխ., էջ 192։

Վարդավառի օրը Լոռի–Փամբակ գավառի Ղալթախչի գյուղի Թրդի⁴⁹ անունը կրող աղբյուրի մոտ քահանան կնքում է թրդի հիվանդություն ունեցող կանանց և երեխաներին, որի դիմաց վարձատրվում էր⁵⁰:

Թ. Հայրապետյանը, խոսելով ջրի իբրև մաքրագործող ցուցչի մասին, գրում է, որ ջուրը «կիրառվում է բուժման ինչպես կենսաֆիզիկական (բուսական և կենդանական դեղամիջոցների լուծիչ, լոզանք, հանքային ջերմուկներ), այնպես էլ ծիսահմայական (բուժադոքթ, ախտարք, բժժանք) մակարդակներում: Ջրի պաշտամունքից սերող ծիսահմայական բժշկությունը սրբազան աղբյուրների, լճակների, գետերի ջրերին վերագրում է մաքրող, ապաքինող հատկություն»⁵¹:

Ամփոփելով մեր ձեռքի տակ եղած նյութերը (ժողովրդական գրույցներ, աղոթքներ, դաշտային բանահյուսական և ազգագրական նյութեր, ուսումնասիրություններ)՝ կարող ենք ասել, որ.

ա. Ծննդկան կնոջ և նորածին երեխայի թշնամի համարվող չար ոգի թպղայի հավատալիքը ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է Հայաստանի ազգագրական բազմաթիվ շրջաններում:

բ. Մեր ուսումնասիրած նյութերում բացակայում է թպղայի՝ իբրև անձնավորված ոգու նկարագրությունը: Այն հանդես է գալիս իբրև հիվանդության հարուցիչ տարատեսակ միջատների (գորտանման ճիճու, կարմիր պոլոճ, քառասուն ոտք ունեցող բոլոճ, խեցգետնանման բազմոտանի և այլն) ու մանր կենդանիների (գորտի կամ գորտանման կենդանու) կերպարանքով:

գ. Թպղան վնասում է թե՛ ծննդկանին և թե՛ նորածնին: Այն իր գործունեությունը սկսում է դեռ աղջկա ազապության և կնոջ հղիության առաջին շաբաթներից և իր տեսադաշտում պահում մորն ու երեխային, մինչև երեխայի երեք կամ յոթ (որոշ դեպքերում մինչև քսանմեկ) տարին:

դ. Թպղայով «բռնվում» են ծննդկանն և ու նորածինը, նաև հայր-ամուսինը⁵², իսկ որոշ դեպքերում էլ թպղան անցնում է ժառանգաբար, վարակում է նաև տան փեսային⁵³, որը արյունակից չի ընտանիքի անդամներին:

ե. Ժողովրդին հայտնի են ծննդկանին ու նորածնին վնասող չար ոգիների դեմ պայքարելու բազմաթիվ միջոցներ ու եղանակներ: Թպղայի պարագայում կայծակի խորհրդանիշ համարվող մետաղների և զանազան իրերի և առարկաների կիրառումից բացի, օգտագործում էին բուժման ծիսահմայական միջոցներ և կենդանական հմայիլներ: Պայքարի միջոցներից մեկն էլ նրանց «խաբելն» է կամ մոլորության ու շփոթության մեջ գցելը: Ժողովուրդը փորձում էր շեղել նրանց ուշադրությունը ծննդկանին. Մարիամ, իսկ նորածնին այլակրոնի անուն տալով,

⁴⁹ Հավանաբար խոսքը թպղի հիվանդության մասին է, որից երեխաները փոքր հասակում մահանում էին, և որն այստեղ ժողովրդական ստուգաբանությամբ կապվում է Թրդի անունով աղբյուրի հետ (Ս. Մկրտչյան, Հայոց տոնածիսական մշակույթ, Եր., 2016, էջ 174):

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Հայրապետյան Թ., Բուժման ծիսահմայական և կենսաֆիզիկական ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում, Պատմա-բանասիրական հանդես, №2 (172), Եր., 2006, էջ 170:

⁵² Լալայեան Ե., Մուշ-Տարօն, ԱՀ, գ. 26, էջ 186:

⁵³ Բրդյան Վ., նշվ. աշխ., էջ 201-202:

երեխային ոչխարի մսի հետ կշռելու և վերջինս թաղելու, ուրիշ կնոջ կրծքով կերակրելու միջոցով և այլն:

ТПХА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПРЕДАНИЯХ, ПОВЕРЬЯХ И СУЕВЕРИЯХ

____ *Резюме* ____

____ *А. Галстян* ____

В статье рассматривается тпха - дух встречающийся в армянских народных преданиях, поверьях, суевериях, заклинаниях. Тпха вредит роженицам и новорожденным младенцам. Описываются функции тпха в различных этнографических районах, методы и способы защиты от него, излечение от насланных им болезней.

Տեղեկություններ հեղինակի մասին

Գալստյան Հասմիկ Հենրիկի – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, E-mail: gasmik@mail.ru

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒ ԹՌՉՈՒՆԸ ԿԱՐՄԻ
ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ***

Կարսի տարածաշրջանը հարուստ է բազմաթանր ու ինքնատիպ բանահյուսությամբ, որն այժմ է ընկնում հատկապես հրաշապատում հեքիաթներով: Այս տարածաշրջանի հրաշապատում հեքիաթների հերոսների գործառույթները որոշ չափով նույնականանում են ինչպես պատմական Հայաստանի բոլոր պատմաագագրական տարածաշրջանների, այնպես էլ աշխարհի մի շարք ժողովուրդների հրաշապատում հեքիաթների գործող անձանց գործառույթների հետ:¹ Հերոսի գործառույթներն ուղեկցվում են ամենատարբեր նվիրատուների, խորհրդատուների և օգնականների միջամտությամբ, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի թռչունը:

Թռչունը կապված է մարդու տոտեմական պատկերացումների հետ: Թռչուն-նախնին հնուց ի վեր իր դրսևորումն է գտել հայ ժողովրդական հեքիաթներում: Հեքիաթի հերոսի մեռած նախնու հոգին թռչնի կերպարանքով² հայտնվում է նրա ճանապարհին՝ երազում թե արթմնի, անդրաշխարհում թե այսրաշխարհում, խոշորամարմին թե փոքրամարմին: Հնագույն ժամանակներից մարդու՝ տիեզերական պատկերացումների գաղափարն արտացոլող Տիեզերական ծառի վերնամասում տեղակայված թռչունը³ միշտ եղել է մարդու հետաքրքրությունների շրջանակում: Թռչունի հավաքական կերպարը Կարսի հեքիաթներում բազմազան է. բանասացն ազատ է հեքիաթապատման ժամանակ: «Բլբուլ», «դուշ» կամ «ղազ» ասելով՝ բանասացը երբեմն նկատի չունի թռչունի որոշակի տեսակ. պատումի ընթացքում է ունկնդրին պարզ դառնում՝ ինչպիսի թռչունի մասին է խոսքը:

Կարսի հեքիաթներում հանդես եկող թռչունների բազմազանության մեջ հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալ տիպերը.

- ա) թռչուններ (բլբուլ (սոխակ), աղավնի), որոնք օգնում են հերոսին վերականգնանանալու կամ վերականգնելու մարմնի վնասված մասերը,
- բ) թռչուններ (դուշ, զմրուտ դուշ), որոնք իրականացնում են հերոսի տեղափոխությունը անդրաշխարհից այսրաշխարհ և ընդհակառակը,
- գ) երախտապարտ թռչուններ (աղավնի (դոխ), բլբուլ, բազե), որոնց խորհուրդների օգնությամբ հերոսը վերահսկում է իր հետագա քայլերը՝ խուսափելով վերահաս վտանգից,

* Հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Հրաշապատում հեքիաթի գործող անձանց գործառույթների մասին տե՛ս Пронн В., Морфология волшебной сказки, Москва, 2001, с. 26-61.

² Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 17:

³ Топоров В. Древо мировое, Москва //МНМ, Электронное издание (на основе издания Изд-ва “Советская энциклопедия”, 1980), 2008, с. 330-331

- դ) թոշուններ (աղավնի, դուշ, վայրի սագ, թութակ, դովլատ դուշ), որոնք որոշում են հերոսի ճակատագիրը կամ օժտում են շնորհներով,
 ե) հերոսի կերպարանավորություն թոշունի (աղավնի, դուշ, բլբուլ) կամ հակառակը:

Ինչպես նշեցինք վերը, հեքիաթի հերոսի մեռած նախնու հոգին թոշնի կերպարանքով հայտնվում է նրա ճանապարհին (սովորաբար ծառի տակ հանգստանալիս) կամ երազում: Ախոյանի (վնասատուի) կողմից վնասված, երբեմն մեռած կամ քար դարձած, մոտալուտ վտանգին ենթակա հերոսը կարիք ունի միջամտության. վրա է հասնում նվիրատու և խորհրդատու թոշունը: «Ժլատ թագավորի հեքաթը կամ հազարան բիլբուլ» հեքիաթում (ATU 550)⁴ հերոսի նախանձ եղբայրները հանում են նրա աչքերը և գցում գրպանը: Կուրացած հերոսը վերականգնում է իր տեսողությունը թոշունի թողած փետուրով և այն օգտագործել կարողանալու խորհրդով. «Մե օր էլ երկու բլբուլ կուգան կը իջնեն էդ ծառի վրա, մեկը մեկելին կըսէ.– Էս տղեն ընչի՞ է քոռացել:

Էն մեկը կըսէ.– Էտը ախպերտինքը նախանձից աչքերը հանեցին:

– Բա էլ իլաջ չկա՞ Էտը աչքերը լավնալու,– կըսէ մեկելը:

– Կա, հմի մենք օր թռանք, էս մե բմբուլ կըքցեմ, թող ման գա գտնի, աչքերը ջեբն են, դնէ իրանց տեղերը, բմբուլը զարկէ աղբրի ջրի մեջ, քսէ աչքերին, կը լավնա»:⁵

Ի դեպ, փետուրը առանց աղբյուրի ջրի մեջ թաթախելու ի գորու չէ վերականգնելու տեսողությունը: Երկրի ընդերքից բխող ջուրը կապն է անդրաշխարհի և այսրաշխարհի միջև, իսկ սոխակը (եթե համարենք, որ այս պարագայում բլբուլը սոխակն է)՝ հերոսի մեռած նախնու հոգին:

Նմանատիպ նվիրատվություն կա նաև «Աղունիկի հեքիաթը» (ATU 706) պատումում, որտեղ հերոսը աղավնու փետուրի միջոցով վերականգնում է իր կորցրած ձեռքերը:⁶

Կարսի հեքիաթներից մեկում քարացած հերոսի վերակենդանացումը նույնպես իրագործվում է թռչնային խորհրդի օգնությամբ:⁷ Ըստ այդ խորհրդի՝ թագավորի տղան պետք է իր նորածին որդուն մորթեր և արյունով լողացներ հերոսին: Կենսարար հեղուկով հիվանդին, մեռածին կամ քար դարձածին լողացնելու մոտիվը տարածված է ոչ միայն հայ ժողովրդական, այլև աշխարհի շատ ժողովուրդների հեքիաթներում: Հեքիաթների մեծ մասում վերակենդանանում է նաև անմեղ զոհը՝ երեխան: Այս երևույթը կարելի է համեմատել արյան փոխներարկման հետ. նորածնի առողջ արյունը ներարկվում է հիվանդ կամ մեռած հերոսին,

⁴ Ըստ Աարնե-Թոմփսոն-Ուտեր (ATU) հեքիաթների տիպերի և մոտիվների միջազգային համացույցի (Uther H.-J. The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011).

⁵ «Ժլատ թագավորի հեքաթը կամ հազարան բիլբուլ», Կարս. հայոց բանահյուսական մշակույթը (հետալսու՝ Կարս), Կազմողներ՝ Հարությունյան Ս., Խեմյան Է., Խեմյան Ս., Պողոսյան Ա., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013, էջ 37:

⁶ «Աղունիկի հեքիաթը», Կարս, էջ 171-175:

⁷ «Ասլանգադեի հեքիաթը», Կարս, էջ 96-102:

հերոսը բուժվում կամ վերակենդանանում է, իսկ դոնորը շարունակում է ապրել:⁸ Նույն հեքիաթում թռչունը հերոսին զգուշացնում է նաև մոտալուտ վտանգների մասին՝ դրանք շրջանցելու խորհուրդներ տալով. «Մերը (թռչուններից մեկը-Մ.Խ.) կըսէ. Էգուծ կուգան էտնց դիմավորելու, ճամբեն մե մեծ ջուրմ կա, վրեն՝ կարմունջ: Էդ կարմնջից անցնելուց, եր օր բիրադիքը անցան, Էկան թագավորի տղեն ու հարսը անցնելու, կարմունջը կը բլի, Էրկուսն էլ կը խեղդվին: Թե Ասլանգադեն զարթուն է, թող իմանա, թե քնած է, Էրագին տեսնի: Թագավորի տղին ու հարսին թող չը թողնի կարմնջից անցնելու: Տանի, ցածը՝ սաղրիկ տեղ, թող ջրով անցնէ: Մեկ էլ, եր օր հարսնիքը կը պրծնի, առաջի գիշերը թող թագավորի տղին ու հարսին դարառու կայնի, քանի օր մե վիշաբմ կը մտնի, Էրկսին էլ կուլ կուտա: Վիշաբին սպանելուց հետո, թող կտորներից լցնէ մե ամսիմ մեջ, դնէ մե տեղմ: Էս ըսածներս Ասլանգադեն, հարի քառսուն օրը չանցնի, հեչ մարդու բտի չըսէ, թե չէ՝ քար կը դառնա»:⁹ Հեքիաթի հերոսը դիպվածի բերումով ոչ միշտ է հետևում խորհրդատուի պատվիրաններին. արդյունքում նա դարձյալ կանգնում է խնդրի առաջ, որի լուծման համար անհրաժեշտ է լինում այդ նույն կամ մեկ այլ խորհրդատուի միջամտությունը:

Հրաշապատում հեքիաթի հերոսը տեղափոխվում կամ հասցվում է փնտրվող օբյեկտի գտնվելու տեղը, որը սովորաբար այլ տարածությունում է՝ անդրաշխարհում: Հեքիաթում հերոսի տեղափոխությունը դեպի անդրաշխարհ կատարվում է տարբեր միջոցներով: Կարսի հրաշապատում հեքիաթներում այդպիսին է առասպելական չափեր ունեցող «դուշը», որը օգնում է հերոսին՝ ի նշան երախտագիտության: Հեքիաթներից մեկում (ATU 530). «Մե օրմ էլ մե մեշիմ դրադից անցնելուց կտեսնի՝ Էրկու դուշ կովում են: Մեկը մե շատ սիրուն գմբուտ դուշ է, մեկելը՝ մի սև դառտալ, անպետք բան է, համա Էս գմբուտ դշին Էնպես կծեծէ, օր քիչ կմնա սատկեցնէ: Տղեն օր կտեսնի, կիդճահարվի Էս գմբուտ դշին: Նետը կբռնէ, դարդալ դշին կգարկէ, սատկեցնէ: Էս գմբուտ դուշը կազատվի, կուգա կընկնի տղի ոտները, կըսէ. Դստված քեզի դրկեց, օր գաս ընձի փրկես: Մե քիչմ էլ օր ուշ հասնեիր, Էս կսատկեի: Հմի քու լավության տեղը Էս ի՞նչ կրնամ Էնէ, վրես իլաջ չի մնացել: Վերցրու բնբուլներիցս քովդ, ինչ վախտ նեղը կընկնիս, բընբուլս վառէ, Էս քու հավարին կհասնիս»:¹⁰

Թռչունի հրաշագոր փետուրի կիրառումը Կարսի հեքիաթներում երկու ձևով է իրականացվում, առաջինը՝ ջրի մեջ թաթախելով, երկրորդը՝ կրակին տալով: Երկու դեպքում էլ փետուրը հաղորդակցվում է անդրաշխարհի հետ ջրի և կրակի միջոցով: Փետուրը, մազը կամ բուրդը կրակին տալը որոշ ժողովուրդների մոտ հմայական միջոց է՝ հոգիներ կանչելու, որոնք «սիրում են այրված մազի

⁸ Անկասկած մեր նախնիները տիրապետել են բժշկական որոշակի գիտելիքների, որոնց հետևից արձագանքը պահպանվել է հեքիաթի համատեքստում՝ որպես հրաշագործություն:

⁹ «Ասլանգադեի հեքիաթը», Կարս, էջ 100-101:

¹⁰ «Մինամ թագավորի հեքիաթը», Կարս, էջ 83:

հոտը»:¹¹ Եվ, քանի որ երախտապարտ թոշունն իր մեջ կրում է հերոսի նախնիների հոգին, նա այրվող փետուրի հոտը զգալով, անմիջապես ներկայանում է հերոսին:

Ջրուտ դուշը (զմուռ թոշ, զմրուխտ դուշ) հայ ժողովրդական հեքիաթներում ունի հերոսին անդրաշխարհ տեղափոխելու դերակատարություն: Դրական հատկանիշներով օժտված առասպելական չափերի թոշունն իր վրա պետք է կրի ոչ միայն հերոսին, այլև այդ ճանապարհին անցնելու համար անհրաժեշտ սնունդը: Կարսի նշված հրաշապատում հեքիաթում. «դուշը դժալեն իջավ՝ ինչիս օր մե քարավի»:¹² Հայաստանի այլ տարածաշրջանների հեքիաթներում այդ թոշունն արծիվ է, սինամահավք կամ սիրամարգ: Հեքիաթներից մեկում այդ դուշի «ոտներ երկաթից ա, թոնելու վախտը տալիս ա իրար, կրակ ա թափում»:¹³ Տեսնում ենք, որ առասպելական այս թոշունները տարբեր ձևով են ներկայացվում բանասացների կողմից, բայց ունեն մի ընդհանրություն. նրանք ճանապարհվելուց առաջ պետք է լրիվ վերականգնեն իրենց ուժերը և ստանան բավարար սնուցում:

«Օխտ ախպոր քուրը» (ATU 301A) հեքիաթում հերոսն անդրաշխարհում փրկում է թոշունի ձագերին: Երախտապարտ թոշունը՝ «մենծ դուշը», հերոսին լույս աշխարհ է հանում: Այս թոշունը, բացի անդրաշխարհի և այս աշխարհի կապող օղակ լինելուց, ունի մեկ այլ գործառնություն՝ ևս՝ վիրավոր հերոսին բուժելը. «Ու էդոնք ընկան ճամփա: Դուշը դա կենե, տըղեն դրմակ կուտա, դու կենե՝ գինի: Կերթան, կերթան շատ, քիչըմ ճամփա մընա կը, օր հասնին լուս աշխարք, դրմակը պարայի կը: Դուշըն էլ դա կենե, խեղջ տըղեն ի՞նչ էնե, դրմակ չը կա, մուրթե մընացել է: Տեսնի կը, օր չի էղնի, թուրը քաշե կը, իրա անդըմից կակուխ տեղեն կըտրե կուտա դըշին: Դուշը տեսնի կը, օր էղիկ թըմակ չե, պահե կը լեզվի տակը, չի ուտե»:¹⁴ Լույս աշխարհի հասնելուց հետո թոշունը լեզվի տակից հանում է հերոսի ազդրամիսը, տեղադրում իր տեղը և լիզելով անմիջապես բուժում վերքը:

Հերոսի մեռած նախնու հոգին Կարսի հեքիաթներում դրսևորված է նաև աղավնու կերպարանքով: Ինչպես նշում է Սարգիս Հարությունյանը. «Կերպարանափոխման կապը մահվան, անդրաշխարհի իր խորհրդանշական արտահայտությունն է գտել կերպարանափոխման տեղի և ժամանակի մեջ (գիշերը, երեկոյան, մթանը): Կերպարանափոխումը կատարվում է հաճախ դաշտում կամ անտառում, այսինքն՝ վայրի բնության մեջ. տարածքային միավորներ, որոնք գտնվում են մարդկային սահմանափակված բնակավայրերից (իմա՝ կյանքից) հեռու և խորհրդանշում են անդրաշխարհը՝ իբրև բաց ու անպարփակ տարածություն»:¹⁵

Հեքիաթի հերոսի և աղավնու կերպարանափոխված նրա մեռած նախնու հոգու հանդիպումը սովորաբար տեղի է ունենում դաշտում կամ անտառում ծառի տակ հանգստանալիս կամ քնած ժամանակ՝ երագում, այսպես, օրինակ՝ «Թուրքման օղին կընգնի ճամփա: Կերթա, կերթա, շատն ու քիչը ինքը գիտե, հասնի կը մի

¹¹ Пропп В., Исторические корни волшебной сказки, Изд-во "Лабиринт", Москва, 2000, с. 150.

¹² «Միևնա թագավորի հեքիաթը», Կարս, էջ 84:

¹³ «Մըմավոն թագավոր ու Գյուլ», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. III, Այրարատ, Կազմող՝ Նազինյան Ա.Մ., Եր., 1962, էջ 80-96:

¹⁴ «Օխտ ախպոր քուրը», Կարս, էջ 93:

¹⁵ Հարությունյան Ա., Առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 301:

ծառիմ, կըսէ. «Ըստեղ նըստիմ քիչըմ դինջընամ, էղն կերթամ»: Էդ վախթը կաշէ՝ ծառի վըրեն դոխըմ թառած՝ կաշէ էդ տըղին: Էդոր ձագերըն էլ էկան թոփ էղան իրարու քով, դոխի լիզվով իրարու հետ խոսին կը»:¹⁶ Աղավնիները Կարսի հեքիաթներում կա՛մ մարդկային լեզու են առնում, կա՛մ հերոսն է նրանց լեզուն հասկանում: Նրանք հերոսին ներկայանում են երբեմն երկուսով (հաճախ՝ մայր ու աղջիկ կամ երկու քույր), երկխոսության միջոցով հերոսին իրազեկում մոտավորապես վտանգի և այդ վտանգը շրջանցելու միջոցների մասին: Որոշ հեքիաթներում չի որոշակիացված, թե ինչ թոչուններ են, պարզապես ասվում է՝ երկու դուշ կամ երկու բլբուլ:

«Մահ չուզող տղան» (ATU 652) հեքիաթում աղջիկների կերպարանափոխված աղավնիները նորածնին օժտում են շնորհներով. Շատ չարչըրվելեն էտն մեկ էլ տեսավ, օր հերթըրքից էրկու հատ աղունիկ իչան իրիսկընկա քովը, դառան էրկու հատ ախչիկ, ընկան իրիսկընկա թների տակը: Իրիսկինը ազատվավ, բերավ մե լավ տղա: Ախչիկները էրեխեն փատտեցին, մորը պատկեցրին, դրին մոր կողքը:

Ախչիկներուն մեկն ըսավ.՝ Էրթանք:

Էն մեկն ըսավ.՝ Օր էրթանք, կըլլի՞: Ի՞նչ էրինք, ի՞նչ տվինք էս տղին:

Քուրն ըսավ.՝ Օր ըտման է, իմ թարաֆեն էս տղին փեշքըշում եմ՝ գըշերը քնի, սապախտան էլլի, բարցը վերցնե, տկեն վերցընե տոռակըմ, օսկի գտնի:

Էտ քուրն օր էտ փեշքեշը տվավ, մեկել քուրը ըսավ.՝ Ես գուգեմ, օր էս էրեխեն մե օրը էղնի մի տարեկան, և ինչ օր սիրտը ուզե, էն կատարե:

Ըսին, աղունիկ դառան ու թողին գնացին»:¹⁷

Այս նույն հեքիաթում թոչունների (սինամ դուշ, ճնճուղ) գործողություններով (տարեկան մեկ փետուր չինարի ծառին ավելացնելը մինչև ծառի ամբողջությամբ ծածկվելը և կտուցով օվկիանոսի ջուրը դատարկելը)¹⁸ առաջ է քաշվում մահկանացուի համար երկարակեցության հնարավորությունը և անմահության գաղափարի ժխտումը:

«Ձուկ տղան» հեքիաթում յոթ տարի ձկան կերպարանքով ապրելու դատապարտված հերոսը կերպարանափոխվում է աղավնու՝ ևս յոթ տարի ժամանակով, քանզի խախտվել էր կախարդանքի ժամկետը. «Կնիկ, մորտ վիզը կոտրեր, քեզ էտ բանը չտվորեցներ: Երեք օր էր մնացել իմ ժամանակից, որ էս ձուկ չէի դառնա: Հիմա էլ աղավնի պտի դառնամ, յոթը տարի էլ էսպես տանջվեմ: Էլ ինձ չես գրնի, մինչև յոթը գույգ պողպատե կոշիկ, յոթը հատ պողպատե գավազան չմաշես»:¹⁹

Որոշ հեքիաթներում թոչունը որոշում է հերոսի հետագա ճակատագիրը: Որսորդության ժամանակ թագավորը բռնում է շատ գեղեցիկ, վայրի սագերին և որոշում տանել պալատ, դնել վանդակի մեջ և հիանալ, սակայն սագերը նրան ասում են. «Է, թագավորն ապրած կենա, մենք խո դուշ չենք, օր մեզի դնես դաֆաւը՝ սեյր էնես: Մենք օր կանք, հուրի-փերիներ ենք, սաղ աշխարքը ման կուգանք:

¹⁶ «Օխտ ախպոր քուրը», Կարս, էջ 93-94:

¹⁷ «Մահ չուզող տղան», Կարս, էջ 121:

¹⁸ Նույն տեղում, էջ 122, 123:

¹⁹ «Ձուկ տղան», Կարս, էջ 119-120:

Տղամարդկանց մեջ՝ դու, կնիկմարդկանց մեջ՝ Փերուզատ թագավորի աղջիկը՝ Լուսաբերը: Էտ էրկուստ եք իրար արժան: Քեզեն սավայ, Լուսաբերին ուրիշ տղա արժան չէ, Լուսաբերից սավայ, քեզի ուրիշ աղջիկ արժան չէ: Էդ էրկուսդ ծնված եք իրար հմար: Հմի քովդ նկար ունի՞ս, տուր տանինք տանք Լուսաբերին»: ²⁰ Վայրի սագերի կանխորոշմամբ ու օգնությամբ և այլ խորհրդատուների ու նվիրատուների միջամտությամբ Նալ թագավորը կարողանում է գտնել, ապա կորցնելուց հետո վերագտնել Լուսաբերին:

«Փոնցիանոս թագավորի տղեն» հեքիաթում թոշունն իրագեկում է հերոսին, որ. Ալեքսիանոսը թաքավոր բռնի էղնի, հերը տղի ձեռքերին ջուր բռնի լըցնե, մերըն էլ փեշկիրը ձեռքին տա տղին սըրպըվի»: ²¹ Այս նույն հեքիաթում թագավորի բազեն անձնագոհությամբ փրկում է թագավորին և իր ժողովրդին վիշապից: ²² Մեկ այլ հեքիաթում թագավորի հավատարիմ թութակը՝ տուտի դուշը, նրան անմահական խնձորի կորիզներ է նվիրում: Կորիզից աճած խնձորենու բարը թունավորվում է օձի կողմից, որի արդյունքում հատուցում է նվիրատու թոշունը: ²³ Տեսնում ենք, որ անդրաշխարհի չար ուժերն ինչպես են մշտապես հակամարտության մեջ մտնում բարու հետ և երբեմն հաղթում:

Երբեմն թոշունը հերոսին տանում է անդրաշխարհ, այնտեղ կերպարանափոխվում աղջկա, միասին ապրում են երջանիկ, սակայն հերոսը հետ է վերադարձվում երկիր՝ թոշունի պայմանները չկատարելու պատճառով: ²⁴

Հայ ժողովրդական հեքիաթներում բազմաթիվ են հեքիաթները, որոնցում թագավորի ընտրությունը կատարվում է թոշնի միջոցով: Կարսի հեքիաթներում այդ թոշունը դուվատ դուշն է. «Էդ վախտը դուշը բաց կը թողնեն: Դուշը կուքա նախրձու կընկա գլխին կիջնի: Էստեղ ժողովուրդը կը խառնվին իրար... Նախրձու կընկան կը տանին մե տալտա տեղմ կը թողնին, դուշը բաց կը թողնին: Էլի կուքա, նախրձու կընկան կը գտնի, կը իջնի Էդոր գլխուն... Էս կընկան կը տանին մե տունմ կենեն, դուշը վրեն կը փակեն, դուշը բաց կը թողնին: Դուշը կերթա Էդ տան փանջարից նես կը մտնի, կիջնի նախրձու կնկա գլխին: Ժողովուրդը կը տեսնին, օր իրանց դամաթը Էդ մարդն է, բերեն Էդոր կը նստցնեն թագավոր»։ ²⁵ Եթե ի վերուստ նախանշված է, թե ով պետք է փոխարինի մեռած թագավորին, ապա տեսնում ենք, որ ամենագոր ու իմաստուն թոշունը գետնի տակից անգամ կարող է գտնել փոխարինողին:

Այսպիսով՝ Կարսի՝ շուրջ հիսուն հրաշապատում հեքիաթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նվիրատու և խորհրդատու թոշունը մի շարք հեքիաթներում առանցքային գործող անձ է, որի գործողություններով պայմանավորված են հեքիաթի սյուժեի զարգացումն ու հանգուցալուծումը:

²⁰ Նալ թագավորի հեքիաթը, Կարս, էջ 145-146:

²¹ Փոնցիանոս թագավորի տղեն, Կարս, էջ 206:

²² Նույն տեղում, էջ 202:

²³ Ալեքսիանոս և Լուսավիկ, Կարս, էջ 215-216:

²⁴ Պատվի տղեն ու բազրկյանը, Կարս, էջ 243:

²⁵ Նախրձու կնկա հեքիաթը, Կարս, էջ 229:

**ПТИЦА-ДАРИТЕЛЬНИЦА И ПТИЦА-СОВЕТЧИЦА
В ВОЛШЕБНЫХ СКАЗКАХ КАРСА***Резюме**М. Хемчян*

Регион Карса богат многожанровым и своеобразным фольклором, который выделяется в частности волшебными сказками. Функции героев волшебных сказок этого региона в какой-то степени идентичны с функциями действующих лиц волшебных сказок как всех историко-этнографических регионов исторической Армении, так и разных народов мира. Действия героев сопровождаются вмешательством разнообразных дарителей, советчиков и помощников, в их ряду особое место занимает птица. Разнообразны их виды (голубь, соловей, воробей, гусь, павлин, орел, попугай и т.п.) и функции птиц (перемещение героя из подземного мира в материальный мир или наоборот, оживление умершего героя или восстановление его потерявшейся части тела, совет герою, изменение статуса героя и т.п.), выступающих в сказках Карса.

Исследования приблизительно пятидесяти волшебных сказок Карсского региона (Карс: фольклорная традиция армян, Сост.: Арутюнян С.Б., Хемчян Э.Г., Хемчян М.Г., Погосян А.К., Изд-во “Гитутюн” НАН РА, Ереван, 2013) показывают, что птица-дарительница и птица-советчица в ряде сказок является осевым героем, функциями которой обусловлены развитие и развязка сюжета.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խեմչյան Մարինե Հայկի - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, E-mail: mkhemchyan@yandex.ru

*ԱՆԵԾՔ-ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔ-
ԲԱՐԵՄԱԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԿԱՐՍԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ*

Կարսի տարածաշրջանի ժողովրդական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթները, որոնք ներկայացնում են հայկական հեքիաթային ժառանգությանը բնորոշ սյուժեների ու մոտիվների տեղական տարբերակները՝ ինքնատիպ հյութեղ ոճով և ասացողական ավանդությամբ: Այդ հեքիաթները, պատմվելով տարածաշրջանում կենցաղավարող բարբառներով, ենթաբարբառներով ու խոսվածքներով, ներառել են Կարսի բառագանձի ու արտահայտամիջոցների լավագույն ու առանձնահատուկ նմուշները՝ իրենց դիպուկությամբ ու բազմիմաստությամբ:

Անդրադառնալով Կարսի ազգաբնակչության հեքիաթներին՝ պետք է նկատել, որ բնօրրանի կորուստը, տարագրությունը, նոր տեղավայրին ինտեգրվելու խնդիրները, կենցաղավարման միջավայրի բացակայությունը, անբարենպաստ կենսապայմանները (գիտատեխնիկական առաջընթաց, ժամանակակից նոր արժեքների ներհույս գյուղական կենցաղ, երիտասարդ ունկնդիրների ընկալումների ու հայացքների բևեռացում) հող են նախապատրաստել ավանդական, պատմականորեն ձևավորված արժեքների խաթարման համար: XX դարի կեսերի կարսեցի բանասացն արդեն կորցրել էր կարսյան հեքիաթների ոչ միայն սյուժեները, այլև բարբառային և բառապաշարային տարրերի զգալի մասը, հետևաբար XX դարի 60-70-ական թվականներին գրաված հեքիաթները զգալիորեն հեռացել էին իրենց նախատիպերից: Աստիճանաբար ավանդական հեքիաթը, ենթարկվելով ժամանակի թելադրանքին, երբեմն վերածվել է սխեմատիկ պատումի: Հեքիաթապատման առաջին խոչընդոտը վերապատմող բանասացի հիշել-չհիշելու ծանրագույն խնդիրն էր՝ պայմանավորված երկարամյա ընդմիջումից հետո մանկության ու երիտասարդության տարիներին լսածը վերարտադրելու բարդությամբ: Երբեմն բանասացը, առաջնորդվելով լսարանի պահանջներով, աշխատում էր ավելի պարզեցնել և հեշտացնել պատումը, որի հետևանքով երկարաշունչ սյուժեի կրկնվող հատվածները բաց էին թողնվում, կամ էլ համառոտ տարբերակով էին ներկայացվում: Սովորաբար կրկնվող հատվածներից առաջ կիրառվում էր կայուն բանաձև, որը մատնացույց էր անում պատումի կրկնությունը. «Տըդեն ինչ օր տեսել, լըսել է, կը սկըսէ նաղըլ էնելը վաճառականից, էն քոռ մարդուց, Շամիրից, ինչըխ օր ձեզի նաղըլ էրեցի»:¹

¹ Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Կազմողներ՝ Ս. Հարությունյան, Է. Խենյան, Ս.Խենյան, Ա. Պողոսյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013 (հետայսու՝ Կարս), «Չըքավոր պատվի տըդեն», № 38(38), էջ 248:

Պետք է նկատել, որ մյուս տարածաշրջանների հեքիաթների հետ համեմատած՝ Կարսի հեքիաթներում զգալի քանակ են կազմում երկարաշունչ և միա-հյուսված պոեմներով տարբերակները:²

Ինչպես ասվեց, իրենց կառուցվածքով Կարսի հեքիաթները համահունչ են և նմանվում են մյուս տարածաշրջանների հեքիաթներին: Հեքիաթում պոեմների, մոտիվների, հերոսների գործառնությունների հերթագայությունը խարսխված է ժանրին բնորոշ ավանդական կայուն բանաձևերի վրա, որոնք, ստորաբաժանվելով սկզբածախին, միջնամասային և եզրափակիչ տեսակների, առանց փոփոխության կարող են կիրառվել ցանկացած հեքիաթում:

Ավանդական բանաձևերը լեզվադարձվածային կայուն կաղապարներ են, որոնք կիրառվում են համաշխարհային հեքիաթասացության մեջ: Կարսի հեքիաթներում դրանք տեղական երանգավորում են ստացել և ներկայացնում են տարածաշրջանի լեզվամտածողության, հոգեկերտվածքի, կենցաղի, հավատալիքների, սովորությունների խտացված ամբողջությունը: Կարսի հեքիաթներում պահպանված են հայ ժողովրդական հեքիաթների ավանդական տիպերը, կառուցվածքն ու հեքիաթապատման ասացողական ավանդույթները: Հեքիաթի բանավոր փոխանցման ընթացքում բանասացը ստացել է ավանդական պոեմներով, մոտիվներով, կայուն բանաձևերով ու որոշակի կառուցվածքով ստեղծագործություն, որը հնարավորության սահմաններում պահպանել և համալրել է սեփական բառապաշարի լեզվական միավորներով, որոնք, իր կարծիքով, տվյալ պարագայում տեղին են և ավելի են ընդգծում ու բացահայտում պատումի դրվագների կարևորությունը:

Հեքիաթային կայուն բանաձևերին գուգահեռ՝ կարսեցի բանասացները իրենց պատումների մեջ ներմուծել են ասույթաբանական ժանրեր (առած-ասացվածք, երդում, սպառնալիք, անեծք, օրհնանք-բարեմաղթություն, դարձված և այլն), որոնց օգնությամբ ավելի են ընդգծել հեքիաթապատումի գործողությունների և հերոսների դերը, առաջ են բերել դրական և բացասական ցանկություններ և ուղղորդել դրանք:

Բանագիտության մեջ ասույթաբանական ժանրերի ձևավորման նախապիգրը կապվում է «կոլեկտիվ հուզականության» և «խմբակային սուբյեկտիվիզմի» արտահայտության հետ, որոնց հետևանքով ի հայտ են եկել բազմաբնույթ բովանդակությամբ կարճառոտ բանաձևումներ:³ Ասույթաբանական կամ բանաձևային

² Հեքիաթային ժառանգության մեջ առանձնանում է «Շահենշահ և Սալվի» հեքիաթը, որի մեջ ներառված է հերոսների մի քանի սերունդ: Ինչպես հավաստել է բանասաց-բանահավաք Եղիշե Խաչատրյանը, այս հեքիաթը բաղկացած է եղել յոթ մասից, սակայն նա այն մոռացել է և հիշողությամբ վերականգնել հետևյալ հերոսների (Արմավիրի Արզուման թագավոր, Խոսրով, Շիրին շահ, Շահեն շահ) մասին պատումները: Հերոսների ժառանգաբար հերթագայությունը և գործողությունների ընդգրկման տարածաշրջանային արեալը (Արարատյան դաշտ, Արմավիր, Մասիս) հուշում են, որ որպես հեքիաթ ներկայացված այս ստեղծագործությունն անցյալում պատմված տեղական վիպասքի մի մասն է (Կարս, «Շահենշահ և Սալվի», № 31(31), էջ 193):

³ Мелетинский Е. Возникновение и ранние формы словесного искусства, ИВЛ - История всемирной литературы, том I, Изд-во "Наука", Москва, 1983, с. 25.

Ժանրերը վիպական բանահյուսության մյուս ժանրերից տարբերվում են իրենց սեղմ ծավալով և ասելիքի համապարփակությամբ: Դարավոր փորձով հաստատագրված՝ պարզ ու հակիրճ իմաստությունների խորքում պահպանված են մեծագույն ճշմարտություններ և իրողություններ, որոնք իրենց ժանրային բազմաբնույթ դրսևորումներով (անեծք-սպառնալիք, օրհնանք-բարեմաղթություն, առած-ասացվածք, դարձված և այլն) հարստացնում են մարդու առօրյա խոսքը՝ մեծ կշիռ հաղորդելով դրան և այն դարձնելով ավելի դիպուկ ու արտահայտիչ: Վերոհիշյալ առանձնահատկություններով պայմանավորված՝ ասույթաբանական ժանրերը գործողության մեջ են դրվում պահի ու անհրաժեշտության թելադրանքով՝ ընդգծելով արտահայտված մտքի համաժամանակյա կարևորությունը, դրական ու բացասական զգացումների խտացված պոռթկումը, սեփական ճշմարտությունը դարավոր կենսափորձով ու իմաստությամբ հասու դարձնելն ու արժևորելը: Որպես հավատալիքների, սովորույթների, չգրված օրենքների, հասարակական, պատմական, կենցաղային տարբեր երևույթների խտացումներ՝ ասույթաբանական ժանրերն ամենօրյա կիրառությունից զատ մեծ նշանակություն ու դեր են ունեցել բանասացների կողմից պատմողական ժանրերի երկացանկերի ոճավորման, պատկերավորման և բարբառային բառազանձի հարստացման մեջ: Դրանք ծառայել են ոչ միայն որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ, այլև պատումն ավելի հասկանալի ու թափանցիկ տեղ հասցնելու, լսարանի ուշադրությունը կենտրոնացնելու ու գրավելու անխափան, բազում սերունդների ասացողական փորձով հաստատված միջոց: Կարսեցի բանասացներն իրենց պատումներում կիրառել են լեզվական այն միավորները, որոնք կենցաղավարել և ամենօրյա գործածություն են ունեցել ընտանիքներում, հասարակական հավաքույթներում, աշխատանքային փոխհարաբերություններում, զգացմունքների դրսևորման ոլորտում, դրական և բացասական ցանկությունների արտահայտման անհրաժեշտության պահանջի դեպքում և այլն:

Ելնելով հեքիաթապատումի ընթացքից՝ կարսեցի բանասացը դիմել է Կարսի ասույթաբանական բանահյուսության հարուստ զինանոցին և, ըստ անհրաժեշտության ու պահանջի, դրանցով հարստացրել ավանդական կայուն բանաձևերի շարքը: Դրանք հատկապես կիրառվել են հեքիաթի միջնամասում և լրացրել ու ավելի արտահայտիչ են դարձրել միջնամասային բանաձևերը: Սակայն պետք է նկատել, որ սկսվածքային և եզրափակիչ բանաձևերը նույնպես կարիք են ունեցել լրացուցիչ մեկնաբանման: Ըստ գործառույթի՝ սկսվածքային բանաձևերն անմիջապես ունկնդրին տեղափոխում են հեքիաթային ժամանակի ու տարածության մեջ և ներկայացնում ապագա գործողությունների նախապայմաններն ու դրդապատճառները: Այս պարագայում հաճախ կարևոր դեր է խաղում անեծք-բանաձևը, որի հմայական գործության հետևանքով առաջացած իրավիճակը հերոսին մղում է գործողությունների, որոնց միջոցով պետք է վերացվի անեծքի բացասական ազդեցությունը և լուծվի հեքիաթի գլխավոր խնդիրը: Ըստ այդմ Կարսի հեքիաթներում անեծքների կիրառման երկու տիպ է հանդիպում. 1) Անեծք պատճառահետևանքային շղթայով, որն ընթացքի մեջ է դրվում հեքիաթի սկզբնա-

մասում, երբեմն նաև միջնամասում: Անեծքի սույն տեսակը տրվում է որևէ մեկի (պառավ, դերվիշ) կողմից, ում վնաս է հասցվել կամ ում իրավունքները ոտնահարվել են: Անեծքին հետևում է բնական կարգի խաթարումը, ապա այն վերացնելուն կամ վերականգնելուն միտված գործողությունները: 2) Անեծք, որը կիրառվում է հեքիաթի միջնամասում, կապ չունի հեքիաթի բուն խնդրի հետ, այլ ուղղված է կռնկրետ ինչ-որ մեկին՝ որպես տվյալ պահի և գործող անձի անհատական հատկանիշների ու կարողությունների բացասական որակում, օրինակ. «—Հողը՝ գլխիս, էղել էս տասնհինգ-տասնվեց տարեկան աղջիկ, հեշ մե բանմ էնել չիտես»:⁴

Ըստ ժողովրդական պատկերացումների՝ անեծքն օժտված է հմայական զորությամբ և իրագործվելու հատկությամբ, ուստի դրա նկատմամբ զգուշավոր վերաբերմունքով պայմանավորված՝ կիրառվում է հույժ անհրաժեշտության կամ «դանակը ոսկորին հասնելու» դեպքում: Կարսի հեքիաթներից մեկում անեծքի զորության մասին հստակ գիտելիքներով առաջնորդվելով՝ գլխավոր հերոսին ընկերները զգուշացնում են զերծ մնալ անհարկի գործողություններից. «*Ընկերները կըսեն. — Գործ չունիս, էդ պատվները շատ գեշ անեցք տալ գիտեն, քեզի կանիծի:*

— Անիծում է, թող անիծի, էդոր անեցքը ընձի ի՞նչ կ'ենե, — էսպես կըսե ու նետը կը քցե:

Քցելուն պես՝ կուժը կը ծակե, ջուրը կը թափի: Պառավը էս բանը օր կը տեսնի, *քաշլամիշ կենե անեցքը, կը ճանչնա թագավորի տղին, կըսե. — Դու յավաշ, տես՝ ինչ օյին հանեմ գլուխդ, դու, իմ էս քասիբ հալով, զարկես կուծս ջարդե՞ս:*⁵ Անտեսված զգուշացումին հետևած անեծքը հետագա արկածալից ու դժվար հաղթահարելի գործողությունների նախապայմանն ու նախասկիզբն է:

Հեքիաթի ակզբնամասում սովորաբար անիծող կողմը դիմում է աստծո միջնորդությանը, որ իր բացասական ցանկությունն անմնացորդ իրականանա: Օրինակ՝ «Կըսե. — Թագավոր, դու օր մե էրկու խնձոր չտվեցիր ընձի, *աստուց կխնդրեմ, օր բաղդ էնպես չորեմ, դու էլ ընձի պես կարոտ մնաս մրգեղենից:*⁶

Անեծքը խաթարված արդարության վերականգնմանն է միտված, կամ. «Դարվիշ-սուլթանը կըսե. — Չորբան, *էս Ալլահից դիլակ կենեմ՝ քու օջիսար բոլոր [քուլլի] սատկի*, դու գաս Ստամբոլ, Մուրադ աղին գտնիս»:⁷ Փաստորեն հեքիաթի ակզբնամասում կիրառված անեծքով են պայմանավորված հեքիաթի հետագա գործողությունները: Ուստի հմայական խոսքը վերածվում է գործողության, որի հետևանքով խաթարված բնական կարգի վերականգնումն էլ հանդիսանում է հեքիաթի բուն խնդիրը՝ իր շուրջ ծավալված հմայազերծման գործողություններով:

Հեքիաթի միջնամասում օգտագործվող անեծքներն արտահայտում են օգտագործողի ապրումները և նրա բացասական ցանկությունները՝ ուղղված այս կամ այն հերոսին, ինչպես, օրինակ՝ «Կընիկը մե հատըմ մարթու գլխուն կը զարկե. — *Ա՛յ հողը քու գլխուն, դու ի՞նչ գիտես՝ ո՛ր զարթը ինձի ուրմիշ կուգա, օր դու*

⁴ Յաշիֆիդան և Չնաշխարիկ, № 3(3), Կարս, էջ 48:

⁵ Շահենշահ և Սալվի, № 31(31), Կարս, էջ 198:

⁶ Շլատ թագավորի հեքաթը կամ հազարան բիլբուլ, № 1(1), Կարս, էջ 34:

⁷ Սուլթան Մուրադի ու չորանի պատմությունը, № 77(77), Կարս, էջ 317:

ջըկե՛ս, ես էլ կախեմ իմ վըրեն»⁸, կամ «Կնիկն ասում ա.– *Սև գա վրեղ, գոթենաս*, բը մինք ընչո՞վ ապրինք»:⁹ Բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ անեծքները հիմնականում կանայք են օգտագործում: Հեքիաթների միջնամասում կան հեքիաթին բնորոշ կայուն անեծք-բանաձևեր, որոնք կիրառվում են հակոտնյա հերոսների կողմից, օրինակ՝ «Դեռ օր կը տեսնի տղին, կըսէ.– *Վա՛յ, քու սովըցնողի վիզը կտորեր*»:¹⁰ Սա անակնկալի եկած թշնամու ուշացած անեծքն է: Նմանատիպ անեծքներն ուղղված են գլխավոր հերոսի օգնականներին ու խորհրդատուներին: Սովորաբար անեծքը տրվում է ինչ-որ բան կանխարգելելու նպատակով. ուշացած անեծքը չի կարող կանխարգելել, սակայն կարող է վնասել այն անձին, ով իր խորհուրդներով կասեցրել է ենթադրյալ իրադարձությունների ընթացքը:

Անեծքներին զուգահեռ՝ Կարսի հեքիաթներին բնորոշ են նաև սպառնալիք-զգուշացումները, որոնք գործողությունները ցանկալի հուն մտցնելու նպատակ են հետապնդում: Այսինքն՝ սպառնալիքի ու զգուշացման ազդեցության տակ այն ստացողը կամա, թե ակամա հետևում է նախանշված կարգին և իրագործում է իրեն թելադրված կամ պարտադրված գործողությունը: Օրինակ՝ «...մենք Երրորդության աստվածներն ենք՝ երկնքի, ցամաքի և ծովերի: Օր կերթաս, առաջ Լուսաբերին մեր աննից կըսես, թե՛ մեզեն որիս կուզե իրան նշանած, թե օր չըսես, *Լուսաբերը հազար կտոր էղնի, մե կտորը քեզի չի հասնի*»:¹¹ Սպառնալք-զգուշացումն իր մեջ պարունակում է նաև հերոսին փորձության ենթարկելու և նրա առաքիլությունն ու մարդկային դրական հատկանիշները ստուգելու գաղտնի նպատակը, որից կախված է հերոսի հետագա ճակատագիրը:

Սպառնալիքն իր մեջ պարունակում է կոնկրետ կատարվելիք բացասական գործողության ցանկություն, որի ազդեցության տակ հակառակորդն աներկբայորեն պետք է հրաժարվի իր մտադրություններից, օրինակ՝ «– Շատ լավ,– կը կատողի Քուրդօղլին,– *յավաշ, ես էքուց էդոր թախտը ծակեմ, գլոխը անցնեմ*»:¹² Եթե անեծքներում խոսքի հմայական գործությունն իրագործողը գերբնական անձ է¹³, որի միջնորդությանը դիմում է անիծողը, ապա սպառնալիքի պարագայում որպես գործողություն կատարող հանդես է գալիս սպառնացող անձը: Որոշ դեպքերում հեքիաթներում կիրառվում է սպառնալիք-սաստում, որի դեպքում գործողություն կատարողն այն անձն է, ում այն ուղղված է, օրինակ՝ «Բերեն էդ մարդուն կապեն զը սընից, տերտերը կըսէ.– *Ձենըդ կըղռէ, անհիծված*, նարեկ բըղի կարթամ, օր խելքի գաս»:¹⁴

⁸ Լերսի կնիկը, № 56(56), Կարս, էջ 290:

⁹ Թամբալի դամաթը, № 65(65), Կարս, էջ 300:

¹⁰ Յաշիֆիդան և Չնաշխարիկ, № 3(3), Կարս, էջ 49:

¹¹ Նալ թագավորի հեքիաթը, № 21(21), Կարս, էջ 146:

¹² Մեհրի և Շեհրի, № 46(46), Կարս, էջ 277:

¹³ Հարությունյան Ս., Անեծքի և օրինանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1975, էջ 195:

¹⁴ Յա, ընչի՛, արդի մեջը ձուկ կէղնի՞, № 61(61), Կարս, էջ 295:

Հեքիաթի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներից են օրինանք-բարեմադրությունները, որոնց հիման վրա կայուն բանաձևերի հմայական ներգործությունը նպաստում է հերոսի գործողությունների զարգացմանը: Դրանք հեքիաթներում հակակշռում են անեծքներին ու սպառնալիքներին՝ ստեղծելով հոգեբանական ներգործման դրական միջավայր: Դրական ցանկությունները հաջողության գրավական են և ուղեկցում են հերոսին խնդրի իրագործման ճանապարհին. «Պատավը կըսէ. – Որդի, ես էլ չիտեմ, գնա, *աստված գործդ աջողէ*:»¹⁵

Կարսի հեքիաթներում առկա է օրինանք-բարեմադրությունների կիրառման ու գործառնության նշանակության երեք տիպ.

1) Հեքիաթապատման ընթացքում բանասացը ժամանակ առ ժամանակ օգտագործում է բարեմադրանք, որն ուղղված է ունկնդիրներին և ապահովում է հեքիաթի դրական ներգործությունը լսարանի վրա, օրինակ՝ «Առավոտը լուս կբացվի, *բարի լուսը բացվի վրներդ*, թագավորը կը կանչէ ծառաներից մեկին...»¹⁶ կամ՝ «Իրկունը կը քնին, առավոտ կը լուսանա, *բարի լուսը բացվի վրներդ*, կելնին կը տեսնին՝ էնպես մե քոջք ու սարայմ է կայնած, օր էդոր շուքը կընկնի թագավորի պալատների վրա»:¹⁷

Ակնհայտ է, որ բանասաց-լսարան կապը հեքիաթապատման ժամանակ ձևավորվում է հենց պատումի սկզբից, հաճախ չափածո սկսվածքով և պարբերաբար հեքիաթապատման ընթացքում թարմացվում է տարբեր դրական ներգործություն ունեցող բանաձևումներով, որոնք նպաստում են ունկնդիրների ուշադրությունը կենտրոնացնելուն:

2) Օրինանք-բարեմադրություններ, որ օգտագործվում են տարբեր հերոսների կողմից (թագավոր, ծնող, ծերունի, պառավ, հեքիաթային կենդանիներ) իրենց բարի կամեցողությունը, լավ բանի ցանկությունը որոշակի դրական արդյունքի ակնկալությամբ արտահայտելը: Օրինակ՝ «Թագավոր ջան, *քեզի ջանսաղութեն, աղջրկատ էլ թակ ու պրսակ գուզեն*:»¹⁸ Որով միաժամանակ առողջության և ամուսնության ապահովման գաղափարն է արծարծվում:

Այս խմբավորումը ներառում է օրինանքների և մաղթանքների ապահովության ու պահպանության բոլոր տարատեսակները՝ իրենց բազմաբնույթ դրսևորումներով: Օրինակ՝ ճանապարհ գնացող հերոսին ուղղված մաղթանքով արտահայտվում է բարեհաջող ու անփորձանք ճանապարհի գաղափարը. «... դու-շը տըղին կըսէ. – *Էրտաս բարով, բարով-խերով տեղ հասնիս*:»¹⁹ կամ՝ «Թագավորը բարի ճամպա կը մաղթէ տղին, կըսէ. – *Էրթաս բարով, ասված բարի ճամպա տա*:»²⁰ Մաղթանքին հավելված աստվածային հովանավորության գաղափարը ըստ ժողովրդական պատկերացումների՝ գործում է անխափան: Ուստի գերբնական ուժերին և աստծո պահպանությանը դիմելով՝ օրինողը որոշակի դրական արդյունք է

¹⁵ Թագավորի պգտի տղեն, № 2(2), Կարս, էջ 40:

¹⁶ Յաշիֆիդան և Չնաշխարիկ, № 3(3), Կարս, էջ 45:

¹⁷ Փիր Ահմադի հեքիաթը, № 4(4), Կարս, էջ 52:

¹⁸ Օխտ ախպոր քուրը, № 10(10), Կարս, էջ 93:

¹⁹ Նույն տեղում, էջ 93:

²⁰ Թագավորի պգտի տղեն, № 2(2), Կարս, էջ 39:

ակնկալում, օրինակ՝ «...գրնացեք, *աստված ձեզի հետ էղնի*, դուք ձեզի համար ապրեք, ինչը օր գուզեք»:²¹ կամ՝ «... կըսէ. – Գնա, որդի, *ասված հետդ էղնի*»:²²

Հաճախ մաղթանքը կարող է ուղղված լինել օրհնություն ստացող հերոսի հանգուցյալ նախնիներին՝ ընդգծելով օրհնողի հարգանքն ու երկյուղածությունը նրանց նկատմամբ և մեռածի հոգու հովանավորության ակնկալիքը: Օրինակ՝ «...կըսէ. – *Օղորմի հորդ, օր էկար ըսիր*, քեզն շատ շնորակալ եմ, օր աղջկաս փրկեցիր եղ ցավաքարից»:²³

3) Հեքիաթային օրհնանք-բանաձևերի այս խմբում ընդգրկված են այն օրհնանք-բարեմաղթությունները կամ, կարելի է ասել, այն շնորհները, որ տրվում են գլխավոր հերոսին կամ հերոսուհուն՝ ի նպաստ իրենց հետագա գործողությունների: Սովորաբար այսօրինակ օրհնանք-շնորհները տրվում են անժամկետ՝ աստծո, հրեշտակների, բախտ շնորհող ոչ երկրային ծագում ունեցող անհատների կողմից և ողջ կյանքում ուղղկցում են հերոսին: Օրինակ՝ «Էդ մարդիք (Երբորդության աստվածները - Է.Խ.) թագավորին կըսեն, օր... իրեք օրշնություն կա, կտանք քեզի, պետք կուզա: Ինչքան վռագ գործ ունենաս, ձիով կամ կառետով տեղ էրթալու էղնիս, *ձիուդ ոտ գետնին չառնէ, կառետիտ կալոսը, դժի պէս թոնելով էրթան*: Որտեղ կրակ էղնի, *ոտիդ տակ կրակը մարի*: Ճաշ էփելու կէղնիս, *դազանդ ինքն իրան ջուրը լցվի, օջախի մեջ առանց վառել փետերը վառվին*: Դե, բարի ճանքա, գնացեք»:²⁴

Հաճախ օրհնանք-շնորհները տրվում են նորածիններին կամ մանկահասակ երեխաներին՝ ապահովելով նրանց հետագա կյանքը ոչ միայն դրական լիցքերով, այլև սեփական խնդիրները լուծելու կարողությամբ, օրինակ՝ «Ըստեղ աղջկան կը օրշնէ, կըսէ. – *Քելածդ վախտը ոտիդ տակի հողը օսկի դառնա, ծիծաղաս՝ չորս թարաֆդ վարդ-մանուշակ բուսնի, լվացվածդ տեղը յոնջա ու կորնկան բուսնի, էթէ լաս՝ քարէ կարկուտ գա*: Դե, գնա, – էս կըսէ ու ըխտիարը աներևույթ կ'էղնի»:²⁵

Այս օրհնանք-բարեմաղթությունները խարսխված են ժողովրդական հավատալիքների վրա, տրվում են որոշակի հանգամանքների դեպքում՝ պահպանելով ծիսատվորության մաղթանքների բնավորությունը, որը բնորոշ է ազգային ծիսակենցաղային սովորույթներին: Իրենց բնույթով սրանք որոշակի կիրառական նշանակություն ունեն և հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքում հանգամանքների համապատասխան դասավորության պայմաններում ինքնաբերաբար և անմնացորդ իրագործվում են՝ օգնելով հերոսին հաղթահարելու տվյալ պահին հարուցված դժվարությունը կամ խնդիրը:

Քննությունը ցույց է տվել, որ Կարսի հեքիաթներում անեծք-սպառնալիքներն ու օրհնանք-բարեմաղթությունները կիրառվել են ըստ անհրաժեշտության և

²¹ Օխտ ախպոր քուրը, № 10(10), Կարս, էջ 94:

²² Թագավորի պզտի տղեն, № 2(2), Կարս, էջ 40:

²³ Շահենշահ և Սալվի, № 31(31), Կարս, էջ 198:

²⁴ Նալ թագավորի հեքիաթը, № 21(21), Կարս, էջ 147:

²⁵ Թաքավորի աղջկա հեքիաթը, № 26(26), Կարս, էջ 169:

պահանջի: Այս ժանրերը հեքիաթի համատեքստում իրականացրել են իրենց բնորոշ հատուկ գործառույթներ՝ ընդհուպ մինչև հեքիաթի գլխավոր խնդիր առաջադրելու և դրան նպաստելու դերակատարության կարողություն: Միննույն ժամանակ այս ժանրերը ծառայել են որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ, ոճավորել և պատկերավոր են դարձրել հեքիաթապատրուր:

УПОТРЕБЛЕНИЕ УГРОЗ-ПРОКЛЯТИЙ И БЛАГОСЛОВЕНИЙ-ПОЖЕЛАНИЙ В СКАЗКАХ КАРСА

___ *Резюме* ___

___ *Э. Хемчян* ___

В народном фольклоре карсского региона существенное место занимают волшебные, бытовые и животные сказки, которые представляют местные варианты сюжетов и мотивов со своеобразным стилем и сказительской традицией, характерных армянскому сказочному наследию. Эти сказки, повествуясь диалектами, субдиалектами и говорами, бытующими в регионе, своей меткостью и многозначностью включили в себе богатые экземпляры лексики и выразительных средств.

Параллельно устойчивым сказочным формулам, карские сказители ввели в свои сказы паремиологические жанры - угроза, проклятие, благословение-пожелание, с помощью которых всё больше подчёркивали роль действий и героев сказки, вызывали положительные и отрицательные эмоции.

Исследование показало, что в сказках Карса паремиологические жанры применялись по необходимости. Эти жанры осуществляли не только особую функцию, но и служили в качестве художественных выразительных средств, стилизовали и делали сказки красочными.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խեմչյան Էսթեր Հայկի - Բ.Գ.Թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության

և ազգագրության ինստիտուտ, E-mail: ekhemchyan@yandex.ru

ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՅՕԹՅԱԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ*

Հասարակական բազմաբնույթ հարաբերությունների և սոցիալ-մշակութային գործընթացների աստիճանական զարգացման որոշակի փուլում, որպես պատմական անցյալի վերարտադրման և էթնոսի կենսագործունեության պահպանման, ուսումնասիրման և հանրահռչակման ինքնատիպ միջոց դարձան հատուկ առանձնացված, վերակառուցված և/կամ նորովի ստեղծված այն տարածական համալիրները, որ մասնագիտական գրականության մեջ ստացել են «բացօթյա թանգարաններ» ընդհանուր անվանումը¹: Ժամանակակից թանգարանագետների կարծիքով, վերջիններս թանգարանների այն տեսակն են, որ ներկայացնում են շինությունների (հյուղակներ, խրճիթներ, տներ, տաճարներ, պալատական համալիրներ, մենաստաններ և այլն), որոշակի նշանակության կառույցների (կամուրջներ, ակվեդուկներ՝ ջրանցույցներ, ջրաղացներ, ձիթհաններ, հողմաղացներ, հնձաններ, աշտարակներ, դիտակետեր, ջրամբարներ և այլն) և բնակտարածքների կազմակերպման (գյուղական համալիրներ, անասնապահական կայանատեղիներ, ռազմական նշանակության կերտվածքներ, դամբարանային կառույցների տեսակներ և այլն) մի ընդհանուր խումբ, որ կոնկրետ նպատակով և նախապես մշակված պլանի համաձայն կա՛մ վերանորոգվել են, վերակառուցվել և համապատասխանեցվել բացօթյա թանգարանին ներկայացվող պահանջներին, կա՛մ էլ հավաքվել են մեկ ընդհանուր բաց տարածքում, տեղավորվել որոշակի հաջորդակնությամբ ու դարձել մշտական ցուցադրության օբյեկտ: Երբեմն դրանց անվանում են նաև «կենդանի պատմության» («living history») թանգարաններ²: Ներկայումս աշխարհում դրանց թիվն անցնում է 200-ից: Առավել մեծ քանակով բացօթյա թանգարաններ են գործում Մեծ Բրիտանիայում (Անգլիայում, Շոտլանդիայում, Հյուսիսային Իռլանդիայում և Ուելսում միասին)՝ 30, Կանադայում՝ 29, Ռուսաստանում՝ 26, Գերմանիայում՝ 21, Նիդերլանդներում (Հոլանդիայում)՝ 16, Լեհաստանում 16, Նորվեգիայում՝ 14, Սլովակիայում՝ 12, Հունգարիայում՝ 11, Ավստրալիայում՝ 10,

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Маковецкий И., Принципы организации музеев под открытым небом и их задачи, "Советская этнография", 1963, № 2; Шмелев В., Музеи под открытым небом: очерки истории возникновения и развития, Киев, 1983. Проблемы развития музеев под открытым небом в современных условиях, Иркутск, 1995. Музеи-заповедники России. Каталог. М., 1999. Hudson K., Museums of Influence, Cambridge 1987. Oxford English Dictionary, Second Edition on CD-ROM (v. 4.0), Oxford 2009. Rentzhog S., Open air museums: The history and future of a visionary idea, Stockholm and Östersund, 2007. http://www.museum.ru/rme/sci_openair.asp

² S. Magelssen, Living History Museums: Undoing History Through Performance, Scarecrow 2007.

Ճապոնիայում՝ 9 և այլուր³: Այսօր դրանց գործունեությունը համակարգում և ուղղորդում են մի քանի միջազգային կազմակերպություններ, մասնավորապես Եվրոպայի բացօթյա թանգարանների ասոցիացիան (“Association of European Open-Air Museums”, կրճատ՝ AEOM)⁴ և Կենդանի պատմության, ագարակային և երկրագործական թանգարանների ասոցիացիան (The Association for Living History, Farm and Agricultural Museums, կրճատ՝ ALHFAM)⁵:

Այս առումով առանձին և կարևոր խումբ են կազմում ազգագրության բացօթյա թանգարանները⁶: Վերջիններս թեև ձևավորվել են պատմական, հնագիտական և այլ բնույթի բացօթյա թանգարաններից համեմատաբար ուշ, սակայն կարևորագույն դեր ունեն ազգային կենցաղի ու մշակույթի՝ բնակտարածքի կազմակերպման յուրահատկությունների, ավանդույթների, տոնածիսական համակարգի, տարագի, կերակրատեսակների պահպանման, ուսումնասիրման և հանրահռչակման գործում, ինչն, իր հեկթին, նպաստում է ազգային ինքնության ձևավորմանը կամ ակտիվացմանը:

Ազգագրության բացօթյա թանգարանների առաջին օրինակները Եվրոպայում հանդես եկան արդեն XIX դ. վերջում: Այս ժամանակահատվածը մեծագույն փոփոխությունների փուլ էր Եվրոպայում: XIX դ. առաջին կեսին տարածաշրջանում ծայր առած պատերազմները, դրանց հաջորդող տնտեսական ճգնաժամերն ու գործազրկությունը մի կողմից՝ պատճառ դարձան բնակչության արտագաղթին դեպի Հյուսիսիային և Հարավային Ամերիկաներ, Կանադա և Ավստրալիա, իսկ մյուս կողմից՝ ուղղակիորեն հարվածեցին ազգաբնակչության աճին, ինչը ցայտուն երևում է ժամանակի ժողովրդագրական բնույթի ամփոփոգրերում: Մա բացասաբար անդրադարձավ նաև ազգային սովորույթների, առանձնահատկությունների պահպանման գործընթացի վրա, և ազգայինը մղվեց հասարակական հարաբերությունների հետևախորշ: Իրավիճակը մասամբ փոխվեց XIX դ. երկրորդ կեսից, երբ Արևմտյան Եվրոպայում ազգային-ազատագրական շարժումների ու հեղափոխությունների համատարած ալիքը հանգեցրեց նոր իրողությունների: Տարածաշրջանում աստիճանաբար սկսեց գերակշռել սոցիալ-քաղաքական զարգացումների էվոլյուցիոն եղանակը: Սկսեց ձևավորվել քաղաքացիական հասարակություն ինքնուրույն մտածողությամբ և իրավունքի ու կառավարման սկզբունքների որոշակի իմացությամբ: Հանդես եկան առաջին կուսակցությունները: Քաղաքական

³ https://en.wikipedia.org/wiki/List_of_open-air_and_living_museums T. Wagemakers, Netherlands Openlucht-museum. Openluchtmuseum 2000.

<http://www.visitcopenhagen.com/copenhagen/open-air-museum-gdk476683>

<http://en.natmus.dk/museums/the-open-air-museum/>, <https://en.wikipedia.org/wiki/Skansen>

⁴ <http://aeom.eu/en/>

⁵ <http://www.alhfam.org/>

⁶ A. de Jong, M. Skougaard, *Early open-air museums: traditions of museums about traditions*, “Museum”, # 175, Paris 1992, pp. 151-157.

<https://en.wikipedia.org/wiki/Rum%C5%A1%C5%A1%C4%97s>,

https://images.search.yahoo.com/search/images;_ylt=A0LEVxclMdVX9OoA6DhXNyoA;_ylu=X3oDMTEybmNmOTg0. G. Chitaia, *Museum of Ethnography - Open Air Museum*. Ministry of Culture, Monuments Protection and Sport. Retrieved on March 24, Tbilisi 2008.

կյանքում աննախադեպ աճեց արդյունաբերական բուրժուազիայի դերը, որը կարիք ուներ իր սեփականությունը պահպանող ուժեղ, կայուն պետական իշխանության: Այս առումով Բրիտանիայում ձևավորվեց պառլամենտական միապետություն և իշխանության երկկուսակցական համակարգ: Ֆրանսիայում բուրժուազիայի և դեմոկրատական ուժերի ճնշման տակ հաստատվեց հանրապետական կարգ: Գերմանիայում 1871թ. ընդունվեց սահմանադրություն, ըստ որի՝ գործադիր և մասամբ նաև օրենսդիր իշխանությունն անցնում էր կայսեր ձեռքը: Իտալիայում հաստատվեց բուրժուական միապետություն: Այսինքն՝ սոցիալ-քաղաքական գործընթացների զարգացումը հանգեցրեց ազգային-բուրժուական պետությունների ստեղծմանը՝ սահմանադրական միապետությունների և հանրապետությունների տեսքով⁷: Հին աշխարհամասի արդյունաբերականացման արդյունքում փոխվեց նաև եվրոպական հասարակության սոցիալական կառուցվածքը: Այս ամենով հանդերձ, ազգային սովորույթների և առանձնահատկությունների պահպանման գործընթացը դարձյալ մնաց հասարակական պահանջների հետնախորշում, քանի որ արագորեն արդյունաբերականացող Եվրոպայի ավելի ընդհանուր էր դառնում և՛ հասարակական պահանջների, և՛ սոցիալական հետաքրքրությունների, և՛ կենցաղավարման նորմերի առումներով: Խնդրո առարկա գործընթացները XIX դ. երկրորդ կեսին և հատկապես վերջին, մի կողմից՝ զգալիորեն կանխեցին լայնածավալ արտագաղթն ու բարելավեցին տարածաշրջանի ազգաբնակչության թվաքանակի աճի տեմպերը, սակայն մյուս կողմից Եվրոպայի տարբեր երկրների համար պարտադրեցին համընդհանուր զարգացման նոր չափանիշներ, որոնք ինքնաբերաբար տանելու էին ազգային յուրահատկությունների համահարթեցման և ազգային ինքնության աստիճանական խաթարման:

Նման գործընթացների վտանգն առաջինը գիտակցեց շվեդ ձեռնարար Արթուր Հազելիուսը, որ Ստոկհոլմի կենտրոնում՝ Դյուրգարդեն կոչվող կղզու վրա, նախաձեռնեց «Nordic Museum» թանգարանի ստեղծման աշխատանքները: Շուրջ մեկ տասնամյակ նա երկրի տարբեր շրջաններից և նույնիսկ Սկանդինավիայի տարբեր տարածքներից գնեց 150 շենքեր ու շինություններ, տեղափոխեց դրանք Դյուրգարդեն և Սկանսես կոչվող վայրում 1891թ. բացեց աշխարհի առաջին ազգագրության բացօթյա թանգարանը, որը տվյալ պահին «Nordic Museum»-ի մասն էր կազմում: Ազգային սովորույթների, կենցաղի, մշակույթի և, ընդհանրապես, ինքնության պահպանման այս բացօթյա թանգարանն այնպիսի աննախադեպ դեր ու ազդեցություն ունեցավ տարածաշրջանում, որ շատ չանցած նմանատիպ թանգարաններ սկսեցին բացվել ինչպես Եվրոպայում, այպես էլ աշխարհի տարբեր հատվածներում, և բոլորին էլ պայմանականորեն կոչեցին «սկանսենյան տիպի թանգարաններ» անվամբ⁸:

⁷ Брамин С., *История Европы*, М. 1998, с. 100-109. <http://ushistoryscene.com/article/immigrants-cities-disease/>, <http://www.zavtrasessiya.com/index.pl?act=PRODUCT&id=2247>

⁸ Скансен (под ред. Вестберг К.), Упсала, 2005., Wagemakers T., *Nederlands Openluchtmuseum*, *Nederlands Openluchtmuseum*, 2000. http://en.wikipedia.org/wiki/Open-air_museum

Այլ ընթացք ունեցավ բացօթյա թանգարանների ստեղծման գործընթացը Հայաստանում: Երբ Եվրոպայում 1891թ. բացվեց առաջին ազգագրության բացօթյա թանգարանը, հենց նույն թվականին, ճակատագրի բերումով, սկսվեցին հայ ազգաբնակչության առաջին ջարդերն Օսմանյան կայսրությունում⁹: Դրանք ուղեկցվում էին ոչ միայն մարդկանց տեղահանմամբ ու ոչնչացմամբ, այլև հայկական բնակավայրերի ավերմամբ, կամ էլ թուրք և քուրդ խուժանի կողմից դրանց բռնագրավմամբ: Այս գործընթացներն Արևմտյան Հայաստանում շարունակվեցին մինչև 1923 թ., տալով 1,5 մլն. հայության սպանդ և հազարավոր գյուղերի ու բնակավայրերի անվերադարձ կորուստ¹⁰: Եվ իզուր չէ, որ հենց այդ առիթով, XX դ. առաջին քառորդին ազգագրագետներ Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը և հայ մեծանուն Բանաստեղծ Հովհ. Թումանյանը բարձրաձայնեցին հայ ազգային արժեքների պահպանման, հայկական կենցաղի, բառ ու բանի արժևորման խնդիրների հրատապությունը¹¹: Արևմտյան Հայաստանից փախած և Երևանում ու Էջմիածնում հաստատված հայ գաղթականությունը դեռևս շարունակում էր կրել հայ ազգային ավանդույթների ու ինքնության հասկանիչները: Ցավոք, ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ խորհրդային տարիներին գործնականում չիրականացվեցին բացօթյա ազգագրության թանգարանի ստեղծման աշխատանքները: Արդյունքում ազգային ու ազգագրական (առաջին հայացքից երկրորդական թվացող) շատ կարևոր նյութական ու հոգևոր փաստացի տվյալներ և արժեքներ ժամանակի ընթացքում աստիճանաբար անհետացան:

Իհարկե, պետք է նշել, որ XX դ. 20-80-ական թթ. Հայաստանի պատմության թանգարանում, Երևան քաղաքի պատմության թանգարանում, հանրապետության տարբեր շրջանների երկրագիտական թանգարաններում բացվեցին հայ կենցաղն ու մշակույթը ներկայացնող ցուցադրություններ, 1978 թ. սկսեց գործել Հայաստանի ազգագրության պետական թանգարանը, սակայն ազգագրության բացօթյա թանգարանի ստեղծման գործընթացը մնաց այդպես էլ չիրականացված:

<http://moscow-museums.ru/muzei-pod-otkryitiyim-nebom-skansen/>

<http://en.wikipedia.org/wiki/Skansen>

http://workingmama.ru/travels/sweden/stokholm/museums/muzej_pod_otkrytyim_nebom_skansen_15779 https://nl.wikipedia.org/wiki/Louwman_Museum

⁹ Саркисян Е., Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ер. 1972. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1, Եր., 1982: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Եր., 1991:

¹⁰ Ամերիկյան Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. հայոց ցեղասպանության մասին, կազմեց Տիգրան Զաքարյան, Եր., 2002: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (1915-1918 թթ.), Օտարերկրյա պետական դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները (փաստաթղթերի ժողովածու), խմբ. Լ. Բարսեղյան, Եր., 2011, 240 էջ:

¹¹ Ծրագիր հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու, Հավելված ԱՀ, գիրք 16, Թիֆլիս, 1907: Ղաֆադարյան Գ., Հայաստանի թանգարանների պատմությունից, ԼՀԳ, 1972, № 10: Թումանյան Հ., Ազգագրական գործը մեզանում, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Եր. 1969, էջ 249:

Այդ խնդիրը դրվեց 1980-ական թթ., երբ հայ անվանի թանգարանագետ և պատմաբան Լ. Ա. Բասեդյանը գործնական աշխատանքներ ձեռնարկեց Հայաստանի ազգագրության թանգարանին կից հայ ազգագրությանը նվիրված բացօթյա թանգարան ստեղծելուն, սակայն քաղաքական գործընթացների արդյունքում այդ գաղափարը ես մնաց անավարտ:

Դեռևս 1981թ. Հայաստանի ազգագրության պետական թանգարանին հարակից 27 հա զբաղեցնող հողատարածքի վրա բացօթյա թանգարան ստեղծելու նախագիծ մշակվեց: ՀՄՍՀ Մինիստրների խորհրդի 1983թ. նոյեմբերի 2-ի որոշմամբ վերանայվող տարածքը թանգարանին տրամադրվեց բացօթյա ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարան ստեղծելու հետևից նպատակով: Նախագծի հեղինակներն անգամ այն ժամանակ դա խիստ արդիական համարելով գրել են. «Բացօթյա ազգագրության թանգարանի ստեղծումը մեծապես կնպաստի ինչպես հուշարձանների պահպանությանը, դրանց վրա հանրության ուշադրությունը բևեռելուն և հանրահոշակելուն, այնպես էլ հայ ժողովրդի մշակութային ժառանգության ուսումնասիրությանը՝ վերածվելով հայ ժողովրդի մշակութային կյանքի կենտրոնի: Այն էական ազդեցություն կունենա նաև ազգագրական ուսումնասիրությունների զարգացման վրա»¹²:

Նախատեսվում էր, որ հետագայում թանգարանը պատշաճ պետք է ներկայացնի Հայաստանի պատմաազգագրական շրջանների նյութական և հոգևոր մշակույթի ողջ համալիրը՝ հաշվի առնելով պատմական և ազգագրական առանձնահատկությունները: Բացօթյա ցուցադրությունը պետք է համալրեր թանգարանի սրահներում ներկայացված ցուցադրությունը: Ըստ այդ նախագծի՝ համալիրն առաջին փուլում պետք է ներառեր հինգ պատմաազգագրական շրջանները՝ Այրարատը, Շիրակը, Սյունիքը, Լոռին, Ջավախքը, իսկ հետագայում Տավուշը, Արցախը, Վայոց Ձորը, Գեղարքունիքը, Արագածոտնը¹³: Ըստ հայեցակարգի¹⁴ ցուցադրությունը պետք է երեք բաժին ընդգրկի: Թանգարանի հիմնական ցուցադրության նման, բացօթյա կազմակերպվող ցուցադրությունը ես պետք է սկսվեր Հայկական լեռնաշխարհի բնակչության մշակույթն ու կենցաղը ներկայացնող ցուցադրությամբ՝ ընդգրկելով հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարն ընկած ժամանակաշրջանը՝ Շենգավիթ և Ջրահովիտ բնակավայրերի վերակառուցումը մ.թ.ա. IV- III հազ., Թեյշեբաինիի ուրարտական տան (մ.թ.ա. VII դար), վաղ հայկական դարաբաժանի բնակելի տան (մ.թ.ա V-IV դդ), ըստ Քսենոֆոնի վերակառուցումները, Դվինի կամ Գառնիի միջնադարյան բնակելի տունը, թաղման տեսակ-

¹² ՀՄՍՀ Մին. Խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության նախագծային գրասենյակ, Մարդարապատի բացօթյա թանգարան, Առաջարկ, Եր., 1981թ., «Պահպանության ծառայություն ՊՈԱԿ», ԳԳ 322, Ֆ. Ն.Ն 72/166:

¹³ Միքայելյան Վ., Հայաստանի բացօթյա թանգարանը // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1988, № 3, էջ 41-50:

¹⁴ Առաջարկ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի բացօթյա ցուցադրության կազմակերպման վերաբերյալ, կազմողներ՝ Հ. Մարության, Ա. Գյուլբուրադյան (ձեռագիր):

ները, տապանաքարերը, քարավանատունը: Քարավանատունը պետք է ունենար ինչպես փոխադրամիջոցների ցուցադրման համար նախատեսված ցուցասրահի, այնպես էլ կարճաժամկետ հանգստավայրի գործառույթ: Երկրորդ մասը ներառում էր տարբեր պատմաագագրական շրջանների բնակելի տարածքների շինությունները, ինչպիսիք են տնտեսական, ամառային շինություններն ու արհեստանոցները¹⁵: Երրորդ բաժինը պետք է ներառեր Խորհրդային Հայաստանի տարբեր շրջանների մի քանի բնակելի տներ իրենց ներքնատեսքով, որոնք ինքնըստինքյան ընդգծում էին Հայաստանի պատմաագագրական տարբեր շրջանների մշակութային և քաղաքային առանձնահատկությունների համահարթեցման գործընթացը: Երեք բաժինները համարժեք չէին. տարբերվում էին նյութի և տարածքի ընդգրկվածության աստիճանով: Զգալի տեղ էր հատկացված երկրորդ բաժնին: Առաջին բաժինը պետք է հիմնավորեր մշակույթի շարունակական հաջորդականությունը: Հեղինակները նախատեսում էին ցուցադրության մեջ ներառել տնտեսական նշանակություն ունեցող շինություններ ևս, ինչպիսիք են գործող ձիթհանը, հնձանը, ջրաղացը, դարբնոցը, կամուրջները և այլն¹⁶: 1979-1988 թթ. թանգարանի աշխատակիցները գիտարշավների ժամանակ հավաքած նյութերի պատմական հավաստիությունն ապահովելու համար նկարագրել են բնակելի և տնտեսական նշանակություն ունեցող շինությունների, նյութական և հոգևոր մշակույթի տարբերի ողջ համալիրը՝ իրենց բնապատմական միջավայրում: Նախատեսվում էր այն ամբողջովին տեղափոխել՝ չխաթարելով ողջ համալիրը: Յուրաքանչյուր շրջանի տաղավարում պետք է ներկայացվեր տվյալ բնակավայրի ազգային տարազը, հնչեր բարբառը: Դարբնոցում պետք է փուքսը փչվեր, և մուրճերի ձայնը լսվեր, դագճահների վրա գորգեր գործվեին, դուրգի վրա կավամաններ պատրաստվեին ու վաճառվեին: Գյուղական տիպի ավանդական շինության վրա հիմնական շեշտադրում անելով՝ հեղինակները նախատեսել էին ներկայացնել ավանդական շինություններին բնորոշ առավել ակնառու տարրեր ունեցող քաղաքատիպ բնակավայրի շինություններ ևս:

Տարածքի անբավարար լինելու և ցուցադրության մեջ չափազանց ծավալուն ցուցանմուշներ ներկայացնելուց խուսափելու համար ծրագրի հեղինակները առաջարկեցին քաղաքի համայնապատկերը վերականգնել՝ ցուցադրելով մանրակերտեր և բուսաֆորիաներ:

«Հետագայում ցուցադրության կենտրոնական հրապարակը կարող էր մշակութային մասսայական միջոցառումներ անցկացնելու վայր դառնալ: Այցելուն էլ, հաղթահարելով թանգարանային պայմանականությունը, անմիջական մասնակցություն կունենար յուրօրինակ թատերական ներկայացմանը», - գրում էին նախագծի հեղինակները: Նախատեսվում էր նաև արհեստական լճի մոտ հան-

¹⁵ «Պահպանության ծառայություն ՊՈԱԿ», ԳԳ 322, ՆՆ 72/171.

¹⁶ Միքայելյան Վ., Հայաստանի բացօթյա թանգարանը, Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1988, № 3, էջ 41-50: «Պահպանության ծառայություն ՊՈԱԿ», ԳԳ 322, ՆՆ 72/168.

գատի գոտի ստեղծել¹⁷: Պահպանված է ավելի քան 50 նախագիծ¹⁸, որոնցում ներառված են բնակելի և տնտեսական նշանակության շինությունների տեղափոխման, վերակառուցման նախագծեր: Ցավոք, այդ նախագիծն այդպես էլ չիրականացվեց:

Վերջին տարիներին մի քանի անհաջող փորձ կատարվեց իրականացնել նմանատիպ նախագծեր, ինչպես, օրինակ, Երևանի Ձորաղբյուր թաղամասի, Կուսայրի պատմամշակութային արգելոցի, «Դիլիջան» ժողովրդական ճարտարապետության արգելոց-թանգարանի շենքերի, շինությունների վերականգնումը և որպես բացօթյա թանգարանի գործարկումը: Հայաստանում բացօթյա, էկո թանգարանների ստեղծումը հնարավոր է բնական լուրջ տարածքների, համայնքների պահպանվածության շնորհիվ (հին ու նոր Խնձորեսկի տարածքների հարակից լինելը, Յուվա գյուղում կավագործության համեմատաբար լավ պահպանվածությունը և այլն): Սա մշակութային, կրթական և բիզնես գործունեությունների միջև ողջամիտ հավասարակշռություն պահելու հնարավորություն է:

Անկախության տարիներին աճել է ժողովրդի հետաքրքրությունն իր պատմական անցյալի, ժողովրդական ճարտարապետության, մշակույթի և կենցաղի նկատմամբ: Այժմ ամենուրեք ինտենսիվ աշխատանքներ են կատարվում ազգային ավանդույթներն ու ծեսերը վերականգնելու ուղղությամբ:

Հայաստանի մշակութային ժառանգության տարածման և հանրահռչակման գործում, մեր կարծիքով, կարևոր կլինի XX դարի 80-ական թվականներից նախատեսված և չիրականացված ազգագրության բացօթյա թանգարանի վերաստեղծման ծրագիրը՝ նոր իրողություններին ու արդի պահանջներին և թանգարանագիտության ժամանակակից հիմնախնդիրներին համապատասխան: Այս փուլում դա կարող է նաև տուրիզմի նշանակալի խթան հանդիսանալ¹⁹:

Հայաստանի բացօթյա թանգարանի ստեղծման գաղափարն այսօր էլ հրատապ է ու արդիական: Նման թանգարանի ստեղծումը հնարավորություն կընձեռնի կոնկրետ տարածքում մեկտեղելու Պատմական Հայաստանի կենտրոնական (Այրարատ) արևմտյան (Օռփք, Աղձնիք, Բարձր Հայք), հարավային (Տարոն, Վանի ավազան, Կորձայք), արևելյան (Արցախ, Ուտիք, Սյունիք, Պարսկահայք) և հյուսիսային (Տայք, Գուգարք, Տավուշ) շրջանների ավանդական կառույցները, նյութական մշակույթի առավել բնորոշ տարրերը, բացահայտել դրանց ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնելու

¹⁷ Առաջարկ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի բացօթյա ցուցադրության կազմակերպման վերաբերյալ, կազմողներ՝ Ա. Գյուլբուրադյան, Հ. Մարության (ձեռագիր), էջ 8.

¹⁸ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ», ԳԳ 322, ՆՆ 72/123–173, 176–178.

¹⁹ Գևորգյան Լ., Հայաստանում ազգագրության բացօթյա թանգարան ստեղծելու խնդրի շուրջ, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը (միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Եր., 2012, էջ 121–123: Геворгян Л. Этнографические музеи в контексте пропаганды национальной культуры, Наследие и современность. Информационный сборник Российского НИИ культурного и природного наследия им. Д. С. Лихачева N 20, М., 2013, с. 140–150.

այդ ամենի կարևոր դերը համընդհանուր հայ մշակույթի ձևավորման ու տարածման գործում: Նման թանգարանի ստեղծման խնդիրը տակավին մնում է հրատապ ու առաջնային: Շատ առումներով այն իրական հնարավորություն կստեղծի նաև զսպելու ու սահմանափակելու մեր կանխակալ հարևանների նկրտումները հայ ազգային նյութական և ոչ նյութական մշակույթի բազմաթիվ դրսևորումների անհարկի յուրացման հարցում: Դա ևս ազգային արժեքների ու ինքնության պահպանման կարևոր միջոց է²⁰:

Ներկայումս ազգագրության բացօթյա թանգարանները մեծ թիվ են կազմում ամբողջ աշխարհում: Առավել հայտնիներից են Նորվեգիայի՝ «Մայիյոուգեն»-ը, Սերբիայի «Դրենենգրադ»-ը, Ֆրանսիայի «Մեծ Լանդերի Էկոթանգարան»-ը, Գերմանիայի «Հեսսենպարկ»-ը, Դանիայի՝ «Կոպենհագենի բացօթյա թանգարան»-ը, Նիդերլանդների՝ «Ջեյդերգեն»-ն, Անդորրայի՝ «Կասա Քրիստո»-ն, Լիտվայի՝ «Ռում-շիշկեսի ազգային կենցաղի թանգարան»-ը, Էստոնիայի՝ «Ռոկկա-ալ-Մարե»-ն, Ռումինիայի՝ «Բուխարեստի գյուղական թանգարան»-ը, Ռուսաստանի Դաշնության՝ «Սուզդալի գյուղական ճարտարապետության և գյուղացիական կենցաղի թանգարան»-ը, Ուկրաինայի «Պիրոգովի էթնոպարկ»-ը, Վրաստանի՝ «Թբիլիսիի ազգագրության թանգարան»-ը, Տանզանիայի՝ «Մակումբուշո գյուղ»-ը և այլն²¹:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРИЧИНЫ ФОРМИРОВАНИЯ ЭТНОГРАФИЧЕСКИХ МУЗЕЕВ ПОД ОТКРЫТЫМ НЕБОМ

____ *Резюме* ____

____ *Л.Геворгян* ____

На определенной стадии развития социокультурных процессов и общественных отношений как средство реконструкции исторического прошлого и сохранения, изучения и пропаганды жизнедеятельности этноса стали отдельные,

²⁰ Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության համակարգում. տեսական հարցադրումներ, Եր., 2006:

²¹ Hegard T., Hans Aall - mannen, visjonen og verket, Oslo 1994. Hauglid A., Ole Maihaugen: The Sandvig Collections guide, Lillehammer 1994. <https://en.wikipedia.org/wiki/Drvengrad>, Bain C., Booth M., Parnell F., Lonely Planet, Denmark 5, 2008. p. 179. <https://en.wikipedia.org/wiki/Hessenpark>, M. Minshall, Guilt Edged, Bachman & Turner, 1975. https://en.wikipedia.org/wiki/Zuiderzee_Museum, S. J. Kelley, Wood structures: a global forum on the treatment, conservation, and repair of cultural heritage. ASTM International. Tallinn 2000, p. 96. G. Chitaia Museum of Ethnography - Open Air Museum, Ministry of Culture, Monuments Protection and Sport, Tbilisi 2008. https://en.wikipedia.org/wiki/Rum%C5%A1%C5%A1k%C4%97s#Open_air_ethnographic_museum https://en.wikipedia.org/wiki/Dimitrie_Gusti_National_Village_Museum <http://kiev-assist.com/pirogovo-open-air-museum> http://lubovbezusl.ru/publ/istorija/muzei_vladimirskoj_oblasti/m/51-1-0-1081 <https://www.goshen.edu/tanzania/2011/01/21/makumbusho-cultural-centre-village-museum/>

реконструированные и воспроизведенные территориальные комплексы, которые в специализированной литературе получили название «музеев под открытым небом».

Первые музеи под открытым небом сформировались в Европе уже в конце XIX века.

Несмотря на то, что в 20-30-ых гг. прошлого века в Армении были созданы музеи различного профиля, вопрос о создании этнографического музея под открытым небом не был решен. Только в начале 1980-ых гг. видный армянский историк, музеевед Л. А. Барсегян начал работы по проектированию близ музея этнографии Армении, на территории комплекса Сардарapatской битвы, этнографического музея под открытым небом. Однако из-за политических перемен этот проект также не был осуществлен.

Проблема создания в Армении этнографического музея под открытым небом и сегодня актуальна. Во многом, это реальная возможность обуздать и ограничить неоправданные амбиции наших предвзятых соседей, попытки присвоения армянских национальных ценностей.

Создание такого музея – действенное средство для сохранения национальной культуры и активизации идентичности.

Տեղեկություններ հեղինակի մասին

Գևորգյան Լիանա Պողեմի – ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արժեքների թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն, E-mail:gip@mail.ru

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇՈՒՂ ԽԱՅԱԹԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Հայ աշուղական դպրոցներն ու կենտրոններն ստեղծվել ու գործել են պատմամշակութային այնպիսի միջավայրում, որտեղ պահանջված է եղել ժողովրդապրոֆեսիոնալ բանաստեղծ-երաժշտի արվեստն ու ստեղծագործությունը: Այս արվեստի կամ արհեստի բազմաբովանդակ էությունը աշուղներին հնարավորություն է տվել հասարակական բոլոր շերտերի մեջ առաջացնելու հետաքրքրություն՝ ժամանակակից մշակութային, քաղաքական, սոցիալական, ժամանցային բնույթի երևույթների, խնդիրների ու հարցերի շուրջ:

Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը նույնպես առաջացավ ու զարգացավ պատմամշակութային գործընթացների անմիջական ազդեցությամբ և իր հասարակական պահանջվածությամբ իրագործեց կարևոր մի առաքելություն. այն է՝ հայ ազգային մտածողության նոր որակների յուրացումը աշուղական արվեստի բոլոր ոլորտներում՝ գաղափարական, քարոզչական, երաժշտաբանաստեղծական: Ի՞նչ նախադրյալներ կային հայ նոր աշուղական կենտրոն ձևավորելու և զարգացնելու համար: Հայ աշուղագիտության մեջ վաղուց արժևորվել են այն կարևոր գործոնները, որոնք հիմք ծառայեցին աշուղական նոր ավանդույթներ կյանքի կոչելու համար: Այդ գործոններից մեկը, սակայն, ըստ արժանվույն չի գնահատվել ու արժևորվել: Խոսքը *Ալեքսանդրապոլի աշուղական համքարության* մասին է, որի ձևավորման ժամանակաշրջանը հստակված չէ, համարվում է, որ 19-րդ դարի վերջն է:

Այս հոդվածում անդրադառնալու ենք կարևոր մի աղբյուրի, որը լույս է սփռում ոչ միայն Ալեքսանդրապոլի աշուղական համքարության ձևավորման ժամանակաշրջանի, այլև այդ համքարության կառուցվածքի ու կանոնադրության, ինչպես նաև գործունեության կարևոր մանրամասների վրա:

Նկատի ունենք աշուղ Խայաթի «Հիշողություններ աշուղների մասին» ձեռագիր հուշագրությունը,¹ որը բացառիկ արժեքավոր աղբյուրագիտական նշանակություն ունի: Աշուղ Խայաթը² համբավվոր աշուղ Ջահրիի որդին էր, որը «հիմնականում զբաղվում էր դերձակությամբ, սակայն ազատ ժամանակ այցելում էր սրճարաններ, մասնակցում աշուղների երգ ու նվագին, հաճախ էլ իր հոր խմբի հետ մեկնում էր Շիրակի գյուղերը, երգում հողի աշխատավորների համար:.../ Խայաթը հանդես եկավ որպես սիրո երգիչ, նրա սիրո երգերը հաջողությամբ տա-

¹ Խայաթ Ջահրիյան, *Հիշողություններ աշուղների մասին, 1930, անտիպ ձեռագիր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, FF 1, 7829:*

² Աշուղ Խայաթ՝ Սուքիաս Կարապետի Ջահրիյան /1850-1930/, *Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի ներկայացուցիչ: Աշուղական արվեստ սովորել է հորից՝ աշուղ Ջահրիից: Երգերն ամփոփված են «Անձայն կիթառ» ժողովածուում /1889/: Զիվանու և Ջամալու հետ թարգմանել ու տպագրել է «Քյոռ Օղլի» ասքի ճյուղերից մեկը:*

րածվում էին երիտասարդության մեջ, երգվում խնջույքների ժամանակ: Հետագայում հորինել է նաև հայրենասիրական, խրատական ու սոցիալական բնույթի երգեր»:³

Ձեռագիր հուշագրությունը Ալեքսանդրապոլի աշուղների համքարության 1860-ական թթ. գործունեության մասին է: Հեղինակը ձգտել է հնարավորինս մանրամասն նկարագրել և միևնույն ժամանակ արժեքավորել «ստեղծագործական այս միության» ներքին համակարգն ու գործելակերպը: Լինելով ընդամենը 10 տարեկան⁴ նա լավատեղյակ է եղել աշուղների գործունեությանը, որովհետև հենց այդ ժամանակ համքարության արհեստագետը կամ վարպետաց վարպետը եղել է նրա հայրը՝ հռչակավոր աշուղ Զահրին: Նա՝ Կարապետ Հովհաննեսի Կարապետյանը /1818-1888/ ծնվել է Վանի շրջանի Կեմ գյուղում, աշուղական արվեստի վարպետության է հասել Կ.Պոլսում:⁵ «Վարպետ աշուղները, - գրում է Գ.Լևոնյանը, - տեսնելով Կարապետի սուր և ազդու ձայնը, նրան *Ջահրի* մականունն են տալիս: Զահրին մինչև իւր 30 տարեկան դառնալը մնում է Կ.Պոլսում: Բաւականին համակրութիւն է վայելում թե՛ հայ, թե՛ տաճիկ հասարակ ժողովրդից: Թուրք բեկերը, աշուղները նախանձում էին, որ այդպիսի մի շնորհով մարդ քրիստոնէայ է եղել, ուստի նրանք վճռում են, որ այդ «գեաւորին» իսլամական կրօնն ընդունել տան: Զահրին իմանալով այդ, թողնում է Կ.Պոլիսը և փախչում է Ռուսաստան: Նրա վերջին կայարանը լինում է Ալեքսանդրապոլը»:⁶ Այստեղ էլ համբավավոր աշուղը ծավալում է իր գործունեությունը և 1860թ. հանդիսանում է աշուղների համքարության վարպետաց վարպետ:

Այսպիսով, այս հուշագրության շնորհիվ մեր ձեռքի տակ ունենք հայ աշուղական համքարության հավաստի նկարագրություն՝ ներքին կառուցվածքով ու կանոնակարգով: Անդրադառնանք հուշերի առավել հանգուցային կետերին:

«Շատ առաջվանից,⁷ տիրող կառավարության թույլտվությամբ, պարտադիր է եղել, որ ամեն մի համքար⁸ իր համար առանձին ուստապաշի պետք է ունենա, որովհետև ուստապաշին իր համքարի կառավարիչն է, առանց որի ոչ մի համքար հաստատ հիմքի վրա չի կարող մնալ, վաղ թե ուշ նա անպայման կքայքայվի»:⁹

Առաջին իսկ տողերից հեղինակը հստակ փաստում է այն իրողությունը, որ Ալեքսանդրապոլում աշուղների համքարությունը լիովին համապատասխանել է շուրջ 100-ի հասնող մյուս արհեստների կանոնակարգին՝ անդամներից յուրա-

³ Շիրակի հայ աշուղները, Եր., 1986, էջ 14:

⁴ Բնչից հետևում է, որ աշուղը ծնվել է 1850թ., մինչդեռ որոշ աղբյուրներում նշվում է 1954թ., ինչպես օրինակ՝ Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 5, Եր., 1979, էջ 10:

⁵ Լևոնյան Գ., Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1892, էջ 39-40:

⁶ Նույնը:

⁷ Այստեղ և այսուհետ հողվածում մեջբերում ենք հիշյալ ձեռագրի բնագիր տեքստը՝ աննշան խմբագրումներով:

⁸ Համքար /պարսկերեն՝ գործակից/ բառը Խայաթի այս ձեռագրում հանդիպում է *համքար*, *հեմքար*, *հեմքեր* ձևերով:

⁹ Խայաթ Զահրիյան, Հիշողություններ..., էջ 7829:

քանցյուրի գործունեության փոխկապակցվածությամբ. «Ամեն մի համքյար իր մեջ եղած խելահաս, բանիմաց մարդկանցից մեկին որոշում և ընտրում էր ուստապաշի, հետո ընտրում էին թիկնապահ /օգնական/, մեկ իկիտպաշի /ցրիչ/ և մի գանձապահ: Հարկավոր դեպքում այդ թիկնապահները պետք է ուստապաշու մոտ լինեին որպես խորհրդատու:

Օրենքի համաձայն՝ պայմանը գրում էին երեք տարի ժամանակով: Գործակից բոլոր վարպետները, այսինքն՝ հեմքերը պայմանի տակ ստորագրում էին ու ներկայացնում էին կառավարությանը վավերացնելու նրա հեմքերական լիազորությունը»:¹⁰

Համքարության յուրաքանչյուր անդամ վճարել է ամսական մեկ ռուբլի՝ ամենատարբեր կարիքներ հոգալու, միմյանց օգնելու նպատակով:

Համեմատելով մյուս համքարությունների հետ՝ նշվում է, որ աշուղների թիվն այնքան էլ մեծ չի եղել, քանի որ աշուղական արվեստը շատ բարդ է եղել և դրա հետ մեկտեղ չի ապահովել մեծ եկամտաբերություն: Հաճախ իբրև աշակերտներ աշուղներն ընտրել են նույնիսկ կույր պատանիների, որոնցից շատերը հետագայում մեծ անուն ու համբավ են վաստակել: Աշակերտը վարպետ աշուղի մոտ սովորել է առնվազն հինգ տարի: Աշակերտի տարիքը պետք է լիներ 12 տարեկանից ոչ պակաս և երկու տարի սովորելուց, հատկապես երգելու և նվագելու հմտություններ ձեռք բերելուց հետո վարպետը նրան կցում էր որևէ երիտասարդ աշուղի՝ միասին հասարակական վայրերում ելույթ ունենալու համար: Անշուշտ, աշխատած հասույթը տրվում էր վարպետին՝ մինչև հինգ տարին լրանալը:

Յուրահատուկ մի կարգով էլ աշակերտը արժանացել է «ինքնուրույն կյանքի ուղեգրի»՝ իր վարպետի հավաստմամբ ստանալով համքարության վարպետաց վարպետի *օրհնությունը*. «Այնուհետև վարպետը, իրենց օրենքի համաձայն, ուստապաշուն կհայտներ իր աշակերտին ուստա օրհնելու մասին: Հետևյալ օրը ինքը՝ վարպետը, իր ծախսով փուռը չանաղ կուտար՝ լավ ճաշ կպատրաստեր: Թե՛ ուստապաշուն, թե՛ նրա թիկնապահներին և ուրիշ մի քանի վարպետների հրավիրում էր իր աշակերտին ուստա օրհնելու ճաշկերույթին»:¹¹ Ավելին, վարպետ աշուղը իր նոր կյանք մտած աշակերտին նվիրում էր նվագարան (քամանչա կամ սազ):

Նրա ինքնուրույն գործունեությունը լիարժեքորեն ապահովելու նպատակով հենց այդ սրբազան հավաքույթին էլ որոշվել է նոր աշուղի *անունը*: Հավաքված մեծանուն ու հեղինակավոր դեմքերից յուրաքանչյուրը թղթիկների վրա գրել է իր կողմից նախընտրելի մի անուն և վիճակահանության միջոցով նորընծա աշուղը «գտել է» իր մականունը: Օրհնելով նրան՝ ներկաները օրհնաբանություններ են ձոնել նաև հայ աշուղների սուրբ (կամ *փիլի*) Կարապետին՝ Հովհաննես Մկրտիչին:

¹⁰ Խայրթ Զահրիյան, Հիշողություններ..., էջ 7826:

¹¹ Նույն տեղում, էջ 7831:

Ըստ որոշ աղբյուրների՝ հայ աշուղները որպես իրենց արհեստի նախահայր և հովանավոր ընդունել են Դավիթ մարգարեին,¹² որին պատկերել են նաև համաքարության դրոշին: Մակայն աշուղ Խայաթը հավաստում է սուրբ Կարապետի մասին՝ նրան անվանելով *չենկի սուլթան*. «զանազան օրհնաբանություններով օրհնում էին նաև իրենց փիր ճանաչված չենկի (չենկի՝ պարսկերեն նշանակում է *զուսան, երգեցիկ, նվագաձու*)¹³ սուլթան սուրբ Կարապետի անունով, ուրեմն աշուղների փիրը եղել է չենկի սուլթան սուրբ Կարապետը»:¹⁴

Հայ աշուղների սուրբ հովանավորների ընտրության ավանդույթը քննության առանձին նյութ է, այստեղ ակնհայտ է այն, որ ալեքսանդրապոլյան համաքարությունը զարգացրել է ուրույն ավանդակարգ: Վերջինս խարսխվել է քրիստոնեական ծիսա-կրոնական հիմքի վրա, մասնավորապես՝ Վարդավառի տոնին Մշո սուրբ Կարապետ եկեղեցի ուխտագնացություն կատարելու խորհրդով:

Հայ ազգագրության մեջ այս ուխտը բացառիկ գնահատական ունի իր մեծ ժողովրդականության, մուրազատվության, նոր կյանքի օրհնության ու բարեկեցության խորհուրդներով: Այս համատեքստին ներդաշնակորեն համադրվում է Ալեքսանդրապոլի աշուղների սուրբ-հովանավորի ոչ միայն ընտրությունը, այլև ծիսական բովանդակությունը: «Կրոնասեր էին նույնպես և մեր աշուղները, - գրում է Խայաթը, - հենց այս էր պատճառը, որ ամեն տարի Վարդավառի տոնին շատերը սուրբ Կարապետ էին գնում իրանց մուրազը առնելու»: Եվ ահա այս ուխտի ամենասրբազան արարողություններից մեկի նկարագրությունը Խայաթի հուշագրության ամենահետաքրքիր ու բացառիկ արժեքավոր դրվագներից մեկն է. «Եվ այսպես մի սովորություն կար նրանց մեջ. գնացողները իրանց սագերը կամ քեմենչաները դնում էին սուրբ Կարապետի գերեզմանի վրա և իրանք գիշերը կողքը պառկում էին ու քնում, որպեսզի իրենց փիրը՝ սուրբ Կարապետը իրանց մուրազը տա, իսկ առավոտյան վեր էին կենում ու միմյանց պատմում էին իրանց տեսած երազները»:¹⁵

Երազներն ունեին շատ խորհրդանշական բովանդակություն. ծարաված աշուղին մոտենում է սուրբ Կարապետը և նրան ջուր է տալիս՝ «առա բաժակը իստակ խմեցի, դարտակ բաժակը տվի իրան՝ գնաց»:¹⁶ Մեկ ուրիշին էլ սուրբը սագ նվագել է սովորեցրել, երրորդին էլ սուրբը տվել է թարմ թխած բոքոն: Արքետիպային բոլոր տարրերը այդ երազներին մեծ խորհուրդ են հաղորդում ու սկսնակ աշուղներին դեպի մեծ ճանապարհ ուղղորդում:

Լայնորեն հայտնի է, որ աշուղական արվեստում կարևորագույն դեր են կատարել *մրցույթները*, որոնք բարդ փորձություն են եղել ցանկացած վարպետ աշուղի համար և անչափ սիրված՝ ժողովրդի կողմից: Այդ մասին են վկայում նաև

¹² Տե՛ս Պիկիյան Հ., *Աշուղը պոետ, երաժիշտ և ծիսաառասպելական հերոս, Երաժշտությունը հայոց ավանդական և առտոնին տոնածիսական կյանքում*, Եր., 2012, էջ 205:

¹³ Ըստ Հ. Պիկիյանի *չենկի* բառը համապատասխանում է նաև *չոնգուր* նվագարանին: Տե՛ս Պիկիյան Հ., նշվ. աշխ., էջ 205:

¹⁴ Խայաթ Զահրիյան, *Հիշողություններ...*, էջ 7833:

¹⁵ Նույն տեղում, էջ 7840-7841:

¹⁶ Նույն տեղում, էջ 7841:

աշուղ Խայաթի հուշերը: Մակայն իր տված բնութագրի մեջ աշուղը բացահայտում է այդ մրցույթների հասարակական հետաքրքրության կարևոր բաղադրիչը. աշուղները ժողովրդին են ներկայացրել ոչ միայն իրենց բարձր պոեզիան, երգաստեղծությունն ու նվագը, այլև զվարճացրել, ուրախացրել ու դրական հույզեր են պարգևել լսարանին. «Նրանք մրցման ժամանակ շատ հետաքրքիր ու կատակերգական բառեր էին գործածում՝ ժողովրդին ծիծաղեցնելու համար: Մանավանդ, երբ աշուղներից մեկը հաղթող կհանդիսանար, իսկ մյուսը՝ պարտվող, ժողովրդին խոսակցության թեմա էր դառնում: Նույնիսկ փողոցներում մարդիկ իրար հանդիպելիս մեկը մյուսին ասում էր. «Գիտե՞ք ինչ է եղել, թեքելիումի /բանակցության/ ժամանակ սանթուր չալող Ղայաթին աշուղ Մելիլին կապել է, սազն էլ ձեռքից առել է, այսինքն՝ հաղթանակը տարել է»»:¹⁷

Արժեքավոր են նաև դիտարկումները աշուղական ավանդական եղանակների օգտագործման մասին: Աշուղի ստեղծագործության մեջ առաջնային համարվող բանաստեղծական տեքստն ու տաղաչափությունը հնարավորություն են տվել դրանք համարժեքորեն եղանակավորելու: Խայաթը իր ասելիքը հստակեցնում է դոշմայի նկարագրության մեջ: Ավելին, նա նշում է, որ 11 վանկից բաղկացած այս ոտանավորի եղանակները մի քանիսը կարող էին լինել, ինչպես օրինակ՝ Քեսիկ, Քեսիկ Քերեմի, շեքի, դալայչի, կիրյանի: «Այս եղանակները երգելիս, - հստակեցնում է նա, - դոշմա կոչված ոտանավորներն էին կիրառում»:¹⁸

Փաստն այն է, որ վարպետ աշուղը ազատ է եղել երաժշտական բաղադրիչի ընտրության մեջ՝ ստեղծագործության կամ ելույթի համապատասխան պահի ընտրել է իր նախընտրած եղանակը:

Այս թեման առիթ է դարձել, որպեսզի Խայաթը անդրադառնա նաև աշուղների փոխհարաբերություններին ինչպես համքարության ներսում, այնպես էլ այդ շրջանակից դուրս: Միմյանց անգգուշորեն կամ միտումնավոր վիրավորելու, նվաստացնելու կամ էլ զարտուղի ճանապարհներով հաղթանակի հասնելու դեպքում վարպետաց վարպետը զանցառուին պատժել է սահմանված տուգանքով /մինչև 25 ռուբլի/, այնուհետև վերականգնել է տուժողի հեղինակությունը:

Դրսից եկած աշուղների¹⁹ հետ հարաբերությունները նույնպես հստակ կանոնակարգված է եղել. դրսեկ աշուղը ներկայանում էր վարպետաց վարպետին, որը նրան կցում էր որևէ խմբի, և նա հանդես էր գալիս քաղաքում. «Այդ օտարականը հեմքերի որոշմամբ ամսական 10 մանեթ վճարելու էր գանձանակի փող»:²⁰ Այդ պատճառով «տեղական աշուղները միշտ հարգանքով էին վերաբերվում օտարականների հետ»:²¹

Մրանք վկայություններ են այն մասին, թե ինչպիսի բարձր բարոյական հիմքերի վրա էին դրված համքարություն կազմած աշուղների հարաբերություն-

¹⁷ Խայաթ Ջահրիյան, Հիշողություններ..., էջ 7835:

¹⁸ Նույն տեղում, էջ 7844:

¹⁹ Խայաթը տարբերում է թափառաշրջիկ և նստակյաց աշուղներին:

²⁰ Խայաթ Ջահրիյան, Հիշողություններ..., 7839:

²¹ Նույնը:

ները: Ավելին, այդ հարաբերությունները տարածվում ու նպաստում էին քաղաքի ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտի զարգացմանը՝ կատարելով յուրօրինակ արգելաթափի ու չափանմուշային վարքագիծ թելադրողի գործառնություններ: Խայաթը հիշատակում է այն մասին, որ աշուղները կանխարգելիչ գործողություններ են ձեռնարկել քաղաքում պատուհաս դարձած թաղային կոիվները մեղմելու և քաղաքային կյանքից արմատախիլ անելու ուղղությամբ: Աշուղն իր բարձր հեղինակությամբ կարողացել է դարձի բերել հասարակության մեջ իր տեղը չգտած, վարքի շեղումներ հանդես բերած քաղաքացուն:

Իրենց բոլոր գործառնություններին փայլուն տիրապետող վարպետ աշուղներն անգամ, ըստ Խայաթի, ապրել են համեստ ու չափավոր կյանքով: Աշուղական արվեստը չի ապահովել մեծ եկամուտներ, ինչպես ուրիշ շատ արհեստներ: Սակայն ավելի գործուն են եղել բարոյական բարձր պահանջներն ու հասարակությանը օրինակ ծառայելու ներքին մղումները, ինչը ալեքսանդրապոլցի աշուղներին վերածել է քաղաքային մտավոր դասի ազնվագույն ներկայացուցիչների, ավելին՝ աշուղ Խայաթի բնորոշմամբ. «աշուղը համոզված է, որ իր հոգեբույս բանահյուսություններով կարող է իր անունը անմահացնել աշխարհում»:²²

Մեր ձեռքի տակ է գեղանկարիչ Գևորգ Բրուսյանի «Աշուղական սրճարան Ալեքսանդրապոլում» գծանկարը, որտեղ հստակ երևում է աշուղների տեղն ու դիրքը սրճարանում: Այն խոսում է վկայում է նաև նրանց խոսքի ու գործունեության բարձր հեղինակության ու արժեքի մասին:

Ամփոփելով աշուղ Խայաթի հուշերը՝ հավելենք, որ այստեղ հպանցիկ անդրադարձներ կան նաև աշուղական տաղաչափության, նվագարանների, որոշ աշուղների կյանքի նշանավոր դրվագների մասին: Դրանց անդրադառնալու ենք համեմատական քննության մեջ՝ մեր հաջորդ հրապարակումներում: Ի մի բերելով արդեն ասվածը՝ կարող ենք գալ հետևյալ դրույթի հաստատմանը. եթե ունենք հավաստի վկայություններ 1860-ական թթ. Ալեքսանդրապոլի աշուղական համքարության լիարժեք գործունեության մասին, ապա դրա ձևավորման նախադրյալները պետք է փնտրել ոչ թե աշուղների աստիճանական համախմբման ու նոր համքարության ձևավորման գործընթացում, այլ արդեն կայացած ավանդույթներ ունեցող համքարության նոր՝ ալեքսանդրապոլյան միջավայրում վերակառուցման ու նորովի զարգացման մեջ: Նկատի ունենք Կարսի աշուղական համքարությունը, որը կարող էր տեղափոխվել Ալեքսանդրապոլ, ինչպես քաղաքային արհեստների մյուս միավորումները:

Ինչպես իրավացիորեն նկատել է Գ.Աղանյանը. «Ձևավորվելով արևմտահայ արհեստավորաատնարական խոշոր կենտրոններից սերված գաղթականության հիմքի վրա՝ Ալեքսանդրապոլը ժառանգեց դեռևս միջնադարից եկող այն բոլոր համքարային ավանդույթները, որոնք հատուկ էին Կարինին, Կարսին եւ Բայազետին: Սրանից էլ բխում էր այն հասարակական հարաբերությունների և

²² Խայաթ Չաիրիյան, Հիշողություններ..., 7867:

հասարակական կառույցների բնույթը, որը հատուկ էր արևմտահայ դասական քաղաքային համայնքին»:²³

Այսպիսով՝ Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը Կարսի աշուղական ավանդույթների անմիջական ժառանգորդն ու զարգացնողն է:



Գ. Բրուտյան, Աշուղական սրճարան Ալեքսանդրապոլում

ЦЕХ АШУГОВ АЛЕКСАНДРАПОЛЯ В ВОСПОМИНАНИЯХ АШУГА ХАЯТА

___ Резюме ___

___ А. Арутюнян ___

В армянском ашуговедении центр ашугов Александрополя рассматривается как постепенно сформированный и системно преобразованный цех ремесленников. Но памятные записки ашуга Хаята (1850-1930) свидетельствуют о том, что уже в начале 1860-х гг. в Александрополе функционировал цех ашугов. Учитывая тот факт, что даже в этих неблагоприятных условиях многие ремесленнические и торговые традиции по-новому развивались в Александрополе, можем предположить, что и цех ашугов Карса уже в 1850-е гг. полноправно действовал в Александрополе и к 1880-е гг. развивался как новая школа армянских ашугов.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հարությունյան Հասմիկ Հայկի – արվ.գիտ. թեկն., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, E-mail: hasmik.har@mail.ru

²³ Աղանյան Գ., *Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIXդ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Եր., 2008, էջ 49:*

Աշուղական և ժողովրդական երգի ու նվագի լավագույն ավանդույթներով հայտնի Շիրակը խորհրդային շրջանում նորովի դրսևորեց իր ներուժը՝ համալրվելով մասնագիտական կրթօջախներում դասական ու ժամանակակից երաժշտության ավանդույթներով կրթված շրջանավարտներով:

Թեև հայ երաժշտական մշակույթին նվիրված հրատարակությունների հեղինակներն այս կամ այն կերպ անդրադարձել են Շիրակին բնորոշ երաժշտական ուղղություններին ու ժանրերին՝ արժևորելով նաև անվանի երաժիշտների և կոմպոզիտորների ներդրումը, այսուհանդերձ տարածքի երաժշտական կենցաղին առնչվող տարբեր խնդիրներ հաճախ վրիպել են հետազոտողների ուշադրությունից: Ներկայացվող ուսումնասիրության նպատակն այդ բացը լրացնելու փորձ է՝ հիմնված 1979-1985թթ. Շիրակի շրջանում (ք. Լենինական, Մարալիկ ավան, Լուսաղբյուր, Գուսանազյուղ, Ձիթանքով, Սառնաղբյուր, Բագրավան, Շիրակավան գյուղեր) կազմակերպված դաշտային-ազգագրական գիտարշավների ընթացքում գրանցված նյութերի վրա:

Նախ հակիրճ ուրվագծենք երաժշտական մշակույթը կազմակերպող և հանրայնացնող պետական կառույցները, որոնց կազմում էին գործում տարածաշրջանի անվանի ու սիրված երաժիշտները: Ըստ էության, երաժշտական կյանքը կառավարող կառույցների համախորհրդային հարացույցը (մոդել) տեղայնացվում էր տարբեր հանրապետություններում՝ համապատասխանեցվելով տեղի մշակութային առանձնահատկություններին: Ըստ գործառույթների՝ դրանք կարելի է դաստասել հետևյալ կերպ.

- երաժշտական կրթօջախներ,
- պետական կամ ինքնագործ կարգավիճակ կրող տարաբնույթ նվագախմբեր, համույթներ ու մենակատարներ (դասական, ժողովրդական, աշուղական, էստրադային. . .),
- հանրության կենցաղային ու տոնական-ծիսական երաժշտական կարիքները սպասարկող խմբեր:

Խորհրդային տարիներին բնակավայրերի առաջնահերթության ու բնակչության քանակին համապատասխան՝ կանոնակարգված էր նաև երաժշտական կառույցների տարածման ցանցը: Այդ համատեքստում՝ երաժշտական դպրոցները, ուսումնարաններն ու մշակույթի տների (կուլտուրայի պալատ կամ տուն) ինքնագործ երաժշտախմբերը հիմնականում գործում էին քաղաքներում և մեծ ավաններում: Որոշ խոշոր գյուղերի մշակույթի տներում ևս կարելի էր հանդիպել ավան-

* Հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

դական նվագարանների կամ երգի-պարի համույթների: Ըստ այդմ՝ քաղաքային կյանքում հնչող երաժշտությունն առավել բազմառճ ու բազմաշերտ էր, իսկ գյուղական կենցաղում ավանդույթի ուժով գերիշխում էին ժողովրդական ու աշուղական երգերն ու նվագարանները:

Ի տարբերություն կատարողական խմբերի՝ նվագարանագործության ոլորտն, ինչ-որ առումով երկրորդվել էր պետական կառույցների ուշադրության առանցքում չէր, քանզի մինչ 1960-ական թվականները դասական նվագարանները ներմուծվում էին Ռուսաստանից: 1962թ. Երևանում հիմնադրվեց Երաժշտական գործիքների ֆաբրիկան, 1963թ.՝ Դաշնամուրի գործարանը, ապա նաև սկսեցին գործել ժողովրդական նվագարաններ (քանոն, թառ, քամանչա) արտադրող արտադրամասեր ու վերանորոգման արհեստանոցներ¹: Շիրակի մարզում նման կառույցներ չէին գործում և նվագարանագործական մշակույթը գերազանցապես ժողովրդական վարպետների մենաշնորհն էր: Գյուղական բնակավայրերում գործող նվագարանագործ վարպետները ժողովրդական ավանդույթների ու մասնագիտական հմտությունների ժառանգողն ու փոխանցողն էին: Գուսանազյուղի, Զիթանքովի², Բագարանի, Շիրակավանի ժողովրդական վարպետների պատրաստած փողային նվագարանները (զուռնա, դուդուկ, շվի, սրինգ, բլուլ, պիու, տիկ) կարելի էր գտնել շրջանի գրեթե բոլոր մեծ ու փոքր բնակավայրերում: Բանասացները սիրով էին հիշում բագարանցի երաժիշտներ Սուրեն Մարտիրոսյանին և Բուլանդղյի Արշակին՝ իբրև *տկճոր*, *տկզար* և պարկապուկ պատրաստող վարպետներ: Իսկ Արևմտյան Հայաստանում լայնորեն տարածված մեծ զուռնաների (*սուլեյման*, *բոռոզա*) պատրաստման նրբություններին քաջատեղյակ էին ձիթանքովցի վարպետ Հովհաննես Թաթոսյանն ու Գևորգ Ալոյանը³: Լենինականի նվագարանագործները հմտացել էին հատկապես

¹ Ժողովրդական նվագարաններ արտադրող արհեստանոցները կարճ կյանք ունեցան՝ սերիական արտադրանքի հետ կապված խնդիրների, վարպետների ցածր վարձատրության, որակյալ հումքի ձեռքբերմանն առնչվող դժվարությունների ու ֆինանսների բացակայության պատճառով: Որակի առումով՝ դրանք մեծապես զիջում էին անհատ վարպետների ստեղծագործություններին: Քանի որ արտադրամասում պատրաստված նվագարանները համեմատաբար մատչելի գներ ունեին՝ դրանց հիմնական սպառողները երաժշտական դպրոցների սաներն ու սիրողական մակարդակի երաժիշտներն էին:

² Բանասացներից շատերն էին հիշում 20-րդ դարասկզբին մեծ համբավ վայելող ձիթանքովցի Ուստա Գուդիին՝ Գոքոր Թադևոսյան, որի հոշակը տարածվել էր շրջանից դուրս՝ իբրև անմրցակից զուռնաչի: Այս երաժշտի մասին պատմություններում վարպետի կերպարն առասպելականացվում էր: Ըստ գրանցված պատմությունների՝ իր ֆիզիկական ուժն ու բացառիկ հմտությունները ցուցադրելու նպատակով նա պառկում էր մեջքի վրա, փորին տափարակ էին դնում, որի վրա 5-9 մարդ էր կանգնում, և վարպետը ժողովրդական հայտնի մեղեդիներն էր նվագում. այն էլ միաժամանակ երկու՝ ջուխտ զուռնայով: Անվանի զուռնաչի էր նաև նրա որդի Հովհաննեսը:

Այդ տարիներին մեծահամբավ դուդուկահար Կարապետ Եղոյանը՝ Փանչո, ևս երկրպագուների խնդրանքին ընդառաջ՝ իր վարպետությունն էր ցուցադրում՝ միաժամանակ զույգ դուդուկ նվագելով:

³ Նրա պատրաստած փողային նվագարանների ինքնատիպ օրինակները համարել են Հայաստանի ազգագրության թանգարանի (Մարդարապատ) հավաքածուն: Վարպետն իր

փողային մուկնշտուկավոր, լարային և հարվածային նվագարանների փայտե, կաշվե ու մետաղե մասերի պատրաստման ու հարդարման մեջ: Լարերը հիմնականում բերվում էին մայրաքաղաքից, իսկ կաշվի, եղեգնի և փայտի հումքատեսակները՝ գյուղական վայրերից:

Քաղաքային բնակավայրերում ամենատարածված ավանդական փողային նվագարաններից էին դուդուկը, գուռնան, պարկապզուկը (տիկ), շվին, եղեգնե, փայտե ու մետաղե սրինգները (ղավալ, բուլ), լարայիններից՝ քամանչան, թառը, հարվածայիններից՝ դիուլը, դափը: Գյուղական կյանքում ամենակիրառական նվագարաններից էին պարկապզուկը, գուռնան ու դուդուկը, ավելի սակավ՝ պկուն, որոնք հնչում էին ժողովրդական բոլոր տոների, ծեսերի, բացօթյա հավաքությունների ու խնջույքների ժամանակ: Իսկ հովվական եղեգնե, փայտե և մետաղե մեծ ու փոքր սրինգները, որոնց նվագը կարելի էր լսել նաև գյուղական տոների կամ ժամանցային միջոցառումների ընթացքում՝ առաջնային գործառնություն հովիվների աշխատանքային գործընթացի հնչյունային կազմակերպիչներն ու ընտանիքից հեռու, սարում և արոտավայրում գործող խաշնարածների հույզերի ու մտքերի արտահայտման միջոցներն էին:

Ուշագրավ է, որ ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում Շիրակում ևս մեծերին նմանակելով նվագարան պատրաստելն ու հնչեցնելը մանչուկների խաղի վերածած սիրելի զբաղմունքներից էր: Գյուղական բնակավայրերի մեծ մասում կարելի էր հանդիպել 6-10 տարեկան տղաների, որոնք խաղի ընթացքում տարբեր բույսերի սևամեջ ցողուններից ու ծառի ճյուղերից, կեղևներից ու կորիզներից սուլիչատիպ հարմարանքներ ու նվագարաններ էին պատրաստում և հնչեցնում: Մեր գրանցած տարբերակներից նշելի են ցորենի ցողունից պատրաստված կտրված լեզվակով 5-6 ձայնանցք ունեցող մանկական *գուռնան*, որը զիլ ձայն էր արձակում, երկարությունը՝ մոտ 20 սմ: Նույնատիպ, ավելի կարճ փողով նվագարան էր բոքիից, 4-5 ձայնանցքով, կտրած լեզվակով փողային նվագարանը՝ *պուկուն*, որն առավել ճշան ձայն ուներ: Տարածված էին նաև 6-7 ձայնանցքով եղեգնե սուլիչատիպ շվին՝ *դուլլի*, ինչպես նաև 6 ձայնանցքով բաց փողով սրինգը՝ *դավալն* ու անցք բացված ծիրանի կորիզից կամ ծառի դալար շիվերից պատրաստված սուլիչները՝ *շվիկ*: Մանկական նվագարանների նման տեսականին և դրանց պատրաստման ու կիրառման խաղի վերածված բազմազանությունը մեկ անգամ ևս վկայում է շիրակցիների կենցաղում ժողովրդական նվագարանների տարածվածության ու նվագարանագործ վարպետի կերպարի նկատմամբ հանրության վերաբերմունքի մասին:

Շրջանում գործող երաժշտական կրթօջախներում ու տարբեր խմբակներում (Կոմիտասի և Շերամի անվ. երաժշտական դպրոցներ, Կարա-Մուրզայի անվ. երաժշտական ուսումնարան, Պիոներների պալատի ժողգործիքների խմբակներ) դասավանդելով՝ իրենց կուտակած մասնագիտական փորձն ու հմտություններն էին փոխանցում լավագույն ժողովրդական երաժիշտները: Նրանցից շատերը նաև

մասնագիտական հմտությունները փոխանցել է որդիներին, որոնցից առավել հմուտ է Ջոհրայը:

ելություններ էին ունենում պետական ու ինքնագործ երաժշտախմբերում (Հայֆիլ-հարմոնիայի Լենինականի բաժանմունք, Երկաթուղայինների կուլտուրայի պալատի /Սկյանի տուն/ երգի-պարի անսամբլ)⁴։ Դրա շնորհիվ՝ ժողովրդական վարպետների կատարողական ավանդույթը զուգորդվում էր դասական երաժշտության աշխարհընկալմանն ու արվեստին՝ ստեղծելով մի նոր ու ինքնատիպ որակ։

Ժողովրդական երաժիշտների մյուս խումբը, հավատարիմ մնալով տեղական ու արևելյան նվագարանային կատարողական ավանդություններին, աշխատում էր Գործիքային երաժիշտների բյուրոյում (ԳԵԲ, նախկինում՝ Ռաբիս⁵)։ Եթե Երևանում գործող նույնանուն կազմակերպության երաժիշտներից շատերը, ժամանակի և պատվիրատուի պահանջներին համընթաց, փորձում էին ավանդական նվագախմբերի կազմը համալրել դասական, էստրադային, ջազային կամ արևելյան մշակույթներին բնորոշ տարրեր նվագարաններով՝ հնարավորինս բազմաժանր ու բազմալեզու դարձնելով երգացանկը, ապա Լենինականի թե՛ երաժիշտները, թե՛ ունկնդիրներն առավել ավանդապահ էին։ Ըստ այդմ՝ երևանյան ԳԵԲ-ի նվագաձուների եռյակին միանում էին նաև երգիչները, նվագախմբի կազմում հիմնավորվում էին կլարնետը, ակորդեոնն ու սինթեզատորը, ինչպես նաև արևելյան թմբուկների որոշ տեսակներ, իսկ դափի գործառույթները նեղացվում էին՝ սահմանափակվելով միայն սզո արարողակարգով, որը տարիներ անց ամբողջովին փոխարինվեց դիդլով։ Մինչդեռ Լենինականում հիմնականում գերիշխում էին ավանդական փողային եռյակները՝ դաստա (դուդուկ, դամ դուդուկ, դափ կամ՝ փոքր զուռնա, դամ, դիդլ, երբեմն նաև՝ կլարնետ) կամ սազանդարների նվագախմբերն (թառ, քամանչա, դուդուկ, դափ)՝ իրենց բնորոշ նվագացանկով և կատարողական ավանդույթով։

1980-ականների սկզբին, արդեն դուրս գալով «ընդհատակից», երևանյան կենցաղում ռաբիս ոճի՝ *քաղաքային* երաժշտությունը թե՛ ձայնագրությունների, թե՛ կենդանի կատարումների առումով ավելի ազատ էր տարածվում և հասանելի էր այդ երաժշտության երկրպագուների տարբեր խմբերին (սոցիալական, տարի-

⁴ Դուդուկահարներ Կարո Չարչոլյան, Լևոն Մադոյան, Ժորա Միմոնյան (Չախալ Ժորա), Մուրեն Գրիգորյան, Մկրտիչ Մալխասյան (Մըկըլ), Կարապետ Մեխակյան, թառահար Խաչիկ Զատիկյան և այլք։

⁵ Այս կառույցը պետության կողմից ստեղծվել էր դեռևս 1920-ական թթ.՝ բնակչության երաժշտական պահանջները ուրախության և սզո արարողությունների ընթացքում սպասարկելու նպատակով։ Ռաբիս երկույթի և երաժշտության մասին մանրամասն տե՛ս Թադևոսյան Ա., Անցումային հիմնախնդիրներ. հետխորհրդային առօրեականության առանձնահատկությունները եւ արդիականացման հեռանկարները, Ակտուալ ա., 23. 08. 2011: Պիկիչյան Հ., «Ռաբիս» երկույթի լույսն ու ստվերը // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1982 N 1, էջ 24-30: Абадзіѳі Ё., Пикичян Р., Заметки по этнографии современного города (на примере Еревана); 1.Рабиз и изменчивость городской социальной иерархии; // Этнические группы в городах Европейской части СССР // АН СССР, Московский филиал географического общества, М. 1987, с. 136-146. Պիկիչյան Հ., Արդի քաղաքային երաժշտական մշակույթը. Ռաբիսը և հեռուստատեսությունը // Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու, Եր., 2010, էջ 113-125:

քային, սեռային): Ու թեև այն չէր դադարում քննադատվելուց իբրև ցածրորակ, անճաշակ կամ ազգային ավանդույթից հեռացած երաժշտական ուղղություն, այսուհանդերձ չէր տարածվում երկրպագուի «բարոյական» վարկանիշի վրա: Ուշագրավ է, որ Լենինականի Ռաբիսի կառույցում այդ երաժշտությունն, ըստ էության, չէր արմատավորվում և թե՛ հանրության, թե՛ երաժիշտների կողմից դիտարկվում էր իբրև երևանյան իրողություն⁶:

Երևանցիների կենցաղում ռաբիս ոճի երաժիշտների կենդանի կատարումները հիմնականում հնչում էին սգո արարողությունների, ընտանեկան հավաքույթների և խնջույքների ժամանակ: Առաջնակարգ հյուրանոցների ռեստորաններում սովորաբար ելույթ էին ունենում էստրադային և ջազային նվագախմբերը, իսկ որոշ այլ ռեստորաններում (օրինակ՝ «Արարատ») կարելի էր ունենդրել նաև ժողովրդական ու ռաբիսի սիրված երգիչ-երաժիշտներին (հատկապես բարձր վարկանիշ ունեին Գայանե Մերոբյանը, Կոստանդին Կարապետյանը և այլք): Երևանյան ճաշարաններում և գինետներում հիմնականում հնչում էին ժողովրդական և ռաբիս կատարումների ձայնագրությունները, իսկ հատուկ հավաքույթներին կարող էին հրավիրվել նաև առանձին երգիչներ կամ երաժիշտներ: Ի տարբերություն դրանց՝ Երևանի և Լենինականի սրճարաններում առավել տարածված էին հայկական, ռուսական և արտասահմանյան ջազի, էստրադայի և հեղինակային երգի սիրված կատարումները:

Այդ տարիներին, ԳԵԲ-ից անկախ, Լենինականի երկաթուղային կայարանի հարակից ճաշարաններից մեկում էր երգում գյումրեցի սիրված երգիչ Ալիկ Գյունաշյանը, որի ձայնագրությունները, ձեռքից ձեռք տարածվելով, արդեն հասել էին Հայաստանի սահմանները: Նրա երգացանկում ընդգրկված էին ժողովրդական, աշուղական, քաղաքային երգի տարբեր ժանրերի և ոճերի երգեր («Ջուր եմ ծախում», «Մե- մուք ամպեր», «Օնիկն ու Սոնիկը», «Քյահրիբար», «Լուսնյակ գիշեր», «Աչքերիս մեջ ծովն արցունքի», «Երեքնուկ», «Մայր իմ սուրբ ու բարի», «Քելե, լառ», «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ», «Բաժակները լցրեք, խմենք կենացն հայության» և այլն): Այդ անհրապույր վայրում երգչի հետ աշխատող նվագախմբի կազմը գրեթե չէր տարբերվում երևանյան նմանատիպ խմբերից (կիթառ, ակորդեոն, կլարնետ, սինթեզատոր, հարվածայիններ), թեև որակի առումով որոշակիորեն զիջում էր երգչին: Ի տարբերություն մայրաքաղաքի՝ 1980-ականների սկզբին, Լենինականում ռաբիս երաժշտությունը դեռևս «ընդհատակի մշակույթ»-ի կարգավիճակում էր: Շարունակելով մերժվել մտավորականության և մասնագետների կողմից՝ այն մղվել էր դեպի աչքից հեռու՝ ծայրամասային հավաքատեղիներ, որոնք դիտարկվում էին իբրև «ստորին» խավի տղամարդկանց տարածք: Պատճառն այն էր, որ կասկածելի համբավ ունեցող այդ միջավայրի հիմնական այցելուները հասարակության *մարգինալ* խմբերն էին՝ իրենց բնորոշ վարք ու բարքով, անսլակեշտ համարվող խոսք ու գրույցով, էժանագին ծխախոտով ու ոչ բարձրորակ ակոնիտային խմիչքով, որոնց համար օտար չէին նաև բանասացների մեկնա-

⁶ Բնարկե, ինչպես այլուր, այս երաժշտության երկրպագուներ կարելի էր գտնել նաև Շիրակի տարբեր բնակավայրերում:

բանամար՝ «դարդին դարման էնելուն» նպաստող էժանագին թմրամիջոցները: Բնականաբար, խորհրդային քաղաքացու բարոյական կերպարին անհարիր այս վայրում հայտնվելը կարող էր անցանկալի հետևանքներ ունենալ այցելուի կենսագրության վրա: Ու թեև երգիչը բազմաթիվ երկրպագուներ ուներ թե՛ մայրաքաղաքում ու Գյումրիում, թե՛ Հայաստանի տարբեր բնակավայրերում, այնուամենայնիվ իր հիմնական ելույթի վայրում սիրված երգչին լսել «համարձակվողների» թիվը խիստ սահմանափակ էր: Ըստ այդմ՝ հանրության շրջանում հարգանք վայելող երիտասարդ և ավագ սերնդի տղամարդիկ անգամ խուսափում էին ի տես բոլորի այցելել այդ վայրը՝ վախենալով կորցնել ձեռք բերած վարկանիշն ու ասեկոսների առիթ դառնալ: Այսուհանդերձ, հասարակության մեջ որոշակի դիրք ունեցող երկրպագուների համար հատուկ պայմաններ էին ստեղծվում՝ նախապես փակվում էր տարածքը, որը հնարավորություն էր տալիս հետաքրքրասեր աչքերից հեռու այցելել և ունկնդրել ռաբիսի դասականներից մեկը համարվող երգչին⁷:

Այս միջավայրը հատկապես տաքու էր հարգարժան ընտանիքների կանանց համար, քանզի իգական սեռի ցանկացած այցելու կարող էր վատ համբավ ձեռք բերել, որը ճակատագրական կդառնար թե՛ իր, թե՛ ընտանիքի համար: Երկաթուղային կայարանին կից այս ճաշարանն իր նկարագրով, գործառույթներով ու բնորոշ երաժշտությամբ համեմատելի է Հունաստանում հայտնի տղամարդկանց նմանօրինակ հավաքատեղիներին, որտեղ ծնունդ է առել և տարածվել «ռեբետիկա» կոչվող երաժշտական ուղղությունը: Զարմանալի չէ, որ որոշակի գուգահեռներ են նկատվում ռաբիսի և ռեբետիկայի երաժշտամտածողության, կատարողական արվեստի և կենցաղավարման միջև:

Ամփոփենք: Գիտարշավային նյութերի հիման վրա փորձ արվեց ներկայացնելու 1980-ական թվականների Շիրակի երաժշտական կենցաղի ուրվապատկերը: Նշված ժամանակաշրջանի բազմաշերտ երաժշտական նկարագիրը ձևավորվել էր շիրակցիների կենցաղում սերնդեսերունդ փոխանցվող բնիկ ժողովրդական երաժշտական, աշուղական ու նվագարանագործական մշակույթների և խորհրդային տարիներին ստեղծված երաժշտական կառույցների ու միջմշակութային փոխառնչությունների միջոցով տարածվող երաժշտական տարաբնույթ ուղղությունների ու ոճերի ինքնատիպ ներհյուսմամբ: Մանուկների կենցաղում խաղի վերածված նվագարանների պատրաստումն ու տարածվածությունը մեկ անգամ ևս վկայում են ժողովրդական նվագարանների ու նվագարանագործ վար-

⁷ Գիտարշավի ընթացքում մենք ևս որոշակի դժվարություններ ունեցանք այդ միջավայրում դաշտային նյութեր գրանցելու և երգչին լսելու հնարավորություն ստանալու գործընթացում, որը հաղթահարվեց նույն եղանակով՝ պատկան մարմինների օժանդակության շնորհիվ:

Ինչպես հայտնի է, անկախությունից հետո վերացան ռաբիս երաժշտությանն առնչվող սահմանափակումները, և այս ոճի բազմաթիվ երգիչների հետ նաև Ալիկ Գյունաշյանն է ազատ ելույթներ ունենում հետուստատեսությամբ, լավագույն համերգասրահներում և ռեստորաններում: Նկատենք, որ 2015թ., ծննդյան 60-ամյակի առթիվ, անվանի երգիչը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն պարգևով՝ ոսկե մեդալով, հայկական ժողովրդական երաժշտությանը մատուցած ծառայությունների ու 50-ամյա երաժշտական գործունեության համար:

պետի կերպարի նկատմամբ հանրության վերաբերմունքի ու բարձր գնահատանքի մասին:

Հավաքված նյութը հնարավորություն է տալիս դիտարկելու ժողովրդական և արհեստավարժ երաժիշտների, նվագարանագործ վարպետների գործունեության հիմնական ոլորտները, ինչպես նաև հանրության ոչ բոլոր շերտերի համար բաց, այսպես կոչված, ընդհատակում գործող, *մարգինալ* երաժշտական միջավայրերի, կատարողների և երգացանկի նկարագիրը՝ համեմատելով երևանյան իրականության հետ:

Ինչպես փորձեցինք ներկայացնել, երաժշտական կենցաղը ձևավորվում է հանրության տարբեր շերտերի երաժշտական պահանջմունքների և նախասիրությունների ներհյուսմամբ, որոնք կարող են նաև տարակարծությունների ու հակադրությունների առիթ դառնալ: Այս առումով, ավանդականից փոխակերպված կամ տարբեր ակունքներից սերած երաժշտական իրողությունների գրանցումն ու հետազոտումը կարևոր են, քանզի դրանք սոցիալական իրականության երաժշտական տեքստերն են, որ հնարավորություն են տալիս առավել հստակ պատկերացնելու և հասկանալու ժամանակը՝ իր բազմաշերտ ամբողջականությամբ:

МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ ШИРАКА В 80-х ГОДАХ 20-го ВЕКА

___ *Резюме* ___

___ *Р. ПИКИЧЯН* ___

Исследование посвящено самым популярным музыкальным направлениям и инструментам, звучащим в повседневной жизни ленинканцев и сельских жителей в 80-х годах 20-го века. На основе собранных полевых этнографических материалов была совершена попытка отобразить наиболее полную картину традиционной культуры, а также современные преобразования, инновации в музыкальной жизни Ширакского региона, произошедшие под воздействием советской модели. Особое внимание автор уделил отношению различных социальных слоев к народной, ашугской, городской музыке, инструментам, жанрам и исполнителям.

В рамках исследуемых вопросов делается попытка представить особенности музыкальной культуры, характерной для городских и сельских районов Ширака. Описана также так называемая подпольно-маргинальная музыкальная среда, исполнители и репертуар которые были недоступны для всех слоев общества. А также проводится сравнение с ереванской реальностью.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պիկիչյան Հռիփսիմե Վահրամի - պ.գ.թ., ԵՊՀ մշակութաբանության ամբիոն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, E-mail: hripsime-pikichian@rambler.ru

*ՄԱԿԴԻՐԸ Վ. ԹՈԹՈՎԵՆՅԻ «ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՍԵԱԿԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ» ՎԻՊԱԿՈՒՄ**

Վիպակի լեզուն ընդհանրապես և լեզվական միջոցներից մեկը մասնավորապես գնահատելու համար հիմք ենք ընդունել երկի գեղարվեստական արժեքը. վիպակը «մի անհատի կենսագրության խոստովանությունը լինելուց վերաճում է մի ամբողջ սերնդի գեղարվեստական կենսագրության, սերունդ, որը ցավագին գալարումներով վերապրում է նախապետական հարաբերությունների փլուզումն ու հայրենի օջախի վրա կախված արհավիրքի ծանրությունը, որը տառապանքի ու ցավի միջից անընդունալի է լուսավոր եզերքներ»¹: Սերունդը բազմաշերտ է՝ «բարձրատոհմիկ անձանցից մինչև ցնցոտիապատ գյուղացիներ. նրանք բոլորն էլ ապրում են մի աշխարհում, որը լի է անցողիկ քաղցրություններով և տևական դառնություններով»: Ներկայացվող հարաբերությունները, հասարակական շերտերը, ուրախություններն ու դառնությունները, մանկության լուսավոր ու թախծալի վերհուշերը արտացոլվում են համապատասխան լեզվով, որի գեղագիտությունն արտահայտող հզոր միջոցներից մեկը մակդիրն է: Թոթովենցը վարպետորեն է գործածել գեղարվեստական այս հնարքը՝ խորապես ընկալելով նրա մասնահատկությունները՝ իրականության անվրեպ արտացոլում և հուզական վերաբերմունքի դրսևորում: Մակդիրի հմուտ ընտրություններով Թոթովենցն ապահովել է գեղարվեստական խոսքի կարևորագույն հատկանիշներ՝ պատկերավորություն և հուզականություն, որոնց շնորհիվ վիպակը ճանաչվել է իբրև իսկական «արվեստի նմուշ»/Ավ. Բսահակյան/:

Հույզը թերևս գեղարվեստական խոսքի ամենաբնորոշ հատկանիշն է, սակայն դա ծնվում է միայն այն դեպքում, երբ բանահյուսվածքը անսխալ է, գաղափարապես հագեցած ու ճիշտ: Նման դեպքերում ոչ միայն բառերի փոխաբերական գործածությունները, այլև համագործածական շատ բառեր, խոսքի պահանջով, նաև գրողին տրված՝ բառերն իրենց իսկական իմաստներով գործածելու վերին շնորհով ու կարողությամբ պայմանավորված, ձեռք են բերում հուզական, բովանդակային և արտահայտչական լրացուցիչ երանգներ՝ անհատականացնելով, ինքնատիպ դարձնելով հորինվածքը, որի արժեքը, անկասկած, առաջացրած տպավորությունն է: Ահա. «Ես նայեցի մորս կանչած ուղղությամբ և տեսա լուսինը, որ *մանիշակագույն* մթնշաղում, *մուգ-կապույտ* լեռան վրա նստել էր: Այնքա՛ն *մեծ* էր այդ լուսինը» (11): Ուշադրություն դարձնենք փոխաբերական պատկերին. լուսնի անձնավորումը սովորական նստել բայով է իրականացվել, սակայն անչափ

* Հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Եր., 1986, էջ 146:

տպավորիչ է, մնայուն: Ընթերցողը կարծես գեղանկարում տեսնում է մթնշաղի մանիշակագույն ու լեռան մուգ կապույտը, որ խոսքից դուրս նշված առարկաների բնական հասկանիչները կարող էին լինել և ընդամենը անվանողական արժեք ունենալ, մինչդեռ այստեղ դրանք սոսկ գույներ չեն, նաև մակդիր-խորհրդանիշներ են, որ համատեղում են ապրված պահի երանության ու այդ ամենի անդարձ կորստյան մորմոքի զգացողությունները: Վիպակի ժանրային առանձնահատկությունը, Թոթովենցի բանաստեղծական խառնվածքը, նրա մեջ ապրող հայրենապաշտությունը, սիրելի մարդկանց, անցած դեպքերի հանդեպ վերհուշերը ծնում են անեզրական կարոտ, և գործածված գույները դառնում են այդ կարոտի գույները, անհետացած հայրենական եզերքի, սիրելի մոր, մանկության օրերի կարոտի: Այդպես նաև *մեծ* բառը լուսինը բնութագրելիս դարձել է մանկան աշխարհընկալումն արտահայտելու միջոց: Հետագայում՝ կյանքի անվերջ դեգերումներում, այդքան մեծ լուսին այլևս չտեսավ...

Թեև փոխաբերականությունն ինքնին հուզականությամբ է օժտում խոսքը, սակայն գրողից պահանջվում է բառընտրության բացառիկ հմտություն և բառի գեղագիտական արժեքի ճիշտ զգացողություն, որպեսզի գործածած մակդիրը ծառայի նպատակին:

Ասվածը Թոթովենցի լեզվին խիստ բնորոշ է, և դա կնկատվի գոհարների պես շաղ տված նրա մակդիրներից ցանկացածը վկայակոչելիս: Ծառի սաղարթների բանաստեղծական պատկերներ մեր գեղարվեստական խոսքում հաճախադեպ են պատահում: Ահա Թոթովենցը գրում է. «Կեսօրին նստում էին «ճաշի» ագարակի *ամենաթևավոր ծառի* տակ...» /76/: Խոսքի ուժը իմաստով շատ հայտնի, սակայն լեզվամտածողությամբ բոլորովին թարմ ու նոր այս բառակապակցությամբ է ապահովվել, որի մեջ ամփոփված է նաև հայրենի ագարակի ծառ ու թփի հանդեպ սիրտ ու կարոտի նրբին ապրումը: Նույնպիսի բացառիկ զգացողությամբ Թոթովենցը գործածում է *մռայլաթև մուր* և *արևային խնդություն* մակդիրային կապակցությունները՝ դրանք հակադրելով միմյանց՝ ընդգծելու համար մշակների ծանր աշխատանքն ու բաղձալի հանգստի զգացումը: Նա գրում է. «... Բայց մշակներն ավելի խորը խնդությամբ, քան ամբողջ աշխարհը, ողջունում էին վերջալույսը, ողջունում էին նրանք *մռայլաթև մուրը արևային խնդությամբ*, որովհետև մուրը բերում էր նրանց տառապանքի թեթևացում, հանգիստ, անսահմանորեն խորը հանգիստ» /77/: *Խորը խնդություն* և *անսահմանորեն խորը հանգիստ* մակդիրային կապակցությունները խոսքից դուրս դրական հարիմաստ ունեն, սակայն բերված հատվածում նրանց դերակատարությունն այլ է. նրանք ընտրված են՝ ընդգծելու մշակների անուրախ առօրյայի դառնությունը: Փաստորեն Թոթովենցը իրականությունը մակդիրի միջոցով է ներկայացնում իր թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունքի զուգորդումով: Մակդիրների հուզական և դատողական արժեքներով Թոթովենցը լուծում է կարևորագույն հարցեր՝ խոսքի բովանդակության ճշտություն, կերպավորման արվեստ, հուզականություն և պատկերավորություն: Զգացմունքների արտահայտման տեսակետից անհամեմատելի է գրողի գործածած քնարական մակդիրների դերը, այսպես՝ «Այդ անէացած աշխարհի կապույտ

մոխրում այժմ էլ, զգում եմ, կաթում է այդ վարդենու արյունը...» /20/: *Անէացած* բառի և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստները, սիրո և տրտմության, նաև *կապույտ մոխիր* մակդիրային կապակցությունը կարծես ու երազի միախառնված ապրումներով աննախադեպ հուզականությամբ են պարուրում յուրաքանչյուրին, իսկ վարդենու արյունելու անընդհատելի զգացողության պատկերը մշտակա է դարձնում անվերադարձ հեռուներում մնացած հինավուրց հայրենիքը, սիրելի ու անմոռանալի մարդկանց և հարազատ իրականություն: Այդպես նաև՝ *բոսոր աղջիկ* /Վերոնիկա- 65/, *քնքուշ աղջիկ* /63/, *արևային ճակատ* /Ռեբեկա -65/, *ոսկե-հնչյուն վրնջյուն* /Մարանի 49/, *մեղմ ու ջինջ խրիսինջ* /47/, *թռչկոտուն և կարկաշուն մի աղջիկ* /56/, *մթնշաղի կախարդական ժամեր* /71/, *հավիտենական սարսռուն երգ* /172/ և, և, և...:

Հայտնի է, որ վիպակը սովորական իմաստով դիպաշար /սյուժե/ չունի, էպիզոդային է և բացահայտում է կյանքի տարբեր կողմերը, սովորությունները, ներկայացնում է տարբեր խավերի մարդկանց: Տրամադրությունները բազմազան են, ուստի խոսքը պատկերող միջոցները համապատասխանում են այդ տրամադրություններին: Հստ խոսքի բովանդակության մակդիրային կապակցություններ կազմելու վարպետությունը ակնհայտ կդառնա, եթե հետևենք նույն գոյականի հետ գուգորդումների օրինակներին, տվյալ դեպքում՝ աչք: Միանգամայն հասկանալի են բառի բուն իմաստներին բովանդակային առումով հարազատ հետևյալ մակդիրները. անապատների կանանց բնութագրելիս ասում է. «Քայլելիս՝ նրանք լուռ հառում էին իրենց *հարավի անեզրությանը սովոր աչքերը մեր փողոցի պատերին...*» /96/: Կարծես հասկանալի չէ, թե ինչն է գրավել գրողի ուշադրությունը, սակայն շարունակվող խոսքը բացահայտում է նրա ընկալումը. «Անապատի այդ կանայք ունեն *երագուն* աչքեր» /96/, հաջորդ բնութագրումը կարծես ուղղակի անվանական արժեք ունի. «Կանանց դեմքը ծածկված է ներքևից մինչև քթի կեսը, իսկ վերևից՝ մինչև հոնքերը. միայն *սև* աչքերն են փայլում, փայլում են ինչպես հարավի արեգակը» /96/: Նկատենք՝ միանգամայն անսովոր է *սևի և արեգակի փայլի* համեմատությունը, և դրանով է արժևորվում *սև* սովորական որոշիչը՝ դառնալով արտահայտիչ մակդիր, որը նախորդող մակդիրների կապով բովանդակային և խոսքի կառուցման տեսակետից կարևոր նշանակություն է ձեռք բերում:

Չափազանց հուզական և ոչ անապատի մարդու համար խորհրդավոր է *խորունկ* մակդիրը ուղտի աչքերի համար. «...ուղտապանի նայվածքն էլ արցունքների միջից ընկել է ուղտի *խորունկ* աչքերի մեջ, արցունքները գլորվում են, այրվում են նրա կոպերը» /100/: Այդ բառն ավելի առեղծվածային է դարձնում ուղտի *աղերսագին* ձայնն ու բարձրանալը: Միանգամայն ճանաչողական-բովանդակային նրբիմաստ ունեն մակդիրները հետևյալ օրինակում. «Բայց անապատի մարդու նայվածքը հրային է, արևշող, կիզիչ, խոնավ, փայլփլացող, *միշտ արթուն, խոսուն աչքեր*, որոնք բերում էին մեզ իրենց ավազների ջերմությունն ու անդորրը» /97/:

Շատ կապակցություններում *աչք* գոյականը արտահայտչական արժեք ունեցող մակդիրներով չի բնութագրում, և դրանք ավելի շատ քերականական

որոշիչներ կարող են կարծվել, սակայն խոսքային միջավայրի բերումով նրանք օժտված են հուզանակությամբ, ուստի և գեղագիտական արժեքով, այսպես՝ *սև ու խոշոր աչքեր* /եղբայրը՝ Լույսն - 59/, *սև ու սիրուն աչքեր* /հայերը - 144/, որոնք բոլորն էլ կրում են ցավոտ սիրո դրոշմը և անվերջանալի քնքշանք են հարուցում: Իրականության, երևույթների, հարաբերությունների արտացոլմանը ծառայող հետևյալ մակդիրները, անշուշտ, ունեն նաև հուզական բովանդակություն և ծառայում են հեղինակային վերաբերմունքի դրսևորմանը, այսպես՝ *փայլականացյալ աչքեր* /Գոգոն - 40/, *երագուն աչքեր* /Ֆուադ բեյը - 134/, *պայծառացած, վճիտացած աչքեր* /Մարանը - 49/ . դրական հարիմաստն ակնհայտ է, մինչդեռ համակրանք չառաջացնող հորաքրոջ «աչքերը *խավարակուռ գիշերվա նման խոր*» /33- ի հակադրություն՝ ուղտի *խոր աչքերի*/, նույն վերաբերմունքին արժանի Մանուկ փեսան «կապույտ ու խորն ընկած աչքերով մի մարդ էր» /116/... նրա աչքերն այնքան էին փոքր, որ հորաքույրս ասում էր. «մախաթով են ծակեր» /116/: Պատկերավորման միջոցները, իհարկե, միասին, համադրաբար են հանդես գալիս, և տվյալ դեպքերում համեմատությունների, փոխաբերությունների ուղեկցություններն ուժգնացնում են մակդիրի արտահայտած իմաստը: Այդպես էլ՝ «Նշան աղան միայն մի ուղղությամբ հասել էր *բյուրեղացած, հիմարացած* աչքերը» /94/. երկու մակդիրն էլ անչափ պատկերավոր ու խոսուն են տվյալ իրադրությունը ներկայացնելու առումով: Պահի ռդերեգականության ու ծիծաղելիության բարձրակետը աղայի կողովից դուրս եկող կնոջ և աղայի շուրջ բարձրացած «*բարձր և անգույն*» հոհոցն է, դիվային մի ծիծաղ ...» /94/. *դիվայինը* արդեն ընդհանրական, մշտական մակդիր է, սակայն *անգույնը հոհոց*- ի համար հիմնավորում է աչքերի *բյուրեղացած, հիմարացած* լինելը: Թոթովենցի գործածած մակդիրները տրամաբանական, ճանաչողական նշանակություն ունեն, որոնք նաև անկրկնելի հուզականություն են հաղորդում խոսքին: Որքան օժտված է գրողը, այնքան մեծ վարպետությամբ է գործածում բառը՝ տեղին կիրառությամբ ծառայեցնելով կերպավորման արվեստին, որն արձակ երկի գեղարվեստական կարևոր առանձնահատկությունն է:

Անորոշ էությամբ ասորի վարժապետին՝ Աշուրին, Թոթովենցը նկարագրում է «նրբին հեզնանքով» /ՎԹ, 63/. կերտում է անմոռաց կերպար՝ «...ճաղատ գանգով /ոչ՝ գլխով/, ցցված այտուկներով, ժայռային *մուգ-կապույտ և խոշոր աչքերով...*» /62/, աչքերին այլ հատկանիշներ բնորոշ չեն, մեկ այլ տեղ դարձյալ՝ ժայռագույն աչքեր. ժայռի գույնը մի՞թե որոշակի է: Կերպարը կերտվում է մակդիրների ճանաչողական արժեքի տրամաբանական զարգացման ընթացքով՝ «...*անգուսպ աճած* բեղերով, որոնք գնալով լայնանում էին և ապա *մեղմորեն* բարականում և կախվում *անխնա կերպով բացված* բերանի երկու կողմից վար, ինչպես փոքրիկ պոչեր, ծածկելով վերնի մեծ ատամները և բերանի *սհալոր* խոռոչը»: Լուսանկարչական և գեղանկարչական ճշգրտությունն ու պատկերավորությունը հանդես են գալիս գիրկընդխառն: Պատկեր-կերպարը վերջին նրբագծով ամբողջանում է այսպես. «Հին բաբելոնական արձաններից պարոն Աշուրը տարբերվում էր միայն մի բանով՝ ակնոցով, մի բան, որ խանգարում էր նրա *արխայիկ և վսեմ* կերպարանքը» /61/:

Գեղարվեստական երկի արժանիքը իրականության հոգեբանական, հուզական կողմի բացահայտումն է: Այսպես՝ թուրք ընկերոջ՝ Ջեմսիի էությունը ներկայացնում է սև գույնի գուգորդումներով՝ «թուխ մորթ, սև մազեր, հոնքեր և մանավանդ *սևասև աչքեր*» /126/: Բառը մի տեսակ երկյուղ է առաջացնում, թաքնված ու միշտ սարսափելի վտանգի զգացողություն, մինչդեռ առկա սարսափը ներկայացնում է *երկյուղալից աչքեր* /132/, *արյունալից աչքեր* /132/ մակդիրային կապակցություններով, ընդ որում «...երեկոն իջավ արյունալից աչքերով», քանի որ օրն ավարտվում էր Վերոնիկայի մահվան գույժով: Մարիցայի մոտ գնացած Նիկողոս աղայի հոգեվիճակը՝ ամբոխից փախչելիս և փրկության դուռ որոնելիս արտահայտվում է *սարսափով լցված և խուզարկու աչքերով* մակդիրային կապակցությամբ, իսկ Վերոնիկայի հանդեպ տածած սիրուց գծոված ու թշնամացած եղբայրների հարաբերություններն ու հոգեվիճակի անցումները դիպուկ ու խոսուն մակդիրներով են արտահայտվում. «Վահրամը... նշմարեց, որ Հրաչը կորցնում է իր *եղբայրական աչքերը...*» /79/: Վահրամի ու Վերոնիկայի մտերմությունը տեսած Հրաչը «ներս ընկավ հանգիստ քայլերով ու *դահանակե աչքերով*» /դահանակ – մուգ կանաչ գույնի հանք, որից պղինձ է ստացվում/. ընտրած մակդիրը սարսուռ և անորոշ երկյուղ է առաջացնում, ընթերցողը կանխագգում է աղետը, և ահա «...փայլեցին նրա աչքերը, ինչպես աչքերը գազանացած կատվի» /80/: Իրավիճակի զարգացումն ու հոգեկան ապրումները հմտորեն ընտրված մակդիրներով են պատկերվում, և վախճանն այն է, որ «Վահրամն ու Հրաչը նայում են իրար *դեղին աչքերով*» /81/: Բառարանում² դեղին բառի փոխաբերական իմաստներից մեկը մաղձոտ, թունոտ-ն է, այսինքն՝ *եղբայրականից դեղինի* վերածված աչքերը սիրո, նաև ատելության վերածված սիրո և ահավոր ողբերգության ընթացքներն են արտացոլում: Մեկ այլ դրվագում թուրք կրոնավորին դարձյալ բնութագրում է *չար, դեղին աչքերով* /129/:

Արիստոտելը բանաստեղծական խոսքի առանձնահատկությունների մասին խոսելիս նշում է, որ «պարզունակ, հասարակ խոսքից խուսափելու համար պետք է գործածվեն մետաֆորներ, էպիտետներ, որոնք խոսքը դարձնում են վեհ, ազնիվ»³: Սակայն նաև նշենք, որ մասնագիտական գրականության մեջ մակդիրը թեև սահմանվում է որպես «առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչ»⁴, սակայն կարևորվում է այն հանգամանքը, որ խոսքի արտահայտչականությունն ու հուզականությունն ապահովվում են միայն այն դեպքում, երբ ընտրված մակդիրները բխում են բնութագրող առարկաների ու երևույթների էությունից, ունեն իմաստային խորություն, հարստացնում են խոսքի բովանդակային կողմը⁵, այսպես՝ եղբոր՝ Հակոբի բնավորությունը ներկայացնում է ն՝ բովանդակային, և՛ գեղագիտական առումով բացառիկ հաջող ընտրված մակդիրով,

² Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, I, Եր., 1976, էջ 287:

³ Արիստոտել, *Պոետիկա*, Եր., 1955, էջ 200:

⁴⁴ Պողոսյան Պ., *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, Գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 44:

⁵ Տե՛ս Մարության Ա., *Հայոց լեզվի ոճաբանություն*, Եր., 2000, էջ 139:

որը ձևավորել է շարահյուսական նորաբանություն՝ զարնան ուրախություն. «...Հակոբը կորցնում էր իր զարնան ուրախությունը...» /51/, նույն պատկերում նաև՝ *արշալույսային վճիտություն, ոսկեհենցուն խրխինջ, մթին ակորդներ* /Մարանի աչքերը, խրխինջը/, կամ՝ *Հակոբը՝ հերկուլեսյան որդի* /51/, *հերկուլեսյան տղամարդ* /78/: Նկարագրական- համեմատական հենքով ստեղծված բազմաթիվ մակդիրներ ունեն ոճաստեղծ նշանակություն, որոնք կերպավորման արվեստի տեսակետից անփոխարինելի դեր են կատարում, ինչպես՝ *ծայքոտած երես* /35- համակրանք չառաջացնող հորաքույր/, *խելքից խելճ մարդ* /89- հաջի Սողոմոն/, *կռվային բնավորություն* դիպվածային բառով /87-Ալեք աղա/, *բրոնզյա եղբայր* /59- Լևոն եղբայրը/, *կլասիկ ցինիկ* /107-անվայելուչ վարքով մարդ/ և այլն: *Միստիկական սեր* /43-Գոգո/ և *շնային սեր* /74/ մակդիրային կապակցություններով սիրո և նվիրումի ապրումների արտահայտությունը բովանդակային առումով սպառնիչ է և լեզվական առումով՝ արտահայտիչ:

Օնևդավայրի կենցաղային հարաբերությունները, սովորույթները, ժողովրդի հոգեհուգական աշխարհի առանձնահատկությունները շատ հաճախ Թոթովենցը բացահայտում է զարմանալի զգացողությամբ ընտրված ընդամենը մեկ բառ-մակդիրով, ինչպես՝ օրորոցի իրավունք /79/. «Թե՛ ծնողները և թե՛ ազգականները մոռացել էին *օրորոցի հինավուրց պատմությունը*, բայց Հրաչն ուզեց ձեռք բերել *օրորոցի իրավունքը*»: Հայոց մեջ հայտնի այս «օրենքի» ուժը բոլորը գիտեն, հասկանալի է այդ իրավունքի խախտման հետևանքը, և այս իմաստով բառագործածությունը տարողունակ է ու արտահայտիչ:

Ժողովրդական մտածողության ամենաբնորոշ արտահայտություններ են «*վրան բաց*» *սրախոսություն* /...Մանուկ փեսան կարող էր շատ «վրան բաց» սրախոսություն անել - 117/, *չոր նամակ* /123/ մակդիրային կապակցությունները, որոնց առաջացրած տրամադրությունը խոսքի ճշտության առումով անհամեմատ կարևոր է, քան հուզական-արտահայտչական արժեքը. «...կապ չի պահպանել /Ամերիկայում Ջոն դարձած Հովհաննեսը/ ոչ միայն դրամական օգնություն չուղարկելով, այլև զլացել է մի «չոր նամակ», այսինքն՝ դատարկ գիր: Բարքովարքի, ընկալումների դիպուկ արտահայտություն, որի խորապատկերին միանգամայն հասկանալի են դառնում ոչ միայն Հովսեփի արարքը, այլև հորը բնութագրելու համար գործածված մակդիրների բովանդակությունը. «Հովսեփը..., գլուխը խփելով պատին՝ սպանել է կյանքում առաջին անգամ հանդիպած *համառ և անամոթ* հորը» /123/: Միտումը պարզ է. ընտրված մակդիրներով գրողը կերտում է իրականության, մարդկային ճակատագրերի պատկերներ, կենդանագրում է կյանքը մոռացված ճանապարհի վրա. Հովսեփն ու քույրը ապրել են «չափազանց համեստ, բայց *երջանկությամբ արևված* մի կյանք» /122/, մայրը՝ «...*թշվառ և անօգնական* մոր բարոյական բարձրության վրա», ահա թե ինչու «*կուլտուրական հիվանդությամբ*» Ամերիկայից վերադարձած *համառ և անամոթ* հորը սպանած Հովսեփը բնութագրվում է *անմեղ ոճրագործ* մակդիրային կապակցությամբ. «...հասարակական կարծիքը զինվեց սպանվողի դեմ՝ պաշտպանելու մի *անմեղ կնոջ* և մի *անմեղ ոճրագործի*»/123/: «*Անմեղ ոճրագործ*» օբյեկտորոնային կապակ-

ցությունը բառերի անսովոր զուգորդությամբ և՛ իրականությունն է ներկայացնում, և՛ ընդգծում Թոթովենցի ապրումը, նաև գրավում է ընթերցողի ուշադրությունը: Այդպես նաև՝ *փառահեղ ցնցոտիներ* /35/՝ *հեզնանքի երանգով* /հորաքրոջ մասին/, *գերագույն ու վսեմ ցինիզմ* /145/. «Ապա գերագույն ու վսեմ ցինիզմով հռչակում են մինիստրները...»: Հաջի Սողոմոնի ամուսնության հետ կապված դեպքերը նկարագրելիս երեխաների աղմուկը հեղինակը բնութագրում է *անագորույն /երածշտություն 90/*, իսկ ողբերգության հանգեցրած այդ կատակը՝ *կատաղի /կատակ 92/* մակդիրներով: Բովանդակային առումով չափազանց խոսուն է *անգութ* մակդիրը *սեր* գոյականի համար. խոսքը Վերոնի հանդեպ եղբայրների սիրո մասին է. «... բռնեցին նրա կոկորդից, քաշքշեցին անգութ սիրով...» /81/: Բառընտրությունը եզակի հմտությամբ է կատարվել:

Անգութ-ը իբրև մակդիր այլ կառույցներում համադրելի է մակադրյալ բառի բովանդակությանը և ունի արտահայտչական-բովանդակային նշանակություն, ինչպես՝ *անգութ* ու *անկարեկից* ցուրտ(145), *անգութ* սառնամանիք(101), ամոթի *անգութ* ճանկեր(70): Իմաստի խտացման, ընդգծման տեսակետից այդպիսիք են նաև *անդնդախոր* (լուրջություն-139), *խավարակուռ* (գիշեր-33), *դաժան* և *անկարեկիր* (արև-151), *ցուրտ* (ջրեր-17), *արյունով գունավորված* (կոիվ-40), *կապարյա* (լուրջություն-84), *աղեխարշ* (դառնություն-78), *քարային* (համառություն-105) մակդիրները, որոնք նաև իրենց փոխաբերականությամբ ապահովում են խոսքի գեղագիտությունը, որոնց մեջ կան նաև դիպվածային բառեր, ինչպես՝ *քարային /համառություն/*:

Ընդհանրապես մակդիրների և մակադրյալ բառերի անսովոր զուգորդություններով Թոթովենցի վիպակի լեզուն օժտվել է խոսքի բանաստեղծականությամբ, և առանձին հատվածներ կարող են այդպես էլ ընկալվել: Հատկապես հայրենի բնության պատկերները, նրանց հանդեպ կարոտագին զմայլանքը մղել են կերտելու այսպիսի շարահյուսական նորաբանություններ՝ *պայծառ, աստղասարսուռ խորություն* (ազարակի-17), *թանձրակարմիր ու մեծաթև վերջալույս*(27), *աստղահնչուն գիշեր* (173), *անմեղ ու կապույտ բլուրներ* (131), *մաքուր, ջինջ, լվացված առավոտ* (46), *զարմանալի քնքուշ քամի* (81), *զմայլելի դաշտ* (31), *հրաթև վերջալույս* (173), *սուրացող ալիք* (47), *մեծ առավոտ* (173), *կրակե թև* (բնության-104), *վճիռ ու երգեցիկ առուներ*(86), *վագող առուներ* (86), նաև՝ *ծիրանագույն առուներ* (85)՝ թերևս Թոթովենցի հոգու արևով գունավորված: Ի դեպ՝ *արև*-ի առկայությունը նկատելիորեն ընդգծված է Թոթովենցի կերտած պատկերներում: Ընդհանրապես գույները գրողն օգտագործում է իբրև խորհրդանիշեր՝ փոխաբերական իմաստներով՝ *երջանկության կապույտ կաթիլներ* (130), *կապույտ անդորր* (172), *անմեղության կապույտ բլուրներ* (131): Այս շարքին են պատկանում նաև փոխաբերությամբ գույն արտահայտող մակդիրները, ինչպես՝ *ոսկյա ամառ* (85), *արևագույն հող* (172), *արևաներկ ողկույզներ* (104), *ոսկեգույն մագեր* (96): Բազում են նաև ոչ փոխաբերական, դիտարժան պատկերների ստեղծման նպատակով գույների ինչպես հիմնական, այնպես էլ փոխաբերական անվանումների կիրառությունները, ինչպես՝ «Մրգեր, մրգեր, մրգեր, որ գույն էին ճշում, խոտը *հրավառ կանաչ, կա-*

նաչի մեջ կարմիր կակաչներ: Սարալանջ, որ ներկվում էր արևային արյունով, սարալանջի ետևը կապույտ լեռներ, այդ լեռների գրկում, բարձր, ջինջ, փիրուզյա մի լիճ....» (18): Գունային համակարգի հիմնական գույների գուգորդումներով, նրանց ուղիղ ու փոխաբերական իմաստների համադրումով անմոռաց գեղարվեստական պատկեր է հյուսված:

Անսովոր հուզականությամբ և պատկերավորությամբ են օժտված Թոթովենցի գործածած գործողության մակդիրները⁶, որոնք երբեմն բխում են երևույթի էությունից, ինչպես՝ *խնորությամբ* ողջունել (77), ջինջ ժպտալ /մայրը-26/, *համառորեն* մոտենալ (97). «Դանդաղ, բայց համառորեն մոտենում էր քարավանը», երբեմն օքսիմորոն մակդիրային կապակցություններ են, ինչպես՝ *ցավագին ժպտալ*. «Հակոբն այդ հեռագիրը կարդալիս՝ ցավագին ժպտում էր....»/51/:

Հաճախ դրանք ուղղակիորեն չեն բխում բնութագրվող առարկայի, երևույթի էությունից և ընդգծված փոխաբերականությամբ պատկերավորություն և արտահայտչականություն են հաղորդում խոսքին, ինչպես՝ «....նրա (հոր) աչքերից արցունքի կաթիլներ էին վազում լուռ ու սրտակեղեք» (53), հիշենք՝ դրանք նաև *այրող* են (Առաջին անգամ տեսա «այրող արցունքը»- հոր արցունքը-15): Այդպես նաև *ահաբեկ*, *ամոթածեծ վազել* (70). «Եվ ահաբեկ, ամոթածեծ նա վազում էր....»: Ծովի գույնով փայլել-ը մակդիրային արժեք չէր ունենա, եթե այս խոսքային միջավայրում չլիներ. «Արևածագից մինչև արևմար նրանց բախերը գրնգում էին հողի մեջ, և երբ դուրս էին քաշում, փայլում էին արևի տակ ծովի գույնով» (76): Կամ՝ միանգամայն հասկանալի է *լիահնչյուն* երգելը, բայց. «Ես էլ ուզում էի երգել, երգել լիահնչյուն, արևալից և արևակոծ»(18). միանգամայն թարմ կապակցություններ. գուցե նման տրամադրություն հայրենի ագարակի հուռթի պատկերն է հարուցել:

Վիպակի հորինվածքում ներկայացվում են ուրախ և տխուր պատմություններ, որոնց հանդեպ թե՛ հեղինակի, թե՛ նրա միջոցով նաև հերոսների վերաբերմունքը դրսևորվում է բնորոշ մակդիրների օգնությամբ, այսինքն՝ կերպավորվում են մարդիկ իրենց հուզական, հոգեմտավոր աշխարհով, հավատով, ապրելակերպով, օրինակ՝ մոր՝ հոր հանդեպ վերաբերմունքը. «Դա բխում էր ոչ թե նրա անտարբերությունից դեպի ամուսինը, այլ խորախոր սիրուց»(22): Կամ հիացմունքով է խոսում նրա մարմնի *արևային խորության* (27), նաև դեպի ավետարանը տածած *անձանթ սարսուռի* (23) և *դողահար երկյուղածության* մասին: Նույնարմատ բառերի հարակրկություններով թանձրացնում է իմաստը, մեծացնում հուզականությունը. «....որպեսզի հանգստանա իմ թշվառ հոգին, որպեսզի խաղաղի մշտնջենական ողբն իմ ողբագին հոգում» (27), կամ՝ «Մն ամպերը կուտակվում էին, ծայր էր առնում ողբալի մի տրագեդիա» (105) և այլն:

Խոսքի պահանջով պայմանավորված՝ Թոթովենցը հաճախ գործածում է չափազանցական մակդիրներ, որոնք կերպարաստեղծ կամ պատկեր տիպականացնող նշանակություն ունեն և նպաստում են հորինվածքի արտահայտչականությանն ու հեղինակի նպատակադրման բացահայտմանը: Լեռն եղբոր եղերա-

⁶ Տե՛ս Խղիաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Եր., 2000, էջ 116:

կան մահվան մասին գրում է. «.... սպանվեց, ինչպես պատմում էին, *հորդահոս արիությամբ, բուռն թափով*» (59): Կեսօրվա տապը ներկայացնում է այսպես. «.... այրվում է հողը, մի *դաժան* և *անկարեկիք* արև վառում է դաշտի ցորենները» (151), ծնողների մասին՝ *զայրույթի փոթորիկ* (հայր-22), *լեռան ծանրություն* (մայր-23). «Կինը, եթե սիրի, լեռան ծանրություն կարող է կրել իր հոգում»: Այդպիսի կառույցներ ստեղծում է նաև դրական հարիմաստներով, ինչպես՝ *արևային խնդություն* (77), *խելահեղորեն տոնական* (60), եղբոր՝ Լույսի շուրթերով և նրա մասին. «-Գնացեք ձորը, արև-մարն կորսվեցավ, սկսեցավ կարկուտ, *ամեն մեկը գլխուս չափ*» կամ նրա մասին՝ «.... մի օր՝ միլիոններ, մյուս օր՝ սենտերի կարոտ, Բայց *խելահեղորեն տոնական*, միշտ նոր ու *ահեղ թափով*» (60), կամ՝ գրողի մանկական երևակայությունն ընկալել է իրերն ու երևույթները վառ պատկերներով, որոնք վերարտադրվում են վերհուշի ապրումներում. «Չյունը թափվում էր մեծ, *տերևի չափ փաթիլներով*» /101/ և այլն:

Հաճախ Թոթովենցը նրբին դիտողականությամբ վերակենդանացնում է կյանքի պատկերներ, կերտում կերպարներ՝ օգտվելով բառերի ձևաիմաստային խմբերի հնարավորություններից: Այսպես՝ հակադիր բառերի՝ միևնույն բառային միջավայրում գործածությամբ ընդգծում, տեսանելի, զգալի է դարձնում իր մտքի կենտրոնում եղած հույզը: Խոսքային հականիշները բովանդակային – արտահայտչական անուրանալի արժեք ունեն. «... *նսեմ զայրույթը* փոխվում էր *վսեմ հանգստության*» /58/: Նույն դիպուկությամբ մակդիրի դերում գործածված են հոմանիշները, հասկապես՝ խոսքային: Բերենք օրինակներ. «Կապկպում էին նրան, մի *ուժեղ* և *անզուր* մարդ վարձում ...» /109/, նաև՝ *դաժան* և *անձոռնի* պատկերներ /107/, նաև՝ *կարմիր ու կրքոտ* շրթունքներ /109/, պարզ, անմեղ արհեստ /112/, գործողության մակդիրների դերով՝ *անձոռնի* և *դիվային* ծիծաղել /107/, *կեղտոտ ու այլանդակ* երկարել /107/ և այլն: Խոսքը բնական է, ազդու, տպավորիչ: Անգամ եթե նույն մակդիրով հաճախակի են կազմվում մակդիրային կապակցություններ, ապա ոճային ճապաղություն, ծանրաբեռնվածություն, անհարկի կրկնություններ չեն առաջանում, և կառույցները բնութագրվում են բովանդակային ու արտահայտչական արժեքով: Բերենք այդպիսի գործածություններ, տվյալ դեպքում՝ *մթին հայեության* /53/, *մթին ծանրություն* /14/, *մթին առեղծված* /159/, *մութ մղձավանջ* /135/, *մութ առեղծված* /63/. «Ես երբեք չէի կարող հասկանալ *մթին այս առեղծվածը* /... աղավնիները մահ էին, չար, սև մահ» /159/: Այդպես էլ՝ *մոայլաթն մութ* /77/, *ամենամոայլ թախիծ* /27/ և այլն:

Թոթովենցը «նրբին հեգնությամբ» /ՎԹ-63/ է խոսում շատ իրադրությունների, երևույթների, տարբեր մարդկանց մասին և միշտ ընտրում է ամենախոսուն, դիպուկ մակդիրը: Պապը բնութագրվում է «*փուճ համառությամբ*» /32/. Նա՝ «իբրև նախկին հարուստի զավակ՝ ստացել էր այդ ամբարտավանությունը և տրադիցիայով շարունակում էր այդ *ոսկեզօծ ամբարտավանությունը*» /32/: Հաջի Առաքել աղայի հանդեպ հեղինակի բացասական վերաբերմունքն ակնհայտ է, և հասկանալի է, որ պապի *պողպատյա* կամքը /33/ չունի մշտական մակդիրի ընդունված դրական իմաստը, մինչդեռ որքան փաղաքշանք կա «համառ արիստոկրատ» հոր

աղայության հանդեպ. «Մայրս... պայքարում էր հորս այս *աղայական* փիլիսոփայության դեմ» /21/: Նույն բարի հումորով է խոսում ծառայի՝ Գոգոյի մասին, որը ամեն մի պտուղի, թփի համար կարող էր *արյունով գունավորված* կոիվ բանալ /44/, և Լեոնի՝ նրա դեմ անհրավացի ըմբոստացումը Թոթովենցը բնութագրում է իբրև առաջին «*պետական հարված*» ընդդեմ Գոգոյի իշխանության: Նախանձելի հմտությամբ է ընտրված մակդիորային կապակցությունը:

Հաճախ հաջողությամբ գտնված մեկ բառով ամբողջ մի խավ է տիպականացվում: Լավագույն օրինակ պետք է համարել Ամերիկայից վերադարձած ոսկյա ատամով մարդկանց անընդունելի վարքագծի նկարագիրը, ուստի միանգամայն հասկանալի է դառնում երևույթից բխող դժբախտությունը. «Թե ինչպես նա կապվեց *Ամերիկայից եկած ոսկյա* ատամնավոր մի մարդու, չգիտեմ..., բայց գիտեմ, որ նա դժբախտ եղավ»/62/: Պարզ է՝ այստեղ խոսք չկա «նրբին հեզնության» մասին: Այդպես նաև *անտիկ շալ* /36/ մակդիորային կապակցությունը թերևս ընկալվեր իբրև հնաժողովություն, հնավանդություն, սակայն ոչ համակրելի հորաքրոջ մասին նախորդող դրվագներից մեկում արդեն ակնարկված է. «... մանավանդ գլխի շալը, որը մի *հիմար* անգլիացի փորձեց գնել՝ իբրև *անտիկ ձեռագործ*» /34/: Նաև խոսքային միջավայրը բովանդակային առումով բացահայտում է բառի հարիմաստը. «Յուրոտում էր ծնոտները, անտիկ շալը գցում գլխին, ընկնում հարևանների տները» /36/: Այսպիսի գործածությունները, անշուշտ, նաև մեծացնում են պատումի անկեղծությունը և ապահովում խոսքի ճշտությունը:

Հայտնի է, որ խոսքի գեղագիտությունն ապահովող միջոցներից մեկը շարադասության շրջունությունն է, և թվում էր՝ վիպակի՝ եզակի գեղեցկությամբ օժտված լեզվին բնորոշ պիտի լինեին շրջադասությունը, սակայն այդպիսի մակդիորային կապակցություններ հազվադեպ են հանդիպում, ինչպես՝ «... բարձրանում և կապույտում լողում է մի արծաթյա թաս՝ *մեջը լիքը նոր կթած կաթով*, կամ՝ տիեզերանում էր գիշերն *աստղահեղուն...*» /173/: Նկատելին, սակայն, մակդիորի տեղին, չափավոր ու դիպուկ գործածությունն է՝ թե՛ պարզ /*նախկին մարդ* – 107՝ իսկազար/, թե՛ բաղադրյալ /*շղարշային սպիտակ ամպ* – 87/, առարկայական և գործողության, նկարագրական և քնարական, և՛ չափազանցական, և՛ հեզնական բնույթի /*կլասիկ կեղծավորներ* – 112/, սովորական և՛ շրջուն շարադասություններով: Այս ամենով Թոթովենցի խոսքի բազմազանությունն ու գեղեցկությունն են ապահովվում, համատեղ ճոխությունն ու չափավորությունը, տրամաբանականությունն ու զգացմունքայնությունը:

Թոթովենցը բացառիկ է զգացել մայրենի լեզուն, և շատ ավելի կարող ենք նրան վերագրել Գ. Զոհրապի այն դիտարկումը, թե «գրական մարդիկ կհաստատեն անոր/լեզվին/»⁷: Հավելենք, որ Թոթովենցը ոչ միայն հպատակվում է, այլև տեր ու տիրական է մեր անգուգելի մայրենիի լեզվական անդաստանին:

⁷ Զոհրապ Գ., Գրականության մասին, Եր., 1973, էջ 109:

ЭПИТЕТ В ПОВЕСТИ В. ТОТОВЕНЦА “ЖИЗНЬ НА ДРЕВНЕРИМСКОЙ ДОРОГЕ”

___ Резюме ___

___ М. Хачатрян ___

В данном исследовании рассматривается эпитет, как одно из литературных средств отображения языка повести “Жизнь на древнеримской дороге”, написанной В. Тотовенцем. (см. В. Тотовенц. Произведения, Ереван, 1957)

С целью осмысления языка произведения в целом и одного литературного приема, в частности, принята во внимание заслуга всего произведения, созданного в качестве “автобиографического признания”: повесть становится литературной биографией целого поколения, поколения, которое болезненно переживает крушение патриархальных родственных связей, поколения, которое испытывает мучения и мечтает о счастливой стране.

Поколение расслоено, состоит из “почтенных и бедных, они все живут в мире, полном минутной радости и нескончаемой печали”. Родственные отношения, социальные слои, радость и горечь, счастливые и грустные воспоминания детства описаны доступным языком, где эпитет является одним из сильнейших средств описания, его эстетизма.

В.Тотовенц мастерски использовал это средство выразительности, осознавая все его особенности как средство точного отражения реальности и показа эмоционального поведения. Умело подобранными эпитетами В. Тотовенц наполнил язык повествования наиболее важными оборотами описания и эмоциональности. Благодаря им, повесть считается настоящим “образцом искусства”.

Эмоция, очевидно, является одной из особенностей художественной литературы, тем не менее она раскрывается только тогда, когда народное творчество непогрешимо, богато идеями и точно. В. Тотовенц дает все это, используя уникальные метафорические эпитеты, которые показывают самые основные ценности речи, ее силу и воздействие.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչատրյան Մարիետա Կողայի - ք. գ. թ, դոցենտ, Մ. Նալբանդյանի անվ.

ԳՊՄԻ հայոց լեզվի ամբիոն, E-mail: hayoclezviambion@mail.ru

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Լեզուն անընդհատ զարգանում, համալրվում և հարստանում է նոր բաներով և արտահայտություններով՝ նորաբանություններով: Նոր բաների առաջացումը լեզվում պայմանավորված է հասարակական-քաղաքական կյանքում, կենցաղում և այլ ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններով և զարգացմամբ: Հանդես են գալիս նոր առարկաներ, երևույթներ և հասկացություններ, որոնք առաջ են բերում նոր բաների ստեղծման անհրաժեշտություն: Ժամանակի ընթացքում առաջացած այն նորաբանությունները, որոնք լայն գործածություն են ձեռք բերում, ձուլվում են լեզվի բառային կազմին և դադարում են նորաբանություն լինելուց, իսկ նրանք, որոնք կազմությամբ և իմաստով լիարժեք չեն, լեզվում չեն ամրանում և դուրս են մղվում գործածությունից:

Նորաբանությունների մեջ, իբրև բաների առանձին խումբ, առանձնանում են գրողների կողմից գեղարվեստական-ռճական և արտահայտչական նպատակով ստեղծված հեղինակային նորակազմությունները, որոնց մեծ մասը հարստացնում է գեղարվեստական գրականության լեզուն՝ հաղորդելով նրան ճոխություն և արտահայտչականություն: Գրողի լեզվական արվեստն ուսումնասիրելիս սովորաբար հետազոտողի ուշադրության են արժանանում հեղինակային նորակազմությունները, քանի որ դրանք ստեղծվում են հեղինակների կողմից՝ ասելիքը դիպուկ և պատկերավոր արտահայտելու նպատակով: Հեղինակային նորակազմություններում դրսևորվում են գրողի բառաստեղծման կարողությունը, ճաշակը, վարպետությունը:

Ա. Ավագյանի բառապաշարում իրենց առանձնահատուկ տեղն ունեն հեղինակային նորակազմությունները, որոնց ստեղծումը պայմանավորված չէ հասարակական նոր հարաբերությունների, կյանքում առաջ եկող նոր երևույթների առաջացումով: Մյուսնք «այն բաներն են, որոնք ստեղծում է ինքը՝ ստեղծագործողը, հատուկ նպատակով, որպեսզի կարողանա լիովին վերարտադրել իրեն համակած ապրումը, զգացումը, և որպեսզի ընթերցողը գեղարվեստական ստեղծագործության ընկալման պրոցեսում ճշտորեն ըմբռնի գրողի կողմից նկարագրվող երևույթը»¹:

Նոր բաների ուսումնասիրությունը և դրանց բացահայտումը գրողի խոսքում կապված են որոշ դժվարությունների հետ այն առումով, որ եղած բացատրական բառարանները² հիմնականում չեն արտացոլում այդ նորակազմությունները:

¹ Մարության Ա., Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Եր., 1979, էջ 108:

² Տե՛ս Մալխասյանց Սո., Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944-1945, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1968-1980, Աղայան Էդ., Արդի հայերէնի բացատրական բառարան, Եր., 1976, Մէյթիխանյան Փ., Նոր բաների բացատրական բառարան, Եր., 1996, Էլոյան Ս., Արդի հայերէնի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

Բառարանային տվյալների հիման վրա պարզեցինք, որ Ա. Ավագյանի գործածած շուրջ 50 բառեր որևէ բառարանում վկայված չեն: Հաշվի առնելով, որ դրանք բաղադրյալ և մասամբ անսովոր կազմություններ են, ենթադրվում է, որ Ա. Ավագյանի կողմից են կազմվել: Այս մասին Ս. Էլոյանը գրում է. «Հեղինակային նորակազմությունների ստույգ որոշման խնդիրը հղի է թյուրիմացություններով ու սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները, էլ չենք ասում նրանց նորակազմությունների ցանկը»³:

Հայոց լեզուն պատկանում է այն լեզուների թվին, որոնք բառակազմական շատ մեծ հնարավորություններ ունեն: Բառաբարդման գրեթե անսպառ հնարավորությունները՝ բառակազմական կաղապարների և բաղադրական հիմքերի բազմազանությամբ, ածանցների հարստությունն ու ածանցական բառակազմությունների գրեթե անսահմանափակ հնարավորությունները թույլ են տալիս ազատորեն կազմել նորանոր բառեր⁴: Օգտվելով հայերենի բառակազմական հարուստ հնարավորություններից և միջոցներից՝ Ա.Ավագյանը նոր բառեր է կազմում իսկական բարդությամբ, հատկապես հոդակապի միջոցով, որոնք այժմ են ընկնում իրենց բազմազանությամբ և իմաստային արժեքով: Բարդության բաղադրիչների ընտրությունը կապված է հեղինակի ճաշակի, նպատակի, ասելիքի և հաղորդման բովանդակության հետ: Օրինակ՝ *բակակոշիվ*՝ «Ամռան սովորական *բակակոշիվ* էր» (Պ, 7, 1963), *նույնահասակ*՝ «Նորեկ ժանդարմներին մականուններ կնքելու կարիք չգազցվեց, դրանք բոլորը զարմանալիորեն նման էին միմյանց, *նույնահասակ*, այրված, գորշ դեմքեր, նեղ ճակատների տակ կլոր, վայրենի այքեր» (Վ, 207), *փտածահոտ*՝ «Ամեն ինչից նեխահոտ, *փտածահոտ* էր փչում՝ փայտե մահճակալներից, պատերից, հատակին փռված գորգից, լվացարանից» (ՇՀ, 79), *կրծքակապ*՝ «...մեջքը դեմ է անում նրան, որպեսզի ինքն արձակի *կրծքակապի* կոճակները» (ՇՀ, 247), *ճանճախաղ*՝ «-Իսկ դուք լսե՞լ եք *ճանճախաղ*»-ի մասին, -փոխզնդապետից հարցրեց Քլարքը» (ՇՀ, 385), արջախաղ՝ «Մխալ ճանապարհով եկանք, չորացած մի գյուղում *արջախաղ* տեսանք, զգվելի տաք ջին խմեցինք» (ՎՀ, 513), *բլրակածան*՝ «Մի արևոտ կեսօր Ղազարոսն իջնում էր գերեզմանոցի *բլրակածանով*, երբ...» (ՎՀ, 112), *նախամիջանցք*՝ «Միջանցքի ծայրին կանգնած զրուցում էր *նախամիջանցքի* պահակ ոստիկանի հետ» (Վ, 92), *պահակասենյակ*՝ «Սկզբնական շրջանում Վարոսը գիշերում էր տանը, հետո, երբ ցրտերն ընկան, ծուլանում էր բաժանվել *պահակասենյակի* թիթեղե վառարանից...» (ՎՀ, 145), *կիսադեզ*՝ «Քարավանը մի սայլ էր, սայլի մեջ չոր խաշիաշի *կիսադեզի* վրա նստել էին երեք երեխա» (ՎՀ, 517), *մոշագույն*՝ «Ահա նա պատրաստվում է ինձ մոտ գալ. հագել է կարճ թևքերով *մոշագույն* ծաղկավոր զգեստը...» (ՎՀ, 443): Ս. Մելքոնյանը նկատում է, որ «եթե կոնկրետ կիրառության մեջ նոր բառը հանդես է գալիս ոճական-արտահայտչական որոշակի արժեքով, նշանակում է միանգամայն արդարացվում է դրա ստեղծումը, անկախ այն բանից, թե դա հետագայում ընդհանրա-

³ Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 224:

⁴ Տե՛ս Ջահուկյան Գ., Աղայան Է., Քոսյան Վ., Առաքելյան Վ., Հայոց լեզու, Ս պրակ, Եր., 1980, էջ 333:

նալու միտումներ կցուցաբերի, թե ոչ: Նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը»⁵: Նշանակում է, որ հեղինակային նորակազմությունները սկզբում ստեղծվում են խոսքի արտահայտչականության, պատկերավորության նպատակով, ապա՝ նպաստում են գրական լեզվի բառապաշարի հարստացմանը:

Հեղինակի երկերում տեղ են գտել նաև անհոդակապ կազմություններ: Օրինակ՝ *ծայրկոթ*՝ «Մեկյակում ամեն ինչ անփոփոխ է՝ գրասեղանը՝ թանաքի բծերով նախշված *ծայրկոթով*, ձայնանիշների տետրերը, տարտամ լույսով լապտերը...» (ՇՀ, 357), *օրսնջ*՝ «Կորյունը շարունակում էր մեզ այցելության գալ *օրսնջ*, կանոնավոր» (ՎՀ, 191), *թզողի*՝ «Ճաղատ ճաշարանատերը թթու *թզողի* է մատուցում շոֆերներին և դերվիշներին» (Վ, 63), *մյուսափնյա*՝ «Երբ ձեռքներս քսեցինք նրա մեջքին, մաշկի դողից խտացան գույները, նրբերանգները թաքնվեցին, մնացին գետի *մյուսափնյա* լեռների ժանգագույնը, հարավային...» (ՎՀ, 518): Նորակազմությունները մեծ մասամբ հեղինակի ասելիքի, հույզերի և խոհերի պատկերավոր արտահայտման, բանաստեղծական ինքնատիպ մտածողության դրսևորումներն են:

Ա. Ավագյանը հեղինակային նորակազմություններ է ստեղծում նաև նմանողության (անալոգիային) սկզբունքով⁶: Հայերենի *մահաշշուկ*, *մահաշշունջ*, *մահաշշունջ*⁷ բառերի նմանությամբ կազմում է *մահաշրշուն* նորաբանությունը, որը ստեղծում է հետևյալ պատկերը. «Աչքերի խորքում տեսա վերջալույսային և վերջանալ սկսվող օազիսային *մահաշրշուն*» (ՎՀ, 518): Այդպես նաև *հողմահառաչ* բառի նմանությամբ կազմել է *հողմաշառաչ* բառը. «Փոթորկաբեր ամպերի որոտը ծածկել էր մայիսյան երկինքը, թների պես կռացել էր Երևանի վրա և խոստանում էր մոտալուտ մի *հողմաշառաչ* երեկո» (Պ, 77, 1950): Բառային համաբանությամբ ստեղծված նորակազմությունները հաճախ պայմանավորված են լինում խոսքային միջավայրով, խոսքի բովանդակությամբ, որոնց կիրառությունը հեղինակի խոսքարվեստում ավելի հարուստ և գունագեղ է դարձնում նրա բառապաշարը:

Նոր բառեր կազմելիս Ա. Ավագյանը հաշվի է առնում նաև նորակերտ բառերի իմաստային արժեքն ու խորությունը: Ցանկալի միտքը, նկարագրվող և բնորոշվող երևույթն ամբողջությամբ դրսևորելու հատկությունը նկատի ունենալով՝ Ա. Ավագյանն ասում է. «Արձակում էլ, պոեզիայում էլ բառը միշտ պիտի իր տեղում լինի, գտնված լինի, ավելորդ չլինի»⁸: Օրինակ՝ *հաղթակազմ*՝ «Բազմության առջևից գնում էին երկու *հաղթակազմ* գեղջուկներ, նրանց ձեռքին պլակատ կար» (ՇՀ, 44), *շիկաբեղ*՝ «Տասը բռպե հետո կալանավորը նստել էր ոստիկանատան գրասենյակներից մեկում, մի ինչ-որ *շիկաբեղ* քննիչի ընդարձակ սեղանի դիմաց և լռում էր» (Պ, 111, 1958):

⁵ Մելքոնյան Ս., *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Եր., 1984, էջ 174:

⁶ Տե՛ս Եզեկյան Լ., *Ոճագիտություն*, Եր., 2003, էջ 138:

⁷ Տե՛ս Աղայան Էդ., *ԱՀԲԲ*, էջ 958:

⁸ Հովհաննես Դ., *«Ազգ» օրաթերթ*, Եր., 2009, էջ 5:

Անհատական նորակազմությունների մեջ իրենց երանգավորումով առանձնանում են *դիպլոմատիկ* (*օկագիտնալ*) բառերը, որոնց ստեղծման և գործածության հիմնական ոլորտը գեղարվեստական գրականությունն է, որի համար էլ վերջիններս կոչվում են նաև համատեքստային կամ իրավիճակային նորակազմություններ: Օրինակ՝ *սահմանապատվել*՝ «Նորակառույց տնաշարքերը, այգիները, մարգերը, *սահ-մանապատվել* էին ավելուկների խիտ շարքերով» (ՆԴ, 164), խլրտումանման՝ «Իրար խոնված բազմության մեջ ինչ-որ *խլրտումանման* բան սկսվեց» (Վ, 221), *Քարավանակեր*՝ «Քարավանատերերը նրան լավ անուն էին դրել՝ «*Քարավանակեր*» (Պ, 168, 1965), *Էտնափողոց*՝ «Մինչև ժամը վեցը տրանսպորտ չէր գտնի, գնացեք *Էտնափողոցներով*, որպեսզի ուրիշ ուստիկանների չպատահեք» (ՎՀ, 199): Բառի արժևորումը գեղարվեստական ստեղծագործության մեջ կախված է այն բանից, թե որքանով է իմաստավորված գեղարվեստորեն, ուստի հեղինակի կազմած բառերը ևս պիտի դնել նրանց կոնկրետ իրադրության մեջ⁹: Համատեքստային նորակազմությունները կարող են միանգամայն գործածություն ունենալ խոսքային տվյալ իրավիճակում, իսկ հետագայում ընդհանրապես դուրս մնալ բառապաշարի ոլորտից: Օրինակ՝ *Ձորքստան*՝ «Ձեր ինչի՞ն է պետք շունը, ի՞նչ է, *Ձորքստանի* աշխարհում եք ապրում» (ԵԷՉԵ, 15), «...դեմիդ հարևանին մտիկ, այդ Դարումանյան է, *Ջահրումարյան* է, ինչ ցավ է» (ՎՀ, 96): Եվ քանի որ լեզուն այնպիսի երևույթ է, որ բեկվում է բանաստեղծի ոճի մեջ և դառնում կոնկրետ, ուստի կարելի է ասել, որ նորակազմ բառերը նույնպես ծառայում են գեղարվեստական խոսքի ոճավորման նպատակին¹⁰:

Գրողները նոր բառեր են ստեղծում նաև այն դեպքում, երբ գրական լեզվում չկան տվյալ միտքն արտահայտելու համար անհրաժեշտ բառեր: Ըստ Արտ. Պապոյանի՝ հայոց լեզվին տիրապետող ամեն մի անհատ կարող է կազմել նոր բառեր՝ ածանցմամբ կամ բարդությամբ: Կարևորը, սակայն, բարեհնչյուն և դիպուկ, հաջող և ճիշտ բառերի կազմումն է. «Այստեղ ամեն ինչ կախված է ճաշակից, այսպես ասած՝ լեզվագագադությունից, այսինքն տվյալ լեզվի բառակազմության ներքին օրենքներն ու դրանց զարգացման հակումները ճիշտ ըմբռնելու և գործադրելու կարողությունից և, որ ամենակարևորն է, հասարակական պահանջից»¹¹: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ա. Ավագյանն օգտվել է նաև մեր լեզվի բառակազմական մեկ այլ հնարավորությունից, այսինքն՝ նոր բառեր է կազմել ոչ միայն հիմնական ձևայիններով (արմատ), այլև երկրորդական բառակազմական ձևայիններով (ածանց): Օրինակ՝ -ային վերջածանցով կազմել է *լիալուսնային*՝ «Փոկերն սկսեցինք աշխատանքը վերջացնելուց հետո, տարվեցի, որովհետև չէի կենտրոնանում. հարավային *լիալուսնային* գիշեր էր սկսվելու...» (ՎՀ, 554), *Էդեզնուտային*՝ «Հենց դրանց ճիշերից է, որ խելագարվում են *Էդեզնուտային* շիկակարմիր վագրերը...» (ԵԷՉԵ, 72), -է վերջածանցով. ձիթե՝ «Ներսում պլպլում էր *ձիթե* ճրագը, որը ծխով էր պարուրված» (Պ, 25, 1950), *Էդեզնուտե*՝

⁹ Տե՛ս Ավագյան Մ., Նաիրի Ջարյանի ստեղծագործության լեզուն և ոճը, Եր., 1961, էջ 61:

¹⁰ Տե՛ս Համբարձումյան Վ., Լեզու, ոճ, խոսք, Բանբեր, Եր., 1981, էջ 182-191:

¹¹ Պապոյան Արտ., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Եր., 1970, էջ 88:

«Նստում էր եղեգնուտից կես կիլոմետր հեռու, խփում էր *եղեգնուտե* իր աշխարհից հիմարաբար դուրս եկած վագրին, և որսը շալակած տուն գնում» (Պ, 147, 1965):

Ըստ Մ. Թևանյանի՝ Ա. Ավագյանը խառնվածքով բնանկարիչ չէ արձակագրության մեջ: Քաղաքային պեյզաժը նրա ստեղծագործություններում ավելի հաճախ է երևում և ավելի սերտորեն է ներդաշնակվում ասելիքի, խոհի, զգացումների աշխարհին: Սակայն բազմաթիվ գործերում գրողը գնում է դեպի բնությունը, նրա գույների ու բույրերի, լուսության կամ աղմուկի մեջ փնտրում պատասխանը այն հարցերի, որոնց այնքան հետամուտ են իր հերոսները: Բնության այս կամ այն երևույթը նկարագրելիս հաճախ է կարիք զգացվում ավելի խտացված ներկայացնելու գույները, տեսանելի դարձնելու նկարագրվող առարկան կամ երևույթը¹²: Իրենց իմաստով և գունային ներդաշնակությամբ Ա. Ավագյանի գեղարվեստական խոսքում առանձնանում են գունային նրբերանգներ արտահայտող բաղադրությունների նոր կազմությունները, որոնք օգնում են բնապատկեր ստեղծելուն: Օրինակ՝ *դեղնամանիշակագույն*՝ «Աշնանավերջի արևը դանդաղ ծածկվում է *դեղնամանիշակագույն* լեռնալանջերի ետևում» (Պ, 3, 1958): Ուշադրության են արժանի *գորշ* բառի համադրությամբ կազմված այն նորակազմ բառերը, որոնք հերոսների, բնության երևույթների կամ որևէ առարկայի արտաքին նկարագիրն են ցույց տալիս: Օրինակ՝ *գորշ-կապտագույն*՝ «Այդ մի սոսկալի ծառ էր՝ *գորշ-կապտագույն* բնով, ձեռքերի պես դեպի երկինք պարզած լերկ ճղներով...» (ՆԴ, 218), *գորշ-արևագույն*՝ «Նայեց քաղցից անզգայացած այդ մարդկանց դեմքերին, որոնց վրա արտացոլվում են կրակի երբեմն նարնջագույն, երբեմն *գորշ-արևագույն* ցուլերը» (Պ, 78, 1958), *գորշադեղնագույն*՝ «Հին շենք էր՝ դեպի փողոց բացվող երկու վանդակապատ լուսամուտով և *գորշադեղնագույն* դռնով» (Պ, 46, 1958), *գորշադեղնավուն*՝ «Գնդապետ Ազարը օփիումից ցամաքած, *գորշադեղնավուն* մաշկով, հիսունն անց մի մարդ էր» (ՇՀ, 132):

Այսպիսով՝ Ա. Ավագյանի արձակում գործածված և բառարաններում չվկայված նորակազմ բառերի տեղին գործածությունները հարստացնում, վառ ու տպավորիչ են դարձնում, նոր իմաստներ և գունային նրբերանգներ են հաղորդում գրողի լեզվին՝ նպաստելով արտահայտչականությանը: Վերջիններիս քննությունը ցույց է տալիս նաև, որ հեղինակը հմտորեն է օգտվել հայոց լեզվի բառակազմական հնարավորություններից, տարբեր ձևույթների համադրումով կազմել է պարզ, բարդ և ածանցավոր բառեր, որոնք աչքի են ընկնում իրենց իմաստային խորությամբ և ինքնատիպությամբ:

¹² Տե՛ս Մ. Թևանյանի Մ., *Արիզ Ավագյան, Եր., 1999, էջ 56*:

НЕОЛОГИЗМЫ В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА

___ *Резюме* ______ *С. Егиазарян* ___

Незафиксированные в словарях и употребляемые в прозе А. Авагяна неологизмы обогащают, делают ярким и впечатлительным язык автора, придают ему новые значения и „цветовые“ оттенки, способствуя выразительности. Изучение этих неологизмов показывает также, что автор умело использовал словообразовательные возможности армянского языка, сопоставляя различные морфемы, составил простые, сложные и префиксальные слова, которые становятся заметны благодаря их смысловой глубине и своеобразности.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Եղիազարյան Մաթենիկ Էմիլի - ՀԱՊՀ լեզուների գիտակրթական կենտրոնի
հայոց լեզվի ամբիոն, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
E-mail: esatenik@mail.ru:*

ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ
ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Լեզուն մտածողության արտահայտման միջոց է, որով դրսևորվում են այն կրող ժողովրդի (ազգի կամ ցեղի) լեզվամտածական գործունեությունը, տվյալ լեզվին բնորոշ առանձնահատկությունները: Լեզվական նյութը հնարավորություն է տալիս պարզելու կոնկրետ ժամանակաշրջանում կամ ընդհանրապես այդ լեզուն կրող ժողովրդի հասարակական և սոցիալական զանազան հարցեր: Այս տեսակետից կարևոր է հայերեն *անուն-ազգանուններում* սեռի քերականական կարգի դրսևորման /*իմաստային ու քերականական*/ և դրա արտահայտման միջոցների ուսումնասիրությունը, յուրահատկությունների բացահայտումը:

Մեր նպատակն է բացահայտել հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքից ժառանգած քերականական կարգերի՝ լեզվի հետագա զարգացման արդյունքում կրած փոփոխությունները, ձևափոխումն ու ձևավորման կամ արտահայտման յուրահատկությունները, հիմք-լեզվից տարբեր ձեռքբերումներն ու քերականական տարբերությունները:

Ժամանակակից բազմաթիվ հնդեվրոպական ու սեմական (արաբերեն) լեզուներում գոյություն ունի *քերականական սեռի* կարգը՝ ըստ որի էլ արտաքին աշխարհի առարկաները բաժանվում են *արական, իգական, չեզոք* (ռուսերեն, գերմաներեն) կամ *արական, իգական* (ֆրանսերեն) սեռերի, ինչը, եթե լեզուների զարգացման նախնական շրջանում հիմնված էր համապատասխան տրամաբանական կատեգորիայի վրա, ապա հասարակական գիտակցության զարգացման որոշ, ավելի բարձր աստիճանում արդեն իրական սեռի ճանաչման հետևանքով զրկվել է իր տրամաբանական հիմքից և դարձել է սոսկ քերականական երևույթ: Այս պատճառով էլ շատ լեզուներ, որոնք նախկինում ունեցել են քերականական սեռ, հետագայում կորցրել են այն, «մինչդեռ *բնական սեռի կատեգորիան* արտահայտելու համար ստեղծել և ստեղծում են նորանոր միջոցներ»¹:

Հայերենի քերականություններում հունաբան և լատինաբան դայրոցի ներկայացուցիչների կողմից անընդհատ փորձ է արվել ներմուծել *սեռի քերականական կարգը*, ինչը բնորոշ է եղել հնդեվրոպական հիմք-լեզվին, բայց հայերենը, ի տարբերություն ցեղակից այլ լեզուների (գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, մասամբ՝ անգլերեն), զարգացման ընթացքում կորցրել է այն:

Հայերենի ինքնատիպ քերականությունների և ընդհանրապես գրաբարի քերականությունների գաղաթնակետը *Արսեն Բագրատունու* քերականությունն է: Նրա «*Հայերեն քերականությունն ի պէտս զարգացելոց*» (1852) աշխատությունում (որը բաղկացած է 4 գրքից և 1 հավելվածից) լուրջ ուշադրության է արժանացել սույն հարցը:

Անվան սեռի մասին Բագրատունին նկատում է, որ հայերենում այն արտահայտվում է երեք ձևով՝ *բառիմաստի տարբերությամբ*՝ արու նշանակողը արական սեռի է, էգ նշանակողը՝ իգական, մնացածները՝ չեզոք, *բառիմաստի նույնության* դեպքում՝ ավելացվում է սեռի տարբերություն նշանակող որևէ համապատասխան բառ՝ *այր մարդ – կին մարդ, արու առիւծ – մատակ առիւծ և իգական սեռ են նշում -ուրհի կամ -ուհի* (հասարակ և հատուկ անունների համար), *անոյշ*

¹ Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 486:

(անուշ – Ա.Ա.) և *դուխտ* (միայն հատուկ անունների համար) բառերն ու մասնիկները²:

20-րդ դարի լեզվաբաններից Ա. Մուրվալյանը, Գ. Զահուկյանը և ուրիշներ, իրենց ուսումնասիրությունների համար հիմք դարձրեցին հենց Ա. Բագրատունու առաջ քաշած դրույթները*, որոնք ի մի բերելով՝ կարող են եզրակացնել, որ հայերենը չունի սեռի քերականական կարգ, բայց, լինելով հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող, այդ լեզվաընտանիքում որպես ինքնուրույն ճյուղ հանդես եկող լեզու, չի բացառվում, որ գուցե հնագույն ժամանակներում ունեցել է սեռի քերականական կարգ, որը չի պահպանել իր զարգացման ընթացքում, և 5-րդ դարից մեզ ավանդված գրավոր-գրական լեզվում տեսնում ենք արդեն *բնական սեռի տարբերական միայն իմաստային-բառական դրսևորումներ*, որոնք առկա են նաև այսօր, բայց սեռի տարբերական առանձին ցուցիչներ չեն եղել և այժմ էլ չկան հայերենում, ինչպիսիք այսօր կան հնդեվրոպական լեզուներից *գերմաներենում (որոշյալ և անորոշ հոդերը* արական, իգական և չեզոք սեռերի համար՝ *der-ein, die-eine, das-ein*, ընդ որում՝ գերմաներենում հոդերից բացի կան նաև *ածանցներ*՝ արական (*er*), իգական (*in*), չեզոք (*chen, lein*) իմաստների համար), *ռուսերենում* (он, она, оно), *ֆրանսերենում* (արական և իգական սեռերի համար՝ *le* և *la*) նաև լատիներենում, հին հունարենում և այլն, որոնցում հստակորեն տարբերակված են կանացի և տղամարդու սեռ հասկացությունները՝ համապատասխան մասնիկավորման շնորհիվ: Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներից *անգլերենը* նույնպես կորցրել է քերականական սեռը՝ այն պահելով միայն դերանվան III դեմքի մեջ (արական՝ *he* «նա, он», իգական՝ *she* «նա, она», չոզոք՝ *it*, իսկ բնական սեռն արտահայտում է հայերենի նման):

Ի մի բերելով փաստերը՝ կարող ենք ասել, որ հայերենում բնական սեռն արտահայտելու համար կա երկու եղանակ՝ *բառակազմական (-ուհի, հնում նաև՝ դուխտ* ածանցները) և *իմաստային-իմաստաբանական* (բառերի իմաստային խմբերը՝ յուրաքանչյուրն իր սեռին ու տեսակին համապատասխան):

Հայերենում կա սոսկ մեկ հիմնական բաժանում՝ բառային արտահայտությամբ՝ *կին (աղջիկ)* և *տղամարդ (տղա)*: Նման իմաստային տարբերակում առկա է նաև կենդանական աշխարհի մի շարք անվանումներում, ինչպես՝

կուլ (էգ) – ցուլ, էգ (արու)

*մարի (էգ աղավնի) – վարուժան (արու աղավնի)**

սակայն նման տարբերակումը համատարած դրսևորում չունի և ընդգրկում է մասնակի փաստեր:^{**}

Այսպիսով, կարող ենք ասել, որ հայերենը, ի տարբերություն հնդեվրոպական որոշ լեզուների, չի ունեցել բնական սեռի արտահայտման առանձին ցուցիչ(ներ)՝ բացառությամբ պարսկերենից փոխառյալ *-ուհի* ածանցի, բայց ունեցել և պահպանում է *սեռի իմաստային-բառական* տարբերակումը, որը, սակայն, չի կարող հիմք հանդիսանալ հայերենում արհեստականորեն քերականական սեռի

² Բագրատունի Ա., Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 37-41:

* Տե՛ս Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 303-304, Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջեր 142, 189, 310:

* Հայերենում սեռի քերականական կարգի հարցին, արտահայտման միջոցների խնդրին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում:

** Տե՛ս Ավագյան Ա., Գենդերը և լեզվաբանությունը, Ուսանողների և երիտասարդ դասախոսների VI հանրապետական խորհրդածողովի նյութերի ժողովածու, Եր., 2007, էջ 2:

տարբերական համար, ինչը փորձում էին անել հունաբան և լատինաբան դպրոցի ներկայացուցիչները:

Առաջադիր հարցի տեսանկյունից ուշադրության է արժանի հատկապես (կանանց) անձնանունների քննությունը, նրանց իմաստների ու կազմության յուրահատկությունների դիտարկումը, ինչպես լեզվի նախորդ շրջաններում, այնպես էլ այժմ: Նշվեց, որ հայերենը չունի *բնիկ իգական իմաստի արտահայտման ցուցիչ ածանցներ*, բացառությամբ հին շրջանում պարսկերենից փոխառված *-ուհի* ածանցի, որը գործածվել և այժմ էլ գործածվում է «*աղջիկ, կին, իգական սեռի ներկայացուցիչ*» նշանակությամբ՝ սովորական անուններից կազմելով իգական սեռի անուններ:

Մինչ *-ուհի* ածանցի փոխառումը, հին հայերենում իգական անունների կերտման գործում ակտիվ է եղել *դուխտ* բառը, որ նշանակել է *դուստր, աղջիկ*: Այս արմատը ևս փոխառություն է, հավանաբար, պահլավերենից կամ պարսկերենից, քանի որ այդ երկուսում էլ ունի նույն *dux* ձևը, այդ ձևն է նաև քրդերենում: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, այդ լեզուներում նույնպես այս արմատը «ճիշտ նման հայերենի՝ գործածում է *իգական հատուկ անուններ* շինելու համար»³:

Եթե սկզբնական շրջանում *Մահակադուխտ, Շահանդուխտ, Որմիզդուխտ, Վարազդուխտ, Վարդանդուխտ* և այլ անուններում այս արմատը պահպանում էր իր հիմնական, այն է՝ *Մահակի՝ Շահանի՝ Որմիզդի՝ Վարազի՝ Վարդանի դուստր* իմաստը, ապա ժամանակի ընթացքում բառիմաստի մթագնման հետևանքով բառը ձեռք է բերել ածանցային իմաստ, որը կցվելով արական սեռի անուններին՝ դրանցից կերտել է իգական անձնանուններ՝ *Ջրվանդուխտ, Միհրանդուխտ, Մանդուխտ, Քույրիդուխտ* և այլն: Սակայն, եթե համեմատելու լինենք այս երկու իգականակերտ ցուցիչները, կտեսնենք հետևյալ տարբերությունները:

1. *Դուխտ* արմատը կամ ածանցը այժմ անկենսունակ, քարացած ձև է, որ պահպանվել է միայն հնակազմություններում, *ուհի*-ն կենսունակ է նաև այսօր:
2. *Դուխտ*-ը ավելացել է միայն տղամարդկանց անձնանունների վրա՝ դրանցից կերտելով իգական անձնանուններ, այնինչ՝ *ուհի* ածանցը իգական սեռի անուններ է կերտում:

ա) արական սեռի անձնանուններից իգական սեռի անձնանուններ՝

Տիգրան – Տիգրանուհի Արմեն – Արմենուհի

բ) որոշ ածականներից իգական սեռի անձնանուններ և անվանումներ՝

սուրբ – Սրբուհի և սրբուհի (սուրբ կին նշանակությամբ)

ազնիվ – Ազնվուհի և ազնվուհի (ազնիվ կին նշանակությամբ)

գ) ցեղանուններից կամ ազգերի անուններից իգական սեռի անուններ՝

լեն – լենուհի; հայ – հայուհի; թուրք – թրքուհի; իտալացի – իտալուհի

դ) անձի զբաղմունք, վիճակ, մասնագիտություն ցույց տվող կամ միջանձնային հարաբերություններ արտահայտող հասարակ անուններից իգական սեռի հասարակ անուններ՝

գեղջուկ – գեղջուհի

խոհարար – խոհարարուհի

ուսուցիչ – ուսուցչուհի

բարեկամ – բարեկամուհի

նկարիչ – նկարչուհի

իշխան – իշխանուհի

Քննվող հարցի տեսակետից առավել ուշագրավ են *հայերեն ազգանունները*, որոնց հիմքը գերազանցապես *տղամարդկանց/արական սեռի/ անվանումներն են՝ -յան* վերջավորության հավելումով: Ինչպես՝ *Արսենյան, Դանիելյան,*

³ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.1, Եր., 1971, էջ 682:

Հակոբյան, Հովհաննիսյան, Կիրակոսյան և այլ: Հանդիպում են նաև տղամարդկանց /արական սեռի/ անվանում+ -ունց, -ունի. ինչպես՝ Մաքունց, Թոխունց, Աստունի /Աստվածատուր <աստ + ունի, բայց նաև՝ Աստոյան (ՏՄ, ՀԱԲ, էջ 25)/, ինչը այնքան էլ տարածված չէ, այլ որոշակի հատվածի (Տավուշ, Արցախ և սահմանամերձ մի շարք բնակավայրերի) բնակչության ազգանուններում ենք հանդիպում: Ռուսաստանաբնակ հայերի շրջանում առավել տարածված է *-յանց* վերջավորությունը. Մանուկյանց (ՏՄ, ՀԱԲ, էջ 25), Հեքիմյանց //Հեքիմյան(ՏՄ, ՀԱԲ, էջ 201)/: Իհարկե, ասվածը չի բացառում, սակայն, այլ հիմքերով ազգանունների գոյությունը, քանի որ ազգանվան հիմք կարող է լինել մարդու մասնագիտությունը կամ զբաղմունքը, բնակության վայրը, մականունը և այլ անվանումներ, կոչումներ և հանգամանքներ, ինչը, սակայն, մեր ուսումնասիրության նպատակից դուրս է:

Քննարկվող հարցի տեսանկյունից ուշագրավ հանգամանք է այն, որ մասնագիտություններից ազգանվան հիմք են հանդես գալիս գերազանցապես տղամարդու զբաղմունք, մասնագիտություն հանդիսացողները, որոնք, ժամանակակից աշխարհի գլոբալացման արդյունքում գուցե դարձել են նաև կանացի զբաղմունք, բայց կոնկրետ ազգային-ազգագրական աղբյուրների տվյալներով, հասարակական ընկալմամբ բնորոշ են եղել արական սեռի ներկայացուցիչներին, ու էական չէ՝ արմատը բնիկ հայեցի, թե փոխառյալ ձև է: Այսպես՝ Սւք/կ/արյան/Ասքար՝ ար., արաբ.«գինվոր» + յան**, Դարբինյան, Դուրգարյան, Կոշկակարյան և այլն: Այս իրողությունը ազգային խոր արմատներ ունի և պայմանավորված է հայ իրականության մեջ տղամարդու դերի առաջնայնությամբ ու կարևորությամբ: Ընտանիքը փոքր հասարակություն է, հայ ընտանիքի գլուխ կանգնած է տղամարդը: Այս գաղափարն արտահայտված է նաև հայկական առած-ասացվածքներում, թեև վեր խոսքերում /Տղամարդը գլուխն է, կինը՝ պարանոցը և այլն/: Հայ հասարակությունն իր անդամներին «խմբավորում» ու «ճանաչում» է ազգի հիմնադիր մեծի /տղամարդ ավագի/ անունով, որի անունով էլ կոչվում է տոհմը. Կիրակոսենք, Մկրտիչենք և այլն: Գյումրեցին /ինչպես նաև լոռեցին, դիլիջանցին և այլն/ նման դեպքերում կհարցնի՝ «*ն՝մոնցեն ես*», այսինքն՝ *ն՝ր/ի/կամ ն՝ւմ* տոհմից ես: Ասվածը, սակայն, չի բացառում *իգական անձնանուն, իգական սեռին բնորոշ մասնագիտության, մակդրային և այլ հիմքով ազգանունների գոյությունը հայերենում*: Օրինակ՝ Աստղիկյան /Աստղիկ՝ իգ.բնիկ, ԺԵ դ. + յան***, Թամարյան /Իգ.հինհր. «արմավենի» Ժ դ./, Մանասյան Մանամ իգ. արաբ. «պատկեր, գեղեցկություն, սիրունի», ԺԴ դ. + յան/, Մանուշակյան/մանիշակ՝ ծաղկանուն + յան/ԺԴ, հետագայում արդեն սրանից առաջացել է Մանուշյան-ը՝ Մանուշակյան> Մանուշակ> Մանուշ՝ ԺԶ դար* և այլն: Այս և նման օրինակներում որպես ազգանվան հիմք հանդես եկած կանացի անուններից ու անվանումներից կարելի է եզրակացնել, որ այն կանանց կամ իգական սեռի ներկայացուցիչների անուններն են դարձել ազգանվան հիմք, որոնք էական դեր ու նշանակություն են ունեցել հայ իրականու-

* Տե՛ս Ավետիսյան Տ., Հայոց անձնանունների բառարան, Եր., 2000, էջ 25:

** Նույնը:

*** Նույնը:

* Նույն տեղում, էջ 127, 309, 225:

թյան մեջ, հասարակական-քաղաքական կյանքում՝ սկսած դեռևս վաղնջական շրջանից /ինչպես՝ *Աստղիկ դիցուհու, Թամար թագուհու* անունները և այլն/:

Ասվածը փաստում է, որ հայերենում անուն-ազգանունների մեջ արտահայտվող սեռային տարբերակվածությունը ինքնանպատակ կամ պատահական դրսևորման արդյունք չէ, այլ ունի ազգային ու մշակութային խոր արմատներ և պայմանավորված է ժողովրդական մտածողությամբ, հասարակական կյանքի ներքին կառուցվածքի օրինաչափությամբ ու տրամաբանությամբ:

ОТОБРАЖЕНИЕ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ РОДА В АРМЯНСКИХ ИМЕНАХ И ФАМИЛИЯХ

___ *Резюме* ___

___ *А. Авагян* ___

В армянском языке нет грамматической категории рода, но его принадлежность к индоевропейским языкам и, являясь отдельным языковым направлением, не исключается, что раньше эти категории были. Для выражения естественного пола существуют разные средства, которые условно можно разделить на две группы: словообразовательные (*-lɪhɪ*, в древности также *դլի/լիւ* аффиксы) и семантические (семантическая группа слов в соответствии со своим типом и родом как *կնւ* – *ցու*, *եգ* и т.д.). В армянском языке только одна группа – по значению слова: женщина (девочка) и мужчина (мальчик).

Исследование собственных имен (женских) показывает, что армянский язык не имеет аффиксов, показывающих на принадлежность к женскому полу, за исключением *-lɪhɪ* аффикса, заимствованного с персидского языка, который из обычных слов образует имена женского рода. Основа армянских фамилий в основном имена мужчин с добавлением *-յան* (-ян) окончания (*Արսենյան, Կиракосյան* и т.д.), иногда *-ւնց* (-унц), *-ւնի* (-уни) или *-յանց* (-янц) окончаний, как *Տակունց, Աստունի, Աստյան, Մանուկյանց*. Данное явление обусловлено приоритетом и важностью мужчин в армянской реальности. Из специальностей основами для фамилий являются только увлечения мужчин. Например, *Դարբինյան, Կոշկաքանյան* и др.

Иногда встречаются фамилии, основы которых являются женские имена (*Աստիկյան, Թամարյան, Տանայան, Մանուշակյան/Մանուշյան* и др.), а также названия цветов. Между прочим, основы для фамилий стали имена тех женщин, которые сыграли существенную и важную роль в жизни Армянского народа. *Աստիկ* – имя графини в основе фамилии *Աստիկյան, Թամара* – имя королевы в основе фамилии *Թամարյան* и др.

Итак, в именах и фамилиях армянского языка, выражающих половую разницу, имеют национальные и культурные глубокие корни и обусловлены национальным мышлением, восприятием и воображением народа, структурой внутреннего мышления общественной жизни.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավագյան Արմենուհի Արամուշի - Բ.Գ.Թ., դոցենտ, Մ. Նալբանդյանի անվան ԳՊՄԻ հայոց լեզվի ամբիոն, E-mail: arm5_83_7@mail.ru

Ֆրիդրիխ Նիցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտը» ստեղծագործությանը շատերն են անդրադարձել: Գայթակությունից չի խուսափել նաև Կոստան Զարյանը: Գրողն իր ստեղծագործություններում ստեղծել է հերոսամարդու իր ընկալած իդեալը՝ ցանկանալով կամ երազելով նրա ծնունդը:

«Իմ կարեկցանքը բնավ խաչելություն չէ», - ասում է Ջրադաշտը:¹ Գրողը նույնպես Հիսուսին ընկալում է որպես մեծ պայքարողի ու ստեղծագործողի, ով տարավ ամենամեծ ու ամենադժվարին պայքարը և հաղթեց ինքը իրեն: Նրա մեջ նստած հոգևորը հաղթեց նյութականին. Հիսուսը կարողացավ ներքին փոխակերպություն ապրել:

Իր հերոսամարդուն կերտելիս Զարյանը չի բավարարվում միայն Քրիստոսի կերպարով: Ըստ նրա՝ հեթանոս աստվածների մարմնավորումը՝ Արան, նույնպես մեծագույն փոխակերպվող է: Նա իր մեջ կրում է հեթանոս աստվածների արևային բնույթը: Կ. Զարյանը կարծում է, որ գերմարդ հասկացության հիմքում ընկած է Քրիստոսի և Արայի ներդաշնակ ամբողջությունը:

Արան առնականության, տիեզերածնության և արևային ուժի խորհրդանիշն է՝ ուժ և կամք: Քրիստոսը միտք է, ոգի և գաղափար: Քրիստոսը մարդու ներքին լույսն է, որի միջոցով իմաստավորվում է կյանքը, ոգեղեն է դառնում, և այլակերպում է մարդկային էությունը: Ցույց տալով մեր ժողովրդի հին ու նոր աստվածների հոգևոր վերափոխման ուժը՝ Զարյանը հավաստում է, որ այդպիսի աստվածներ ծնած ժողովուրդը կարող է հոգևոր վերափոխում ապրել՝ լինել շարունակելու և արարելու համար: Կ. Զարյանը կերտում է նոր մարդու կերպարը՝ Արարատյան մարդուն՝ հիմնավորելով, որ նա պետք է ծնվի մեր երկրում:

Նիցշեի գերմարդն ասում է. «Գերմարդն է իմաստը երկրի»:²

Որպեսզի պատճառաբանի, թե ինչու Արարատյան մարդը պիտի ծնվի Հայաստանում, գրողը նախ կարևորում է երկրի և ժողովրդի միասնությունը:

«Անցորդը և իր ճամբան» վեպի հերոսին հայերը թվում են ժայռերի մեջ քանդակված արձաններ, իսկ նրանց դեմքերի վրա կարելի է դարերի պատմությունը կարդալ: Անցորդը տեսնում է նաև, որ Հայաստանում «դաշտ, լեռ, ժայռ, մարդ ու կով մի կտորից են շինւած և նոյն նայածքը ունին: Դա մեր բարեբախտությունն է, երկնային օրհնութիւնը, որովհետև դիմագուրկ չենք»³: Ըստ Զարյանի՝ միայն այն դեպքում է հնարավոր արարման խորհուրդը, երբ երկիրն ու ժողովուրդը ամբողջություն կազմեն:

¹ Նիցշե Ֆ., *Այսպես խոսեց Ջրադաշտը*, Եր., 2015, էջ 53:

² Նույն տեղում, էջ 51:

³ Նույն տեղում, էջ 162:

Հայաստանը յուրօրինակ երկիր է, նրա յուրօրինակությունը ոչ միայն բնությունն է կերտել, այլև մարդիկ: Այդ յուրօրինակությունը դրսևորվում է մանավանդ մշակույթի մեջ: Յուրաքանչյուր ժողովուրդ ծնում է սեփական դիցավեպը՝ ըստ իր աշխարհընկալման՝ նրանում արտահայտելով իր ոգին ու ինքնությունը, իր բարոյականությունը, երազանքը և սերը երկրի նկատմամբ: Այս բոլորը Ջարյանն ամբողջացնում է մեկ բառով՝ ոճ. «Ոճը՝ ցեղին պատկերն է, զինանշանն է, թագն է, զարդարուած թանկագին և խորհրդապահ քարերով»:⁴ Մեր ժողովուրդը կարողացել է ստեղծել սեփական ոճը, այդ պատճառով էլ գրողը հավասարության նշան է դնում հայկական և Օսֆալդ Շպենգլերի նշած ութ մշակույթների միջև:

Ներկայացնելով գերմարդու իր ընկալումը և այն անվանելով Արարատյան մարդ, ապացուցելով, որ մեր երկիրն ու ժողովուրդը ի վիճակի են ծնելու գերմարդուն՝ Կոստան Ջարյանն ուսումնասիրում է հայ հոգին: Նա ցանկանում է ապացուցել, որ հայ մարդը իր մեջ կրում է այն աստվածայինը, որը պետք է ծնունդ տա Արարատյան մարդուն:

«Նաւը լերան վրայ» վեպի նախաբանում Ջարյանը գրում է, որ գիրքը մի քանի հայ հոգիների պատմությունն է: Նրանցից Միշա Թումանյանը, Բաբկեն Միրանյանը Արարատյան մարդու գալստյան ապացույցն են, իսկ Արա Հերյանը նրա նախատիպն է: Նրանք երեքն էլ օտար երկրներում մեծացած, կրթված, օտար մշակույթը իրենց մեջ կրող հայեր են, ովքեր շատ աղուտ պատկերացում ունեին, թե ինչ է հայը, հայրենիքը: Հայրենիք-ժողովուրդ անքակտելի կապը նրանց արյան մեջ էր նստած, ու հենց դրա շնորհիվ էլ հայտնվում են Հայաստանում, և երկրի միջոցով տեղի է ունենում նրանց կերպարանափոխությունը: Նրանք ճանաչում են երկիրը և ժողովրդին ու դրա միջոցով հայտնաբերում են իրենց. կատարվում է ամենակարևորը՝ ինքնաճանաչումը:

«Ողջ այս ծանրագույնը իր վրա է վերցնում տոկուն ոգին, ուղտի հանգույն, որը բեռնված դեպի անապատ է փութում. այդպես նա դեպի իր անապատն է փութում», -ասում է Զրադաշտը:⁵ Այս երեք հերոսները կարողանում են հրաժարվել իրենց նախկին ես-ից, քանի որ ճանաչել էին բարձրագույն արժեքներ: Նրանք հայտնաբերում են իրենց նոր, իսկական ես-ը, որը նաև ժողովրդի մասը լինելն էր և ժողովրդին իրենց մեջ կրելը: Տեղի էր ունեցել արժեքների վերարժեքավորում, որն այնքան կարևոր է կերպարանափոխության ընթացքում: Միշա Թումանյանն ու Բաբկեն Միրանյանը իրենց գոհաբերում են հայրենիքին, իսկ Արա Հերյանը դեռ պիտի շարունակեր կերպարանափոխության ընթացքը. պիտի հաղթեր ինքը իրեն: Իրեն գտնելու ճանապարհի սկզբին նա հանդիպել էր Պետրոս Մարկին՝ Արևելքի իմաստասիրությունն իր մեջ կրող փիլիսոփային, որը վեպում հանդես է գալիս որպես ուսուցանող: Նրանց հանդիպման ժամանակ հասկանում ենք, թե ինչ մեծ առաքելություն է ծանրացած հերյանների ուսերին՝ հետ բերել հույսը, լուսավորել և ցույց տալ ապագայի ճանապարհը: Նա պատահաբար չէր հայտնվել Հայաստանում. ապրած կյանքը, կյանքի վայրիվերումները նախապատրաստել էին նրան և

⁴ Ջարեան Կ., Հայրենիքին սիրտը, «Մեհեան», Պոլիս, հ. 3, 1914, էջ 39:

⁵ Նիցշե Ժ., նշվ. աշխ., էջ 70:

կարևոր մղում դառնալով՝ բերել հայրենիք: Կերպարանափոխության ընթացքը ստիպում է Հերյանին ազատվել-մաքրվել անցյալի արժեքներից, որոնք բեռ էին դարձել ինքնամաքման և եսի ամբողջացման ճանապարհին: Նա թողնում է քաղաքակիրթ աշխարհը և գնում լեռները, ճիշտ ինչպես Զրադաշտը. «Երբ բոլորեց Զրադաշտի երեսուն տարին՝ նա թողեց իր հայրենիքը և լիճն իր հայրենյաց և լեռները գնաց»:⁶

Հերյանը հեռանում է քաղաքից և ապրում թափառականի կյանքով՝ վերագտնելով իր ինքնությունը: Կերպարանափոխման շնորհիվ Հերյանը իր երկրի և ժողովրդի հետ դարձավ ամբողջություն: Հերյանի վերափոխումից հետո «Գիւղերում նրան ընդունում էին բարի և ներողամիտ ժպիտով, ինչպես ընդունում են Աստուծոյ մարդկանց՝ մուրացկաններին, երգասաններին, գիժերին: // Ինչպես ընդունում են բուքը...ինչպես ընդունում են նախագարնանային առաջին խենթ հովը. յանկարծ, բռնկւած արևի ճառագայթները կամ ճանապարհից շեղած, շմի առջև բառաչող այծը»:⁷

Ազատվելով քաղաքակրթության կապանքներից, որոնց մասին մինչ այդ չէր էլ գիտակցում, Հերյանը տերը դարձավ սեփական ես-ի, իսկ ինքնագիտակցման միջոցով՝ ամենակարևոր հարստությանը՝ ազատությանը:

Հերյանը կարողացավ անցնել Զրադաշտի ճառած երեք կերպարանափոխությունները: Արհամարհելով կյանքի ընթացքում կուտակած իմաստությունը՝ հասավ հոգու ճանաչողության՝ դրա համար ընտրելով դժվարագույն ճանապարհ՝ միայնանալը՝ բոլորից և ամեն ինչից հրաժարվելը:

Երկրորդ կերպարանափոխությունը նույնքան դժվար էր. նա կարողացավ «ոչ» ասել «դու պարտավոր ես»-ին և ընդունել «ես ուզում եմ»-ը: Ընդունվածն ու պարտադրվածը հաղթահարելը նման է ամենամեծ ու ամենածանր ճակատամարտում տարած հաղթանակի, որի արդյունքը ներքին ազատության ձեռքբերումն է և ահատականություն դառնալը: Արա Հերյանը կարողացավ հաղթանակով դուրս գալ այդ ճակատամարտից:

Երրորդ կերպարանափոխությունը մանուկ դառնալն է: Երբ Հերյանը մոռացավ հին արժեքները, միտքն ու հոգին մաքրվեցին հասարակության պարտադրածից: Նա այլևս նույնքան մաքուր ու անմեղ էր, որքան նոր աշխարհ եկած մանուկը: Նա պատրաստ էր նոր սկզբի:

Ճիշտ է, Հերյանի օրինակով Կոստան Զարյանը ցույց է տալիս, որ հնարավոր է գերմարդու ծնունդը, բայց գերմարդը կծնվի միայն այն դեպքում, երբ ժողովուրդը պատրաստ կլինի նրան ծնել: Գրողը ցավում է, որ մեր ժողովուրդը բազմաթիվ անգամներ է անցել Քրիստոսի Գողգոթայի ճանապարհով, բայց այդ տառապանքը հոգեպես չի վերապրել, որ կարողանա հաղթահարել իրեն այնպես, ինչպես Քրիստոսը կարողացավ սովորականը, թերին, կասկածելին հաղթել իր մեջ ու հերոսանալ: Երբ որ մենք կարողանանք մեր հոգում նստած ստրկությունը և ծուլությունը հաղթահարել, որի համար ներքին տառապանք ու պայքար է պետք,

⁶ Ֆ. Նիցշե, նշվ. աշխ., էջ 47:

⁷ Զարեան Կ, Նաւը լեռան վրայ, էջ 543:

կհերոսանանք, կփոխակերպվենք, ինչպես Հիսուսը: Այդ ժամանակ կծնվի նոր՝
Արարատյան մարդը:

АРАРАТСКИЙ ЧЕЛОВЕК: МЕЧТА?

____ *Резюме* ____

____ *А. Оганесян* ____

Костан Зарьян в своей прозе создал образ идеального человека - называя его Араратским человеком. Этот образ он создал под влиянием произведения Фридриха Ницше “Так сказал Заратустра”. К. Зарян считает, что в основе понятия сверхчеловека лежит гармоничная целостность Христа и бога Ара. По восприятию писателя, Христос герой, который смог победить самого себя и смог пережить великое перевоплощение. Ара также великий перевоплощенец, символ солнечной силы и мужественности, символ силы и воли. Христос это разум, дух и идея. Араратский человек должен родиться в Армении, потому что природа и люди нашей страны формируют осмысленную целостность, результат которого уникальная культура. Армянский человек несет в себе божественное, которое должно порождать Араратского человека. В качестве доказательства, он создает прототип будущего сверхчеловека - образ Ара Герьяна.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովհաննիսյան Անահիտ Գուրգենի- ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ,

E-mail: anahit-1957@mail.ru

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

*ՀՄԽՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XXդ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ
(Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի օրինակով)*

Հայտնի է, որ հասարակության դասային շերտավորումն արտահայտվում է տնտեսական, ազգակցական, ընկերավարական, կրոնական, քաղաքական և հասարակական այլ հարաբերությունների բնույթով:

Կապիտալիզմի զարգացումն Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառում, էական փոփոխություններ է մտցնում ազգաբնակչության, մասնավորապես հայերի սոցիալական կազմում: Գավառի աշխատունակ բնակչության ընդհանուր թվում առաջին հերթին ավելացավ առևտրականների և արհեստավորների, մասամբ բանվորների տեսակարար կշիռը: Արտադրահարաբերությունների բարդացումը, բնամթերայինից աստիճանական անցումն ապրանքայինի հանգեցնում են գյուղացիների և քաղաքացիների կենցաղավարման տարբերության մեծացմանը: Տեղի է ունենում ազգային բուրժուազիայի և բանվոր դասակարգի ձևավորում, որ մինչ այդ գոյություն ուներ: 1897թ. առաջին համառոտական մարդահամարի տվյալներով՝ Երևանի նահանգի բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գյուղատնտեսական բնակչության տեսակարար կշիռը կազմել է 87,4%, առևտրաարդյունաբերական բնակչությանը՝ 8%, իսկ պետական աստիճանավորների, հոգևորականների և ոչ արտադրողական այլ բնակչությանը՝ 4,6%: Արդեն 1913թ. նահանգում գյուղատնտեսական բնակչության տեսակարար կշիռը նվազելով հասնում է 80%-ի¹:

Դեռ նախքան կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգաման շեմին Ալեքսանդրապոլի գավառն ուրբանիզացման ցածր մակարդակից անցել էր միջինի²: XIXդ. վերջին գավառի ամբողջ բնակչության 18,5%-ը բնակվում էր Ալեքսանդրապոլ քաղաքում, իսկ 1914թ.՝ 23,2%-ը: Արժե հիշատակել, որ 1897թ. Երևանի նահանգի քաղաքային բնակչության շուրջ 45%-ը և 1914թ.՝ 49,3%-ը բնակվել են Ալեքսանդրապոլ քաղաքում: Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառը գյուղատնտեսական շրջան էր: Դրանով պայմանավորված՝ բնակչության

¹ Ադոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Եր., 1968, էջ 273:

² Եթե որևէ երկրի բնակչության մինչև 20%-ն է բնակվում քաղաքներում, ուրբանիզացման մակարդակը ցածր է, 20-50%-ի դեպքում՝ միջին, 50-70%-ի դեպքում՝ բարձր և 70%-ը ավելի բարձր:

սոցիալ-դասային հարաբերությունները որոշվել են հողի նկատմամբ սեփականության ձևերով:

Երևանի նահանգում, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառում, ստոլիպինյան ագրարային ռեֆորմների արդյունքում մեծ թվով գյուղացիներ դարձան մշակովի հողերի սեփականատերեր, ինչն էլ, բնականաբար, հանգեցրեց գյուղական բնակչության սոցիալական կազմի փոփոխությանը: Կապիտալիզմի զարգացման սկզբնական շրջանում հայ գյուղը կարճ ժամանակամիջոցում վերափոխվում և անձանաչելի է դառնում: Փոխվում են տնտեսական հարաբերությունները, մարդկանց նիստ ու կացը, ընտանեկան և ազգակցական կապերը: Քայքայվում ավատատիրական գյուղն է խորանում է գյուղացիների դասային շերտավորվումը՝ ունեւորների, միջակների և չքավորների: Ալեքսանդրապոլի գավառում կապիտալիստական արտադրահարաբերությունների պայմաններում աղքատացած գյուղացին զրկվում է սեփական հողակտոր ունենալու հնարավորությունից: Իսկ եղած հողակտորն էլ, սեփական միջոցներով մշակել չկարողանալով, հանձնում է հարուստ կամ ունեւոր գյուղացուն պարտքի դիմաց՝ համալրելով բատրակների սոցիալական դասը³:

Ալեքսանդրապոլի գավառի գյուղաբնակների ճնշող մեծամասնությունը պետական գյուղացիներ էին⁴, իսկ ունեւոր գյուղացիների խավը նիստուկացով և հասարակական կենցաղով առավել մոտ էր քաղաքային բնակչությանը: Վերջինս գյուղերում ուներ մշակովի հողեր, սակայն երկրագործության փոխարեն նախընտրում էր զբաղվել առևտրով, արհեստներով ու պաշտոնավարությամբ, իսկ իրենց պատկանող հողերի մշակումը թողնելով հիմնականում գյուղում բնակվող ազգակիցներին և հարազատներին: Գավառում արտոնյալ դասի այլ խմբերից առանձնակի դիրք ունեին պետական պաշտոնյաները, հոգևորականները, ոչ տոհմիկ ազնվականները և վաճառականները, որոնք սովորաբար բնակվում էին Ալեքսանդրապոլում, իսկ հոգևորականների մի զգալի մասը՝ նաև գյուղում: Ոչ տոհմիկ ազնվականների մեջ մեծ թիվ էին կազմում պետական պաշտոնյաները և ռուս զինվորականները⁵:

Հաջորդը մտավորականների դասն էր, որի մեջ մեծ թիվ էին կազմում ուսուցիչները և մանր վաճառականները: Ըստ Գ. Կիրակոսյանի՝ կապիտալիստական հասարակությունում մտավորականությունը տեղ է գրավում բուրժուազիայի և պրոլետարիատի միջակայքում՝ միջին դասերում, մանր բուրժուազիայի հետ,

³ Բատրակը վարձավճարով աշխատող գյուղացին է, որը չունի սեփական հողակտոր: Նրանց զգալի մասը, զրկվելով հողակտորից, մեկնում է նոր զարգացող արդյունաբերական քաղաքներ (հիմնականում Բաքու և Թիֆլիս) կամ դառնում բանվորներ, արհեստավորներ, մանր առևտրականներ և այլն:

⁴ Պետական գյուղացիները չունեին սեփական հողակտորներ և պետության վարձավճարով մշակում էին հողը:

⁵ Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի արտոնյալ թվաքանակն ու ազգային կազմը XIXդ. երկրորդ կեսին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 6, էջ 46:

Այն անվանում էին «նոր միջին դաս»⁶: Հայ մտավոր հիմնական ներուժը ի տարբերություն վրացականի, ձևավորվել է ոչ թե Երևանի նահանգում, այլ նրա սահմաններից դուրս՝ Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում և այլ քաղաքներում: 1897թ. առաջին համառոտական մարդահամարի տվյալների համաձայն՝ Արևելյան Հայաստանում մտավորականության 6875 է, որը կազմել է տարածաշրջանի ամբողջ բնակչության 0,4 և ինքնագործ բնակչության՝ 2,7%-ը⁷: Ինչպես ամենուր, այնպես էլ Ալեքսանդրապոլի գավառի մտավորականությունն իր սոցիալական կազմով միատարր չէր, համալրվում էր տարբեր դասակարգերից, որի հետևանքով էլ հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները համապատասխան վերափոխումներ էին առաջացնում մտավորականության կազմում:

XXդ. սկզբին Երևանի նահանգում բանվոր դասակարգը, որպես այդպիսին, դեռևս ձևավորված չէր: Այսպես, տարածաշրջանում բանվորները կազմել են աշխատունակ բնակչության շուրջ 2%-ը, որոնց կեսը զբաղված է եղել Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերական ձեռնարկություններում⁸: Ալեքսանդրապոլի գավառի կաշվի 4, օճառի 2 արհեստանոցներում, 118 ալրադացներում և աղյուսի հինգ գործարաններում աշխատող բանվորների թիվը չի գերազանցել 300-ը⁹: Ալեքսանդրապոլի բանվոր դասակարգի ձևավորման համար կարևոր գործոն էր երկաթուղային դեպոյի կառուցումը: Գավառի բուրժուազիան ձևավորվեց պետական պաշտոնյաններից, խոշոր վաճառականներից, ոչ տոհմիկ ազնվականներից և խոշոր հողատերերից:

Ի դեպ, խորհրդային իշխանության առաջին տարիներին հասարակությունը նույնպես բաժանվեց արտոնյալ (չքավոր և միջակ գյուղացիներ, բանվորներ, մտավորականներ, կոմունիստներ և այլք, որոնք ունեցել են հարկային, աշխատանքի ընդունվելու, ուսում ստանալու արտոնություններ) և ոչ արտոնյալ դասերի (կուլակներ, վաճառականներ, մենատնտեսներ և այլք, որոնք չեն ունեցել հարկային, սոցիալական արտոնություններ, դեռ ավելին՝ նրանց արգելվել է զբաղեցնել պետական բարձր պաշտոններ): Այսինքն՝ նրանք, ովքեր նախախորհրդային տարիներին արտոնյալ էին, խորհրդային տարիներին դարձան ոչ արտոնյալ և հակառակը՝ չքավոր գյուղացիները, բանվորները և կոմունիստները ստացան արտոնյալ կարգավիճակ:

Հայտնի է, որ բնակչության սոցիալական կազմը էապես փոփոխվում է՝ բնական և հասարակական գործոններով պայմանավորված: Լեռնային տեղանքի պատճառով՝ գյուղատնտեսությունն ունի զարգացման սահմանափակ հնարավոր-

⁶ Գիրակոսյան Գ., Մտավորականության կազմն ու թվաքանակը Արևելյան Հայաստանում XIXդ. 80-90-ական թվականներին, ԼՀԳ, Եր., 2010, էջ 118:

⁷ Գիրակոսյան Գ., Մտավորականության կազմն ու թվաքանակը Արևելյան Հայաստանում XIXդ. 80-90-ական թվականներին, ԼՀԳ, Եր., 2010թ. էջ 117:

⁸ Ադոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Եր., 1968թ., էջ 285:

⁹ Հարությունյան Պ., Հայաստանի բանվոր դասակարգի դրությունը 1900-1914թթ., ԼՀԳ, 1982թ. N3, էջ6:

րություններ, իսկ արդյունաբերության զարգացումը պայմանավորված է հումքային բազայի առկայությամբ և ուրբանիզացման մակարդակով: Հասարակական գործոններով է բացատրվում աշխատուժի քանակական, որակական և արտադրված արդյունաբերական ապրանքների սպառման մեծ շուկայի առկայությունը: Այդ առումով բացառություն չպետք է լիներ նաև խորհրդային կարգերի հաստատման հետևանքով առաջացած միջավայրը: Հայաստանի ՄԽՀ-ում 1920-ական թվականներին փոխվեց բնակչության դասային և դասակարգային բաժանման մեթոդաբանությունը: Խորհրդային իշխանությունների ակտիվ սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունքում կարճ ժամանակահատվածում փոխվեցին երկրի, այդ թվում՝ Լենինականի¹⁰ գավառի բնակչության սոցիալական կազմը և կառուցվածքը: Կապիտալիստական ագրարային տնտեսական հարաբերություններից անցում կատարվեց սոցիալիստական արդյունաբերական տնտեսահարաբերությունների: Ազգային բուրժուազիային, չքավոր, միջակ և հարուստ գյուղացիությանը, առևտրականներին, արհեստավորներին փոխարինեցին բանվորները, կոլտնտեսականները և ծառայողները: Սոցիալական քաղաքականությունը հանրապետությունում իրականացվում էր դեռևս դպրոցից: Ուսումնական հաստատություններում գործող աշակերտական կոոպերատիվները, փոխօգնության, ուսուցչական կոմիտեները և պիոներական կազմակերպությունները միտված էին ձևավորելու նոր, խորհրդային անհատ՝ որպես սոցիալիստական հասարակության անդամ¹¹: Գործել են «լիկկայանները» (անգրագիտության վերացման կենտրոններ), որոնք ակտիվ աշխատանք էին տանում ավագ սերնդի անգրագիտության վերացման ուղղությամբ: Լենինականի գավառի ամեն մի գավառակում գործում էին խրճիթ-ընթերցարաններ: Բնականաբար, կրթական ակտիվ քաղաքականությունը բարձրացնելու էր աշխատունակ բնակչության մասնագիտական որակավորումը ու նախադրյալներ էր ստեղծելու սոցիալական նոր խմբերի՝ մտավորականների, սոցիալիստական բանվոր դասակարգի ու կոլտնտեսականների ձևավորման համար:

Խորհրդային իշխանավարման առաջին տարիներին հասարակության դասային բաժանման հիմքում եղել են մասնագիտությունը և զբաղվածության ոլորտը: Եկամուտը և ունեցվածքային կարողությունները երկրորդական պլան են մղվել: Զբաղվածության ոլորտը ցույց է տվել, թե անհատը սոցիալական ո՞ր խմբին է պատկանել: Այսպես, 1920-ական թվականներին Հայաստանի ՄԽՀ կենտրոնական վիճակագրական վարչության կողմից հասարակությունը բաժանվել է հետևյալ հիմնական դասակարգերի՝ գյուղացիներ, բանվորներ, ծառայողներ՝ հետևյալ ենթախմբերով՝ ազատ մասնագիտություն ունեցողներ, վարձու աշխատանքը շահագործող գործատերեր, ընտանիքին օգնող անդամներով գործատերեր և արտելի անդամներ, միայնակներ, զբաղմունք չունեցողներ և գործազուրկներ¹²: Զբաղմունք ունեցողներ համարվել են աշխատանք ունեցողները, անհատ

¹⁰ Ալեքսանդրապոլի գավառը 1924թ. անվանափոխվեց Լենինականի գավառի:

¹¹ ՀՍՍՀ Շիրակի տարածքային մասնաճյուղ (ՀՍՍՀ ՇՏՄ) ֆ.7, գ.16, ց.1, թ.15:

¹² ՀՍՍՀ ՇՏՄ ֆ.7, գ.42, ց.1, թ.14:

ձեռնարկատերերը, գործատուները, վարձու աշխատողները և մենատնտեսները: Խորհրդային պաշտոնական վիճակագրությունը գրանցել է զբաղվածի աշխատանքային գործունեության ոլորտները (երկրագործություն, բանջարաբուծություն, անասնապահություն, ձկնորսություն, որսորդություն) ու մասնագիտությունը՝ կոշկակար, դերձակ, ուսուցիչ և այլն: Զբաղվածության ոլորտը ցույց է տվել նաև տվյալ անձի սոցիալական դրությունը: Այդ տեսակետից Հայաստանի ՄԽՀ կենտրոնական վիճակագրական վարչության դասակարգման մեջ տարբերակում են զբաղվածության 10 խմբեր.

1. *բանվորներ*. գլխավորապես ֆիզիկական աշխատանքով զբաղվողներ, որոնք անմիջական մասնակցություն ունեն նյութական բարիքների արտադրության գործում:
2. *ծառայողներ*. գլխավորապես մտավոր աշխատանքով զբաղվողներն են և ստեղծում են հոգևոր արժեքներ, մասնակցություն ունեն նաև նյութական արժեքների ստեղծմանը: Բանվորների և ծառայողների ընդհանրությունն այն է, որ համարվում են վարձու աշխատողներ:
3. *ազատ մասնագիտության տեր մարդիկ*. մտավոր աշխատանք են կատարում և չեն համարվում վարձու աշխատողներ:
4. *վարձու աշխատանքը շահագործող գործատերեր*. նրանք, ովքեր իրենց ենթակայության տակ ունեն բանվորներ և ծառայողներ:
5. *ընտանիքի անդամներով զբաղվող գործատերեր և արտելի անդամներ*. այն սեփականատերերն են, որոնք չունեն վարձու աշխատողներ և տնտեսական գործունեություն ծավալում են ընտանիքի անդամներով: Այդ խմբին են դասվում նաև արտելի անդամները, որոնք տվյալ դեպքում ունեն հատուկ կարգավիճակ, այսինքն՝ օգտվում էին ընտանիքի անդամների հետ սեփականության հավասարության իրավունքից, համարվում էին ընկերության անդամներ, օրինակ, առևտրականները, որոնցից յուրաքանչյուրը արտելի անդամներ էին:
6. *միայնակներ*. սրանք ինքնուրույն արտադրական միջոցների սեփականատեր գործատուներ են:
7. *ընտանեկան զբաղվածություն*. այդ խումբն իր գոյության միջոցներն ստանում էր ընտանեկան գործարարությունից: Խմբի ամդամները հիմնականում զբաղված են շինարարական աշխատանքներում, արհեստավորներ, դերձակներ, ջուլհակներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ են:
8. *Զբաղմունք չունեցող, սակայն եկամուտ ունեցող մարդկանց խումբ*. պետության խնամքի տակ գտնվող քաղաքացիներ: Այդ խմբի մեջ էին մտնում պատերազմի և աշխատանքի հաշմանդամները, թոշակառուները, մինչդպրոցականները, կալանվածները: Ի թիվս նրանց՝ նաև վարկատուները, անաշխատ եկամուտ ունեցողները, այսինքն՝ նրանք, ովքեր եկամուտ են ստանում հողի վարձակալությունից, արժեթղթերի առք ու վաճառքից, ինչպես նաև գողերը, մարմնավաճառները, գրբացները և զանազան բախտագուշակներ, մուրացկաններ ու ալիմենտով ապրողներ:

9. *գործազուրկների խումբ*. պետության խնամքի տակ գտնվող և աշխատանք փնտրողներ:

10. *բանակայիններ*. խորհրդային բանակում ծառայողներ¹³:

Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում 1920-ական թվականներին գյուղական բնակչության հիմնական մասը չքավորներն ու միջակներն էին: Նույն թվականներին սկիզբ առավ սոցիալիստական բանվոր դասակարգի կազմավորումը, որն իր բնությամբ եականորեն տարբերվել է կապիտալիստական բանվոր դասակարգից: Գավառի 433 արդյունաբերական և արհեստագործական ձեռնարկություններում աշխատող բանվորների թիվը 9866 էր: Քիչ չէր նաև գործազուրկների թիվը. 1927թ. այն կազմել է 1958 մարդ (1224 տղամարդ և 457 կին)¹⁴, գավառի աշխատունակ բնակչության 10%-ից ավելին: Լենինականի արհմիությունների գավառային խորհրդի տվյալներով՝ գործազուրկների թիվը 1928թ. հունվարին 1800 էր, փետրվարին՝ 2392, մարտին՝ 2468, ապրիլին՝ 2575, սեպտեմբերին՝ 1204 և դեկտեմբերին՝ 1756: Նրանցից 370-ը ստացել են գործազրկության նպաստ¹⁵: Գործազրկության վերացման գործընթացում կարևոր նշանակություն են ունեցել աշխատանքի բորսաները: 1923թ. ՀՄԽՀ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը հաստատեց աշխատանքի բորսաների կանոնադրությունը: Ըստ կանոնադրության՝ արգելվել է աշխատանքի ընդունել առանց բորսաների կանոնադրության իմացության: Աշխատանքի առաջին բորսաները հիմնադրվել են Երևանում և Լենինականում:

Խորհրդային կարգերի հաստատումն աստիճանաբար բերեց հողերի, ընդերքի հարստության, արտադրության միջոցների աստիճանական ազգայնացմանը, ինչը հանգեցրեց ձեռնարկատերերի, արհեստավորների, հարուստների և մենաստնտեսների՝ որպես սոցիալական խմբի վերացմանը: Իշխանությունների կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը միտում ուներ ավելի շատ թվով կանանց ներգրավելու հասարակական արտադրության ոլորտ: Սակայն 1920-ական թվականներին դարերով ձևավորված ընտանեկան սովորությունները, կանանց համար դեռևս լուրջ արգելքներ էին՝ մասնակցելու հասարակական, հատկապես վարչական աշխատանքներին¹⁶:

Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում 1927թ. զինվորական հաշմանդամների թիվը 80-ն էր, որոնք բաժանվել են երեք կարգի, ըստ որի որոշվել է հաշմանդամության թոշակի և նպաստի չափը: Իսկ գավառի հաշմանդամներից՝ խուլ և համրերի թիվը 242 էր: Պետությունը նյութական աջակցություն է ցույց տվել նաև բնական աղետներից տուժածներին: Այսպես, Լենինականի 1926թ. երկրաշարժից տուժածներին կարմիր բանակայիների չքավոր ընտանիքներին, զինվորական հաշմանդամներին, կույրերին և համրերին, բացի դրամական օժանդակությունից,

¹³ ՀՄԽՀ ԾՏՄ. ֆ. 7, գ. 42, ց. 1, թ. 14:

¹⁴ ՀՄԽՀ ԾՏՄ, ՀՄԽՀ Շիրակի տարածքային մասնաճյուղ ֆ. 7 գ. 16, ց. 1, թ. 24:

¹⁵ Գեղամյան Գ., Գործազրկության վերացումը Սովետական Հայաստանում (1920-1930թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1975թ. էջ 40, 44:

¹⁶ ՀՄԽՀ ԾՏՄ. ֆ. 7, գ. 16, ց. 1, թ. 36

ընդհանու առմամբ հատկացվել է 20,8 տոննա այլուր, բժշկական օգնություն, իսկ քաղաքացիական կռիվներին մասնակցած կարմիր բանակայինների ընտանիքներին՝ 645 ռուբլի, կույր կանանց՝ 651 ռուբլի, չքավոր ընտանիքներին՝ 2863 ռուբլի միանվագ օգնություն¹⁷: Խորհրդային Հայաստանի կառավարությունը ոչ զինվորական հաշմանդամներին նույնպես բաժանել է երեք խմբի: Գավառում 1927թ. առաջին խմբի հաշմանդամների թիվը չորսն է, երկրորդինը՝ 38, երրորդինը՝ 18¹⁸:

Գավառային իշխանությունների կողմից հատուկ հանձնարարություն է տրվել տեղական իշխանություններին առանձնակի ուշադրություն դարձնել բատրակների իրավատնտեսական խնդիրների հաջող լուծման և նրանց կենցաղի բարելավման գործին¹⁹: 1927թ. Լենինականի գավառի 545 չքավոր և բատրակ տնտեսություններ դարձան ՓՕԿ անդամներ²⁰: Արժե հիշատակել, որ նույն տարում գավառի տնտեսական ձեռնարկություններում աշխատողների թիվը 10340 է, որից 3445-ը՝ բատրակներ²¹: Դառնալով ՓՕԿ անդամներ՝ չքավոր քաղաքացիները և գյուղացիները ստացել են անվճար բժշկական օգնություն²²: Չքավորության հաղթահարման սոցիալական քաղաքականության բաղկացուցիչ մասն է կազմել կուլակից կախվածությունը վերացնելը, որի լավագույն միջոց է համարվել չքավորներին փոքր տոկոսադրույքով վարկերի տրամադրումը, ազատելով հարկերից²³: Իշխանությունը լրացուցիչ միջոցներ է հատկացրել անօթևան երեխաներին, կանանց և տղամարդկանց՝ նրանց տալով ապրուստի միջոցներ և աշխատանք²⁴:

Իրականացվող սոցիալական քաղաքականությունում կարևորվել է աշխատանքի տեսչության առկայությունը, որը զբաղվել է աշխատավորների հանգստի, արձակուրդի, աշխատանքային իրավունքների խախտման, բժշկական և այլ տեսակի ապահովագրական, արտադրական ձեռնարկությունների սանիտարա-հիգիենիկ իրավիճակին վերաբերող խնդիրներով²⁵: Լենինականի գավառում, մասնավորապես գյուղական բնակավայրերում սոցիալական քաղաքականությունը ներառել է նաև տնտեսական գործունեության ոլորտները: ՓՕԿ-ի միջոցով օգնություն է ցուցաբերվել չքավոր գյուղացիությանը (հատկացվել են լծկան անասուններ, կաթնատու խոշոր եղջերավոր անասուններ, սերմնացուներ, գյուղտեխնիկա)²⁶: 1927թ. Լենինականի գավառի 203 գյուղերից 189-ը (24248 տնտեսություններ՝ 59143 անդամով, որոնցից չքավորներ՝ 18136, միջակներ՝ 27892 և ունևորներ՝ 12929-ը) անդամակցել են ՓՕԿ-ին: Այդ կազմակերպությանը անդամավճար մուծողներն ազատվել են հարկերից: Սոցիալական քաղաքականության կարևոր

¹⁷ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.16, ց1, թ.23:

¹⁸ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.6, ց1, թ.96:

¹⁹ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.16, ց1, թ.35:

²⁰ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.6, ց1, թ.97:

²¹ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.6, ց1, թ.102:

²² ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.6, ց1, թ.100:

²³ ՀՄՍ ՇՏՄ Մուրադյան Գ., Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը Էջմիածնի գավառում, ԼՀԳ, Եր., էջ 31:

²⁴ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.16, ց1, թ.39:

²⁵ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.6, ց1, թ.102:

²⁶ ՀՄՍ ՇՏՄ ֆ.7, գ.7, ց1, թ.107:

ուղղություններից է եղել բանվորներին բնակարանով ապահովելը: Ներկայացվող ժամանակահատվածում շեշտակի ավելացել է բանվորների թիվը: Այսպես, 1927թ. միայն Լենինականի մանվածքային գործարանում աշխատանքի են ընդունվել 3000 մարդ, որոնց թվում քիչ չէին որքանոցի աշխատունակ տարիք մուտք գործած սաները: Նրանց մի զգալի մասին բնակարանով ապահովելու համար Լենինականի գավգործկոմը (գավառային գործադիր կոմիտե) միջնորդել է ժողտնտիստրիի (ժողովրդական տնտեսության խորհուրդ) առաջ՝ մանվածքային գործարանին բնակչինարարության համար տրամադրել 150 հազար ռուբլի վարկի տեսքով²⁷:

Այսպիսով, XX դարի առաջին քառորդն աչքի ընկավ Արևելյան Հայաստանում, բնակչության սոցիալական կազմի և իրադրության արմատական տեղաշարժերով՝ պայմանավորված առաջին հերթին հասարակարգային և տնտեսահարաբերությունների փոփոխություններով, որոնք կապիտալիստական կարճատև հարաբերությունները փոխարինեցին նորով՝ սոցիալիստականով:

ИЗМЕНЕНИЯ СОЦИАЛЬНОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ

АРМ.ССР В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XX ВЕКА

(на примере Александрополь-Ленинканского уезда)

____ *Резюме* ____

____ *А. Бояджян* ____

До провозглашения советской власти большинство жителей Александропольского уезда составляли сельские жители, а богатое сословие, у которого были собственные земельные участки, в основном занималось земледелием и по своему укладу жизни, бытом почти не отличались от среднего крестьянского сословия.

Часть земельных участков городского имущего сословия обрабатывали их родственники или арендаторы. А они занимались чиновничеством, торговой деятельностью и т.д. Тогда рабочего класса, как такового, еще не было. После провозглашения советской власти в результате проводимой властями активной социально-экономической политики в короткий срок изменились социальный состав и структура населения страны, в том числе и Александропольского уезда. Национальную буржуазию, неимущую, среднюю и имущее крестьянство, купцов и ремесленников заменили рабочие, колхозники и служащие.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բոյաջյան Արտաշես Գևորգի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, Մ. Նալբանդյանի անվան ԳՊՄԻ
աշխարհագրության ամբիոն, E-mail: a.boyardjan@mail.ru

²⁷ ՀԱՄ ՀՏՄ՝ ֆ.7, գ.7, ց.1, թ.105:

Շիրակի տարածքում գտնված պատահական գտածոների թիվը ավելացել է ևս երկու իրերով: Այդ իրերից առաջինը տասներեք բեկորներից բաղկացած բրոնզե թասն է, իսկ երկրորդը՝ տասնվեց բեկորներից բաղկացած բրոնզե գոտին: Գտածոները հայտնաբերվել են Սպանդարյան գյուղի գերեզմանոցում գերեզման փորելու ժամանակ և տեղափոխվել են գյուղի միջնակարգ դպրոցի պատմության անկյուն:

Բրոնզե, ամբողջական թիթեղից կռած թասի տրամագիծը 17 սմ է, խորությունը՝ մոտավորապես 5 սմ (նկ. 1): Սպանդարյանի թասի նմանօրինակը պեղվել է Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզի երկրորդ փուլով թվագրվող թիվ 575 դամբարանում (նկ. 2)¹: Տ.Խաչատրյանը նմանօրինակ թասերը նույնպես թվագրում է վաղ երկաթի և միջին երկաթի դարերով, սակայն նշում է, որ Թրիալեթիից կան նաև ավելի վաղ օրինակներ, որոնք Բ. Կուֆտինը թվագրում է ուշ բրոնզի դարաշրջանով: Հավանաբար թասը կռել են ամբողջական թիթեղից:

Համեմատաբար լավորակ բրոնզից ուրարտական թասեր պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում և Էրմիտաժում: Ուրարտական այս թասերը պեղվել են Կարմիր բլուրից և ունեն ուրարտական արքաների անուններով արձանագրություններ²: Մենուա, Արգիշտի I, Սարգուրի II, Ռուսա I: Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ Կարմիր բլուրից պեղված հայտնի թասերը պատրաստված են հատուկ սարքով, որը ճզմել է թիթեղը, կամ կռված են ամբողջական բրոնզե թիթեղից:

Բրոնզե գոտու (նկ. 3) պահպանված հատվածների երկարությունը մոտ 60սմ է, ամբողջական բեկորի լայնությունը 19,5 սմ է: Գոտին բաղկացած է 11 ժապավեններից: Գոտու վերին և ստորին եզրերը հարթ են, և ունեն 1 սմ լայնություն: Այս եզրերի ներքին մասով անցնում են 3 մմ լայնություն ունեցող սեպաձև զարդանախշերի շարքով զարդարված զարդերիզները: Գոտու երկրորդ, չորրորդ, վեցերորդ, ութերորդ և տասներորդ ժապավեններն ունեն 3,4 սմ լայնություն և զարդարված են պարույրների չորսական շարքերով, բացի տասներորդ ժապավենից, որը զարդարված է երեք շարքից բաղկացած համեմատաբար խոշոր պարույրներով, քան մյուս ժապավենները: Պարույրներով զարդարված ժապավենների միջև

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Хачатрян Т., Древняя культура Ширака, Ер., 1975, с. 219-220, рис. 131; Badalyan R., Avetisyan P., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its surrounding region, Maison de l'Orient et de la Méditerranée-Jean Pouilloux, BAR International Series 1697, Oxford, 2007, pg 74, tomb no. 575.

² Пиотровский Б., Ванское царство (Урарту), М., 1959, с.180, табл. XXXIV.

գտնվում են հարթ մակերեսով չորս ժապավեններ, որոնց երկու եզրերը նույնպես զարդարված են 3 մմ լայնություն ունեցող սեպաձև զարդանախշերի ութ շարքերով: Գոտու ճարմանդը չի պահպանվել: Իրար հաջորդող ինը զարդագոտիներից հինգը զարդարված են պարույրներով, չորս զարդագոտիները, որոնք ընկած են հինգ պարույրներով զարդարված ժապավենների միջև, հարթ են, և ինչպես վերը նշեցինք, եզրազարդված են սեպաձև ժապավեններով:

Պարույրներով զարդարված գոտիներ հայտնի են Սևանի ավազանից՝ Ե.Լալայանի նյութերից, Ադթալայից³, Սանահինից⁴:

Հ.Մարտիրոսյանը բրոնզե հսկա թիթեղներից պատրաստված գոտիները, որոնք կրում էին իբրև զարդ, պաշտպանության միջոց և պաշտամունքի առարկա, թվագրում է ուշ բրոնզեդարյան մշակույթի II փուլից ոչ շուտ (Լճաշեն-մեծամորյան II մշակույթ) և կարծում, թե դրանք հարատևում են մինչև ուշ ուրարտական ժամանակաշրջանը (Լճաշեն-մեծամորյան VI մշակույթը)⁵: Հ.Մարտիրոսյանը այս գոտիները բաժանում է չորս խմբերի.

ա) գոտիներ՝ հարթ մակերեսով, բ) գոտիներ՝ երկրաչափական պարզունակ կամ բարդ փորագիր զարդերով՝ եռանկյունիներով, ռոմբերով, պարույրներով (նկ. 3), որոնց սիմվոլիկ կրոնական նշանակությունը դեռևս վերջնականապես պարզված չէ, գ) գոտիներ՝ կենդանական պատկերներով՝ եղնիկների, այծերի, ձիերի, ցուլերի, որոնք ըստ երևույթին երկնային որոշակի մարմինների ու երևույթների սիմվոլներ են (նկ. 7, 8), դ) բարդ կրոնապաշտամունքային կոմպոզիցիա ունեցող գոտիներ, որտեղ ներկայացված են սիմվոլիկ որսի տեսարաններ, բնապատական երևույթների ամբողջական կոմպլեքսների մեջ, կամ արևի մարդակերպ աստծո ընթացքը՝ մարտակառքերով, հրեղեն ձիերի, թռչունների, արևների, երկնային լուսաստուների ուղեկցությամբ (նկ. 4, 6)⁶:

Բոլորանախշը կամ պարույրը նաև հանդիպում է Շիրակավանի Ք.ա. IX-VIII դդ. թվագրվող թիվ 10, 11 դամբարաններում պեղված երկու գոտիների վրա⁷: Սակայն Սպանդարյանի նորահայտ գոտու նմանօրինակ կարելի է համարել Շիրակավանի Ք.ա. IX-VIII դդ. թվագրվող թիվ 11 դամբարանում պեղված գոտին (նկ. 9): Այն արտաքին հարդարանքով՝ երեք զուգահեռ շարքերից բաղկացած պարույրներով զարդարված ժապավեններով, որոնք ընդմիջվում են իրար հաջորդող երկուական գայլակերպ և ալիքներով զարդարված ժապավեններով, չափսերով (20X18սմ), զարդաներիզների հերթականությամբ (11 ժապավեն)՝ զարդարված 3 մմ լայնություն ունեցող սեպաձև զարդանախշերի տասը շարքերով, անչափ նման է

³ Խնկիկյան Օ., *Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Հայաստանի հնագիտական հուշարձանները* 9, Եր., 1977, էջ 103, աղ. XIII նկ. 5,6:

⁴ Мартиросян А., *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ер., 1964, с. 139-140, рис. 58:

⁵ Մարտիրոսյան Հ., *Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձանները* 2, Եր., 1969, էջ 33, աղ. XXXIX, նկ. 2,3:

⁶ Նույն տեղում, էջ 33:

⁷ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., *Հին Շիրակական (1977-1981թթ. պեղումների արդյունքները)*, Եր., 2002, նկ. 13-14:

Սպանդարյանի նորահայտ գոտուն⁸: Բոլորանախշը կամ գալարապարույրը ճանաչված է որպես ժամանակը, անվերջությունը և հավերժությունը խորհրդանշող պատկեր⁹, կարծում ենք՝ տեղին է հիշել Հ. Մարտիրոսյանի այն կարծիքը, որ գոտիները կրում էին իբրև զարդ, պաշտպանության միջոց և պաշտամունքի առարկա: Սակայն հատկապես ուշագրավ են Շիրակավանի գոտու բոլորանախշերով կենտրոնական ժապավենը եզրագծող երկու հարթ մակերեսով անզարդ ժապավենները:

Շիրակում հաճախ ենք հանդիպում հարթ, անզարդ զարդաերիզներով գոտիներին: Այս գոտիների նմանօրինակն է Թալինի թիվ 85 դամբարանից պեղված գոտին¹⁰, որը զարդարված է ինը զարդաերիզներով: Զարդաերիզներից հինգը «հյուսածո» զարդաշղթաներով են, որոնք ընդմիջվում են չորս հարթ, անզարդ զարդաերիզներով: Գոտին թվագրվում է Լճաշեն-մեծամորյան V մշակույթով: Գոտու հյուսածո զարդամոտիվի նմանօրինակը հանդիպում է Սպանդարյանից հայտնի, Հայաստանի պատմության թանգարանի մետաղա իրերի զետեղարանում պահպանվող, անհատական իրերի հավաքածուի մեջ մտնող, 49ա գոտու վրա¹¹: Դատարկ զարդաերիզներ ունեն նաև Լենինականից հայտնի երկու գոտիների բեկորները: Այս բեկորներից մեկը, որը պեղվել է 1952թ. Լենինականի «Մսի կոմբինատի» թիվ 9 դամբարանում (նկ. 10), ունի ինը զարդագոտի, որոնցից հինգը դատարկ և հարթ զարդաերիզներ են: Դրանք ընդմիջվում են չորս կետերով զարդարված զարդագոտիներով: Լենինականի գոտիներից երկրորդը Ս.Եսայանը¹² դասում է ուրարտական գոտիների առաջին՝ երկրաչափական զարդամոտիվներով գոտիների խմբին: Այն զարդարված է յոթ զարդագոտիներով, որոնցից վերին և ստորին երկրորդ զարդագոտիները կետազարդ են: Կենտրոնական երեքը հարթ և անզարդ զարդաերիզներ են և եզրագծված են զույգ գծերով (նկ. 11): Դատարկ են նաև վերին և ստորին զարդաերիզները: Գոտիների զարդամոտիվի վառ նմանօրինակները հայտնի են Տլիի դամբարանադաշտից¹³: Գոտիների համաժամանակ-

⁸ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Շիրակավանի դամբարանները, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 2 /89/, Եր., 1980, էջ 277:

⁹ Նույն տեղում, էջ 277:

¹⁰ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Եր., 2006, էջ 42, աղ. 65:


¹¹ Տե՛ս Փիլիպոսյան Ա., Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույներն ու սրերը, Եր., 1999, աղ. 57, նկ.10: Ավագյան Ի., Ատենախոսություն, Եր., 2016, էջ 163-167: Ավագյան Ի., Հակոբ Կարանյանի մի հնագիտական հավաքածուի մասին, ՇՊՄԺ, VII գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2007, էջ 34-40: Ավագյան Ի., Պատահական գտածոների հավաքածու Լենինականից, Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՀ անկախության 15-ամյակին, Նյութերի ժողովածու, ԳՊՄԻ, Գյումրի, 2007, էջ 155-159: Ավագյան Ի., Շիրակից հայտնի ուրարտական դարաշրջանի գոտիների զարդամոտիվների շուրջ, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVIII, Գյումրի, 2015, էջ. 71-82, նկ. 5:

¹² Есаян С., Урартские бронзовые пояса Ширака и их новые параллели в Западной Армении, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Եր., 2002, էջ 92, նկ. 1:


¹³ Техов Б., Центральный Кавказ в XVI-X вв. до н. э., М. 1977, с. 125, рис. 97-5:

յա նմանօրինակները հայտնի են Կարմիր բլուրից¹⁴ և հրատարակված են Հ.Քելնե-
րի ուրարտական գոտիների կատալոգում¹⁵: Ըստ Հայաստանի Հանրապետության
տարածքից հայտնի հնագիտական նուրբերի (Ք.ա. IX-VII դդ.)՝ նկատվում է բիայ-
նական մշակույթի ուժեղ ազդեցություն բնիկների նյութական մշակույթի վրա¹⁶:
Այս երևույթը հստակ է դիտվում զենքերի և խեցեղենի վրա¹⁷: Կարծում ենք՝ հարթ
և անզարդ մակերես ունեցող զարդաներիզներով ընդմիջվող գոտիների մոտիվները
նույնպես պետք է համարել ուրարտական զարդարվեստի ցայտուն ազդեցություն
Լճաշեն-մեծամորյան գոտիների վրա: Եվս մի առանձնահատկություն կարիճի պոչ
ունեցող առասպելական կենդանիների և մալթյան խաչերի հետ զուգահեռ¹⁸:

Սպանդարյանի նորահայտ գոտին դասվում է Հ.Սարտիրոսյանի առաջար-
կած գոտիների երկրորդ խմբին և թվագրվում Ք.ա. X-VII դդ. (Լճաշեն-մեծամորյան
V-VI մշակույթներով):



նկ. 1



նկ. 2


¹⁴ Мартиросян А., О древнем поселении и могильнике близ Лениакана, АН СССР, Краткие сообщения института истории материальной культуры, 55, 1954, с. 112.

¹⁵ H.Kellner, Gürtelbleche aus Urartu, Prähistorische Bronzefunde, Abteilung XII, Band 3, Franz steiner vergal, Stuttgart, 1991, աղ. 78-79/341, աղ. 72-73/283-285, 290, 292:


¹⁶ Եսայան Ս., Բիյագով Լ., Հմայակյան Ս., Կանեցյան Ս., Երևանի Բիայնական դամբարանը, Հայաստանի հնագիտական հուշարձանները 16, պրակ III, Եր., 1995, էջ 60: Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 84-85: Арешян Г., Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков, Государственный музей искусства народов Востока, Научные сообщения, X, М., 1978, с. 91-108.

¹⁷ Եսայան Ս., Բիյագով Լ., Հմայակյան Ս., Կանեցյան Ս., Երևանի Բիայնական դամբարանը, էջ 60:

¹⁸ Տե՛ս Ավագյան Բ., Շիրակից հայտնի ուրարտական դարաշրջանի գոտիների զարդամո-
տիվների շուրջ, էջ. 71-82, նկ. 5: Տե՛ս Ավագյան Բ., Ատենախոսություն, էջ 163-167:




նկ. 3




նկ. 4




նկ. 5




նկ. 6




նկ. 7




նկ. 8




նկ. 11



նկ. 9



նկ. 10



СЛУЧАЙНЫЕ НАХОДКИ ИЗ НЕКРОПОЛЯ СЕЛЕНИЯ СПАНДАРЯН В ШИРАКЕ

____ *Ррзюме* ____

____ *И. Авагян* ____

Количество случайных находок, обнаруженных в Шираке, пополнилось еще двумя археологическими находками. Одна из находок-это бронзовая чаша, состоящая из тринадцати фрагментов, а вторая-бронзовый пояс, состоящий из шестнадцати фрагментов. Археологические находки были обнаружены на территории кладбища селения Спандарян во время рытья могилы для усопшего и были перенесены в исторический уголок средней школы села. Диаметр чаши из бронзового цельного листа составляет 17 см, глубина приблизительно 5 см. Близкий аналог чаши был раскопан в Арктикском некрополе. Т.Хачатрян аналогичные чаши датирует ранним железным и средним железным веками и отмечает, что сущесвуют более ранние аналоги из Триалетти, которые Б.Куфтин датирует эпохой поздней бронзы. Длина сохранившихся частей бронзового пояса равняется 60 см. Ширина цельного фрагмента равняется 19,5 см. Пояс украшен 11-ю лентами. Новонайденный пояс из Спандаряна причисляется ко второй группе поясов, предложенной А.Мартиросяном, и датируется X-VII вв. до р.Х.

Տեղեկություններ հեղինակի մասին

Անգղյան Ինգա Էդուարդի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, «Կուսմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան,
E-mail: inga.avagyan.76@mail.ru

**ԳՅՈՒՄՐՈՒ ՄԲ ՅՈԹ ՎԵՐՔ ԵՎ ՄԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ***

Մշակութային հարուստ ժառանգություն ունեցող վայրերից մեկի՝ Գյումրու (Կումայրի) բազմադարյան պատմության ակունքները հասնում են Ք. ա. Յրդից-1-ին հազարամյակները: Բնակատեղին, անցելով զարգացման բոլոր փուլերը, ապրել է անկումների ու վերելքների շրջաններ: Գյումրու առաջընթացի նոր դարաշրջանը կապվում է 19-րդ դարի առաջին կեսի պատմական իրադարձությունների հետ, երբ Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին: Կարճ ժամանակում ավելանում է բնակչության թիվը՝ շնորհիվ Էրզրումի, Կարսի, Բայազետի նահանգներից գաղթած հայ ազգաբնակչության: Վերակառուցվում է բերդաքաղաքը՝ դառնալով Ալեքսանդրապոլի գավառի վարչական կենտրոն և ռազմաստրատեգիական կարևոր հենակետ, խաղաղ պայմաններ են ստեղծվում մշակույթի, արհեստների ու առևտրի զարգացման համար: Քաղաքում սկսվում են լայնածավալ շինարարական աշխատանքներ, կառուցվում են բնակելի տներ, հասարակական նշանակության բազմաբնույթ շինություններ և նշանավոր եկեղեցիները, այդ թվում՝ Մբ Աստվածածինը (այդտեղ պահվող «Աստվածածնի յոթ վերք» սրբապատկերի պատվին վերանվանվել է Մբ Յոթ վերք, 1837), Հայ կաթոլիկների եկեղեցին (1849-1854), Մբ Նշանը (1859-1864), Մբ Ամենափրկիչը (1869-1874), Մբ Գրիգոր Լուսավորիչ (19-րդ դ.):

Ժամանակի պահանջներին համապատասխան՝ քաղաքը կառուցապատվում է կանոնավոր հատակագծման սկզբունքով: Առևտրահասարակական կենտրոնը դառնում է շուկայի հրապարակը (այժմ՝ Վարդանանց հրապարակ), որի շուրջը և նրանից սկզբնավորվող փողոցներում են տեղաբաշխվում եկեղեցիները, արհեստանոցները, խանութները, ուսումնական, վարչական և կոմունալ բնույթի շենքերը: Դեռևս անցած դարի սկզբներին արված լուսանկարներում իրենց խոշոր չափերով ու վեհաշուք տեսքով Գյումրու համայնապատկերում աչքի են ընկնում Մբ Յոթ վերք, Մբ Նշան և Մբ Ամենափրկիչ եկեղեցիները:

Մբ Յոթ վերք և Մբ Նշան եկեղեցիների արտաքին ու ներքին հարդարանքի վերլուծությամբ դիտարկենք հոգևոր կառույցների ճարտարապետական ձևերը, արտաքին ու ներքին հարդարանքը, որոնցում դրսևորվում են ինչպես դարաշրջանի եկեղեցաշինության բնորոշ գծերը, այնպես էլ Գյումրու քաղաքային նոր միջավայրում ձևավորված հոգևոր ու գեղագիտական պահանջները: Գյումրու և տարածաշրջանի բազմաթիվ շինությունների նման այս եկեղեցիները նույնպես կառուցված են սրբատաշ սև տուֆից և պատկանում են վաղմիջնադարյան

* Հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

գմբեթավոր բազիլիկ տիպին, որը նոր թափ էր առել 17-19-րդ դարերի հոգևոր ճարտարապետության մեջ: Ընդարձակ աղոթասրահի կենտրոնում տեղադրված գմբեթակիր չորս մույթերը կապվում են միմյանց ու հանդիպակաց չորս պատերի որմնամույթերի հետ ստեղծում են մի կուռ համակարգ, որի վրա առագաստներով անցում կատարելով՝ բարձրանում է նիստավոր գմբեթը: Այսինքն՝ եկեղեցիներն ունեն գմբեթավոր բազիլիկներին բնորոշ հատակագծային և ծավալատարածական, ընդհանուր առմամբ, պարզ ու դասական այն հորինվածքը, որը հատկանշական է նաև այդ ժամանակաշրջանում կառուցված այլ եկեղեցիների: Դրանց թվում են Երևանի Մբ Զորավոր Աստվածածինը (1693), Մոդնու Մբ Գևորգը (1664-1669), Ախալքալաքի Մբ Խաչը (1856) և ուրիշներ:

Մբ Յոթ վերքը հիմնապատկանդանի վրա բարձրացող, արտաքինից արտահայտված չորս ավանդատներով, պատերը զարդարող որմնասյուներով ու յուրաքանչյուր ճակատին օվալաձև ու երկարավուն պատուհաններով շինություն է, որի արևմտյան կողմում գտնվում է սյունազարդ զանգակատնով պսակվող երկհարկ գավիթ-սրահը: Երկայնական պատերի վրա շքամուտքերի երկու կողմերում տեղադրված են գույգ և ավանդատների պատերի անկյուններում չորսական որմնասյուներ, իսկ արևելյան պատի վրա՝ գույգ որմնասյան և պատուհանի հաջորդական շարք է (նկ. 1): Որմնասյուների միջոցով հոծ պատին թեթևություն ու վերասլացություն հաղորդելու մոտեցումը, դեռևս 10-րդ դարից սկսած, մեծանուն Տրդատ վարպետի շնորհիվ բնորոշ գիծ է դառնում Շիրակի ճարտարապետական դպրոցում, որը կիրառվում է հետագայում, ինչպես նաև Մբ Յոթ վերք եկեղեցու հարդարանքում: Մակայն այստեղ դրանք ոչ թե կամարաշարով կապվում են միմյանց ու գոտևորում կառույցը, այլ կանգնած են առանձին, որոնց հարդարանքում օգտագործվում են նաև եվրոպական ճարտարապետության ակունքներում գտնվող օրդերային համակարգի առանձին տարրեր: Այսպես օրինակ՝ որմնասյուները բարձրանում են ակոսներով երիզված որմնախարիսխին, սյուների բներին մի քանի մետր բարձրացող փորվածքներ են (կանեյուրներ), տերևազարդար խոյակների վրա տեղադրված են անտաբեմետները: Հարդարանքի այս տարրերը, այնպես էլ սիմետրիկ դասավորված, երկարավուն ու օվալաձև լուսամուտների երեսակալների և ճակտոնների՝ բավականին ցցուն, պարզ գծերով ձևավորումը նորություն են հայկական եկեղեցաշինության մեջ և արտահայտում են ռուսական կլասիցիզմի ճարտարապետական ոճը: Եկեղեցու արտաքին հարդարանքում ներդաշնակ գուգակցվում են ազգային ավանդույթները ճարտարապետական նոր ոճի հետ: Եվ ինչպես նկատում է Վարազդատ Հարությունյանը, քաղաքային նոր միջավայրը բնութագրող ոճական այս նոր ուղղությունն առավել ցայտուն արտահայտում են հասարակական և ուսումնական շենքերը¹: Նկատենք, որ երկու եկեղեցիների ճակտոնները զարդարող խաչաքանդակների և ավետարանական սյուժեով պատկերաքանդակների առկայությունն էլ կապվում է 17-18-րդ դարերի

¹ Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 503:

հայ արվեստում ձևավորված ավանդույթի հետ²: Այստեղ՝ արևելյան պատի բարձրադիր մասում, տեղադրված է «Աստվածածնի յոթ վերք», իսկ Մբ Նշանի հարավային ճակատին՝ «Չարչարանաց Աստվածածին» հարթաքանդակը:

Ընդարձակ աղոթասրահ ներս մտնողին անմիջապես գրավում է Ավագ խորանի ամբողջ պատը զբաղեցնող մոնումենտալ չափերով ու խիստ տպավորիչ պատկերակալը (նկ. 2): Ուղղափառ եկեղեցու հարդարանքին բնորոշ սրբապատկերներով միջնորմը (պատկերակալ) տիպական չէ մեր եկեղեցիներին և հայ իրականություն է թափանցել Հայաստանը Ռուսական կայսրության մաս դառնալուց հետո: Սակայն ճարտարապետական ձևն ու շրջանակների քանդակագործման ընդհանուր սկզբունքը պահպանելով հանդերձ՝ Մբ Յոթ վերքի պատկերակալը շատ է տարբերվում դարաշրջանի ռուսականից պատկերների շարքերի քանակով, տեսարանների ընտրությամբ ու դասավորությամբ, «Դրախտի դռներ» կոչվող փեղկերի և այլ կարևոր դրվագների բացակայությամբ: Լուսավոր երկնագույն խորքի վրա սպիտակ ու ոսկեգույն շրջանակներում տեղադրված պատկերների շարքի կենտրոնական մասում հայ տաղանդավոր նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Աստվածածինը Մանկան հետ» 1891 թվականի մեծադիր (2,41x1,35, կտ., յուղ.) սրբապատկերն է: Պատկերի հեղինակային պատկանելությանն ու գիտական առաջին ուսումնասիրությանը նվիրված արվեստագիտության թեկնածու Մաթենիկ Վարդանյանի հոդվածում պատկերագրական ու գեղարվեստական մանրակրկիտ վերլուծություն է կատարված՝ արժևորելով Տիրամոր և Մանկան կերպարներում ազգային, իրական ու ոգեղեն տիպեր ստեղծելու Սուրենյանցի մոտեցումները, որը նաև «մի նոր էջ է բացում հայ եկեղեցական արվեստում»³:

Աստվածածնի պատկերի երկու կողմերում չորս ավետարանիչների, թեք փեղկերի վրա աջից՝ «Խաչելություն», «Մկրտություն», «Մբ Աբգար», ձախից՝ «Մուտք Երուսաղեմ», «Ընծայումը տաճարին», «Մբ Գրիգոր Լուսավորիչ» պատկերներն են: Առաջաստները զարդարում են 1899 թվականի մակագրությամբ չորս ավետարանիչների որմնանկարները: Ավագ խորանի բեմապատի հարդարանքը նման է Էջմիածնի Մայր տաճարի բեմապատի նկարագրողմանը՝ այն տարբերությամբ, որ առաքյալների պատկերների ավանդական շարքի կենտրոնում «Աստվածածինը Մանկան հետ» տեսարանին փոխարինում է Քրիստոս Ամենակալի պատկերը: Պատկերակալի, առաջաստների ու բեմապատի սրբապատկերներն առանձանանում են ոճական, պատկերագրական ընդհանրությամբ ու գունային կառուցվածքով: Անհատական դիմագծերով ու կենդանի ապրումով սրբերի կերպարները ռեալիստական մեկնաբանում ունեն, որում դրսևորվում են 19-րդ դարի հայկական սրբանկարչության յուրահատկությունները: Իսկ աղոթասրահի

² Ավետիսյան Ք., *Աստվածածնի պատկերագրություն հայ միջնադարյան արվեստում*, Եր., 2015, էջ 60-63:

³ Վարդանյան Ս., Վարդգես Սուրենյանցի Տիրամոր պատկերը Գյումրու Յոթվերք եկեղեցու խորանում, *Էջմիածին*, 2009, թիվ. էջ 106-110, նկ.: Կտավի վերնամասի և ստորին մասի հեղինակային մակագրությունները փաստում են, որ Սուրենյանցն այս պատկերը ստեղծել է Նոր Նախիջևանում և այն Ալեքսանդրապոլ քաղաքի Յոթվիրաց Մբ Աստվածածին եկեղեցուն է նվիրաբերել Դժիտիկ Խաչատրյան Ասլանյանցը: Տե՛ս նույն տեղ, էջ 108:

պատերի վրա կախված են 1900-2011 թվականին ստեղծագործական տարբեր կարողությունների տեր հեղինակների ստեղծած ավետարանական ավանդական տեսարանների և Հայ Եկեղեցու սրբերի փոքրադիր պատկերներ, որոնք գեղարվեստական արժեքով զիջում են պատկերակալի ու առաջաստների սրբապատկերներին:

Հարավարևելյան ավանդատան սեղանին դրված երկփեղկ պահարանում է գտնվում 18-րդ դարի անհայտ հայ նկարչի «Աստվածածնի յոթ վերք» հրաշագործ սրբապատկերը (նկ. 3): Հատուկ բարեպաշտության առարկա դարձած պատկերներին անդրադառնալով Մաղաքի արք. Օրմանյանը «Ծիսական բառարան»-ում գրում է, որ դրանք գետեղվում են պահարանների, գավիթների ու վերնատների մեջ, մոմերով ու խունկերով հարգվում⁴: Ինչպես տեսնում ենք ավանդույթը պահպանվում է նաև Գյումրիում: Տեսարանի պատկերագրության ձևավորման, գրական հիմքի և հայ արվեստում պահպանված սակավաթիվ սրբապատկերների մասին մանրամասն շարադրված է «Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում» վերոհիշյալ աշխատության մեջ⁵: Հոգևոր մեծ ներգործություն ունի համեստ կարողությունների տեր հայ նկարչի ստեղծագործությունը: Մարիամի՝ հեռուն հառած հայացքով, լուսաշող կերպարը, նկարի հարթապատկերային, լակոնիկ կառուցվածքը, սառը կապույտի, կարմրի, կանաչի համադրումը մուգ կապտամանուշակագույն երկնքին նպաստում են տեսարանի լավատեսական տրամադրության հաղորդմանը: Աստվածորդու անկենդան մարմինը գոգին յոթ սրերով խոցված Տիրամոր կերպարում հեղինակը կարևորում է ոչ այնքան ցավի ու տառապանքի ապրումներ, որքան, ինչպես Աբել քահանա Մանուկյանն է գրում՝ «յախտենական խաղաղություն մը, հոգեւոր անասելի անդորրութիւն մը, անհունը յոյսին ու զօրութիւն յաղթանակող կեանքին»⁶:

Շատ քչերին է հայտնի, որ Աստվածածնի պատկերի շրջերեսին նկարված է Քրիստոսի հարության տեսարանը (նկ. 4)⁷: Այսինքն՝ այն ստեղծվել է որպես խաչված և գործածվել եկեղեցական արարողությունների ժամանակ: Ինչպես 18-րդ դարի նմանատիպ սրբապատկերը, այն ունի տեսարանների ավանդական խմբավորում: Սովորաբար Մանուկ Հիսուս գրկում Աստվածածնի պատկերի մյուս երեսին նկարվում է Քրիստոսի խաչելության կամ հարության տեսարանը: Այդպիսի մի շարք խաչվածներ ցուցադրվում են Հայաստանի Ազգային պատկերասրահում⁸: «Հարություն» տեսարանում փառապսակի մեջ խաչադրոշով և ողջույնի շարժու-

⁴ Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., 1991, էջ 112:

⁵ Ավետիսյան Ք., նշված աշխ., էջ 226-234:

⁶ Աբել քհն. Մանուկեան, Գյումրիի Յոթ վերքը (Աստվածածնայ վերափոխման տոնին առթիվ), Եր., 2006, էջ 8:

⁷ Լուսանկարելու նպատակով պահարանից հանված սրբապատկերի շրջերեսին հայտնաբերվել է մոռացության մատնված «Հարություն» տեսարանը: Լուսանկարը տրամադրել է գեղանկարիչ ու սրբանկարիչ Տիգրան Բարխանյանը, որի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

⁸ Ավետիսյան Ք., Գեղանկար խաչվածները Հայաստանի Ազգային պատկերասրահում // Քրիստոնյան Հայաստան, 2000, թիվ 7, նկ.:

մով կանգնած Քրիստոսի պատկերը կանոնիկ հորինվածք ունի: Նրա կողքին կանգնած հրեշտակները նույն հագուստներով ու նման դիմագծերով են, ինչպես «Յոթ վերք» սրբապատկերում է, իսկ թափուր գերեզմանը հսկող զինվորները պատկերված են աստվածհայտնության պահից ազդված ու անհանգիստ շարժումներով:

Եկեղեցու արևելյան ճակատը զարդարում է «Յոթ վերք» հարթաքանդակը, որը հայկական քանդակագործության մեզ հայտնի միակ աշխատանքն է: Քանդակի ներքևում տեղադրված սալի վրայի արձանագրությունը փաստում է, որ այն, ինչպես նաև եկեղեցու հարավային ավանդատան վերոհիշյալ սրբապատկերը, Մեծ Հայքի Բասեն գավառի Հասանկալա վանքից 1830 թվականին Պողոս վարդապետը տարել է Հառիճավանք, այնտեղից էլ տեղափոխվել է Էջմիածնի մայրավանք, իսկ 1856-ին՝ Գյումրի՝ իր վերջնական հանգրվանը:

Սալիտակ քարից, նուրբ ու պլաստիկ ուրվագծերով կերտած հարթաքանդակի հորինվածքն ընդհանուր կառուցվածքով նման է վերոհիշյալ սրբապատկերին: Նույն դիրքերով ու նման ճաճանչավոր լուսապսակներով են Տիրամայրն ու Հիսուս, սակայն քանդակում հրեշտակների փոխարեն Սարիամի թիկունքի կողմում Գողգոթան հիշեցնող քարքարոտ լեռնալանջ է՝ վրան երկու արմավենի: Արմավենու պատկերումը հայ միջնադարյան արվեստում հանդիպում է դեռևս 4-7-րդ դարերի հուշարձաններում (Մրեն, Կողբ, Երերույք, Օռփք) և խորհրդանշում երբեմն Կենաց ծառ, երբեմն՝ Պաղեստինն ու Երուսաղեմը, որին տեղյակ քանդակագործն այն օգտագործել է իր ստեղծագործության մեջ⁹:

Մբ Յոթ վերք եկեղեցին առանձնահատուկ է նաև նրանով, որ քաղաքի բազմազգ բնակչության հոգևոր պահանջները բավարարելու նպատակով նրա հինգ խորանները ժամանակին նախատեսված են եղել տարբեր դավանանք ունեցող համայնքների համար: Գլխավոր խորանը ծառայել է Հայ Առաքելական եկեղեցուն, Մբ Յոթ Վերք խորանը պատկանել է Ուղղափառ եկեղեցուն, Մբ Երրորդություն խորանը՝ Կաթոլիկ եկեղեցուն, Մբ Սարգիս խորանը՝ ասորիներին: Եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատանն է գտնվում հայ կաթոլիկների եկեղեցու սրբություն համարվող «Խաչելություն» փայտյա հանրահայտ քանդակը, որն այստեղ է տեղափոխվել խորհրդային իշխանության տարիներին՝ շենքը բնակելի տուն դարձնելուց հետո: Այս ամենը վառ ապացույց է Գյումրիում ձևավորված տարբեր դավանանքի հետևորդ բնակչության իրար կողքի խաղաղ գոյակցության ավանդույթի և քույր եկեղեցիների նկատմամբ Հայ Առաքելական Եկեղեցու հանդուրժող վերաբերմունքի:

Մբ Յոթ վերք եկեղեցուց ոչ հեռու գտնվող Մբ Նշանը կառուցվել է իշխան Ղահրաման Երկայնաբազուկ Արդուրյանցի կտակած և քաղաքի բնակչության հանգանակած գումարներով (նկ. 5): Այդ փաստը արձանագրված է հյուսիսային պատի շարվածքում տեղադրված սալիտակ սալի վրա՝ «Առատաբաշխ տրօք պայծառափայլ Կնեազ Ղահրամանի Երկայնաբազուկ Արդուրեանց եւ ջերմեռանդ

⁹ Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975, էջ 42-43:

հասարակութեան Հայոց քաղաքիս կառուցաւ Մուրբ Աստուածածին եկեղեցիս սկսեալ ի՛ 1859 ամի Փրկչական եւ աւարտեալ ի՛ 1864 ամի»։ Եկեղեցին կառուցվել է Մբ Աստվածածնի անունով, ի պատիվ հրաշագործ «Յոթ վերք» սրբապատկերի, հետագայում է վերանվանվել Մբ Նշան, իսկ պատկերը տեղափոխվել է Տիրամոր անունը կրող Մայր եկեղեցի՝ Յոթ վերք։

Ինչպես վերևում նշեցինք, Մբ Նշանը նույնպես կառուցված է սրբատաշ սև տուֆից և արտաքին ծավալատարածական լուծումներով ու ներքին հորինվածքով նման է Մբ Յոթ վերք եկեղեցուն։ Այստեղ ևս արտաքին ճակատներում առաջացած չորս ավանդատներն են, արևմտյան կողմում գտնվում է գավիթ-գանգակատունը, որի վրա բարձրանում է ութ պուլներով գմբեթը։ Եկեղեցին ուշագրավ է ճարտարապետական ձևերի ներդաշնակ համաչափություններով, և ի տարբերություն Մբ Յոթ վերքի, այստեղ ճակատների վերնամասում տեղադրված կլոր լուսամուտների երեսակալներն ու կամարակապ շքամուտքերն ունեն ճոխ ու նուրբ քանդակագործում (նկ. 6)։ Դրանից բացի, յուրաքանչյուր ճակատի վրա ոլորուն հյուսվածքներով բարձրաքանդակ խաչեր են, որոնք սկսվում են շքամուտքի կամարից ու ձգվում քիվից ներքև գտնվող կլոր պատուհանը։ Նկատենք, որ պատուհանները և շքամուտքերը նուրբ զարդաքանդակներով հարդարելու սկզբունքը որոշ աղերսներ ունի Անիի ճարտարապետական դպրոցի հետ, միաժամանակ կիրառվում է զարգացած միջնադարի եկեղեցիների քանդակագործմանը բնորոշ տարրեր։ Նկատի ունենք հատկապես իրենց խոշոր չափերով աչքի ընկնող խաչաքանդակները, որոնց բազմազան ու անկրկնելի նմուշներ ենք տեսնում Նորավանքում, Հադիճավանքում, Մակարավանքում, Եղվարդում և այլուր։

Եկեղեցու արտաքին ձևավորման մեջ առանձնանում է հարավային շքամուտքի վերնամասում տեղադրված «Չարչարանաց Աստվածածին» հարթաքանդակը (նկ. 7)։ Այն 17-րդ դարի անհայտ հայ նկարչի «Մեանի Աստվածածին» անունով հայտնի հրաշագործ սրբապատկերի ընդօրինակությունն է, որի կատարման 1870 թվականը փորագրված է պատկերի ստորին մասում¹⁰։ Դեղնանարնջագույն քարի վրա կերտած ոչ մեծ չափերով պատկերաքանդակը բնօրինակից տարբերվում է նրանով, որ Աստվածածնի գլուխը բարձրացված է վերև, և նրա աջ ձեռքը հանգչում է կրծքին, իսկ Հիսուսի չարչարանքի գործիքները խմբված են ձախ անկյունում։ Հայ միջնադարյան արվեստում սակավ հանդիպող այս տեսարանում մարմնավորվում է Աստվածածնի մայրական գործվն ու խոր վիշտը Քրիստոսի գավիթ չարչարանքների համար։ Ինչպես Բյուզանդական կայսրությունում, այնպես էլ հայ իրականության մեջ, ընդունված է եղել հրաշագործ սրբապատկերներից կատարել ընդօրինակություններ և պաշտամունքի առարկա այդ պատկերը հասանելի դարձնել հավատացյալների լայն շրջանակներին։ Այդ մասին զանազան հիշատակություններ կան կաթողիկոսական դիվանի վավերագրերում և հայ

¹⁰ Տեսարանի պատկերագրությունն ու վերլուծությունը տե՛ս Ք. Ավետիսյան, նշվ., աշխ., էջ 222-225, նկ.100։

պատմագրության մեջ¹¹: Այս հարթաքանդակից բացի, մեզ հայտնի է յուզաներկով արված «Մևանի Աստվածածնի» երկու ընդօրինակություններ, որոնք գտնվում են Վենետիկի Մխիթարյան միաբանությունում:

Ավելի գուսպ է եկեղեցու ներսի ձևավորումը: Ավագ խորանի սրբատաշ որմնասյուներն ու աղոթասրահի կենտրոնում տեղադրված գմբեթակիր չորս հզոր մույթերն առանց սվաղի են, որի շնորհիվ սպիտակեցված պատերով ինտերիերում ավելի են շեշտվում դրանց մոնումենտալ ու տպավորիչ ծավալները: Ավագ խորանի բեմի վրա սեղանն է՝ հավասարաթև խաչով, բացակայում է խաչակալը՝ Մանուկ Հիսուս գրկում Աստվածամոր սրբապատկերով, որն ընդունված է հայկական եկեղեցիների հարդարանքում¹²: Պատերին կախված են մի քանի փոքրադիր սրբապատկերներ և հայկական մանրանկարչության ընդօրինակություններ, այսպես, օրինակ՝ Ավագ խորանի կողային պատերը զարդարում են Հեթում Բ արքայի նշանավոր Ճաշոցի (1286 թ. Կիլիկիա, Մատենադարան, ձեռ. 979) երկու մեծադիր տեսարան, պատուհանների ապակիներին էլ հարմարեցված են մետաքսե թափանցիկ կտորներ, որոնց վրա բառիկայի տեխնիկայով նկարված են ավետարանական տեսարաններ: Դրանք նույնպես վերցված են հայկական ձեռագրերից: Կապտաարծաթավուն լուսավոր գույներով նկարված պատկերները վիտրաժի տպավորություն են թողնում՝ ամբողջացնելով աղոթասրահի խաղաղ ու ոգեղեն միջավայրը: Ժամանակակից մեկնաբանություն ունեն առաջաստները զարդարող չորս ավետարանիչների որմնանկարները (նկ. 8): Կապտամոխրագույն ամպերի չընդհատվող շղթայով իրար միացած առաջաստներին տեղադրված ավետարանիչներն ու նրանց խորհրդապատկերները նկարված են դինամիկ շարժման մեջ, ազգային ու անհատական դիմագծերով: Նրանց կերպարները հատկանշող խոհերն ու զգացումները հարազատ են այսօրվա մարդուն՝ ներշնչելով հոգևոր ներուժ, հույս ու հավատ:

Մբ Յոթ վերք և Մբ Նշան եկեղեցիների ճարտարապետական ոճի միասնությունը, արտաքին ու ներքին հարդարանքում ազգային գեղարվեստական ավանդույթի և նորամուծությունների համատեղումը, ինչպես նաև ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների հավելումն ապացույց են անցյալի ու ներկայի ներդաշնակ միասնության և համահունչ են մեր ժամանակների հոգևոր ընկալումներին:



Մբ Յոթ վերք. Հարավարևմտյան ճակատ



Մբ Յոթ վերք. Ավագ խորանի պատկերակալը

¹¹ Կաթողիկոսական դիվան, թղթ. 36, վավերագ. 321, *Հովհաննես վրդ. Թորոսեան, Վարք Մխիթարայ Արքայի Սեբաստացոյ, Վենետիկ, 1901, էջ 72-75:*

¹² *Մաղաքիա արք. Օրմանյան, նշվ., աշխ., էջ 111:*



Մբ Յոթ վերք.
«Աստվածածնի յոթ վերք» սրբապատկեր



Մբ Յոթ վերք. «Հարություն»



Մբ Նշան. Հարավ արևելյան ճակատ



Մբ Նշան. Շքամուտք



Մբ Նշան. «Զարչարանաց Աստվածածին»



Մբ Նշան. Գմբեթի ներսը

ВНЕШНЕЕ И ВНУТРЕННЕЕ УБРАНСТВО ЦЕРКВЕЙ СВ. СЕМЬ РАН И СВ. НШАНА ГОРОДА ГЮМРИ

___ *Резюме* ___

___ *К. Аветисян* ___

Новую эру развития Гюмри связывают с историческими событиями первой половины XIX века, когда Восточная Армения вошла в состав Российской империи.

В это время были построены известные церкви.- Св. Богородицы (Семь ран, 1837 г) армян-католиков (1849-1854 гг.), Св. Ншана (1859-1864 гг.), Св. Спасителя (1869-1874 гг.), Св. Григория Просветителя (XIX век).

Церкви Св. Богородицы и Св. Ншана- это базилики, построены из черного туфа. Во внешнем убранстве церкви Св. Богородицы, именно в оформлении декоративных колонн и окон, прослеживается определенное влияние русского классицизма. Большой интерес представляет расписанный иконостас Главного алтаря в традициях Православной церкви, так как для армянских храмов не характерны иконостасы. Новизной является также, украшающая Северный алтарь деревянная скульптура “Распятие”, являющаяся одной из святынь Армяно-католической церкви. Она была установлена здесь позднее. С художественной точки зрения и иконографии большой интерес представляют барельефы “Семь ран Богородицы”, находящиеся на восточном фасаде церкви Св. Богородицы и “Богородица Страстная” церкви Св. Ншана, а также чудотворная икона неизвестного армянского художника XVIII века “Семь ран Богородицы”.

Единство архитектурного стиля этих церквей, сочетание национальных художественных традиций и новаций во внешнем и внутреннем оформлении, отражают характерные для данной эпохи изменения в мировоззрении, вызванные духовными потребностями формирующейся новой городской среды.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Ավետիսյան Քնարիկ Գառնիկի – արվ. գ. թ., Հայաստանի ազգային
պատկերասրահ, E-mail knarik_avetisyan@hotmail.com*

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԷՄԸ

ԵՐԷԿ, ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ*

1970-ին Պեյրուքի մեջ ծնունդ առած Հայկազեան Հայագիտական Հանդէսի (ՀՀՀ) 36րդ հատորի շնորհանդէսը պիտի կայանայ այս գիտաժողովին ծիրէն ներս:

Անոր ծնունդը նախաձեռնող Դոկտ. Հրանդ Քասունին, նաեւ զայն հովանաւորող Հայկազեան Համալսարանը (այն ատեն Քոլէճ) այլ կենսուղի նախատեսած էին իրեն համար, եւ դժուար թէ պատկերացուցած ըլլային այն զարգացումները զորս ան ունեցաւ անցնող տասնամեակներուն:

Արդարեւ, Հանդէսը ծնունդ առաւ այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ լիբանահայը կ'ապրէր իր պերճանքի եւ փառքի տարիները: Հայօճախը զօրաւոր տնտեսութեամբ, արմատացած ազգայնականութեամբ եւ կայուն թուաքանակով զանգուած մըն էր: Այս հենքին վրայ յառաջացած էին Պեյրուքի Սէն Ժոզէֆ Համալսարանի Հայագիտական Հիմնարկը, Համազգայինի եւ ՀԲԸՄի հայագիտական կեդրոնները: Հասկ Հայագիտական Հանդէսին կողքին, լիբանահայ օրաթերթերը, գրականութեան եւ արուեստի ամսագրերը հայագիտական նիւթ ալ կը հրատարակէին իրենց էջերուն մէջ: Ստաւորական տեսակարար բարձր կշիռ կար հայօճախին մէջ, տակաւին մեծադորդող էին Միսիթարեաններու *Բազմավէպն ու Հանդէս Ամսօրեան*, մինչ նոր սկսեր էին անուն հանել հայաստանեան *Պատմաբանասիրական Հանդէսն ու Մատենադարանի Բանբերը*:

1970-ին ուրիշ էր պատկերը Միջին Արեւելքի հայօճախներուն. Լիբանանը կը հաշուէր 225,000 հայութիւն, Իրանը՝ 150,000, Սուրիան՝ 100,000, Իրաքը՝ 30,000, Յորդանանը՝ շուրջ 7,000, Եգիպտոսը՝ շուրջ 10,000.. աւելի քան կէս միլիոն հայութիւն:

Այդ օրերուն հայախօս էր Սփիւռքին շուրջ 40%-ը: Սփիւռքի երկրորդ սերունդը ոտքի էր, եռանդուն: Խորհրդային Հայաստանէն սփռուող մշակութային եւ ընդհանրապէս ամէն շող հայկական լաւատեսութիւն, ապագայի հանդէպ հայկական հաւատք կը ներշնչէր: Եղեռնի յիսնամեակի զարթօնքի դողանջները իրենց արձագանգը կը շարունակէին լսելի դարձնել ամէնուրեք:

Հետեւաբար, ՀՀՀ-ին ծնունդը Պեյրուքի մէջ տարօրինակ չհնչեց: Սակայն, թէ գործող հայագիտական պարբերականներուն կողքին ինչո՞վ պիտի յատկանշուէր նորածին այս հանդէսը. թիւի՞ յաւելում պիտի ըլլար, որակի՞, բնոյթի՞, թէ՞ ոլորտի:

Անցան այդ ժամանակները: Ուրիշ տեսակի լաւ ժամանակներ են հիմա: Սփիւռքը տարբեր է այսօր, մանաւանդ քիչ մը աւելի օտարալեզու:

* Հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

Պիտի ջանամ ներկայացնել վերջին քսանհինգ տարիներուն՝ մեծմասամբ կայուն խմբագրակազմով գործող ՀՀՀ-ին խնդիրները, առաջադրանքները, միտումներն ու նպատակները, խմբագրակազմին ու Համալսարանի տնօրէնութեան ծրագրային նախապատուութիւնները, միտումները:

Հրատարակչական եւ խմբագրակազմի տուեալներ. ՀՀՀ-ն դժուարութեամբ բոլորեց իր առաջին տասնամեակը: Տարեկան պարբերականութեամբ լոյս ընծայել ծրագրուած ՀՀՀ-ն խոչընդոտուեցաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմէն: Խմբագրութիւնը՝ ընդմիջումներով, փոխան տասի՝ ութ հատոր լոյսին կրցաւ բերել մինչեւ 1980: 1981-ը լուստեսական էր, որովհետեւ յաջորդական չորրորդ տարին լոյսին եկած էին 6-էն 9-րդ հատորները: Բայց յաջորդող տարիները դժեցին լուստեսական հեռանկարը: Լոյս տեսաւ ընդամենը մէկ 10-րդ հատորը: Հրատարակչական-ապահովական դժուարութեանց բարդուեցան վարչական խաչաձեւումներ, վտանգուեցան անոր գոյութիւնն ու շարունակականութիւնը:

Քաղաքական-ապահովական կացութեան բարելաւումով, 1991-ին սկսաւ ՀՀՀ-ին վերականգնումի կարճատեւ հանգրուանը. 1993-ին կայունացաւ ձեւաւորումը նոր խմբագրակազմին եւ թափ առաւ ան՝ նոր կացութեան մը դիմաց:

Հատոր/ Տարի	Ա., 1970	Բ., 1971	Գ., 1972	Դ., 1973	Ե., 1974	Զ., 1977-78	Է., 1979	Ը., 1980	Թ., 1981
Էջաթիւ	234	330	326	360	296	366	350	364	410
Հեղինակներ	13	14	14	20	15	17	20	20	21
Հատոր/ Տարի	Ժ., 1984-86	ԺԱ., 1991	ԺԲ., 1992	ԺԳ., 1993	ԺԴ., 1994	ԺԵ., 1995	ԺԶ., 1996	ԺԷ., 1997	ԺԸ., 1998
Էջաթիւ	316	378	414	440	602	376	580	426	
Հեղինակներ	12	12	18	20	18	14	24	23	
Հատոր/ Տարի	ԺԹ., 1999	Ի., 2000	ԻԱ., 2001	ԻԲ., 2002	ԻԳ., 2003	ԻԴ., 2004	ԻԵ., 2005	ԻԶ., 2006	ԻԷ., 2007
Էջաթիւ	460	526	460	410	560	460	510	480	540
Հեղինակներ	22	25	22	20	24	23	14	32	25
Հատոր/ Տարի	ԻԸ., 2008	ԻԹ., 2009	Լ., 2010	ԼԱ., 2011	ԼԲ., 2012	ԼԳ., 2013	ԼԴ., 2014	ԼԵ., 2015	ԼԶ., 2016
Էջաթիւ	546	484	696	760	640	566	654	944	702
Հեղինակներ	22	24	37	43	36	32	39	38	

1991-էն սկսեալ, տարեկան ճշդապահութեամբ հրատարակուեցաւ մէկ հատոր: Պարբերականութեան վերականգնումին կողքին, երկրորդ մեծ փոփոխութիւնը վարչակառավարման կը վերաբերէր: Եթէ *Հանդէս*ին առաջին տասն հատորներուն «միանձնեայ» ղեկավարն էր Դոկտ. Քասունին, որ սքանչելի գործ էր տեսեր, ապա երրորդ տասնամեակէն սկսեալ *Հանդէս*ը ունեցաւ հաւաքական ղեկավարութիւն: Ունենալով հանդերձ պատասխանատու խմբագիր՝ յանձին Անդրանիկ Օ. Վրդ. Կոստեանի (1991-էն ցայսօր), ՀՀՀ-ն առաջնորդուեցաւ հաւա-

քական խմբագրակազմով ու ղեկավարուեցաւ պատասխանատու խմբագիրով, որ միշտ խորհրդակցական կապի մէջ մնաց Համալսարանի տնօրէնութեան հետ:

11-րդ հատորին խմբագրական մարմինը կը գոյացնէին Պարոյր Աղապաշեանը, Կարօ Յովհաննէսեանը եւ Դոկտ. Արշալոյս Թօփալեանը (մինչեւ այսօր): 12-րդ հատորի խմբագրակազմը փոփոխութեան ենթարկուեցաւ. Յովհաննէսեանն ու Աղապաշեանը փոխարինելու եկան Լեւոն Վարդանն (մինչեւ մահը՝ 1997) ու Ժիրայր Դանիէլեանը (մինչեւ 2000): 1993-ին, ստեղծուեցաւ Անդրանիկ Տագէսեանը, իբրեւ պատասխանատու քարտուղար (մինչեւ ցայսօր): 1998-ին, կազմին միացան Հայագիտական Ամբիոնի նորանշանակ վարիչը՝ Դոկտ. Արա Սանճեանը (մինչեւ 2006) եւ Դոկտ. Արտա Էքմէքճին (մինչեւ ցայսօր)¹: 2001-ին խմբագրակազմին միացաւ Արմէն Իւրնէշեանը (մինչեւ ցայսօր), յառաջացաւ նաեւ Խորհրդատու Մարմին, յանձինս Դոկտորներ Սիլվիա Աճէմեանի, Հրանուշ Խարատեանի, Սուրապ Հասրաթեանի, Հրաչ Զիլինկիրեանի, Մեղա Տատոյեանի, Սուզնա Փեթիի, եւ Ժիրայր Դանիէլեանի, Երուանդ Երկանեանի, Մկրտիչ Յ. Պուլտուքեանի ու Պերճ Ֆազլեանի (մահ. 2016): Դոկտ. Արծուի Բախչինեան նշանակուեցաւ ՀՀ-ի մէջ *Հանդէսի* ներկայացուցիչ (մինչեւ ցայսօր):

Բովանդակային միւս փոփոխութիւնը ծաւալային էր. *Հանդէսին* առաջին տասնհատորեակէն ետք ծաւալը մեծցաւ, հասնելու համար մինչեւ 960 էջի: Ցաւելիւմ կրեց, բնականաբար, նաեւ հեղինակներուն թիւը:

Արեւելումի վերածնունդներ

Հանդէսին անդրանիկ հատորին կարճաժոյժ «Որպէս Մուտք»ը կը հաւաստէ, որ այս հրատարակութեամբ «Հայկազեան Հայագիտական Ամիոնը քայլ մը եւս առած կ'ըլլայ իր առաքելութեան ճամբուն վրայ», եւ թէ ՀՀ-ն կը միտի դառնալ ժամանակակից «հայագիտութեան տարբեր բնագաւառներով պարապող մեր մտաւորականներուն», եւ թէ ան կը միտի հրահրել հայագիտութեան հանդէպ հետաքրքրութիւնը եւ խթանել ձեռնարկելու հետազոտութեանց, ու «կը ցանկայ հայրենի մտաւորականութեան» գործակցութիւնը: Հոսկ, ան կ'ընդգծէ. «...*Հանդէսի* էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն գիտական հիմքերու վրայ նետուած եւ առարկայօրէն ներկայացուած խօսքին արժէքը»:

Բ. հատորի ներածականը կը հաւաստէ, թէ Հայագիտական Ամբիոնը «առաւել գիտակցութեամբ» կը շարունակէ «իր առաքելութեան ճամբուն վրայ իրեն բաժին ինկած պարտաւորութեանց իրագործումը»: Այդ հատորով իրականացաւ «Հայրենի մտաւորականներու աշխատակցութիւնը». համագործակցութիւն հայագիտական մարզին մէջ, որ կարելի դարձաւ շնորհիւ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին «Բարեացակամ ուշադրութեան»: Գ. հատորով՝ *Հանդէսը* հունաւորուած էր արդէն: Դ. հատորի ներածականը կը ցաւի երեց բանասէրներու մահուն, միաժամանակ հրճուանք՝ երիտասարդ անուններուն մուտքին: Հնգամեակի մը հետաւորութենէն, Ե. հատորի ներածականը կը հաւաստէ. «*Հանդէսի*... հա-

¹ Վերջինս ի պաշտօնէ, իբրեւ Համալսարանի Արուեստից եւ Գիտութեան Բաժանմունքի տեսուչ:

յագիտութեան տարբեր բնագաւառներով պարապող ... մտաւորականներուն ժամադրավայրը դարձնելու» իրաւութիւնն ու կարելիութիւնը: ...Ժ. հատորի խմբագրականը կ'ափսոսայ որ 15րդի փոխարէն 10րդ հատորը լոյսին կը բերուի: Վճռական է սակայն խմբագիրը՝ «գալիքին հանդէպ լաւատեսութեան ...[եւ]՝ առաքելութեան կառչած մնալուն»:

Եթէ ՀՀՀ-ի հիմնումի օրերուն հայկական տիեզերքը յարաբերաբար կայուն եւ ծաղկուն վիճակ մը ունէր, որուն պատճառով ալ *Հանդէսին* պատասխանատունները կրնային յստակ հեռանկարներ գծել ու քաղաքականութիւն մշակել, նոյնը կարելի չէ ըսել յետ-90ականներուն մասին, երբ ընդհանուր եւ շեշտաւորուող անկայունութիւնը, հայկական տիեզերքի տակաւ զարգացող իրադարձութիւնները կը պղտորեն յստակատեսութիւնը, կը դժուարացնեն կողմնորոշուելու, ՀՀՀ-ին ուղեգիծ ճշդելու կարելիութիւնը, բայց առաւել յանձնառու կը դարձնեն պատասխանատուները: *Հանդէսին* 11-րդ հատորը իր աչքերը բացաւ Արցախի ինքնորոշման պայքարին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումին եւ Մփիւոքին արեւմտականացեալ վերաձեւումին դիմաց: Անդին, խմբագրակազմին գոյատուրը առիթ տուաւ բազմաձայնութեան ու բազմակարծութեան:

Խմբագրակազմը չշեղեցաւ հիմնարար նպատակներէն՝ հայրենի հայագէտներու ներգրաւում, գիտական, անտիպ եւ հայագիտական նիւթերու ընդգրկում: Աւելցան նաեւ այլ նպատակներ, ինչպէս.

Ա) ՀՀՀ-ն աւելի լայն բացաւ հայագիտութեան իր սահմանումը, վերաշարադրելով՝ զայն դուրս բերաւ դասական բանասիրութեան ըմբռնումէն:

Բ) Մղում տուաւ երիտասարդ հետազոտողներու:

Գ) Ճիգ տարուեցաւ, որ այլազանութիւն յառաջանայ հեղինակային (տարիք եւ փորձառութիւն), ուսմունքի (մասնագիտութիւն եւ մեթոտաբանութիւն), նիւթերու (բնագաւառներ), աշխարհագրական ընդգրկումի, բաժիններու (նիւթի նպատակային եւ խորքային մատուցման տարողութիւն), մատչելիութեան (կայքէջի վրայ գետեղում), աշխատակիցներու փոխգործակցութեան եւ մատչելիութեան (հեղինակային ելմակներու գետեղում, շուտով նաեւ՝ կենսագրական եւ գիտական հետաքրքրութեան ծիրի մատնանշում): Մատչելիութեան այլ միջոց եղաւ համացանցային դրութեամբ գործող *Հանդէսին* մատենագիտութիւնը²:

Դ) Համընդգրկուն դառնալու, *Հանդէսին* հայագիտական համապարփակ պատմութի հնարաւորութիւն տալու մտասուեռումով, ՀՀ-ի մէջ հաստատուեցաւ ներկայացուցչութիւն՝ հաստատութենական հիմքերու վրայ դնելով հայրենի հայագէտներու գործակցութիւնը:

Ե) ՀՀ-ի եւ Արցախի մէջ շնորհանդէսներ կայացան: *Հանդէսը* առաջիններէն եղաւ, որ ՀՀ-ի մէջ, 2000-էն սկսեալ կայացուց իր շնորհանդէսներ՝ Գիւմրիի, Արցախի, Երեւանի տարբեր գիտակեդրոններու (Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Ազգային Գրադարան, ԵՊՀ Պատմութեան, Բանասիրական ֆակուլտետ-

² *Հանդէսի* ամենալայն տարածումը կը կատարուի ՀՀ-ի մէջ, ուր կը ցրուի *Հանդէսի* շուրջ 50 օրինակ:

ներ, Սփիւռքագիտութեան Ամբիոն, Ակադեմիա, Սփիւռքի Նախարարութիւն) մէջ, նաեւ Թբիլիսի, Ախալքալաք: Ասոնք կը հետապնդէին նաեւ ճանաչողական նպատակներ. Սփիւռքը Հայաստանի մէջ կը դրսեւորէր իր հայագիտական դիմագիծը:

Ձ) Խմբագրակազմը ճիգ կը տանի, որ կարգ մը պարագաներու աշխատակիցները ձգտին նմանաբնոյթ յօդուածաշարքերու, նոյն խնդրին տարբեր վայրերու-հեղինակներու-ժամանակներու դրսեւորումներուն³: Ասոր լաւագոյն օրինակներն են ՀՀ Ազգային Ակադեմիայի անդամ Դոկտ. Զաւէն Մսրրլեանի յօդուածաշարքը⁴՝ նուիրուած Լիբանանի խորհրդարանական ընտրութեանց հայկական մասնակցութեան եւ Փրոֆ. Վահրամ Շեմմէսեանի 1919-1939 շրջանի Մուսա Լեւոն ընկերատնտեսական եւ մշակութային կեանքին նուիրուած հատորները:

Հանդէսին խմբագրականները

Ուշագրաւ է, որ ՀՀՀ-ն հայագիտական այն քիչ պարբերականներէն է, որ խմբագրական խօսք կ'արձանագրէ իւրաքանչիւր հատորին հետ: Երբ հատորին բովանդակութիւնը որոշակի տեսք առած կ'ըլլայ, խմբագրակազմը կ'անցնի խմբագրականին յառաջացման. կը փոխանակուին միտքեր՝ մեկնելով հայ եւ համաշխարհային գիտական, քաղաքական, ընկերային նորագոյն զարգացումներէն, կը բարձրաձայնուին դիտարկումները, որոնք կը նոթագրուին, հուսկ՝ թուղթին կը դրուին ու կը յառաջանայ առաջին սեւագրութիւնը, որ կը մշակուի բազմիցս: Այդ մշակումներուն ընթացքին կը բիւրեղանայ ըսուելիքը, կը պարզուի կարեւորը նուազ կարեւորէն, հարցերը կը դիտուին իրենց այլեւայլ երեսակներէն: Ի վերջոյ կը ծնի խմբագրականը երկար մտաւոր երկունքէ մը ետք: Խմբագրականները՝ դրսեւորում խմբագրակազմին ժողովրդավարական սկզբունքներով գործունէութեան, կը խօսին խմբագրակազմին հայագիտութեան հանդէպ սրտցաւորութեան, խորքայնութեան, դիտարկումներուն, նախապատուութիւններուն, արժեւորումներուն, առաջադրանքներու եւ լուծման առաջարկներու մասին:

Ինչի՛ կ'անդրադառնան, ի՛նչ կ'արծարծեն անոնք.- ՀՀՀ-ի 11րդ հատորի խմբագրականը կը լուսաբանէ, որ 7 տարիներու յապաղումով լոյս կը տեսնէ հատորը, Լիբանանի մէջ, ուր «նիւթական չքաւորութեան վրայ բարդուած է հոգեւոր, մտաւոր ու ազգային առաւել չքաւորութիւն եւ արտագաղթ՝ հայ ժողովուրդին եւ հայ մարդութիւն»: Ան կը վերահաստատէ Համալսարանին յանձնառութիւնը՝ լիբանանահայ տասանորդուած մտաւորականութեան ուժերով վերահաղորդակցելու հայ մշակոյթին եւ աշխարհին հետ, վերագրաւելու իր տեղը, վերահաստատելու կամուրջները, շարունակելու ընդմիջուած գործը եւ կոչ կ'ուղղէ համագործակցութեան: 12-րդ հատորի խմբագրականը գոհ է, որ լոյս կը տեսնէ զինուորապէս խաղաղած Լիբանանի մը մէջ, մինչ կ'աւաղէ ՀՀ-ի մէջ տիրող «տագնապալի կացու-

³ Ասիկա երկարաժամկետ ծրագրաւորում կ'ենթադրէ, սակայն աւելի համակարգ կը յառաջացնէ աշխատակիցի մը ուսումնասիրական ուղիին համար:

⁴ Հանդէսին մէջ շուրջ 14 յօդուածաշարքով լոյս տեսած այս նիւթը այնուհետեւ վերածուեցաւ գիրքի եւ կը հանդիսանայ Լիբանանի հայօճախի մէկ ոլորտին մասին ամենէն ամբողջական, սպառիչ եւ ժամանակագրական լրիւ պատմութիւնը ներկայացնող միակ հետազոտութիւնը:

թիւնը... հայ մտաւորականութեան գրեթէ անոք վիճակը... հայրենի պետութեան անգործութիւնը՝ անոնց նեցուկ կանգնելու», ու կը հաստատուի. «Բանի եւ Միտքի Մշակներուն կրած վայրագ արժեքը կուրծքէն իրականութեանց կողմէ [մեծապէս մտահոգելով] սփիւռքի մշակութային հաստատութիւններն ու մտաւորականութիւնը, զանոնք կը մղէ՝ իրենց կարողութեան սահմաններուն մէջ սատար հանդիսանալու անհատներուն եւ հաստատութիւններուն»: 13-րդ հատորի խմբագրականը մտահոգութիւն կը յայտնէ *Բազմավէպի* եւ *Հանդէս Ամսօրեայի* հրատարակութեանց ժամադրութիւններու չարգումին համար, մտահոգ է հայագիտական հանդէսներու ցանցառումին եւ «լուրջ տագնապ» մը կը տեսնէ հոն, որովհետեւ «եթէ հրատարակողներ չըլլան՝ գրողները պիտի պակսին: Իսկ եթէ գրող չըլլայ՝ գրականութիւնը պիտի պակսի, պատմութիւնը պիտի լռէ ու Միտքը օտարանայ»: Խմբագրակազմը կը «նորոգէ իր լաւագոյնը տալու որոշումը՝ ապաստանելով իր աշխատակիցներուն արժանիքին՝ պատիւը վերադարձնելով Ազգին, եւ փառքը՝ Աստուծոյ»: 14րդ հատորի խմբագրականը *Հանդէսը* կը նկատէ խթան՝ Սփիւռքի հայագէտներուն, «որպէսզի վառ մնայ հայագիտութեան ջահը Սփիւռքի մէջ ... ժամադրաւայր՝ նաեւ Հայաստանի ուսումնասէրներուն», մեկնելով հայ ժողովուրդի միասնականութեան խորհուրդէն եւ մշակոյթի անպատակելիութեան: 15-րդ հատորի խմբագրականը յանձնառութեան խօսք է՝ Հայոց Ցեղասպանութեան հանդէպ գիտական գործի, վկայութեան, պահանջատիրութեան՝ յանուն արդարութեան, հայ ժողովուրդին եւ արդար Աստուծոյ: 16-րդ հատորը նուիրուած է հայ աւետարանականութեան 150-ամեակին⁵:

Այնուհետեւ, խմբագրականները խոստացան «անկարելին կարելի դարձնել» շարունակելու համար ՀՀՀ-ի առաքելութեան երթը Հայկազեան Համալսարանի կենսաւորումով, բարձրացուցին ՀՀՀ-ին ինքնութեան խնդիրը, երրորդ հազարամեակի սեմին հայագիտական հաշուեյարդարի գաղափարը, մտահոգութեան իմիջիայլոց Մ. Արեւելքի հայագաղութներու նախա եւ յետեղեռնեան պատմութեան փոշիացումին, հայագաղութներուն ներդրումին՝ բնակուած երկիրներու զարգացման, հայագիտութեան չգրուած էջերուն, փակ կամ կիսաբաց պատմական արխիւներուն, չուսումնասիրուած նիւթերուն, անտիպ մնացած կամ աղճատեալ հրատարակուած աշխատութիւններուն, հայագիտական աճող հումքին դիմաց համապատասխան ուսումնասիրութեան չարժանացման եւ ինքնաճանաչողութեան թերացումին, Մ. Արեւելքի հայագիտական հետաքննարկներուն, զգուշաւոր գնահատում կատարեցին արեւմտեան եւ հայաստանեան հայագիտութեան մտայնութեանց խաչաձեւումին: Շեշտեցին արեւմտահայերէնի դժուարութիւնները եւ թէ՛ «անոր անխաթար պահպանումը ունի ազգապահպան ռազմավարական նշանակութիւն», հայագիտական բազմակարծութիւնը, սերունդներու երկխօսութիւնը, հայագիտական կեդրոններու եւ մշակներու համապարփակ «հետեւողական, լայնածիր, ծրագրուած» գործակցութիւնը՝ համադրեալ համակարգով, հայ մտաւոր

⁵ Նման թեմատիկ հատոր նախապէս եղած էր միայն 15-րդը, որ նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան 80-ամեակին, իսկ այդուհետեւ՝ 25-րդ եւ 35-րդ հատորները:

ուժի նպատակամետ օգտագործումը, յաւելեալ կամուրջներ յառաջացնելը՝ այլ ժողովուրդներու ազգագիտութեան հետ, միջազգային հասարակագիտութեան քարտէսին վրայ հայագիտութիւնը ամրագրելը եւ Հայրենիք-Մփիւռք կամրջումով լուսարձակի տակ առին Մփիւռքի Նախարարութիւնն ու անոր դերը՝ հայագիտութեան մէջ: Խմբագրականները արծարծեցին հայագիտութեան հաստատութենականացման, այժմեականացման խնդիրները, հարցադրեցին 21-րդ դարու հայագիտութեան բնոյթը, անոր եւ Հայ Միտքի բերքին թուայնացումը, 21-րդ դարու հայ գիրքը, հայագիտութիւնը առնչեցին «մեր այսօրին ու անմիջական երեկին», թելադրելով որ ուսումնասիրուի Ի. դարու հայ պետականութիւնը համապարփակ կերպով, հայութեան քաղաքակրթական ժառանգը ներկայի ջանքին զօդուի եւ «ապագան ներկայով երաշխաւորող գործնական միջոցի» վերածուի, հայ անցեալի մշակութային ժառանգութիւնը ապագայ սերունդներուն հասու դարձուի, անոր պահպանումը նոր հիմքերու վրայ դրուի...: Բարձրաձայնուեցան նաեւ հայութեան եւ հայագիտութեան կենսունակութեան, ինքնութեան, իսլամաց(ու)ած հայերու համարկումին, համաշխարհային գործընթացներուն մէջ հայութեան տեղին ու դերին, յառաջացած նոր իրավիճակներուն դիմաց հայագիտութեան նորովի մերձեցման խնդիրները:

Հանդէսին 2015-ի (35-րդ հատոր)ի խմբագրականը հայագիտութիւնը համարեց հայագիտակցութիւն, հաւաստելով՝ «Առանց ցեղասպանութեան յետնախորքը թափանցելու եւ երեւոյթները առաւելագոյն համակողմանիութեամբ ու հիմնաւոր ուսումնասիրելու եւ բացայայտելու դժուար է հայ ժողովուրդի գիտական ամբողջական ընկալումը, որուն շնորհիւ կարելի ըլլայ յստակօրէն տեսնել եւ ըմբռնել հայ ժողովուրդի մերօրեայ գոյութենական խորհուրդը, եւ ըստ այդմ՝ ռազմավարել հայ ժողովուրդի երթի տեսլականը՝ պետական եւ սփիւռքեան առումով»:

Վերջաբան

Դժբախտաբար, այսօր *Հայկազեան Հայագիտական Հանդեսը* կը մնայ Մփիւռքի հայատառ միակ կանոնաւորաբար լոյս տեսնող հայագիտական պարբերականը: Հոն սփիւռքահայ գրիչը իր հայրենի գրիչին համապատասխան ներկայութիւն է, մտայնութեան ու մտադրոյթի դրսեւորում: Արեւմտահայերէնը՝ իբրեւ լեզու, *Հանդէսին* մէջ կը զգենու գիտական, պերճ հանդերձանք եւ կ'ենթարկուի մշակումի: Ուրիշ ոչ մէկ մերօրեայ հայագիտական պարբերականի մէջ այսքան խաչաձեւում-գուգորդում եւ համատեղում կայ ամէնաայլազան եւ տարաբնոյթ հայագիտութեան եւ հայագիտութեամբ զբաղողներու: Մակայն, ցարդ անբաւարար կը մնան Մ. Արեւելքի հայօճախներու ուսումնասիրութիւնը, հայագիտական նիւթերու արաբերէն մատուցումը, տեղաբնիկ մտաւորականներու ընդգրկումը...: Շահեկան պիտի ըլլային նոյն նիւթի քննարկումները՝ տարբեր հայօճախներու կտրուածքով, միտում կայ թեմադիկ խորութեան, տարածականութեան եւ համաշխարհային գուգահեման: Ճիգ կայ նկարագրողական-պատմողական-փաստական տուեալ փոխանցելէ անցնելու տեսականացման հանգրուան, ուր խնդիրը ենթարկուի քննական վերլուծութեան, ի յայտ բերուին թէ ինչու, ինչպէ՛ս, ինչ որդասպատճառներով, նպատակներով, գործօններով եւ զարգացումներով, սանձող

կամ սատարող ազդակներու ազդեցութեամբ յառաջացաւ տուեալ իրադարձութիւնը, եւ տեսականացուի ան: Այսպիսով, զարգացուի ոչ թէ փաստ ու իրադարձութիւն յայտնաբերելու մօտեցում, այլ պատճառահետեւանքային, տեսաբանական մտադրոյթ:

Վերջին հնգամեակին Միջին Արեւելքի հայապարպումը, արեւմտահայերէնի բնական միջավայր հանդիսացած շրջանի հայօճախներուն նօսրացումը վտանգեցին արեւմտահայերէնը: Ուստի այսօր, ՀՀ-ն աւելի բեռնաւորուած, նպատակային ու հետեւողական նախանձախնդրութեամբ պարտաւոր է գործել, ձգտելով զատորոշել եւ ստանձնել ռազմավարական, առաւել հեռանկարային ու վճռորոշ խնդիրներ:

АРМЯНСКИЙ АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ ВЧЕРА, СЕГОДНЯ, ЗАВТРА

___ *Резюме* ___

___ *А. Дакесян* ___

Первый том Армянского арменоведческого журнала (ААЖ) вышел в свет в 1970 г.. До войны в Ливане в 1975-1990 гг. ежегодно были выпущены 10 томов журнала. В 1991 г., после формирования нового редакционного совета, были опубликованы 26 томов журнала.

Статья посвящена особенностям и миссии ААЖ. В журнале публикуются не только ученые из Армении, но и зарубежные авторы. Основное кредо редакции являются: сохранение армянского классического правописания и академический высокий уровень западноармянского языка.

В работе также рассматриваются трудности и неудачи ААЖ.

Տեղեկություններ հեղինակի մասին

Տազէսեան Անդրանիկ Մանուկի- Հայկական Միջին Արեւելքի ուսումնասիրութեան Կենտրոն, Հակազեան համալսարան, Բեյրութ, E-mail: ANTRANIG.DAKESSIAN@haigazian.edu.lb

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՏԵՔՍԵՆԸ ԱՇՈՒՂԱԿԱՆ
ԲԱՆԱԼՎԵՍՏՈՒՄ

Աշուղական երգի տեսակը իր ակունքներով բխում է ժողովրդական բանահյուսությունից և, անշուշտ, կրում է ժողովրդական բառ ու բանի, լեզվամտածողության կնիքը: Ըստ էության, աշուղական երգը, մասնավորապես օրորոցայինը, ժողովրդական տարերքով ու հենքով գրված հեղինակային տեքստ է: Աշուղական – ժողովրդական- հեղինակային տեքստի շղթան կարծես միաձուլվում է ժամանակի ընթացքում: Ավելին, աշուղական երգային տեքստը երբեմն դժվար է տարանջատել ժողովրդականից. երկու դեպքում էլ կարևորվում է ժողովրդի հուզաշխարհի խնդիրներին անդրադարձը: Աշուղական երգը, կարելի է ասել, գտնվում է ժողովրդականի և հեղինակայինի միջակայքում: Ուշագրավ է այն իրողությունը, որ աշուղական բանահյուսությունը սերտ առնչություն ունի ժողովրդական բանահյուսության հետ: Հատկանշական է, որ օրորոցայինը, լինելով քնարական երգի յուրօրինակ տեսակ, քիչ է հանդիպում աշուղների երգացանկում: Պատճառներից մեկը թերևս աշուղական բանահյուսության թեմատիկան է և այն, որ մեծ մասամբ աշուղական տեքստի հասցեատերը մեծահասակ ունկնդիրն է: Աշուղական բանավեպում գերակշռող սիրային երգերն են: Մակայն աշուղները արձագանքել են նաև ժողովրդին հուզող պատմաքաղաքական իրադարձություններին: Ազատասիրության, հայրենասիրության գաղափարները, լուսավորության հարցերը առաջատար թեմաներ են դարձել XIX դարի աշուղների երգերում¹: Թեև աշուղական երգարվեստում կան մանկաշխարհին, մանկությանը առնչվող տեքստեր, այնուամենայնիվ օրորոցային տեքստերը սակավաթիվ են: Մասնավոր հանգամանքներով թելադրված՝ կարելի է հանդիպել նաև աշուղական օրորոցային երգի: Մյուս կողմից էլ՝ օրորոցայինը իր թեմատիկ տարողությամբ աշուղին հնարավորություն է տալիս ստեղծելու ինքնատիպ տեքստեր: Այս համատեքստում օրորոցայինը կարելի է համարել որպես բաց տեքստ: Աշուղական օրորոցայինները թեև սակավ, այնուհանդերձ անմիջական են, կարծես տվյալ պահին ծնվող ստեղծագործություններ են, այսրոպեական տեքստեր:

Աշուղական օրորոցային տեքստի բացառիկ օրինակ է Ջիվանու «Օրորոցի երգ» ստեղծագործությունը.

Ննջե՛ գառնուկ, սիրո՛ւն գավակ,

Ննջե՛ օրորանին մեջը,

Ննջե մի՛ լար, իմ աղավնյակ,

Միրուն օթևանին մեջը:

Բերված օրորոցային տեքստի մյուս տողերում հիշատակվում է երեխայի մեծանալու, հայկական ոգու ձևավորման գաղափարը, որը արտահայտվում է լեզ-

¹ Հայկական համառոտ հանրագիտարան, գլխ. խմբ. Կ. Խուղավերդյան, հ. I, Հայկական Խորհրդային հանրագիտարան, Եր., 1990, էջ 243-244:

վառճական հնարով: Հետևաբար մանկան հոգեկերտվածքի ձևավորման համար կարևոր է դաստիարակությունն սկսել հենց օրորոցից օրորոցային տեքստի միջոցով: Նշված հատվածը կարելի է համարել նաև բարեմաղթանք- աղոթք տեքստ.

Քնի՛ր, որ մեծանաս, հոգի՛ս,
Հայկական հոգվով նորոգվիս,
Վարժապետիդ առջև չոքիս,
Հայ ուսումնարանին մեջը:

Ձիվանու օրորոցային տեքստը մանուկ ունկնդրին հորդորում է ճանաչել, պահպանել ու հարստացնել մայրենի լեզուն: Աշուղը այս օրորոցայինով ազգային ինքնագիտակցություն է արթնացնում երեխայի մեջ: Մեջբերենք Գ. Լևոնյանի խոսքերը աշուղի մասնավորապես լեզվական ծառայության մասին.

«Լեզուի խնդիրը լուրջ խնդիր է: Կրօնը մարդու ներքին աշխարհին է պատկանում, ուրեմն ազգը ամենից առաջ լեզուով է ազգ, հետևապես կենդանի լեզուն քանի կայ, կայ և այդ ազգը և քանի հարուստ է այդ լեզուն, այնքան այդ ազգը բարձր է վայրենական կեանքից: Աշուղը լեզուի խնդրում արժանի է ամենայն խրախուսանքի: Նոքա փրկության առաջին ճանապարհը ցույց տուին մեզ և չը նայելով, որ նոցանից մեծ մասը հազիւ գրել կարդալ էին իմանում, յորդորեցին մեզ «գիր, դաֆտար, դալամ սիրել»։ Վերջապես *նոքա կորուստից պահպանեցին հայ լեզուն այն ժամանակ, երբ կարծես ամեն ինչ մահ էր սպառնում նրան եւ իբրեւ մի թանգագին սեփականություն բերին հասցրին մեր ժամանակները*²:

Գեղեցիկ բնութագրականներով է աշուղը ներկայացնում հայոց լեզուն մանկանը.

Երբ մեծանաս՝ սիրուն մանկիկ,
Մորվե հայոց լեզուն քաղցրիկ,
Հարուստ, քնքուշ, ճոխ, գեղեցիկ,
Նայիր բառարանին մեջը:³

Աշուղ Ձիվանին, լինելով XIX դարի հայտնի ստեղծագործողներից մեկը, օրորոցային երգում արծարծում է հայրենասիրության գաղափար: Բերված օրորոցային տեքստը խրատական է և ունի խոհափիլիսոփայական բնույթ:

Ինչպես հայրենասիրական թեմայով բանավոր ավանդված օրորոցային տեքստերում, այնպես էլ աշուղական օրորոցային այս երգում առանձնակի շեշտադրվում է ազգային դաստիարակության հիմնահարցը:

Գ. Լևոնյանը տալիս է աշուղական երգի հետևյալ ճյուղավորումները⁴. *հեռոսական- դյուցազնական, կրոնական-բարոյական, սիրային, ժամանակագրական-նկարագրական, վարդապետական- հրապարակախոսական, ազգային*:

Մեր կողմից քննված աշուղական օրորոցային տեքստը առավելապես մոտ է ազգայինին:

Ինչ խոսք, աշուղական երգը, ի մասնավորի օրորոցայինը, ունի ավանդական օրորոցային երգի հետ շատ ընդհանրություններ թե՛

² Լևոնյան Գ., Ազգագրական հանդես, Աշուղը հասարակական գործիչ, № 11, 1904, էջ 147-160:

³ Ձիվանու քնարը, Եր., 1959, էջ 177:

⁴ Լևոնյան Գ., Հայ աշուղներ, Բ. Աշուղը գրող, Ազգագրական հանդես, 1904, N11, էջ 130:

կառուցվածքային բաղադրատարրերով և թե՛ բովանդակային պլանով: Երկու տեսակի տեքստերն էլ ունեն ավանդական կայուն բանաձևեր.

*Ննջե՛ գառնուկ, սիրո՛ւն գավակ,
Ննջե՛ օրորանին մեջը /աշուղական/:*

*Նանի՛ կ, նանի՛ կ իմ լալա,
Երկար օրեր ունենաս.../ժողովրդական/:*

Բովանդակային առումով ևս աշուղական և ժողովրդական օրորոցային երգերը ունեն ընդհանրություններ, երկու տեքստերն էլ կարծես օրինանք-մաղթանք, խրատական, խոհական տեքստեր լինեն և ունենան դաստիարակչական նշանակություն: Միջաբերենք հետևյալ տեքստերը՝ քաղված աշուղական և մանկական բանահյուսության նմուշներից.

*Օրոր ասեմ, սիրուն օրոր,
Ջորանաս, որդի միամոր*

/օրինանք-մաղթանքի տարր պարունակող աշուղական օրորոցային/:

*Դուն լընիս անտառ մորուն,
Ջարնես քոքիկդ խորուն,
Քոքիկդ խորուն զարնես,
Ծառտ շուք անե ճեղերուդ /ժողովրդական/:*

Կին աշուղների ստեղծագործություններում նույնպես մեծ տեղ չեն գրավում օրորոցային տեքստերը: Հավանաբար նրանց գրավել են թեմատիկ նշանակություն ունեցող այլ խնդիրներ: Սակայն մանկաշխարհին նվիրված տեքստեր, թեև սակավ, հանդիպում են նրանց ստեղծագործություններում: Մեր ուսումնասիրության ծիրում ընդգրկել ենք նաև աշուղ Կադնու «Մանկական աշխարհ» և աշուղ Լեյլու «Մանկությունս» ստեղծագործությունները:

Մեջբերենք երկու ստեղծագործություններից հատվածներ.

*Մենք՝ մանուկներս, ապրում ենք խաղաղ,
Մենք՝ մանուկներս, ժպտում ենք ուրախ,
Մենք չենք ուզում երկու աշխարհ,
Երկու մանկություն լինի,
Մենք ուզում ենք խաղաղություն
Ողջ մանուկներին լինի:⁵*

*Մանկությունս մի երագ,
Բնչպես անցավ՝ չիմացա:
Օրերիս մեջ ալեկոծ
Հին հուշերս արթնացան:⁶*

Բնչպես աշուղ Լեյլու «Մանկությունս» ստեղծագործությունը, այնպես էլ մեծն Զիվանու «Մանկական հիշողություններ»-ը վերհուշ տեքստեր են, քնարա-

⁵ Աշուղ Կադնի /Էմմա Բադալյան/ Սիրո Կադնի/երգարան/, Եր., 2005, էջ 26:

⁶ Աշուղ Լեյլի, Կարոտի թևով (երգեր), Եր., 2004, էջ 50:

կան խոստովանության լավագույն դրսևորում: Ջիվանին իր ժամանակի կյանքի գնահատականն է տալիս, որը կարծես սոցիալական գանգատ է, բողոք անարդարության դեմ, քաղաքական տագնապների անդրադարձ:

Աշուղ Ջիվանու երգերի մեծ մասը հորինված է այլաբանական հիմքի վրա: Այդ է պատճառը, որ նույնիսկ մանուկներին հասցեագրված տեքստերը դժվար է բնութագրել. Հայրենասիրական⁷ է, թե՞ սոցիալական մոտիվներով գրված տեքստ:

Վկայաբերենք հատվածներ Ջիվանու «Մանկական հիշողություն» ստեղծագործությունից.

*Օրորոցից ներքն իջա,
Հազիվ ճոնկով ման եկա,
Ճոնկիս խլեցին, տարան,
Բերանս ի վար գետին ընկա:*

Նոր ոտքի ելած մանուկը բախվում է անհավասար իրականությանը և իր ներաշխարհում խմորվում են սոցիալ-քաղաքական տագնապներ.

*Թնիցս մեկ բռնող չունիմ,
Որ վեր քաշե, նորից կանգնիմ,
Հայրս՝ մեռած, մայրս՝ հիվանդ,
Եղբայր, ընկեր որտե՞ղ գտնիմ:*

*Նախանձելով կարջ տոտիկիս,
Գլորեցին խեղճ մանկիկիս,
Հրեղեն կառքին նստողը
Աչքը տնկեց իմ ճոնկիկիս:*

*Նոր Հերովդես մանկահալած,
Վերնից կստանաս հարված,
Որք մանուկներու վրեժը,
Քեզանից կըհանե Աստված՝:*

Աշուղական բանարվեստում մանկանց հասցեագրված տեքստերը հանդես են գալիս խոհական, խրատական, սոցիալական, պատմաքաղաքական թեմաներին միահյուսված: Ջիվանու «Մանկական հիշողություն» ստեղծագործությունը թույլ է տալիս դիմել Հովի. Թումանյանին՝ շեշտելու համար այն բանաստեղծական գեղարվեստական ընկալման ընդհանրությունը, որն առկա է երկու մեծերի ստեղծագործական աշխարհում: Բերենք Հ. Թումանյանի «Օրորք» հեղինակային տեքստը.

*Քնե՛, քնե՛, իմ որդի,
Աչե՛րդ խուփ, չբանաս,
Որ քո թշվառ հայ ազգի
Դառն ցավերը չտեսնաս:
Քնե՛, գուցե երագում
Տիրոջ բարի հրեշտակը*

⁷ Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, Աշխատասիրությանը՝ Թ. Պողոսյանի, Եր., 2009, էջ 612:

Քեզի պատմե, թե ինչպես

Պիտի փրկվի քո ազգը:

Մի պատկեր է նա տխուր,

Աչքերն արցունք, ինքը լուռ,

Մի սուր է մեր սրտի մեջ,

Մեզ այրելու հուր անշեջ:

Նրա հիմքը քանդելու,

Շատ, շատ դարեր տանջեցին

Տաճիկ, պարսիկ, հույն և քուրդ

Մինչև վերջը քանդեցին՝:

Մեր դիտարկումներում անդրադարձել ենք նաև համանման երևույթի՝ դրսևորված անգլիական մշակույթում, մասնավորապես կելտական: Կելտական ժողովրդական երգիչ-ասացողները՝ բարդերը (bard), եվրոպական ժողովրդական արվեստում մեծ դերակատարում են ունեցել: Մեջբերենք Գ. Լեոնյանի անդրադարձը բարդերի գործառնություն. «Բովանդակում բարդերի երգերն ու պատմական հեքիաթները նպաստում էին Բովանդակացուց դեպի հայրենիքն ունեցած սիրոյ պահպանման, նոյն իսկ այդ հանգամանքն պատճառ դարձաւ Անգլիական կառավարութեան նրանց վերայ խեթ աչքով նայելու, ինչպես Հենրիկոս Զ-րդի և Է-րդի ժամանակներում»⁸:

Մեզ հաջողվել է գտնել The Whiskey Bards խմբի կատարմամբ «Փովահենի օրորոցայինը»/A Pirate's Lullabye/ երգը: Կարծում ենք, թե ավանդական բանահյուսության կնիքը կա այս ստեղծագործության վրա և խոսում է այն մասին, որ բարդերը իրենց երգացանկում եւ ունեցել են օրորոցային երգը՝ որպես թեմատիկ ժանրային մի տեսակ:

Sleep bonnie pirate laddie, while the waves they roll

Sleep bonnie pirate laddie, ocean breezes blow

Feel the ship rock to and fro, hear wind through rigging sigh

*The gentle ocean sounds below, a pirate lullaby*¹⁰.

Հետաքրքրությունից զուրկ չէ այն իրողությունը, որ բարդերի արվեստում տարբերակում են երաժշտության երեք տեսակ՝ Swan-tree (suantrai), որը քնաբեր է, Geantree (Gon-tree)՝ ուրախություն բերող և Goiltraí (Gil-tree)՝ տխրություն բերող¹¹:

Ինչպես նկատում ենք, առաջնային է երգի քնեցնելու, հանգստացնելու գործառնությունը: Սա եւս փաստում է, որ օրորոցային ժանրը իր կայուն տեղն է ունեցել ավանդական այս արվեստում:

⁸ Թումանյան Հ., Բանաստեղծություններ, հ. I, Եր., 1988, էջ 314:

⁹ Լեոնյան Գ., Աշուղը պատմական շրջաններում, Օտար ազգերի մէջ. Ազգագրական հանդես, № 10, 1903, էջ 54:

¹⁰ http://lyrics.wikia.com/wiki/Whiskey_Bards:Pirate_Lullaby/

¹¹ Rowan, Arthur, *The Lore of the Bard: A Guide to the Celtic and Druid Mysteries*, Llewellyn Worldwide, 2003, p. 101.

Այսպիսով օրորոցային տեքստը կարող է ներառել ամենատարբեր թեմատիկ բովանդակային գաղափարներ, խնդիրներ, զգացողություններ, հույզեր: Հետևաբար աշուղների ստեղծագործություններում օրորոցային տեքստերի ընդգրկումը զարմանալի չէ: Աշուղական բանավեպում մանկանց ուղղված տեքստերի մեկնությունը ցույց է տալիս, որ թեև աշուղների երգացանկում սակավաթիվ են օրորոցայինները, բայց լեզվառճական ուսումնասիրության համար հարուստ նյութ են:

АШУТСКИЕ ТЕКСТЫ ФОЛЬКЛОРНОГО ИСКУССТВА АДРЕСОВАННЫЕ ДЕТЯМ

___ *Резюме* ___

___ *А. Матикян* ___

Ашугское песнопение исходит из истоков народного фольклора и, без сомнения, воплощает народную речь и носит печать языкового мышления. Ашугское песнопение, в частности колыбельная песня, является авторским текстом. На протяжении эпох ашугская-народная-авторская цепочка, сливается в единое целое. Более того, подчас тексты ашугских песен трудно отличить от народных. Армянский ашугский фольклор имеет тесную связь с народным фольклором. Колыбельная, которая является своеобразным типом лирических песен, мало встречается в ашугском песенном репертуаре. Одной из причин является ашугская фольклорная тематика и то, что адресатом ашугских текстов является пожилой слушатель.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մատիկյան Հասմիկ Համլետի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: hasvrej@msil.ru

Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՌՈՒՐՅԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ **

Ախուրյան գետի ավազանի ամրաշինական կառույցների հնագիտական ուսումնասիրությանը զուգընթաց անհրաժեշտ է կատարել նաև աղբյուրագիտական ուսումնասիրություն՝ որևէ հնավայրի որևէ տեղանվան հետ նույնացման համար: Հայ միջնադարյան պատմագրության մեջ տարբերակվում են ամրաշինական կառույցների մի քանի տեսակներ՝ *ամրոց, բերդ, դաստակերտ և այլն*:

Ախուրյանի ավազանի ամրաշինությունների վերաբերյալ հայկական և օտար աղբյուրների վկայությունները շատ սուղ են: Աղբյուրներում ամրությունների հիշատակումները կապված են վաղ միջնադարում կամ ավելի վաղ տեղի ունեցած որոշ դեպքերի հետ, սակայն, ինչպես որոշ ամրությունների հետագա հնագիտական ուսումնասիրություններն են ցույց տվել, դրանք գոյություն ունեին նաև ավելի վաղ փուլերում: Օրինակ՝ Անիի բերդը, որի վերաշինությունն ու կառուցապատումը կապված են Բագրատունիների անվան հետ, իսկ ստորին շերտերում նշմարվում են «կիկլոպյան» ամրոցի մնացորդներ¹:

Ստորև ըստ դարաշրջանների, կփորձենք դասակարգել ամրությունների մասին հիշատակությունները:

Արտաշես Ա-ի ժամանակաշրջանում տեղի ունեցող դեպքերի կապակցությամբ Մ. Խորենացին հիշատակում է Բագարան ամրոց-քաղաքի կառուցման մասին. «Շինեաց Երուանդ քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա գրագնաց յօրինեալ է զկազմութիւն, և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»² «Ջկնի այսորիկ հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպանցէ զԵրուազ զեղբայր Երուանդայ»³: Այսպես՝ Խորենացին մի դեպքում հիշատակում է, որ Բագարանն ամրոց էր, մի այլ դեպքում՝ քաղաք: Մա նշանակում է, որ սկզբնական փոքր ամրոցից Երվանդ թագավորն այն վերածեց պարսպապատ բերդաքաղաքի:

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

* Աշխատանքն իրականացվել է «Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցները» թեմայի շրջանակում:

¹ Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, Եր., 1988, էջ 11:

² Մ. Խորենացու Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913, Խ:

³ Նույնը, ԽԸ:

Վաղ միջնադարում Ախուրյանի ավազանի ամրաշինությունների վերաբերյալ հիշատակությունները սահմանափակվում են *Անիի և Արտագերսի, Արգինայի բերդերի նկարագրությամբ*:

Անիի բերդի մասին առաջին հիշատակությունները պատկանում են Եղիշեին ու Բուզանդին: Ուշ հայկական աղբյուրները, օրինակ, Կեղծ Շապուհ Բագրատունին, Վարդան Արևելցին (Բարձրաբերդցին) նույնպես հիշատակում են Անիի բերդը:

Անին տեղադրված է Ախուրյան գետի և նրա վտակ Անի գետակի միախառնումով ստացվող, մոտավորապես եռանկյունաձև հրվանդանի վրա, որը երկու կողմից՝ արևելքից ու արևմուտքից, եզերված է խոր կիրճերով, իսկ հյուսիսից քաղաքի տարածքը սահմանազատվում է երկու ձորակներով. հյուսիս-արևելքից՝ Գայլիձորով, հյուսիս-արևմուտքից՝ Իգաձորով: Անիում պահպանվել են Կամսարականների կառուցած պարսպից հատվածներ՝ մետաղական կապերով ամրացված կոպտատաշ քարերով: Կամսարական իշխանների օրոք Անիի ամրոցը գրավել է միջնաբերդի և ներքին բերդի բլուրները: Այդ ժամանակաշրջանի կառույցներից պահպանվել են ներքին բերդի բլրի հարավային կողմը պաշտպանող քառակուսի բուրգերով պարսպի մնացորդները և միջնաբերդում «Պալատական» կոչված միանավ եկեղեցին: Վաղ միջնադարում, սակայն, Անին դեռ քաղաք չէր, այլ միայն ամրոց:

Պատմիչ Վարդան Արևելցին հայտնում է, որ Գրիգոր Լուսավորիչը մկրտել է Անիի ներքին բերդի իշխանին⁴, իսկ Բուզանդը հիշատակում է Անիի պարսպավոր բերդը⁵: Եղիշե վարդապետը Անիի ամրոցը հիշատակում է Արտագերսի և Գառնիի ամրոցների կողքին, ինչը նշանակում է, որ վերջինս արդեն V դարում լավ ամրացված, անմատչելի ամրոց էր⁶: Ըստ Կեղծ Շապուհ Բագրատունու՝ Անիի ամրոցը կառուցել է ում բյուզանդացի Մախազը⁷:

Այսպես՝ ըստ Վարդան Արևելցու՝ Անին IV դարում արդեն ամրացված, պարսպապատված բերդ էր, սակայն դեռ չէր վերածվել քաղաքի: Անին՝ որպես *բերդ*, հիշատակվում է միջին VII դարը, այնուհետև սկսվում է Անիի զարգացման նոր՝ *քաղաքային շրջանը*:

⁴ «Յերրորդ ամին սորա պսակեալ Տրդատայ գայ ՚ի Հայս, եւ գտանէ զիշխանն Օտա զի պահեալ էր զգանձն արքունի, եւ զքոյր նորա Խոսրովիդուխտ յամուրն յԱնի. եւ յովմբ ՚ի նախարարացն Հայոց ընդ առաջ գային նմա»: (Վարդան Արևելցի, ԺԸ, էջ 158-159) Հասարակության Մ., Անիի ճարտարապետությունը. Պատմա-բանասիրական հանդես, 2011, № 3, էջ 4:

⁵ «Հասեալք ի ժամ առաւօտուն՝ չու էին ի տեղւոյն և երթեալ բանակէին մոտ ի պարիսպ բերդին, որ անուանեալ կոչի Անի» - Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, ԿԵ, էջ 292-293:

⁶ «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն եւ աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին զբնակութիւն նոցա: Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանաւք իւրովք. եւ առնուին զանմատոյց ամուրսն զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս» - Եղիշեի վասն Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957, Հ. III, էջ 125-126:

⁷ «Շինեաց և ամուրն Անի առ ակն Ախուրեան գետոյ» - Պատմութիւն Անանուն զրուցագրի, Եր., 1971, էջ 51:

Փ. Բուզանդը Արշակ թագավորին է վերագրում Արտագերս բերդի կառուցումը⁸: Արտագերս բերդը գտնվում էր Ախուրյանի գետաբերանից արևմուտք՝ անմատչելի մի լեռան վրա, և իր աշխարհագրական դիրքի շնորհիվ այս բերդն ստացավ ռազմավարական կարևոր նշանակություն: Արշակ թագավորը բերդին հատկացրեց Արշարունյաց գավառը՝ բերդապահներին բնամթերք մատակարարելու նպատակով:

Արտագերսը վաղ հայկական աղբյուրներում կոչվում է «բերդ», իսկ զարգացած միջնադարի աղբյուրներում՝ «ամուր»^{9,10}: Հունական աղբյուրներում այն կոչվում է «բերդ»¹¹: Ամենայն հավանականությամբ, բերդը կառուցվել է I դարում և վերակառուցվել Արշակ Բ-ի օրոք:

Ըստ Լ. Մրովելու՝ վրացիներն ու հյուսիսային լեռնականները Արտաշես Ա-ի օրոք հարձակվում են Մեծ Հայքի վրա և զանազան ամրություններ և բնակավայրեր են ավերում: Այսպես՝ «*նրանք ներխուժեցին Հայաստան, անսպասելիորեն հարձակվեցին Շիրակուանիի վրա և Վանանդից մինչև Բագրևան և Բասիանը, ամայացրին Դաշտիից մինչև Նախիջևան*»¹²: Լ. Մրովելու մոտ հիշատակված Շիրակուանին համապատասխանում է Երագգավորսին: Շիրակավանը պաշտպանում էր 3 կմ հեռավորության վրա գտնվող Տիգնիսի ամրոցը: Այն, որ այս պատմական վկայության մեջ չի նշվում վերջինիս անվանումը կամ կոնկրետ ամրոցի հիշատակումը, պայմանավորված է վրաց-հյուսիսկովկասյան ցեղերի կողմից դեպի Հայաստան մտնող ճանապարհի կայանների անունների հիշատակության բացակայությամբ:

Տիգնիս կամ Տգնիս բերդի մասին Ալիշանը բերում է Հ. Ներսես Սարգսյանի նկարագրությունը. «...ի հարառոյ արևելից գեղջն կայ բերդ այդ, ի 15352 բարձու լեռնակի, ... զօրմէ ասէ վերոհիշեալ հայրս «*ի գիւղս այս ամրոց մի կայ քառակուսի, կողմանցն միայն կանգուն գոլով ցարդ, այլ ի ներքս չիք ինչ և է ի դաշտավայրի: Ի խանգարեալ արձանագրին ուրիշ վերածնի անունս ՀԱԶԱՐԱԲԵՎ, և թուական գայս ձև օրինակի Ի ՇԺԵ Թ*: Առնթեր դրան կայ վեմ մի մեծ և ի վերայ թուական ՈՀԷ... առաջին թուականն ընթեռնելի է ըստ իս ի ՇԺԵ թվ., որ է 1066 ամ ՓԴԿՉԻՆ, թէ չիցն ԶԺԷ (1266), զի նույն ամ (1269) յիշատակի յարձանագրութիւնս Հոռոմոսի

⁸ Տարբերակներ՝ Արտագերա, Արտագերաս, Արտագերասա, Արտագերե, Արտագերեկ, Արտագերից բերդ: (Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. I, Եր., 1986, էջ 488:

«Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին զաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազգատ առնէր. և զգաւստոսն ունէր յոստան: Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն.....վասն զի կարի ամուր էր բերդն այն» - Մալխասյանց Ստ., Փալստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, ԴԹ, էջ 202-203:

⁹ Ստեփանոս Տարօնեցոյ Աստղկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 70:

¹⁰ Մալխասյանց Ստ., Փալստոս Բուզանդ, ՄԵ, էջ 262:

¹¹ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., նշվ. աշխ., էջ 488:

¹² Цулая Г. Леонти Мровели, Жизнь Картлийских царей, Москва, 1979, с. 33.

վանաց Հագարաբէկ ուն որդի Թայիկի»¹³: Այսինքն՝ Ղ. Ալիշանը Տիգնիսի կառուցման թվականը ընթերցում է 1066 թ.:

Մեքեռսի հաղորդմամբ՝ Պարսկա-բյուզանդական պատերազմների սկզբնական շրջանում, երբ պատերազմական թատերաբեմը Հայաստանն էր, Խոսրով արքայից արքան իր հարվածային ուժը ուղղեց Միջագետքի Դարա բերդի դեմ, որը բյուզանդական զորքի գլխավոր հենակետն էր պարսկական սահմանագլխի վրա: Զուգահեռ այս ռազմական գործողություններին, պարսկական մեկ այլ զորախումբ մուտք է գործում Մեծ Հայքի բյուզանդական մաս: Բյուզանդական զորքը բանակել էր Շիրակավանում, բայց չդիմանալով մարսկական բախումին, անցնում է Ախուրյան գետը և ամրանում Արգինա բերդում: Տեղացիները նույնպես օգնում են բյուզանդական զորքին և հարձակվում են պարսկական թիկունքի վրա: Զարգացած միջնադարի հայ պատմիչները Արգինան չեն հիշատակում որպես բերդ: Օրինակ՝ Ս. Տարոնեցի Աստղիկ պատմիչը հիշատակում է Արգինայում եկեղեցու և կաթողիկոսարանի գոյությունը¹⁴:

Ղ. Ալիշանը նշում է, որ հնում Արգինան եղել է Կամսարականների պայազատների մեծ և ամուր բերդը՝ մինչև 603 թվականը, երբ այն գրավում են պարսիկները¹⁵, իսկ արդեն զարգացած միջնադարում այն վերածվել է պարսպապատ եկեղեցու, այնուհետև՝ կաթողիկոսարանի:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանների, երբ Հայաստանում ամրոցներ ու բերդեր կառուցելու մենաշնորհը թագավորական իշխանության ձեռքում էր, արաբական տիրապետության շրջանում մեծ բնակավայրեր գրեթե գոյություն չունեին, և նոր բնակավայրերը առաջանում էին եկեղեցիների ու վանքերի շուրջը, նպաստելով դրանց ամրացմանն ու պարսպապատմանը: Ախուրյանի ավազանում և ընդհանրապես Հայաստանում ռազմավարական և տակտիկական պաշտպանական համակարգերի ստեղծումը կապված էր ճանապարհների անվտանգությունը ապահովելու հետ և առևտրական ճանապարհների երկայնքով իրարից որոշակի հեռավորության վրա կառուցվում էին աշտարակներ ու ամրոցներ և այլն:

Շիրակի զարգացած միջնադարի և ուշ միջնադարի ամրաշինական կառույցները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ վանք-ամրոցներ և բերդեր: Առաջին տեսակի մեջ կարելի է դասել Ծառաքար-Մաղասաբերդը, Մարմաշենը, Հառիճավանք¹⁶, իսկ երկրորդ տեսակին են պատկանում Տիգնիսը, Գուսանագյուղի

¹³ Հարությունյան Ս., *Երազգավորսի 1977 թ. պեղումները, Պատմա-բանասիրական հանդես*, № 1, Եր., 2012, էջ 194:

¹⁴ «Տեր Խաչիկ եպիսկոպոս Արշարունեաց քուերորդի Տեառն Անանիայի, որ միապետեալ խաղաղացոյց զաշխարհս Հայոց ամս ԺԲ: Եւ նորոգեաց զտուն կաթողիկոսարանին ի Շիրակ գաւառի ի գիւաքաղաքին Արգինայ, յեզերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի Տեառն Անանիայի Հայոց վերադիտողի: Եւ ի նմին գեօղ շինեաց զտուրբ կաթողիկէ»- (Տէ՛ս Ստեփանոս Տարօնեցոյ Աստղկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 185):

¹⁵ Ալիշան Ղ., *Շիրակ, Վենետիկ, 1881*, էջ 12:

¹⁶ Հառիճում 1201 թվականին Բվանե և Զաքարե Զաքարյանները հիմնում են ամրոց և կառուցում Կաթողիկէ Ս. Աստվածածին եկեղեցին: Շինարարական արձանագրության մեջ

ամրոցը և այլն: Դեռ IX-XI դարերում միջնադարյան Հայաստանի վանքերը շրջապատվում էին պարիսպներով, որոնք, սակայն, որպես պաշտպանական կառուցվածքներ բավական համեստ էին, և վանքերը էական հավակնություն չունեին ամրոցների դեր խաղալու¹⁷:

Իշխանական դղյակներից բացի (Մաղասաբերդ, Տիգնիս և Ամբերդ), ինչպես նշում է Ա. Զարյանը, միջնադարում *բերդ* հասկացությունը՝ իբրև հզոր պարսպապատերով և ամրակուռ աշտարակներով միայնակ կառույց, գոյություն չի ունեցել: Եղել են ամբողջական համակարգեր, երբ ամրոցները կառուցվել են ճանապարհների երկայնքով, իրարից որոշակի հեռավորության վրա¹⁸: Այս համակարգի նպատակն էր՝ պաշտպանել մայրաքաղաքը կամ որևէ այլ կարևոր կենտրոն և որպեսզի թշնամին գրավեր այն, պետք է սկզբից հաղթահարեր համակարգի մյուս արբանյակ ամրությունները: Շիրակում, տվյալ դեպքում Ախուրյանի ավագանում, նման համակարգ մենք տեսնում ենք մայրաքաղաք Անիում: Պատահական չէ, որ Բագրատունյաց շրջանում ամրացվում են Մաղասաբերդը, Մարմաշենը, Տիգնիսը: Սրանց մասին հիշատակություններ կան ինչպես հայ, այնպես էլ արաբական և վրացական աղբյուրներում:

Այսպես՝ Ծառաքար-Մաղասաբերդը հիմնվել է 6-րդ դարի առաջին կեսերին՝ որպես բյուզանդական զինվորական հենակետ և սկզբնական շրջանում կոչվել է Մաղասաբերդ: Արաբական շրջանում լքվել և վերածվել է փոքրիկ վանքի՝ Ծառաքար անունով: Բագրատունյաց շրջանում Ծառաքարի վանքը վերածվել է բերդի. կառուցվել են հզոր պարիսպներ և բուրգեր:

Աղբյուրների մեջ Մաղասաբերդ-Ծառաքարը¹⁹ հիշատակվում է առաջին անգամ կելծ Շապուհ Բագրատունու մոտ՝ «Մախազիբերդ» անունով²⁰: XVII դարում այն հիշատակվում է՝ Զ. Սարկավագ Քանաքեռցու մոտ:

Զարգացած միջնադարում փոքր եկեղեցիները կամ փոքր վանական համալիրները վերածվեցին ամրությունների (բերդեր, ամրոցներ): Մաղասաբերդի մեջ էր փոքր Ս. Գևորգ անունով եկեղեցին: Ինչպես կարծում է Կ.Մաթևոսյանը, նմանատիպ փոքրիկ մատուռները «քողարկում» էին վանքը ռազմական կառույցի վերափոխելու բուն գործընթացը²¹:

ասվում է՝ «շինեցի ի սմա ամրոց և զկաթուղիկէս»: Տե՛ս Մաթևոսյան Կ., Հառիճի վանքի պատմությունից, Անի-Շիրակի պատմության էջեր, Եր., 2010, էջ 200: Մաթևոսյան Կ., Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչության կենտրոնը և հարակից հարցեր), «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124:

¹⁷ Հասարակության Մ., (1969) Սյունիքի XVII—XVIII դդ. վանք-ամրոցները. Լրաբեր հասարակական գիտությունների, 1969, № 2, էջ 77:

¹⁸ Զարյան Ա., Սյունիքի ամրոցաշինության որոշ սկզբունքների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1988, N. 1, էջ 227:

¹⁹ Մանրամասն տե՛ս Մաթևոսյան Կ., Անի քաղաքը և Ծառաքար-Մաղասաբերդը (11-14-րդ դդ), Եր., 2010, էջ 216-235:

²⁰ «Եւ զՄախազ ոմն ի յաշխարհէն Հայոց կացոյց ի յարևելս, այր չար ու անաւրէն: Նայ շինեալ զամրոցն ար աջն Խորինա գետոյ և կոչեացն զնայ Մախազիբերդ» (Տե՛ս Դարբինյան-Մելիքյան Հ., Պատմություն Անանուն գրուցագրի, Եր., 1971, էջ 51:

²¹ Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 222:

Կարևոր տեղեկություն է հաղորդում նաև վրացական աղբյուրը՝ նշելով, որ վրաց թագավոր Բագրատ Դ-ը (1027-1072) դաշնակցել է Վեստ Սարգսի հետ և միացրել տարածք՝ «Անվո ինն բերդերով, բացի Ամբերդից»²²:

XI դ. արաբ պատմիչ Իբն ալ Ասիրը մանրամասն նկարագրում է Մարմաշենը, որն ունեցել է ամրապատ պարիսպներ և պաշտպանված է եղել մեծ գետով²³:

Այսպես, ըստ արաբ պատմիչի, Մելեքշահը և Նիզամ ալ-Մուլքը շարժվեցին դեպի Մարիամ Նիշին՝ «սա մի ամրացված քաղաք էր, որի պարիսպները պատրաստված էին հսկայական պինդ քարերով, որոնք կավի ու երկաթի միջոցով իրար էին կապված, իսկ նրանց արանքում կար մի մեծ գետ²⁴»։ Ղ.Ալիշանը կարծում է, թե նույն Մարմաշենում պետք է լինեին Վահրամ Պախլավունու կառուցած ամրապատ ու աշտարակապատ դղյակը²⁵, որոնց մասին սանահինցիներին գրած իր թղթերում Գրիգոր Մագիստրոսն ունի հետևյալ վկայությունը. «Եվ դղյակներ սքանչելի ու ամրապատ պարիսպներով ու աշտարակներով նա հարդարեց»²⁶։ Եթե արաբական աղբյուրները Մարմաշենը համարում են պարսպապատ քաղաք, ապա Մագիստրոսն ավելացնում է, որ քաղաքում կառուցվում են դղյակներ, աշտարակներ ու ամրապատ պարիսպներ:

Այսպիսով՝ հայ միջնադարյան ամրոցաշինության պատմության ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն պատմիչների ամրաշինությունների տեսակների, անվանումների, տեղորոշման և այլ հարցերի մասին հիշատակությունները: Ախուրյան գետի ավազանը՝ շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և գետի հոսքի երկայնքով առաջացած կիրճում բնական անմատույց հրվանդանների պայմանավորված եղել է հին շիրակցիների ուշադրության կենտրոնում՝ ամրոցների, բերդերի, կայանների, կամուրջների, աշտարակների, բնակավայրերի, սրբարանների կառուցման տեսանկյունից:

²² Մելիքսետ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Եր., 1934, էջ 205-206:

²³ 10-րդ դարում Անիին հյուսիսից պաշտպանում էր Մարմաշենը: Այստեղ կառուցվում են երկու ամրոց-գորանոցներ, որոնց տիպը և հատակագծային լուծումները նորություն են միջնադարյան ամրոցաշինության բնագավառում: Վահրամաբերդում և Տիրաշենում կառուցված այդ ամրոցները իրենցից ներկայացնում են մոտ 100 մ երկարություն ունեցող հրվանդաններ, որոնց կենտրոնով անցնող նեղ փողոցը տեղանքը բաժանում է երկու հավասար մասերի: Փողոցի աջ ու ձախ կողմերում տեղադրված են մոտ 60 մ² մակերես ունեցող գորանոցային տիպի սենյակներ: Ջորանոց-ամրոցը պաշտպանված է պարիսպներով ու աշտարակներով: Առանձնապես հոգ է տարված միակ մուտքի պաշտպանությամբ: Վահրամաբերդի բարձրադիր մասում տեղադրված է մեծ սրահաձև շինություն, որը ամրոցի մնացած մասից առանձնանում է և պաշտպանված է մեծ, շրջանաձև աշտարակներով: Սա, ինչպես նաև Ամբերդի միջնաբերդը միջնադարյան դղյակի նախատիպերն են: Տե՛ս Ս. Հարությունյան, Մարմաշենի պեղումները, Հայկական ՍՍՀ-ում 1975-1976 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներն նվիրված գեկուցումների թեզիսներ, Եր., 1977, էջ 40-41:

²⁴ Մելքոնյան Հ., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. 11: Արաբական աղբյուրներ, Հ. Բ: Իբն ալ-Ասիր, Եր., 1981, էջ 228:

²⁵ Ալիշան, նշվ. աշխ., էջ 67:

²⁶ Մագիստրոս Գր., Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 15:

Եթե համեմատելու լինենք Շիրակի, մասնավորապես Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցների ճարտարապետական հորինվածքը Հայաստանի այլ շրջանների, օրինակ՝ Տաշիր-Չորագետի, Վայոց ձորի, Սյունիքի, Արցախի հետ, ապա կնկատենք էական տարբերություններ տեղանքի ընտրության, լանդշաֆտի ձևափոխման, հատակագծման և այլ հարցերում: Եթե Շիրակում (Տիրաշեն, Անի, Արգինա և այլն) և Տաշիր Չորագետում (Կայան, Լոռի, Ախթալա և այլն) ամրությունները կառուցվել են եռանկյունաձև հրվանդանների վրա՝ հարմարեցվելով տեղանքին, ապա Սյունիքում և Արցախում ամրությունները կառուցվել են գլխավորապես զազաթների վրա (Սմբատաբերտ, Վասակաշատ, Որոտն, Կկոց քար և այլն):

Գրավոր աղբյուրներում Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցներից հիշատակվում են Բագավանի ամրոցը, Անիի բերդը, Արտագերս և Արգինայի ամրոցները, Շիրակավանը, Մաղասաբերդը և Մարմաշենը: Գործառնության առումով պատմիչները տարբերություն չեն տեսնում *ամրոց* և *բերդ* տերմինների միջև, քանի որ հաճախ նույն շինության վերաբերյալ օգտագործում են երկու բառերն էլ:

УПОМИНАНИЕ ФОРТИФИКАЦИОННЫХ СООРУЖЕНИЙ БАССЕЙНА РЕКИ АХУРЯН В СРЕДНЕВЕКОВЫХ ПИСЬМЕННЫХ ИСТОЧНИКАХ

____ *Резюме* ____

____ *Б. Варданян* ____

В истории изучения фортификационных сооружений Древней Армении важную роль играет упоминание средневековыми историками названий крепостей, их локализация и т.д. В армянской средневековой историографии различаются некоторые типы фортификационных сооружений. В письменных источниках фортификационные сооружения бассейна реки Ахурия упоминаются следующие крепости («амроц»): Багаван, Артагерс, Аргина, Ширикаван, Махасаберд, Мармашен и крепость («берд») Ани. Между терминами "амроц" и "берд" нет никакой функциональной разницы.

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդանյան Բենիկ Վարդանի - ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: vbenik@yahoo.com



Շիրակի հայագիտական ծանր կորուստ կրեց: Գիտական ու մանկավարժական լեցուն կյանքին անժամանակ հրաժեշտ տվեց արվեստաբան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լաուրա Աթանեսյանը: Դժվար է հաշտվել ինքնատիպ անհատականությամբ ու կենսահաստատությամբ աչքի ընկնող, իր գործին ու ընկերներին անմնացորդ նվիրված շենշող մարդու այլևս չգոյության տխուր փաստի հետ:

Լ. Աթանեսյանը ծնվել է 1950թ. Լենինականում: Ավարտել է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Ներքին մղումով ու ոգով կանչով նա բանասերի իր մասնագիտությունը զուգորդում է գեղեցիկ արվեստին՝ հեռակա ուսանելով ժողովրդական համալսարանում, և ձեռք է բերում արվեստաբանի մասնագիտություն, որն էլ դառնում է նրա կենսագործունեության առանցքն ու էությունը: 1969թ-ից դասավանդում է Լենինականի Մ. Մերկուրովի անվան նկարչական դպրոցում, 1998թ-ից՝ Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի կերպարվեստի ամբիոնում՝ վարելով արվեստի պատմության դասընթացը, իսկ 2004թ-ից մինչև իր կյանքի ավարտը նա այդ նույն ամբիոնի վարիչն էր:

2005թ-ից Լ. Աթանեսյանը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտություն-

ների կենտրոնում ծավալում է արվեստաբանական-գիտական գործունեություն, որն ամբողջությամբ նվիրել էր Շիրակի գեղարվեստին, մասնավորապես XIX-XX դդ. շիրակյան գեղանկարչությանը, գրում է բոլոր այն նկարիչների մասին, որոնք հարստացրել են Շիրակի գեղարվեստի պատմությունը: Վերջինիս արժեքավորման մեջ նա իրավամբ կարևորում էր ոչ այնքան գեղարվեստական հոսանքների ու միտումների բազմաոճականությունը, որքան ազգային կերպարվեստի ավանդույթների շարունակականությունը:

Յուրաքանչյուր արվեստագետի (Ս. Մերկուրով, Գ. Բրուսյան, Ա. Հովհաննիսյան, Ռ. Աթոյան, Հ. Անանիկյան, Ա. Պապոյան, Վ. Խաչատրյան, Ս. Մկրտչյան և այլք) հոգևոր ժառանգությունը, դիմանկարային բոլոր դիտարկումներն ու բնութագրերը նա քննում էր ժամանակի ու ավանդույթների փոխհարաբերությունների համատեքստում: Նորարարության և ավանդույթի հիմնախնդիրը գլխավորն էր նրա տեսական մեկնաբանություններում: Յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործությունների ոճական բնութագրի մեջ նա ընդգծում էր ամենաբնորոշը, ամենատիպականը, նաև՝ խիստ անհատականը:

Նրա երեք տասնյակից ավելի աշխատանքներում առկա են հայ և համաշխարհային կերպարվեստի խոր իմացությունը, արվեստագետների ոճի և բովանդակային նրբերանգների եզակի ընկալումն ու դրանց տեսական խորը իմաստավորումը:

Լ. Աթանեսյան արվեստաբանը մեծ սիրով ու նվիրումով բազմիցս էր հանդես գալիս իրրն երիտասարդ նկարիչների ցուցահանդեսների կազմակերպիչ՝ խանդավառելով ու լիցքեր հաղորդելով նրանց ստեղծագործական ինքնահաստատման իրենց ճանապարհին:

Ազնիվ մարդու, նվիրյալ ընկերոջ հիշատակը պայծառ ու խնկելի կմնա մեր սրտերում:

Հ. Հարությունյան
ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի
գիտքարտուղար

պական տեղաբնիկ ցեղերի կողմից նախ օր-սիրիանե, ապա մետաղե ծայրակալով գրո-ցի միջոցով արված փորագիր «իծագրեր»-ժայռապատկերներն են դարձել հիմքը հայկական, թերևս նաև մյուս հնդեվրոպա-կան ժողովուրդների, մեհենագիր գրու-թյունների:

Հայ միջնադարյան պատմության խնդիրներին են նվիրված Լ. Պետրոսյանի՝ «Մի մանրանկարի նորոպի մեկնաբանման փորձ», Ա. Ակոպովի՝ «Տայքի կյուրապաղա-տությունը հարավկովկասյան աշխարհա-քաղաքական գործընթացներում (X դարի II կես)» հոդվածները:

Հատորի ավանդական խորագրերը մշտապես կապված են շիրակագիտության տարբեր ոլորտներին: Այստեղ հրապարակ-ված են Ա. Հայրապետյանի՝ «Արևելահայ մամուլն Առաջին աշխարհամարտի տա-րիներին Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության մասին», Կ. Ալեքսանյանի՝ «Մայիսյան իրադարձու-թյուններին վերաբերող մի փաստաթղթի հետքերով», Հ. Հարությունյանի՝ «Ժողովր-դական երգի արդի դրսևորումները Շիրա-կում», Ա. Բոյաջյանի՝ «Բուսաբուծությունը Շիրակում 1920-1930-ական թթ.», Թ. Աղան-յանի՝ «Աղետների ազգաբանական հետազո-տության հիմնախնդիրները», Ա. Մաթևոս-յանի՝ «Գյումրեցի պատանի ծանրորդները Եվրոպայի 1996-2000 թթ. առաջնություն-ներում» հոդվածներն ու հաղորդումները:

Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելի-ցը հատորում ներկայացված է ազգագրա-կան-գրականագիտական, էթնոհոգեբանա-կան դրույթներով: Այսպես. Ռ. Հովհաննիս-յանը ներկայացրել է «Հայի ոգու հետեղեռն-յան կենսաշարժը Հակոբ Հարությունի «Կա-պույտ հագ» գրքում», Կ. Բազեյանը՝ «Ար-հեստները՝ Հայոց ցեղասպանության հա-մատեքստում», Կ. Սահակյանը՝ «Ցեղասպա-նություն. երրորդ սերունդ /Անտոնիա Արս-լանի վեպերի հիման վրա/»:

Հատորում տեղ են գտել նաև ազգա-գրական, լեզվաբանական, քաղաքագիտա-կան, ինչպես նաև դասավանդման մեթոդա-բանությանն առնչվող հրապարակումներ:

Հատորը եզրափակվում է «Գիտական լրատու» խորագրի բազմաբովանդակ տե-ղեկատվությամբ, նաև՝ հրատարակված նյութերի անգլերեն ամփոփումներով:



2016թ. սեպտեմբերի 24-25-ին Գյում-րիում գումարվեց «Շիրակի պատմամշա-կության ժառանգությունը. հայագիտու-թյան արդի հիմնախնդիրներ» թեմայով մի-ջազգային 9-րդ գիտաժողովը, որը կազմա-կերպել էր ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը: Գի-տաժողովը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին: Ավանդաբար շիրակագիտու-թյան վերջին շրջանի ձեռքբերումներն ու խնդիրներն արծարծող այս գիտաժողովը այս անգամ մասնակիցներին հնարավորու-թյուն էր ընձեռել անդրադառնալու նաև հայագիտության արդի այլ հիմնախնդիրնե-րի, քանի որ գիտաժողովի թեմատիկ շրջա-նակներում ներառված էին հայագի-տության բոլոր ոլորտները:

Գյումրիում ավանդաբար հրավիրվող այս գիտաժողովները ՀՀ ԳԱԱ նախագա-հության և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ վերջին շրջանում ձեռք են բերել միջազգային կարգավիճակ, նպատակ են հետապնդում հայտածել Հա-յաստանի հյուսիսի, մասնավորաբար պատմական Շիրակի հնագիտական, պատմագիտական, ազգաբանական ու բա-նագիտական ուսումնասիրության ժամա-նակակից մակարդակը, բացահայտել տա-րաբնույթ հետազոտությունների իրակա-նացման գործում առկա հիմնախնդիրները, առաջադրել ու քննարկել ուսումնասիրվող վիճահարույց իրողությունների նորոպի գի-տական մեկնաբանություններ և հնարավո-րության սահմաններում ուրվագծել հայա-գիտության ընդհանուր համատեքստում

Շիրակի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետազա ընթացքն ու առաջնահերթությունները 21-րդ դարի առաջին քառորդին:

Այս գիտաժողովին մասնակցում էին 104 գիտնականներ ՀՀ գիտական, կրթական տարբեր ինստիտուտներից, կենտրոններից, բուհերից, ինչպես նաև Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Լիբանանից, Լեհաստանից, Գերմանիայից:



Գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին հասարակական, քաղաքական գործիչներ, որոնցից ողջույնի խոսքով հանդես եկան Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, Շիրակի մարզպետ Հ.Միմոնյանը, Գյումրու քաղաքապետ Ս.Բալասանյանը: ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ս.Հայրապետյանը, խոսելով Շիրակի պատմամշակութային ծովածավալ ժառանգության տարբեր իրողությունների մասին, կարևորեց այն փաստը, որ վերջին երկու տասնամյակում շիրակագիտությունը անխզելիորեն կապված է նաև Գյումրիում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ:



Անդրանիկ լիագումար նիստում հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մելքոնյանը, վաստակաշատ գրականագետ, բ.գ.դ. Դ.Գասպարյանը, Ադիգեյի պետհամալսարանի պրոֆեսոր պ.գ.դ. Ռ.Կանդորը, երաժշտագետ, արվ. թեկն. Հ.Հարությունյանը, ճարտարապետության դոկտոր, ՇՊՄԺ բոլոր գիտաժողովների մասնակից Մ.Հասրաթյանը, Բերդյանսկի /Ուկրաինա/ պետական համալսարանի դոցենտ, բ.գ.թ. Վ.Շկոլյան:

Գիտաժողովի աշխատանքները ծավալվեցին հինգ մասնաճյուղերում:

Հնագիտություն, մարդաբանություն, վիճակագրություն. Թեմատիկ լայն շրջանակներ էր ընդգրկում հատկապես հնագիտական նյութը. Գուր-Արաքսյան խեցեղեն /Ա. Ազիզյան/, Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում հայտնաբերված մ.թ.ա. XI – IX դդ. վերաբերող գտածոներ /Բ.Ավագյան, Ա.Փիլիպոսյան/, Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղեն /Ա.Գաբրիելյան/, Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան վանակատից նետասլաքներ /Լ.Եզանյան/, Երևանի հարավային ծայրամասի Աերացիա թաղամասի և Նորագավիթ գյուղի միջև հայտնաբերված Օլդովայան մշակույթ՝ յուրահատուկ քարե գործիքների համալիրով /Բ. Երիցյան/, IX-X դդ. ջնարակած խեղեցենի պատմաքննական արժևորում /Ա.Ժամկոչյան/, ըստ վաղ միջնադարյան աղբյուրների հայոց ամրությունների տիպաբանական դասակարգման փորձ /Հ. Խաչատրյան/, Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցների մասին պատմագրական նյութի քննություն /Բ.Վարդանյան/:

Հնագետների խմբի կողմից ներկայացվեց նաև Ազատանի հնագիտական հուշարձանը, որը գոյատևել է ուշ բրոնզի 3-րդ փուլից մինչև հելլենիստական ժամանակաշրջանը: Այն հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկել մ.թ.ա. 13-րդից մինչև հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթի, ճարտարապետության, շինարվեստի, տնտեսական կյանքի, դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի ու ծեսերի փոփոխություններն ու զարգացումները:

Մարդաբանական նորագույն հետազոտությունների արդյունքները վերաբերում էին Շիրակում ուշ բրոնզի և վաղ երկաթի

ժամանակաշրջանին, ինչպես նաև միջնադարյան Հայաստանի մշակույթին:

Գիտնականները արժարժեցին աղբյուրագիտական նորահայտ մի շարք փաստեր. Օշականի միջնադարյան հուշարձանների, մասնավորապես Մեսրոպ արքեպիսկոպոս Մմբատյանցի անտիպ մի ձեռագրի մասին խոսեց Ս.Ադամյանը: Մրենի, Անիի, նաև Բջնիի իրավական բնույթի արձանագրությունները, ըստ Ա.Մանուչարյանի, հուշում են, որ 1251թ. բուն Հայաստանում, հավանական է Անի վայրաքաղաքում, հայոց և վրաց ամիրսպասալար Շահնշահ Ա Ջաքարյանի գլխավորությամբ գումարվել է տեղական եկեղեցական ժողով, որտեղ հաստատել են Սսի Բ գումարման կանոնները և կարևորել պայքարը կաշառակերության, անարժան և տարիքային անհամապատասխանությամբ ձեռնադրությունների դեմ: Վերծանելով Հոռոմ գյուղում 1861թ. կառուցված եռանավ բազիլիկ եկեղեցու որմերից ԺԹ դարի երեք արձանագրությունները՝ Ա. Հարությունյանը պնդում է, որ դրանք 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմների հաղթական ավարտի քարեղեն վկայագրերն են, որոնք իրենց կերպի մեջ եզակի են տվյալ ժամանակաշրջանի համար:



Պատմագիտություն, ժողովրդագրություն

Գիտաժողովի աշխատանքային ծրագրում ներառված էին թեմաներ հայ ժողովրդի պատմության ամենատարբեր շրջանների վերաբերյալ՝ դրանք համալրելով նոր դրույթներով ու փաստերի նորովի մեկնաբանությամբ: Հիմնանյութն, անշուշտ պատմական Շիրակն էր ու հատկապես Ալեքսանդրապոլի գավառը:

XIXդ. վերջերին ցարիզմը որոշակի քայլերի դիմեց Հայաստանյայց եկեղեցու

իրավունքները սահմանափակելու համար: 1903թ. հունիսի 12-ին հաստատված օրենքով եկեղեցուն պատկանող անշարժ գույքն ու ավանդներն անցան պետական համապատասխան նախարարությունների տնօրինությանը: Օրենքն առաջ բերեց աշխարհափյուռ հայության արդարացի ընդվզումը: Երևանում, Ախալքալաքում, Գանձակում, Թիֆլիսում, Բաքվում և Անդրկովկասի հայաշատ այլ քաղաքներում տեղի ունեցան բազմահազարանոց ցույցեր: Տեղ-տեղ դրանք ուղեկցվեցին բնակչության և ոստիկանության միջև արյունալի ընդհարումներով: Դրան նպաստած Ս.Դ. Հնչակյան կուսակցության «Արագած» մասնաճյուղի 1903թ. գործունեությունը նորագույն արխիվային փաստաթղթերով լուսաբանվեց Ա. Հայրապետյանի հաղորդման մեջ:

Ըստ Գ. Այվազյանի, Ալեքսանդրապոլի հասարակական միտքը 1850-1880-ական թթ. հայրենիքում մնալու, համախմբվելու, հայկական պետությունը հզորացնելու, ամուր լինելու քաղաքակրթական բարձր արժեքներին հաղորդակցվելու, միմյանց խնայելու, խաղաղ գոյակցելու պատգամներ է թողնում իր ուսումնասիրողներին:

19-րդ դարի Շիրակին էին նվիրված նաև Հ.Մուրադյանի, Ա.Շահինյանի հաղորդումները:

Խոսելով 1918-1921թթ. Ալեքսանդրապոլի գավառում թուրքական ժխտողական քաղաքականության դրսևորումների մասին Կ.Ալեքսանյանը կարևորեց այն, որ թեև միջազգային գիտական շրջանակներում ժխտողականությունն ընկալվում է որպես ցեղասպանության վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից հետո արմատախիլ են արվում ազգի մշակույթը և պատմական հիշողությունը, Թուրքիայում այն դրսևորվել է ցեղասպանության իրականացման հետ միաժամանակ:

Նույն ժամանակաշրջանին էր վերաբերում Գ.Մախմուրյանի հաղորդումը՝ ԱՄՆ բարեգործական կոմիտեների ծավալած գործունեության մասին՝ նորահայտ արխիվային փաստաթղթերի հիման վրա:

Անդրադարձներ եղան նաև հայոց պատմության, ժողովրդագրության տարբեր խնդիրների լուսաբանմանը. Ա.Ակոպովը, իր զեկուցումը նվիրելով Հայոց Բագրատունյաց թագավորության անկման պատճանեին, եզրահանգել է, որ Վասիլ II-ի շուրջ հիսունամյա հետևողական և հեռա-

տես քաղաքականության հետևանքով կայսրությունն առանց լուրջ ջանքեր գործադրելու ոչ միայն կարողացավ տիրանալ Դավիթ Գյուրապաղատի ժառանգությանը, այլ նաև հող ստեղծեց հետագայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին ևս կայսրությանը միացնելու համար, որը և հաջողությամբ իրագործվեց 1045թ.:

Հ.Ամիրջանյանը խոսեց Հովսեփ Արքեպիսկոպոս Արղությանի գործունեության, Ֆ.Մովսիսյանը՝ արևմտահայերի ազգային սահմանադրության ընդհանուր գծերի ու սկզբունքների, Ա.Գասպարյանը՝ Զաքարիա սարկավազ Քանաքեռցու Պատմության, Հ.Սուքիասյանը 1919թ. Թիֆլիսի հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի աշխատանքների, Մ.Նաջարյանը Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովում Կիլիկիայի (Սսի) կաթողիկոսության խնդրի մասին: Արտերկրից ժամանած գիտնականների ուշադրության կենտրոնում հայ համայնքի կամ հայազգի պատմական հասարակական գործիչների դերն ու նշանակությունն էր տվյալ երկրի քաղաքական, հասարակական, տնտեսական կյանքի զարգացման մեջ. «Բաթումիում կապիտալիզմի զարգացման պատմությունից.Ա.Մանթաշև» /Օ. Գոգոլիշվիլի, Թ.Պուտկարաձե-Վրաստան/, «Հայրերը չերթեզական հեծելագոր գնդի ռազմական տարեգրության մեջ» /Ռ.Կանդոր-Ռուսաստան/, Անեցիների գաղթը Ղրիմ և դրա թվագրումը /Տ.Սարգսյան-Ռուսաստան/, «Հայերի դերը XVIII-XXդ. սկզբին Հյուսիսային Գովկասի տնտեսական և քաղաքական զարգացման մեջ» /Տ.Նևսկայա-Ռուսաստան/, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը լեհ հեղինակների հրապարակումներում» /Զ.Շմուրլո-Լեհաստան/, «Խարկովի հայկական համայնքը XIXդ. երկրորդ կեսին-XXIդ. սկզբին» /Ա.Շպորտ/:

Վերջին տարիներին բավական հաճախակի են դարձել անդրադարձները ծպտյալ (գաղտնի, թաքուն, կրիպտո) կամ այլախոս ու այլադավան հայերի հիմնախնդիրներին: Մասնավորապես, ուսումնասիրություններ են կատարվում ու հոդվածներ հրատարակվում թուրքացած, արաբացած, քրդացած, մահմեդական, կաթոլիկ հայերի մասին: Այս համատեքստում աստիճանաբար հայերի պատմությանն էր անդրադարձել Ա.Մալոյանը:

Բնակչությանը, նրա թվաքանակին, աճի օրինաչափություններին, կազմին, տեղաշարժերին և տարաբնակեցմանը վերաբերող տեղեկություններն ունեն երկրատնտեսական, աշխարհաքաղաքական ու գիտական կարևոր նշանակություն: Այս դրույթը հիմք ընդունելով՝ Ա.Բոյաջյանը վերլուծել էր Շիրակի մարզի բնակչության թվաքանակի և կազմի փոփոխություններն ըստ Հայաստանի Հանրապետության 2001 և 2011թթ. մարդահամարի արդյունքների և պարզել, որ Շիրակի մարզում հայերի թիվը նվազել է 30852-ով կամ 11%-ով, եզդիներինը՝ 47-ով կամ 4,8%-ով, իսկ ռուսներինն ավելացել է 52-ով կամ 4,9%-ով:



Ազգաբնություն. Այս մասնաճյուղում աշխատանքներ ծավալեցին ազգագրագետները, բանագետները, թանգարանագետները: Հարուստ թեմատիկ-բովանդակային համատեքստում անդրադարձ եղավ Շիրակում և Վանանդում օձի և օձամանուկի պաշտամունքի դրսևորումներին /Ս. և Լ.Պետրոսյաններ/, հայ ժողովրդական հավատալիքներում և սնահավատական գրույցներում թպղայի դրսևորումներին /Հ.Գալստյան/, Կարսի բանահյուսական ժառանգությանը /Է. և Մ. Խենյաններ/, 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծությանը /Թ.Աղանյան/, 20-րդ դարի 80-ական թվականների Շիրակի երաժշտական կենցաղին /Հ.Պիկիյան/, Գյումրի քաղաքի օրինակով՝ կրեատիվ քաղաքի էթնոհոգեբանական ասպեկտներին /Կ.Սահակյան, Ռ.Հովհաննիսյան/, Գյումրու Մբ Յոթ Վերք և Մբ Նշան եկեղեցիների արտաքին և ներքին հարդարանքին /Ք.Ավետիսյան/, Ալեքսանդրապոլում երեխաների սոցիալականացման ձևերին ու եղանակներին /Կ.Բազեյան/, Դվինի կրթամշակութային կենտրոնի

արժևորմանը /Ն.Հակոբյան/, XIX դ. Շիրակում գերմանացի ճանապարհորդների բնագիտական և մշակութաբանական ուսումնասիրություններին /Հ.Մելիք-Ադամյան/, Հայաստան ներգաղթած սիրիահայերի ազգագրական դիմապատկերին /Ա.-Ստեփանյան/: Ա.Գյուլբուրդյանը խոսեց հանրակրթական դպրոցում հայ ազգագրության, ազգային մշակույթի դասավանդման մեթոդամանկավարժական հարցերի մասին:

Հետաքրքիր տեսակետներով գիտաժողովին ներկայացան թանգարանագետները. Ա.Ասոյանը՝ Հուշային թանգարանների, առանձնահատկությունները, Մ.Հարոյանը՝ Մ. Մերկուրովի տուն – թանգարանի Կ.Նիգարյանի հեղինակային ցուցադրության սեմիոտիկ վերլուծություն, Լ.Գևորգյանը՝ Ազգագրության բացօթյա թանգարանների ձևավորման սոցիալ-տնտեսական պատճառները, Ա.Գրիգորյանը՝ Շիրակի և Լոռու մարզի թանգարաններին՝ որպես կրթության ակտիվ տարածքներ, Ա.Նազարյանը՝ առցանց հարթակում Գյումրու թանգարաններին վերաբերող հաղորդումներով:

Ճարտարապետություն և արվեստաբանություն. Արվեստաբանները հիմնականում անդրադարձան Գյումրու Ճարտարապետության ու կերպարվեստի արդի խնդիրներին, այդ թվում՝ Գյումրու գերեզմանատների հուշարձանների տիպաբանական և գեղարվեստական առանձնահատկություններին /Ա.Գրիգորյան/, Խաչատակի աստիճանաձև հորինվածքների խորհրդաբանական ստուգաբանությանը /Ա.Գրիգորյան/, Նախիջևանի Յոնայի Սբ Աստվածածին եկեղեցու արտաքին հարդարանքին /Լ.Կարապետյան/, 1960-ականների Շիրակի գեղանկարչական դպրոցին, Գյումրու հետերկրաշարժյան մշակութային խնդիրներին /Ա.Մարգարյան/, զարգացած միջնադարի հայկական պաշտամունքային Ճարտարապետության մեջ Եղեգնամոր (Չանգլի) տաճարի դերին /Դ.Նահատակյան/, անկախության տարիներին Հայաստանում ուսումնական շենքերի ճարտարապետական զարգացումներին /Դ.Քերթմենջյան/:

Բանասիրություն. Գիտաժողովի ամենաստվարածավալ մասնաճյուղը Բանասիրությունն էր, որտեղ քննարկվեցին լեզվաբանական և գրականագիտական բազ-

մաթիվ թեմաներ՝ վերլուծական, համեմատական, գրախոսական, հրապարակախոսական ուղղվածությամբ: Հանդես եկան ինչպես անվանի գիտնականներ, այնպես էլ երիտաարդ հետազոտողներ, որոնց աշխատանքները մեծ հետաքրքրություն ու քննարկումներ առաջ բերեցին:



Գիտաժողովի շրջանակներում տեղի ունեցավ նաև Բեյրութի «Հայկազեան հայագիտական հանդեսի» 36-րդ հատորի շնորհանդեսը՝ մասնակցությամբ Հայկազեան համալսարանի նախագահ՝ դոկտոր Ա. Հայդոսյանի և «Հայկազեան հանդեսի» խմբագիր՝ դոկտոր Ա.Դագեայանի, որոնք արդեն տարիներ շարունակ ակտիվ համագործակցում են ԳԱԱ Շիրակի ՀՀ կենտրոնի հետ: Շնորհանդեսը, որին տեղի գիտնականների հետ մեծ ոգևորությամբ մասնակցեցին նաև դրսեկ հյուրերը, ցուցադրեց երկու հայագիտական կենտրոնների միջև ստեղծագործական ու գիտական լուրջ կապերի գոյությունը և դրանք շարունակելու կարևորության գիտակցումը:



Գիտաժողովն ուներ նաև մշակութային միջոցառումների մեծ ծրագիր, նրա կազմակերպիչները գիտաժողովի մեծաքանակ հյուրերին հնարավորություն ընձեռե-

ցին մասնակցելու «Գյումրու օրվա» միջոցառումներին՝ կենտրոնի ազգագրագետների կողմից ավանդաբար կազմակերպվող «Հացի տոնին», ազգային կերակրատեսակների պատրաստմանը և համոտեսմանը, ինչը անմոռանալի տպավորություն թողեց գիտաժողովի մասնակիցների, հատկապես դրսեկների վրա:

Լույս տեսավ Կենտրոնի գիտաշխատող Բնգա Ավագյանի «Հիշողություններ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Մակարյանի հուշապատումը», որը հեղինակի «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի չորրորդ գիրքն է:



Գիրքը լույս է ընծայել «Էլդորադո» հրատարակչությունը: Այս անգամ մշակվել, պատմական փաստերի հետ համադրվել են Արևելյան Հայաստանում 1918-1920թթ. Հայոց եղեռնը վերապրած ջաջուռցի 14-ամյա պատանու Աղասի Ալեքսանի Մակարյանի հիշողությունները: Գիրքը պատմականի, փաստագրականի, աղբյուրագիտականի և ազգագրականի հետ մեկտեղ ունի նաև գեղարվեստական արժեք: Հուշերը գրվել են 1915թ. Մեծ եղեռնից 61 տարի անց (Աղասին ծնվել է 1904թ. Ջաջուռ գյուղում, որը 9 կմ է հեռու Գյումրի քաղաքից): Հուշերում

նկարագրվում են 1918թ. Ադրուլադից Ջաջուռ տանող ճանապարհին խաղաղ բնակչության շարքերում գտնվող տղամարդկանց ճակատագիրը, 1920թ. հայ-թուրքական պատերազմը, Մուստաֆա Քեմալի արշավանքը, Ալեքսանդրապոլի գավառի հայերի կոտորածները «Ջարդի (Հերհերի) ձոր» կոչվող վայրում և Կարսի՝ մահվան համակենտրոնացման ճամբար դարձած գորանոցներում: Այս ջարդերը Աղասի Մակարյանը որակավորում է ոչ միայն որպես իր գերդաստանի ողբերգական ճակատագիր, այլև հայոց պատմության ողբերգական էջ և խոշոր ոճրագործություն: Իր հուշերում Մակարյանը ամփոփել է նաև իր ընկերների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրքերի երկխոսությունները, որոնք բացառիկ տեղեկություններ են պարունակում պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական առումով: Վերապրածը խնդիր է դրել ներկայացնել իր տոհմաճառը և խոր ցավ է ապրում թուրքերի ջարդերի զոհը դարձած տոհմակիցների ճակատագիրը ներկայացնելիս: Հիշողություններում կարևոր տեղեկություններ կան Կարսի ամերիկյան որբանոցի, Արգինեի կիրճում կազմակերպված զանգվածային կոտորածների, Ալեքսանդրապոլի Սև դուլի, թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը լքելու ժամանակ Սև դուլի տարածքում ցարական Ռուսաստանի գույքը թալանելու և այլնի մասին: Ուշագրավ է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառին, Կարսի մարզի հայկական գյուղերին և Կարս քաղաքին վերաբերող պատմական, աշխարհագրական և ազգագրական բնույթի տվյալներով ու տեղեկություններով հիշողությունները համալրելու և հարստացնելու փորձը: Գիրքը հարուստ է ծանոթագրություններով, պատմական քարտեզներով, լուսանկարներով, օտար բառերի և արտահայտությունների բառարանով: Գիրքը հասցեագրված է Մեծ եղեռնի թեմայով զբաղվողներին և ընթերցողների լայն շրջանակին:

S U M M A R Y

M. Hasratyan. ACHIEVEMENTS AND PROPERTIES OF ARMENIAN ARCHITECTURE FROM XVII-XVIII CC. Because of distinctive and valuable peculiarities, Armenian architecture from XVII-XVIII cc. possessed an important place in the history of architecture. It is fact that the regional schools in architecture of Syunik, Artsakh, Vaspurakan and Nakhichevan reactivated just in this period. Creatively redeveloped some renown ecclesiastic and secular buildings and formed several new building types. Technologically it was used to hold the construction of churches, gavitths and halls within one phase as one ensemble. Just in the focused centuries created tower-like multistory compositions combining belfries and other functions. The monastic complexes or the convents were merely of rectangular layout. Their harmony conducted the main church as hierarchy and the secular buildings as background on the perimeter. Original were the new princely mansions built in Syunik and Artsakh regions. The Armenian multi-bay bridges were really "flight of thoughts" for Eastern architecture as general.

However despite of political and social critical conditions, as well as existing invasions and wars throughout the country, late medieval Armenian architecture registered outstanding achievements which bridged the medieval tradition into the modern era.

A. Manucharyan. THE REFLECTION OF THE STRUGGLE AGAINST THE FAULTY RELATIONSHIPS WITHIN THE CHURCH. The Armenian church via its councils and canons has always struggled against the faulty phenomena existing within itself such as consecration bribes or the consecration of a dishonest religious person or who were not appropriate to by their age. The following inscriptions from Horomos (1228), Mren (1251) and Ani (1251) testify to those facts.

K. Matevosyan. TWO NEW SCRIBE-AUTHORS OF THE ANI REGION. During the study of the literary manuscripts in the Matenadaran written by historians, some new names of authors were discovered. They have not created their own bibliographic literary works, but the addition they have done to the works are so important, that they qualify the scribes to be considered as medieval semi-authors. Judging by the nature of the written information, two of them were from the Ani - Shirak region.

The first one was Hayrapet vardapet, who has probably lived in the 13th century, and has copied the #1897 manuscript in the Matenadaran collection, including the Chronology by Samvel Anetsi (Samvel of Ani). Hayrapet has endowed the original works with limited, but interesting interpolations. The more eye-catching among the additions are in the parts referring to Ani - Shirak. For example, Samvel Anetsi has written about the founding of Marmashen, and Hayrapet has added that Vahram Pahlavuni was the grandson of Abughamr. He, then, added that ruler Abgharib Marzpan had built the Prgitch church (church of the Savior). Hayrapet has also added information about the part of the Main Cathedral in Ani which was built during the reign of King Smbat, the stylobate and the two rows of walls where the name Smbat is written (that inscription is still in place). It is obvious that the scribe who conveys such details must have been in that place at the time.

The second scribe Johan, also lived in the 13th century, and has copied the #2865 manuscript in the Matenadaran. He has done additions, mainly referring to the history of Ani -

Shirak in the works of Stepanos Taronetsi Asoghik (Stepanos Asoghik of Taron), and Aristakes Lastiveratsi. Some of the information he has conveyed about the construction of Ani's Small Cathedral church by King Abbas, or Trdat being the Architect of Gagkashen Saint Grigor church, and Sarkis Sevanetsi Catholicos (Catholicos Sarkis of Sevan) being buried at the Horomos monastery are the only sources for these revelations to date. These and other additions confirm that Johan has undoubtedly lived in the Ani-Shirak region.

H. Khachatryan. FUNCTIONAL CLASSIFICATION OF FORTIFICATIONS. In literature the forts of defensive function have different names that are used with general meaning: *castle*, *fort*, *fortification building*, etc. So far functional analyses of protective structures and corresponding classification have not been made.

Among protective structures castles are the most widespread forts. In our opinion castles, as defensive structures, have had local function of self-defense.

Studying the sources we come to the conclusion that defensive structures are divided into 3 main groups according to their location:

1. Fort buildings in the residence.
2. Fortification buildings of the same kind, but out of the residence.
3. Castle-residences

Defensive buildings with the name *fort* were of different function. They were built and belonged to the royal residence and to great ministers. The great part of forts were in unavailable places and had permanent location. Since ancient times in fortified cities there were citadels which had the same functions. In many cases the forts served as prisons.

Forts belonging to ministers had nearly the same function but a difference was noticeable, they were populated. And there lived the family of a minister. This difference let us call minister forts as castles.

Taking into consideration the functional peculiarities of protective structures we suggest classify them into 3 groups: castle, fort, fortification and in our further research we are going to use the corresponding terms.

L. Eganyan. CLAY IDOL FROM METS SEPASAR. In the discovered objects of Mets Sepasar excavations specific role have things of cult origin which are of great interest for the ideological imagination of tribes bearing the Kur-Araks culture. The segment of idol, composed of yellowish well burnt clay, has been discovered in the lying position, in an economic ditch on a stony plug. The ground of that plug had been covered with a thin layer of ash where segments of bones, clay pots existed. The idol presents a humanlike figure, the bottom of which is massive. The top of the idol consists of a triangle head without a neck and hands. On the body some plant ornaments are noticeable. Clay idol is the determinant of a woman bearing fertility ideology and plant forces of a nature.

A. Harutyunyan. THE VILLAGE OF HOROM AND THE NEWLY-FOUND INSCRIPTION OF ST. HRIPSIME CHURCH. The village of Horom (Shirak province of the Republic of Armenia) is not famous for its medieval monuments. The three-nave church of St. Hripsime of this village was built in 1861. We copied three inscriptions dated by the 19th century from its walls one of which served as a stimulus for the article.

The victorious wars of the Russian tsar Nikolas I (1825-1855) led against the Persians and Ottomans are narrated in the discussed epigraph thus the latter is the stone testimonial of the victorious end of the Russian-Persian (1826-1828) and Russian-Turkish (1828-1829) wars. The name of Yeprem I Dzoraghtsi (1809-1830) the Catholicos of All Armenians is also mentioned in

the epigraph therefore the inscription should be dated by the period between 1829-1830 when Catholicos Yeprem had not still renounced the throne.

This still unpublished inscription of Horom is an important and reliable "document" on the Armenian-Russian relationship and for the study of the history of the Eastern Armenia in the 19th century, which has very restricted parallels in the mentioned period.

S. Petrosyan. CRADLE OF THE INDO-EUROPEAN AND SUMERIAN STORM GOD.

The analysis of the Mesopotamian mythology shows that it is composed of different details from three components: Sumerian, Akkadian and Indo-European. This conclusion is based on a number of facts, among which the following ones are to be pointed out.

Indo-European word *Hk'or- "mountain" paid attention to phonetic adjacency with kur- the Sumerian name of "mountain, mountainous country, country". The Greeks called the northern wind Boreas, and the eastern Slavos called it Gora, Gorych, i.e. "mountain, mountainous" (<IE*Hk'or-). Sumerian god Enlil as a dwelling had the high mountain connecting the earth and the sky. Enlil's epithet is Kur. gal "great mountain" and his temple in Nippur was E.kur "Mountain house".

It is noteworthy that the northern cold wind was named Parkhar after the name of the northern mountain range Parkhar. This oronym has the same root pakhr- as the word pakhra "cattle, bull, herd", "ox, deer, chamois". The wife of Enlil was named Ninlil. In the Sumerian language the theonym En.lil and Nin.lil are parallel male(en-) and female(nin-) definitions of the root *-lil which enables us to understand the theonym Nin.lil as "Mistress of the wind" (compare with IE *lél- "move, shake"). In this case the meaning of theonym En.lil is "Lord of the wind".

R. Kandor. ARMENIANS IN THE FIGHTING CHRONICLE OF THE CIRCASSIAN

MOUNTED REGIMENT (1914-1916). The centenary of the World War I contributed to the significant increase in the interest of the events, consequences and lessons of that war. And for modern Russia and Armenia there is an actual question of the fighting commonwealth of the people on fields of battles of the World War I.

The article is devoted to the study of the participation of Armenians in the fighting commonwealth with other peoples of the Caucasus in fights of the World War I as a part of the Circassian mounted regiment. In the work archival materials are widely used, as well as various literary sources – of personal origin and research by Russian authors.

The special and important place in the work is given to the history of the fighting life of a brilliant officer, Lieutenant Leon Vladimirovich Mardanov – a native of Tiflis, Armenian-Gregorian faith, of the noble family of Colonel, Inspector of the Kiev Vladimirsky Cadet Corps.

The article points out the crucial importance of keeping the names of the heroes of the Great War. By this we pay a tribute to the officers and brilliant riders of different peoples, who served in the Circassian mounted regiment, to their unprecedented feats in the name of protecting the homeland.

